Հ. Խ. ԲԱՐՍԵՂՅԱՆ

ՀԱՑԵՐԵՆԻ ԽՈՍՔԻ ՄԱՍԵՐԻ ՈՒՍՄՈՒՆՔԸ

ԵՐԵՎԱՆԻ ՊԵՏԱԿԱՆ ՀԱՄԱԼՍԱՐԱՆ

Հ. Խ. ԲԱՐՍԵՂՅԱՆ

ՀԱՅԵՐԵՆԻ ԽՈՍՔԻ ՄԱՍԵՐԻ ՈՒՍՄՈՒՆՔԸ

ԵՐԵՎԱՆԻ ՀԱՄԱԼՍԱՐԱՆԻ ՀՐԱՏԱՐԱԿՉՈՒԹՅՈՒՆ
ԵՐԵՎԱՆ — 1980

4 Ար ինդբես ԳՄԴ 81.22

խմբագիր՝ բան. գիտ. թեկն. Պ. Ե. Շարաբխանյան
Գրախոս՝ բան. գիտ. դոկտոր Հ. Դ. Մուրադյան

Բարսեղյան, Հ. Խ.
Բ 371 Հայերենի խոսքի մասերի ուսմունքը: Խմբ. Պ. Ե. Շարաբխանյան.— Եր.: Երևանի համալս. հրատ., 1980.— 528 էջ:

Աշխատությունը նվիրված է խոսքի մասերի տեսության առաջացման և զարգացման պատմությանը: Այն ընդգրկում է 5-րդ դարից մինչև մեր օրերն ընկած ժամանակաշրջանը: Հարցերը քննվում են հայ քերականագիտության և լեզվաբանական հին ու նոր ուղղությունների փոխադարձ կապերի մեջ: Դասակարգվում ու վերլուծվում է ժամանակակից հայերենի խոսքի մասերի համակարգը:

Նախատեսվում է հայոց լեզվի տեսության ու պատմության հարցերով զբաղվող մասնագետների, ուսուցիչների, ինչպես նաև բանասիրական ֆակուլտետների ուսանողների համար:

ԳՄԴ 81—2Հ
4 Ար

Բ 4602000000—02 / 704 (02)—80 34—79

БАРСЕГЯН ОВАНЕС ХАЧАТУРОВИЧ
УЧЕНИЕ О ЧАСТЯХ РЕЧИ АРМЯНСКОГО ЯЗЫКА
(На армянском языке)
Издательство Ереванского университета
Ереван — 1980

© Երևանի համալսարանի հրատարակչություն, 1980

ԱՌԱՋԻՆ ՄԱՍ

ԽՈՍՔԻ ՄԱՍԵՐԻ ՏԱՐԲԵՐԱԿՈՒՄԸ ՀԱՅ ՀԻՆ ԵՎ ՄԻՋՆԱԴԱՐՅԱՆ ՔԵՐԱԿԱՆՈՒԹՅՈՒՆՆԵՐՈՒՄ

Առաջին գլուխ

ԽՈՍՔԻ ՄԱՍԵՐԻ ՏԱՐԲԵՐԱԿՈՒՄԸ ԴԻՈՆԻՍԻՈՍ ԹՐԱԿԱՑՈՒ «ՔԵՐԱԿԱՆԱԿԱՆ ԱՐՎԵՍՏԻ» ՀԱՅԵՐԵՆ ԹԱՐԳՄԱՆՈՒԹՅԱՆ ԵՎ ՆՐԱ 5—15-ՐԴ ԴԱՐԵՐԻ ՄԵԿՆՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ՄԵՋ

ԽՈՍՔԻ ՄԱՍԵՐԻ ՏԱՐԲԵՐԱԿՈՒՄԸ ԹՐԱԿԱՑՈՒ «ՔԵՐԱԿԱՆԱԿԱՆ ԱՐՎԵՍՏԻ» ԵՎ ՆՐԱ ՀԱՅԵՐԵՆ ԹԱՐԳՄԱՆՈՒԹՅԱՆ ՄԵՋ

Հայերն, աշխարհի շատ ժողովուրդների պես, քերականության արվեստը սովորեցին հին հույներից։ Վերջիններս լեզվի կառուցվածքին և ուսուցման վերաբերող բոլոր գիտելիքներն ու հմտությունները նախնական շրջանում շարադրում էին փիլիսոփայության մեջ, և այդ ամենը ներկայացնում էին իբրև հին քնագրերն ընթերցելու և վերլուծելու հմտության արվեստ։ Հույն քերական Դիոնիսիոս Թրակացին (2-րդ դար մ. թ. ա.), որի աշխատության թարգմանությամբ (5-րդ դար) և հետագա մեկնություններով էլ սկզբնավորվում է հայ քերականագիտությունը, նախորդների հետևությամբ իր քերականությունը հենց այդպես էլ անվանում է «Քերականական արվեստ» („Τεχνη γραμματικη")։

«Քերականական արվեստը», սակայն, ինչպես հույների, այնպես էլ հնդիկների մոտ իր ձևավորման սկզբնական շրջանից իսկ, բացի «գրերի» արվեստ կամ բանասիրական քերականություն լինելուց, ուներ նաև գիտական կամ փիլիսոփայական (տրամաբանական) հիմունքներ։ Հույն փիլիսոփաներն աշխատում էին պարզել իրի, հասկացության և անվան միջև եղած հարաբերության, իսկ հետագայում՝ հելլենիզմի շրջանում՝ նաև բառի քերականական ձևի և արտահայտած իմաստի փոխհարաբերության հարցերը։

Մինչդեռ հնդիկներից շատերը անուն համարում էին առարկայի ու նրա հասկացության անբաժան բաղադրիչը, հույներն արդեն վիճում էին այն մասին, թե անուններն ինչպես են տրվում իրերին՝ «ըստ նրանց բնության» (Φύσει), թե՞ օրենքի ուժով, «ըստ սովորության» (ἐθει), կամ «ըստ դրության» (θεσει)[1]։

Այսպիսով, հունական քերականությունն իբրև գիտություն ձևավորվում է բանասիրական-գործնական և տրամաբանական-գիտական հիմունքներով։ Այդ պատճառով էլ բառերի դասակարգման առաջին իսկ փորձերում նյութական՝ նշանակության երկու խոշոր բառախմբերի՝ անվան և բայի կողքին, կարծեք թե հավասարի իրավունքով, տարբերակվում է նաև 3-րդ բառախումբը՝ շաղկապը[2]։ Նյութական կամ հիմնական և ձևական կամ քերականական նշանակության այս բառախմբերի հետագա տրոհմամբ Դիոնիսիոսի քերականության մեջ արդեն տարբերվում է ութ խոսքի մաս. «Ծ բանի մասունք են ութ, անուն, բայ, ընդունելութիւն, յատ, դերանուն, նախադրութիւն, մակբայ, շաղկապ»[3]։

Հունական քերականագիտությունը, ի թիվս լեզվական այլ ըմբռնումների, խոսքի մասերի տարբերակման ու սրանց բնութագրման հարցում էլ միակարծիք ու միասիստեմ չի եղել։ Ավելի բազմազան են հույն փիլիսոփաների ու քերականների կարծիքների հետագա մեկնաբանությունները։

Ա. Չիկոբավան խոսքի մասերի ուսմունքի պատմության տեսակետից Արիստոտելի ներկայացրած համակարգում կարևոր է համարում անվան և բայի առանձնացումը, իսկ շաղկապը, որի մեջ Արիստոտելը մոցնում է բոլոր «աննշանակ» բառերը, համարում է ոչ կարևոր։

Հարցի պատմությամբ հետաքրքրվող այլ ուսումնասիրողներ

---

[1] *Տե՛ս* **В. Томсен,** История языковедения до конца XIX в., М., 1938, էջ 13:

Գ. Ջահուկյան, *Քերականական և ուղղագրական աշխատությունները հին և միջնադարյան Հայաստանում (5—15-րդ դդ.), Երևան, 1954, էջ 14։*

Ա. Ն. Մուրադյան, *Հունաբան դպրոցը և նրա դերը հայերենի քերականական տերմինաբանության ստեղծման գործում, Երևան, 1971, է 167։*

[2] *Մանրամասն տե՛ս* Գ. Ջահուկյան, *Հիշյալ աշխատություն, էջ 16—20։*

[3] **Н. Адонц,** Дионисий фракинский и армянские толкователи, Петроград, 1915, էջ 12:

[4] **А. С. Чикобава,** Части речи как понятие филологической грамматики и как понятие описательного научного анализа (Вопросы теории частей речи, Ленинград, էջ 49):

(տե՛ս Վ. Տոմսենի, Գ. Ջահուկյանի, Ա. Մուրադյանի վերոհիշյալ աշխատությունների 17, 16, 206 էջերը) գտնում են, որ «Արիստոտելը և նրա ժամանակակից հույն փիլիսոփաները տարբերել են հիմնականում երեք խոսքի մաս՝ անունները, բայերը և շաղկապները»[5]։

Այլ կերպ են մեկնաբանում Արիստոտելին միջնադարի հայ փիլիսոփա-քերականները։ Օրինակ, դրանցից մեկը՝ Վարդան Արևելցին, գրում է. «Այլ և Արիստոտել հինգ ասաց՝ անուն, բայ, uտորաuսութիւն, բացասութիւն, բացեռևակութիւն»[6]։

«Պարզվում է, որ,—գրում է Արևելցու քերականության քննական բնագիրը կազմող ու ծանոթագրող պրոֆ. Լ. Խաչերյանը,— Արիստոտելը որպես խոսքի մաս ընդունել է ոչ միայն անունը և բայը, այլև դրական դատողություն արտահայտող նախադասությունը («uտորասութիւն»), հերքում պարունակող նախադասությունը («բացասութիւն») և առհասարակ դատողություն արտահայտող նախադասությունը («բացեռևակութիւն»)[7]։

Հետևելով միջնադարի խոշոր մտածող Դավիթ Մեկնիչին՝ նշանավոր պատմիչ և քերական Վ. Արևելցին, վերլուծելով հույների ընդունած խոսքի մասերի համակարգը, Դավթի պես գտնում է, որ հույն փիլիսոփաներն ընդունում են 5, իսկ քերականները՝ 8 խոսքի մաս, ապա աշխատում է հիմնավորել փիլիսոփաների ճշմարտացիությունն այդ հարցում, գրելով՝ «Իսկ իմաստասէրքն հանեալ են ի յութէն ընդունելութիւնն, զդերանունն և զյաւդն, զի այս երեքս ընդ անուամբ և ընդ բայիւ անկանին»[8]։

Եթե մի կողմ թողնենք հունական փիլիսոփայության ու քերականության մեջ «խոսքի մաս» և «նախադասության անդամ» հասկացությունների չտարբերակված լինելը, ինչպես նաև՝ «խոսքի մաս» անվամբ ոչ միայն բառերի տեսակներ ու բառախմբեր, այլև բառակազմական մասնիկներ ու առանձին նախադասություններ հասկանալը, ապա վերը հիշատակված մի քանի մեկնություններից ու բացատրություններից կարելի է անել որոշ եզրակացություններ։

Հույն փիլիսոփաները լեզվական վերլուծությունները ծառայեց-

---

[5] Ա. Ն. Մուրադյան, նշվ. աշխ., էջ 206։

[6] Վարդան Արևելցի, Մեկնութիւն քերականին, Աշխատասիրությամբ Լ. Գ. Խաչերյանի, Երևան, 1972, էջ 102։

[7] Նույն տեղում, էջ 24։

[8] Նույն տեղում, էջ 101—102։

նում էին մարդկային մտածողության օրենքների բացահայտման, տրամաբանական կատեգորիաների սահմանման իրենց բուն նպատակին, ուստի և հիմնականում քննում էին նյութական նշանակության բառախմբերը։ Դիոնիսիոս Թրակացուն նախորդող փիլիսոփաներից Արիստոտելը վերոհիշյալ նկատառումով նախ տարբերակում է նշանակություն ունեցող բառերը նշանակություն չունեցող բառերից։ Նա ճանաչում է նշանակություն ունեցող բառերի երկու խումբ՝ անուն և բայ, որոնք իմաստային և ձևական սկզբունքներով սահմանվում և վերլուծվում են իբրև խոսքի մասեր։ Նախադասության մեջ կապակցական դեր կատարող բոլոր բառերը, իբրև նշանակություն չունեցող բառեր, Արիստոտելը մի ընդհանուր անվամբ կոչում է «շաղկապ» (σύνδεσμος)[9]։ Սա արդեն սկիզբն է լեզվաբանական այն վեճի, թե առանձին վերցրած «նշանակություն չունեցող» բառերը («շաղկապ») Արիստոտելի, ինչպես և այսօր մեզ համար առանձին խոսքի մա՞սն են, թե ոչ։ Այս հարցի երկու հնարավոր պատասխաններն էլ չեն փոխում իրերի դրությունը, քանի որ Արիստոտելին հաջորդած որոշ փիլիսոփաներ ու քերականներ, եթե նշանակություն ունեցող երկու խոսքի մասերից՝ անունից և բայից, անջատեցին նաև դերանունը, դերբայն ու մակբայը, ապա ուրիշներն էլ «նշանակություն չունեցող» բառախմբից՝ «շաղկապից», անջատեցին հոդերը, այնուհետև «շաղկապից» ու «անունից»՝ նախդիրները, այնպես որ Դիոնիսիոսի քերականության մեջ նյութական նշանակության բառերի կողքին արդեն «շաղկապի» հետ հավասարապես առանձին խոսքի մասեր ճանաչվեցին նաև հոդն ու նախդիրը։

Հույներն իրենց լեզվի խոսքի մասերի դասակարգման մի ամբողջական համակարգ չստեղծեցին։ Ինչպես շատ հարցերում, այստեղ էլ նրանք միայն սկզբնավորողներ եղան։

Բայց այսօր էլ աշխարհի գուցե բոլոր լեզուների համար խոսքի մասերի դասակարգման հիմնական սխեմաները Դիոնիսիոս Թրակացու քերականության խոսքի մասերի սխեմայի բարեփոխված կամ, նույնիսկ, անփոփոխ տարբերակներն են թվում։ Սակայն այդ փաստը խոսում է ոչ միայն հունական քերականագիտության ու փիլիսոփայության այս հարցում ձեռք բերած նվաճումների, այլև լեզվաբանության ցուցաբերած պահպանողականության օգտին,

---

[9] Античные теории языка и стиля, М.—Л., 1936, էջ 70, 26։

որի մեջ քիչ չէ նաև հունական քերականության «ծառայությունը»։

«Դիոնիսիոս Թրակացու» „Τεχνη γραμματικη" «աշխատությունը ներկայացնում է ալեքսանդրյան ֆիլոլոգիայի քերականական նվաճումների համառոտ գործնական շարադրանքը...»[10]։ Գործնական նպատակներ հետապնդող դպրոցական քերականության մեջ չէին կարող լուծվել լեզվի կառուցվածքին վերաբերող գիտական հարցեր, մանավանդ այն ժամանակներում, երբ լեզվի կառուցվածքի քննությունը ստորադասված է եղել մի կողմից փիլիսոփայական-տրամաբանական հարցերի լուծմանը, մյուս կողմից՝ բանասիրական-քննագրական վերլուծություններին և դարձել է իբրև այդ վերլուծություններին ծառայող օժանդակ միջոց։

Քերականական հասկացությունների ձևավորման այս երկվությունը լավագույնս արտահայտված է խոսքի մասերի համակարգման ու սրանց սահմանումների մեջ, որպիսի հանգամանքը հարատևում է առայսօր։

Հույները «բան» (logos) ասելով հասկանում էին և՛ «նախադասություն», և՛ «խոսք»։ Սակայն «մասունք բանի» (μερη λογου) ասելով՝ հասկանում էին ոչ թե նախադասության մասեր կամ անդամներ, այլ խոսքի մասեր։ Բայց «խոսքի մաս» հասկացության անորոշությունը իրավունք է տալիս ոմանց նաև պնդելու, թե հույների «խոսքի մաս» անվանումը նաև նախադասության անդամ է նշանակում։ Այսպես Վ. Տոմսենը, վերը հիշատակված գրքում խոսելով Արիստոտելի քերականական ուսմունքի մասին, գրում է. «Մենք նրա մոտ գտնում ենք սկզբնապես բառերի բաժանումը 3 դասի կամ, իսկապես ասած, նախադասության անդամների...[11]։

Այստեղ ինչպե՞ս կարող էր լինել խոսքի մասերի սահմանման միասնական սկզբունք, երբ «խոսքի մաս» ասելով պիտի հասկացվեր թե՛ բառատեսակ, թե՛ նախադասության անդամ, ապա՝ բառ ու նախադասության մեջ հանդիպող որևէ գործառության ու նշանակության (ըստ Արիստոտելի՝ նույնիսկ «աննշանակ») ամեն հնչյունակապակցություն (բառ թե ձևույթ), այլև նախադասություն։ Ահա թե ինչու հին հույների մոտ վիճելի մնացին խոսքի մասերին վերաբերող համարյա բոլոր հիմնական հասկացությունները։

Մի կողմ թողնելով սահմանումները, որոնցում ոչ միայն խառ-

---

[10] Գ. Ջահուկյան, նշվ. աշխ., էջ 21։

[11] В. Томсен, նշվ. աշխ., էջ 17։

նրվում են իմաստային, շարահյուսական և ձևաբանական սկզբունքները, այլև այն, որ որոշակի բառախմբի համար տրված սահմանումը տարածվում է այդ խմբին խառնված այլ կարգի բառերի վրա ևս, նկատենք երկու հիմնական բաց։

Նախ որ լեզվի իմաստակիր բոլոր միավորները, առանց ընդհանրացման ու հակադրման որոշակի սկզբունքների, մի ատաճանի վրա հավասարապես անվանվում են «խոսքի մասեր»։

Այնուհետև, դարձյալ որոշակի սկզբունքների ու չափանիշների բացակայության պատճառով, չեն որոշվում բառախմբերի և նրանց ենթատեսակների հարաբերությունները։ Այսինքն, դերանունն առանձի՞ն խոսքի մաս է, թե՞ անուն խոսքի մասի տեսակ, հասարակ անունը («առասություն») անվան տեսա՞կ է, թե, ի հակադրություն հատուկ անվան, առանձին խոսքի մաս է, դերբայները («ընդունելություն») բայ խոսքի մասի մի տեսա՞կն են, թե առանձին խոսքի մաս են, հոդն ու նախադրությունը առանձի՞ն խոսքի մասեր են, թե «շաղկապի» կամ «անվան» տեսակներ,—այս ու նման շատ հարցերին որևէ համոզիչ պատասխան չի տրվում։

Կարծես թե Դիոնիսիոս Թրակացին այս հարցերի պատասխանը տալիս է իր ներկայացրած քերականական համակարգով, նախորդների կարծիքների ամփոփմամբ, ընդունելով 8 խոսքի մաս։ Բայց վերոհիշյալ իրարամերժ հարցադրումները շարունակվում են ոչ միայն Թրակացու քերականության տասնյակ մեկնիչների ու թարգմանիչների, այլև այսօրվա լեզվաբանների կողմից։

Սակայն հարցի պատմությունը թելադրում է մեզ անելու նաև մի այլ դատողություն։ Հույների հորինած քերականական տերմինների ու խոսքիմասային սխեմայի հետագա ընդօրինակումն ու պահպանումը, հաճախ էլ առանձին սահմանումների նույնությունը բնավ էլ չեն նշանակում, թե մարդկային հասարակությունն իր լեզվի կառուցվածքի վերլուծության այս կարևոր հարցում մնում է նախաքրիստոնեական շրջանի գիտության ատաճանին, ինչպես երբեմն եզրակացրել և եզրակացնում են ոմանք՝ խոսքի մասերի ուսմունքի ընդհանուր վիճակից դժգոհ լինելով։ Ընդհանրությունները ու նմանությունները այստեղ մեծապես արտաքին ու ձևական են. փոփոխված են խոսքի մասերի համակարգի էությունն ու բովանդակությունը՝ չնայած այդ համակարգի հակատական ու անկատար վիճակին։

Դիոնիսիոս Թրակացու ներկայացրած խոսքի մասերի համակարգի մեջ առաջին փոփոխությունը մտցնում են հռոմայեցիները,

որոնք հոդերը չեն համարում խոսքի մաս և մակբայներից առանձնացնում և առանձին խոսքի մաս են ճանաչում ձայնարկությունը[12]։

Այս փաստի արձանագրումն արդեն գտնում ենք Դիոնիսիոսի քերականության հռոմայեցի մեկնիչներից Դոնատիոսի (4-րդ դար) լատիներեն քերականության («Ars grammatica») մեջ։

Դիոնիսիոս Թրակացու քերականության հայ մեկնիչները, հարազատ մնալով բնագրին, ընդունում են 8 խոսքի մաս, առանց ձայնարկության։ Անունը շարունակում են սահմանել գոյական անվան իմաստային և քերականական հատկանիշներով, թեև այն իր մեջ է առնում նաև ածականն ու թվականը։ Շարունակում են հասարակ («առաստական») և հատուկ («իսկ») անուններն առանձին խոսքի մաս ճանաչելու, դերանունը առանձին խոսքի մաս համարելու, թե՞ չհամարելու, դերբայը բայից անջատ, թե՞ նրան ստորադաս մեկ բայ խոսքի մաս ընդունելու վեճերը։

Դիոնիսիոսի հետևությամբ դերանունն առանձին խոսքի մաս ընդունող հայ մեկնիչներն ու քերականները դերանունը, սրա իմաստային և շարահյուսական առանձնահատկությունների հիման վրա, անվանում են նաև թեռանուն կամ փոխանուն[13]։

Հունարենի համար սահմանված կանոնները հաճախ հայերենի վրա մեխանիկորեն տարածելով՝ հունարենի քերականության հայ մեկնիչները, ի թիվս այլ հասկացությունների, երբեմն ավելի են սրում խոսքի մասերի վերաբերյալ եղած հին հասկացությունների հակասությունները ու սխալները. բայց շատ հաճախ էլ մայրենի լեզվի նյութի վրա ճշգրտում են այդ հասկացությունները։

Դիոնիսիոսի քերականության հայ թարգմանիչը (5-րդ դար), ինչպես ասվեց, հարազատ մնալով բնագրին, ընդունում է 8 խոսքի մաս, առանց ձայնարկության։ Այսպիսով հայերենի խոսքի մասերի պատմությունն սկսվում է հունարենի քերականության անմիջական նմանությամբ ութ խոսքի մասեր իրենց տարատեսակներով առանձնացնելու, Դիոնիսիոսի քերականության սկզբունքներով դրանք սահմանելու և վերլուծելու պատմությունից։

Պրոֆ. Գ. Ջահուկյանը «Քերականական և ուղղագրական աշխատությունները հին և միջնադարյան Հայաստանում» մենագրության մեջ մեծ հմտությամբ հանգամանալից քննության է ենթարկում Թրակացու քերականության կառուցվածքն ու հիմնական բո-

---

[12] Տե՛ս Античные теории языка и стиля, М.—Л., 1936, էջ 118։

[13] Վարդան Առևելցի, *Մեկնութիւն քերականի*, Երևան, 1972, էջ 134—136։

վանդակությունը, ապա՝ նրա հայերեն թարգմանությունը[14]։ Ջհամամաձայնելով Ադոնցի այն կարծիքին, թե Դիոնիսիոսի քերականության հայերեն թարգմանությունը իրենից ներկայացնում է բնագրի ստրկական ընդօրինակություն՝ Ջահուկյանը գտնում է, որ «...հայ թարգմանիչը ոչ միայն «ստրկորեն» չի ընդօրինակում տեքստը, այլև հանդես է բերում բավական ազատամիտ վերաբերմունք՝ կատարելով նրա մեջ իր համոզմունքներից և հայերենի առանձնահատկություններից բխող զանազան փոփոխություններ, որքան այդ հնարավորություն է տալիս թարգմանչի աշխատանքի բնույթը։ Այս իմաստով թարգմանությունը ավելի շատ փոխադրություն է, քան թարգմանություն»[15]։

Սակայն այդ փոփոխություններն ու նորությունները, ինչպես նկատում է Ջահուկյանը, քիչ չափով են վերաբերում հայերենի խոսքի մասերի առանձնահատկությունների պարզաբանմանը։ Կատարելով հայերենի խոսքի մասերի տարբերակման առաջին փորձը՝ թարգմանիչը, այսուամենայնիվ, հաշվի չի առնում հայերենի խոսքի մասերի առանձնահատկությունները՝ «նույնությամբ թարգմանելով հունարեն բնագրի սահմանումները»։

Դիոնիսիոսի սահմանումների երկվությունը, որն արտահայտվում է այդ սահմանումներում բառերի տրամաբանական, ձևաբանական և շարահյուսական հատկանիշների խառը գործադրմամբ, հայերեն թարգմանության մեջ ավելի է ընդգծվում, քանի որ ի հայտ են գալիս նաև լեզվական նյութի տարբերություններն ու անհամապատասխանությունը։

Հունարենի քերականագիտության նվաճումները ժառանգելու հետ հայերենի նոր սկզբնավորվող քերականությունը ժառանգում է նաև Թրակացու քերականության այնպիսի հակասություններ ու անհետևողականություններ, որոնցից հայ քերականագիտությունը հետագայում դարերով չի կարողանում ազատվել։

Հիմնական խոսքի մասերի՝ անվան և բայի սահմանման ընկղմունքային առաջին տարբերությունը, որ հայ թարգմանիչը Թրակացուց նույնությամբ փոխադրում է հայերենի քերականու-

---

[14] Կրկնությունից խուսափելու համար մենք Թրակացու քերականության և նրա հայերեն թարգմանության մեր հարցին վերաբերող մասերի բովանդակության վերաշարադրանքն այստեղ չենք տալիս՝ հետաքրքրասեր ընթերցողին հղելով Գ. Ջահուկյանի այդ ուսումնասիրությանը։

[15] Գ. Բ. Ջահուկյան, նշվ. աշխ., էջ 61։

թյան մեջ և սկիզբ դնում հարցի հետագա վիճաբանությունների, «խոսքի մաս» և «բառ» հասկացությունների նույնացումն է[16]։ Թրակացին անվանը, որպես խոսքի մասի, տալիս է հետևյալ ձևաբանական-իմաստային (տրամաբանական) սահմանումը. «Անուն է մասն բանի հոլովական, մարմին կամ իր նշանակելով. մարմին, որպան fur, և իր, որպէս խրատ. հասարակաբար որգունակ մարդ, եւ յատկապէս որգոն Պաւղոս»[17]։

Բայը սահմանվում է շարահյուսական-իմաստային սկզբունքով. «Բայ է բառ անհոլով, ընդունական, ամանակաց, դիմաց, եւ թուոց, որ ներգործութիւն եւ կամ կիր յարկացոցէ»[18]։

Թրակացու «Անուն է մասն բանի...» և «Բայ է բառ անհոլով...» ձևակերպումների անհետևողականությունը նկատվում և քննադատվում է նրա քերականության հայերեն թարգմանության առաջին իսկ մեկնիչներից մեկի՝ Անանունի կողմից, որն այս առթիվ գրում է. «Խնդրելի է թէ զիարդ ասաց բայ է բառ եւ ոչ ասաց թէ բայ է մասն բանի խոնարհական, որպէս եւ անդ յաղագս անուան՝ եթէ անուն է մասն բանի հոլովական»[19]։ Նկատված հակասության վերաբերյալ այս հարցի մեղմացված պատասխանը, որով Անանունը փորձում է արդարացնել Թրակացուն, այն է, թե՝ վերևում ասած լինելով՝ խոսքի մասերը ութն են՝ անուն, բայ և այլն, այստեղ հեղինակը կրկնությունից խուսափելու համար խոսքի մասի փոխարեն բառ է գործածել։

Ճշմարիտն այս հարցում, անշուշտ, Գ. Ջահուկյանն է, որ գտնում է, թե Թրակացու քերականության և նրա հայերեն թարգմանության մեջ այստեղ նույնացված են «բառ» և «խոսքի մաս» հասկացությունները։ Այդ շփոթը Անանունի վերոհիշյալ պարզաբանումով բնավ էլ չվերացավ։ Հայ քերականագիտության մեջ խոսքի մաս և բառերի տեսակ հասկացությունները հաճախ նույնացվեցին՝ հասնելով մինչև Այտընյան, որ գրում է. «Բառ կամ մասն բանի ութ տեսակ է»։ Իսկ ինչքանո՞վ են սրանք ժամանակակից լեզվագիտության մեջ իրարից տարբերակված, նույնպես դժվար է ասել։

Թրակացու անուն խոսքի մասի սահմանումը հայերենի համար դառնում է հակասական թե՛ իր ձևական, թե՛ տրամաբանական

---

16 Համմ. Գ. Ջահուկյան, նշվ. աշխ., էջ 77։

17 Ն. Ադոնց, նշվ. աշխ., էջ 12—13։

18 Ն. Ադոնց, նշվ. աշխ., էջ 22։

19 Նույն տեղում, էջ 145։

հիմունքներով։ «Անոն է մասն բանի հոլովական...» ձևակերպումը հին հայերենի համար անընդունելի է, քանի որ անվան մեջ միավորվող բազմավանկ ածականները ու թվականները նախադաս, երբեմն էլ ետադաս գործածությամբ չէին համաձայնում գոյականին և չէին հոլովվում։ Սահմանման երկրորդ՝ իմաստային հիմունքը, որով անունը բնութագրվում է որպես «մարմին կամ իր» նշանակող խոսքի մաս, դարձյալ հակասում է հայերենի, ինչպես և հունարենի լեզվավիճակին, քանի որ անվան մեջ մտցված ածականները, թվականներն ու դերանունները «մարմին կամ իր» չեն նշանակում»[20]։

Թարգմանիչը նույնությամբ հայերեն է փոխադրում հունարենի բային և դերբային տրված սահմանումները։ Բայը Թրակացին սահմանում է շարահյուսական-իմաստային հիմունքով՝ այն նույնացնելով, մեր ըմբռնմամբ, ստորոգյալին։ Նրա ձևակերպմամբ բայը չհոլովվող բառ է, որ ունի ժամանակ, դեմք ու թիվ և «ներգործութիւն և կամ կիր յարկացոցէ»։

Բայի այսպիսի ըմբռնումը թելադրում է քերականին դերբայնեբի («ընդունելութիւն») առանձնացումը բայից։ Դերբայները ճանաչվում են իբրև բայի և անվան ձևաբանական հատկանիշները միաժամանակ ընդունող բառեր։ Նրանք անվան պես հոլովվում են, իսկ բայի պես ունենում սեռ («տրամադրութիւն»), եղանակ ու ժամանակ (անեղևույթը)։ Ըստ այսմ՝ «ընդունելութիւն բառ ընդունական բայից և անուանց յատկութեան, եւ յարին նմա այնք, որք և բային թարց դիմաց և խոնարհութեանց»[21]։ Այսպիսով, ընդունելությունը բայից տարբերվում է դեմքի և խոնարհման հատկանիշներով, որը և հնարավոր է դարձնում այդ բառերի հոլովումը կամ փոխակերպումը անվան։

Դերանունը, որի սահմանումը տարածված է հայերենի դերանվան վրա նույնությամբ, բնութագրվում է երկու քերականական հատկանիշներով, որպես անվան փոխարինող և ապա դեմք ցույց տվող բառ։ Այսպես՝ «Դերանունութիւն է բառ փոխանակ անուան առեալ, որոշեալ դիմաց յայտական»[22]։

Դերանվան համար թարգմանիչը իբրև համանիշներ գործածում է դերանունութիւն և դերանուն տերմինները։ Դրանուն խոսքի մասի մեջ, ըստ Դիոնիսիոսի ընդունած դերանվան երկու տեսակի՝

---

20 Համմ. Գ. Ջահուկյան, նշվ. աշխ., էջ 77—78։

21 Ն. Ադոնց, նշվ. աշխ., էջ 26։

22 Նույն տեղում, էջ 27։

«նախագաղափար» և «ածանց» կամ «ածանցական», մտցվում են միայն անձնական (ես, դու, նա) և ստացական (իմ, քո, նորա) դերանունները՝ ոչ միայն իրենց հոգնակի, այլև հունարենի տառացի թարգմանությամբ երկակի թվի համար հորինված ձևերով (մոնք, դոնք, նոնք, իմէն, քովրա, նովրա)։ Դերանունների մյուս տեսակները բաշխվում են անուն և մակբայ խոսքի մասերի վրա։

Մակբայի սահմանումն ունի ձևաբանական-շարահյուսական հիմունք։ Այն բնութագրվում է որպես չփոփոխվող և բայի վրա կամ նրանից հետո դրվող խոսքի մաս։ Այսպես՝ «Մակբայ է մասն բանի անխոազաց, ստոր բայի ասացեալ կամ մակասացեալ բայի»[23]։ Մակբայի մեջ են մտցված միջարկությունները կամ ձայնարկությունները, մակբայական (ցուցական և հարցական) դերանունները, եղանակական բառեր ու բառ-մասնիկներ, որոնց թվում նաև այո, ոչ, չէ ու նման պատասխանական բառերը։ Ըստ Գ. Ջահուկյանի մեկնաբանության, ձայնարկությունների՝ բայի վրա դրվող բառեր կամ մակբայ համարվելու տեսակետը հույների մոտ առաջացել է «բայ» և «բան» կամ «խոսք» հասկացությունների նախնական անանջատ ըմբռնումից, երբ բայը, որպես առանձին խոսք կազմող բառ, նույնացվել է «բանին», ուստի և «բանին» կամ «խոսքին» զգացմունքային երանգներ տվող ձայնարկությունները համարվել են բային զգացմունքային գունավորում տվող մակբայներ։ Այսպիսով՝ տարբեր նշանակությունների ու բնույթի այս բառախմբերի մտցնելը մակբայի մեջ, այլև այն, որ մակբայը դիտվում է իբրև միայն բայի լրացում, մի կողմից նեղացնում են նրա խոսքի մասային նշանակությունը, մյուս կողմից անհամապատասխան են դարձնում այդ սահմանումը մակբայի մեջ խմբված այլազան բառատեսակներին։

Նախադրությունն ըստ հունարենի առանձնահատկության ավելի լայն հասկացություն ունի։ Այն ավելանում է մյուս խոսքի մասերին ոչ միայն բառակապակցության, այլև բարդության մեջ, որպես նախածանց։ Ուստի և՝ «Նախադրութիւն է բառ նախադրեալ յամենայն մասունս բանի ըն բարդութեան և բաղդասութեան»[24]։

Գրաբարում, իհարկե, հունարենի պես առանձին նախադրություններ ունեն նաև բառակազմական արժեք և բաղադրության մեջ դառնում են ածանց (առանցանել, ընդօրինակել, ըստանձնել, յետածին և այլն), բայց հակասությունը միայն նրա մեջ չէ, որ

---

[23] Նույն տեղում, էջ 31։

[24] Նույն տեղում, է 30։

բերված նախադասությունների մեջ կան այնպիսիք, որոնք ո՛չ իբրև նախածանց և ո՛չ էլ իբրև նախադրություն հայերենում չեն գործածվել. բանն այն է, որ բարդության բաղադրիչ դարձած և ածանցի վերածված մասնիկները այդ դերում էլ Թրակացին և նրա թարգմանիչը շարունակում են դիտել որպես առանձին բառ և խոսքի մաս:

Նախադրության մեջ, սակայն, հայ թարգմանիչը կատարում է մի լրացում, որով հաստատում է, թե ինքը լավ է հասկացել այս խոսքի մասի քերականական արժեքը և բնագրի ու այս տերմինի ստուգաբանական իմաստի մեխանիկորեն կրկնողը չէ: Նախադրությունների մեջ նա հիշատակում է նաև ետադրական բառեր և վերջածանց. «Եւ ստորադասք են ի սոցանէ երեք. սակս, կից, որդ»: Սա առաջացնում է նախադրություն անվան և նրա գործածության մի նոր հակասություն, որի պարզաբանմամբ սկսում են զբաղվել հետագայում այդ թարգմանության հայ մեկնիչները: Բայց որ հայերեն թարգմանության մեջ դրանով ուշադրություն է հրավիրվում կապական իմաստով գործածվող ետադրությունների վրա և խորացվում ու ճշգրտվում է նախադրություն տերմինի իմաստը, ակնառու է:

Շաղկապը սահմանվում է որպես միտքը որոշ կարգով շաղկապող և բացատրության մեջ եղող խզումը բացատրող բառ: «Շաղկապ է բառ, որ շաղկապէ զտրամախոհութիւնն ոճով և զմեկնութեանն փեռեկումն յայտնէ»[25]:

Թրակացին հունարենի համար զանազանում է հոդ առանձին խոսքի մաս՝ նախադաս և ետադաս տեսակներով: Գ. Ջահուկյանի պարզաբանումով՝ հույները ետադաս կամ ստորադաս հոդ ասելով հասկանում էին հարաբերական դերանունները, որոնք ձևով նման են հոդերին: Այլ կերպ ասած՝ հույները Թրակացու ժամանակ ետադաս հոդերի և հարաբերական դերանունների տարբերակման կամ հարաբերականի, որպես դերանվան, ըմբռնումը չունեին:

Թարգմանիչը հունարենի հոդ խոսքի մասը մեխանիկորեն փոխադրում է հայերենի մեջ՝ նրա համար էլ ընդունելով նախադաս և ետադաս հոդեր՝ իրենց ձևաբանական հատկանիշներով: Այսպես՝ «Յաւդ է մասն բանի հոլովական, նախադասեալ (եւ ստորադասեալ) ներխնարհութեան անուանցն. եւ նախադասական է այս, որգոն ո, եւ ստորադասական է այս, որզան որ»[26]:

---

[25] Նույն տեղում, էջ 35:

[26] Նույն տեղում, էջ 27:

Ինչպես տեսնում ենք, հունական բնագրին հարազատ մնալով՝ հայ թարգմանիչը որպես ետադաս հոդի օրինակ բերում է ար հարաբերական դերանունը: Հայերենին խորթ նախադաս հոդի հասկացությունը պարզ դարձնելու համար նա օրինակ է բերում կոչականի հետ գործածվող ը-ն: Հետագա բացատրություններում թարգմանիչը նախադաս հոդը կամ շրջանցում է, կամ այն թարգմանում է այս, այդ, այն ցուցականներով: Հունարենի հոդի թվի և հոլովի քերականական հատկանիշները բացատրելիս, նա կրկին դիմում է ցուցական դերանվան օգնության՝ այս, այդ, այն ցուցականների թեքված ձևերը վկայակոչելով որպես հունարենի որոշիչ հոդի թեքված ձևերին համապատասխանող օրինակ:

Քերականության բնագրի՝ հունարենի դերանունների հոդավոր («բաղաւդ») և առանց հոդի («անբաղաւդ») կազմությունները թարգմանիչը պարզաբանում է այսպես՝ «Եւ դերանուանցս են որ անբաղաւդք են, եւ են որ բաղաւդք. անբաղաւդք, որգոն ես. եւ բաղաւդք, որզան իմս»[27]:

Մեջբերումից երևում է, ինչպես իրավացի նկատել են ուսումնասիրողները, որ հայ թարգմանիչը ունի հայերենի հոդի ըմբռնումը. նա հունարենի որոշիչ հոդի դիմաց ստացական դերանվան հետ գործածում է հայերենի ս հոդը: Բայց այս միտքը չի զարգացվում, քանի որ այն հունական տեքստին չի համապատասխանում. հայերենի ս, դ, ն հոդերը չունեն բառային անկախություն, ինչպես և քերականական ձևաբանական հատկանիշներ, որպիսիք ունեն հունարենի հոդերը: Սա էլ շփոթեցնում է թարգմանչին՝ հայերենի հոդերը զանազանելու և սրանց ու հունարենի հոդերի տարբերությունները ըմբռնելու գործում:

Դիոնիսիոսի քերականության մեջ, խոսքի մասերի սահմանումից և սրանց քերականական հատկանիշների բնութագրումից զատ, թվարկվում են նաև նրանց իմաստային և բառակազմական տեսակները, ընդ որում ածանցումը քննվում է «տեսակք», իսկ բառաբարդումը՝ «ձեւք» անվան տակ:

Բայց այստեղ էլ չի պահպանվում սկզբունքի միասնականությունը: Անուններին համար Թրակացին տարբերում է և՛ բառակազմական, և՛ իմաստային տեսակներ, բայերն ու դերանունները տրոհվում են միայն բառակազմական հատկանիշով, իսկ մակբայներն ու շաղկապները՝ միայն իմաստային: Այս անհետևողակա-

[27] Նույն տեղում, էջ 30:

նությունը անցնում է հայերեն թարգմանությանը, թեև թարգմանիչը կատարում է առանձին լրացումներ։

Թարգմանիչը հունարենի համար հորինված անվան իմաստային քսաներեք տեսակները թվարկում է անփոփոխ։ Այդ տեսակների մեջ մտնում են նաև ածականները, թվականները, դերանունների մի մասը (հարցական, հարաբերական, որոշյալ, անորոշ և բաղադրյալ ցուցականներ) իրենց ենթատեսակներով։ Առաջին հերթին զանազանված են, որպես անվան իմաստային տեսակներ, հատուկ («իսկ») և հասարակ («առասական») անունները։ Սրանք ստոիկ Քրիսիպիոս Սոլոյացին տրամաբանական հիմունքով անջատեց իրարից, որպես առանձին խոսքի մասեր[28]։ Թրակացին և նրա դործի հայ թարգմանիչը այս վեճը լուծում են հօգուտ անվան խոսքիմասային միասնության գաղափարի։

Թեև դերբայն առանձնացվում է որպես առանձին խոսքի մաս, բայց անվան մեջ նշվում են նաև –ալ, –եալ վերջավորությամբ բայաձևեր, իսկ դերբայների քննության ժամանակ օրինակներ չեն բերվում։

Մակբայների հունական 26 տեսակի փոխարեն թարգմանիչը դրել է 35 տեսակ։ Հայերեն հավելումները կատարված են ի հաշիվ մակբայ համարված միջարկությունների իմաստային ստորակարգության։

Բաց թողնելով նախադրությունների քանակի վերաբերյալ հունարեն բնագրում եղած մասը՝ թարգմանիչը հունարենի 18 նախադրության փոխարեն թվարկում է 50 նախադրություն և երեք եռադրություն։ Վերականգնելով հունարենի և նրանց հայերեն համարժեք նախադրությունների շարքերը՝ Գ. Ջահուկյանը գալիս է այն եզրակացության, թե «Հայ թարգմանչի թվարկած 50 նախադրություններից ոչ բոլորն են հանդիպում որպես այդպիսիք։ Կան և այնպիսիները, որոնք ոչ մի տեղ որպես նախադրություն կամ նախածանց չեն գործածվել և հավանաբար արհեստական ստուգաբանության արդյունք են, այսինքն՝ անջատվել են այնպիսի բառերից, որոնց մեջ նրանք ածանց են կարծվել (գաւ, թեռ, ատր և այլն)»[29]։

Հունարենի շաղկապի 8 տեսակի դիմաց թարգմանիչը դնում է

---

[28] Античные теории языка и стиля, էջ 26։

[29] Գ. Ջահուկյան, նշվ. աշխ., էջ 74։

10 տեսակ՝ մասնավորապես ավելացնելով իմաստային մի նոր տեսակ՝ «վարանականք» անվամբ, որի համար բերում է գեթ, գոնե, փարթար օրինակները։

Դիոնիսիոսի քերականության հայերեն թարգմանությունը պակաս դեր չի խաղացել հայերենի խոսքի մասերի քերականական տարբեր հատկանիշների ու նրանց լեզվական արտահայտության հարցերի հետագա պարզաբանման գործում։ Սակայն մեր նպատակից դուրս համարելով խոսքի մասերի ու սրանց ենթատեսակների լեզվական ամեն կարգի ու ամբողջական քննությունը՝ չենք անդրադառնում Թրակացու քերականության և նրա հայերեն թարգմանության այս կարգի մանրամասների. մանրամասներ, որոնցով ըստ ամենայնի զբաղվել են Ն. Ադոնցն ու Գ. Ջահուկյանը, իսկ վերջին տարիներին՝ նաև Ա. Մուրադյանը։

ՀԱՅԵՐԵՆԻ ԽՈՍՔԻ ՄԱՍԵՐՆ ԸՍՏ ԹՐԱԿԱՑՈՒ «ՔԵՐԱԿԱՆԱԿԱՆ ԱՐՎԵՍՏԻ» ԹԱՐԳՄԱՆՈՒԹՅԱՆ 5—15-ՐԴ ԴԱՐԵՐԻ ՄԵԿՆՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ԵՎ ՔԵՐԱԿԱՆԱԿԱՆ ԱՇԽԱՏՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ

V—X ԴԱՐԵՐԻ ՀԵՂԻՆԱԿՆԵՐ

Դիոնիսիոսի «Քերականական արվեստի» թարգմանությունը ավելի քան հազար տարի վերլուծության ու մեկնության առարկա դարձավ հայ մեկնիչների համար։ Հույն քերականի ու նրա նախորդների հայացքների իրենց մեկնությունները շարադրելիս, հայ հեղինակները հաստատում կամ մերժում են այդ հայացքների ճշմարտացիությունը՝ միշտ դիմելով սեփական փաստարկների ու լեզվական օրինակների։ Այդ ընթացքում, ինչպես վերն ասվեց, մեկնիչները մի կողմից, հարազատորեն հետևելով բնագրին, ջանում են հայերենի կառուցվածքին խորթ իրողությունները ամեն կերպ հասկանալի դարձնել ընթերցողին, ուստի կրկնում են թարգմանության արհեստական հորինվածքները և սրանք զուգորդում նոր, գործին չօգնող բացատրություններով, իսկ մյուս կողմից՝ բանավիճելով մերժում են անընդունելին, ճշգրտում ու լրացնում թերին՝ մասնավորապես հենվելով հայերենի՝ հունարենից ունեցած լեզվական տարբերությունների վրա։ Այսպես է սկզբնավորվում հայ քերականությունն ու քերականական մտքի զարգացումը։

Թրակացու քերականության գործնական (էմպիրիկ) հիմունքներին հայ առաջին մեկնիչները հակադրում են քերականության իրենց ռացիոնալիստական ըմբռնումը։ Ըստ այսմ, խոսքի մասերի

տարբերակման մեջ գլխավոր ուշադրությունը դարձվում է իմաստին, որը գալիս է փոխարինելու Թրակացու մե՛կ իմաստային, մե՛կ ձևաբանական, մե՛կ շարահյուսական ոչ միասնական սկզբունքին։ Սակայն սկզբունքի միասնությունը չի դառնում հարցի գիտական լուծման բանալի, քանի որ քերականական ռացիոնալիզմը հայ մեկնիչներին մղում էր հայեցողականության։ «Դրան նպաստում էր այն հանգամանքը,— իրավացիորեն գրում է Գ. Ջահուկյանը,— որ հունարեն լեզվական արտահայտության եղանակները հաճախ մեխանիկորեն տեղափոխվում էին հայերենի հողի վրա և դրանով կորցնում էին իրենց կոնկրետ, անմիջական հիմքը։ Այսպիսով քերականությունը վերածվում էր մի բնագավառի, որը, հեռանալով իրեն ծնող անմիջական լեզվական հիմքից, ըմբռնվում էր վերացականորեն, դիտվում որպես բանականության տվյալներով կառուցված մի դիսցիպլին։ Քերականական երևույթների ու կատեգորիաների իմացության աղբյուրը դիտվում էր ոչ թե փորձը, այլ բանականությունը, ընդ որում սա էլ կողմնորոշվում էր դեպի գրականությունը, և տրամաբանական կատեգորիաները նույնությամբ հատկացվում էին քերականությանը»[30]։

Ուսումնասիրողները (Ն. Ադոնց, Գ. Ջահուկյան, Ա. Ա. Ադամյան, Ա. Մուրադյան) Թրակացու քերականության 5—10-րդ դարերի հայ մեկնիչներից քերականական ռացիոնալիստական հայացքների կրողներ են համարում Դավիթ և Մովսես մեկնիչներին։ Այլ են Անանունն ու, մանավանդ, Ստեփանոս Սյունեցին։

1. Դավիթ.— *Լեզվական իրողությունների պարզաբանման ռացիոնալիստական մոտեցումը Դավիթն սկսում է բառի և բանի իր նոր ըմբռնմամբ, որը հիմք է դառնում խոսքի մասերի տրամաբանական վերլուծության։ Թրակացու «Բառ է մասն դուզնաքեայ ըստ բաղդատութեան բանի»[31] սահմանմամբ, ուր անտեսված է բառի իմաստային հատկանիշը, բառը կարող է նույնացվել վանկին և տառին։ Որ «բանի» (նախադասության) շարակարգի ամենափոքր մասեր են ոչ միայն վանկերը, այլև տառերը կամ հնչյունները, այս բանը գիտակցում էին նաև Թրակացու հույն մեկնիչները և քննադատում էին բառի նրա սահմանումը։ Դավիթը ճշտում է բառի սահմանումը՝ նրա բնորոշ հատկանիշը համարելով ոչ թե ձևական, այլ իմաստային կողմը։ Հայ մեկնիչի պարզաբանմամբ կարևորն այն չէ, թե բառը քանի վանկից է կազմված, կարևորը նա է, որ բառը մի*

[30] *Նույն տեղում, էջ 137—138։*

[31] Ն. Ադոնց, *նշվ. աշխ., էջ 12։*

նշանակություն պիտի ունենա։ Այսպես՝ «Եւ լսի բառ ասացուածն, որ է ըստ միում վանգի կամ ըստ երկուց կամ ըստ երից. նշանական մի է»[32]։ Բառը թեև «բանի» նվազագույն մասն է, բայց ըստ Դավթի, այն մեծ զորություն ունի և նրա (նախադասության) հիմքն է կազմում։ Եթե «բանը» մտքի «ինքնակատար», այսինքն ավարտուն արտահայտությունն է, ապա բառը, լինելով իմաստակիր, ինքնին վերցված այդպիսին չէ։

Դավիթը ուշադրություն է դարձնում խոսքի մասերի տարբերակման ու խմբավորման վերաբերյալ հույների մոտ գոյություն ունեցող տարակարծություններին։ Նա նկատում է, որ քերականներից ոմանք անուն խոսքի մասից առանձնացնում են հատարակ անունները («առասութիւն»), որպես առանձին խոսքի մաս, ու այդպիսով Թրակացու 8 խոսքի մասերը դարձնում են 9։ Մինչդեռ փիլիսոփաները ընդունում են 5 խոսքի մաս։ Այս մասին Դավթի բացատրությունը հետևյալն է. «Բայց զմասունս բանի եւ զառասութիւնս եւս յաւելլով ասացին ինն։ Իսկ իմաստասէրք զանուանն մասունս ընդ անուան դասելով եւ զբային ընդ բայի, ածելով առ նոսա զշաղկապն եւ զյաւդն եւ զնախդիրն, ասացին հինգ. այլ սա զառասութիւն իբրեւ զտեսակ դասելով ընդ անուամբ ասաց ութ։ Իսկ Արիստոտէլէս զբաստորասութիւն եւ զբացասութիւն եւ զբացերեւութիւն ընդ անուան եւ ընդ բայի ասաց հինգ գոլ»[33]։

Շարադրելով քերականների ու փիլիսոփաների այս հակասական կարծիքները՝ Դավիթը սրանցից ընտրություն չի կատարում։ Նա լեզվի նկատմամբ կիրառում է տրամաբանության և փիլիսոփայության տվյալներ, ուստի և քերականների և փիլիսոփաների եզրակացությունների միջև տարբերություն չի տեսնում, սրանք մեջ է բերում հավասարապես։ Դրա պատճառն այն է, որ «Դավիթը խոսքի մասերի տարբերման պրոցեսը չի դիտում որպես լեզվի ուսումնասիրության պատմական զարգացման մի պրոցես, որի արդյունքը Թրակացու քերականությունն է։ Միաժամանակ նա այդ բանի մեջ չի տեսնում քերականության աստիճանական առանձնացումը փիլիսոփայությունից, այլ փիլիսոփաների կարծիքը դնում է Դիոնիսիոսի բաժանման կողքին»[34]։

Դավիթն զբաղեցնում է մի տեսական հարց ևս. դա հին հույ-

---

[32] Նույն տեղում, էջ 101։

[33] Նույն տեղում, էջ 102։

[34] Գ. Ջահուկյան, նշվ. աշխ., էջ 138։

ների մեջ սկզբնավորված և մինչև օրս շարունակվող վեճն է խոսքի մասերի գոյացման հաջորդականության մասին։ Քանի որ որպես հիմնական խոսքի մասեր, որոնցից հետագայում անջատված էին համարում մյուս խոսքի մասերը, հույները ճանաչում էին անունն ու բայը, ուստի և հույն փիլիսոփաներն ու քերականները այդ վեճը մղում էին այս երկու խոսքի մասերի ծագման առաջնության շուրջը։ Դավիթը պաշտպանում է անվան ծագումնաբանական առաջնության տեսակետը։ «Ասացաք եթէ զանուն ասացին նշանակիչ գոյացութեան եւ զբայ՝ պատահմանն։ Եւ զի այսպէս է՝ նախ յառաջանալ ի դէպ է գոլոյն քան պատահմանն, յայտ է՝ անուան քան բայի»[35]։ Դավիթի այս դատողությունը, որի հիմնավորումն այն է, թե մատերիան («գոյը») առաջացմամբ նախորդել է շարժմանը («պատահմանը»), Գ. Ջահուկյանը համարում է «...լոկ կռահումների, հայեցողական մտահղացման արդյունք»։

Դավիթը խոսքի մասերի սահմանման Թրակացու ոչ միասնական սկզբունքը փոխարինում է իր իմաստային սկզբունքով։ Անվան և բայի սահմանումներում նա դեն է նետում Դիոնիսիոսի բերած ձևաբանական և շարահյուսական հատկանիշները, դրանց տեղ խորացնում է իմաստային կողմը։ Անունն ու բայը բնութագրվում են իրերի և երևույթների իմացական տարբերակման իրենց հատկանիշով։ Անունը ճանաչվում է իբրև «նշանակիչ գոյացութեան եւ զբայ՝ պատահմանն» կամ մի այլ ձևակերպմամբ՝ «..անուն զէն նշանակէ, իսկ բայ զներգործութիւն էին»[36]։

Թրակացու անվան սահմանման մեջ անունների իմաստային հատկանիշը համարվում է «մարմին կամ իր» նշանակելը։ Քերականը, ինչպես երևում է բերված օրինակներից («...մարմին, որ զան քար, և իր որպէս խրատ»), «իր» ասելով հասկանում է վերացական գոյականները։ Դավիթը, շատ լավ բացատրելով ֆանձրացական և վերացական գոյականների տարբերությունը, ավելի հարմար է գտնում Թրակացու «իր» անվանման փոխարեն գործածել «անմարմին» բառը։ «Մարմին եւ իր ասելով նշանակել՝ որոշեաց զնա ի դերանունութենէ իբր զմարմին, որ շոշափի եւ ըմբռնի, եւ իր, որ ի մտաց յառաջ գայ եւ միայն լսելեաց լինի ըմբռնելի։ Բայց եւ զիրս աստանաւր պարտ էր ասել անմարմին քան զիր»[37]։

---

[35] Ն. Ադոնց, նշվ. աշխ., էջ 103։

[36] Նույն տեղում, էջ 112։

[37] Նույն տեղում, էջ 103։

Հասարակ և հատուկ անունների տարբերակման հարցին անդրադառնալիս, Դավիթը հիշում է հույն փիլիսոփաների վեճը սրանց առաջնության հարցի մասին և ավելացնում, որ Դիոնիսիոսը հատուկ անունը նախադասել է հասարակ անվան՝ հետևելով Արիստոտելին։ «Վասն իսկիդ և առասականիդ հակառակութիւն եղեւ յոմանս։ Պղատոն զառասականդ ասաց առաջին իբր թե ի տեսակաց ոմանց տիրական գաղափարաւ ըստ ժամանակի. իսկ Արիստոտելէս գիսկդ. այսպիսի թե՝ տեսանել հաստատուն է քան զլուր. որպէս զարեգակն ոչ ոք կարէ ժխտել, իսկ զաներեւելի ինչ բազումք, վասն որոյ եւ նախադասեցաւ տիրականս Մարկոս քան զառասականն մարդ»[38]։

Դավիթն իր մեկնություններն ու լրացումներն է կատարում անվան իմաստային ու բառակազմական այլ տեսակների ու սրանց հասկացությունների, ինչպես նաև անունների քերականական հատկանիշների վերաբերյալ։ Անվան թվի հատկանիշը քննելիս, նա զանազանում է եզակի, հոգնակի, հավաքական և անեզական թվեր՝ քաց թողնելով հայերենին խորթ երկակի թվի հասկացությունը։ Բայի համար զանազանում է երկու՝ «եզական» և «յոգնական» թվեր։

Վերահաստատելուց հետո այն կարծիքը, որ բայը հաջորդում է անվանը, Դավիթը արդարացնում է Թրակացու՝ բային տված սահմանման սկիզբը՝ «Բայ է բառ անհոլով...», ուր չհոլովվելու հատկանիշը համարում է բայը անունից զանազանող հատկանիշ։

Դավիթին հետաքրքրել են նաև բայի ժամանակի օբյեկտիվ գոյության, ներկա, անցյալ, ապառնի ժամանակներից ո՞րի հիմնական կամ գլխավոր լինելու և այլ կարգի վեճերը։

Հետաքրքրական նորություն է բերում Դավիթը դերանվան սահմանման մեջ։ Դարձյալ շեշտը դնելով քննվող խոսքի մասի ոչ թե քերականական, այլ հասկացական կողմի վրա՝ նա անհրաժեշտ չի համարում դերանվան դիմային հատկանիշը ճանաչել որպես բնորոշ հատկանիշ, ուստի Թրակացու սահմանման այդ մասը («...որոշեալ դիմաց յայտական») բաց է թողնում։ Նա Թրակացու սահմանման մեջ դերանվան՝ անվանը փոխարինելու հատկանիշին ավելացնում է ևս երկու հատկանիշ, այդպիսով ստանում է դերանունը բնութագրող երեք հատկանիշ՝ «փոխանունութիւն», «թերանուն», «հասարակ անուն»։ «Ե՛ւ է դերանունութիւն փոխանունութիւն եւ թե-

---

[38] Նույն տեղում, էջ 108։

բանուն եւ հասարակ անուն. մինդ՝ իբր փոխանակ տիրականին, եւ միւսդ՝ զի ոչ զեկուցանէ զիսկն իբրև զանուն, եւ երրորդն հաւասարապէս ի վերայ արուի եւ իգի եւ կատարելոյն և մանկան առեալ լինի»[39]։

Դիոնիսիոսի հետևությամբ հայ Թարգմանիչն ու Դավիթը դերանուն են համարում միայն անձնական և ստացական դերանունները, որոնք իրենց դիմային հատկանիշով կապվում են հատուկ անվան հասկացության հետ։ Իր վերոհիշյալ լրացման մեջ էլ, ահա, Դավիթը դերանվան տրամաբանական ըմբռնումը պարզաբանում է՝ այն համեմատելով հատուկ անվան հետ։ Ըստ այդմ դերանունը՝ ա) «փոխանուն է, որովհետև փոխարինում է հատուկ («տիրական») անուններին, բ) «թերանուն» է, որովհետև հատուկ անունը («իսկը») թերի է ներկայացնում, նրա անվանական գործառությունը թերի է կատարում (այստեղ Դավիթը կռահում է, որ դերանունը մատնանշում է անձը, բայց անունը չի տալիս, թերի է թողնում), գ) «հասարակ անուն» է, որովհետև սեռային տարբերակում չունի և գործածվում է և՛ արական ու իգական, և՛ մեծի ու փոքրի համար։ Այստեղ էլ մեկնիչը նկատում է դերանունների՝ հասարակ անունների պես, ոչ թե առանձին անհատների համար գործածվելու, այլ ամեն անձի անվան տեղ հավասարապես դրվելու ընդհանրական հատկանիշը։

Դավիթը նկատում է դերանվանական հոլովման տարբերությունը անվանականից՝ առաջինը համարելով ավելի կատարյալ, քանի որ այնտեղ հոլովաձևերի այնպիսի նմանություններ չկան, ինչպիսիք անունների հոլովումի մեջ կան։

Հոդի խոսքիմասային առանձնահատկությունների վերաբերյալ Դավթի տեսակետները շատ կարևոր ճշգրտումներ են հայերենի հոդի ըմբռնման հարցում։ Մեկնիչը նախ նկատում է հունարենի բնագրին հարազատ մնալու և այն հասկանալի դարձնելու համար թարգմանչի կատարած արհեստական նորամուծությունները։ Այնուհետև լրացումներ է անում ըստ էության։ Նա հոդը և՛ հունարենի, և՛ հայերենի համար ճանաչում է որպես ինքնուրույն նշանակությունից զուրկ՝ ոչ «նշանակ» խոսքի մաս, որի դերը բառի իմաստը հասկանալի, որոշակի դարձնելն է։ Եթե հունարենի հոդերը նախադաս են և ունեն սեռի ու թվի քերականական հատկանիշներ, ապա

---

39 *Նույն տեղում, էջ 116։*

Հայերենի հոդերը (ս, դ, ն) միայն վերջադաս են և զուրկ են այդ քերականական կարգերից։ «Յաւդդ որպէս ի հոռոմին և ի մերումս ոչ եւս նշանակ է, այլ սուղ ինչ մասն։ Եւ է յաւդդ որպէս սոսկ բան յաւդեալ իմն բարդած, որ պատկանաւոր եւ յարդարուն գործիցէ։ Եւ ունի ի հոռոմին ի սկզբան բանին, որպէս թե ո՛վ Պետրոս. եւ են զանազանեալք արականի եւ իգականի եւ չեզոքի, սոյնպէս եզականին եւ յոգնականին։ Այլ եւ այս իսկ ի հայումս ի վախճանի ըստ երից այսոցիկ աւրինականացս իբր թե ձին կամ ձիդ կամ ձիս, որ նշանակիչ յայտնի իրաց է. զի ասիցես՝ ձի եկն, ոչինչ նշանակեցեր, իսկ դնելով ի վերայ զյաւդն, իբր թե ասիցես՝ ձին եկն, անդէն ծանուցեր։ Բայց այլ ամենայն նշանակ յաւդիդ ոչ միայն ոչ գտանի ի հայումս, այլ եդեալ է զտեղիսն լնլոյ»[40]։

Հոդի քերականական արժեքի հստակ ըմբռնումը օգնում է Դավթին, որպեսզի նա քննադատի Դիոնիսիոսին՝ հոդը առանձին քննելուց հետո դերանունների կապակցությամբ կրկին նրան անդրադառնալու և, մանավանդ, դերանուններն ըստ կազմության հոդավոր («բաղաւդք») և անհոդ («անբաղաւդք») տեսակների բաժանելու համար, քանի որ «բաղաւդ» դերանունը այլ բան չէ, քան պարզ դերանունը հոդի հարադրությամբ։

Մյուս խոսքի մասերի սահմանման ու իմաստային վերլուծության մեջ Դավիթը էական նորություններ չի բերում։ Դրանցում նա վերլուծության հիմնական առարկա է դարձնում խոսքի մասերի քննության հերթականության, մեկը մյուսին նախորդելու կամ հաջորդելու, գերադասելի կամ սպասավոր լինելու հարցերը։ Այս կարգի նրա դատողությունները սխոլաստիկ են, ապացույցների եղանակները՝ արհեստական։ Այսպես, օրինակ, նախադրությունը, հակառակ իր անվան, ըստ Դավթի, քննվում է որոշ խոսքի մասերից հետո, որովհետև նրանց նկատմամբ սպասավորի դերում է, ինչպես թագավորի առջևից գնացող ծառան՝ Կարապետը, որը պատվավոր չէ թագավորից և սպասավորի դեր է կատարում, թեև գնում է առջևից։ Չնայած փաստարկման սխոլաստիկ եղանակին, նա այստեղ ճիշտ է ըմբռնել նախադրության սպասարկու դերը։ Նույն եղանակով հեղինակը բացատրում է մակբայի մի շարք խոսքի մասերից հետո դրվելու հանգամանքը։ Քերականական նշանակություն՝ ունեցող խոսքի մասերի քննության մեջ Դավիթը կրկնում է Թրակա-

---

40 Նույն տեղում, էջ 115։

ցու ձևական հատկանիշներով տրված սահմանումները, իսկ երբ անցնում է իմաստային քննության, տալիս է դրանց ստուգաբանական իմաստների կամայական մեկնություններ։

Մակբայի, որպես չփոփոխվող («անխաղաց»), չխոնարհվող և բային նախորդող կամ հաջորդող խոսքի մասի, դիոնիսիոսյան սահմանումը մեկնաբանելիս, Դավիթը իբրև օրինակ բերում է բային նախադասվող և ետադասվող բառ, որը բնավ էլ մակբայ չէ. «...Այսպէս իմացիս զդա, իբր թէ զայս չինեմ կամ չինեմ զայս»[41]։

Դավիթը շաղկապի ամենավերջում դրվելը համարում է անհրաժեշտություն և ոչ թե պատվի կամ անարգանքի նշան։ Այս համարյա ոչինչ չասող դատողությունից հետո մեկնիչը կարողացել է տալ շաղկապի դերը ավելի ամբողջական և հստակ պատկերացնող սահմանում։ «Այլ շաղկապ ասի ի շաղելոյ իմն եւ ի կապելոյ ի կարգի զբառն ընդ բառն եւ զմիտս ընդ զմիտս, որպէս զի զմեկնութիւն բանին պատշաճապէս արտաբերեալ յայտնեսցէ»[42]։

Խոսքի մասերի տարբերակման տրամաբանական կամ իմաստային սկզբունքի անհետևողական կիրառության արտահայտություն է Դավթի կողմից ընդունելությունը ավանդույթով բայից տարբեր ինքնուրույն խոսքի մաս համարելը։ Այդ անհետևողականությունը ավելի ակնառու է դառնում, երբ թարգմանչի պես Դավիթն էլ ընդունելությունը մեկ ներկայացնում է որպես առանձին խոսքի մաս, մեկ էլ, անվան մեջ բայասեռի հատկանիշ ցույց տալու կապակցությամբ, ընդունելությունը նույնացնում է բայանվանը։ Թարգմանության մեջ ընդունելությունը որպես բայանուն ներկայացնող հատվածը հետևյալն է. «Եւ անուան հաստատադրութիւնք են երկու, ներգործութիւն եւ կիր. եւ ներգործութիւն է իբր թէ դատաւոր, ընտրող. եւ կիր իբր թէ դատեալ, դատեցեալ»[43]։

Իր հայացքների մասնակի թերություններով և խոսքի մասերի քննության հայեցողականությամբ հանդերձ՝ Դավիթը դառնում է հայ քերականության և խոսքի մասերի տրամաբանական դասակարգման սկզբնավորողներից մեկը, եթե ոչ առաջինը։

Քերականության և քերականական կարգերի ըմբռնման ռացիոնալիստական մոտեցումը ավելի ընդգծված արտահայտություն է ստանում Մովսես Քերթողի մեկնության մեջ։ Լեզվի քաջատեղյա-

---

41 Նույն տեղում, էջ 119։

42 Նույն տեղում, էջ 120։

43 Նույն տեղում, էջ 22։

կութեան հետ, ըստ Մովսեսի, քերականը պիտի կարողանա լեզուի փաստերը «դատողական հրամանները»վ հմտորեն ենթարկել բանականութեան պահանջին. «Քերդող է, որ զմասունս գիտէ բանին եւ ճանաչէ զդէմս խաւսիցն, զոր ինքն տեղեակն է լեզուին. զի քերումն ի վերայ ողորկութեան բանին ասացաւ, զի քերէ եւ սրբէ ըստ ամենայն դատողական հրամանաց եւ բերէ ի ցանկութիւն լսողաց անընդդիմադրելի բանիւք»[44]։

Իր այս պահանջի կիրառմամբ Մովսեսը «բանը» գերադասում է «տառից», վանկից և բառից, որպես որակապես տարբեր ու բարձր միավոր։ Իսկ «բանի» մասերի մեջ հիմնականը համարում է անունը, որին ստորադասվում է բայը։ Այս երկու գլխավոր խոսքի մասերը, ինչպես Դավիթը, Մովսեսն էլ սահմանում է իմաստային ըստ կրզբունքով, ապա ջանում է մյուս խոսքի մասերը ներկայացնել սրանց հետ ունեցած իմաստային կապով։

Մովսեսի վերլուծութիւններն ու դատողութիւնները խոսքի մասերի վերաբերյալ չունեն Դավթի մտքի խորութիւնն ու հետևակութիւնը, ուստի, եթե մասնակի հարցերի մասին նրա ինքնատիպ դատողութիւնները նկատի չունենանք, կարող ենք ասել՝ նա մեզ զբաղեցնող հարցի պատմութեան մեջ նորութիւններ չի բերում։

2. Անանուն.—Անանուն մեկնիչը քերականական ռացիոնալիզմին չի հետևում։ Ի տարբերութիւն Դավթի և Մովսեսի, նա բառը և «բանը» «տառից» ու վանկից զանազանում է ոչ թե առաջինների իմաստային կամ հասկացական հատկանիշի վկայակոչմամբ, այլ սրանց քանակային տարբերութեամբ։ Բառը նա համարում է վանկերի միացութիւն, իսկ «բանը»՝ բառերի շարք։ Ի դեպ, Անանունը նույնիսկ ավելորդ է համարել «բանի» սահմանման մեջ թողնել Թրակացու ձևակերպման այն մասը, որով «բանը» դիտվում է որպես ավարտված միտք («ինքնակատար տրամախոհութիւն») արտահայտող միավոր։

Ինչպես իր տեղում ասվեց, Անանունը Դիոնիսիոսի բայի սահմանման «բայ է բառ» (փոխանակ «բայ է մասն բանի») կապակցութեան մեջ խոսքի մասի փոխարեն «բառ» տերմինի գործածութիւնը համարում է կրկնութիւնից խուսափելու հետևանք։ Այսպիսով նա նույնացնում է այս երկու հասկացութիւնները՝ միայն «բառը» համարելով ավելի սովորական, ընդհանուր գործածութեան տերմին։

---

[44] Նույն տեղում, էջ 159։

խոսքի մասերի վերաբերյալ Անանունի տված մեկնաբանություններից առանձնապես ուշադրության է արժանի առարկայի և նրա անվան հարցի վերլուծությունը։ Հետևելով հույն այն փիլիսոփաներին, որոնք գտնում են, թե անուններն առարկաներին տրվում են «ըստ դրության», «ըստ սովորության» և ոչ թե «ըստ բնության»՝ Անանունը իրավացիորեն առարկայի և անվան մեջ տրամաբանական կապ չի տեսնում և դեմ է սրանց նույնացմանը։ «Եւ այլ եւս յորժամ ոք տարակուսի, թե զիարդ զՄովսէս անուն կամ Պետրոս առ այլ ոք կամ միւս Պետրոս համեմատէ. եւ ասեմք թե ըստ անուանն միագոյք են եւ համեմատք եւ իրաւք ի գործս անհամեմատք եւ բացորիշք ի միմեանց»[45]։

Վաղ միջնադարի այս հայ մեկնիչը ուշադրություն է դարձնում նաև «անուն» տերմինի գործածության մի այնպիսի կողմի վրա, որն այսօր էլ մնում է որպես լեզվագիտության տերմինագործածության վիճելի և չլուծված հարցերից մեկը։ Անանունը ուշադրություն է դարձնում «անուն» բառի լայն և նեղ իմաստներով գործածվելու երևույթին։ Նրա կարծիքով, երբ Թրակացին ասում է՝ «բայ է բառ անհոլով», ապա բայը «անուն» չի համարում, այլապես չէր կարող ասել՝ «բառ անհոլով», չէ՞ որ անունները հոլովվում են։ Ուստի հույն քերականը «անունը» գործածում է նեղ նշանակությամբ, որպես խոսքի մասերից մեկի անուն-տերմին. դրա համար էլ բայը, որ լայն իմաստով գործողության անուն է, Թրակացու համար «ճշմարիտ անուն» չէ և չհոլովվող բառ է։ «Անուն» բառը լայն նշանակությամբ, ըստ Անանունի, «նշանակիչ» է ընդհանրապես լեզվական ամեն մի նշանակելիի համար, բայց նեղ իմաստով այն «ճշմարիտ անուն» է. «Իսկ անհոլովական ասաց, զի ոմանք տարակուսեցան ասելով թե ինքն իսկ բայ անուն է. յորժամ ասեմք թե «Դաւիթ գրէ», Դաւիթ-ն անուն է եւ գրէ-ն ազդումն Դաւթին եւ անուանն ազդումն գրէ։ Արդ զի յայտ արասցէ թե չէ ճշմարիտ անուն բայ, այլ նշանակիչ միայն ազդմանն, ասաց անհոլովական, վասն զի ճշմարիտ անունն, որ ի վերայ իրի դնի, հոլովական է, իսկ բայ անհոլով։ Վասն զի ոչ մարթի ասել թե՝ գրեմ, գրեմիւ եւ այս յանհետեւեալացն»[46]։

Անանուն Մեկնիչի «անվան» ընբռնումը լրացվում է թանձրա-

---

[45] Նույն տեղում, էջ 127։

[46] Նույն տեղում, էջ 145—146։ Համմ. նաև Գ. Ջահուկյան, նշվ. աշխ., էջ 152—153։

ցական և վերացական, հատուկ և հասարակ անունների վերաբերյալ նրա տված պարզ ու հասկանալի մեկնություններով։ Մեկնիչը թեև չի մերժում Դիոնիսիոսի՝ վերացական գոյականների համար գործածած «իր» անվանումը, բայց նրա հասկացական տարբերությունը թանձրացական գոյականներից շատ որոշակի է պարզաբանում՝ մեկը համարելով մտքով «իմանալի իր», իսկ մյուսը՝ տեսնելով և շոշափելով «զգալի իր»։

«Հոլովական,—գրում է Անանունը,—այսինքն ընդունակ հոլովիցն մարմին կամ իր նշանակելով ամենայն որ ընդ տեսութեամբ անկանի եւ ընդ շաւշափմամբ մարմին կոչի, իսկ որ ընդ շաւշափմամբ և ընդ տեսութեամբ ոչ անկանի, այլ մտաւք միայն իմանի, որպէս իմաստութիւն եւ խրատ, նա իր կոչի։ Արդ ասէ թէ անուն կամ զգալի իր նշանակէ, որպէս քար, որ կոչի մարմին, եւ կամ իմանալի իր նշանակէ, որպէս իմաստութիւն, եւ կոչի իր»[47]։

Հասարակ անունների մեջ Անանունը տեսնում է «ընդհանուր» նշանակություն, իսկ հատուկ անունների մեջ՝ «մասնական». «Ամենայն անուն ասէ կամ ընդհանուր իր նշանակէ, որպէս մարդ, որ կոչի հասարակաբար, եւ կամ մասնական իր նշանակէ, որպէս Պաւղոս, որ կոչի յատկապէս»[48]։

Անանունը ընդունելությունը համարում է անվան և բայի հատկանիշներով օժտված առանձին խոսքի մաս, բայց ինչպես երևում է նրա բերած օրինակներից, նա «ընդունելութիւն» է համարում միայն անցյալ դերբայը. «Բայց հոլովումն ըստ առաջին մասին բանի, որպէս արարեալ, արարելոյ, արարելում եւ այլն ամենայն։ Նոյնպէս շինեալ, բերեալ, կերեալ, տարեալ, այս ամենայն եւ սոյնպիսիք հոլովք անուան եւ ընդունելութեան գան»[49]։

Անանունը «յատ» խոսքի մասի տակ դնում է հայերենի ցուցական դերանունները (այս այդ, այն) և սրանց բնորոշ է համարում հոլովի, թվի և որոշիչ հոդ առնելու հատկանիշները։

Մյուս խոսքի մասերի սահմանման և ըմբռնման վերաբերյալ այս մեկնիչը նոր բան չի ասում։ Նա շաղկապը սահմանում է որպես երկու իմաստները իրար միացնող «զուգակապ»՝ ելնելով նրա գործառույթից և «շաղկապ» անվան ստուգաբանությունից. «Շաղ-

---

47 Նույն տեղում, էջ 138—139։

48 Նույն տեղում, էջ 139։

49 Նույն տեղում, էջ 149։

կապս այս վերկուսին պնդէ ի միասին զիմաստս, զի միոյ ոչ եղանէ կապ, այլ զումեքէ և յորոց»[50]։

Հայերենի թեքվող խոսքի մասերի պատմության տեսակետից ուշագրավ են Անանուն մեկնիչի մի շարք ձևաբանական դիտողությունները, որոնցով նա զանազանում է հայերենի խոսքի մասերի թեքման տարբերությունները հունարենից։ Նա մերժում է հայերենին ոչ առանձնահատուկ քերականական սեռի և երկակի թվի հասկացությունները։ Ըստ Գ. Ջահուկյանի՝ «Բայի և նրա խոնարհման վերաբերյալ Անանունի արած դիտողությունները թարգմանության և Դավթի մեկնության համեմատությամբ մի քայլ առաջ են հայերենի ուսումնասիրության բնագավառում»[51]։

3. Ստեփանոս Սյունեցի.— Սյունեցին մինչև այժմ քննված փիլիսոփա քերականներից առաջինն է, որի ժամանակաշրջանը ստույգ հայտնի է (8-րդ դար)։ Սյունեցին նախորդ մեկնիչներից բաժանվում է մի պատմաշրջանով, որի ընթացքում մարդկային հոգևոր արժեքների զարգացման մեջ սկսում էին կատարվել էական տեղաշարժեր։ Տիրապետող դարձող քրիստոնեական աշխարհայեցողությունը իրեն էր ենթարկում մտավոր ամեն մի ստեղծագործություն, թուլանում էր հետաքրքրությունը դեպի անտիկ շրջանի փիլիսոփայական և գիտական նվաճումները։

Ահա թե ինչպես է բնութագրում Էնգելսն Արևմուտքի վաղ միջնադարի այս պրոցեսը. «Միջնադարը զարգացավ միանգամայն պրիմիտիվ վիճակից, նա սրբեց երկրի երեսից անտիկ քաղաքակրթությունը, անտիկ փիլիսոփայությունը, քաղաքականությունն ու իրավաբանությունը և ամեն ինչ նորից սկսեց։ Միակ բանը, որ միջնադարը վերցրեց կործանվող հին աշխարհից, քրիստոնեությունն էր և մի քանի կիսավեր, իրենց հին կուլտուրան կորցրած քաղաքներ։ Սրա հետևանքը եղավ այն, որ, ինչպես պատահում է զարգացման վաղ շրջանում, մտավոր զարգացման մենաշնորհն անցավ հոգևորականության ձեռքը, և կրթությունն ստացավ գերազանցապես աստվածաբանական բնույթ։ Ինչպես քաղաքականությունն ու իրավաբանությունը, այնպես էլ մնացած բոլոր գիտությունները հոգևորականության ձեռքում վերածվեցին աստվածաբանության հասարակ ճյուղերի, և նրանց մեջ դրվեցին այն բոլոր սկզբունքները, որոնք իշխում էին աստվածաբանության մեջ։

---

[50] *Նույն տեղում, է 203։*

[51] *Գ. Ջահուկյան, նշվ. աշխ., էջ 158։*

եկեղեցական դոգմաները միաժամանակ քաղաքական աքսիոմաներ էին, իսկ Աստվածաշնչի տեքստը բոլոր տեղերում օրենքի ուժ ուներ, նույնիսկ այն ժամանակ, երբ առաջացավ իրավաբանական հատուկ դաս, իրավաբանությունը երկար ժամանակ մնաց աստվածաբանության հսկողության տակ։ Աստվածաբանության այս միահեծան իշխանությունը մտավոր գործունեության բոլոր բնագավառներում այն բանի անհրաժեշտ հետևանքն էր, որ եկեղեցին հանդիսանում էր ֆեոդալական կարգերի ամենաբարձր ընդհանրացումը և սրբացումը»[52]։

Քրիստոնեության տիրապետության ուժեղացմանը Հայաստանում զուգորդում են արաբական կործանիչ արշավանքները և բռնի տիրապետությունը, որոնք միանգամայն անհապաղ դեր են կատարում 5-րդ դարում սկզբնավորված և արագ զարգացող մշակույթի հետագա ծավալման համար։ Արձանագրելով այս իրողությունը՝ Գ. Ջահուկյանը գրում է. «Նախորդ երեք մեկնիչներից մինչև Գրիգոր Մագիստրոսը ընկած ողջ ժամանակաշրջանը ներկայացված է մի-այն երկու անձնավորությամբ՝ Ստեփանոս Սյունեցու և Համամ Արևելցու քերականական աշխատություններով, որոնք բացի Սյունեցու մեկ աշխատությունից, իրենց արժանիքներով ընդհանուր առմամբ ցածր են կանգնած նախորդ շրջանի արտադրանքներից։ Ստեփանոս Սյունեցուց հետո եկող շրջանում դադարում են քերականությամբ հետաքրքրվելուց. նրանից հետո մինչև Գրիգոր Մագիստրոսը ընկած ժամանակաշրջանում հայտնի է միայն մեկ քերական՝ Համամը»[53]։

Թեև գնալով թուլանում էր հետաքրքրությունը դեպի քերականությունը, և եկեղեցին քերականությունը դարձնում էր աստվածաբանական դոգմաները քարոզելու միջոց, բայց Սյունեցին, ինչպես նկատել է Ն. Ադոնցը, շարունակում է դեռ մնալ որպես գիտնական քերական, ուստի նրա՝ Թրակացու քերականության հայերեն թարգմանության մեկնությունը շատ կողմերով, այդ թվում և խոսքի մասերի մեկնաբանություններում, ուշագրավ երևույթ է։

Սյունեցու լեզվաբանական ըմբռնումների համակարգում քերականությունը առաջին հերթին գնահատվում է իր գործնական դերով, ըստ այդմ նրա հիմնական նպատակը նա համարում է ուղղա-

---

[52] **Маркс** и Энгельс, Сочинения, т. VIII, *էջ 128։ (Մեջբերումն արված է ըստ Գ. Ջահուկյանի թարգմանության, տե՛ս էջ 170)։*

[53] Գ. Ջահուկյան, *նշվ. աշխ., էջ 175։*

գրության և ուղղախոսության ծառայելը։ Քերականության գործնական դերի մեծացումը, անշուշտ, պայմանավորվում էր հին գրական հայերենի արագ բարբառայնացմամբ, որով մեծանում էր գրաբար բնագրերը ճիշտ կարդալու և հասկանալու, նրա լեզվական կանոնները լավ սովորելու ու նրանով ճիշտ գրելու անհրաժեշտությունը։

Շեշտը դնելով մտքի ձևավորման արտաքին կողմի վրա՝ Սյունեցին խոսքի մասերը քննում է նախադասության մեջ իրենց կատարած շարահյուսական դերի տեսանկյունից։ Դրա համար էլ կապակցությունից դուրս չբնքված բառը նրա համար անիմաստ է։ Բառը իմաստավորվում է «բանի» մաս դառնալիս միայն, որից դուրս նա հավասար է վանկի. «Բառ կոչէ զնոյն վանգս եւ փոխեաց զանունն սակս ծածկելոյ ի մէնջ։ Արդ ասելն թէ բառ է մասն դուզնաւթեայ ըստ բաղդասութեան բանի, այսինքն, հեգ է փոքրիկ ըստ զուգադասութեան բանի։ Քանզի արդարեւ իսկ հեգքն կցկցելով ի միմեանս առնեն զբանն»[54]։

Եթե բառի հասկացության և սահմանման մեջ Սյունեցին, ցուցաբերելով ձևական մոտեցում, ետ է նահանջում, ապա «բանի» ըմբռնման մեջ նա առաջ է անցնում իր նախորդներից։ Մինչև այդ նախադասության ձևավորման համար անհրաժեշտ համարվող բառերի շարադասության հետ նա նախադասության անդամների կապակցության մեջ անհրաժեշտ է համարում նաև բառերի թեքումն ու սրանց միջև ընկնող դադարները, որոնցով կազմվում է մտքի ավարտվածությունը. «Իսկ անդ ասելն եթէ բան է հետևակ բառի շարադրութիւն, քանզի հետևանայ հոլովելով զբառսն եւ ածեալ յենթադասութիւն միմեանց։ Իսկ ասելն եթէ զտրամախոհութիւն ինքնակատար յայտնելով, այսինքն, հաստատախոհ կատարումն յինքեանց ցուցանէ մեզ ցան և տարած բառիցն, որպէս արքայութիւն, նեղութիւն և անձկութիւն եւ որք այսպիսիք... Բան ասէ զյայտնեալ եւ զկատարեալ խորհուրդն, որ ստորակիտաւն եւ միջակիտաւն եւ աւարտելովն յայտնի եւ դադարէ խորհուրդն»[55]։

«Վերծանության» առնչությամբ Սյունեցին «բանի» ձևավորման մեջ նշում է նաև հնչերանգի դերը, այնպես որ նախադասությունը կազմող այդ լեզվական միջոցների թվարկումը դառնում է կատարյալ, այն է՝ շարադասության, թեքում (վերջավորություննե-

---

[54] Ն. Ադոնց, նշվ. աշխ., էջ 201։

[55] Նույն տեղում, էջ 202։

րի փոփոխություն), դադարներ և հնչերանգ։ «Սյունեցու մոտ,— գրում է Գ. Ջահուկյանը,—«բանն» ըմբռնվում է որպես նախադասություն՝ այդ բառի իսկական առումով։ Այնտեղից էլ առաջանում է Սյունեցու կողմից խոսքի մասերի կամ «բանի մասանց» ըմբռնումը ոչ թե որպես խոսքի մասերի, այլ որպես նախադասության անդամների և նրանց կապակցության արտահայտիչների»[56]։

Խոսքի մասերի շարահյուսական ըմբռնումը թելադրում է Սյունեցուն, ի տարբերություն իր նախորդների, անվան և բայի առաջնության հարցում նախապատվությունը տալու բային։ Բայը առաջնային և էական է, որովհետև առանձին վերցրած էլ «բան» է կազմում, մինչդեռ անունը, առանձին վերցրած, վերացական է ու «անըմբռնելի»։ Վերջինիս կոնկրետացնողը, նրան տեղ ու ժամանակ վերագրողը բայն է. «Եւ ասի անունդ անըմբռնելի, վասն զի արդարեւ իսկ անտեղի եւ անժամանակ է։ Իսկ բայդ ասի ասումն, վասն զի արդարեւ իսկ յայտնելով ցտեղի, ցժամանակ, ցթիւ, ցդէմ և զայլ եւս պատահս»[57]։

Սյունեցին ոչ միայն բայը նույնացնում է արդի ըմբռնմամբ ստորոգյալին, այլև այն, որպես ասույթի ձևավորիչ, դարձնում է «բանի» կենտրոն։ Մյուս բոլոր խոսքի մասերը նաև «բառ» են, մինչդեռ բայը բառ չէ. չէ՞ որ նա հավասարարժեք է «բանի». «Եւ է բայ ըստ բանիս մեկնութեան, որ է ասութիւն մեր գործոց միմեանց, զոր ասեմք, կամ զանձանց մերոց թե զայս ինչ գործեցի կամ գործեաց կամ գործեցին»[58]։

Մեկնություններից առաջ Սյունեցին տալիս է մյուս խոսքի մասերի այսպիսի սահմանումներ.

«Իսկ ընդունելութիւնդ ունելութիւն ասի, քանզի բառ այս ունի խառնումն յանուանէ եւ ի բայէ։

Իսկ յաւդ ասի արդարեւ իսկ յաւդ, որ է կցումն գրոյ յանգի անուանն եւ բայի։

Իսկ դերանունդ թերանուն ասի կամ տիրանուն կամ փոխանուն։

Իսկ նախադրութիւնդ առաջադրութիւն ասի, վասն զի են վանգ ինչ, որ ըստ ինքեանց ոչինչ նշանակեն, բայց դնին նախերգանք այլոց մասանց։

---

[56] Գ. Ջահուկյան, նշվ. աշխ., էջ 192։

[57] Ն. Ադոնց, նշվ. աշխ., էջ 203։

[58] Նույն տեղում, էջ 212։

Իսկ մակբայդ կրկնաբայ ասի կամ վերնաբայ, զի ունի ժոսկ ինչ նշան ժամանակի և այլոց։

Իսկ շաղկապ զուգակապ ասի»[59]։

Ինչպես տեսնում ենք, խոսքի մասերը սահմանված են հիմնականում ըստ իրենց շարահյուսական դերի, դրա համար էլ հոդը քննարկվում է որպես անվան և բայի վերջավորությանը կցվող գիր, իսկ նախադրությունը՝ որպես ինքնին նշանակություն չունեցող ձևական խոսքի մաս, որ դրվում է մյուս խոսքի մասերի սկզբից։

Խոսքի մասերի իմաստային և ձևական մասնակի հատկանիշների վերաբերյալ Սյունեցու դատողություններից արժե հիշատակել անվան և դերանվան վերաբերյալ արված հետևյալ մեկնությունները։

«Անվան» տեսակները մեկնաբանելիս, Սյունեցին մարմին նշանակող անուններ է համարում բոլոր «տեսանելիները». սրանք քանձրացական գոյականներն են։ Վերացական գոյականների համար Թրակացու գործածած «իր» տերմինը Դավթի հետևությամբ փոխելով «անմարմին» բառով՝ նա տարբերակում է վերացականների երկու ենթատեսակ՝ «զգալի անմարմիններ», ինչպես՝ հուր, ջուր, օդ, լույս, խավար, խաղաղություն, խռովություն և այլն, և «իմանալի» անմարմիններ, որոնք մտքով են միայն ըմբռնվում. «Քանզի իմանալի իր են վերին զաւրութիւքն եւ եւս եւ վերագոյն պատճառն»[60]։

Սյունեցին լրացնում է դերանունների ցանկը։ Անձնական և ատացական դերանունների հետ թվարկում է նաև մինչ այդ այլ խոսքի մասերի մեջ դրվող կամ ճոդ համարվող այս, այդ, այն, այսք, այդք, այնք ցուցական դերանունները, ապա դերանուն է համարում «վերաբերական» կոչմամբ անվան մեջ դրված բաղադրյալ ցուցականները. «Իսկ վերաբերական է, որ եւ նմանական եւ դերհատուցական կոչի, նմանութիւն իմն ցուցանելով, որպէս այսանակ, այսպիսի, այսչափ, այսքան։ Արդ սոքա եւ ամենայն այսպիսիք ի դերանունն են եւ լինին սոքա ըստ երից ամանակաց եւ ըստ երից դիմաց եւ ըստ երից թուոց»[61]։ *Նա խորացնում է դերանվան վերաբերյալ Դավթի մեկնաբանությունը սրանց ընդհանուր, չտարբերակված անուն լինելու կետում՝ գտնելով, որ դերանունները «զդէմս»*

---

59 *Նույն տեղում, էջ 203։*

60 *Նույն տեղում, էջ 204։*

61 *Նույն տեղում, էջ 210։*

ուրումն յայտնեն յասելն, այլ զիրն ոչ յայտնեն, եթե զմարդոյ զումեքէ ասեն եւ եթե զայլոյ ուրուք չէակացս»[62]։

Հետագա բացատրության մեջ Սյունեցին նկատում է, որ այս, այդ, այն դերանունները, դրվելով հատուկ անունների վրա, ցույց են տալիս նրանց մերձավոր կամ հեռավոր լինելը, ուստի և որոշում են անվան դեմքը։

Այսպիսով, նա հանգում է այն դատողությանը, թե դերանունը ցույց է տալիս առարկայի դեմքը, բայց չի տարբերակում այն, իսկ անունը տարբերակում է առարկան, բայց չի ցույց տալիս նրա դեմքը։ Այս դատողության հստակ ձևակերպումը հայ քերականագիտության մեջ կատարվում է դարեր հետո միայն։

Ստեփանոս Սյունեցուց մոտ մեկ դար հետո (9-րդ դար) ապրած Համամ Արևելցու «մեկնությունը», որ կոչվում է «Վերլուծություն քերականին» չունի նախորդների արժեքը։ Առաջիններում նկատված մասնակի թերությունները այս մեկնիչի գործում որակ են դարձել։ «Նրա մեկնության մտահորիզոնը նեղ է,—գրում է պրոֆ. Ջահուկյանը,—զերծ փիլիսոփայական լուրջ հիմնավորումից և սահմանափակված միայն քրիստոնեական դոգմատիկայով»[63]։ *Այս պատճառով էլ Համամը առավելապես զբաղվում է նախորդների անհաջող կրկնությամբ, ուստի և հայերենի ու նրա քերականության, այդ թվում նաև խոսքի մասերի տեսության հարցերում նորություն չի բերում։*

XI—XV ԴԱՐԵՐԻ ՀԵՂԻՆԱԿՆԵՐ

Արաբական տիրապետության վերացմամբ և բագրատունիների հայկական ինքնուրույն թագավորության հաստատմամբ 11-րդ դարից Հայաստանում սկիզբ է դրվում հասարակական-տնտեսական կյանքի մի նոր շրջանի։ Հասարակական կյանքի քաղաքական-սոցիալական տեղաշարժերը շարունակում են բարերար ներգործություն ունենալ գրականության, արվեստների և գիտական մտքի զարգացման վրա հետագա 12—13-րդ դարերի Զաքարյանների վասալական պետության իշխանության, ապա առավելապես Կիլիկիայի հայկական պետության ծաղկման ժամանակաշրջանում։

---

[62] *Նույն տեղում, էջ 215։*

[63] *Գ. Ջահուկյան, Նշվ. աշխ., էջ 199։*

Աշխարհիկ կյանքի վերածնունդն ու մշակութային առաջընթացը պայմանավորում են միջնադարյան տասնյակ դպրոցների հիմնադրում, որոնց պատերի մեջ հելլենական ու հայկական մըտքի նվաճումների նկատմամբ սկսված հետաքրքրասիրությունը դառնում է ուսուցում և ստեղծագործություն:

Գրականության, գիտության, արվեստների զարգացումը հող են ստեղծում քերականության նկատմամբ մեռած հետաքրքրասիրության արթնացման համար: Այդ հետաքրքրասիրությունը դառնում է գործնական անհրաժեշտություն, երբ գրավոր լեզվի և խոսակցական լեզվի միջև ստեղծված տարբերությունները հին ձեռագրերի վերծանման և ընդօրինակման համար որոշակի գիտելիքների և հմտությունների իմացության պահանջ են առաջացնում: Այդ պահանջից ծնվում է «գրչության արվեստը», և այս անվամբ հայերենի ուղղագրությունը, կետադրությունը և հնչյունաբանությունը բովանդակող աշխատություններ են սկսում երևան գալ: Նույն պահանջով այս շրջանի քերականական աշխատությունները ավելի գործնական բնույթ են ստանում:

Անցյալի փիլիսոփայության և քերականության նկատմամբ նոր հետաքրքրություն ստեղծող առաջին հեղինակ Գրիգոր Մագիստրոսը (11-րդ դար) գրել է «Մեկնութիւն քերականին» աշխատությունը, որը Թրակացու քերականության հայերեն թարգմանության վերը հիշատակված բոլոր մեկնությունների բանաքաղություն է, որոշ փոփոխություններով և հավելումներում:

Իր կատարած բոլոր փոփոխությունների և հավելումների արժեքավոր կողմերով հանդերձ՝ Մագիստրոսի այդ երկը խոսքի մասերի քննության մեջ որևէ նոր բան չի ասում: Մեզ հետաքրքրող հարցի վերաբերյալ նոր բան չեն ասում նաև միջնադարի «գրչության արվեստին» վերաբերող աշխատությունները:

Ինչպես հայ քերականության պատմության, այնպես էլ խոսքի մասերի ուսմունքի պատմության մեջ այս շրջանում ուշադրության արժանի հեղինակներ են Վարդան Արևելցին, Հովհաննես Երզնկացին և Առաքել Սյունեցին:

4. **Վարդան Արևելցի.**—Միջնադարի հայ քերականագիտության մեջ հայերենի խոսքի մասերի ուսմունքի պատմության տեսակետից առանձին ուշադրության է արժանի Վարդան Արևելցու (13-րդ դար) «Վասն բանին մանանց» «կարճառօտ» աշխատությունը: Թեև Վ. Արևելցին քերականագիտության մեջ ճանաչված է իր «Մեկնութիւն քերականի» աշխատությամբ, սակայն ուսումնասի-

դողները հայ քերականագիտության պատմության համար մասնավոր տեղ են հատկացրել նաև հեղինակի սույն երկու էջանոց աշխատության։

«Վասն բանին մասանց»-ի առաջին հրատարակիչ Լ. Խաչիկյանը, սրա լեզվի ժողովրդականությունն ու մատչելիությունը ընդգծելուց հետո, այն բնութագրում է որպես «հայ հին քերականություններից միակը, որ ազատվելով ճարտասանական ու փիլիսոփայական գիտությունների խառնուրդից, հանդես է գալիս որպես զուտ քերականական գիտություն, գիտություն՝ խոսքի մասերի մասին (морфология)»[64]։

Նույն գնահատականն է տալիս Գ. Ջահուկյանը իր «Քերականական և ուղղագրական աշխատությունները հին և միջնադարյան Հայաստանում» աշխատության 249-րդ էջում սույն փոքրածավալ գործին՝ գրելով, թե «գործնական տեսակետից Վարդանը, ինչպես նշվել է, կատարում է քերականության համար մի կարևոր քայլ. իր «Վասն բանին մասանց» փոքրիկ աշխատությամբ քերականությունը ազատում է փիլիսոփայության, ճարտասանության և պոետիկայի տարրերից, բանասիրության իմաստով գործածվող տարտամ և չտարբերակված դիսցիպլինը վերածում մի դիսցիպլինի, որն ունի իր որոշակի առարկան՝ «բանի մասունքը»[65]։

Եթե «Մեկնութիւն քերականի» աշխատության մեջ Վ. Արևելցին հիմնականում հետևում է Թրակացուն և խոսքի մասերին տալիս է իմաստաբանական-ձևաբանական բնութագրումներ, ուստի և իր սահմանումների ու մեկնաբանությունների մեջ էական նորություն չի բերում, ապա «Վասն բանին մասանց» աշխատության մեջ խոսքի մասերի տարբերակման հիմք է ճանաչում նրանց նախադասության մեջ ունեցած գործառական կամ շարահյուսական արժեքը։ Ահա թե ինչու այս փաստն արձանագրելուց հետո, Գ. Ջահուկյանը գալիս է այն եզրակացության, թե «Այսպիսով «Վասն բանին մասանց»-ը հայոց լեզվի համառոտ շարահյուսության նախատիպն է»[66]։

Վարդան Արևելցին թեև այստեղ չի փոխում խոսքի մասերի ավանդական անվանումները և ոչ էլ սրանց թիվը, բայց «բան»-ը (խոսքը) նույնացնելով նախադասության, իսկ նախադասության

---

[64] *ՀՍՍՀ ԳԱ հայկական ֆիլիալի «Տեղեկագիր», 1943, № 2, էջ 84—85։*

[65] *Գ. Ջահուկյան, նշվ. աշխ., էջ 249։*

[66] *Նույն տեղում, էջ 253։*

ինքնուրույն անդամ եղող խոսքի մասերը՝ նախադասության անդամներին, այսինքն «անուն»-ը՝ ենթակային, «բայ»-ը՝ ստորոգյալին, «նախադրութիւն»-ը՝ անվան լրացումներին (որոշիչ, հատկացուցիչ, բացահայտիչ), «մակբայ»-ը՝ բայի լրացումներին (խընդիրներ և պարագաներ),—սրանց տալիս է շարահյուսական սահմանումներ։ Այս հանգամանքը պարզ երևում է Վարդանի կողմից «Մեկնութիւն քերականի» և «Վասն բանին մասանց» աշխատություններում նյութական խոսքի մասերին տրված հետևյալ տարբեր սահմանումներից.

«Անուն է մասն բանին հոլովական մարմին և իր նշանակելով. մարմին, որդան՝ քար. և իր, որպէս խրատ»[67]։

«Իսկ բանին առաջին մասն անունն է և զգոյութեան սահմանն ունի անունն, ընդ որով է մարմին և անմարին՝ երկինք, երկիր, աստուած, մարդ, ձի, արծուի»[68]։

«Բայ է բառ անհոլով, ընդունական ամանակաց, դիմաց և թուոց, որ ներգործութիւն և կիր յարկացուսցէ»[69]։

«Յետ անուանն բայ է, որ զանունն և զգործն ցուցանէ, որպէս ասել՝ Թորոս գարպաս շինեաց»[70]։

«Մակբայ է մասն բանի անխաղաց ի ստոր բայի ասացեալ և կամ մակաստացեալ բայի»[71]։

«Ութներորդն՝ մակբայ է, որ է վերնաբայ և կամ կրկնաբայ, թէ երկու մարդոյ իրք կամիս տալ, ասես Ճորտուն՝ երկաքանչիւրոցն տուր և թէ ամենոյ կամիս, ասես՝ իւրաքանչիւրոցն կամ երկուց, երից, չորից»[72]։

«Նախադրութիւն է բառ նախադրեալ, յամենայն մասունս բանի ըստ բարդութեան և ի բաղդատութեան, և են ամենայն յիսուն՝ ներ, արտ, ատր, ապ...»[73]։

«Վեցերորդ մասն բանին նախադրութիւն է, որ է ճոխաբանութիւն, յորժամ հեգ ինչ դնես առաջի բանին՝ բարի թագաւոր, իմ ապաւէն պարոն, Քրիստոսապահ Թորոս»[74]։

---

67 Վարդան Աւևելցի, *Մեկնութիւն քերականի*, էջ 102։

68 ՍՍՀՄ ԳԱ հայկական ֆիլիալի «Տեղեկագիր» 1943, № 2, էջ 86։

69 Վ. Աւևելցի, *Մեկնութիւն քերականի*, էջ 123։

70 «Տեղեկագիր», էջ 86։

71 Վ. Աւևելցի, «Մեկնութիւն քերականի», էջ 140։

72 «Տեղեկագիր», էջ 88։

73 Վ. Աւևելցի, «Մեկնութիւն քերականի», էջ 138։

74 «Տեղեկագիր», էջ 87—88։

Ուշադրության արժանի է «նախադրութեան» նոր ըմբռնումը Վ. Արևելցու «Վասն բանին մասանց»-ում։ Նա իր «Մեկնութիւն քերականի» աշխատության մեջ միջնադարի բոլոր մեկնիչների պես նախադրությունը հոդի և շաղկապի հետ համարում է ոչ ինքնուրույն, այլ սպասարկու խոսքի մաս՝ սրա մեջ հիմնականում մտցնելով նախածանցները, ինչպես նաև վերջածանցներ և կապեր։ «Վասն բանին մասանց»-ում, սակայն, Վ. Արևելցին «նախադրութիւն» տերմինը գործածում է անվան լրացումների համար, («Բարի թագաւոր, իմ ապաւէն պարոն, frիստոսապահ Թորոս»—ընդգծումը մերն է—Հ. Բ.), մինչդեռ շարունակելով այս օրինակները, նա գրում է. «Կամ շարամանելն, շար նախդիր է, մանելն իրքն»[75]։

Հետևաբար ուրիշների և իր կողմից «նախադրութիւն» անվանված նախածանցները Վարդանը այս աշխատության մեջ անվանում է «նախդիր»՝ տարբերակում մտցնելով այս անվանումների քերականական ըմբռնման ու գործածության մեջ։

Վարդանը, ինչպես նկատված է, դեռևս չունի լեզվի ձևաբանական և շարահյուսական կարգերի փոխհարաբերության որոշակի ըմբռնում և շարահյուսական երևույթների քննության մեջ գործածում է ձևաբանական կարգերի անվանումներ։ «Մասամբ էլ այս է պատճառը,— եզրակացնում է Գ. Ջահուկյանը,— որ Վարդանի նորամուծումը մնաց մեկուսի և հետագա զարգացում չստացավ նրա անմիջական հաջորդների կողմից։ Հետագայում շարահյուսական տեղեկությունների ներթափանցումը քերականության մեջ կատարվեց Վարդանի աշխատությունից անկախ»[76]։

Ինչպես «Վասն բանին մասանց»-ում, այնպես էլ «Մեկնութիւն քերականի» երկում Վարդանը ձգտում է քերականությունը դարձնել անկախ ու ինքնուրույն առարկա, նա աշխատում է իր քերականական մեկնություններում խուսափել փիլիսոփայական-բանասիրական ավելորդ վեճերից ու դատողություններից։

«Մեկնութիւն քերականի» աշխատության մեջ Վարդանը, քննելով Արիստոտելի և Պլատոնի վեճը հատուկ և հասարակ անունների առաջնության հարցի մասին, Դավթի հետևությամբ պաշտպանում է «իսկ»-ի (հատուկ անվան) առաջնայնության արիստոտելյան պնդումը. «Սակս իսկիդ և առասականիդ վէճ եղև վասն զի

---

[75] *Նույն տեղում, էջ 88։*

[76] *Գ. Ջահուկյան, նշվ. աշխ., էջ 255։*

Պղատոն զառասականն յառաջ ասաց, քան զիսկն ժամանակաւ՝ որպէս ընդհանուր և նախագաղափար։ Եւ Արիստոտէլէս զիսկն յառաջ ասաց՝ զՄարկոսն կամ զՄբատան, զի զո՛ր տեսանես՝ ա՛յն է հաստատուն. զքո մերձակայն՝ քան զանցած մարդկութիւնն, զլուեալն և զտեսեալն. զի զարեփակն չկարէ ոք ուրանալ զոր տեսանէ, բայց չտեսած իրն բազումք ուրանան։ Եւ իսկն է ստոյգն, յատուկն, մեկն, և առասական է ընդհանուրն, հասարակն և ազգն»[77]։

Հատուկ և հասարակ անունների առաջնութեան հարցի քննութեան մեջ ոչ պակաս կարևոր է Վարդանի կողմից այդ անունների իմաստային հստակ տարբերակումը, այն է՝ «Եւ իսկն է ստոյգն, յատուկն, մեկն, և առասական է ընդհանուրն, հասարակն և ազգն»։

Հատուկ և հասարակ անունները, իր բոլոր նախորդների պես, Վարդանը համարում է աւնուն խոսքի մասի տեսակներ։ Նա դեմ է հասարակ անունը առանձին խոսքի մաս համարելու և Թրակացու զանազանած 8 խոսքի մասի փոխարեն հունարենում 9 խոսքի մաս ընդունելու կարծիքին։ «Իսկ ոմանք,— գրում է Վարդանը,— զառասութիւնն եդին և ինն արարին։ Իսկ արուեստաւորս հանէ՝ ասելով, թէ ո՛չ է մասն բանի, այլ ընդ անուամբ անկեալ և չանունն գտանի, և անունն մասն է, իսկ առասութիւնն մասին մասն է ասացած»[78]։

Ինչպես խոսքի «մաս» և «մասի մաս» հասկացութիւններին, այնպես էլ «սեռ», «տեսակ», «մաս» տերմինների իմաստային տարբերութիւններին Վարդանի տված պարզաբանումները մինչ այդ եղած կարծիքներին էական բան չեն ավելացնում։ «Մասունք» ասաց իմաստասէրս, և ոչ՝ «տեսակք»,— գրում է Վարդանը,— զի ասա «մասունքն» պատուականագոյքն են քան «զտեսակսն», վասն զի «տեսակքն» աւագ և կրտսեր հարկաւորին գոլ, բայց «մասունքն»՝ ոչ»[79]։ Ուրեմն, «տեսակ» համարված լեզվական հասկացութիւնները գտնվում են ավագի և կրտսերի, գլխավորի ու երկրորդականի հարաբերութեան մեջ, իսկ խոսքի մասերը «բանի» կազմութեանը մասնակցում են հավասարապես իրրև «ինքնանման» և իրար չստորադասված կարգեր, դրա համար էլ «բանը» սեռ է, իսկ նրա բաղադրիչները՝ «մասունք բանի»։

Այս դատողութիւններն այնուամենայնիվ չեն օգնում Վարդանին՝ խոսքի մասերի քանակը տեսականորեն որոշելու հարցում։

---

[77] Վարդան Աւելցի, *Մեկնութիւն քերականի*, էջ 114։

[78] Նույն տեղում, էջ 102։

[79] Նույն տեղում, էջ 101։

Նա ոչ միայն Արիստոտելի տրամաբանական հինգ հասկացությունները, որպես հինգ խոսքի մասեր, շփոթում է քերականական խոսքի մասերի հետ, այլև փորձում է պաշտպանել Արիստոտելի կարծիքը՝ ընդունելությունը, դերանունը և հոդը ոչ թե առանձին խոսքի մասեր, այլ խոսքի մասերի մասեր ճանաչելու հիմնավորմամբ։ «Տեսանե՞ս, զի Արիստոտէլ վասն այնորիկ եհան զերեք յութէն, զի այն երեքն չեն մասունք, այլ՝ մասանց մասունք»[80]։

Վարդան Արևելցին լավ է պարզաբանում հայ մեկնիչների կողմից դերանվան համար գործածված թերանուն տերմինը, որով բացահայտում է այդ խոսքի մասի ոչ անվանողական արժեքը. «Եւ զթերանունն ասաց զի չկարաց դերանունն զճշմարիտ անունն յայտնել, վասն որոյ թերանուն ասաց, այսինքն՝ թերի»[81]։

Վարդանը հետևողականորեն մերժում է հայերենի կառուցվածքին խորթ հունաբանությունները, քննադատում է երկակի թվի և խոնարհման հարացույցի հունաբան արհեստական ձևերը՝ վերջիններս դուրս թողնելով իր բերած խոնարհման աղյուսակից։

5. Հովհաննես Երզնկացի (13—14-րդ դար).—Երզնկացու անունով մեզ հասած քերականական աշխատությունը, որն ունի նաև համառոտված տարբերակ[82], ինչպես հաստատում է Գ. Ջահուկյանը, մինչև այդ եղած մեկնություններից ամենածավալունն ու բովանդակալիցն է, նրանում «Երզնկացին ի մի է հավաքել և ճարտար կերպով ամբողջացրել քերականների նախորդ սերունդների կատարած աշխատանքը՝ փոխարինելով դպրոցական գործում մինչև այդ լայն հեղինակություն վայելող Մագիստրոսի կոմպիլյացիան մի նոր աշխատությամբ, որը դրվեց հետագա ուսուցման հիմքում»[83]։

Երզնկացին չի շարունակում Վարդան Արևելցու փորձը քերականությունը ինքնուրույն և անկախ առարկա դարձնելու գործում, նա մնում է ավանդույթի կրող և քերականությունը կապում է բանասիրության, փիլիսոփայության, տրամաբանության, ճարտասանության հետ։

Լեզվի տեսական հարցերում Երզնկացին Դավթի և Վարդանի

---

80 Նույն տեղում, էջ 102։

81 Նույն տեղում, էջ 134։

82 Այդ համառոտ տարբերակի հեղինակը, ինչպես ապացուցված է, Հ. Սորմոռեցին է։

83 Գ. Ջահուկյան, նշվ. աշխ., էջ 260։

հետևորդն է։ Դավթի պես նա էլ գտնում է, որ լեզվի հարցերը պետք է ենթարկել բանականության պահանջին, դրա համար էլ քերականությունը նա կոչում է «բանական արհեստ»։ Սյունեցու պես լեզվական փոփոխությունները պատկերացնելով որպես աղավաղումների շարունակական ընթացք՝ երզնկացին քերականության խընդիրն է համարում աղավաղված լեզվի համապատասխանեցումը նախնական կատարյալ բանականությանը։ Այս նկատառումով, քերականության «բանի մասանց» ուսմունքին վերաբերող մասը, ըստ երզնկացու, նպատակ ունի խոսքի մասերը բնութագրելու որպես բանականության անդամներ. «ի ձեռն գրաւորական տառից և քերականական արուեստիս ուղղել զիիւրութիւն խաւսից բանից և մասանց նորի կարգաւորութեանց, որ են անդամք բանականութեան»[84]։

Երզնկացին սեփական մեկնաբանությամբ կրկին հաստատում է անվան և բայի հիմնական կամ կարևոր խոսքի մասեր լինելու հնուց եկող դատողությունը՝ նախապատվությունը տալով անվանն։

Ինչպես վերը տեսանք, Դավիթը Թրակացու քերականության թարգմանության մեջ անունների «մարմին» և «իրք» խմբավորումը ճշգրտում է՝ «իրք» տերմինը, որպես վերացական հասկացության արտահայտիչ, «անմարմինք» բառով փոխարինելով։ Ստեփանոս Սյունեցին իր հերթին «անմարմինները» բաժանում է երկու ենթատեսակի՝ «զգալի անմարմիններ» (հուր, ջուր, օդ, լույս, խռովություն և այլն) և «իմանալի անմարմիններ», որպիսիք են «վերին զաւրութիւքն եւ եւս եւ վերագոյն պատճառն»։ Երզնկացին, վերականգնելով թարգմանչի «իրք» անվանումը, անունները բաժանում է երեք խմբի. «Անմարմին և մարմին և իրք նոցա։ Անմարմին, որպէս հրեշտակք և հոգիք. և մարմին, որպէս երկին և երկիր. և իրք, որպէս գիտութիւն և խրատ»[85]։ Երբ Սյունեցին վերացական («անմարմին») գոյականները բաժանում է «զգալի անմարմիններ» և «իմանալի անմարմիններ» խմբերի, առարկայականության հասկացության տրամաբանական ըմբռնման մեջ մի նոր քայլ է կատարում։ Եթե Սյունեցու «զգալի անմարմինները» համարենք թանձրացական գոյականի մի տեսակ, ինչպես որ են իրոք (հուր, ջուր, օդ, լույս) նրա այդ բաժանումը կունենա արդիական բովանդակություն։ Բայց քերականը, իր տուրքը մատուցելով աստվածաբանու-

---

[84] Նույն տեղում, էջ 264։

[85] Նույն տեղում, էջ 271 (Ձեռագիր քերականներից բերված հաջորդ մեջբերումները ևս կատարվում են ըստ Գ. Ջահուկյանի սույն աշխատության)։

թյանը, «զգալի անմարմիններին» է խառնում նաև «իմանալի» վերացական գոյականները (խաղաղություն, խռովություն), իսկ որպես «իմանալի անմարմիններ» է ճանաչում միայն «վերին զաւրութիւքն» աստվածային։

Երզնկացու բաժանման մեջ առանձին խումբ են կազմում «անմարմին» կոչված անունները, «որպէս հրեշտակք և հոգիք», իսկ մնացած անունները բաշխվում են «մարմին» (թանձրացական) և «իր» (վերացական) գոյական հասկացությունների վրա, այնպես որ հարցի աստվածաբանական մեկնաբանությունը դառնում է ավելի մերկարապարանոց, և երևույթի լեզվական ըմբռնումը մթագրնվում է։ Հայերենի և հունարենի ու լատիներենի քերականական սեռի տարբերությունները քննելիս, Երզնկացին, հունարենի ածականն և գոյական անունների սեռային վերջադիր ցուցիչները իրարից զանազանելով, տարբերում է նաև «ածականը և գոյականը՝ առաջինը համարելով «պատահական», իսկ երկրորդը՝ «էական» անուն»։ Գոյականը առարկայի «էական, ուստի և մշտական, իսկ ածականը՝ «պատահական», ուրեմն ոչ մշտական անուն համարելու դատողությունը, որ Գ. Ջահուկյանը նրբանկատորեն տեսնում է Երզնկացու բոլորովին այլ կապակցությամբ արած պարզաբանման մեջ, հայ քերականագիտության համար սույն խոսքի մասերի պատմության տեսակետից ուշագրավ փաստ է։

Երզնկացին առաջ է տանում դերանվան վերաբերյալ Դավթի և մյուս մեկնիչների բացատրությունները և դերանվան նաև «հասարակ անուն» համարվելը բացատրում է սրա՝ հասարակ անունների պես տվյալ տեսակի բոլոր առարկաների համար գործածվելը, ավելի մեծ ընդհանրացում արտահայտելը. «Արդ յերից մինդ է փոխանակ տիրականին, իսկ միւսն թերի քան զիսկն և երրորդն հասարակաբար. զի զորօրինակ բոլորեցունց ազգի մարդկանց ամենեցուն ասի մարդ, նոյնպէս դերանունդ առհասարակ երթայ ասել՝ ես, դու, նա և բոլն որպէս յայլքն փոխանակ սեռի դնէ»[86]։

Երզնկացին աշխատում է «ընդունելությունը», որ դժվար ըմբռնելի է, լավ պարզաբանել։ Նա այս կարգի մեջ է դնում միայն անցյալ դերբայը՝ նրանում շեշտելով բայիմաստի, ժամանակային կարգի և որպես «դիմավոր բայ» հանդես գալու բայական հատկանիշները, թեև առանձին վերցրած նա դեմք չի ցույց տալիս, և, ըստ Երզնկացու, ոչ միայն գործողության, այլև գործողի գաղափարն է։

---

[86] Նույն տեղում, էջ 273։

երգնկացու քերականական աշխատության գլխավոր արժանիքներից մեկն էլ Գ. Ջահուկյանը համարում է նրա մեկնությանը կցված խոնարհման աղյուսակը, ուր «ա) վերջնականապես դեն են նետվում բայի խոնարհման բոլոր հունաբան արհեստական ձևերը, բ) օգտագործվում են միջին հայերենի բայական ձևերը և համապես կու-ով ներկան և անկատարը»[87]:

6. Հովհաննես Քոնեցի.—Գ. Ջահուկյանը, իր ձեռքի տակ ունենալով Հ. Տաշյանի Վիեննայի Մխիթարյանների մատենադարանի հայերեն ձեռագրերի ցուցակում Հ. Քոնեցու «Համառօտ հաւաքումն յաղագս քերականին» աշխատության շատ թռուցիկ նկարագրությունը, Քոնեցուն գնահատում է որպես 14—15-րդ դարերի «քերականական արվեստի» Դլաձորի և Տաթևի դպրոցների ուղղություններից տարբեր՝ ունիթոռական ուղղության ներկայացուցիչ և հիմնադիր: Քոնեցին է առաջին հայ քերականը, որը «փորձում է զուգորդել հայ քերականական տրադիցիան լատինական քերականության սկզբունքների հետ՝ ... դառնալով 17—18-րդ դարերում տարածված լատինատիպ քերականությունների նախակարապետ»[88]:

Քոնեցու այդ երկի հրատարակման շնորհակալ գործը իրականացնող հայագետներ Լ. Խաչիկյանն ու Ս. Ավագյանը, ընթերցողին ներկայացնելով «Համառօտ հաւաքման» բնագիրը, իրենց «Ներածության» ծավալուն վերլուծություններով, վերահատատում և հիմնավորում են Գ. Ջահուկյանի վերոհիշյալ եզրակացությունները:

Քոնեցին իր քերականությունը գրելիս օգտագործել է Դիոնիսիոսի և նրա քերականության հայերեն մեկնությունների, մասնավորապես ուշ միջնադարի հայ քերականների աշխատությունները, ապա նաև 6-րդ դարի լատին քերական Պրիսցիանոսի (Priscianus) «Քերականական սահմանումները» («Institutionum grammaticarum») և նրա մեկնությունները[89]:

Խոսքի մասերի և ընդհանրապես հայերենի քերականության պատմության մեջ Քոնեցու աշխատության բերած հիմնական նորությունն այն է, որ լատիներենի քերականության հետևողությամբ այստեղ առաջին անգամ առանձին քննության առարկա են դառնում հայերենի շարահյուսական իրողությունները:

Հայերենի քերականության պատմության մեջ հունաբանությա-

---

[87] *Նույն տեղում, էջ 276:*

[88] *Նույն տեղում, էջ 291:*

[89] *Տե՛ս Յովհաննես Քոնեցի, Յաղագս քերականին, Երևան, 1977, էջ 53:*

նը փոխարինելու եկած լատինաբանությունը, ի դեմս Քոնեցու սույն աշխատության, խոսքի մասերի տեսության զարգացման մեջ ևս բերում է մի շարք նորություններ։

Եթե հայերենի հունաբան քերականն մեկնիչները խոսքի մասերի դասակարգման իրենց ընթացքում անունը և բայը համարում են խոսք կազմող գլխավոր խոսքի մասեր, իսկ ընդունելությունը, ճոդը, և դերանունը՝ առաջիններին փոխարինողներ և բառերի ձևաբանական քննությունը կատարում են անուն, բայ, ընդունելություն, ճոդ, դերանուն, նախադրություն, մակբայ, շաղկապ հաջորդականությամբ, ապա Քոնեցին փոխում է այս հաջորդականությունը։ Նա խոսքի մասերի փոխհարաբերության մեջ կարևոր է համարում նրանց իմաստային ու գործառական մերձավորությունը և ըստ այդմ էլ խմբավորում ու վերադասավորում է դրանք. այն է՝ անուն, դերանուն, բայ, մակբայ, ընդունելություն, շաղկապ, նախդիր, ճոդ։ *Եթե նկատի ունենանք այն հանգամանքը, որ Քոնեցին առաջին անգամ ձայնարկությունն անջատում է մակբայներից և ներկայացնում է ճոդ ածվամբ, իբրև առանձին խոսքի մաս, ապա որոշակի կդառնա, որ նրա խոսքի մասերի վերոհիշյալ խմբավորումը համարյա արդիական տեսք ունի։ Ըստ հեղինակի՝ «Յաւդ է մասն բանի անհոլովական, նշանակելով զիղձս մտաց անծանաւթ ձայնիւ...»։* Ուրախություն, ցավ, զարմացում, երկյուղ *արտահայտող «հոդերի»* (վա՜շ, վո՜ւշ, ի՜շ, ա՜խ, վա՜յ, եղո՜ւկ, ո՜յ, ը՛հ, ա՜խ, բաբէ՜, ի՜հ, ո՜հ, օ՜հ, սո՛ւս, անխաւս) *հետ միասին Քոնեցին իբրև* ցուցական նշանակության ձայնարկություն *(իր տերմինով՝ ճոդ) է համարում հայերենի ս, դ, և բուն հոդերը։ Ձայնարկությունների անջատումը մակբայներից, այսպիսով, ճշգրտում է մտցնում նաև մակբայ խոսքի մասի բովանդակության մեջ։*

«Համառօտ հաւաքմանն» մեջ ուշագրավ նորություններ կան առանձին խոսքի մասերի հասկացությունների և նրանց ձևաբանական հատկանիշների վերլուծություններում ևս։

Անվան սահմանումը Քոնեցին լրացնում է՝ ցույց տալով նրա (անվան) տարբերությունները մյուս խոսքի մասերից։ Քերականի՝ «Դարձեալ՝ անուն է մասն բանի հոլովական, որ նշանակէ զգոյացութիւն կամ զենթակայ բանին, հանդերձ որակութեամբ յատուկ կամ հասարակ»[90] լրացուցիչ սահմանմամբ շեշտվում է անվան ա-

---

[90] Նույն տեղում, էջ 163—164։

ուրկայականության («զգոյացութիւն կամ զենթակայ բանին») հասկացությունը։ Սա էլ իր հերթին ավելի որոշակի է դառնում, երբ Քոնեցին անվան կարգը քննելիս նրա ավանդական տեսակների թվարկության մեջ առաջին տեղը տալիս է «գոյացական» անուններին, որոնցում far անվան կողքին հավասարի իրավունքով, իբրև օրինակ, վկայակոչում է «սպիտակութիւն»-ը, որպես գոյական անուն։ Ահա այդ մեկնաբանությունը. «Արդ գոյացական է, որ ունի կերպ նշանակելոյ ըստ օրինակի գոյացութեան, որ ըստ ինքեան կայ, որպէս farն և սպիտակութիւնն։ Արդ զի թէպէտ սպիտակութիւնն ոչ է գոյացութիւն, այլ ի քերականն ունի զկերպ գոյացութեան»[91]։

Իր նախորդների հինգ կարգի փոխարեն Քոնեցին, առաջինը լինելով, անվանը վերագրում է վեց կարգ՝ ճոլովման կարգը, անջատելով ճոլովի կարգից։ Հոլովը կամ բառերի ձևափոխությունների հարացույցի յուրաքանչյուր անդամը, հունարեն համապատասխան տերմինի և նրա լատինական թարգմանության (casus) պատճենումով, անվանելով «անկումն»՝ քերականը հոլովումների համար պահպանում է հայերեն ավանդական «հոլովք» տերմինը։ Հայերենի անուններին նա վերագրում է յոթ «հոլովք»՝ ա, ե, ի, օ, ո, ու, է։ Նախորդների պես ընդունելով վեց հոլով, ինչպես նկատված է, Քոնեցին բավականին խորացնում է սրանց հիմնական կիրառական իմաստների նկարագրությունը՝ անունների այս առաջնային կիրառությունները տարբերելով երկրորդականներից։

Քոնեցին անունների նման դերանուններին ևս վերագրում է հոլովման կարգ, ապա նկատում, որ դերանունների և անունների հոլովների թիվը նույնը չէ. «Իսկ անգումն դերանուանցն ոչ են վեց, որպէս զանուանցն, այլ են ումանք հինգ, ումանք չորս, ումանք երեք...»[92]։ Ավելի ուշագրավը Քոնեցու՝ դերանունների իմաստային տեսակավորումն է, ըստ որի նրանք բաժանվում են չորս տեսակի՝ ա) bu, դու, ես, իմն, այս, այդ, այն «...ցուցականք ասին, զի ակներև ցուցանեն զնշանակեալն», բ) իմ, fn, ձորս, իւր, մեր, ձեր, ձոցա «...ասին ստացականք, որ նշանակեն ինչ ստացեալ յումեքէ»,

---

[91] Նույն տեղում, էջ 165։

[92] Նույն տեղում, էջ 173։

գ) Հարցականի՝ n՞վ, n՞r, *դ)* Թվականի՝ nմն, nf, nr nf, այլ, ամենայն, nչ nf, իւրաքանչիւր nf, երկրաքանչիւր nf[93]:

Քոնեցին փորձում է յուրովի մեկնաբանել նաև դերանունների չեզվական անհրաժեշտության գաղափարը՝ առաջին և երկրորդ դեմքի դերանունների գոյությունը պատճառաբանելով «վասն հարկի», իսկ երրորդ դերանուններինը՝ «վասն օգտի»[94]:

Այս քերականը իր նախորդներից առաջ է անցնում նաև բայի ձևաբանական կարգերի վերլուծության խորացմամբ: Նախորդների երեք սեռի դիմաց ընդունում է բայի հինգ սեռ, որոնց մասին հեղինակի տված մեկնաբանություններն ավելի ճշմարտացի են ներկայացնում հայերենի բայասեռի բարդ քերականական կարգը և, ինչպես նկատում է Ս. Ավագյանը, ուղեցույց են դառնում հայերենի հետագա դարերի որոշ լատինաբան քերականների համար:

Նա լծորդությունը դիտում է իբրև ձևաբանական կարգ և առաջին անգամ զանազանում է բայի չորս լծորդություն՝ ամ, եմ, իմ, ում: Լծորդությունների այս տեսությունը նույնպես հետագայում օգտագործվում է հայերենի ուշ միջնադարի լատինաբան քերականների կողմից: Քերականը նկատում է միջին հայերենի բային յուրահատուկ nի (վի) կրավորական ածանցի գոյությունը:

Ինչպես այլ, այնպես էլ բայական համակարգի առանձին հարցերում Քոնեցին լատիներենի որոշ քերականական կարգեր և նրանց անվանումներ արհեստականորեն վերագրում է հայերենին:

Մակբայի *խոսքիմասային քննությունը Քոնեցին խորացնում է մի քանի կողմերով: Մակբայ խոսքի մասի մեջ մտցվող բառերի իմաստային վերլուծությունը նա ավելի հստակ է դարձնում, երբ դրանց բայի հետ ունեցած իմաստային կապն ու ստորադասվածությունը («...մակբայ է, որ կերպարանէ զբայ») պարզաբանում է «մակադրական» անունների (ածականների) և «գոյացական» անունների (գոյականի) իմաստային կապի զուգորդումով և համապատասխանաբար՝ խոհեմ մարդ և խոհեմաբար առնէ օրինակների հակադրմամբ: Հեղինակը նկատում է այլ խոսքի մասերից հայերենում բար, պէս, աւէն ու նման ածանցներով մակբայ կազմելու հնարավորությունը և առաջին անգամ առանձնացնում է հայերենի այս կարևոր մակբայակերտ ածանցները: Սրան զուգահեռ հեղինակը մակբայի բառային սահմանները ճշգրտում է՝ նրանից անջատե-*

---

[93] *Նույն տեղում, էջ 173, 175:*

[94] *Տե՛ս նույն տեղում, էջ 174:*

լով ձայնարկությունները, միաժամանակ ազատվելով այս խոսքի մասին վերագրվող հունաբան արհեստական կազմություններից։

«Ընդունելութիւն» խոսքի մասը հայ քերական մեկնիչների կողմից ներկայացված է անորոշ և անցյալ դերբայներով։ Քոնեցին այդ խոսքի մասի մեջ է մտցնում նաև ապառնի դերբայը՝ սրանց վերագրելով չորս անվանական, երկու բայական կարգեր։ Խորացնելով ընդունելության ձևաբանական հատկանիշների քննությունը՝ քերականը, մի կողմից հետևելով հունարենի, իսկ մյուս կողմից՝ լատիներենի քերականություններին, հայերենի դերբայներին է վերագրում օտար և արհեստական ձևեր ու հատկանիշներ։

Կապակցական նշանակության խոսքի մասերից Քոնեցին անհամեմատ ծավալուն վերլուծության է ենթարկում շաղկապը։ Այս խոսքի մասը նա մաքրում է իր նախորդների կողմից շաղկապ համարված այլ խոսքի մասերից (յաղագս, վասն, ըստ որոյ, այսուհետեյ, որպան, էրու՞մ, զմէ՞) և անհասկանալի ձևերից (իգն, աւն, fեաց, իկ, գի)։ Լատիներենի քերականների հետևողությամբ նա շաղկապների ավանդական իմաստային-տրամաբանական խմբավորմանը զուգահեռ կատարում է նաև նրանց, ըստ կիրառության, շարահյուսական խմբավորում։ Վերջին դեպքում Քոնեցին շաղկապները բաժանում է «շաղկապականք» կամ «ոչ բաժանականք» և «բաժանականք» խմբերի, որոնցում մատնանշված՝ բառերի կամ նախադասությունների հարաբերությունների հակադրությունը ինչոր չափով մոտենում է արդի ըմբռնմամբ համադասական և ստորադասական հարաբերությունների հակադրությանը։

Իր նախորդների «նախադրութիւն» տերմինի փոխարեն Քոնեցին գործածում է «նախդիր» տերմինը։ Այս խոսքի մասի հիմնական տեսակին, այսինքն բուն նախդիր-նախադրությանը, «...որ նախադասի այլոց մասանց բանին յաւելմամբ» և ոչ թե «բաղադրութեամբ», նա վերագրում է քերականական մեկ կարգ՝ հոլովառության կարգ («կառավարել զանգումն»)։

Իր աշխատության երկրորդ և երրորդ մասերում, որոնք անվանված են «Յաղագս գիտութեան բաղադրելոց» և «Յաղագս շարամանութեանց», Քոնեցին հայերենի շարահյուսական նկարագրության մեջ բանի կամ ասության կառուցվածքային մի շարք կողմերի վերլուծության հետ, հիմնականում շարադրելով բառերի կապակցությունների իր տեսությունը, կատարում է խոսքի մասերի գործառական-շարահյուսական առանձնահատկությունների բավականին ուշագրավ քննություն։ Քերականն, առաջին անգամ հայ քերա-

կանագիտությանը հանձնելով «ենթադրեալ» (ենթակա), «մակադրեալ» (ստորոգյալ), «գոյացական» (առարկա, գոյական) «բացայայտիչ» (որոշիչ), գոյացականիլ» (գոյականաբար գործածություն՝ փոխանունություն) և այլ հասկացություններ ու տերմիններ, ապա շարունակելով գործածել իր նախորդների ստեղծած բազմաթիվ շարահյուսական քերականական հասկացություններ ու սրանց գիտական անվանումները՝ խոսքի մասերի շարահյուսական հատկանիշների քննության մեջ բավական առաջ է անցնում իր նախորդներից։ Չի կարելի չհիշատակել այն, որ Քոնեցին ոչ միայն կարողացել է տալ ածականի գոյականաբար գործածվելու այժմեական ձևակերպում, այլև տարբերել է ածականների («մակադրականք») և գոյական պերանունների կամ ընդհանրապես դերանունների գոյականական գործածությունը ածականների գոյական խոսքի մասի փոխանցվելու երևույթից։ «Դարձեալ մակադրականքն ըստ նշանակութեան, այլ ոչ ըստ ձայնին, գոյացականին ըստ ինքեան, հիբար հարուստ, աղքատ»[95],—գրում է նա։

Քոնեցու բերած նորություններից մեկն էլ գրաբարի լեզվական իրողություններին զուգահեռ նաև միջին հայերենի լեզվական փաստերի բավական հաճախ նկատվող քննությունն է, որ սկսված էր նրա նախորդների կողմից։

Այս բոլորով հանդերձ, Քոնեցու քերականությանը վիճակված չէր կատարելու այն դերը, ինչի համար ստեղծվել էր այն։ Ահա թե ինչ է գրում այդ մասին հայագետ Ս. Ավագյանը. «Քոնեցու այս աշխատությունը, որով հայ քերականագիտական միտքը մի նոր առաջընթաց քայլ կատարեց հայերենի ինքնուրույն գիտական նկարագրության ճանապարհին, հայ ուսիիմոնների հոգևոր-ուսումնական կենտրոնների նեղ շրջանակներից անմիջապես դուրս չեկավ համահայկական ասպարեզ, և երկար ժամանակ մնում էր անծանոթ գիտական շրջաններին...

Դրությունը փոխվում է 17-րդ դարի առաջին տասնամյակներին, երբ հարատև ավերիչ պատերազմներից ժամանակավորապես շունչ քաշած ժողովուրդը հայրենի երկրի մի քանի անկյուններում ու հայկական գաղթօջախներում որոշ հնարավորություններ է ձեռք բերում զբաղվելու կրթական, գիտամշակութային գործունեությամբ»[96]։

---

[95] *Նույն տեղում, էջ 193։*

[96] *Նույն տեղում, էջ 142, 143։*

7. Առաֆել Սյունեցի.—*Հայաստանի քաղաքական պատմությունը 15-րդ դարի երկրորդ կեսից բոլորովին այլ ընթացք է ստանում։ Մոնղոլական, այնուհետև սելջուկ-թաթարական ավերիչ արշավանքները խարխլում, ապա ամբողջությամբ վերացնում են Հայաստանի քաղաքական ինքնուրույնությունը։ Սրա անմիջական հետևանքը լինում է մշակութային կյանքի անկումը, ընդ որում նաև փիլիսոփայական, քերականական մտքի ինքնուրույնության թուլացումը։ «Ունիթոռական» շարժումն ու կաթոլիկ եկեղեցու քարոզչությունը թեև որոշ չափով նպաստում են գիտափիլիսոփայական, աստվածաբանական հարցերի նկատմամբ հետաքրքրության աշխուժացմանը, սակայն դա էլ իր հետ բերում է Եվրոպայում տարածված միջնադարյան սխոլաստիկայի ազդեցությունը։ 14—15-րդ դարերի «քերականական արվեստի» երկերը բաժանելով երեք ուղղությունների՝ Գ. Ջահուկյանը տալիս է դրանց հետևյալ բնութագրումը. «1) Գլաձորի դպրոցի ուղղությունը, որի ներկայացուցիչ եսայի Նչեցին շարունակում է Հովհաննես Երզնկացու տրադիցիան՝ առանց որևէ աչքի ընկնող նորություն ավելացնելու վերջինիս տեղեկությունների վրա. 2) Ունիթոռական ուղղությունը, որի ներկայացուցիչ Հովհաննես Քռնեցին փորձում է զուգորդել հայ քերականական տրադիցիան լատինական քերականությունների սկզբունքների հետ. 3) Սյունիքի Տաթևի դպրոցի ուղղությունը, որի ներկայացուցիչ Առաքել Սյունեցին, զգալի նվաճումների հասնելով լեզվաքերականական առանձին հարցերի քննության մեջ, այնուամենայնիվ տուրք է տալիս սխոլաստիկային և աստվածաբանական այլաբանությանը, քննարկվող նյութը հաճախակի մանրատում մինչև բովանդակազրկում»*[97]։

Մեզ հետաքրքրող հարցի վերաբերյալ Առաքել Սյունեցու նվաճումներից մեկն այն է, որ նա, քերականությանը տալով Թրակացու սահմանումից տարբեր սահմանում, առաջին անգամ քերականության քննության բուն առարկան համարում է խոսքի մասերը՝ դուրս թողնելով «գրի» և «ձայնի» ուսմունքը. «Քերականութիւն է արհեստ՝ ենթակայ ունելով զմասունս բանին, որ ի կատարումն և յուղղութիւն ածէ զլեզու»[98]։

Այն, որ Առաքելը քերականության և տրամաբանության միջև որոշակի տարբերություն չի տեսնում և տրամաբանական ըմբռ-

---

[97] Գ. Ջահուկյան, նշվ. աշխ., էջ 282։

[98] Նույն տեղում, էջ 303։

նումների ու կարգերի վկայակոչմամբ աշխատում է քերականական հարցերը պարզաբանել, նրան մղում է իրար շփոթելու իմացաբանական-տրամաբանական և լեզվական-քերականական կարգերը։ Դրա համար էլ Առաքելը քննարկման հիմնական նյութ է դարձնում անունը և բայը՝ սրանք դիտելով որպես և՛ իմացաբանական ու տրամաբանական կարգեր, և՛ խոսքի մասեր ու նախադասության անդամներ։ Վարդանի պես նա ևս մյուս խոսքի մասերը համարում է դատողություն կամ նախադասություն կազմող այս երկու հիմնական խոսքի մասերին փոխարինող կամ սրանց հարաբերությունները արտահայտող բառեր։

Բավականին մանրամասն թվարկելով անվան և բայի ընդհանրություններն ու տարբերությունները՝ Առաքելը, որպես այս խոսքի մասերի մի տարբերություն, նշում է բայերի սեռ ունենալու, իսկ գոյականների ներգործելու կամ կրելու հատկանիշ չունենալու հանգամանքը. «ե) Հինգերորդ՝ զի բայն ներգործութիւն և կիրք յայտնեն, որպէս ասելն առնեմ զայս ինչ կամ կրեմ զայս ինչ, իսկ անունն ոչ ներգործութիւն յայտնէ և ոչ կիրք»[99]։ Եթե մի կողմ թողնենք բայի ներգործականն ու կրավորականը միայն առնեմ, կրեմ բայերի օրինակով բացատրելու անհարմարությունը, ապա այստեղ կարևորն այն է, որ Առաքելը, ինչպես նկատել է Գ. Ջահուկյանը, մեկնիչների կողմից դերբայների հետ բայանունների ու ընդհանրապես գոյականների մեջ բայական սեռ տեսնելու սխալը առաջին անգամ ուղղում է։

Առաքելը որոշակի ուշադրություն է դարձրել անվան ընդհանրացված, աբստրահված հասկացություն արտահայտելու հատկանիշի վրա։ Ոչ միայն հասարակ, այլև հատուկ անունները, նրա պնդմամբ, ընդհանրացում են արտահայտում. «Անունն անսահման իր է, զի ժամանակ և տեղիք և դէմք զնա ոչ կարէ ըմբռնել։ Բայց սահմանն է իրին շատ այնմ, քէ անուն է սահմանն կարճառօտ, զի բազում ի ներքոյ իւր ըմբռնէ, բայց չինքն ոչ ըմբռնի յումեքէ. զի մին Պետրոս անունն զբազում անհատս ի ներքոյ իւր ենթադրէ։ Բայց անկար է միոյ անհատի, զՊետրոս անունն ի ներքոյ իւր դնել, զի մի այլումեք հանդիպեսցին»[100]։ Առաքելի կողմից անվանը տրված այս բնութագրումը բառերի անվանողական արժեքի լեզվական ըմբռնո-

[99] Նույն տեղում, էջ 316։
[100] Նույն տեղում, էջ 318։

ման պատմության տեսակետից իրոք ուշադրության արժանի փաստ է։

Առաքելը անունը և բայը բնութագրելիս խմբավորում է սրանք ընդհանրացնող և տարբերակող այն բոլոր հատկանիշները, որոնք մինչև այդ նկատվել են իր նախորդների կողմից։ Ուշագրավն այն է, որ այդ հատկանիշները հավասարապես վերաբերում են լեզվի և՛ իմաստային, և՛ ձևաբանական, և՛ շարահյուսական, և՛ բառակազմական կողմերին։ Ճիշտ է, որոշ դեպքերում կաղապարը պարզունակ կիրառություն ունի, այսպես, օրինակ, բառակազմական տեսակետից անունն ու բայը ընդհանրություններ ունեն այն բանում, որ երկուսն էլ միավանկ, երկվանկ և բազմավանկ բառեր են, բայց կարևորն այստեղ սկզբունքն է՝ խոսքի մասերի նաև բառակազմական համեմատությունը, որը ճիշտ իրագործման դեպքում միանգամայն օգտակար արդյունքներ կտար։

Արդ որո՞նք են անվան և բայի ընդհանուր կողմերը.

«ա) Զի յամենայն խօսս և պատմութիւնս անունն և բայն ի միասին լինէին։ բ) Երկրորդ՝ զի անունն իրին է անուն, սոյնպէս և բայն գործոյ է անուն, զի գործելն և գրելն և գնալն զգործոյ, զգրելոյ, զգնալոյ անունն ասէ։ գ) Երրորդ՝ զի երկուքն ի միասին մասունք են բանին։ դ) Չորրորդ՝ զի որպէս անունն բային նախադասեցաւ, սոյնպէս և բայն այլոցն նախադասեցաւ, ապա և երկուքն նախադաս կոչին։ ե) Հինգերորդ՝ զի որպէս բայն բառ կոչի ըստ սահմանին, որ ասէ բայ է բառ անհոլով, սոյնպէս և անունն բառ է և նոյն Դաւիթն անուն և երկուքն բառ կոչին։ զ) Վեցերորդ՝ զի որպէս անունն ընդունակ է հոլովման, սոյնպէս և բայն ընդունակ է ամանակաց, դիմաց և թուոց։ է) Եւթներորդ՝ զի որպէս անուն զմի ոմն ունի նախադաս իւր, այսինքն զբանն և անուն երկրորդ նմին, սոյնպէս և բայն միայն զանուն ունի նախադաս իւր և ինքն երկրորդ նմին։ ը) Ութերորդ՝ զի որպէս գոյ բայ, որ միավանկի է և գոյ երկու վանկի և այլն. միավանկի, որպէս ասելն ել, եկ, երթ, երկվանկի՝ գնա, գրեա, եռավանկի՝ բարկութիւն, հաշտութիւն, քառավանկի արհայութիւն, խաղաղութիւն, սոյնպէս և անունն է միավանկի՝ եզն, կովն, և երկու վանկի՝ Պետրոս, սոյնպէս և այլն»[101]։

Այսպես, ուրեմն, Առաքել Սյունեցին, որոշ թերություններով և ձևակերպումների անհստակությամբ հանդերձ, թվարկել է անվան

---

[101] *Նույն տեղում, էջ 315—316։*

և բայի խոսքիմասային համարյա բոլոր այն էական հատկանիշները, որոնցով նրանք ընդհանրանում և հակադրվում են մյուս խոսքի մասերին, որպես գերադաս կամ հիմնական խոսքի մասեր։ Բավական է ասել, որ իբրև անվան և բայի ընդհանրացնող հատկանիշներ համարում է սրանց՝ 1. խոսքի կամ նախադասության հիմնական բաղադրիչներ, ուստի և խոսքի կամ նախադասության մասեր (անդամներ) լինելու, 2. անուններ լինելու, այսինքն՝ անվանողական արժեք ունենալու, 3. բառեր լինելու, այսինքն՝ բառային անկախություն ունենալու, 4. այլ խոսքի մասերի նկատմամբ նախադաս դիրքում գտնվելու, 5. հոլովվելու և խոնարհվելու (թեքվելու) առանձնահատկություններ։

Բավականին ամբողջական բովանդակություն ունի անվան և բայի տարբերակիչ հատկանիշների թվարկումը. «ա) Նախ՝ զի անունն դէպիւն ցուցանէ, իսկ բայն զպատահումն. և զի նախ է էութիւն քան զպատահումն, վասն որոյ նախադասեցաւ անունն բայի։ բ) Երկրորդ՝ զի անունն հոլովի և բայն ոչ հոլովի։ գ) Երրորդ՝ զի անուն որպէս նախագաղափար է և բայն որպէս ածանցեալ ի նմանէ, զի գործն ի մարդոյն գայ յառաջ։ դ) Չորրորդ՝ զի բայն ընդունակ է ժամանակաց, դիմաց և թուոց, այսինքն ասելն թէ գործեմ զներկայն ցուցանէ և զեզական դէմք գործողին և զմի դէմք գործողին։ Եւ ասելն թէ գործեցէ զապառնին ցուցանէ և զմի դէմք գործողին։ Արդ եցոյց զգործն զերեք ժամանակն և զերեք դէմքն. իսկ անունն, որպէս ասելն Պետրոս ոչ ժամանակն, ոչ զգործն և ոչ զդէմքն ցուցանէ։ ե) Հինգերորդ՝ զի բայն ներգործութիւն և կիրք յայտնէ, որպէս ասելն առնեմ զայս ինչ կամ կրեմ զայս ինչ, իսկ անունն ոչ ներգործութիւն յայտնէ և ոչ կիրք»[102]։

Անվան և բայի տարբերակիչ հատկանիշները թվարկելիս, ինչպես բոլոր մեկնիչները, Առաքելը ևս բայ ասելով հասկանում է նրա դիմավոր ձևերը՝ սրանցում տեսնելով ժամանակի, դեմքի և թվի հատկանիշներ, որպիսիք անունները չունեն։ Սակայն բայի անդեմ ձևերի բաշխումը «բայ» և «ընդունելություն» խոսքի մասերի վրա, ինչպես տեսանք, որևէ հետևողական սկզբունք և ընդհանրություն հայերեն մեկնություններում չունի։ Առաքելը երբևիցե հետևողությամբ «ընդունելության» մեջ դնում է -եալ վերջավորությամբ անց-

---

102 Նույն տեղում, էջ 316։

յալ դերբայը, բայց «ընդունելություն» է համարում նաև -ութիւն-ով վերջացող («շինելութիւն», «ձիաւորութիւն») անուններ։ Անվան և բայի ընդհանրությունները խմբավորելիս, Առաքելը -ութիւն-ով վերջացող «բարկութիւն», «հաշտութիւն», «արքայութիւն» և այլ անուններն էլ բայ է համարում։ Պարզ երևում է, որ Առաքելը ոչ միայն չի կարողանում «ընդունելությոն» ճանաչվող բայաձևերի մեջ նրանց բայական ու անվանական կիրառություններն ու հատկանիշները իրարից ջոկել, այլև -ութիւն-ով վերջացող որոշ վերացական գոյականներ բայ է դարձնում։ Ճիշտ է նկատում Ջահուկյանը, թե «Առաքելը խիստ կերպով չի առանձնացնում ընդունելությունը անունից և բայից, ոչ այնքան տարբերում է նրանցից, որքան նույնացնում, որովհետև այս դեպքում նա ընդունելությունը դիտում է որպես «բանի» մեջ նրա գլխավոր կազմիչներից մեկին՝ անվանը կամ բային փոխարինող բառ»[103]։

Սակայն այս հարցում գոյություն ունեցող անորոշությունն ու թույլ տրվող բացահայտ սխալները չեն խանգարում մեզ ասելու, որ Առաքելը ըստ էության տեսնում էր բայը անուններից զանազանող իմաստային և քերականական համարյա բոլոր հատկանիշները։ Նա անվանը (այստեղ՝ գոյականին), որպես առարկա («էութիւն») նշանակող, հոլովվող և առաջնային («նախադաղափար») խոսքի մաս, հակադրում է բայը, որպես գործողություն («պատահումն») ցույց տվող, չհոլովվող, բայց ըստ ժամանակի, դեմքի ու թվի փոփոխվող (խոնարհվող), անվանն ստորադասվող, ներգործելը կամ կրելը (սեռ) հայտնող խոսքի մաս։

Առաքելի բնութագրումներում մերժելի են անունը և բայը իրարից անջատելու և, միմյանց հակադրելով, անվանը գերադասություն տալու, բայը անունից ածանցված համարելու ըմբռնումները, որոնք, ինչպես տեսանք, գալիս են հունական փիլիսոփայությունից և քերականությունից։ Մյուս բնաթագրումներում բայը սահմանվում է գործողությոն ցույց տալու, ստորոգյալի պաշտոնում (խոնարհմամբ) ժամանակի, դեմքի ու թվի շարահյուսական հատկանիշներ արտահայտելու, սեռի, այլև սրա հետ կապված խնդիր առնելու («որպէս ասէլն առնեմ զայս ինչ կամ կրեմ զայս ինչ») հատկանիշներով, որոնց համալիրին ժամանակակից քերականության մեջ դեռևս բան չի ավելացված։

Գ. Ջահուկյանը անհրաժեշտ է համարել, ձեռագրից քաղե-

---

[103] Նույն տեղում, էջ 320։

ղով, մեջ բերել դերանվան վերաբերյալ Առաքելի տված ամբողջ մեկնաբանությունը: Վերջինս դերանվան իր քննությամբ, առանձին թերություններով հանդերձ, այդ խոսքի մասի հասկացությունը որոշակիորեն ընդլայնված է ներկայացնում: Նախորդների կողմից դերանվան մեջ բացահայտված երեք կողմերը, ըստ որոնց դերանունը անվանվել է նաև «հասարակ անուն», «թերանուն» և «փոխանուն կամ տիրանուն», Առաքելը պարզաբանում է յուրովի մեկնաբանությամբ:

1. Դերանունը որպես «հասարակ անուն» բնութագրելիս, Առաքելը դերանվան մեջ նկատում է հասարակ անունների պես ընդհանրացում լինելու հանգամանք: Ընդ որում ըստ ընդհանրացման աստիճանականության նա տարբերում է՝ հատուկ անուններ (օր.՝ Պետրոս), հասարակ անուններ (օր.՝ մարդ) և դերանուններ (օր.՝ սա, դա, նա). «Արդ նախ հասարակ անունն ասի: Զի ասել մարդ հասարակ է և ասելն Պետրոս յատուկն է. սոյնպէս և սա միոյ դիմի ասի ես, սա, դու, դա, նա: Եւ թէ բիւր մարդ լինի անդ, ամենքեան ասեն դա են, նա են և այլն. այս ըստ հասարակ անուանն»[104]:

2. «Իսկ թերանուն թերի անուն լսի, զի փոխանակ Պետրոսին սա ասեմք»[105]: Սակայն այս թերին լրացվում է այն առավելությամբ, որ դերանունը նաև դեմք է արտահայտում:

3. Դերանունները նաև համարելով «փոխանուն կամ տիրանուն»՝ Առաքելը այս հասկացությունները ևս տարբերում է: «Դերանունը «փոխանուն» է, որովհետև փոխարինում է անվանը, «տիրանուն» է, որովհետև «զատոյգ և զհաստատ նշանակութիւն ասէ»: — Այս առումով,— շարունակում է իր վերլուծությունը Ջահուկյանը,— Առաքելը կարծում է, որ դերանունը անվան նկատմամբ նույնիսկ որոշ առավելություններ ունի. ա) Երբ մանուկը ծնվում է... նրան նախ դերանվամբ են կոչում՝ սա, դա, դու, նա, իսկ անունը, օր.՝ Պետրոս, հետո են տալիս. բ) Դերանունը «բնական» է, անունը՝ «պատահական», որ դրվում է հետո, ուստի և դերանունը գերադասելի է... գ) Ինչ որ անունը չի կարողանում հայտնել, դերանունը հայտնում է և դրանով պակասը լրացնում, ինչպես որ, Առաքելի պատկերավոր համեմատությամբ, երկաթի ձուլվածքը վերցնում են աքցանով, երբ ձեռքով չեն կարողանում վերցնել. դ) Դերանունը մոտ և հեռուն ցույց է տալիս, անունը՝ ոչ. ե) Դերանունը «ան-

---

104 Նույն տեղում, էջ 318:

105 Նույն տեղում:

խախտ» է, որովհետև պարզ է, միակ, անփոփոխ, իսկ անունը կարող է փոփոխվել, բաղադրվել, փոխարինվել. գ) Անունը կարող է դրվել չեղածի՝ անցածի և ապագա բանի վրա, իսկ դերանունը նկատի ունի միշտ եղածը. «Չէութիւն անհատին յայտնապէս ցուցանէ, զի ոչ է ասելն անեղ իրացն, այլ զեղեալն ցուցանէ». է) Անունը ժամանակը ցույց չի տալիս, օր.՝ Պողոսը «ոչ աստ է և ոչ այժմ», իսկ դերանունը «զժամանակն ցուցանէ, զի աստ է և անդ». ը) Անունը դեմք չունի, իսկ դերանունը դեմքը ցույց է տալիս. թ) Դերանունը տեղը ցույց է տալիս, իսկ անունը՝ ոչ. ժ) Երբ մի տեղ հավաքված են նույն անվան տեր մի քանի մարդիկ, ապա եթե կոչես՝ Պետրոս, չի իմացվի, թե որին նկատի ունես, իսկ՝ սա, դա, ձա ասելով՝ կարելի է որոշել»[106]:

Չնայած վերոհիշյալ դատողությունների որոշ պարզունակության, անավարտվածության ու առանձին սխալների՝ Առաքելը բավականին բազմակողմանիորեն կարողացել է բնորոշել դերանունը որպես իրադրային խոսքի մաս, հաղորդակցության յուրահատուկ գործառույթամբ օժտված բառ: Անվան նկատմամբ դերանվան՝ Առաքելի թվարկած առավելությունների հիմնական և արժեքավոր մասը վերաբերում է նրա ցուցողական արժեքին, որի շնորհիվ դերանունը խոսքի մեջ, ինչպես նկատում է Առաքելը, առավել կոնկրետ ու որոշակի է դառնում, քան նույնիսկ հատուկ անունը: Այդ ցուցողականության և մատնանշվող ամեն առարկայի համար գործածվելու շնորհիվ է, որ դերանունը «բնական» անուն է և կարող է գործադրվել այնտեղ, ուր անունը գործադրելի չէ (հարմար չէ, անհրաժեշտ չէ)՝ նկատի ունենալով միշտ եղածը, այլ կերպ ասած՝ դգայական ընկալման առարկան: Առաքելը, դեմքից բացի, նկատում է նաև դերանվան տարածական ու ժամանակային հարաբերություններ ցույց տալու առանձնահատկությունը, որ պայմանավորված է դարձյալ խոսքային միջավայրում դերանվամբ մատնանշվող առարկաների խոսողի և խոսակցի նկատմամբ ունեցած տարածական, ըստ այդմ էլ՝ ժամանակային հարաբերություններով:

«Մյուս խոսքի մասերի բնութագրումները,— գրում է Գ. Ջահուկյանը,— Առաքելի մոտ ոչ միայն անհրաժեշտ պարզություն չունեն, այլ հաճախ դրսևորում են նրա անըմբռնողություն»[107]:

Ամփոփում.—*Ինչպես հույների մոտ, այնպես էլ Թրակացու քե-*


---

106 *Նույն տեղում, էջ 319:*

107 *Նույն տեղում, էջ 320:*

քականության հայերեն թարգմանության և նրա տարբեր մեկնությունների մեջ բոլոր կարգի լեզվական վերլուծությունները, լինեն սրանք տրամաբանական, թե՛ քերականական, բանասիրական, թե՛ ճարտասանական, արվում են դատողության երկու հիմնական անդամների՝ անվան և բայի շուրջը։ Մյուս բոլոր խոսքի մասերը քննվում են սրանց հետ ունեցած իրենց փոխհարաբերությամբ միայն։ Ըստ այսմ՝ անունից և բայից, որպես երկու հիմնական խոսքի մասերից, առանձնացվում է «ընդունելությունը», որպես մե՛կ անվան, մե՛կ բայի գործառությամբ հանդես եկող խոսքի մաս։ Դերանունը վերլուծվում է որպես անվան փոխարինող և նրան դիմային լրացում հանդիսացող խոսքի մաս։ Այնպես որ «ընդունելությունն» ու դերանունը այս շրջանի քերականության մեջ, չնույնանալով անվանն ու բային, իրենց յուրահատկություններով հանդերձ, կա՛մ անուն են, կա՛մ բայ, այլ կերպ ասած՝ սրանց փոխարինիչներ են։ Մակբայը բայի վրա դրվող, ուստի բայի լրացում խոսքի մաս է։ Հոդը անվան վրա դրվող և նրա առանձին քերականական հատկանիշները բացահայտող խոսքի մաս է։ Նախադրությունը հիմնականում անվան վրա, իսկ ընդհանրապես՝ բոլոր խոսքի մասերի (բառերի) սկզբից ավելացվող խոսքի մաս (բառ և ածանց) է։ Վերջապես, շաղկապը անունները, բայերը և մյուս խոսքի մասերը շաղկապող խոսքի մաս է։

Այսպիսով ստացվում է խոսքի մասերի հետևյալ համակարգը.



Անունը սահմանվում է որպես առարկա («մարմին և իր») նշանակող բառ, որը հոլովվում է։ Բոլոր մեկնիչները, անունը որպես խոսքի մաս քննելիս, նկատի ունեն գոյական անունը։ Անանուն մեկ-

նիչի ստեղծած անվան տեսությունը, իբրև գոյական անվան իմաստային բնութագիր, բավական ամբողջական է։ Այդ տեսությունը լրացվում է հաջորդ քերական-մեկնիչների կողմից, որոնց բերած նորությունների ամփոփումը գտնում ենք Առաքել Սյունեցու աշխատության մեջ։ Ինչպես առաջին մեկնիչները, նույնպես և 13—15-րդ դարերի քերականները հայերենի անվան հարացույցը աստիճանաբար մաքրում են հունաբանություններից՝ ճշգրտելով նրա քերականական հատկանիշները։

Հայ մեկնիչներն արդեն նկատում են, որ հայերենի անվանը յուրահատուկ չէ քերականական սեռի կարգը։ Գրիգոր Մագիստրոսը վերջնականապես պարզում է, որ հայերենի անուններն, ի տարբերություն հունարենի, քերականական սեռ չունեն։

Մեկնիչների կողմից մերժվում է նաև հունարենին հատուկ երկակի թիվը։ Հունարենի հինգ հոլովին՝ ուղղական, սեռական, տրական, հայցական, կոչական («հոշական»), թարգմանիչը ավելացնում է վեցերորդ՝ գործիական («առաքական») հոլովը, որպես հայերենի հոլովական համակարգին բնորոշ իրողություն։ «Առաքական»-ի տակ մոցվում էին նաև բացառականի հոլովաձևերը։

Քերականական ռացիոնալիստական մոտեցումը օգնում է հայ մեկնիչներին անվան թանձրացական («մարմին») և վերացական («իր, անմարմին»), հատուկ և հասարակ տեսակների, ապա անվան ու դերանվան իմաստային տարբերություններն ավելի հստակ պատկերացնելու համար։

Երզնկացին լեզվի ձևական հատկանիշների քննության մեջ հնքնաբերաբար հանգում է գոյական («էական») և ածական («պատահական») անունների տարբերակման գաղափարին։

Սակայն անվան մեջ համախմբված այլ կարգի բառերն ու խոսքի մասերը, որոնց թվում մասնավորապես ածականները, թվականները, դերանունների զգալի մասը, ոչ միայն անհամապատասխան ու անհասկանալի էին դարձնում անվանը տրված սահմանումներն ու վերլուծությունները, այլև վերջիններս դուրս էին դնում խոսքիմասային քննությունից։ Անվան քննությունը խաթարվում էր ոչ միայն դերանվան, այլև «ընդունելության» հետ ունեցած նրա հարաբերության սխալ մեկնաբանմամբ, քանի որ առանձին դերբայներ ազատ կերպով համարվում էին անուն, իսկ շատ բայանուններ, այլև սովորական վերացական գոյականներ՝ «ընդունելություն»։ Այդ պատճառով էլ մինչև Առաքել Սյունեցի հայ մեկնիչները բայա-

կան (ներգործական, կրավորական) սեռի հատկանիշ են վերագրում նաև «անուն» խոսքի մասին։

Բայը ահմանվում է որպես անելը և լինելը («ներգործութիւն և կամ կիր») ցույց տվող, ժամանակ, դեմք և թիվ ունեցող, չհոլովվող խոսքի մաս։ Բայը բնութագրվում է իր հիմնական գործառութեամբ, իբրև նորոգյալ։ Եթե Դավիթն ու նրան հետևող ուրիշները անվան և բայի առաջնության վեճի մեջ ճշմարիտ են համարում Արիստոտելին և ոչ Պլատոնին, ուստի անունը նախադաս են համարում բայից, ապա Ստեփանոս Սյունեցին, ելնելով նախադասութեյան կառուցվածքում բայի կատարած էական դերից, առաջնությունը տալիս է բային. դեռ ավելին՝ բայը հավասարեցնում է «բանին» կամ խոսքին («Իսկ բայդ ասի աստմն...»)՝ անհանդուրժելի համարելով մյուս բառերի պես բայն էլ սովորական խոսքի մաս համարելը։ Բայի խոսքիմասային պատմության մեջ այս մոտեցումը, ըստ որի՝ այն հավասարեցվում է, արդի ըմբռնմամբ, ստորոգյալին, իսկ վերջինս էլ՝ ամբողջ նախադասությունը, ապա մյուս խոսքի մասերը, այդ թվում և անունները, դիտվում են որպես բայի լրացումներ,—այսօր էլ մնում է իբրև խոսքի մասերի տեսության, այլև շարահյուսության ամենահետաքրքրական հարցերից մեկը։

Հայ մեկնիչները, ապա Վարդան Արևելցին և Երզնկացին մաքրում են հայերենի բայական հարացույցը հունաբանությունից։ Բայց երկակի թվի, հայերենում չեղած ժամանակաեղանակային և այլ կարգի արհեստական ձևերի առկայությունը հայերենի քերականություններում շարունակվեց նաև դրանից դարեր անց։

«Խոնարհմունք» անվամբ այս շրջանի քերականական բոլոր մեկնություններում հունարենի նմանությամբ հայերենում տարբերակում են հինգ եղանակ՝ ահմանական, անեղևույթ (անորոշ), հրամայական, ըղձական, ստորադասական։ Եղանակների այս դասակարգումը և անվանումները պահպանվում են նաև 11—15-րդ դարերի մեկնություններում, բայց սրանց մեջ բայական հարացույցը գնալով մաքրվում է հունաբանություններից և խոնարհման ձևերի բովանդակությունը փոփոխվում ու ճշգրտվում է։

Բայը բնութագրվում է նաև սեռի («ներգործութիւն, կիր, միջին») դեմքի (առաջին, երկրորդ, երրորդ) ժամանակի («ամանակ»՝ ներկա, անցյալ, ապառնի), լծորդության (խոնարհման) քերականական հատկանիշներով։

Բայի խոսքիմասային պատմության տեսակետից ուշագրավ է անվան և բայի ընդհանրությունների և տարբերությունների այն

վերլուծությունը, որ տալիս է Առաքել Սյունեցին։ Առաքելի կողմից բայը քննութագրվում է ոչ իբրև դիմավոր բայաձև, այլ բայ խոսքի մաս, որ միաժամանակ գործողության («գրել, գնալ, գործել») անուն է և ոմն ժամանակի, դեմքի, թվի, ինչպես նաև սեռի («ներգործութիւն և կիր») հատկանիշներ։

Ճիշտ է, ինչպես մյուսների, այնպես էլ Առաքելի մոտ բայի էական հատկանիշներին խառնվում են նաև ոչ էական, հաճախ էլ սխալ ու շփոթ դատողություններ, բայց և այնպես բայի քննությունը, որպես գլխավոր խոսքի մասի, կատարվում է հանգամանորեն։

Հայ փիլիսոփաներն ու քերականները բավական երկար ժամանակ չեն կարողանում ազատվել հունարենի բայական համակարգի մեխանիկական ընդօրինակման հետևանքով հայերենի բայական համակարգի վերլուծության մեջ ներթափանցած օտարաբանություններից ու սխալներից։ Այդ հանգամանքը մեծապես երևան է եկել բայի դիմավոր և անդեմ ձևերի փոխհարաբերության ըմբռնման մեջ, այլ կերպ, կամ իր ժամանակի տերմիններով ասած՝ «բայի», «անվան» և «ընդունելության» հասկացությունների ու սրանց տարբերակման մեջ, որպիսի պրոբլեմ լեզվաբանության առաջ կանգնած է նաև այսօր։

Բայի անդեմ ձևերի, ուստի և «ընդունելութիւն» խոսքի մասի քննության մեջ հունական քերականության հայերեն մեկնությունների շրջանում որոշակիություն և հստակություն չկար։ Անորոշը («անեղևոյթ») և՛ «ընդունելութիւն» է, և՛ բայի առանձին եղանակ։ Շատերը «ընդունելութիւն» ասելով՝ հասկանում են միայն անցյալ դերբայը, բայց սա էլ ուրիշների մոտ (Ստ. Սյունեցի, Երզնկացի) երբեմն հավասարեցվում է, արդի ըմբռնմամբ, ստորոգյալին։ Թարգմանիչն էլ –եալ, –ացուղ վերջավորություններով բայաձևերը հիշատակում է անվան տեսակները թվարկելիս։ Այնպես որ հայերենի բայի համակարգի վերլուծման դժվարությունը, օտարաբանությանը և չիմացությանը խառնվելով, այստեղ առաջացրել է որոշակի շփոթ ու անորոշություն։

Դերանունը Թրակացին սահմանում է որպես անվան փոխարեն գործածվող բառ, որը ցույց է տալիս նաև դեմք։ Լինում է երկու տեսակ՝ անձնական («նախագաղափար») և ստացական («ածանցական»)։ Հայ մեկնիչները հարստացնում են դերանվան և անվան իմաստային փոխհարաբերության ըմբռնումը՝ աստիճանաբար խորացնելով դերանունը տարբեր կողմերից բնութագրող իրենց «փոխանուն», «տիրանուն», «թերանուն», «հասարակ անուն» տերմին-

ների բովանդակությունը։ Նրանք ոչ միայն հասնում են դերանվան ոչ անվանաղոական («թերանուն»), ընդհանրական արժեքի գիտակցմանը, այլև որոշակիորեն տեսնում են նրա, որպես իրադրական խոսքի մասի, հաղորդակցական-գործառական արժեքն ու, նույնիսկ, առավելությունը անվան հանդեպ (Առաքել Սյունեցի)։

Որոշ չափով ընդարձակվում է դերանունների ցանկը։ Անձնականներին ու ստացականներին են խառնվում ցուցական դերանունները։ Ստեփանոս Սյունեցին բաղադրյալ ցուցականները (այսանակ, այսպիսի, այսչափ, այսքան), որոնք թարգմանության մեջ համարվում էին «վերաբերական» անուններ, համարում է դերանվան նոր տեսակ՝ «վերաբերական» դերանուն։

Մեկնիչները նկատում են դերանվան սեռի և երկակի թվի հասկացությունների անհամապատասխանությունը հայերենին և սրանց համար հորինված արհեստական ձևերը աստիճանաբար մերժում են։

Սակայն, դերանվան համար պարտադիր համարելով դեմքի հատկանիշը, մեկնությունների շրջանի հայերենի քերականությունը շատ էր հեռու դերանունը գործնականում ամբողջացած ներկայացնելու վիճակից։ Դիմային հարաբերություն ցույց չտվող բոլոր դերանունները (հարցական, հարաբերական, անորոշ, որոշյալ, փոխադարձ) հիմնականում անուն խոսքի մասի մեջ էին դասված, որոշ դերանուններ նաև հոդ էին համարվում։

Մնացած խոսքի մասերը, որոնք սպասավոր խոսքի մասեր են, հայտնի պատճառներով ավելի մակերեսային ու թերի են պարզաբանված։

Սրանցից մակբայն է միայն, որ իբրև բայից հետո կամ բայի վրա դրվող բառ լրացնում է նրան և այդքանով դառնում է ինքնուրույն խոսքի մաս՝ իր մեջ առնելով բայի վրա դրվող ամեն կարգի ու նշանակության չփոփոխվող («անխաղաց») բառեր, որոնց թվում նաև ձայնարկությունները։

«Նախադրությունը» դիոնիսիոսյան սահմանմամբ գործածվում է «նախածանց», «նախդիր» և «նախադրություն» նշանակություններով։ Ստ. Սյունեցին, որ խոսքի մասերը սահմանում է՝ ելնելով սրանց շարահյուսական դերից, «նախադրությունը» համարում է ինքնուրույն բովանդակությունից զուրկ, նախադասության անդամ չեղող և մյուս խոսքի մասերի սկզբից դրվող անշշանակ վանկ («վանգք ինչ, որ ըստ ինքեանց ոչինչ նշանակեն»)։ Վարդան Արևելցին թեև «նախադրությունից» անջատում է «նախդիրը»՝ վերջինիս

տակ հասկանալով նախածանցները, բայց նա էլ իբրև «նախադրություն» է հասկանում գոյականի լրացում որոշիչը («քարի թագավոր, Հրիստոսապահ Թորոս»)։ Այնպես որ այս խոսքի մասը դեռևս հեռու է բուն «նախդիր» ու «նախադրություն» կամ միայն այդպիսիք լինելուց։

Հայերենի խոսքի մասերի համակարգին ամենից անհամապատասխանը հունարենի ճոդն է, որ լինում է նախադաս (որոշիչ հոդ) և ստորադաս (հարաբերական դերանուն), ունի բառային անկախություն, սեռի, թվի և հոլովի քերականական կարգեր։ Թարգմանիչը, որպեսզի հարազատ մնա հոդի՝ հունարենում ունեցած առանձնահատկություններին (անունից առաջ և հետո դրվելուն և հոլովվելուն), մի կողմ թողնելով հայերենի ս, դ, և հոդերը, սրանց փոխարեն հոդի նշանակությամբ մեջ է բերում այս, այդ, այն ցուցական դերանուններն ու ո կոչականը (նախադաս հոդեր) և որ հարաբերական դերանունը (ստորադաս հոդ)։ Հունարենի պես հայերենի հոդը առանձին բառ և խոսքի մաս համարելու այս անճշտությունից թեև հայերենի քերականությունը դեռևս երկար ժամանակ չի կարողանում ազատվել, բայց առաջին իսկ մեկնություններում նկատվում է, որ հայերենի հոդը «ոչ ևս նշանակ է», նախադաս չի լինում և ապա չի ունենում ո՛չ սեռ, ո՛չ թիվ և ո՛չ էլ հոլով։ Այսունեցին արդեն հոդը սահմանում է որպես անվան և բայի վերջավորություններին կցվող գիր, որի նշանակությունը դեմք ցույց տալն է։ Վարդան Արևելցին հոդ է համարում նաև f, ց հոգնակի մասնիկները, բայց ճիշտ է նկատում ս, դ, և հոդերի առարկաների մերձավոր և հեռավոր լինելը, ապա և որոշյալ («նշանաւոր») լինելը ցույց տալու հատկանիշները։

Շաղկապը սահմանվում է իր շարահյուսական-գործառական դերով և իբրև սպասարկու խոսքի մաս լավ է մեկնաբանվում։

Ելակետ ունենալով Թրակացու քերականությունը՝ 5—15-րդ դարի հայ քերական-մեկնիչները խոսքի մասերի իրենց վերլուծությունները կատարում են ոչ թե լեզվական փաստերի քննությունից դեպի ընդհանրացում և եզրակացություններ, այլ ընդհանրացումներից ու սահմանումներից՝ դեպի լեզվական փաստերի կամ օրինակների վկայակոչում։ Վերլուծության այս եղանակը սույն շրջանի ամբողջ քերականական միտքը, ինչպես նկատվել է, դարձնում է հայեցողական, ուստի և վերացական ու քիչ գործնական։ Թրակացու խոսքի մասերին՝ տարբեր սկզբունքներով, հաճախ էլ երկակի մոտեցմամբ տված սահմանումներն ու վերլուծությունները հայերեն

մեկնություններում զարգացվում են մե՛կ իմացաբանական-տրամաբանական (ռացիոնալիստական) ուղղությամբ (Դավիթ, Մովսես, Երզնկացի), մե՛կ լեզվա-քերականական (շարահյուսական) ուղղությամբ (Ստեփանոս Սյունեցի, Վարդան Արևելցի)։ Բայց այս ուղղություններից և ոչ մեկը անխառն ու հետևողական չէ։ Երկուսն էլ ունեն իրենց ծայրահեղությունները, որոնց հետևանքը վերջիվերջո լինում է կա՛մ լեզվական-քերականական իրողությունների անտեսում և իմացաբանական-տրամաբանական ու լեզվական-քերականական կարգերի նույնացում, կա՛մ էլ լեզվական իմաստների անտեսում ու լեզվի ձևական և իմաստակիր միավորների, սրանց ստորակարգության շփոթ ու աստվածաբանական սխոլաստիկ դատողություններ։ Հաճախ նույնացվում են խոսքի մաս և նախադասության անդամ, հաճախ էլ՝ խոսքի մաս և ձևույթ հասկացությունները։

Բայց այս բոլորով հանդերձ քերականությունը փիլիսոփայությունից և բանասիրությունից առանձնացնելու, ինքնուրույն և գործնական քերականություն ստեղծելու փորձերը ունենում են իրենց դրական նշանակությունը։ Քերականական վերլուծություններում հայերենը մաքրվում է հունական արհեստական ձևերից, քերականությունն են ներթափանցում ժողովրդական կենդանի լեզվի ձևեր։

Մշակվում է քերականագիտական տերմինաբանություն։

Խոսքի մասերի տարբերակման և բնութագրման մեջ, ինչպես և առհասարակ իր քերած քերականագիտական նորություններով այս շրջանի հայ քերական մեկնիչներից առանձնանում է Հովհաննես Քոնեցին, որի «Յաղագս քերականին» երկը նախանշում է հայ լատինաբան քերականության սկզբնավորումը։

Երկրորդ գլուխ

ԽՈՍՔԻ ՄԱՍԵՐԻ ՏԱՐԲԵՐԱԿՈՒՄԸ 17—19-ՐԴ ԴԱՐԵՐԻ ՀԱՅԵՐԵՆ ԼԱՏԻՆԱՏԻՊ ԵՎ ԻՆՔՆՈՒՐՈՒՅՆ ՔԵՐԱԿԱՆՈՒԹՅՈՒՆՆԵՐՈՒՄ

ՀԱՅԵՐԵՆԻ ԽՈՍՔԻ ՄԱՍԵՐԻ ՏԱՐԲԵՐԱԿՈՒՄԸ 17—18-ՐԴ ԴԱՐԵՐԻ ԼԱՏԻՆԱՏԻՊ ՔԵՐԱԿԱՆՈՒԹՅՈՒՆՆԵՐՈՒՄ

Հայերենի ու հայ մշակույթի նկատմամբ կաթոլիկ եկեղեցու դեռևս 14—15-րդ դարերից ցուցաբերած հետաքրքրասիրությունը 16—17-րդ դարերում ավելի է ծավալվում Եվրոպայի դեպի Արևելք տարածվող գաղութատիրական քաղաքականության հետևանքով։ Եվրոպայում, և ոչ միայն Եվրոպայում, գիտության ընդհանուր լեզու դառնալու հավակնություններ ունեցող լատինների ազդեցությամբ տարածված լատինաբանությունը հայերենի պատմության մեջ գալիս է փոխարինելու հունաբանությանը։

Իր «Հին հայերենի հոլովման սիստեմը և նրա ծագումը» աշխատության մեջ Գ. Ջահուկյանը հայերենի քերականության պատմությունը բաժանում է երեք շրջանի՝ «ա. Հունատիպ քերականությունների շրջան (5-րդ դարից մինչև 17-րդ դարի սկզբնեը)», «բ. Լատինատիպ քերականությունների շրջան (17-րդ դարի սկզբներից մինչև 18-րդ դարի կեսերը)», գ. Ինքնատիպ քերականությունների շրջան (18-րդ դ. երկրորդ կեսից մինչև այժմ)»[1]։

Հունական քերականության ազդեցությամբ ձևավորված լատինական քերականությունը մասամբ լատինների լեզվական առանձնահատկությունների, մասամբ էլ լատինական քերականության առջև ծառացած կոնկրետ խնդիրների լուծման հետևանքով գնալով հեռացավ հունական բանասիրական քերականության համակարգից և դարձավ ավելի գործնական։ Նպատակ ունենալով տալ ուղիղ խո-

---

[1] Գ. Ջահուկյան, *Հին հայերենի հոլովման սիստեմը և նրա ծագումը*, Երևան, 1959, էջ 11—16։

սելու և գրելու կանոններ, ինչպես ճիշտ նկատված է, «լատինական քերականությունը ավելի ու ավելի է դառնում «տեխնիկական», սահմանափակվում լեզվական երևույթների գործնական նկարագրությամբ»[2]։

Այս գործնականության պահանջով հունատիպ քերականությունից լատինատիպ քերականության անցման շրջանում (15—16-րդ դարեր) ստեղծվել են հարց ու պատասխանի ձևով հորինված քերականություններ (կատեխիզիսներ), որոնցից ուշադրության արժանի է Դավիթ Զեյթունցու «Մեկնութիւն քերականի» աշխատությունը։

1. Դ. Զեյթունցի.—Զեյթունցու կենսագրության ճշգրտումները[3], որ կատարեց վերջերս Ե. Մելքոնյանը, ցույց են տալիս, որ նա, ապրելով և ստեղծագործելով 16-րդ դարի երկրորդ կեսերին և 17-րդ դարի սկզբներին, իր քերականությունը գրելիս թեև հետևում է Թրակացու քերականությանը և նրա հայ մեկնություններին, բայց և քաջ գիտակ է լատիներենին և կրում է նաև լատինական քերականության ազդեցությունը։

Զեյթունցու քերականության ճեռագիր քննությունը Գ. Ջահուկյանին բերել է այն համոզման, որ, պահպանելով խոսքի մասերի ավանդական թիվը և Թրակացու կողմից դրանց տրված սահմանումները, նա վերջինիս իմաստաբանական-ձևաբանական սահմանումներին զուգահեռ տալիս է նաև իմաստաբանական-շարահյուսական սահմանումներ՝ զարգացնելով և ամբողջացնելով իր նախորդների սահմանումներն ու բնութագրումները[4]։

Հայերենի խոսքի մասերի պատմության համար ուշագրավ են անվան և նրա ու մյուս խոսքի մասերի փոխհարաբերությունների վերաբերյալ Զեյթունցու դատողությունները։

Ըստ ավանդության՝ անունը, որպես առարկաները իրարից զանազանող «նշանակում», նախադասելով բայից՝ Զեյթունցին նրա տակ հասկանում է միայն գոյականը։ Այս մոտեցումը գիտակցված և ամբողջական տեսք է ստանում, երբ նա անվան մեջ անջատում

---

[2] Գ. Բ. Ջահուկյան, Դրաբարի քերականության պատմություն, Երևան, 1974, էջ 2։

[3] Տե՛ս Ե. Մելքոնյան, Դավիթ Զեյթունցի քերական («Բանբեր Երևանի համալսարանի», 1974, № 2)։

[4] Համմ. Գ. Ջահուկյան, Քերականական և ուղղագրական աշխատությունները հին և միջնադարյան Հայաստանում, էջ 333։

է գոյականի ընբռնումը ածականից, առարկայի անվանական արտահայտությունը զանազանում է դերանվանականից, իսկ ժամանակի քերականական կարգը դիտում է որպես բայը անունից տարբերող գլխավոր հատկանիշ։

«Անուն է, որ յայտնէ գոյացութեան սահման ի կարճոյ,— գրում է Չեյթունցին։—Որպէս ասելն մարդ՝ յայտնեցաւ սահմանն նորա, զի է գոյացութիւն մարմնական, ներշնչական, զգայական, կենդանի բանական, մահացութեան՝ ընդունակ»[5]։ Մարդ անունն, ուրեմն, որպես այդ բառի հասկացության կարճ սահմանում, բովանդակում է նրա բոլոր հատկանիշները։ Որակը, ըստ Չեյթունցու, առարկայի բոլոր հատկությունների գումարն է։ Այս դատողությունն իր հետագա լրացումն ու պարզաբանումն է գտնում Բաղդասար Դպիրի կողմից։ Անվանը բնորոշ է առարկայի հասկացությունն ըստ որակի ցույց տալը, որով նա հակադրվում է դերանվանը։ «Անուն է մասն բանի, որ նշանակէ զգոյացութիւն որակութեամբ... Որակութեամբ ասելովն որոշէ ի դերանունութենէ, զի դերանուն զգոյացութիւնն որակութեամբ ոչ նշանակէ»[6]։

Երզնկացու մեկնության մեջ գոյական և ածական անունները իրարից տարբերող թուրքիկ ակնարկը («էական» և «պատահական» անուններ)։ Չեյթունցու քերականության մեջ ավելի հստակ պարզաբանում է ստանում։ Անվան ձևերը (իմա՛ կազմությունը) բացատրելիս, մեջ բերելով Թարգմանչից եկող «քաջ Մանան», «քաջ Մանուէղ» օրինակները, Չեյթունցին ցույց է տալիս գոյական և ածական անունների տարբերությունը։ Նա Երզնկացու պես գոյականները համարում է «էական» անուններ, իսկ ածականները՝ «պատահմունք»։ «Լևոն՝ էական անուն է, և քաջն և քաջագոյնն՝ պատահմունք են. նոյնպէս. բարի Լևոն կամ չար կամ սեաւ կամ խարտեաշ կամ դեղնած կամ կարճ»[7]։

Չեյթունցին ինքնուրույն խոսք է ասում նաև խոսքի մասերի ձևաբանական հատկանիշների քննության մեջ։ «Հոլովների ուսմունքը,—գրում է Ջահուկյանը,—Չեյթունցու երկում ստանում է ավելի ամբողջական և կատարյալ բնույթ, քան նրա նախորդների մոտ»[8]։

Նախորդների ընդունած 6 հոլովին նա ավելացնում է մի յոթե-

---

[5] Նույն տեղում։

[6] Նույն տեղում, էջ 335։

[7] Նույն տեղում, էջ 339—340։

[8] Նույն տեղում, էջ 337։

երորդ հոլով՝ բացառական հոլովը, որ նրա կողմից անվանվում է «պատճառական»։

Ժամանակի քերականական կարգը, ինչպես հաջորդ շրջանի լատինաբան քերականների, այնպես էլ Զեյթունցու կողմից դիտվում է որպես բայը մյուս խոսքի մասերից տարբերող հատկանիշ։ «Անուն զգոյացութիւն յայտնէ առանց ամանակի և բայն ժամանակն և ժամենայն պատահմունս նորա»[9], գրում է նա։ Զեյթունցին բայաձևերը թեև ներկայացնում է ավանդությամբ եկող հինգ եղանակների տակ, բայց նրանց ըմբռնման մեջ զգալի փոփոխություններ է մտցնում։ «Անեղևութիւր» (անորոշը) ըստ նրա, ի տարբերություն հունաբան նախորդ հեղինակների, ժամանակի հատկանիշ չունի և դրանով էլ հակադրվում է սահմանական եղանակին։ Ինչպես հոլովմանն, այնպես էլ խոնարհման մեջ գրաբարի հարացուցային ձևերի հետ բերվում են նաև ժողովրդական խոսակցական լեզվի օրինակներ։

* * *

Հոմնատիպ քերականություններից լատինատիպ քերականությունների անցման շրջանի հարց ու պատասխանի ձևով գրված կատեխիզիսներից խոսքի մասերի պատմության համար ուշադրության արժանի է մի անհայտ հեղինակի «Քերականութիւն ըստ մասանց բանի» աշխատությունը, որ պահպանվել է 17-րդ դարի սկզբի ձեռագրերով։ Վարդան Արևելցու «Վասն բանին մասանց»-ից հետո սա երկրորդ ամբողջական երկն է, որի մեջ քերականության հարցերի քննությունը տարվում է խոսքի մասերի շրջանակում։ Ի տարբերություն Վարդանի, որի գործում խոսքի մասերը, իբրև շարահյուսական կարգեր, նույնացվում էին նախադասության անդամներին և վերլուծվում որպես այդպիսիք, այս աշխատության հեղինակը խոսքի մասերը համարում է իմաստաբանական-ձևաբանական կարգեր և տալիս է սրանց անհամեմատ հանգամանալից նկարագրությունը։ «Այս կատեխիզիսը,— գրում է նրա առաջին ուսումնասիրող Գ. Ջահուկյանը,— եթե նկատի չունենանք հարց ու պատասխանի ձևը, ունի արդի քերականական երկերի ձևաբանության բաժինների կառուցվածք»[10]։

---

[9] *Նույն տեղում, էջ 334։*

[10] *Նույն տեղում, էջ 344։*

խոսքի մասերի սահմանման ու իմաստաբանական վերլուծության մեջ նորություններ չբերող այս անհայտ հեղինակի գործը որոշ նորություններ է բերում դրանց ձևաբանական քննության մեջ։ Այս կատեխիզիսում առաջին անգամ ավանդական ութ խոսքի մասերը խմբավորվում են իրենց ձևաբանական՝ հոլովական հատկանիշով, անունը, ընդունելությունը, հոդը և դերանունը համարվում են «հոլովականք», իսկ բայը, մակբայը, նախադրությունը և շաղկապը՝ «անհոլովք»։

Հունաբանների պես սրա հեղինակը ընդունում է վեց հոլով՝ կատարելով, սակայն, հոլովաձևերի հավելումներ և ճշգրտումներ։

Թեև շարունակում է ընդունել հինգ եղանակ, բայց «անեղևույթը» (անորոշը) միաժամանակ համարում է «ապառնի» ժամանակի «ընդունելություն»։ Այս հեղինակը, ող-ով վերջացող բայաձևերը համարելով «ներկա», իսկ եալ-ով վերջացողները՝ «անցեալ» ժամանակի ձևեր, հայերենում զանազանում է ժամանակային սկզբունքով տարբերակված երեք տեսակի ընդունելություն (ներկա, անցյալ, ապառնի)՝ –ող, –եալ, –ել վերջավորություններով։

Մյուս կատեխիզիսների նմանությամբ այստեղ էլ խոնարհման կարգերը բացատրված են գրաբարի և միջին հայերենի կամ խոսակցական լեզվի բայաձևերի վկայակոչմամբ։ Այս տեսակետից ուշագրավ է աշխարհաբարի ու(վ) կրավորական ածանցի օրինականացումը սույն կատեխիզիսում[11]։

Վերջերս հրատարակած «Գրաբարի քերականության պատմություն» աշխատության մեջ Գ. Ջահուկյանը հայ քերականության պատմության իր նախկինում սահմանած «լատինատիպ քերականությունների շրջանի» (17-րդ դարի սկզբներից մինչև 18-րդ դարի կեսերը) գործերը, ըստ սրանց բովանդակության և կառուցվածքային այլևայլ առանձնահատկությունների, բաժանում է չորս ենթատեսակի՝ «լատիներեն տեխնիկական քերականություններ (17-րդ դար, կես)», «լատինատիպ ռացիոնալիստական քերականություններ (17-րդ դար, երրորդ քառորդ)», «Հունա-լատինատիպ քերականություններ (17-րդ դար, 30—90-ական թթ.)», «լատինատիպ-բանասիրական քերականություններ (18-րդ դարի սկզբներից մինչև երրորդ քառորդը)»։ Լատինատիպ քերականությունների այս ստորակարգումը, որ համարյա թե նաև ժամանակագրական հիմունք ունի, միաժամանակ կատարված է խոսքի մասերի նկարագրության մեջ

[11] Համմ. Գ. Ջահուկյան, նշվ. աշխ., էջ 348։

քերականների արտահայտած տեսակետների, վերլուծության մեթոդների, լեզվական նյութի ընդգրկման չափի ու ճշգրտության բազմազան առանձնահատկությունների հաշվառումով։ Այնպես որ այդ բաժանումը ոչ միայն օգտակար, այլև միանգամայն կիրառելի է նաև մեր ուսումնասիրության համար։

Լատինատիպ գործնական-տեխնիկական բնույթի քերականությունները գրաբարի քերականություններ են՝ ստեղծված Եվրոպայում։ Դրանք երկուսն են՝ Ֆրանցիսկոս Ռիվոլայի «Crammaticae armenae libri quattuor» *(1624 թ.)* և Կղեմես Գալանոսի «Քերականական և տրամաբանական ներածութիւն առ յիմաստասիրութիւնն շահելոյ» *(1645 թ.)*։

Առաջինը գրված է լատիներենով, իսկ երկրորդը՝ լատիներեն և հայերեն զուգահեռ շարադրանքով։

2. Ֆ. Ռիվոլա.—Ռիվոլայի քերականության դերը հայ քերականության պատմության մեջ արժեքավորելիս, Գ. Ջահուկյանը գրում է. «Ռիվոլայի քերականությունը կառուցված է «տեխնիկական»— գործնական քերականությունների օրինակով, որոնք տարածված էին վերածննդյան շրջանում և հետագայում։ Այն հետապնդում է զուտ գործնական նպատակներ, նկատի ունի լատիներենից օգտվող ընթերցողների և զուրկ է տեսական կարևոր նորություններից։ Հայերենի ուսումնասիրության բնագավառում Ռիվոլայի բերած գլխավոր նորությունը շարահյուսական հարցերի քննությունն էր, մի բնագավառ, որ Ռիվոլայի հայ նախորդների մոտ բացակայում է»[12]։ Այդ Ռիվոլան անում է հավանաբար Հ. Քոնեցուց անկախ։

Ռիվոլան հայերենի խոսքի մասերի տարբեր կողմերի վերլուծությամբ զբաղվում է իր քերականության չորս բաժիններից վերջին երեք բաժիններում, դրանք են՝ 2. «Անվան, ինչպես և դերանվան մասին» կամ «Անվան հատկանիշների մասին», 3. «Բայի մասին» կամ «Բայի հատկանիշների մասին» 4. «Շարահյուսության վերաբերող դիտողություններ»։ Երկրորդ և երրորդ բաժիններում ներկայացվում են խոսքի մասերի քերականական հատկանիշները, հայերենի ձևաբանությունը, անվանական և դերանվանական հոլովումներն ու խոնարհումը, իսկ չորրորդում՝ խոսքի մասերի կա-

---

[12] Գ. Բ. Ջահուկյան, Գրաբարի քերականության պատմություն, Երևան, 1974, էջ 10։

պակցությունն ու գործածությունը, ինչպես նաև նրանց բառակազմական առանձնահատկությունները[13]։

«Տեսական կարևոր նորություններից» զուրկ այս քերականությունը, այնուամենայնիվ, առանձին խոսքի մասերի ներքին ստորակարգության, սրանց որոշ քերականական հատկանիշների վերլուծության մեջ բերում է ուշադրության արժանի նորություններ։ Այսպես՝ նախորդ հայ քերականների դերանվան իմաստային երեք խմբերին՝ անձնական, ստացական, հարաբերական, Ռիվոլան ավելացնում է չորրորդ՝ ցուցական խումբը, թեև անձնականներն ու ցուցականները սահմանազատելիս սրանք շփոթում է իրար՝ իմմ համարում է ցուցական, սա, դա, նույնպես ցուցական, իսկ նա՝ անձնական դերանուններ, ուստի և առաջ չի անցնում Քոնեցու դասակարգումից։

Լատիներենի օրինակով հայերենի հոլովական հարացույցից հանում է ոչ միայն կոչականը, այլև գործիականը և սրա փոխարեն Զեյթունցուց անկախ ավելացնում է լատիներենում եղած և մինչև այդ հունաբանների կողմից հայ քերականության մեջ չառանձնացված բացառական հոլովը, որին միացնում է նաև ներգոյականը, որպես բացառականի նման ի(յ) նախդրով կազմվող հոլովաձև։

Ի տարբերություն երզնկացու, որն «ընդունելության» (դերբայների) մեջ գերակշռությունը տալիս էր բայական հատկանիշներին, Ռիվոլան դերբայների մեջ հիմնականը համարում է անվանական արժեքը, ուստի և սրանք անվանում է «դերբայական անուններ» („De nominibus participialibus“)[14]։

Նախորդների պես բայ ասելով նա էլ հասկանում է միայն դիմավոր բայերը, ուստի բայական կարգեր է համարում խոնարհումը, եղանակը, ժամանակը, դեմքը և թիվը։ Այստեղ Ռիվոլայի բերած կարևոր նորությունն այն է, որ հունաբանների ընդունած հինգ եղանակների փոխարեն նա ընդունում է երեք եղանակ՝ սահմանականին միացնելով ըղձականն ու ստորադասականը։ Վերջիններս կազմվում են սահմանականից՝ եղանակիչ բառերի (այլ թէ, զի, վասն զի, որպէս զի, իբրև, բանզի) օգնությամբ։

Ռիվոլան նկատում է, որ սահմանական և հրամայական եղանակների կողքին երրորդ՝ «անորոշ եղանակ» կազմող դերբայը հա-

---

[13] Տե՛ս նշվ. աշխ., էջ 10—11։

[14] Տես նշվ. աշխ., էջ 20։

յերենում կարող է հոլովվել, այդ հոլովված և նախդրավոր ձևերը (առ ի գործել, գործելով, գործելոյ, ընդ գործել, ի գործել) նա համապատասխան է համարում լատիներենի gerundium-ին։ Անորոշը երբեմն էլ անվան բնույթ ունի և կարող է թարգմանվել բայանվամբ[15]։

3. Կ. Գալանոս.—Լատինատիպ գործնական քերականության ավելի կատարյալ օրինակ է Կղեմես Գալանոսի «Քերականական և տրամաբանական ներածութիւն»-ը, որն իր հավաստմամբ ստեղծված է հայերեն, հունարեն և լատիներեն քերականությունների հիման վրա։ Ինչպես հեղինակն է ասում, նրա աշխատության քերականության բաժինը պարունակում է «...արհեստք չորք, այսինքն՝ ուղղագրութիւն, բանաստեղծութիւն, արտաբերութիւն և շարադրութիւն», ըստ այսմ քերականության սույն չորս մասերում քննության նյութ են դառնում գիրը, վանկը, բառը և «բանը»։

Խոսքի մասերի ուսմունքը Գալանոսն ամբողջությամբ դնում է իր քերականության չորրորդ մասում, որն անվանված է «Յաղագս շարադրութեան և բանի»։ Սա նշանակում է, որ նա ցուցաբերում է խոսքի մասերի շարահյուսական ըմբռնում և սրանց, իբրև «բանի» կամ նախադասության մասերի, թե՛ ձևաբանական և թե՛ շարահյուսական առանձնահատկությունները քննում է նույն բաժնում՝ այդ համարելով բանի կամ նախադասության վերլուծության։ Նա իր այդ շարահյուսական մոտեցումը շատ որոշակի է սահմանում. «Շարադրութիւն է արհեստ՝ զբանն ստուգապէս շարադրելոյ։ Արդ՝ բան է շարամանութիւն բառից առ ի տրամախոհութիւն յայտնելոյ և զմասունս ունի ինն. անուն, դերանուն, բայ, ընդունելութիւն, յօդ, նախադրութիւն, մակբայ, միջարկութիւն, շաղկապ»[16]։

Ինչպես երևում է խոսքի մասերի թվարկումից, Գալանոսը, նախորդ շրջանի հունաբան քերականների պես հայերենի համար ևս հոդը համարելով առանձին խոսքի մաս, լատիներենի քերականության հետևողությամբ հայերենի ութ խոսքի մասերին ավելացնում է իններորդը՝ միջարկությունը։

Չնչությունցու նման Գալանոսն էլ բայի տարբերությունն անուն խոսքի մասից համարում է ժամանակի քերականական կարգը, ուստի և անունը սահմանում է ոչ միայն նրա առարկայական նշանա-

---

15 Համմտ. նշվ. աշխ., էջ 31։

16 Կղեմէս Գալանոս, *Քերականական եւ տրամաբանական ներածութիւն առ յիմաստասիրութիւնն շահելոյ*, Հռոմ, 1645, էջ 24։

կությամբ և հոլովվելու հատկանիշներով, այլև ժամանակի կարգից զուրկ լինելու հատկանիշով։ Չհոլովվելը դառնում է բայի համար, իսկ ըստ ժամանակի չփոփոխվելը՝ անվան համար քերականական բնորոշ հատկանիշ։ Այսպես՝ «Անուն է մասն բանի հոլովական թարց ամանակի, որ զէութիւն իրերաց նշանակէ, որպէս մարդ»[17]։ «Բայ է մասն բանին հոլովական ժամանակօք թարց հոլովից, որ զառնել և զկրել նշանակէ»[18]։

Այս և մյուս նյութական նշանակության խոսքի մասերը սահմանվում են իմաստային և ձևաբանական, երբեմն էլ շարահյուսական (գործառական) սկզբունքների զուգորդմամբ։

Այսպես՝ «Դերանուն է մասն բանին հոլովական՝ առեալ փոխանակ անուանն և զբացորոշեալ անձն նշանակէ, որգոն՝ ես, դու, նա»[19]։

«Մակբայ է մասն բանին անհոլով, որ բացորոշէ զբայի նշանակութիւն կամ ածական անուանն, որգոն՝ բարւոք, յոյժ և այլ»[20]։

«Ընդունելությունը», որպես անվան և բայի հատկանիշներ իր մեջ միավորող խոսքի մաս, սահմանվում է սրանց ձևաբանական հատկանիշների վկայակոչմամբ միայն. «ընդունելութիւն է մասն բանին հոլովական ժամանակօք և հոլովիւք»[21]։

Միջարկությունը նյութական խոսքի մասերի պես ունի իմաստային և ձևաբանական սահմանում. «Միջարկութիւն է մասն բանին անհոլով, որ զիղձս մտաց և զկիրս անձին նշանակէ»[22]։

Իմաստային սահմանում ունի նաև հոդը. «Յօդ է փոքր ինչ մասնիկ բանին, որ դիմօք զանձն նշանակէ և զմերձաւորն կամ զհեռաւորն»[23]։ Գալանոսն այստեղ կրկնում է հունաբան քերականներին և, հոդերը բաժանելով նախադաս և ստորադաս տեսակների, նախադաս հոդեր է համարում այս, այդ, այն ցուցական դերանունները։

Նախդիրն ու շաղկապը, ըստ ավանդության, ունեն ձևաբանական և գործառական-շարահյուսական սահմանում. «Նախդիր է

---

17 *Նույն տեղում, էջ 24։*

18 *Նույն տեղում, էջ 54։*

19 *Նույն տեղում, էջ 49։*

20 *Նույն տեղում, էջ 110։*

21 *Նույն տեղում, էջ 112։*

22 *Նույն տեղում։*

23 *Նույն տեղում, էջ 104։*

մասն բանին անհոլով, որ այլոց բանի մասանցն նախդրի կամ զատեալ, կամ շարառեալ, զատեալ, հիշան՝ ընդ աջմէ. շարառեալ, որպէս՝ ընդունիմ»[24]: *Գալանոսը Թրակացու քերականության հայ մեկնիչների պես շարունակում է նախդիր կամ նախադրություն համարել նաև նախածանցները: Ուստի և նախդիրները տրոհում է՝ միշտ միացած գրվող, միշտ անջատ գրվող և երբեմն միացած, երբեմն անջատ գրվող տարատեսակների:*

Նույն սկզբունքով շաղկապը սահմանում է որպես «մասն բանին անհոլով, որ զայլ բանի մասունս շաղկապէ»[25]:

Գալանոսի աշխատության մեջ անհամեմատ որոշակի ու հըստակ է ձևակերպվում անուն խոսքի մասի ներսում գոյականի, ածականի և թվականի առանձնացումը միմյանցից: Եթե թվականի առանձնացումը կատարվում է նրա բոլոր տեսակները մի ընդհանուր՝ թվական անվան տակ միավորելու և թվականի երեք տեսակներ տարբերակելու եղանակով, ապա ածականի և գոյականի առանձնացումը կատարվում է սրանց շարահյուսական-գործառական հատկանիշների հակադրմամբ: Այս մասին Գալանոսը գրում է. «Անուացն՝ ոմն գոյական, ոմն ածական: Գոյականն է, որ ըստ ինքեան գոյանայ ի բանի, որպէս երկիր, սպիտակութիւն... Երկիրդ և սպիտակութիւնդ՝ առանձնակի իմացեալ՝ կարեն գոլ ի բանին:

Ածականն է, որ ոչ ըստ ինքեանն գոյ ի բանին. այլ վերածեալ գոյականին, թէ յայտնապէս, թէ ծածկաբար. որպէս բարի, իմաստուն և այլ: Յայտնապէս, զոր օրինակ, որդի իմաստուն է փառք հօրն իւրոյ: Ծածկաբար, իբրու գաղափարաւ. իմաստունն իշխեսցէ աստեղացն. այսինքն, մարդ իմաստուն»[26]:

Ածական—գոյական տարբերակումը Գալանոսը տարածում է նաև անվան մեջ դասվող հարցական, ցուցական և հարաբերական դերանունների վրա՝ զանազանելով «գոյացութեան» և «պատահման» հարցականներ, ցուցականներ («հատուցական»-ներ) և հարաբերականներ:

Անվան տեսակներն ըստ կազմության քննելիս, հեղինակը «ածանցական» անունների մեջ ոչ միայն քննում է ածականի բաղադրության աստիճանների կազմությունը, այլև ածականի առանձին տեսակ է համարում գոյականներից ածանցմամբ կազմված «երկ-

---

[24] *Նույն տեղում, էջ 106:*

[25] *Նույն տեղում, էջ 112:*

[26] *Նույն տեղում, էջ 24:*

րային, քարեայ, մահկանացու, պղնձի» հարաբերական ածականները՝ սրանք անվանելով «գոյացական» ածականներ։

Լատիներենի քերականության օրինակով նա հունաբանների կողմից անվան մեջ առանձնացված քանակական և դասական թվականներին ավելացնում է նաև բաշխական թվականը՝ այն կոչելով «զատական»։ Այսպիսով թվականը ամբողջանում է իր երեք տեսակներով. «Թվական, որ եռակ է. գլխաւոր, հիկէն մի, երկու, երեք և այլ։ Դասական, որպէս առաջին, երկրորդ, երրորդ և այլ։ Զատական, որպակ մի մի, երկուս երկուս, երեք երեք և այլ»[27]։

Անվան տեսակներ է համարում հատուկ («յատկական»), «հասարակ» կամ «առասական» և «բագձածական» կամ «հատաքական» անունները, որպիսի դասակարգումը այժմ շատ սովորական է։

Անվան տեսակներ են մնում նաև անորոշ, որոշյալ և ժխտական դերանունները, այսպես. «Ոմն՝ մասնաւոր կամ անորոշ, հիբար ոմն, ոք, իմն, ինչ, իւրաքանչիւր։ Եւ ոմն՝ ընդհանրական, հիւան ամենայն, ոչ ոք, որինչ, ոչինչ»[28]։

Այստեղ հեղինակն այնքան էլ հետևողական չէ։ Դերանունների տեսակներն ըստ կազմության քննելիս, նա վերոհիշյալ ոմն, իմն, ինչ բառերը կրկին մեջ է բերում, այս անգամ որպես պարզ («նախագաղափար») դերանվան օրինակներ։

Գալանոսը ոչ միայն վերականգնում է Ռիվոլայի կողմից հայերենի հոլովների շարքից հանված կոչականն ու գործիականը, այլև նոր հոլովներ է ընդունում և դրանց թիվը հասցնում է տասի։ «Հոլովք տասն. առաջինն է ուղղական, որ անուանական ասի. իսկ մնացեալքն հոլովականք, որք ասին՝ սեռական, տրական, կրողական (իմա՛ հայցական), կոչական, առողական (իմա՛ բացառական), գործիական, պատմական, կացողական (իմա՛ ներգոյական), պարառական»[29]։

Սրանցից վերջին չորսը նա հատուկ է համարում միայն հայերենին, իսկ առաջին վեցը՝ հայերենին և լատիներենին։

Ինչպես երևում է նրա տված բացատրություններից և ներկայացրած հարացույցից, նա հոլովի տարբերակման մեջ գլխավորը

---

[27] Նույն տեղում, էջ 25։

[28] Նույն տեղում։

[29] Նույն տեղում, էջ 30։

համարում է հոլովական վերջավորությունները, և՛ նախդիրները։

Ավելի ամբողջական պատկեր ունեն Գալանոսի ներկայացրած անվան, դերանվան և բայի հարացույցները։ Թեև դերանվան տեսակավորման հարցում նա հետևողական ու միասնական մոտեցում չունի, մեկ հների պես ընդունում է դերանվան «նախագաղափար» և «ածանցական» տեսակներ, մեկ էլ լատիներենի նմանողությամբ խմբավորման նոր փորձ է անում՝ ցուցականները կրկին միացնելով անձնականներին և առանձնացնելով դերանվան «ազգական» կոչված տարատեսակ, այսուամենայնիվ նրա դերանվանական հարացույցներում շատ ավելի հարազատորեն է արտացոլվում գրաբարի դերանվան թեքման ձևերի իրական պատկերը, քան նրա նախորդների աշխատություններում։

Բայց քանի որ Գալանոսի ուսումնասիրած լեզվական նյութը լատինաբան գրաբարն է, ուստի նրա հոլովական և խոնարհման հարացույցներում մի կողմից՝ լատինաբան հայերենում հորինված, մյուս կողմից՝ լատիներենի քերականական կաղապարների ու հասկացությունների թելադրանքով իր ստեղծած արհեստական ձևերի առկայությունը զգալի է։

Խոսքի մասրի քննությունը հեղինակն ավարտում է «Կառուցուբիւն մասանց բանին» շարահյուսության մասով, որտեղ շարադրվում են խոսքի մասերի կապակցության՝ համաձայնության և խնդրառության («կառուցարուբիւն») հարցերը։

Լատինատիպ ռացիոնալիստական ճեռականությունը հայ քերականագիտության պատմության մեջ ներկայացված է Ոսկան Երևանցու «Քերականութեան գիրք» (1665 թ.) և Հովհաննես Կոստանդնուպոլսեցու «Ջուխթիւն հայկաբանութեան կամ՝ քերականութիւն հայկական» (1674 թ.) աշխատություններով։ Սրանցից իր տեսակի մեջ առավել ամբողջականն ու կատարյալը, անշուշտ, Կոստանդնուպոլսեցու քերականությունն է։ Սակայն շարադրանքի պատմականությունը չխախտելու համար և Երևանցու քերականության մասնակի առանձնահատկություններ հաշվի առնելով՝ անհրաժեշտ ենք համարում համառոտ խոսել նաև վերջինիս խոսքի մասերի տեսության մասին։

4. Ոսկան Երևանցի.—Ոսկան Երևանցին խոսքի մասերի ու սրանց քերականական կարգերի քննությունը կատարում է իր գրքի առաջին մասում։ Երկրորդ մասը նվիրված է խոսքի մասերի շարահյուսությանը։ Վերջում բերված են հոլովման և խոնարհման հարացույցները.

Ոսկանը զանազանում է «Բանի» (իմա՛ նախադասության) երկու տեսակ՝ «տարալուծեալ բան» և «խռնեալ բան». «...խռնեալ բան է, որ լինի թարց բառից շարադրութեան, բայց միայն նշանօք ցուցանօղք անձին զկիրս, զծանօթութիւնս և ախտս, ուստի ի քերականացս կոչի մասն բանի միջադրութիւն, հիզան՝ վաշ, վահ, զգոյշ»[30]։ Հայ քերականության պատմության մեջ նա առաջին անգամ միջարկությունը անջատում և հակադրում է մյուս խոսքի մասերին։ Ոսկանը, նկատի առնելով միջարկությունների մյուս խոսքի մասերին չկապակցվելու և առանձին վերցրած նախադասության արժեք ունենալու հանգամանքը, սրանց հանում է խոսքի մասերի շարքից և դիտում՝ իբրև «բանի» առանձին տեսակ։ Այսպիսով, քերականը միջարկությունները, որպես մարդու կրքերի, ցանկության, ճանաչողության արտահայտման չտարորոշված նշաններ, սովորական բառեր չի համարում։

Խոսքի մասերի պատմության տեսակետից Ոսկան Երևանցու բերած նորությունններից մեկն էլ այն է, որ նա Հ. Քոնեցու նման հոդն այլևս չի համարում առանձին խոսքի մաս։ Բայց ի տարբերություն Հ. Քոնեցու, Ո. Երևանցին հոդերի հարցին անդրադառնում է դերանունների վերլուծության մեջ և դրանք համարում է այս, այդ, այն դերանունների կրճատ ձևեր։

Հայերենի խոսքի մասերի համակարգում, այսպիսով, թողնելով յոթ խոսքի մաս՝ Ոսկանը սրանք մե՛կ սահմանում է իմաստաբանական-տրամաբանական հիմունքով՝ մնալով հավատարիմ իր քերականական ռացիոնալիստական սկզբունքին, մե՛կ էլ, նրանց առանձնակի քննության ժամանակ, տալիս է ձևաբանական-իմաստաբանական սահմանումներ։

Ներածության մեջ խոսքի մասերին տրված իմաստաբանական, տրամաբանական սահմանումները սրանք են.

«Անուն նշանակէ զէութիւն իրաց, և այսպէս անուն է նշան էութեան, որպոն՝ մարդ, ձի, սպիտակ, երկայն...»։

«Բայ նշանակէ զիրակութիւն էութեան, հիբար՝ սիրեմ, առեմ, գնամ...»։

«Ընդունելութիւն նշանակէ զիրակութիւն ընդ էութեան համանգամայն, որպան՝ սիրող, գնացեալ, առօղ...»։

«Դերանուն նշանակէ զանձն էութեան, այսինքն՝ զկայութիւն էութեան, որպակ՝ ես, դու, նա, ինքն»։

---

[30] Ոսկան Երևանցի, *Քերականութեան գիրք, 1666. Ամստերդամ*, էջ 5։

«Նախադրութիւն նշանակէ զնկատմունս ի մէջ էութեանց, զշրջակայութիւնս և զեղանակս, հիզան՝ վասն, յաղագս, ընդդէմ, յայտ, արտաքոյ, ի մէջ...»։

«Առքայ նշանակէ զեղանակաւորութիւն և զշրջակայութիւնս իրակութեան, քանզի միշտ առընթեր բայի դնի, հիկեն՝ բարեպէս լինի, բարեպէս, հզորաբար, սերկ, երեկ, երկիցս...»։

«Շաղկապ նշանակէ զշաղշարումն էութեան ի մէջ ինքեանց կամ զշաղկապումն իրակութեան ներինքեանց կամ զէութիւնս հանդերձ իրակութեամբ զիբար՝ և զի, քանզի, որպէս, ուրեմն, ապա ուրեմն...»[31]։

Ինչպես տեսնում ենք, Ոսկանը թեև մեկնիչների պես այլևս չի զբաղվում անվան և բայի առաջնության և այս կարգի տեսական վեճերով, բայց շեշտը դնելով խոսքի մասերի իմացաբանական կողմի վրա՝ նա գլխավոր խոսքի մաս է համարում անունը և մյուս բոլոր խոսքի մասերի սահմանումը բխեցնում է սրանից։ Նույն տրամաբանական մոտեցումը շարունակում է նաև խոսքի մասերի առանձնակի քննության մեջ, որտեղ ոչ միայն ուշադրություն է դարձնում խոսքի մասերի անվանումների ստուգաբանական իմաստին, մի բան, որ մեկնիչների մոտ շատ սովորական երևույթ էր, այլև խոսքի մասերը քննում է ըստ իրենց քերականական կարգերի, ըստ որում, վերջիններս էլ համարյա նույնացնում է տրամաբանական կամ հասկացական կարգերին։ Ինչպես իրավացիորեն նկատում է Գ. Ջահուկյանը, Ոսկանի կողմից «խոսքի մասերը խմբավորվում են ըստ կարգային (կատեգորիալ) հատկանիշների»[32]։

Այսուամենայնիվ Ոսկանը իր այս տրամաբանական սկզբունքի կիրառության մեջ մինչև վերջ հետևողական չէ։ Նա վերը հիշատակված «Քերականութիւն ըստ մասանց բանի» կատեխիզիսի անհայտ հեղինակի պես կատարում է նաև խոսքի մասերի ձևաբանական խմբավորում՝ սրանք բաժանելով «հոլովականք» և «անհոլով» խմբերի։ Բայց, ի տարբերություն այդ կատեխիզիսի հեղինակի, Ոսկանը Դալանոսի նման «հոլովումն» ասելով հասկանում է բառերի թեքումն ընդհանրապես, ուստի և «հոլովականք» համարված անուն, դերանուն, ընդունելություն խոսքի մասերին ավելացնում է նաև բայը, իսկ «անհոլով» են մնում նախադրությունը, շաղկապը և մակբայը, որ նա անվանում է «առքայ»։

---

31 Նույն տեղում, էջ 6։

32 Գ. Բ. Ջահուկյան, նշվ. աշխ., էջ 68։

Քերականության ներածականում իր տված տրամաբանական սահմանումներին ավելացնելով այս ձևաբանական տարբերակումը՝ Ոսկանը խոսքի մասերի սահմանումների մեջ կրկին վերականգնում է հունաբանների կողմից այդ սահմանումներում խոսքի մասերի հոլովվելու կամ չհոլովվելու հատկանիշի պարտադիր հիշատակումը։ Այսինքն՝ «մասն բանի հոլովական» և «մասն բանի անհոլովական» ձևակերպումները կրկին դառնում են խոսքի մասերի սահմանման պարտադիր բաղադրիչ, այն է՝ «Անուն է մասն բանի հոլովական՝ նշանակօղ զէութիւն իւրաքանչիւրոյ իրի ենթադրութեամբ», «Առբայ է մասն բանի անհոլովական, նշանակօղ զշրջակայութիւն» ստորոգականս և զախտս և զեղանակաւորութիւնս ևս իրականութեան» և այլն։

Ինչպես Գալանոսի քերականությունում, այստեղ առավելապես նկատելի են հոլովման և խոնարհման հայերենին խորթ ու արհեստական ձևեր։ Հոլովման մեջ, սակայն, Ոսկանը Գալանոսի ընդունած տասը հոլովներից երկուսը՝ պատմական և պարառական հոլովները, դուրս է թողնում, քանի որ նա հոլովները տարբերում է բառերի վերջավորությունների փոփոխությամբ, այն է՝ «Անկ է զանազանութիւն անուան ներ վերջնումն...»։ Ըստ այսմ՝ նա հայերենի համար տարբերում է ութ հոլով կամ «անկ», թեև այստեղ էլ հետևողական լինելու դեպքում Ոսկանը այդ թիվը առնվազն մի երկուսով էլ պիտի պակասեցներ։

5. Հովհաննես Հակոբ Կոստանդնուպոլսեցի.—*Հ. Կոստանդնուպոլսեցին կամ Հովհաննես Հոլովը միջնադարի ռացիոնալիստական քերականության տիպիկ ներկայացուցիչ է։ Նա այդ սկզբունքով էլ սահմանում է քերականության բովանդակությունը. «Ենթակայ քերականութեան է միտն մարդկային, զի ի նմա յարահանգի և յարահանգչիլ կարէ ծանօթութիւնս այս արհեստական։ Առարկայ քերականութեան է խօսն մարդկային, զի շուրջ զնովաւ պարաբերէ ուղղութիւն նորին գործնական»[33]։ Ընդունելով խոսքի («բանի») երեք տեսակ՝ «մտավորական» կամ «ներտրամադրականն», «ձայնաւորականն» կամ «արտաբերականն» և «գրաւորականն» կամ «արտադրականն», Հ. Հոլովը նրանց հիմքում դնում է «մտաւորականն» խոսքը, որն ընդհանուր է բոլոր ժողովուրդների համար և անջատ լեզվական արտահայտությունից։ «Ոչինչ նարտաբերման և նար-*

---

[33] *Ջտութիւն հայկաբանութեան կամ քերականութիւն հայկական, շարադրեցեալ ի Յօհաննիսէ վարդապետէ Կոստանդնուպօլսեցւոյ, Հռոմ, 1674, էջ 119։*

տադրութեան, եթե ոչ նախ լեալ իցէ ընմերում մտի»[34],—գրում է նա։

Ի տարբերություն իր բոլոր նախորդների, Հոլովը խոսքի մասերը անվանում է «եզերք բանի»։ Նրանց պես «մասունք բանին» կամ «եզերք բանին» գործածելով նաև նախադասության անդամ նշանակությամբ՝ նա իր քերականության չորս մասերից երեքը նվիրում է «եզերաց» քննությանը։ Երրորդ մասում, որ վերնագրված է «Յաղագս շարամանութեան եզերաց», քննարկված են նախադասության անդամների կապակցության (համաձայնություն, խնդրառություն) և շարադասության հարցերը, իսկ առաջին երկուսում՝ բուն խոսքի մասերը։ Ուսուցողական-գործնական նկատառումով Հոլովը խոսքի մասերի ձևաբանական քննությունը անջատում է նրանց տեսական-իմաստաբանական քննությունից։ Քերականության առաջին մասում «Յաղագս եզերաց» վերնագրի տակ քննում է թեքվող խոսքի մասերի ձևաբանությունը՝ հոլովումն ու խոնարհումը, և մյուս խոսքի մասերի՝ տեսակները, իսկ երկրորդ մասում «Յաղագս սահմանաց եզերաց, տեսակաց և պարագայից նոցին» վերնագրի տակ կատարում է խոսքի մասերի տեսական քննություն՝ տալիս է սրանց սահմանումը և բնութագրում ըստ քերականական կարգերի և կազմության։

Գալանոսի հետևողությամբ և ի տարբերություն Ոսկանի, միջարկությունը համարում է առանձին խոսքի մաս։ Հողը համարում է դերանվան տեսակ։ Այսպիսով, ընդունում է ութ խոսքի մաս, որոնց սահմանման իմաստաբանական սկզբունքի մեջ խիստ հետևողական է։ Ահա այդ սահմանումները.

«Անուն է եզր բանի, որ զէութիւնս իրաց նշանակէ, որպոն՝ աստուած, էակ, ստեղծուած, երկիր, երկին և այլն»[35]։

«Բայն է եզր բանի, որ զգործմանս իրաց ընդ ժամանակաւ նշանակէ, որպոն՝ ատեմ, թանամ, հեղում, ատիմ, թանիմ...»[36]։

«Դերանուն է եզր բանի, որ զդէմս որոշականս էութեանց նշանակէ, որպոն՝ ես, դու, նա»[37]։

«Ընդունելութիւն է եզր բանի, որ զէութիւնս և զգործմունս իրաց ընդ ժամանակաւ նշանակէ, որպոն՝ բացօղ, ծիծաղելի»[38]։

---

[34] Նույն տեղում, էջ 187։
[35] Նույն տեղում, էջ 125։
[36] Նույն տեղում, էջ 140։
[37] Նույն տեղում, էջ 148։
[38] Նույն տեղում, էջ 152։

«Նախադրութիւն է եզր բանի, զպարագայս էութեանց նշանակէ, որգոն՝ ի վերայ, շուրջ, առաջի...»[39]։

«Մակբայ է եզր բանի, որ զեղանակս զգածմանց էութեանց նշանակէ, որգոն՝ յանկարծակի, փոյթ ընդ փոյթ, երագ երագ և այլն»։

«Միջարկութիւն է եզր բանի, որ զկիրս ոգւոյ նշանակէ, որգոն՝ ո՜հ, վա՜շ և այլն»։

«Շաղկապ է եզր բանի, որ զմասունս կամ զեզերս նոյնոյ բանի ընդ միմեանս բաղակցէ, որգոն՝ իսկ, քան զի, և...»[40]։

Յուրաքանչյուր սահմանման հաջորդում են հեղինակի լրացուցիչ իմաստային մեկնաբանությունները, որոնցում, բացի շաղկապից, մյուս բոլոր խոսքի մասերը բնութագրվում են անվան կամ «իրերի գոյացությյուն» նշանակող բառերի հետ ունեցած իրենց իմաստային փոխհարաբերությամբ։

Ինչպես նկատելի է, հիմնական կամ թեքվող խոսքի մասերի սահմանումներում Հոլովը տվյալ խոսքի մասը բնութագրող իմաստային հատկանիշին զուգահեռ հիշատակում է նաև որևէ քերականական տարբերակիչ հատկանիշ, որը դարձյալ իմացաբանական արժեք ունի։ Այսպես՝ Զեյթունցու և Գալանոսի նման նա բայը անունից և մյուս խոսքի մասերից տարբերակող հատկանիշ է համարում ժամանակի կարգը։ Ժամանակի հատկանիշով է, որ բայի անդեմ ձևերը միավորվում են «ընդունելության» մեջ, որպես անվան և բայի հատկանիշներ միավորող բառաձևեր։ «Ընդունելության» բայական գործածությյունը անվանականից տարբերվում է բառաձևի խնդրառական հատկանիշի պահպանումով, որպիսին նրա անվանական գործածության մեջ այլևս չկա։ Սա բայի անդեմ ձևերի մեջ բային հատուկ խնդրառական հատկանիշի առաջին որոշակի արձանագրումն է։ Փաստ, որը նոր շրջանի քերականագիտության մեջ ոմանք տեսական հիմք դարձրին բայի անդեմ ձևերը դիմավորների հետ մեկ խոսքի մասի մեջ միավորելու համար։ Թեև դերանվան համար նկատելի է նաև անուններին փոխարեն գործածվելու հատկանիշը, բայց սահմանման մեջ այն բնորոշվում է նրանով, որ դեմք է ցույց տալիս։ Ուրեմն, անունը իրերի էությյուն է նշանակում, բայց դեմք չունի, դերանունը «էութեանց» դեմքն է ցույց տալիս,

---

[39] Նույն տեղում, էջ 155։

[40] Նույն տեղում, էջ 157։

բայց ժամանակ չունի, «ընդունելությունը» ժամանակ ունի, բայց դեմք չունի, իսկ բայը և՛ դեմք, և՛ ժամանակ ունի։

Անվան տեսակները որոշելիս, Կոստանդնուպոլսեցին հետևում է Գալանոսին։ Ըստ կազմության տարբերակվող «նախագաղափար» և «ածանցական» անուններից բացի, զանազանում է նաև հատուկ, հասարակ և հավաքական, ինչպես նաև՝ գոյական և ածական անուններ։

Ածականը գոյականից տարբերակելու հիմունքը, ինչպես Գալանոսի մոտ, այստեղ էլ մնում է շարահյուսական։ Գոյականը նախադասության մեջ ունենում է անկախ գործածություն, մինչդեռ ածականը ոչ միայն առանց գոյականի ինքնուրույն գործածություն չունի, այլև մտածվում է գոյականից ունեցած կախման հարաբերության մեջ. «Եւ ածականք ասին, զի ըստ ինքեանց ոչ կարեն կայանալ ի բանի թարց գոյականաց։ Քան զի մինչ լսեմք բանական, իսկոյն զմարդն ի միտ ածեմք նորում գոյ բանականութիւն և յորժամ լսեմք սպիտակ, իսկոյն կամ զքար, կամ զձիւն, կամ զթուղթ և կամ զայլ ինչ ի միտ ածեմք, նորս գոյ սպիտակութիւն»[41]։

Հ. Հոլովը գոյականի և ածականի տարբերակիչ հատկանիշ է համարում նաև ածականների համեմատության աստիճաններ ունենալը։ Բերելով ածականի համեմատական աստիճանների կազմության ձևերը («խոնարհ, խոնարհագոյն, խոնարհագունեղ»)՝ նա ավելացնում է. «Գիտելի է ևս զի համայնք անուանք, որք ստորանկին ընդ այսոքիւք աստիճանօք, պարտին գոլ ածականք, այլ ոչ գոյականք, զի ոչ յարմարապէս ասի քար, քարագոյն, քարագունեղ»[42]։

Ընդունում է տասը հոլով՝ «կրողական», «առողական», «կայողական» անվանումներումը փոխելով «հայցական», «բացառական», «ներգոյական» անվանումների, որոնց գործածությունը հետագայում կայունացավ և դարձավ սովորական։

Թեև դերանունների համար գործածում է նաև «ցուցական» տերմինը, բայց սրանք առանձին տեսակ չի համարում։ Ընդունում է դերանվան չորս տեսակ՝ ա) էական, որի տակ հասկանում է անձնականները ու ցուցականները (ես, դու, իւրեան, սա, դա, ես, այս, այդ, այն, իմիմն, սոյն, դոյն, նոյն), բ) ստացական (իմ, ի՛ո, իւր, մեր, ձեր), գ) դիմորոշական (ս, դ, ն), դ) հարաբերական (որ)։ Այսպիսով, Ոսկան Երևանցու պես Հ. Հոլովը հոդը առանձին խոսքի

---

41 Նույն տեղում, էջ 126։

42 Նույն տեղում, էջ 127։

մաս չի համարում, բայց եթե Ոսկանը հոդերը համարում էր այս, այդ, այն դերանունների կրճատ ձևեր, ապա Հ. Հոլովը սրանք համարում է դերանվան առանձին տեսակ՝ տալով «դիմորոշականք» անվանումը։

Ջնայած իր պարունակած որոշ նորություններին՝ Հոլովի դերանվանական նկարագիրը դեռևս հեռու է հայերենի դերանվան համակարգի ամբողջական պատկերը լինելուց։ Դեռ ավելին, որոշ դեպքերում հեղինակը նահանջում է իր նախորդների դիրքերից։ Նա անունների մեջ է դնում n°r, n°վ, n° դերանունները («հարցական անուններ»). մե՛կ դերանուն, մե՛կ «մասնական անուն» է համարում nմն, nf, իմն անորոշ դերանունները. իմճնակայ, իմճնամեծար, իմճնահավան և այլ ածականները համարում է դերանուն, հորինում է դերանվանական արհեստական ձևեր (իւրամանչ, երկամանչ և այլն). դերանուններին վերագրում է համեմատության աստիճաններ (նոյն, նույնագոյն, նոյնագունեղ)։

Սեռի կարգը քննելով բայի խոնարհման ձևաբանական նկարագրության ժամանակ՝ Հ. Հոլովը բայի տեսական վերլուծության մեջ ընդունում է չորս կարգ («պարագայ»). «Պարագայք բայից են չորք, այսինքն՝ թիւ, դէմք, ժամանակ և եղանակ»[43]։ Այսպիսով, քերականը բայական կարգեր կամ «պարագայք» ասելով հասկանում է բայի դիմավոր ձևերին առանձնահատուկ կարգերը միայն։ Սրանցում նա իր նախորդների համեմատությամբ էական նորություններ չի բերում։ Ինչպես իրավացիորեն նկատում է Գ. Ջահուկյանը, եթե Հ. Հոլովը խոնարհման ձևերի քննությունը կատարելիս մի կողմից՝ գրաբարի խոնարհման պատկերի ամբողջական բնութագրման մեջ առաջընթաց քայլ է կատարում իր նախորդների համեմատությամբ, ապա «մյուս կողմից՝ խորացնում է ռացիոնալիստական արհեստական «բարեփոխումներն ու լատինաբան ձևերը»[44]։

Նույնը կարելի է ասել անվանական և դերանվական ձևերի նրա քննության վերաբերյալ։

Հայ քերականության մեջ Հ. Կոստանդնուպոլսեցին առաջին անգամ գործածում է «դերբայ» տերմինը։ Սա լատիներենի gerundium-ի թարգմանությունն է, որ Գալանոսը կոչում էր «գործակալ», իսկ Ոսկանը՝ «սերական»՝ սրանց տակ հասկանալով անորոշի ի սի-

---

[43] Նույն տեղում, էջ 146։

[44] Համմտ. Գ. Բ. Ջահուկյան, նշվ. աշխ., էջ 105։

րել, սիրելով, ըն սիրելն կամ ի սիրելն հոլովված և նախդրավոր ձևերը։

Իր նախորդների նման, հետևելով ավանդությանը, Հ. Հոլովը նախադրությունը բաժանում է երեք տեսակի՝ ա) «հոլովակերտք»՝ ի, յ, առ, ց, զ, ևեր, ըն, և, ընդ, բ) «հոլովախնդրուք կամ ընդարձակք»՝ ստորև, ևերհոյ, ի վերայ, ի վերոյ, ի մէջ, վասն, յաղագս, մօտ, մերձ, բարց, միևչև, որպէս և այլն, գ) «բաղադրականք»՝ ան, ապ, տր, վեր, ստոր, համ, շար և այլն։ Այսպիսով, նախադասները խառնվում են նախդիրներին և դարձյալ ներկայացվում որպես խոսքի մաս։ Բայց այս անճշտությունը դիտի նաև ինքը՝ այդ դասակարգման հեղինակը, ուստի և գրում է. «Բայց դիտելի է զի մասնկունք այսոքիկ բաղադրօղք կամ բաղադրելիք ըստ մեծի մասին ոչ են նախդիրք յատկապէս կոչեցեալք, այլ անուանք, որովհետև ոչ զպարագայս էութեանց, այլ զէութիւնս կարեն նշանակել, համարուին սակայն ընդ նախդիրս վասն նախադրեցմանն իւրեանց այլոց մասանց բանի և վասն վարժութեան համբակագունից»[45]։

«Յաղագս շարամանութեան եզերաց» մասում շարահյուսական հարցերը քննելիս, Հ. Հոլովը բայ և անուն տերմինների հետ գործածում է նաև «դիմավոր բայ» և «անուանական» անվանումները։ Սրանցից առաջինը համապատասխանում է բայական ստորոգյալին և բաղադրյալ ստորոգյալի բայական մասին, ուստի ավելի նեղ հասկացություն է, քան բայը, իսկ երկրորդը՝ բայի հետ անվանական գործածություն ունեցող անվանը, դերանվանը, «ընդունելութեանը» և «աներևույթին» (անորոշ դերբային), ուստի ավելի լայն հասկացություն է, քան անունը։ Հետևաբար՝ բայի և անվան շարահյուսական իրողությունները քննելով «դիմավոր բայ» և «անուական» հորջորջումների տակ, ինչպես նկատում է Գ. Ջահուկյանը, Հ. Հոլովը մի քայլ է կատարում «դեպի խոսքի մասերի և նախադասության անդամների տարբերակումը»[46]։

Հունա–լատինատիպ քերականություններում ավելի ուժեղ է նկատվում Թրակացու քերականության և նրա հայերեն մեկնությունների ազդեցությունը։ Միաժամանակ կրելով լատինատիպ քերականությունների ազդեցությունը՝ այս ուղղության քերականները, ինչպես լեզվական այլ հարցերում, այնպես էլ խոսքի մասերի քննության մեջ ցուցաբերում են ավելի բազմազան, բայց և էկլեկտիկ

---

[45] Ջտութիւն հայկաբանութեան..., էջ 157։

[46] Համմտ. նշվ. աշխ., էջ 113։

մոտեցում։ Այս ուղղությունը ներկայացնող երեք հայ քերականներից երկուսը՝ Սիմեոն և Հովհաննես Ջուղայեցիները, ըստ Ջահուկյանի, ավելի ուժեղ են կրում Թրակացու մեկնիչների ազդեցությունը, քան մյուսը՝ Խաչատուր Կարնեցին։

6. Սիմեոն Ջուղայեցի.—Ս. Ջուղայեցու քերականության վրա լատինաբանության թույլ ազդեցությունը և հեղինակի՝ մեկնիչներից ուժեղ չափով օգտվելու հանգամանքը Ջահուկյանը, իրավացիորեն, բացատրում է նաև նրա քերականության ստեղծման վաղ ժամանակաշրջանով։ Ջուղայեցու քերականությունը գրվել է 1637-ին, այսինքն Ոսկանի և Հոլովի քերականություններից մոտ 30—40 տարի առաջ, բայց հրատարակվել է 1725 թվին։

Ջուղայեցին իր նախորդների պես քերականության ուսումնասիրության նյութ է համարում գիրը կամ տառը, վանկը, բառը և «բանը»։ Բայց եթե նախորդներն այդ նյութի քննությունը վարում էին շարահյուսության բացակայությամբ, իսկ լատինաբանները խիստ համառոտում են հնչյունական տեղեկությունները, ապա նա այս չորս միավորները քննում է մեկ խոսքից դուրս՝ այս դեպում նրանց անվանելով «կիրառելիք», մեկ էլ խոսքի՝ կապակցության մեջ՝ այս դեպում նրանց անվանելով «կիրառութիւն»։ Ըստ այսմ Ջուղայեցին քերականությանը տալիս է այսպիսի սահմանում. «Քերականութիւն է գիտութիւն տառից և ասութեանց և կիրառութեանց սոցին, ըստ շարադրութեան քերթողացն։ Եւ բաժանի յերկուս՝ ի կիր առնլիս և կիրառութիւնս»[47]։

Խոսքի մասերը գրքի առաջին մասում, վերցվելով իբրև անկախ միավորներ կամ «կիրառելիք», ենթարկվում են ձևաբանական քննության, երկրորդ մասում, իբրև կապակցության անդամներ կամ «կիրառութիւնք», ենթարկվում են ստուգաբանական և շարահյուսական վերլուծության։

Ուշադրության արժանի է Ջուղայեցու կողմից բառի սահմանումը և բառերն ըստ գործառական հատկության ինքնուրույն և ոչ ինքնուրույն նշանակության բառախմբերի բաժանելու մոտեցումը։ «Բառ է ձայն յօդաւոր նշանակօղ առանց շարամանութեան կամ առնշանակական։ Նշանականք առանց շարամանութեան, որգոն՝ մարմին, բան, բնակեցաւ, եղև, մեղ, իսկ առնշանականք, որզան՝ ըն, ի, և»[48]։

[47] Գիրք որ կոչի քերականութիւն, արարեալ և շարադրեցեալ ի Սիմէօնէ վարդապետէ Ջուղայեցւոյ, յամի փրկչին 1725, ի Կստանդնուպօլիս, էջ 15—16։

[48] Նույն տեղում, էջ 24։

նախդիրներն ու շաղկապներն, այսպիսով, Ջուղայեցին առանձնացնում է, որպես խոսքից դուրս որոշակի նշանակություն չունեցող, մյուս բառերին ստորադասվող բառեր։

Ընդունում է ութ խոսքի մաս՝ ձայնարկությունը թողնելով մակբայների մեջ։ Խոսքի մասերը սահմանում է ոչ միասնական, այլ տարբեր սկզբունքների զուգորդումներով՝ հաճախ միմյանց հակադրելու եղանակով և բացասական հատկանիշների վկայակոչմամբ։ Այսպես, անունը հակադրում է բային և սահմանում է ձևաբանական հատկանիշով. «Անուն է մասն բառի հոլովական, թարց ամանակի և դիմաց»[49]։ Բայն ու «ընդունելությունը» սահմանում է ձևաբանական և իմաստային հատկանիշներով. «Բայ է բառ հոլովական, որ զգոլ ինչ կամ առնել կամ կրել նշանակէ, հանդերձ ամանակաւ և դիմօք»[50]։ «Ընդունելութիւն է բառ հոլովական՝ ամանակաւոր, թարց դիմաց, որ գներգործութիւն կամ զկիր նշանակէ»[51]։ Նախդիրն ու շաղկապը սահմանում է ձևաբանական և շարահյուսական հատկանիշներով. «Նախդիր է բառ անհոլով, որ առադրի ի մասունս բանի»[52]։ «Շաղկապ է մասն բանի անհոլով, որ շաղկապէ և մեկնէ զտրամաբանութիւն ոճով»[53]։ Դերանունն ու մակբայը սահմանում է ձևաբանական, շարահյուսական և իմաստային հատկանիշներով. «Դերանուն է բառ հոլովական, փոխանակ անուան առեալ, որոշեցեալ դիմաց յայտական, թարց ամանակի»[54]։ «Մակբայ է բառ անհոլով, որ առաջադրելով բայի և ընդունելութեան և մակադրական անուան, զորակութիւնս նոցա նշանակէ»[55]։

Դերանունները ներկայացնում է միայն անձնական, ցուցական և ստացական տեսակների ցանկերով, մյուսները դնում է անվան մեջ՝ «հասարակ», «ընդհանրական», «մասնական» անուններ հորջորջումներով։

Անվան և ածականի տարբերակման հիմքում Ջուղայեցին նույնպես դնում է սրանց շարահյուսական-իմաստային հատկանիշը։ Գոյականը Ոսկանի նման նա կոչում է «ենթակայական», իսկ ածականը, ինչպես մեկնիչներն էին անվանում, կոչում է «մակա-

---

49 Նույն տեղում, էջ 28։
50 Նույն տեղում, էջ 63։
51 Նույն տեղում, էջ 111։
52 Նույն տեղում, էջ 124։
53 Նույն տեղում, էջ 135։
54 Նույն տեղում, էջ 116։
55 Նույն տեղում, էջ 126։

դրական», այսպես՝ «Անուանց ոմանք են ենթակայականք և ոմանք մակադրականք։ Ենթակայական է, որ ըստ ինքեան կայանայ, որպէս՝ մարդ, երկիր, սպիտակութիւն։ Եւ մակարդական է, որ առ ենթակայական անունն կայանայ, և է այսպիսի՝ պարարտ, սպիտակ, քերական, բարի, պայծառ»[56]։

Հոդը շարունակում է համարել առանձին խոսքի մաս, հոդ է համարում նաև այս, այդ, այն, սոյն, դոյն, նոյն ցուցականները։ Հոդն էլ դերանվան պես դեմք է ցույց տալիս, միայն թե դերանունը փոխարինում է անվան, իսկ հոդը գործածվում է նրանց հետ կամ դրվում է նրանց վրա։

Հակառակ հունաբան և լատինաբան քերականների, «անհրեւոյթ եղանակի (անորոշ դերբայի) համար Չեյթոնցու նման ժամանակային տարբերակումներ չի ընդունում։

Գ. Ջահուկյանը իր քերականության պատմության մեջ մասնավորապես գնահատելի է համարում Ջուղայեցու առաջընթացը հոլովումների դասակարգման սկզբունքների մշակման հարցում։ Նկատում է նաև նրա զուսպ վերաբերմունքը դեպի արհեստական ու հայերենին խորթ ձևերի գործածությունը։

7. Հովհաննես Ջուղայեցի.—Հ. Ջուղայեցու (հայտնի է նաև Մրքուզ մականվամբ), մեզ հետաքրքրող երկը լույս է տեսել 1711 թ. Ամստերդամում՝ «Համառօտ քերականութիւն և տրամաբանութիւն, որ է քերթութիւն տառի և կրթութիւն բանի» վերնագրով։ Մեր գրադարաններում այս քերականության տպագիր օրինակի բացակայության պատճառով Գ. Ջահուկյանն իր «Գրաբարի քերականության» մեջ այն վերլուծում է Մատենադարանում գտնվող երկու ձեռագրերի հիման վրա։ Շնորհակալությամբ օգտագործելով լեզվաբանի նաև այդ մանրամասն վերլուծությունը՝ անհրաժեշտ ենք համարում մեջ բերել Մրքուզի խոսքի մասերի տեսության հետևյալ մի քանի սկզբունքները։

Իր քերականական սկզբունքների մեջ Մրքուզը թեև հետևորդ է Սիմեոն Ջուղայեցու, բայց մասնավորապես բառերի ու խոսքի մասերի դասակարգման մեջ մնում է բավականին ինքնատիպ։ Խոսքի մասերի հարցին նվիրված է նրա քերականության երեք մասերից երկրորդը։ Այստեղ կատարվում է խոսքի մասերի իմաստաբանական-ձևաբանական վերլուծություն։ Քերականական հարցերի քննության մեջ Ջահուկյանը նկատում է Մրքուզի կողմից քերակա-

---

[56] Նույն տեղում, էջ 28—29։

նության և տրամաբանության սահմանների չնջում, որոշ դեպքերում էլ տրամաբանական ու քերականական հասկացությունների էկլեկտիկ զուգորդում: Սիմեոն Ջուղայեցու նման Մրքուզը բառերը բաժանում է երկու տեսակի՝ 1. ինքնուրույն նշանակության բառեր, որոնք առաջինի մոտ անվանվում են «նշանականք», իսկ այստեղ՝ «բառք», 2. ոչ ինքնուրույն նշանակության և առաջիններին առդրվող բառեր, որոնք Ջուղայեցու կողմից անվանվում են «առնշանականք», իսկ այստեղ՝ «առբառք»: Սակայն այս երկրորդ կարգի ոչ լիարժեք բառերը կամ բառերին ավելացվող մասնիկները (ս, դ, ե, ի, յ և այլն) Մրքուզի մոտեցմամբ էլ շարունակում են մնալ իբրև խոսքի մաս:

Մրքուզը «բանը» նույնացնում է դատողությանը: «Խոսք» տերմինի փոխարեն գործածում է «տեսակաւորութիւն», որը հավասարվում է նաև նախադասության: Ուստի և «տեսակավորության» տարբերակումը կատարում է, որպես դատողության տարբերակում: Այսպես՝ «տեսակավորությունը» կամ խոսքը լինում է երկու տեսակ՝ 1. «տեսակավորություն», որը նաև դատողություն է և բաղկացած է երեք անդամից՝ «անուն», «բայ» և «է» կամ՝ «ենթակայ», «ստորոգեալ» և «միջնորդ», այսինքն տրամաբանական ենթակա, տրամաբանական ստորոգյալ և հանգույց, ինչպես «մարդ է կենդանի» և 2. «տեսակավորություն», որով դատողություն չի արտահայտվում և եռանդամ չէ, ինչպես՝ «մարդ ընթանայ»[57]: Այսպես էլ Մրքուզը անունը նույնացնում է ենթակային, իսկ բայը՝ ստորոգյալին: Դատողությունը անվանվում է նաև «շարամանութիւն», «բացերևութիւն», «նախադասութիւն»: Այս դատողությունները նա ձևակերպում է այսպես. «Տեսակաւորութիւն է, որ զբառ ի միասին բագձաձէ և զկատարելութիւն ներտրամադրեալ խորհրդոցն յայտնէ: Եթէ ունիցի բացերևութիւն, բան լինի, այսինքն՝ եթէ իցէ յերրակաց պարզ ասութեանց՝ յանուանէ և ի բայէ և յէ, որ է բացերևութիւն և նոյնս ըստ տրամաբանութեան շարամանութիւն, նախադասութիւն և բացերևութիւն ասի, որպէս ասացի՝ մարդ է կենդանի և թէ ոչ, ոչ ասի շարամանութիւն, նախադասութիւն և բացերևութիւն, այլ սոսկ տեսակաւորութիւն, որպէս ասացի՝ մարդ ընթանայ: Բան է, որ ի նիւթոյ և ի տեսակաւորութենէ բաղադանութեանց կազմի, այսինքն պարզագոյն յենթակայէ և ի պարզագոյն ստորոգիցելոյ և ի մու

---

57 *Համմ. Գ. Ջահուկյան, նշվ. աշխ., էջ 153:*

միջնորդէ, որպան՝ Պետրոս է մարդ. ահա Պետրոս է ենթակայ, որոյ ասի անուն, և յորժամ ասացի կենդանի է, և բայ, որք են մասունք բանի, յորոց բաղադրութեանց շարամանութիւն՝ և նախադասութիւն և բան կազմի, իսկ այլքն ի սոսա յարառոցին և են վեց՝ ընդունելութիւն, դերանուն, յօդ, նախդիր, մակբայ և շաղկապ»[58]։

Արձանագրելով այս դատողություններում տրամաբանական և քերականական հասկացությունների շփոթը՝ Գ. Ջահուկյանը միաժամանակ նկատում է, որ Մրքուզի կողմից «ենթակա» և «ստորոգյալ» ըմբռնումների ներմուծումը հայ քերականության մեջ «բեղուն գաղափար էր և զարգացվելու դեպքում կարող է հանգեցնել շարահյուսական արդի գաղափարներին»։

Կատարված մեջբերումից պարզ երևում է, որ Մրքուզը, հունաբանների պես, «բանի» կազմության մեջ հիմնականը համարում է անունն ու բայը, ուստի և սրանք է առաջին հերթին անվանում մասունք բանի։ Ի դեպ, հետագա սահմանումներում այս երկուսը կոչված են «մասն բանի», իսկ մյուսները՝ «բառ իմն»։ Ըստ խոսքի մասերի այս շարահյուսական դերի, դրանք բաժանվում են երկու խմբի՝ 1. անուն և բայ, որոնք կարող են լինել «ենթակա» և «ստորոգյալ», 2. այլ խոսքի մասեր, որոնք կամ լրացնում, կամ փոխարինում են առաջին երկուսին։ Այնուհետև, ինչպես վերն ասվեց, խոսքի մասերն ըստ բառային ինքնուրույնության բաժանվում են երկու նոր տարատեսակի՝ 1. «բառք», այսինքն՝ բառային ինքնուրույն նշանակություն ունեցող բառեր, 2. «առբառք» (հոդեր և որոշ նախդիրներ), այսինքն՝ բառային ինքնուրույնություն և անկախ նշանակություն չունեցող և նշանակային բառերին առդրվող մասնիկներ։

Խոսքի մասերի դասակարգման այս շարահյուսական սկզբունքին սահմանումների մեջ խառնվում են ձևաբանական, համեմատաբար պակաս՝ նաև իմաստային սկզբունքները, և Մրքուզի ամբողջական մոտեցումը դառնում է էկլեկտիկ։ Այսպես՝ անուն է «մասն բանի հոլովական, յայտնութիւն ենթակայի, թարց դիմաց և ամանակի». Բայ է «մասն բանի հոլովական դիմաւոր և ամանակաւոր, ստորոգեալ միշտ ենթակայէ, որ զառնել և զկրել նշանակէ». «Դերանուն է բառ իմն հոլովական, փոխանակ անուան առեալ, որ զյատկացեալ անձն նշանակէ». «Նախդիր է բառ իմն, որ նախդրի բառից և է որ անջատօրէն և որ զարդ է». «Մակբայ է բառ իմն ան-

---

[58] Նույն տեղում, էջ 154։

Հոլով՝ առադրեալ բայի և ընդունելութեան և ոմանց անուանց ընդ բայի» և այլն[59]։

Գոյականի և ածականի տարբերակումը նախորդների նման հիմնավորում է շարահյուսական-իմաստային սկզբունքով. գոյականը համարում է «ինքնակայ», իսկ ածականը՝ «այլակայ» անուն։

Եթե Հովհաննես Հոլովը խնդրառական հատկանիշը, հետևաբար նաև այն պայմանավորող սեռի կարգը համարում էր «ընդունելության» միայն բայական կիրառության առանձնահատուկ երևույթ, ապա Մրքուզը ինչպես ժամանակի, այնպես էլ սեռի կարգերը համարում է «ընդունելության» և՛ բայական, և՛ անվանական կիրառություններում երևան եկող ընդհանուր կարգեր։ Մի բան, որ հակասում է լեզվի իրական պատկերին։

Գ. Ջահուկյանն առանձնակի ուշադրություն է դարձնում «աներևույթը» կամ անորոշ դերբայը բայի դիմավոր ու անդեմ բոլոր ձևերի նախաձև համարելու վերաբերյալ Մրքուզի արտահայտած հետևյալ ուշագրավ կարծիքին։ «Եւ զայս ևս ճշգրտիւ իմա, զի իսկական քերականութիւն է աներևոյթն բայ, զի ի նմանէ ելանեն ամենայն բայք ամանակականք, և ընդունելութիւնք և անուանք ստորոգականք և ոչ իսկականք, որպէս Պետրոս, երկինք, երկիր և նմանք սոցին, այլ որ ինչ նախկինց ենթակայից ելանեն, որպէս՝ սուրբ, մաքուր, արդար և նմանք սոցին, այսոցիկ ինքնագոյն է աներեւոյթն որբար՝ սրբել, և նոյնս թէ կամիցիս անուն յօրինել, լինի սուրբ. և թէ կամիցիս առնել սահմանական ներգործական, լինի սրբեմ. և նոյն աներևոյթ եթէ կամիցիս առնել ընդունելութիւն ներկայ ներգործական, լինի սրբող, կրաւորական սրբելի, իսկ թե իցէ բառ ինչ ընդմիջական ներգործակերպ որպէս բողոքել, լինի ընդունելութիւն բողոքիչ, իսկ թէ կրաւորակերպ, իլն լի լինի, որպան՝ աներևոյթ՝ նայիլ, իսկ ընդունելութիւն՝ նայեցեալ։ Եւ այսպէս ամենեցունց ծնօղ երևի աներևոյթ բայն»[60]։

Այսպիսով, ըստ Մրքուզի, սրբել *բայից են սկզբնավորվում կամ ծնվում ոչ միայն* սրբեմ, սրբող, սրբելի *և այլ դիմավոր ու անդեմ («ընդունելութիւն») ձևերը, այլև* սուրբ *ածականը։ Թեև հեղինակը հեռու է անորոշը, դրանով իսկ բայը անվանը նախադասելու կարծիքից և ոչ ամեն անուն է (ինչպես Պետրոս, երկիր, երկինք), որ համարում է անորոշից ծագած, բայց և այնպես սուրբ, մաքուր,*

---

[59] *Նույն տեղում, էջ 156—159։*

[60] *Նույն տեղում, էջ 157։*

արդար ածականները սրբել, մաքրել, արդարանալ բայերից ծագեցնելը մնում է նույն վեճի անհիմն շարունակությունը։ Սակայն էականը քերականի դատողության այս կողմը չէ, այլ այն, որ նա ըըրբանկատորեն արձանագրում է կառուցվածքային տեսակետից անորոշի հիմնային դերը մյուս բայաձևերի կազմության մեջ։ Մըրքուզը միաժամանակ տեսնում է անորոշի անվանական բնույթը, որն արտահայտվում է նրա հոլովվելու առանձնահատկությամբ։ «Եւ նոյն անեռևոյթ,—շարունակում է նա,—եթէ կամիցիս առնել անուն, լինի ուղղական՝ սրբել, սեռական՝ սրբելոյ, և իսկական անուն սորա է սուրբ»[61]։ Եթե Գալանոսի և Հ. Հոլովի կողմից անորոշի հոլովված ձևերը «գործակալ» կամ «դերբայ» անվանումներով համապատասխանեցվում էին լատիներենի gerundium-ին, ապա Մըրքուզի կողմից դրանք ճանաչվում են իբրև «անեռևույթի» անվանական գործածություններ. այդպիսի մեկնաբանությունը ընդունելի է նաև այսօրվա քերականություններում։

Մեզ հետաքրքրող հարցերի մանրամասնություններում, մասնակի շեղումներով, Մրքուզը մնում է որպես Ջուղայեցու հետևորդ։

Հունա-լատինատիպ քերականական ուղղության ներկայացուցիչ է նաև Խաչատուր Կարնեցին (Էրզրումեցի), որի քերականությունը լույս է տեսել 1696 թ. Լիվոռնոյում՝ «Գիրք քերականեան, արարեալ և շարադրեցեալ ի Խաչատուրէ Արզրումեցւոյ ատտուածաբան վարդապետէ...» վերնագրով։

Կարնեցին խոսքի մասերի դասակարգման մեջ հետևում է Հովհաննես Հոլովին։ Ընդունում է ութ խոսքի մաս՝ հանելով հոդը։ Սրանց սահմանումներում և վերլուծություններում մասամբ շարունակում է հետևել Թրակացու քերականության սկզբունքներին, իսկ մասամբ էլ հետևում է իր լատինաբան նախորդներին, առանձնապես Գալանոսին և Հ. Հոլովին։ Այս հանգամանքն իր քննարկման մեջ հաստատում է նաև Գ. Ջահուկյանը, այնպես որ մեզ մնում է ասել, թե Կարնեցին հայերենի խոսքի մասերի տեսության պատմության մեջ նորություններ չի բերում։

Լատինատիպ-բանասիրական **fերականություններում**, որոնք ստեղծվեցին 18-րդ դարի սկզբներից մինչև 70-ական թվականներն ընկած ժամանակաշրջանում, սկիզբ է առնում որոշ քննադատական վերաբերմունք դեպի լատինատիպ ռացիոնալիստական քերականությունը։ Ինչպես արձանագրված է հայերենի քերականության

---

[61] Նույն տեղում, էջ 158։

պատմության մեջ, գրաբարի քերականությունը բնագրերի բարեխիղճ ուսումնասիրության հիման վրա շարադրելու, այդ քերականությունը լատինաբան արհեստական ձևերից մաքրելու ձգտումը գնալով գիտական սկզբունքի է վերածվում։ Շրյոդերն ու, առավելապես, Մխիթար Սեբաստացին աշխատում են քննադատաբար մերժել իրենց նախորդների արհեստական նորամուծությունները և կանոնները սահմանել լեզվական իրական ձևերի վրա՝ այս դեպքում Վարդան Արևելցու, Երզնկացու և այլոց նման Շրյոդերը դիմում է նաև ժողովրդական կենդանի լեզվի օրինակներին։ Ամբողջությամբ դեռևս չազատվելով լատինաբանությունից՝ վերոհիշյալ քերականները հող են նախապատրաստում ինքնուրույն քերականության ստեղծման համար։

8. Յոհան Յոախիմ Շրյոդեր.—*Շրյոդերի «Արամեան լեզուին գանձ* Thesaurus linguae armenicae, antiquae et hodiernae, cum varia praxios materia» *անվանված աշխատությունը հրատարակվել է 1711 թ. Ամստերդամում։ Լատիներենով գրված այս գրքի վեց բաժիններից երկուսը նվիրված է հայերենի քերականական կառուցվածքի քննությանը։ Դրանցից մեկը գրքի երկրորդ բաժինն է, որ անվանված է «Հին լեզվի քերականություն և առոգանություն»* (Grammaticaet prosodia antiquae linguae), *իսկ մյուսը՝ չորրորդը, որ կրում է «Այսօրվա քաղաքացիական Հայոց լեզվի համառոտ նկարագիրը»* (Synopsis hodiernae civilis armenorum linguae) *վերնագիրը։ Քաղաքացիական հայերենի կամ աշխարհաբարի համառոտ նկարագրության մեջ կարճ տեղեկություններ են տրվում հոլովման և խոնարհման ձևերի մասին։ Այս բաժինը շատ ուշագրավ է աշխարհաբարի ու նրա քերականության պատմության համար. մանավանդ որ գրքի հեղինակը շատ հարցերում ցուցաբերում է աշխարհաբարի լեզվական իրողությունները գրաբարից զանազանելու և լեզվական սեփական փաստերով գնահատելու և դատակարգելու մեծ համարձակություն։ Ի դեպ, այս կարգի դիտումներից մեկն էլ «քաղաքացիական հայերենում» գրաբարի լատինաբան տասը հոլովների դիմաց հինգ հոլով զանազանելու փաստն է*[62], *որի պաշտպանությունը մեր օրերում որոշ անտեղյակներ որպես նորամուծության արտահայտություն հռչակեցին։ Շրյոդերի խոսքի մասերի տեսությունը հիմնականում շարադրված է «Հին լեզվի քերականություն և առոգանություն» բաժնում, որի հինգ գլուխներից երեքում՝*

[62] *Տե՛ս «Արամեան լեզուին գանձ», էջ 307։*

2. «Անվան մասին», 3. «Բայի մասին», 4. «Անփոփոխ խոսքի մասերի մասին», շարադրվում է խոսքի մասերի ձևաբանությունը, իսկ վերջին՝ հինգերորդ «Շարահյուսության մասին» գլխում քննվում են խոսքի մասերի (իմա՛ նախադասության անդամների) շարահյուսական առանձնահատկությունները։

Ելնելով իր քերականության գործնական նպատակներից՝ ի հակադրություն ռացիոնալիստական-տրամաբանական քերականության, Շրյոդերը ավելի քան իր նախորդները ուշադիր է լեզվական ձևերի նկատմամբ։ Նա հին հայերենի ձևերի կողքին հիշատակում է ոչ միայն լատինաբան հեղինակների ինքնահնար ձևերը, այլև երբեմն մեջ է բերում ժողովրդական կենդանի լեզվի ձևեր։ Այս իմաստով էլ նրա կողմից խոսքի մասերի տարբերակման ու քննության մեջ շարահյուսական և իմաստային սկզբունքները կիրառվում են խոսքի մասերի ենթատեսակների համար, իսկ ձևաբանական սկզբունքը մնում է խոսքի մասերի խմբերի համար[63]։

Ձևաբանական սկզբունքի կիրառմամբ Շրյոդերը «Քերականութիւն ըստ մասանց բանի» կատեխիզիսի հեղինակի և ապա Ոսկան Երևանցու նման խոսքի մասերը բաժանում է փոփոխական (variabilibus) և անփոփոխ (invariabilibus) խմբերի։ Բայց այս սկզբունքի մեջ նա իր նախորդներից ավելի հետևողական է։ «Անվան մասին» վերնագրի տակ նա կատարում է հոլովվող խոսքի մասերի՝ անվան և դերանվան քննությունը, «Բայի մասին» վերնագրի տակ կատարում է բայի ձևաբանական վերլուծությունը, բայի իմաստային քննության մեջ բային է միացնում նաև դերբայները, մինչդեռ դերբայների հոլովման մասին խոսվում է անվան բաժնում։ Այսպիսով, դերբայները ըստ իմաստի և ծագման քննվում են իբրև բայ, իսկ ըստ հոլովման՝ իբրև անուն[64]։ Ձևաբանական սկզբունքի հետևողական կիրառությամբ հեղինակը չթեքվող խոսքի մասերի քննությունը միավորում է մի առանձին գլխի տակ, որն անվանված է «Անփոփոխ խոսքի մասերի մասին»։ Այստեղ իբրև անփոփոխ խոսքի մասեր քննվում են նախադրությունը, մակբայը, շաղկապը և միջարկությունը։ Սրանց նկարագրության մեջ Շրյոդերը հետևում է Գալանոսին և Հ. Հոլովին։ Այսպես՝ նախադրությունները դասակարգվում են ըստ շարահյուսական անկախության և լինում են՝ չբաժանվող (inseparabiles), բաժանվող (separabiles)։

---

63 Համմ. Գ. Ջանուկյան, նշվ. աշխ., էջ 183։

64 Նույն տեղում, էջ 179։

և բարդության մեջ չմտնող (compositionem non ingradientes)։ Առաջինները միայն նախածանցներ են, վերջիններն միայն նախադրություններ, իսկ երկրորդները գործածվում են և իբրև նախածանց, և իբրև նախադրություն։ Մակբայի քննությունը կատարվում է և ըստ կազմության, և ըստ նշանակության, իսկ շաղկապն ու ձայնարկությունը դասակարգվում և քննվում են միայն իմաստային սկզբունքով։

Այսպիսով, անփոփոխ խոսքի մասերը քննվում են մասամբ բառակազմական, իսկ հիմնականում՝ իմաստաբանական-շարահյուսական սկզբունքով։ Իր այդ սկզբունքից ելնելով էլ՝ այլազգի հայագետը վերոհիշյալ չթեքվող խոսքի մասերը կոչում է նաև «խոսքի մասնիկներ»։ Տերմին, որ հետագայում գործածում է հայագիտության մեջ միայն Աբեղյանը, այն էլ ավելի նեղ նշանակությամբ։

Ռացիոնալիստների նման փոփոխական խոսքի մասերի քննության մեջ Շրյոդերը կատարում է սրանց կարգային (կատեգորիալ) վերլուծություններ։

«Որակություն» կարգային հատկանիշով անունները բաժանում է գոյական և ածական տարատեսակների։ Նկատում է, որ որոշ ածականներ հաճախ նաև գոյական են, այդպիսի ածականներ են՝ «առաքեալ, գրաւական, հզօր, իմաստ, խաւար, հանգիստ»[65]։

Ընդունում է թվականի հինգ տեսակ՝ քանակական, դասական, բազմապատկական, բաշխական և ժամանակային։ Ժամանակային թվական է համարում «միաժամեայ կամ միաժամի, միօրեայ, երկամեայ կամ երկեմեանի» և նման բաղադրություններ։

Դերանունն անուններից գործնականում տարբերակելու հարցում Շրյոդերը որոշակիորեն առաջ է անցնում իր բոլոր նախորդներից։ Ինչպես Հ. Հոլովը, նա էլ ս, դ, և հոդերը համարում է դերանուն «դիմորոշականք» (personarum distinctiva), որոնց դիմաց փակագծում դնում է սա, դա, նա դերանունները։ Սակայն, հոդերը բուն դերանուններից զանազանելով, հեղինակը տարբերում է դերանվան երկու խումբ՝ անջատ կամ ինքնուրույն դերանուններ

---

[65] «Արամեան լեզուին գանձ», էջ 42։

(separatum) և ածանց-դերանուններ (affixum)։ Հոդերը դիտելով որպես ածանց-դերանուններ՝ մյուսները Շրյոդերը բաժանում է ութ տարատեսակի՝ 1. անձնական (personae)՝ ես, դու, սա, մեք, դուք, սոքա. 2. ցուցական (demonstrative)՝ այս, այդ, այն, սոյն, դոյն, նոյն, այսք, այդք, այնք. 3. սեռացական (possessiva)՝ իմ, ըո, իւր, մեր, ձեր. 4. հարաբերական (relativum)՝ որ, որք. 5. հարցական (interrogativa)՝ ո՞, ո՞վ (որք, ովք, ի՞նչ, այլինչ, ինչինչ). 6. անորոշ (indefinita)՝ ոք, ոմն, իմն (ոմանք, ովոք, ոյիոմանք). 7. ազգական (gentilia)՝ իմային, մերային, ըոյին, ձերային, իւրային. 8. անդրադարձ (reciproca)՝ միմեանք, իմն (սեռ. իմեան), իմնինքինք, այսինքն, այդինքն, այնինքն, իւր, իւրեանք»[66]:

Մասնակի ճշգրտումներով ու լրացումներով սա արդեն ներկայացնում է գրաբարի դերանվան ամբողջ պատկերը, եթե նկատի ունենանք նաև, որ սրանց հարացուցային ձևերը նույնպես քերականը հետևողականորեն է տալիս։

Որոշ նորություններ է բերում Շրյոդերը նաև բայերի կազմության, լծորդությունների ու խոնարհման առանձին հատկանիշների վերլուծության մեջ։

9. Մխիթար Սեբաստացի.—*Սեբաստացին խոսքի մասերի իր տեսությունը շարադրում է 1730 թ. հրատարակած «Քերականութիւն գրաբառի լեզուի Հայկազեան սեռի» աշխատության մեջ։ Հետևելով ռացիոնալիստական քերականությանը և շարունակելով ժամանակի թելադրանքով պահպանել լատինաբան նորամուծությունները՝ Սեբաստացին միաժամանակ վերջիններիս հակադրում է հայերենի հարազատ ձևերը, որով, ինչպես Ջամչյանն է նկատել, ճանապարհ է հարթում հայերենի ինքնատիպ ու անաղարտ քերականության համար։*

Հունաբանների պես նա էլ գտնում է, որ «Նախապետական մասունք քերականութեան են չորք, այսինքն՝ գիր, վանկ, բառ և բան»։ Սրանց քննության մեջ մեթոդական տեսակետից Սեբաստացին նախընտրում է Հովհաննես Հոլովի քերականության կառուցվածքը։ Վերջինիս նման, որպես քննության հիմնական առարկա ճանաչելով բառը, նա զբաղվում է բառերի նախ ձևաբանական, ապա իմաստային և քերականական, ի վերջո՝ շարահյուսական-կապակցական հատկանիշների վերլուծությամբ։ Ըստ այսմ՝ Սեբաստացու քերականությունը բաժանվում է երեք մասի՝ 1. «Մասն ա-

---

[66] Նույն տեղում, էջ 93—99։

ոաջին, որ կոչի դուռն քերականութեան» , 2. «Մասն երկրորդ. Յաղագս սահմանաց, բաժանման և պարագայից մասանց բանին», 3. «Մասն երրորդ. Յաղագս շարայարութեան մասանց բանի և կիրառութեանց նորին»:

Առաջին մասում շարադրվում են փոփոխվող խոսքի մասերի (անուն, դերանուն, բայ, ընդունելություն) ձևաբանական և անփոփոխ խոսքի մասերի (մակբայ, նախադրություն, միջարկություն, շաղկապ) իմաստային հատկանիշները: Այս մասի հավելվածում հարց ու պատասխանի ձևով տրվում են խոսքի մասերի սահմանումներ և տրամաբանական լրացուցիչ մեկնաբանություններ:

Երկրորդ մասում խոսքի մասերի սահմանումների ու վերլուծությունների հանդիպում ենք երկու անգամ: Մեկ՝ հեղինակն այդպիսի քննություն կատարում է բառի սահմանման ու քննության մեջ, մեկ էլ՝ խոսքի մասերը առանձին, ավելի լայն ու մանրամասն վերլուծելիս: Այսպիսով, խոսքի մասերի սահմանումների ընդհանրապես հանդիպում ենք երեք անգամ. բոլոր դեպքերում հեղինակը կիրառում է տրամաբանական-իմաստային սկզբունք:

Խոսքի մասերի բուն դասակարգմանը Մեքաստացու մոտ նախորդում է բառերի դասակարգումը: Նա շատերի պես բառը սահմանում է որպես «ձայն նշանակական», ապա ըստ այդ նշանակության՝ բառերը բաժանում է մե՛կ երեք, մե՛կ երկու խմբերի: Բառերը երեք խմբի բաժանելիս առանձնացնում է՝ ա) իրը, բ) գործողությունը և գ) իրի ու գործողության պարագաները: «Այսինքն՝ (բառը.—Հ. Բ.) է ձայն իմն, որ միշտ նշանակէ զիր ինչ կամ գործողութիւն իրին և զպարագայս նորին»[67]:

Երկրորդ դեպքում՝ բառերը երկու խմբի բաժանելիս առանձնացնում է. ա) անունները կամ իրի էության նշանակող բառերը և բ) ոչ անունները կամ մնացած խոսքի մասերը: Այսպես՝ «Ըն գիտելի է, զի քէպէտ ամենայն մասունք բանի նշանակեն զիմն, բայց զէութիւն իրին միայն անունն նշանակէ. և այլք մասունք բանի զգործողութիւն նշանակեն: Վասն որոյ զինքեանս իրս և զէութիւն իրաց ըմբռնեմք և իմանամք ի ձեռն անուան, որգոն երբ ասեմք՝ երկին, ծով, ցամաք, մարդ, fար, սպիտակ, բարութիւն *և այլն՝*

---

[67] *Քերականութիւն գրաբարի լեզուի Հայկազեան սեռի, Վենետիկ, 1730, էջ 226:*

Իմացեալք լինին ինքեանք իրքն և ոչ նոցունց գործողութիւնք և կամ այլ պատկանեցեալք առ էութիւն նոցին»[68]:

Բառերի այս երկու տիպի համբավորման գաղքին Աբեղաստացին կատարում է նաև երրորդ՝ խոսքիմաստային տրոհում՝ իր նախորդներէի պես ընդունելով ութ խոսքի մասս: Բայց նա, ի տարբերութիւն այդ նախորդների, արդեն զանազանում է բառ և խոսքի մաս հասկացութիւնները: Բառը ինքնին տոնվածի իմաստային անջատ միավոր է, երբ այն բաժանվում է տեսակների, լինում է որևէ խոսքի մաս: Այդ մասին Աբեղաստացին գրում է. «Արդ՝ բառքն, որպէս երևի յառացելոցս, ընդ որում չիւրեանս յինքեանս մատածին, թարց մատածելոյ զպանաստանութիւն ցեղից, և թարց մատածելոյ զինեալն նոցին մասանց բանի՝ ասին ձայնք նշանականք և կոչին մի՛այն բառք: Իսկ յոմ որում մատածին բաժանեցեալք ի յուրքն ցեղս, կամ կացուցեալք առ ի լինիլն մասանց բանի, յորմժամ ոմանք ի նոցանէ ասին անուն, ոմանք՝ ներանուն, ոմանք՝ բայ, ոմանք՝ ընդունելութիւնս, ոմանք՝ նախադրութիւն, ոմանք՝ մակբայ, ոմանք՝ միջադրութիւնք և ոմանք՝ շաղկապ»[69]:

Խոսքի մասերի սահմանումներում Աբեղաստացին թեև հետևողականորեն կիրառում է տրամաբանական-իմաստային սկզբունք, բայց ինչպես բոլոր ռացիոնալիստները, այնպես էլ նա առանձին խոսքի մասերի վերլուծութիւնների ընթացքում հակասութիւնների մեջ և բառերի իմաստաբանական հատկանիշների հետ հաշվի է առնում նաև նրանց քերականական հատկանիշները:

Անվան նախկին ընդհանուր սահմանման հետ՝ «Անունն է մասն բանի, որ զէութիւն իրին նշանակէ, որգոն՝ մարդ, գիտուն, քար, Եփրատ, հօտ, բարեգոյն, ամենամեծ և այլն»[70], *Աբեղաստացին տալիս է նաև անվան նեղ իմաստ գոյականը և ածականը իրարից զանազանող սահմանում, այսպես՝ «Առաջնոյ ցեղի են այնք, որք գոլով ձայնք նշանակականք՝ միշտ նշանակեն զինչութիւնս և կամ զորպիսութիւնս իրաց, որգոն՝ մարդ, երկին, ծով, սպիտակ, մեծ և այլն, և այսպիսիք բառքս կոչին անուանք»*[71]:

Իր գործադրած իմաստաբանական սկզբունքի մեջ հետևողական լինելու դեպքում հեղինակն առանձին խոսքի մասեր պիտի

---

[68] *Նույն տեղում, էջ 231:*

[69] *Նույն տեղում, էջ 227—228:*

[70] *Նույն տեղում, էջ 193:*

[71] *Նույն տեղում, էջ 226:*

ճանաչելը գոյականն ու ածականը: Ըստ Գ. Ջահուկյանի, այդ անհետևողականության պատճառը ոչ միայն ավանդույթն է, այլև գոյականի և ածականի ձևաբանական (հոլովական ձևերի) ընդհանրությունը, որը ժամանակին ավանդական դասակարգման հիմունք է հանդիսացել:

Գոյական և ածական անունների փոխառյալ-շարահյուսական տարբերակումը: Սեբաստացու աշխատության մեջ ավելի հստակ ու խոր է պարզաբանված: Այդ տարբերակման իմաստաբանական հիմունքն այն է, որ՝ ա) գոյականը իրի «ինչությունն», իսկ ածականը «որպիսությունն» ցույց տվող, բ) գոյականը մտածողության ինքնաբավ առարկայի, իսկ ածականը սրանից կախված ոչ ինքնաբավ հասկացողության անուններ են: Սրանցից բխող շարահյուսական տարբերակիչ առանձնահատկությունն այն է, որ՝ գ) գոյականները խոսքի մեջ գործածվում են ինքնուրույնաբար, իսկ ածականները՝ սրանց վրա դրվելով: «Գոյականք են,— գրում է հեղինակը,— որ ըստ ինքեանց կայանան ի բանի և նշանակեն զիրս, որք կայացեալք են ըստ ինքեանց և ինքեանս և ոչ կենեալք յայլում, որգոն՝ **մարդ, թուղթ, վարդապետութիւն** և այլք նմանք. վասն զի **մարդ** կամ **թուղթ** ի բանի և ի զրուցատրութեան կայանան ըստ ինքեանց և հանգուցանեն զմիտ լսողին և նշանակեն զայնս իրս, որք ինքեանս են կայացեալք և ոչ յայլում: Իսկ ածականք ասին այնոքիկ, որք ներհակ գոյականին ոչ կայանան ըստ ինքեանց ի բանի և ի զրուցատրութեան և նշանակեն զայնպիսիս իրս, որք ոչ են կայացեալք ըստ ինքեանս և չինքեանս, այլ յայլում էակոջ, որգոն՝ **սեաւն, սպիտակ, երկայն, կարճ, բարի, շար, միամիտ, խորագէտ** և այլք նմանք: Վասնզի **սեաւ** կամ **սպիտակ** ի զրուցատրութեան ոչ կայանան ըստ ինքեանց և ոչ հանգուցանեն զմիտ լսողին»[72]:

Այսուամենայնիվ Սեբաստացին ածական տերմինը ավելի լայն՝ գոյականի վերադրվի նշանակությամբ գործածող առաջիններիցից է, քանի որ ոչ միայն որոշ նախադրություններ նման ընդունում է նաև ածական բերականություններ, այլև ածականի մեջ առարկայի «որպիսությունից» բացի տեսնում է նաև «որքանության» նշանակություն. այսպես՝ «Դարձեալ կարէ ասիլ, թէ ածականն է, որ զորպիսութիւնն և կամ զորքանութիւնն իրին նշանակէ»[73]:

Մասնակի տարբերություններով հանդերձ, անվան տեսակնե-

---

[72] Նույն տեղում, էջ 231:

[73] Նույն տեղում, էջ 232:

րի՝ հասարակ, հատուկ, հավաքական գոյական, ածական, այս թվում նաև «մասնական» (ոմն, ոք, իմն), «հարցական» (ո՞ր, ո՞վ, ո՞), թվական «առումների», դերանունների, ինչպես նաև սրանց «պարագա»-ների քննության մեջ Աբեղյանին մնում է դրպես Հ. Հոլովի հետևորդը։ Շարահյուսության մեջ (իր քերականության երրորդ մասում) գոյականն ու ածականը որոշակիորեն իրարից տարբերելու անհրաժեշտության թելադրանքով Աբեղյանին կատարում է սրանց իմաստային ուշագրավ խմբավորում։ Գոյականները բաժանում է հետևյալ տեսակների. 1. մարդ, ջուր, երկիր (նաև՝ հոգի, կամք) և այլն, որոնք բնական իրերի կամ նրանց մասերի անուններ են. դրանք «ի բնութենէ յառաջացելոյ և ըստ ինքեան ենթակայեցելոց իրաց, կամ մասանց նոցին են նշանականք». 2. սպիտակութիւն, գոյն, մարդկութիւն և այլն, որոնք իբրև գոյականներ են առնվում, դրանք «իբրու ըստ ինքեանց ենթակայեցելոց իրաց են նշանականք»[74]. 3. տուն, նաւ, մանգաղ, աթոռ և այլն, որոնք արհեստական իրեր են նշանակում. 4. գործողություն նշանակող՝ ա) պայման, ազդ և այլն, որոնք նշանակում են ոչ գործողին, ոչ կրողին, այլ սրանց միջինը՝ վերացականորեն, բ) վարձ, կշիռ, ծրար, աթոռ և այլն, որոնք նշանակում են գործողից և կրողից դուրս եղող կոնկրետ կամ թանձրացական իր։ Ածականները բաժանում է՝ 1. արմատական (բաղցր, մեծ), 2. բարդ (մարդասէր), 3. գոյականներից ածանցված (արհուճի, մարդկային), 4. դերանվանական (իմ, ին, մեր, ձեր, այս, այդ, այն, սոյն, դոյն, նոյն և այլն) տեսակների։

Կան նաև «միջակարգ» անուններ, որոնք մե՛րթ ածական են, մե՛րթ գոյական, կամ ըստ քերականների՝ գոյական, ըստ փիլիսոփաների՝ ածական։ Դրանք են՝ 1. իշխան, պառճիկ, գող, բժիշկ և այլն, որոնք ունեն գործողի կամ -օղ վերջավորությամբ «գնդունեցվոյ» նշանակությունը. 2. զոհ, որս և այլն, որոնք ունեն կրողի նշանակություն. 3. հայր—որդի, մայր—դուստր, վարդապետ—աշակերտ և այլն, որոնք «վերաբերական» կամ «առնչական» անուններ են։ Երբ «միջակարգները» գործածված են որպես ածական, ունեն խնդիր լրացում, երբ գոյական են, խնդրառություն չունեն։

Բայի սահմանման մեջ կիրառում է ոչ միայն իմաստային այլև քերականական հիմունք։ Այն բնութագրում է բառի բայական իմաստով և խոսքի մեջ ժամանակ ցույց տալու հատկանիշով.

---

[74] Նույն տեղում, էջ 439։

«Բայ է մասն բանի, որ զառս և կամ զկիրս էութեան ընդ ժամանակաւ նշանակէ»[75], կամ՝ բայ են «... այնք, որք գոլով ձայնք նշանակականք գգործողութիւնս կամ զկիրս իրաց ընդ ժամանակաւ նշանակեն, որգոն՝ սիրեմ, սիրեցի, սիրեցայ, սիրեցայց, նստիլ, նստել և այլն»[76]։ Այսպիսով, բայեր են առաջին հերթին բայի դիմավոր ձևերը, ապա նաև անորոշ դերբայը, որ անվանվում է «անեղևոյթ եղանակի ներկա և ունի նաև անցյալի և ապառնու ձևեր. «Անեղևոյթ եղանակի ներկայ սիրել. անցեալ կատարեալ, յարակատար և գերակատար՝ սիրեալ գոլ. ապառնի՝ սիրելոց գոլ»[77]։

Ըստ նշանակության բայերը բաժանում է էական և ոչ էական խմբերի՝ ա) «էականք» (եմ, գոմ, եղանիմ, լինիմ), որոնք «ոչ զգործողութիւնս յէութենէ յառաջեկեալս, այլ զյառաջածիլն յինքեան էութեան և կամ զլինելիս նորին ընդ ժամանակաւ նշանակեն»[78], բ) «առաքականք» (մնացած բայերը), որոնք «զարտաս յէութեանց առաջեկեալս և կամ զկիրս նոցունց ընդ ժամանակաւ նշանակեն»[79]։

Բայի հատկանիշները քննելիս, Սեբաստացին չի հետևում Հ. Հոլովիին։ Եթե վերջինս բայական «պարագաներ» էր համարում դեմքը, թիվը, ժամանակը և եղանակը միայն, ապա Սեբաստացին ընդունում է բայի ութ «պարագաներ»՝ այդ չորսին կրկին ավելացնելով Հ. Հոլովի կողմից հանված սեռ, ձև, տեսակ և լծորդություն «պարագաները»։ «Ընդունելութիւնը» սահմանելիս, Սեբաստացին այդ անվամբ կոչված բայաձևերի մեջ հիմնականը համարում է նրանց անվանողական դերը և դրանք ճանաչում է որպես բառի իրենց գործողության առարկան անվանող բառեր. «Չորրորդ ցեղի են այնք, որք գոլով ձայնք նշանականք՝ անուանակոչեալ զիրն ի ձեռն արարեցեալ գործոց և կամ կրից նորին նշանակեն զնա, որգոն՝ սիրօղ, առեցեալ, ճիւսօղ, ճիւսեցեալ և այլն»[80]։

Այս սահմանումի մեջ հեղինակը, ինչպես տեսնում ենք, անտեսում է «ընդունելության» բայական գործառույթը կամ նրա մասնակցությունը բաղադրյալ ժամանակների կազմությանը։ Եթե այս սահմանումը տրված լիներ միայն օղ-ով վերջացող ձևերի կամ ենթակայականի համար, ապա այստեղ էլ շատ արդարացնող

---

75 Նույն տեղում, էջ 199։
76 Նույն տեղում, էջ 227։
77 Նույն տեղում, էջ 48։
78 Նույն տեղում, էջ 302—303։
79 Նույն տեղում, էջ 303։
80 Նույն տեղում, էջ 227։

կունենար։ Սահայն անցյալ և ապառնի դերբայների համար ամենանական (գոյականական և ածականական) կիրառությունը ոչ միայն հիմնական, այլև սահմանամասն միակ հիմունք դարձնելը հաղիվ թե համապատասխաներ լեզվական իրողությանը։ Ահա թե ինչու Սեբաստացին լինքը հետևողական չի մնում իր այդ վերլուծության և հետագայում, նկատի ունենալով «ընդունելության» գործառական երկակի բնույթը, վերադառնում է այդ խոսքի մասի իր կողմից ավելին մի անգամ տրված սովանդական երկբնույթ սահմանմանը. այսպես՝ «ընդունելութիւն է մասն բանի, որ զէութիւնս իրաց, նաև զառս և կամ զկիրս էութեանց ընդ ժամանակաւ նշանակէ»[81]։

Բայի և «ընդունելության» քննության սահմանումներում Սեբաստացու նվաճումներից պիտի համարել այն, որ նա բայի դիմավոր և անդեմ ձևերից մաքրում է բոլոր բայանունները։ Խոնարհման ազդուտակում դնում է միայն «ընդունելության» ճանաչված բայաձևերը, «անեղևության» կամ անորոշը և սրա՝ դերբայ անվանվող հոլովված ձևերը։ Սրանցից առանձնացնում և առանձների մեջ է քննում բայանունները և բայածականները։ Նա այս բայանունների շարքն է դասում ոմանց կողմից դեռևս ընդունելության համարվող իշ–ով վերջացող բառերը՝ այն հիմնավորմամբ, որ –իշ–ը –օղ–ի պես չի կարող ամեն բայի միանալ, և ապա, որ գլխավորն է, նրանով կազմված ածանցական բառը այլևս բայական խնդիր չի ստանում, այլ ունենում է միայն «խնդիր սեռական» (հատկացուցիչ)։

Բոլոր նախորդների նման «ընդունելության» մեջ տեսնելով անվան և բայի հատկանիշները՝ Սեբաստացին նրան վերագրում է վեց «պարագաներ»՝ սեռ, ձև, տեսակ, թիվ, հոլով և ժամանակ։ Ձևի և տեսակի տակ շարունակում է քննել բառակազմական հարցեր. թիվն ու հոլովը համարում է անվանական հատկանիշներ, իսկ սեռն ու ժամանակը՝ բայական։ Սեռի վարդը քննելիս, հեղինակը ելնում է նեղգործելու և կրելու հակադրության չմբռնումից։ Այդ հակադրությունից դուրս եղող բայերը համարում է չեզոք, իսկ միևնույն ձևով և՛ նեղգործություն, և՛ կրավորականություն նշանակողները՝ հատարակ։ Այս հատկանիշը, ինչպես տեսանք, տարածում է նաև «ընդունելության» վրա։ «Ընդունելությանն» ըստ ժա-

---

[81] Նույն տեղում, էջ 356։

մանակի յինում է՝ «նեռկա՝ ընտրօղ, անցեալ՝ ընտրեալ, ընտրեցեալ, ապառնի՝ ընտրելոց, ընտրելի»[82]։

Նախադրության տրվող իմաստային սահմանումը զուգորդվում է իմաստաբանական մեկնաբանության հետ։ Այսպես՝ «Ջ՞ինչ է նախադրութիւն։ — է մասն բանի, որ զպարագայս էութեանց նշանակէ»[83], կամ մի այլ տեղ՝ «... զպարագայս իրին ցուցանէ, այսինքն՝ զտուրուբեք գոլն կամ յորում կոչման լինելն նորին»[84]. «Մինչ ասեմք մարդ,— մեկնաբանում է հեղինակը,— իմանամք զէութիւն մարդոյ. բայց մինչ ասեմք առաջի, ի ներոյ, յառաջ քան, վասն, ըստ, թարց և այլն, ոչ իմանամք զէութիւն մարդոյ, այլ զպարագայս զէութեան մարդոյ, կամ այլոց իրի, որք կամ ի կողմանէ դրեցն, և տեղւոյն, և կամ ի կողմանէ ժամանակին, և պատճառին, կամ ի կողմանէ հաւասարութեան, և կախելութեան պարագային մարդոյ և կամ այլոց իրի»[85]։

Քերականության առաջին մասում և սրա հավելվածում ընդունում է նախադասության երեք տեսակ՝ ա) «հոլովակերտք»՝ ի, յ, առ, ց, զ, ներ, ն, ըն. բ) «հոլովառուք»՝ ներս, մերձ, յայսկոյս, յայնկոյս, ընդ, ի մէջ, վասն, սակս և այլն. գ) «բաղադրականք»՝ ան, ապ, ա, ենք, սառն, վեր, արդ, տրամ, պար, շար և այլն։ Սակայն Հովհաննես Հոլովի նման, որն ասում էր, թե «մասունք այսքիկ բաղադրօղք կամ բաղադրելիք ըստ մեծի մասին ոչ են նախադիրք յատկապէս կոչեցեալք»[86], Սեբաստացին էլ իր քերականության երկրորդ մասում գտնում է, որ ան, ապ, ա, ենք և այլ նախամասնիկները, որոնք նախադրության մի առանձին տեսակ են համարվում, իսկական նախադրություն չեն, «վասնզի նախադրութիւնք յատկապէս են այնք,— բացատրում է նա,— որք կամ զհոլովս վերտրեն, և կամ զհոլովս պահանջեն»[87]։

Եթե Սիմեոն Ջուղայեցին առանձնապես ընդգծում է ածականի մակբայացած գործածվելու հանգամանքը, ապա Սեբաստացին ավելի լայնորեն է անդրադառնում բառերի տարբեր խոսքիմասային իմաստներով գործածվելու երևույթին։ Նախադրությունները կարող են և՛ իբրև անուն, և՛ իբրև մակբայ գործածվել, երբ հոլո-

---

82 Նույն տեղում, էջ 205։

83 Նույն տեղում, էջ 206։

84 Նույն տեղում, էջ 227։

85 Նույն տեղում, էջ 359։

86 Ջտութիւն հայկաբանութեան..., էջ 157։

87 Մ. Սեբաստացի. նշվ. աշխ., էջ 378։

վառու չեն կամ խնդիր չունեն, այլ դրված են անվան կամ բայի վրա։ Այսպես՝ «... հեռի ի քաղաքէն», «մեկուսի յամբոխէ ամղի», «մինչև ի քաղաքն» և այլ գործածություններում հեռի, մեկուսի, մինչև նախադրությունները խնդիր ունեն, ուստի և հոլովառու նախադրություններ են։ Բայց «ճանապարհ հեռի ունողացն զսէր ոչ թուի հեռի», «մեկուսի եկաց» «մինչև աւարտեաց» և նման կապակցություններում վերոհիշյալ նախադրությունները որպես ածական, կամ մակբայ են գործածված, այլ կերպ՝ նախադրություն չեն։ Սեբաստացին նախադրության չի համարում նաև սրանց հոլովված ձևերը։ «Ընդ մարդոյ մեկուսոյ մի շատախօսիցես. և բաղդի հեռւոյ մի ըղձայցես» նախադասության մեջ գործածված մեկուսի, հեռի բառերի «մեկուսոյ», «հեռւոյ» հոլովաձևերը նա համարում է անուն և ոչ նախադրություն, քանի որ վերջինս չի կարող ունենալ սեռի, ձևի, տեսակի, թվի, հոլովի «պարտադաներ», իսկ այդ ձևերն ունեն։ Հոլովման և սրա հետ կապված անվանական այլ քերականական հատկանիշները դարձնելով նախադրության անունից զանազանող սկզբունք՝ Սեբաստացին այստեղ կրկին նահանջում է խոսքի մասերի դասակարգման իր համատարած սկզբունքից, դեպի քերականական-ձևաբանական սկզբունքը։ Այսպիսի նահանջ կա նաև մակբայի քննության մեջ, երբ այդ խոսքի մասի տրամաբանական-իմաստաբանական սահմանումից հաջորդում է նաև շատ հստակ ձևական-իմաստաբանական սահմանում «Ջինչ է մակբայն։ — է մասն բանի, որ զեղանակս գործողութեանց և կրից նշանակէ»[88], ապա՝ «Դարձեալ գիտելի է, զի մասս այս ասացաւ մակբայ և ի յոմանց հնոց կոչեցեալ է ածական, զի վերադրի բայիւն և ունի զդիմումն առ բայն, պէտպէս դրականութեամբ և կամ քանակութեամբ բացորոշելով զնշանակութիւնն նորին»[89]։

Հ. Հոլովի նման Սեբաստացին նույնպես ածականագրում է հայերենի ածականների ազատ կերպով մակբայական գործածություն ունենալու հանգամանքը. «Եւ վերջապէս գիտելի է,— գրում է նա,— զի գոյականին ևս բազումք անուանք ածականք, որք ի ձեռն միոյ բթանշանի լինին մակբայք և որակացուցանեն զբայս, որգոն՝ համարձակ քարոզեաց, ճշմարիտ ասաց, արդա՛ր խօսեցաւ և այլն»[90]։ Սրան հակառակ, շատ մակբայներ էլ, օրինակ՝ արդ, զի, ուստի

---

[88] Նույն տեղում, էջ 206։

[89] Նույն տեղում, էջ 362։

[90] Նույն տեղում, էջ 185։

և այլն, գործածվում են որպես շաղկապ։ Ի վերջո նկատում է մակբայների բազմիմաստությունը. «Դարձեալ են ոմանք ի մէջ մակբայից, որք նոյնով ձայնին գտանին ի ներքոյ զանազանից տեսակաց մակբային, որոցն՝ առաւել է մակբայ նախընտրական և յաճախական. յաւետ է մակբայ ժամանակական, նախընտրական և յաճախական. յառաջագոյն է մակբայ ժամանակական և դասական... և այլն»[91]։

Շաղկապն իր գործառական-շարահյուսական նշանակությամբ, ըստ ավանդության, սահմանում է որպես «մասն բանի, որ շարակցէ իրերաց զմասունս բանի, նաև զինքեանս բանս»[92]։

Արձանագրում է մակբայների նախադրությունների շաղկապական գործածության դեպքեր։

Ինչպես նախորդ հոնդաբան և լատինաբան քերականները, այնպես էլ Մխիթար Սեբաստացին անփոփոխ խոսքի մասերից մակբայը կապում է բայի, իսկ նախադրությունը՝ անվան հետ. մինչդեռ շաղկապը կապում է «բանի» հետ, որովհետև «...շաղկապն զպարագայս շարայարութեան բացորոշէ և պատկանի առ բանն»։

Միջարկությունը համարում է առանձին խոսքի մաս և սահմանում է որպես «մասն բանի, որ զկիրս հոգւոյ նշանակէ»[93]։ Սեբաստացին թեև Գալանոսի և նրա մյուս հետևորդների պես միջարկությունը համարում է առանձին խոսքի մաս և, ի տարբերություն Ոսկան Երևանցու, այլն չի հակադրում մյուս բառերին և չի հավասարեցնում «բանի», այսուամենայնիվ նկատում է միջարկության մյուս խոսքի մասերին, մասնավորապես անվան ու դերանվան չկապակցվելու հատկությունը։ Սրանով հանդերձ միջարկությունը համարում է խոսքի մաս՝ «զի և սա մտանի ի շարադրութիւնս բանից, թէպետ ցանցառաբար»[94]։

Ոսկանի և ապա Հ. Հոլովի նման Սեբաստացին հոդը առանձին խոսքի մաս չի համարում, այլ միացնում է դերանուններին, որպես դերանուն «դիմորոշականք»։ Սակայն նա դրանք տարբերում է իսկական դերանուններից՝ ինքնուրույնաբար անվան փոխարինել չկարողանալու և չհոլովվելու պատճառով. «Դիմորոշա-

---

[91] Նույն տեղում, էջ 191։

[92] Նույն տեղում, էջ 206։

[93] Նույն տեղում։

[94] Նույն տեղում, էջ 363։

կանքն ինչպէտ համարին ընդ դերանունս, բայց յատկապէս ոչ ասին դերանունք, այլ յօդք, քանզի ոչ երբէք կարեն վարիլ փոխանակ անուանց, նաև հոլովիլ ոչ կարեն, այլ միայն յօդեն և յարին անուանց և մանաւանդ ընդունելութեանց և բացորոշեն զնոսին. նաև զդէմ որոշեն և առ այն դիմորոշականք կոչին»[95]։

Չնայած այն բանին, որ Սեբաստացին մնում է այն համոզման, որ քերականութիւնը լեզվի մեջ կարող է մտցնել բանական բարեփոխութիւններ և ըստ այդմ կանոնաւորել այն, ուստի և իր կազմած անվանական, դերանվանական և բայական աղյուսակներում պահում է լատինաբան արհեստական ձևեր, այսուամենայնիվ «փոփոխական» խոսքի մասերի քերականական կատարեին, դրանց հարացույցների քննութեան մեջ նա դառնում է քերականական մտքի նախորդ շրջանի նվաճումներն ընդհանրացնող հեղինակ։

Մասնավորապես հիշատակելի են բայական բարդ համակարգի ներսում Սեբաստացու կարգային (կատեգորիալ) և ձևաբանական վերլուծութիւնները։ Բայական կարգերի ու սրանց տրամաբանական նկարագրի մեջ հետևելով Հ. Հոլովին՝ նա այդ կարգերի ձևաբանական արտահայտութիւնների քննութեան ասպարեզում լեզվական փաստերի հմուտ հավաքող և դասակարգող է։

Ուշագրավ է, որ նախորդների պես ընդունելով բարի երեք՝ ներկա, անցյալ և ապառնի ժամանակները, ասպա չոկելով անցյալ ժամանակի չորս տեսակներ, Սեբաստացին հատակորեն մատնանշում է, թե ո՛ր եղանակի բայերը ի՛նչ ժամանակային ձևեր ունեն և ո՛ր ժամանակի համար ձևեր չունեն։ Տեղ-տեղ հարերենի ժամանակային ձևերին խառնված լատինաբան արհեստական ձևերին թեև հեղինակը քաղաքացիութիւն է տալիս, բայց չի մոռանում այդ կարգի ձևերը ի մի ամփոփել և ընդգծել դրանց անհարազատութիւնը։

Բայի եղանակները՝ ըստ գործողութեան «արձակաբար» և «վերաբերութեամբ իւիք» արտահայտող խմբերի բաժանելը (ընդ որում առաջինի մեջ մտցվում են տեսմանականն ու «անեղևույթը», իսկ երկրորդի մեջ՝ հրամայականը, ըղձականը և «ստորակցականը»), լծորդութիւնների և սրանց մեջ ենթադասվող կանոնավոր և անկանոն բայատեսակների ծավալուն քննութիւնը, հոլովման կանոնավոր և անկանոն տիպերն ու սրանց վերաբերող բառացան-

---

[95] Նույն տեղում, էջ 297—298։

կերը,— այս ամենը գրաբարի թեքվող խոսքի մասերի ձևաբանական համարյա ավարտուն նկարագիրն են։

Մխիթար Սեբաստացին, ինչպես իրավացիորեն նկատում է Գ. Ջահուկյանը, նաև «նշանակալից հատակություն է մտցնում նախադասության անդամների խոսքի մասերից տարբերակելու հարցում»։ Այդ արտահայտվում է նախադասության անդամների համար հատուկ տարբերակիչ անվանումներ գործածելու մեջ։ Ենթակայի համար նա գործածում է «առէր բայի» կամ «անուն բայի», ուղիղ խնդրի համար՝ «խնդիր սեռի», անուղղակի խնդրի համար՝ «խնդիր բնութեան», գոյականի գոյական լրացումներդի համար՝ «բացահայտիչ» և «հատկացուցիչ», բայ—ստորոգյալի համար՝ «բայ ղիմատար» անվանումները, որոնց հատկացությունների մեջ կատարված մասնատվի փոփոխությունները նոր ժամանակներին են վերաբերում միայն։ Այս շարահյուսական տերմինների շարքում միայն «ածականն» է, որ որոշչի նշանակությամբ մնում է իբրև խոսքի մասային անվանում։

10. Բաղդասար Դպիր.— Դպիրը, որ լատինատիպ քերականության վերջին ներկայացուցիչներից է, հայ քերականության պատմությանն է թողել երկու քերականական աշխատություններ։ Առաջինը 1736 թ. Կ. Պոլսում լույս տեսած «Կրկնատոր քերականութիւն»՝ «Պարզաբանութիւն քերականութեան կարճառօտ և դիւրիմաց» և «Կիրառութիւն մասանց բանին, որ է շարամանութիւն ընդ իրեարս ըստ քերթողացն» վերնագրով, իսկ երկրորդը 1760 թ. լույս տեսած գրաբարի համառոտ քերականությունն է՝ գրված արևմտահայ աշխարհաբարով։ Բաղդասարի քերականական հայացքների ծավալուն շարադրանքը գտնում ենք նրա ընդարձակ երկհատորյա քերականության մեջ, որի առաջին հատորում տրված է խոսքի մասերի ձևաբանական, իսկ երկրորդում՝ շարահյուսական տեսությունը։

Ըստ պատշաճի գնահատելով Բաղդասար Դպիրի քերականական ժառանգությունը՝ Գ. Ջահուկյանը միաժամանակ գրում է. «Քերականության ու նրա մասերի սահմանման, այլև քերականական նյութի դասակարգման հարցերում Բաղդասար Դպիրը միանգամայն սկզբունքներ չի մշակել։ Ձանկանալով ի մի բերել այն բոլոր տեղեկությունները, որոնք մինչև ինքը տրվել են զանազան հեղինակների կողմից, առանց որոշակի հաջորդականության, էկլեկտիկ ձևերով զուգորդում է ամեն ինչ»։ Քերականական նյութի համակարգման և քերականական հարցերի շարադրման մեջ նա

ամենից ավելի հենվում է Ամմեռն Ջուղայեցու քերականության և տրամաբանության վրա, թեև նշանակալից չափով օգտվում է նաև Հովհաննես Հոլովից, Մխիթար Սեբաստացուց և ուրիշներից»[96]։

Այսուամենայնիվ, բառի խոսքիմասային քննության մեջ եթե ոչ այնքան սահմանումներում, ապա նրանց տեսական-իմաստաբանական վերլուծություններում Բաղդասարը անում է մի շարք ուշագրավ դատողություններ ու պարզաբանումներ, որոնց չի կարելի չանդրադառնալ։

Հովհաննես Հոլովի նման Բաղդասար Դպիրն էլ արձանագրում է հայերենի պատմականորեն առաջացած որակական տարբերակումները և սրանք «հայկական», «քաղաքական», «աշխարհական» անվանումների փոխարեն կոչում է «քերթողական», «քաղաքական», «գռեհկական» անվանումներով։ Ինչպես Հ. Հոլովի քերականության առարկան կամ լեզվական նյութը «հայկական» կամ հին գրական հայերենն է և ոչ թե որևէ բարբառ կամ գրականացող աշխարհաբարը, այնպես էլ Դպիրի ուսումնասիրության առարկան նույն հին գրական հայերենն է, որ այս անգամ անվանված է «քերթողական» հայերեն։ Վերջինս իր մեջ, բացի Բաղդասարի, առնում է և՛ հին, և՛ լատինաբան բնագրերի լեզուն, ուստի և նրա քերականությունը նույնպես զերծ չէ լատինաբան լեզվական նորարարություններից։

Լեզվի ըմբռնման տեսակետից ուշագրավ է քերականության «մասերի» կամ «մասունք քերականության» տեսությունի ավանդական հասկացության Դպիրի կատարած քննադատական վերլուծությունը։ Կարծես թե զարգացնելով Շրյոդերի՝ խոնարհման կարգերի ստորադաս աստիճանական փոխհարաբերության միտքը (ըստ որի եղանակը ստորադասվում և բացահայտվում է խոնարհման մեջ, ժամանակը ստորադասվում և բացահայտվում է եղանակի մեջ, թիվը՝ ժամանակի մեջ և դեմքը՝ թվի մեջ[97]), Բաղդասար Դպիրը նման աստիճանական ստորադասության կամ կախվածության է տեսնում քերականության «մասեր» համարվող տուռ, վանկ, բառ և «բան» լեզվական միավորների միջև։ Ըստ Դպիրի բավականին խորաթափանց մեկնաբանության՝ սրանք իրար կողքի դրվող հավասարազոր կամ միմյանց հաջորդող անկախ ու ինքնուրույն միավորներ չեն։ Սրանք որոշակի հաջորդականությամբ միմյանց

---

[96] Գ. Բ. Ջանուկյան, Գրաբարի քերականության պատմություն, էջ 256։

[97] Տե՛ս Շրյոդեր, նշվ. աշխ., էջ 105։

բաղադրող տարրեր են, որոնց նյութական մասը և սկիզբը **տառն** *է, իսկ ավարտը կամ «կատարումն քերթողական գիտութեան» «բանն» է։ Տառից, իբրև նյութական մասից կերպավորվում են վանկը, բառը և «բանը»։ Ինքնին հասկանալի է, որ նրանց տարբերութիւնը բաղադրողի և բաղադրվածի տարբերութիւնն է, ուստի և նախորդը միշտ մտնում է հաջորդի մեջ, իսկ հաջորդը միշտ բաղկանում է նախորդից, բայց և, լինելով պարունակողի և պարունակյալի հարաբերութեան մեջ, սրանք երբեք չեն նույնանում իրար։*

«Մասունք քերականութեան՝ տառ, վանկ, բառ, բան, ոչ են նման նիւթական մասանց տան կամ նաւի կամ այլոց սոյնպիսեաց,— բացատրում է հեղինակը,— վասն զի մասունք սոյնպիսիք ոչ բաղկանան ի միմեանց. զի ոչ բաղկանայ և յառաջ գայ փայտն ի քարէ կամ քարն ի փայտէ և այլն, որք են նիւթական մասունք տան։ Իսկ մասունք քերականութեան առ ի միմեանց բաղկանան որպէս ցուցեալ է։ Որպէսզի կերպիւ ինչ նմանին սոքա նիւթական և կերպաւորական մասանց հացի և այլոց սոյնպիսեաց։ Զի որպէս ի ցորենոյ կերպաւորի ալիւրն, ի յալերէ խմորն և անտի հացն, այսպէս ի տառէ կերպաւորի վանկն, ի վանկէ կամ ի վանկից բառն և ի բառից՝ բանն։ Եւ յայտ է աստի, թէ այլ է մասն նիւթական և այլ է մասն կերպաւորական։ ... Եւ որպէս հացն ոչ յարմարապէս կարէ կոչիլ մասն հացագործութեան կամ կտաւն կտաւագործութեան, զի կատարումն են արհեստին, այսպէս թէպէտ ոչ է յարմար կոչել զբանն մասն քերականութեան, զի կատարումն քերթողական գիտութեան է բանն։ Սակայն որպէս ինձ թուի վասն այն կոչեցին զնա մասն քերականութեան, զի է գըլխաւոր ունայնելի քերթողական ուսմանն՝ կամելով ասել, թէ չորք են ուսանելիք քերթողութեան՝ տառ, վանկ, բառ և բանն։ Եւ յայտնապէս ցուցաւ, թէ նիւթական մասն և սկիզբն քերականութեան է տառ միայն, իսկ վանկն, բառն և բանն են մասունք կերպաւորականք ըստ որում ցուցաւ»[98]։

Ոսկան Երևանցու և այլոց նման Դպիրը կատարում է բառերի, ըստ այսմ՝ խոսքի մասերի ձևաբանական խմբավորում՝ առանձնացնելով «հոլովական» և «անհոլով» բառեր ու խոսքի մասեր։ Ըստ նշանակութեան տարբերում է «նշանակական» և «առնշանակական» բառեր։ «Դարձեալ մեծ բաբունին և քաջ քերթօղն մեր Սիմեօն

---

[98] Բաղդասար Դպիր, նշվ. աշխ., էջ 469—471։

Ջուղայեցի, առեալ յԱրիստոտելէ, երկու ասէ զբառն՝ նշանակական և առնշանակական։ Նշանակական ասէ զայն, որ իւրով ինքեամբ բաւական է տալ զնշանակութիւն իւր, որպէս քար, փայտ, շինել, տնկել և նմանք։ Եւ առնշանակական կոչէ զայն, որ իւրով ինքեամբ իմաստ թերի նշանակի, որպէս այսոքիկ՝ վասն, առանց, մինչև, մինչդեռ, որպէս, իբրու և նմանք։ Եւ կոչին առնշանականք, իբրու թէ առ նոսա դնին և նոցա միշտ հետևին, այսինքն նշանականաց. որպան՝ վասն փառաց, առանց մեղաց, մինչև ի տուն, մինչդեռ ուտէին և այլն»[99]։ Սակայն, ի տարբերություն Ջուղայեցու, Դպիրը նախածանցներն ու ի, ըն և նման հոլովակերտ նախդիրները դուրս է թողնում վերոհիշյալ երկու կատգրի բառախմբերից՝ գտնելով, որ սրանք բառ չեն, այլ մասնիկներ են. «Իսկ հոլովական նախդիրքս՝ ի, ըն, ո՛չ նշանակական կարեն կոչիլ, ո՛չ առնշանակական, զի ոչ են բառք, այլ մասունք բառից։ Ըստ այսց է և ընդ, ի լինիլն հոլովական նախդիր. իսկ ի լինիլն զատական, է բառ առնշանական։ Այսպէս և այնք, որք երբեմն բաղադրին և երբեմն զատ դնին»[100]։

Հետևողական չէ խոսքի մասերի տարբերակման սրանց սահմանումների մեջ։ Նախ, հետևելով Ս. Ջուղայեցուն, ընդունում է ութ խոսքի մաս՝ առանձին խոսքի մաս համարելով հոդը և դուրս թողնելով միջարկությունը, ապա առաջին հատորի երկրորդ մասի վերջում, քոլոր խոսքի մասերը քննութագրելուց հետո «Յաղագս ախտակրութեան կամ միջարկութեան» վերնագրի տակ գրում է. «Աստ ի վերջնում մասանց բանի նաև այս գիտելի է, զի գոյ և այլ մասն բանի, զոր բանիբուն վարդապետն Սիմէօն Ջուղայեցի ախտական կոչէ և ընդ մակբայն դասակցէ։ Իսկ այլք միջարկութիւն անվանեն և այլ մասն առեն քանի»[101]։ Հետագա մեկնաբանություններից և միջարկության իմաստային դասակարգումից պարզ երևում է, որ Բաղդասարն ըստ էության համամիտ է միջարկությունը ինններորդ խոսքի մաս համարելու տեսակետին։

Խոսքի մասերի իմաստային քննության մեջ Դպիրը հիմնականը համարում է նրանց գործառական դերը։ Այստեղ նա նույնացնում է խոսքի մաս և նախադասության կամ դատողության անդամ հասկացությունները։ Դրա համար էլ անվան և բային հունաբան շրջանում տրված նախապատվության այլևայլ մեկնաբանություն-

---

[99] Նույն տեղում, էջ 505—506։

[100] Նույն տեղում, էջ 507։

[101] Նույն տեղում, էջ 515—516։

նեղին նա ավելացնում է իրենը և այս խոսքի մասերի կարևորության դիրքից խմբավորում և սահմանում է մյուս խոսքի մասերը։

Անունն ու բայը, այսինքն՝ ենթական և ստորոգյալը, գնահատվում են որպես «բան» կազմող բառեր, իսկ մյուս բոլոր խոսքի մասերը ստորադասվում են սրանց. այսպես՝ «Մասունք բանին թէպէտ ութ են ըստ նախնեաց և ինն՝ ըստ ոմանց, սակայն (որպէս Արիստոտէլ ասէ) հարկաւորքն երկու են՝ անուն և բայ, որովք իմանին նաև այլ միւս հոլովական մասունքն, այսինքն՝ ընդունելութիւն, դերանուն և յօդն, զի ընդունելութիւն ուրեք իբր անուն վարի, ուրեք իբր զբայ, իսկ դերանունն և յօդ են որպէս անուն... Իսկ միւս անհոլով մասունքն՝ նախդիր, մակբայ, շաղկապ և միջարկութիւն ոչ են հարկաւորք առ ի գոլն բան, այլ հետևօղք են հարկաւորացն, զի թարց անուան և բայի՝ այնոքիւք բան ոչ լինի, իսկ միայն անուամբ և բայիւ լինի բան բացատկատար»[102]։

Բաղդասարը իր նախորդ քերականներից շատերի պես, ինչպես ասվեց, խոսքի մասերը սահմանում ու քննում է՝ մե՛կ ելնելով բառերի տարբեր կողմերը քերականության տարբեր մասերում քննարկելու գիտական պահանջից, մե՛կ էլ ուսուցումը հեշտացնելու, գիտելիքները աստիճանաբար խորացնելու նպատակադրմամբ։ Իր քերականության առաջին մասում, ելնելով դատողության մեջ անվանը և բային վերագրված վերոհիշյալ կարևոր դերից, Դպիրը սրանց առաջին է իմաստային-տրամաբանական սահմանում. «Անուն է մասն բանի, որով իրն ճանաչի» և «բայն է մասն բանի՝ նշանակօղ իրականութեան»[103]։ Մնացած բոլոր խոսքի մասերը սահմանվում են սրանց, մասամբ էլ իրար նկատմամբ ունեցած հարաբերությունների տեսանկյունից. «Ընդունելութիւն է մասն բանի ծնեալ ի բայէ... Դերանուն է մասն բանի, որ փոխանակ անուան դնի... Յօդն է փոքրիկ ինչ մասն բանի, որ յայլ մասունս յօդի... Նախդիրն է մասն բանի, որ այլ մասանց նախադրի... Մակբայն է մասն բանի, որ բայի առադրի... Շաղկապն է մասն բանի, որ զայլ մասունս շարակցէ ընդ իրեարս»[104]։

Քերականության առաջին գլխի երկրորդ մասում, որտեղ խոսքի մասերի ձևաբանական քննությունից հեղինակն անցնում է նրանց իմաստային սահմանմանն ու վերլուծությանը, վերոհիշյալ

---

102 Նույն տեղում։

103 Նույն տեղում, էջ 16։

104 Նույն տեղում, էջ 16—17։

սահմանումներն ընդլայնվում են։ Այսպես՝ «Ընդունելութիւն է երրորդ մասն բանի՝ ծնեալ ի բայէ, որ զէութիւն և զիրականութիւն ի միասին նշանակէ»[105]։ «Դերանուն է չորրորդ մասն բանի, որ փոխանակ անունանն դնի և զբաղորոշեալ դէմն ցուցանէ»[106]. «Յօդն է փոքր ինչ մասն բանի, որ յօդի յայլ մասունս բանին և դիմաւորէ զնա»[107]. «Նախդիրն է վեցերորդ մասն բանի, որ առաջադրի առնուան և այլ հոլովական մասանց բանի և նշանակութիւն ինչ տրտաքին յաւելու ի նոսա»[108]. «Մակբայն է եօթներորդ մասն բանի, որ առադրի բայից և բայապէս ընդունելութեանց և նշանակութիւն ինչ արտաքին յաւելու նոցա որպէս նախդիրքն անուանց»[109]. «Շաղկապ է վերջին մասն բանի, որ զայլ մասունս բանին կամ զնոյն ինքն զբանն շարակցէ ընդ իրեարս»[110]։ Վերոհիշյալ իմաստային, շարահյուսական, շարահյուսական-իմաստային այլազան ակըզբունքներով տրված սահմանումների ու լրացուցիչ պարզաբանումների մեջ երևում են Բաղդասար Դպիրի և նրան նախորդող շրջանի քերականութիւնների հակասանութիւնն ու անհետևողականութիւնը խոսքի մասերի սահմանման ու դասակարգման հարցում։ Սակայն այդ հակասականության մեջ կա մի ներքին օրինաչափություն, որը, կարծես, արդարացնում է խոսքի մասերի ավանդական դարձող այս դասակարգումն ու նրանց սահմանումները։ Ո՞րն է այդ ներքին օրինաչափությունը։ Անունն ու բայը, որպես դատողության ու նախադասության գլխավոր անդամներ, դասակարգվում և սահմանվում են իմաստային սկզբունքով։ Դերբայներն («ընդունելութիւն») ու դերանունները, ինչպես ցույց են տալիս սրանց անվանումները, գնահատված են իբրև բային ու անվանը անմիջապես առնչվող խոսքի մասեր։ Այս հանգամանքը նկատված և քննված է նաև հունաբան քերականության մեջ։ Դպիրը «ընդունելութիւնը» սահմանում է որպես բայից ծագած և «էութիւն և իրականութիւն» նշանակող խոսքի մաս։ Այն մեկնաբանում է իբրև կիր կամ ներգործություն, որ կրող կամ ներգործող առարկայի համար դառնում է մականուն։ Այստեղից էլ այդ խոսքի մասի իմաստային կապը բայի ու անվան հետ, ապա և նրա դարձյալ ի-

---

105 Նույն տեղում, էջ 110։

106 Նույն տեղում, էջ 119։

107 Նույն տեղում, էջ 132։

108 Նույն տեղում, էջ 138։

109 Նույն տեղում, էջ 152։

110 Նույն տեղում, էջ 168։

մաստային, բայց երկրիմի՝ մե՛կ առարկա, մե՛կ գործողություն նշանակող սահմանումը։ Դերանվանը շարահյուսական-իմաստային սահմանումը, ըստ որի այն նեղկատարվում է իբրև անվան փոխարինող և դեմք նշանակող խոսքի մաս, դերանունը կապում է անվանը՝ սրա ոչ նյութական, այլ քերականական իմաստային ընդհանրությամբ։

Եթե մի կողմ թողնենք հոդը, ապա բավականին օրինաչափ են նախադրությունը անվանը, իսկ մակբայը բային ստորադասելն ու նրանց հարաբերությամբ այդ խոսքի մասերին շարահյուսական-իմաստային սահմանում տալը։ Բոլոր խոսքի մասերին, այլև նախադասությունների շարահյուսական հարաբերությամբ է սահմանվում շաղկապը, որը թեև մի գործառություն մեջ միանգամայն յուրօրինակ է, սակայն քերականական մի շարք հատկանիշներով միավորվում է նախորդ երկու խոսքի մասերին և դառնում նրանց «ազգակից»։ Այս խոսքի մասերի չթեքվելը և թեքվող խոսքի մասերին ստորադասվելը սրանց միավորում են իրար և հեշտացնում խոսքիմասային անցումը մեկից մյուսը։ Ահա թե ինչպես է ձևակերպում իր այս դատողությունները Բաղդասար Դպիրը. «Ու գիտելի է, զի նախդիրն, մակբայն և շաղկապն ազգականք են իրեարաց։ Նախ՝ զի երեքեանն ևս անհոլով մասունք են բանի, վասն որոյ ոչ աճին հոլովմամբ որպէս զայլսն։ Երկրորդ՝ զի որպէս նախդիրն հետևի անուան և այլոց անուանապէս հոլովելի մասանց, և մակբայն հետևի բայից և բայապէս ընդունելութեանց, նոյնպէս և շաղկապն է հետևօղ բանից, զի կամ կցէ զմասն ընդ մասն և շինէ զբանն և կամ զինքն զբանն կացէ ընդ այլում բանի որպէս ասացաւ և ցուցաւ։ Երրորդ՝ զի ոմանք ի նոցանէ լինին երբեմն նախդիր, երբեմն մակբայ, և ոմանք մակբայ և շաղկապ, և ոմանք սակաւք լինին նախդիր, մակբայ և շաղկապ»[111]։

Բաղդասար Դպիրն ու նրա այն նախորդները, որոնց դատողություններն ընդհանրացնում է նա, իհարկե, չեն մտածել ո՛չ խոսքի մասերի աստիճանական ու բազմահատկանիշ դասակարգման, ո՛չ էլ բառերի նյութական ու քերականական նշանակությունների փոխադարձ կապի ու պայմանավորվածության այսօրվա տեսական ըմբռնումների մասին։ Սակայն լեզվական երևույթների ճշմարիտ նկարագիրը մտածց հանում է այդ գիտական ընդհանրացումների ուղին, որով էլ, հավանաբար, խոսքի մասերի ավանդա-

---

[111] *Նույն տեղում, էջ 181—182։*

կան դասակարգումը իր բոլոր հակասականությամբ հանդերձ չի դադարում միաժամանակ գիտական և այսօր էլ կիրառելի լինելուց։

Դպիրը իր քերականության երկրորդ հատորում «Յաղագս հետամանց մասանցն բանին» վերնագրի տակ ուշագրավ միտք է զարգացնում խոսքի մասերը բնորոշող քերականական կարգերի ու հատկությունների մասին։ Ինչպես ամեն մի իր, այնպես էլ խոսքի մասերը որոշվում են իրենց բնորոշ «պարագաներով» (կատեգորիաներով)։ Բայց ինչպես իրերը, խոսքի մասերն էլ կարող են ունենալ հատկանշային կամ, միևնույն է, պարագայական (կատեգորիալ) ընդհանրություններ։ Այս դեպքում ինչպես իրը, այնպես էլ խոսքի մասը բնութագրվում է ոչ թե առանձին վերցրած որևէ հատկանիշով կամ «պարագայով», այլ հատկանիշների կամ «պարագաների» գումարով, որը տալիս է իրի որակը («հատկութիւն»)։ Դպիրը «հատկութիւն» ասելով հասկանում է այն, ինչ Զեյթունցին անվանում է «որակ»։ Ըստ այդմ՝ «հետաքրքրական պարագայից մի-ոչ իրի ոչ հետևի այդում իրի, վասն որոյ ասի այն յատկութիւն նորին։ Որպէս հետևմունք և պարագայք անուան են վեցեքինս՝ քանակ, սեռ, ձև, թիւ, տեսակ, հոլով. և ժողովումն վեցից հետևմանցս այսոցիկ է և ասի յատկութիւն անուան, զի ոչ այլ մասն բանի ունի զհատաքրքրմունս զայս»[112]։

Սույն մոտեցմամբ Դպիրը սահմանում է անունը՝ մե՛կ նրան տալով տրամաբանական-իմաստային բնութագիր, մե՛կ ձևաբանական-քերականական, միաժամանակ աշխատելով սահմանման հիմունք դարձնել իմաստային և քերականական այն հատկանիշները, որոնցով անունները ընդհանրանում և հակադրվում են մյուս խոսքի մասերին. «Անունն է մասն բանի, որով իմն ճանաչի, որպէս քար, փայտ, մարդ, ձի և այլ։ Դարձեալ սահմանի անունն այսպէս. անունն է մասն բանի հոլովական, թարց ամանակի և դիմաց։

Ասելով թարց ամանակի, որոշէ զանունն ի բայէ և յընդունելութենէ, որք ամանակաւ նշանակին։ Եւ ասելով թարց դիմաց, որոշէ զնա ի բայէ, ի ներանունէ և ի յօդէ, որք դիմաւոր մասունք են բանի։ Իսկ ասելովն հոլովական, որոշէ զանունն յանհոլով մասանց, այսինքն ի նախադրութենէ, ի մակբայէ և շաղկապէ. բայց

---

112 Նույն տեղում, էջ 519։

ոչ փ բայէ, ըի և բայն հոլովական է, քանզի խոնարհումն բային և հոլովումն է նմին»[113]:

Անվան իմաստային սահմանումը և բերված օրինակները վերաբերում են միայն գոյականին: Ածականը գոյականի հետ առնում խոսքի մասի մեջ միավորող սահմանումը, ուրեմն, երկրորդ՝ քերականական-ձևաբանական սահմանումն է: Հետևաբար ածականը գոյականին միավորող հատկանիշները գոյականի պես հոլովվելու և, ի տարբերություն բայի և դերանվան, ժամանակի ու դեմքի քերականական կարգեր չունենալու հատկանիշներն են: Այլ կերպ՝ Բաղդասար Դպիրը ժամանակակից տերմինագործությամբ կարող էր ասել, թե այս առումով գոյականի և ածականի համար ուրարկա և հատկանիշ նշանակելու իմաստային տարբերակումը խոսքիմասային տարբերակիչ արժեք չունի: Անվան ներսում գոյականի ու ածականի տարբերակումը, ինչպես Սեբաստացու մոտ, կատարվում է իմաստային և շարահյուսական սկզբունքներով: Ս. Ջուղայեցու նման Դպիրը գոյականի և ածականի համար գործածում է նաև «ենթակայական» և «մակադրական» անուն տերմիններըև դրանք տարբերակում է հետևյալ հատկանիշներով՝ ա) գոյականը առարկայի «ինչությունը» կամ «էությունն» է ցույց տալիս, իսկ ածականը նրա «որպիսությունը». բ) գոյականը առանձին վերցրած նշանակում է առարկայի «բնությունը» կամ «գոյությունը», «իսկ ածականն առանց գոյականի բնութիւն ինչ նշանակել ոչ կարէ». գ) գոյականը «բանի» մեջ ունի անկախ գործածություն, «իսկ ածականն ի վերայ գոյականին ածեալ լինի». դ) գոյականը մի տեսակի է վերաբերում, ինչպես՝ մարդ, «իսկ ածականն ի վերայ բազմաց և զանազանաց դնի, որպէս ասեմք մեծ մարդ, մեծ ձի, մեծ քար և այլն»[114]. *ե) իրի «ինչությունը» մեկ է, ուրեմն մեկ գոյական անուն է ունենում, իսկ «որպիսությունը» շատ է, ուրեմն շատ ածական անուններ կարող է ունենալ, թեև առանձին դեպքերում ածականն իրըև հատկանիշ այնքան հարազատ է դառնում գոյականին, որ առանձին վերցնելիս իմացվում է, թե ո՛ր գոյականին է վերաբերում, այսպես՝* **արդար, մեղավոր** *ասելիս իմացվում է, որ սրանք մարդուն են վերաբերում: Դպիր բառը, օրինակ, թեև բնությամբ ածական է, բայց մի տեսակի է պատկանում.* **դպիրը** *մարդ է:*

---

[113] *Նույն տեղում, էջ 187:*

[114] *Նույն տեղում, էջ 192:*

Վերջին բացատրությունների Բաղդասարը աշխատում է հիմնավորել ածական—գոյական և գոյական—ածական փոխանցումների իմաստային և շարահյուսական հիմունքները։ Այդ անցումները լինում են՝ ա) երբ ածականը դրվում է մի այլ ածականի վրա, ինչպես՝ թուխ կարմիր, խոր կանաչ, երկրորդ ածականը կարծես գոյականանում է. բ) ածականը գոյական է դառնում, երբ -ութիւն, -ումն մասնիկներով ածանցվում է, ինչպես՝ մեծ–մեծություն. գ) «գոյականն լինի ածական կամ բարդմամբ, կամ ածանցմամբ և կամ դրմամբ ի վերայ այլոց», ինչպես՝ fur և սիրտ—furասիրտ, fur և եղեն—furեղեն. «իսկ դրմամբ, որպէս գայլն և Վահան են գոյականք, իսկ յասելն՝ Գայլ Վահան, գայլն ի վերայ Վահանին լինի ածական. այսպէս՝ Յուդա Կիւրեղ, Սիմոն Պետրոս և այլն»[115]. դ) նույն բառը կարող է լինել և՛ գոյական, և՛ ածական, այդպիսիք են՝ ծակ, ծառաւ, փակ և այլն։

Թեև ածականն ու գոյականը այստեղ քննվում են որպես անվան տեսակներ, բայց և այնպես նրանց իմաստային և շարահյուսական առանձնահատկություններն այնքան բազմակողմանիորեն են մեկնաբանված, որ այսօր էլ ուշադրություն են գրավում։ Ճիշտ է, Դպիրը ածականի և գոյականի տարբերությունների ու փոխանցումները քննելիս բառակազմական և քերականական-շարահյուսական միջոցները դնում է նույն մակարդակի վրա և բառային ու քերականական երևույթները համամատնում է, սակայն չի կարելի չնկատել, որ քերականը տեսնում է սրանց բառա-քերականական բոլոր տարբերությունները, այլև փոխանցման լեզվական ուղիները։ Եթե վերը ասվածներին ավելացվեր այն, որ ածականը համեմատելիության հատկանիշով տարբերվում է գոյականից (դա նկատել է Հովհաննես Հոլովը), ապա Դպիրը դրանով ամփոփած կլիներ այս հարցի մասին իր բոլոր նախորդների ասածները։

Ամփոփում.— Հայերենի վաստինատիպ քերականությունների վերոհիշյալ շրջանը, որով ավարտվում է հայ քերականության ձևավորումը, հայերենի խոսքի մասերի պատմության տեսակետից կարող է բնութագրվել հետևյալ բնորոշ կողմերով։

1. Ճշգրտվում է քերականության ուսումնասիրության լեզվական առարկան, գնալով այն մաքրվում է տրամաբանական-փիլիսոփայական և բանասիրական-գեղագիտական վերլուծություններից։

---

[115] Նույն տեղում, էջ 193։

2. Թեև լեզվի կառուցվածքի քննությունը շարունակվում է կատարվել տառ, վանկ, բառ, «բան» մասերով, սակայն բուն քերականական կառուցվածքի քննությունը տարվում է խոսքի մասերի շուրջը, ընդ որում՝ բառի «բանի» մեջ կատարած գործառական հատկանիշների քննությունը անջատվում է բառի ձևաբանական և իմաստային հատկանիշների քննությունից, որով ստեղծվում է քերականության մի նոր՝ շարահյուսության բաժին:

3. Ռացիոնալիստական քերականության պահանջով՝ լեզվի իրական ձևերի կողքին տրամաբանական հորինվածքներին համապատասխան լեզվական արհեստական ձևերի ստեղծմանն ու ղածների պահպանմանը զոգահեռ՝ դրական աշխատանք է կատարվում բառի իմաստային և ձևական վերլուծության ասպարեզում: Բայց, որպես բառի, Սեբաստացու կատարած ձևաիմաստային վերլուծությունը համարյա ժամանակակից ձևույթային վերլուծության է: Բայց դիմայորո ձևերը ոչ միայն բայ խոսքի մաս, այլև «բան» համարելու նախկին դատողության ավելանում է միջարկության «բանի» արժեք ունեցող բառ կամ խոսքի մաս համարելու դատողությունը: Սրանք թեև բառ և «բան» հասկացությունների շփոթի արտահայտություններ են, բայց և միաժամանակ լավագույնս արտացոլում են բառի ու «բանի», իբրև լեզվական միավորների, փոխհարաբերությունը, վկայում այն մասին, որ լատինաբան քերականները ընդհուպ մոտենում էին բառի գիտական հասկացությանը: Սրան մյուս կողմից նպաստում են բառավազմական մասնիկների առանձնացումը նախդիրներից և սրանք ոչ թե բառ-խոսքի մաս, այլ բառի մաս (Բաղդասար Դպիր) կամ պարզապես մասնիկ համարելու գիտակցումը: Այսպիսով, բառի հասկացության անջատումը «բանից» և մասնիկներից խորացնում է լեզվական այդ միավորի ըմբռնումը և հող ստեղծում բառ և խոսքի մաս հասկացությունների տարբերակմանը:

4. Շարահյուսության առանձնացումը նպաստում է լեզվի շարահյուսական հարցերի մշակմանը: Բառերի գործառական հատկանիշների լայն քննությունը (թեև այս փուլում նորակերտ եղբայի և unnrոգյալի կողքին այս նշանակությամբ առաջին հերթին շարունակվում են գործածվել աճուն և բայ տերմինները) նպաստում է շարահյուսական հասկացությունների ու տերմինների ստեղծմանը, որոնք իրենց հերթին հող են ստեղծում խոսքի մաս և «բանի» (իմա՛ նախատրաստության) մաս կամ անդամ հասկացությունների հետագա տարբերակման համար: Այս ամենի հետևանքով

բառերի այլևայլ դասակարգումների ու սահմանումների մեջ համաձային և ձևական-ձևաբանական հատկանիշների հետ, սկսում են հավասարապես հաշվի առնվել և հիշատակվել նաև շարահյուսական հատկանիշները։

5. Բառերի խոսքիմասային ավանդական դասակարգման կողքին նրանց իմաստային, ձևաբանական, շարահյուսական հատկանիշների հիման վրա հաճախ կատարվում են ավելի ընդհանուր դասակարգումներ, այսպես՝ 1. ա) փոփոխական (հոլովական) բառեր կամ խոսքի մասեր, բ) անփոփոխ (անհոլով) բառեր կամ խոսքի մասեր. 2. ա) խոսքից դուրս ինքնուրույն նշանակություն ունեցող բառեր («նշանականք»), բ) առաջինները ուղեկցող և ինքնուրույն իմաստից զուրկ բառեր («առնշանականք»). 3. ա) խոսք («բան») կազմող բառեր (անուն և բայ), բ) սրանց փոխարինող և լրացնող բառեր (մյուս խոսքի մասերը) և այլն։

6. Հայերենի առանձնահատկությունների հաշվառմամբ ոմանց կողմից հոդը հանվում է խոսքի մասերի շարքից. մակբայներից անջատվում և առանձին խոսքի մաս է ճանաչվում միջարկությունը։

7. Խոսքի մասերի սահմանման տրամաբանական-ռացիոնալիստական մոտեցումը երկրորդ պլան է մղում ձևաբանական հատկանիշների հիշատակումը։ Սահմանումներում այդ ձևաբանական հատկանիշներին փոխարինելու են գալիս բառերի գործառական-շարահյուսական հատկանիշները, որոնց հիման վրա կատարվում են միջխոսքիմասային դասակարգումներ։ Այսպես՝ «բանի» գլխավոր մասերին՝ անվան և բային, ապա սրանց փոխարեն գործածվող դերանվանը և «ընդունելությանը» հակադրվում են մակբայը, նախադրությունը, շաղկապը, ըստ ոմանց՝ նաև միջարկությունը։

8. Քննվող շրջանում խոսքի մասերի սահմանման ամենատարածված տրամաբանական-իմաստային սկզբունքն անգամ որոշակի հետևողական կիրառություն չի ստանում։ Առանձին խոսքի մասերի սահմանման մեջ հարկադրաբար կիրառվում են տարբեր շարահյուսական հատկանիշներ, իսկ հաճախ էլ տրամաբանական հատկանիշներին զուգորդում են շարահյուսական հատկանիշներ։ Փորձեր են արվում բառերի, իբրև խոսքի մասերի, բազմահատկանիշ սահմանումների, որոնցում երևան է գալիս սահմանող քերականի մոտեցման տեսական երկվություն։

9. Վերանում կամ հետին պլան են մղվում անվան և բայի առաջնություն, հատուկ և հասարակ անունների խոսքիմասային

պատկանելության», «մատմին» (թեականձրացական) և «անմատմին» (վերացական) անունների տարբերակման մասին հոմնաբան քերականության շարունակվող վեճերը։ Սրանց փոխարեն խոսքանում և ամբողջանում է անունը ըստ «որակության» (Զեյթունցի) կամ իմաստային և շարահյուսական առանձնահատկությունների (Ս. Ջուղայեցի, Մ. Սեբաստացի, Բաղդասար Դպիր) գոյական և ածականս տեսակների բաժանելու և ըստ այդ երկատման սահմանելու սկզբունքը։

10. Բայի հատկացությունը շարունակվում է նույնացվել նախադասության անդամ բայ-ստորոգյալի հասկացության հետ։ Բայի խոնարհման հատկանիշներից նրան բնութագրողը և անունից ու դերանունից զանազանողը համարվում է ժամանակի կարգը, որով օժտված են համարվում նաև «անեղևույթը» (անորոշ դերբայը) և «ընդունելության» (մյուս դերբայները), որոնք, ի տարբերություն բայի (իմա՛ բայ-ստորոգյալի), ունենում են նաև անվանական կիրառություն և հոլովվում են։

11. Դերանունը շարունակում է համարվել անվան փոխարինող և «էության» կամ «գոյացության» դեմքը որոշակիորեն ցույց տվող խոսքի մաս։ Այս պատճառով էլ, հոդը առանձին խոսքի մաս չճանաչելու դեպքում, այն դերանվան առանձին տեսակ են համարում, իսկ դեմք ցույց չտվող դերանունները (որոշյալ, անորոշ, հարցական, փոխադարձ, ժխտական) ոչ թե դերանուն, այլ առանձին տեսակի անուն կամ պարզապես «միջական անուն» են համարում։

12. Խորանում է խոսքի մասերի փոխադարձ կապերի, բառերի խոսքիմասային փոխանցումների և այլ կարգի երևույթների քննությունը։

13. Հայերենին ոչ հատուկ արհեստական բառաձևերի թիվը գնալով նվազում է։ Ճշգրտվում, կանոնավորվում և գիտական տեսք են ստանում հոլովման և խոնարհման հարացույցները։ Սկսած Կ. Գալանոսից ընդունում են տասը հոլով։ Միայն Ոսկան Երևանցին է, որ այդ տասից երկուսը՝ պատմական և պարառական հոլովները, չի ընդունում։ Ճշգրտվում են անունների հոլովումները ու բայի չծորդության ունեցողները՝ իրենց վանական և անկանոն տիպերով։ Առանձին ներություններով հանդերձ՝ բավականին ամբողջական բնութագիր են ստանում հին հայերենի անվանական և բայական կարգերը։

ՀԱՅԵՐԵՆԻ ԽՈՍՔԻ ՄԱՍԵՐԻ ՏԵՍՈՒԹՅԱՆ ՁԱՐԳԱՑՈՒՄՆ ՈՒ ՆՐԱՆՑ ԴԱՍԱԿԱՐԳՄԱՆ ԿԱՅՈՒՆԱՑՈՒՄԸ 18—19-ՐԴ ԴԱՐԵՐԻ ԻՆՔՆՈՒՐՈՒՅՆ ՔԵՐԱԿԱՆՈՒԹՅՈՒՆՆԵՐՈՒՄ

1. Միքայել Չամչյան.— «Առաջին հեղինակը,— գրում է Գ. Ջահուկյանը,— որ գրաբարի քերականությունը վերջնականապես ազատեց հունաբանության և լատինաբանության բացասական ազդեցություններից, քերականության մեջ մուծված արհեստական «բարեփոխումներին» հակադրեց հին տեքստերի անկանխակալ ուսումնասիրության ու մատենագրական վկայությունների վրա հիմնված քերականական կանոններն ու բացատրությունները, Միքայել Չամչյանն էր»[116]:

Չամչյանի «Քերականութիւն հայկազեան լեզուի» աշխատությունը տպագրվել է 1779 թ. Վենետիկում և հետագա բարեփոխություններով ունեցել է բազմաթիվ հրատարակություններ: Առաջին հրատարակության առաջաբանում, ճիշտ նկատելով լեզվի հասարակական հաղորդակցման դերը, բայց և լեզվական փոփոխությունները հետագա շրջանի աղավաղումներ համարելով: Չամչյանը քերականությանը վերագրում է այդ աղավաղումները կանխողի և լեզուն կարգավորողի դեր: Ի տարբերություն տրամաբանական-տացիոնալիստական ուղղության հետևող քերականների՝ նա դեմ է լեզվի կառուցվածքի «բնական» բարեփոխություններին և, քերականության խնդիրը նախկին «ուղղախոսության» վերաբերմունքը համարելով, պայքարում է հունաբան և լատինաբան նորամուծությունների դեմ: Ըստ այսմ՝ նա քերականական կանոնները ոչ թե իրենից է հորինում, այլ դրանք քաղում է նախկին մատենագրությունից. «վասն զի գործածութիւն լեզուի ոչ ի պատճառէ կանոնաւորի, այլ ի սովորութենէ և ի յատկութենէ. և քանզի այս սովորութիւն և յատկութիւն ի գիրս նախնեաց մերոյն գտանի, վկայութեամբ բանից նոցին միայն կարեն ճշմարտիլ կանոնք քերականութեան, և ոչ թէ պատճառաւ. ապա թէ ոչ՝ նոյն պատճառ յամենայն լեզուս պատահ էր գտանել. որ ոչ է այսպէս»[117]: *Այսպիսով,*

---

116 Գ. Ջահուկյան, նշվ. աշխ., էջ 303:

117 Քերականութիւն հայկազեան լեզուի յօրինեալ՝ ըստ նախնի ուղղախօսութեան ի հայր Միքայէլ վարդապետէ Չամչեանց Կոստանդնուպոլսեցւոյ յաշակերտէ ամենապատիւ տեառն Մխիթարայ մեծի աբբայի, Վենետիկ, 1779, էջ Զ:

Չամչյանը հանգում է լեզուների քերականական կառուցվածքի ինքնուրույնության մտքին և գտնում է, որ տրամաբանական-ռացիոնալիստական մոտեցմամբ սրանց համար «միասնական» քերականություն հորինելն անհնար է։

Հնչյունաբանության, ուղղագրության և կետադրության հարցերին հատկացնում է շատ քիչ տեղ. քերականությունն, իր ձևաբանության և շարահյուսության հարցերի քննությամբ, ըստ էության, դառնում է խոսքի մասերի տարբեր կողմերի նկարագրություն։ Այդ մասին Չամչյանը գրում է. «Այսոքիկ ութն ազգք բառից կոչին մասունք բանի, զորոց խօսի քերականութիւն յերիս մասունս։ Յառաջնումն պարզապէս առաջի դնէ զգործածութիւնն առցա. յերկրորդումն քննէ զորպիսութիւնն սոցին. իսկ յերրորդումն խօսի զհամաձայնութենէ սոցին ընդ միմեանս»[118]։

Հոդը համարելով դերանվան տեսակ, այսպիսով, Չամչյանն ընդունում է ութ խոսքի մաս։ Բառ և խոսքի մաս հատկացությունները տարբերում է ավելի հասարակ ձևով, քան Մխիթար Սեբաստացին։ Բառային հատկացությունը նրա ընդհանուր նշանակությունն է, իսկ խոսքիմասայինը՝ «բանի» մեջ ըստ նրա կատարած դերի ունեցած նշանակությունը. «Արդ առքա,— գրում է այս մասին Չամչյանը,— որպէս վասն գոլոյ ձայնք նշանականք՝ բառք ասին, նոյնպէս և վասն բաղկացուցանելոյ զբան՝ այսու կամ այնու եղանակն նշանակելով՝ մասունք բանի կոչին, ոմանք իբր անուն, ոմանք իբր բայ և այլն»[119]։

Սեբաստացու նման Չամչյանը բառերը բաժանում է՝ ա) իրեր, բ) իրերի գործողություններ և գ) իրերի և գործողությունների պարագաներ նշանակող խմբերի, իսկ սրանց խոսքիմասային տարբերակման մեջ հիմնականը համարում է իր և ապա իրերի գործողության ցույց տալը, որոնցով տարմանվում են անունն ու բայը, որից հետո, ըստ սրանց նկատմամբ ունեցած իրենց իմաստային և մասամբ նաև շարահյուսական հարաբերության՝ սահմանվում են նաև մյուս խոսքի մասերը։ Սահմանումները հիմնականում կատարվում են իմաստային-տրամաբանական սկզբունքով։

«Անունն է մասն բանի, որով իրն յորջորջի, այսինքն է այնպիսի բառ, որով իրն անուանի և ասի այս ինչ կամ այսպիսի ինչ,

---

118 Նույն տեղում, էջ 2։

119 Նույն տեղում, էջ 153։

զոր օրինակ՝ մարդ, քար, խոնկ, լոյս, պայծառ, տկար և այլն»[120]։ Նախորդների պես անունը սահմանում է նաև որպես «մասն բանի, որ զէութիւն իրին նշանակէ»[121]։

Գոյականն ու ածականը որպես անվան տեսակներ զանազանելիս, Չամչյանը գոյական է համարում ոչ միայն իր նշանակող, այլև իբրև այդպիսիք մտածված բառերը. «Գոյական անունն է, որ ինքնին վարի ի բանս և նշանակէ զիրս էականս կամ իբրև էականս, թէ բնականք իցեն, թէ արհեստականք, զոր օրինակ՝ մարդ, մարմին, տունկ և այլն, որք են էականք և բնականք. աթոռ, թուղթ, տուն և այլն, որք են էականք և արհեստականք. գոյն, լոյս, հաւատ, քաղցրութիւն և այլն, որք են իբրև էականք և բանականք. նկար, փորձ, շինութիւն և այլն, որք են իբրև էականք և արհեստականք»[122]։ Այս հարցում էլ Չամչյանը ետ է մնում իր որոշ ռացիոնալիստ նախորդներից, որոնց կողմից ավելի հստակ են տարբերակվում բուն իրերը, զգայական իրերը և մտածական իրերը։ Նախորդների նման նկատում է ածականի և գոյականի փոխանցումները, գոյականի և այլ կարգի բառերի ածականական գործածության դեպքերը։

Գոյականները լինում են հատուկ, հատարակ և հավաքական։ Սրանք ունենում են տասը հոլով։ Հարացույցներում բաց են թողնված անվան և դերանվան հոլովման, իսկ ածականի նաև համեմատական աստիճանների հունաբան և լատինաբան օտարամուտ ձևերը։

Անտեսված են լատինաբան առանձին քերականների որոշ նորամուծություններ՝ դերանվան մի քանի տեսակներ անուն խոսքի մասից առանձնացնելու և դերանուն համարելու հնդրում. «Միջական» անունների մեջ են դրվում թվականները, հարցական, անորոշ («մասնականք»), որոշյալ («հանրականք»), մատամբ և ցուցական («վերաբերականք») դերանունները։

Ընդունում է դերանվան հինգ տեսակ. «Դերանուն է հնգապատիկ. էական, ցուցական, ստացական, յարաբերական և դիմորոշական»[123]։ «Էական» (անձնական) դերանունների մեջ է դնում նաև «ամիսանց» և «իրերաց» փոխադարձ դերանունները՝ միա-

120 Նույն տեղում, էջ 156։
121 Նույն տեղում, էջ 154։
122 Նույն տեղում, էջ 156։
123 Նույն տեղում, էջ 198։

ժամանակ նշելով, որ սրանք բոլորը գոյականաբար են գործածվում: Ստացականները ածականաբար են գործածվում:

Ու հարաբերականը դեմք չի ցույց տալիս, այլ ստանում է այն դեմքը, ինչ դեմքի որ է նրա հարաբերյալը:

«Դիմորոշականք են երեքին տառքս այսոքիկ՝ ս, դ, ն, որք իբր յօղք ինչ յատելով ի մատունս բանին, որոշեն զդէմս նոցա... Սոքա թէպէտ ընդ դերանունս դասին, բայց չեն յատկապես դերանուն,— գտնում է հեղինակը,— զի ոչ դնին փոխանակ անուան, բայց քանզի որոշեն զդէմս բառից և լինին ևս սկզբունք, յորոց բխեն ցուցական դերանուանքս սա, դա, ձա. սոյն, դոյն, ձոյն. այս, այդ, այն, վասն այսորիկ առ դերանունս վերաբերին»[124]:

Բայի հարացույցը ևս մաքրում է լատինաբան արհեստական ձևերից. բայց բայի և «ընդունելության» տարբերակման ու վերլուծության մեջ հետևում է Սեբաստացուն: Ի տարբերություն վերջինիս և իր մյուս բոլոր նախորդների՝ Չամչյանը հինգ եղանակի փոխարեն ընդունում է չորս եղանակ: Ըղձական եղանակը միացնում է ստորադասականին՝ գտնելով, որ սրանց բաժանումը օտարաբանություն է, և որ հին հայերենը դրանց համար առանձին եղանակային ձևեր չունի:

Չամչյանը որոշ նորություններ է բերում խոսքի մասերի բառակազմական վերլուծության մեջ: Այդ նորություններով շարունակում է հիմնավորել «ձև» և «տեսակ» «պարագաների» քննության ժամանակ:

Չևաբանորեն խոսքի մասերը բաժանելով փոփոխական («հոլովականք») և անփոփոխական («անհոլովք») խմբերի՝ վերջիններիս (մակբայ, «նախադրություն», շաղկապ և միջարկություն) վերլուծության մեջ էական նորություններ չի բերում:

Այսպիսով, Գ. Ջահուկյանի կողմից Չամչյանի աշխատության տրված բնորհանուր գնահատականը, ըստ որի՝ «Քերականական նյութի համակարգման և տեսական իմաստավորման առումով Չամչյանը որևէ կարևոր նորություն չի բերում, նրա գլխավոր դերն այն է, որ աշխատում է ներկայացնել գրաբարն այնպես, ինչպես կա՝ զերծ օտարամուխ տարրերից և հնարավոր կատարելությամբ»[125], հավասարապես վերաբերում է նաև նրա խոսքի մասերի տեսությանը:

---

124 Նույն տեղում, էջ 199:

125 Գ. Ջահուկյան, նշվ. աշխ., էջ 343:

2. Գաբրիել Ավետիքյան.— Ավետիքյանի «Քերականութիւն հայկական նորոգ քննութեամբ և կարգաւ» աշխատությունը լույս է տեսել 1815 թ. Վենետիկում: Այս աշխատությունը իր «ժամանակի գիտական մակարդակից և հեղինակի գաղափարախոսությունից բխող բոլոր թերությունններով հանդերձ,— ինչպես նույն տեղում իրավացիորեն բնութագրում է Գ. Ջահուկյանը,— ոչ միայն քերականություն է, այլև քերականական ուսմունքների պատմա-քննական տեսություն»:

Պաշտպանելով լեզվի ու նրա «քերականության աստվածային ծագումը («ձայնաւոր քերականութեան բոլն առաջի հեղինակը աստուած է»[126]) Ավետիքյանը, ի տարբերություն իր նախորդների, լեզվի զարգացումը որպես միայն քաղքացման կամ աղավաղման ընթացք չի պատկերացնում, նրա կարծիքով «աստվածային» լեզուն «մեկ կողմանե զարդարվեցաւ. բայց մեկալ կողմանե սկսաւ աւրիլ»: Այդ «ավերումը» կանխելու մեջ նա մեծ դեր է հատկացնում քերականությանը:

Ավետիքյանի քերականությունը բաղկացած է երկու «գրքերից»: Առաջին գրքում «Ոսկի մատանոյ բանին վրա» վերնագրի տակ երկու մասերով տրվում է խոսքի մասերի ձևաբանական ու գործնական, ապա տեսական-վիճաբանական վերլուծությունը: Երկրորդ գրքում «Յաղագս բաղդասութեան մասանց բանի» վերնագրի տակ քննվում են խոսքի մասերի գործառական-շարահյուսական առանձնահատկությունները: Առաջին գրքի երկրորդ մասի սկզբում խոսքի մասերի տեսական-վիճաբանական քննությունից առաջ Ավետիքյանը համառոտ պատմական ակնարկ է անում քերականության պատմության և, մասնավորապես, խոսքի մասերի դասակարգման վերաբերյալ: Թվարկում է հունն, լատինն և հայ քերականների, տալիս է հայ քերականության մատենագիտությունը, ապա բերում է այդ, ինչպես և իտալացի քերականների կատարած դասակարգումները:

Խոսքի մասերի դասակարգման, նրանց սահմանումների ու, երբեմն, մասնակի քերականական հատկանիշների քննությունը Ավետիքյանը կատարում է այդ մասին ուշադրության արժանի համարյա բոլոր կարծիքների ու սահմանումների վկայակոչմամբ:

Նա համամիտ է Դավիթ Անհաղթի՝ Արիստոտելի այն մտքի մեկնությանը, թե գլխավոր խոսքի մասերը «կատարեալ խոսք»

---

126 Քերականութիւն հայկական, էջ 152:

ձևավորող անունն ու բայն են, իսկ մյուսները, ինչպես Դավիթն է ասում, «ոմանք են որ ընդ անուամբ, իսկ այլք ընդ բային անկանին»[127]: Բառերն ունի խոսքի մասի բաժանելը, Ավետիքյանի կարծիքով, միայն ուսուցումը հեշտացնելու նպատակ ունի. «Ուրեմն ութը բաժանելու պատճառը սա է, որ ուսանողաց դյուրին ըլլա հատիկ հատիկ իմանալ և միտք առնել յուրաքանչյուր մասին տարբերությունը իրենց նշանակության կողմանե, փոփոխության, գործածության»[128]:

Գլխավոր համարված անուն և բայ խոսքի մասերի մեջ էլ առաջնության տալիս է անվանը, քանի որ՝ ա) անունը «բուն իրքը կնշանակե, իսկ ուրիշ մասունքը իրքի վրայով եղանակ մը կցուցանեն, բ) «անունը այլ մասանց արմատն է»[129]:

Ինչպես անվան, այնպես էլ մյուս խոսքի մասերի տեսական քննության ժամանակ առանձին ուշադրություն է դարձնում դրանց անվան ստուգաբանությանը, իսկ իրարից ունեցած տարբերությունների ու ներքին ստորակարգումների ժամանակ մեծ տեղ է տալիս բառերի գործառական-շարահյուսական արժեքին: Այսպես, օրինակ՝ «Դյուրին կանոն գոյականը ածականեն որոշելու ասե է: Ինչ անվան քով որ բան բառը չի դրվիր, գոյական է, որուն որ կը-դրվի, ածական է: Տես որ սովորաբար կըսենք՝ մեծ բան, փոքր բան, թեթև բան, ծանր բան, գեղեցիկ բան, տգեղ բան և այլն, ահա ասե ամեն անուն ածական է: Բայց հիշ չենք ըսեր՝ երկինք բան, աթոռ բան, քաղաք բան կամ մեծություն բան, ծանրություն բան, գեղեցկություն բան, ահա ասոնք կիմանաս, որ գոյական են»[130]: Այսպես էլ պիտի տարբերել մակբայը շաղկապից, անունը նախադրությունից և այլն: Այսպես՝ «Բառս ուսած ի՞նչպես իմանամ՝ շաղկապ է, թե մակբայ: — Երբ որ տեսանես՝ քայլին վրա կերթա, մակբայ է. զոր օրինակ՝ Գնաց ուսած եկն, ըսել է՝ Գնաց ուսակից որ եկավ: Բայց երբ ետևի խոսքը առաջինին հետ կը կապե, կիմանաս, որ շաղկապ է. ինչպես ըսենք. Խոնարհեցաւ, ուսած և բարձրացաւ. հոս կըլլա շաղկապ մակաբերական»[131]:

Թեև սահմանումներում չի անտեսվում իմաստային կամ հաս-

---

127 Նույն տեղում, էջ 190:
128 Նույն տեղում, էջ 191:
129 Նույն տեղում, էջ 192:
130 Նույն տեղում, էջ 193:
131 Նույն տեղում, էջ 148:

կացական կողմը, սակայն վերլուծություններում անհրաժեշտության դեպքում տարբերակիչ արժեք են ստանում քերականական հատկանիշները։ Ասենք՝ բայը սահմանվում է «բառ մը, որ ներգործությունը կամ կիրքը կնշանակե ժամանակովը, դեմքովը, թվովը»[132]*, բայց նյութի յուրացումը ստուգելու և ամրապնդելու համար դրված հարց ու պատասխաններում Ավետիքյանը բացատրում է, որ բառի միմիայն գործողություն ցույց տալը («ենթգործություն») բավարար չէ բայ լինելու համար, բայը պիտի ունենա նաև ժամանակի և դեմքի հատկանիշներ։ Թեև սրանով բայը և ստորոգյալը շարունակում են նույնացվել, բայց բայանունները տարբերվում են բայից։ Այսինքն՝ «ըլլալ»-ը մնում է բայ, «լինելություն»-ը դառնում է գոյական, քանի որ թեև երկուսն էլ գործողություն են նշանակում, բայց առաջինը ունենում է նաև ժամանակ և դեմք, «իսկ լինելությունը չունի զասոնք»*[133]*։ Ոչ միայն շաղկապը, այլև նախադրությունը սահմանվում և մեկնաբանվում է իր քերականական արժեքով։ Նախադրություններին բնորոշ են համապատասխանաբար ա) չհոլովվելու, բ) այլ բառերի առաջը դրվելու և գ) սրանց հոլովը կամ նշանակությունը փոխելու քերականական հատկանիշները։ Ավետիքյանը մի կողմից՝ ավելորդ է համարում նախադրությունների իմաստային բաժանումը «ժամանակական, տեղական, դասական» և այլ տեսակների, քանի որ, ըստ նրա՝ «Անանկ որոշումները անոնցնե կառնվին, չէ թե նախադրության ուժեն, բացի մեկ քանիեն, ինչպես ետև, վասն և այլն, որոնց համար չէր արժեր զատ զատ բաժանել»*[134]*, մյուս կողմից՝ նախադրության սահմանման մեջ որոշ քերականների կողմից նախդիրների համար իրենց զանազան պարագաներ (իմա՝ պարագայական հարաբերություններ) արտահայտելը իմաստային հիմնական հատկանիշ համարելը դիտում է որպես «փիլիսոփայական», այսինքն տրամաբանական մոտեցում և ոչ թե քերականական։ «Ուրիշ հոռվմարեցի քերթող մ'ալ,— գրում է Ավետիքյանը,— կըսե, որ հայտնե (նախադրությունը,— Հ. Բ.) զհայեցումն միո իրի առ այլ։ Բայց աս մտածմունքը ավելի փիլիսոփայական է, քան թե քերականական»*[135]*։

Խոսքի մասերի քերականական կարգերը («պարագանե-

---

[132] *Նույն տեղում, էջ 274։*

[133] *Նույն տեղում, էջ 147։*

[134] *Նույն տեղում, էջ 115։*

[135] *Նույն տեղում, էջ 101։*

քննելիս, Ավետիքյանը պահպանում է իր վերլուծության պատմականության սկզբունքը. թվարկում է այս կամ այն խոսքի մասի «պարագանեղը» իրենց նախկին անվանումներով և հասկացություններով, ապա տալիս է նրանց ժամանակին և լեզվական արտահայտչական իրական նկարագիրը: Սրանց քննության մեջ հեղինակը մեծապես հետևում է Չամչյանին և իր մյուս նախորդներին:

Անվան կազմությունը քննելով նախկին «ձև» և «տեսակ» անվանումների տակ՝ Ավետիքյանը նախածանցավոր բառերը չոկում է բարդ բառերից՝ առաջինները անվանելով «բուն բաղադրյալ» բառեր:

Անվան հոլովումը քննելիս, հեղինակը զուգահեռներ է անցկացնում հայերենի և հունարենի ու լատիներենի հոլովման համակարգերի միջև, ապա, անդրադառնալով հայ քերականության մեջ հայերենի հոլովների որոշման պատմությանը, գալիս է այն համոզման, որ հայերենն ունի ոչ թե տասը, այլ վեց հոլով միայն: Առաջնորդվելով այն սկզբունքով, ըստ որի առանձին հոլով լինելու համար «պետք է մեկ մը անունը փոխվի իր ծայրը կամ սկիզբը, մեկմամ՝ փոխվելով առնու տարբեր եղանակ մը նշանակելու իրմով, իր մեջը և ո՛չ թե ուրիշ բառի նոր նշանակություն ավելցնե վրան»[136], Ավետիքյանը հայերենի մեջ ընդունում է վեց հոլով միայն՝ ուղղական, սեռական, տրական, հայցական, բացառական և գործիական:

Ի տարբերություն Չամչյանի, ս, դ, և հոդերը այլևս դերանվան տեսակ չի համարում: Սրանք քննում է դերանունից հետո առանձին վերնագրով և բացատրում է, որպես բառերի վերջից ավելացվող գրեր, որոնք էական (անձնական), ստացական և ցուցական դերանունների նման բառին դեմքի կամ կարգի իմաստ են վերագրում:

Թվական անունները ու դերանվան մի քանի տեսակներ շարունակում է դնել «միջական անուններու» մեջ:

Չամչյանի նման Ավետիքյանը ըղձական առանձին եղանակ չի համարում, այլ միացնում է ստորադասականին: Ընդունում է երեք ժամանակ՝ ներկա, անցյալ, ապառնի, ապա անցյալի մեջ տեսնում է երկու «աստիճանի» անցյալ ժամանակներ՝ անցյալ անկատար և անցյալ կատարյալ. այսպիսով, ստացվում է չորս

---

136 Նույն տեղում, էջ 250:

ժամանակ։ «Սահմանական եղանակը,— գրում է Ավետիքյանը,— չորսն ալ ունի, անեղևույթը հին չունի, հրամայական և ստորադասականը երկուք ունին, այսինքն ներկա, ապառնի»[137]։

Նախորդ քերականների կողմից առանձնացված հարակատար և գերակատար ժամանակները, որպես հունաբան և լատինաբան ծառայ նորամուծություններ, հանում է բայական հարացույցից։ Հետևաբար Ավետիքյանը բայի ժամանակ ասելով հասկանում է միայն պարզ ժամանակաձևերը։

«Անեղևույթ» եղանակի մեջ Զամչյանի նման դնում է անորոշ դերբայի և՛ ուղիղ, և՛ հոլովված («շարժել, շարժելոյ, շարժելով») ձևերը և սրա համար էլ ժամանակային ձևեր չի ընդունում։

«Թե որ ընդունելութիւնով և էական բայով ձևացածը զատ խոնարհում և ժամանակ սեպելու ըլլանք նե,— գրում է նա,— տահա այլ շատ ժամանակներ կրնայինք ավելցներ ո՛չ միայն սահմանական և ստորադասական եղանակին, հապա անեղևութին ալ։ Վասն զի կրնա ըսվիր, շարժեալ եղեալ էի. շարժեալ եղէց կամ լինիցիմ, շարժեալ լե՛ր, շարժեալ լինելով. կամ շարժելոց եմ, էի, լեալ էի, կամ իցեմ. շարժօղ եղէց, կամ եղեալ եմ, կամ եղեալ էի. շարժեալ եղև, լինիցի և այլն»[138]։

«Անեղևույթի» կամ անորոշ դերբայի մեջ Ավետիքյանը տեսնում է սահմանական և ստորադասական ապառնու ժամանակային նշանակություն, բայց միաժամանակ նկատում է, թե «ընդհանրապես գիտնալու է, որ անեղևույթ բայը գոյական անունի ուժ ունի»[139]։

Անփոփոխական խոսքի մասերը քննում է բառակազմական և իմաստային խմբավորմամբ։ Ուշադրություն է դարձնում սրանց խոսքիմաստային փոխանցումների և բազմիմաստության երևույթներին։ Ընդունում է հոլովվածներ և հոլովառու նախադրություններ, որոնք համապատասխանաբար անվանում է նաև նախդիր և նախադրություն։ Նախադրություն չեն կարող լինել հների մոտ հիշատակվող շար, կից, փոխ, վեր և նման բառերը, որոնք ունենում են նաև բառային անկախ գործածություն և հոլովվում ու բաղադրվում են, ինչպես՝ շարի, շարին, շարագիր, մարգարտաշար, կըցորդ, գործակից, փոխան, փոխանորդ և այլն։ Այսպիսով, Սեբաս-

---

[137] Նույն տեղում, էջ 286։

[138] Նույն տեղում, էջ 287։

[139] Նույն տեղում, էջ 195։

տացու նման Ավետիքյանն էլ գտնում է, որ անվան հոլովված ձևերը «նախադրություն» համարվել չեն կարող։

Խոսքի մասերի շարահյուսությունը Ավետիքյանը քննում է իր քերականության երկրորդ գրքում «Յաղագս բաղադրութեանց մասանց բանի» վերնագրի տակ, որտեղ հեղինակը զանազանում է «բաղդասության» երեք տեսակ՝ ա) «կախումն միոյ» մասն բանի զմիւսէն», այլ կերպ՝ «կախումն մասանց բանի» բ) «համաձայնութիւն մասանց բանիւ» և գ) շարադրութիւն «կամ «շարագրութիւնս»։

Նախադասության անդամների շարահյուսական հարաբերությունների քննությունը կատարում է մասամբ խոսքի մասերին տրվող, իսկ մասամբ էլ այլ անվանումներով։ Խոսքի մասերի կախման հարաբերությունների քննությունը կատարում է «ածական (իմա՛ որոշիչ), հատկացուցիչ, բացահայտիչ, խնդիր և «տեր բայի» (իմա՛ ենթակա) միավորներով, որոնց հարաբերակցվում են գոյական հատկացյալ, բացահայտյալ, խնդրառու, բայ անվանումներն ու սրանց համապատասխան շարահյուսական հասկացությունները։

Ավետիքյանի այս նշանավոր քերականությունը ուշադրության արժանի է նաև լեզվի տեսակետից։ Սա գրաբարի առաջին քերականությունն է, որի առաջին «գիրքը» կամ ամբողջ ձևաբանությունը գրված է արևմտահայ գրական աշխարհաբարով, իսկ շարահյուսության մասը՝ պարզ և մատչելի գրաբարով։ Հեղինակի մեկնաբանությամբ այդ արվել է ուսուցողական նկատառումով։

Մինչև Արսեն Բագրատունու նշանավոր քերականության հրատարակվելը Զամչյանի և Ավետիքյանի քերականությունների սկզբունքներով ու հետևությամբ ստեղծվեցին գրաբարի հայերեն և այլալեզու մի շարք քերականություններ։ Այդ քերականական աշխատությունները ինչպես հայերենի քերականության, այնպես էլ նրա խոսքի մասերի տեսության պատմության մեջ բերում են առանձին նորություններ մի քանի, որոնց համառոտ ակնարկը տալիս ենք ստորև։

3. Այլ բեռականներ.— Մեսրոպ Տեր-Հարությունյանը *1808* և *1826* թվականներին Պոլսում հրատարակել է քերականական երկու աշխատություններ։ Առաջինը վերնագրված է «Քերականութիւն համառօտ» պարզութեամբ յաշխարհաբառ լեզուէ ի գրաբառն հետզհետէ յառաջացուցեալ ի դիւրութիւն ուսանողաց», իսկ երկրորդը, որ սրանից ավելի ընդարձակ և խորացված աշխատանք է՝

գրված գրաբարով, կոչվում է «Քերականութիւն հայոց լեզուի, նորոգ քննութեամբ յօրինեալ ամբողջ գրաբար, յաւելեալ ի վերջն և զհամառօտութիւն իմն աշխարհաբառ ի դիւրութիւն աշակերտելոց»։ Վերջին աշխատության մեջ հեղինակի կողմից առանձնապես ընդգծվում են տրամաբանական և քերականական կարգերի ընդհանրությունները։ Այս երկուսն էլ, ուսումնասիրության առարկա ունենալով «զբանն, յածին ի հրահանգ նորին. միևնՙ դատարակէ ուղիղ կարգել զբանն և միւսնՙ ճանաչել զճշմարտութիւն նորա, ուստի և եզերք և կամ բառք նոյն յորջորջմամբ և նոյն նշանակութեամբ աւանդին յերկաքանչիւր գիտութեան», ուստի՝ մեկը քերական չէ, եթե նաև քաջ տրամաբան չէ և ընդհակառակն. ահա թե ինչու «քերականութիւն կոչի դուռն բանալի գիտութեան»[140]։

Ձևաբանորեն խոսքի մասերը շատերի նման բաժանում է «հոլովելի» և «անհոլով» խմբերի։ Շարահյուսության մեջ «հոլովելի» խոսքի մասերը բանժանվում են երկու ենթախմբի՝ ա) «անուն, դերանուն, դերբայ և ընդունելութիւն», որոնք անվան պաշտոն են վարում և են «նշանակիչ էութեամբ». բ) «բայ, ընդունելութիւն և բայանուն», որոնք են «նշանակիչ ներգործութեան»[141]։ *Սրանց կապակցությունից «խոսքի», ավելի ճիշտ՝ բառակապակցության մեջ առաջանում են խոսքի մասերի վեց զույգ պաշտոններ՝ ա) «տէր բայի և բայ», բ) խնդիր և խնդրառու», գ) «յայտնիչ և յայտնեալ», (իմա՛ բացահայտիչ և բացահայտյալ), դ) «յատկացուցիչ և յատկացեալ», և «ածական և գոյական» (իմա՛ որոշիչ և որոշյալ), ը) «յարաբերական և յարաբերեալ»։*

Բայ, ածական, գոյական *խոսքիմասային անվանումների կողքին որոշակի հատկացությունները գործածվում են շարահյուսական անվանումներ, որոնց միջև, ինչպես նկատում է Ջահուկյանը, հաստատվում են երկակողմ հակադրություններ, ու որքան հրատակ են դառնում խոսքի մասերի գործառական-շարահյուսական հատկանիշները, այնքան որոշակի են դառնում խոսքի մաս և նախադասության անդամ հասկացությունների տարբերությունները։*

Ի դեպ, Տեր-Հարությունյանը կանոններ է սահմանում ոչ միայն այն մասին, թե ո՛ր խոսքի մասը ի՛նչ պաշտոններում է գործածվում, այլև՝ այն մասին, թե ո՛ր խոսքի մասերը ի՛նչ պաշտոններում չեն կարող գործածվել։

---

140 *Քերականութիւն հայոց լեզուի, 1826, էջ ԻԷ-ԻԸ։*

141 *Նույն տեղում, էջ 176։*

Խոսքի մասերի և սրանց վարած պաշտոնների, այսինքն նախադասության անդամների փոխհարաբերության քննությունը Տեր-Հարությունյանից մի քայլ առաջ է անցնում Միխայել Սալլաեթյանը: 1827-ին Մոսկվայում լույս տեսած «Քերականութիւն գրաբառ լեզուիս Հայոց» աշխատության մեջ խոսքի մասերի պաշտոնների և նախադասության անդամների «առնչությունները» քննությունը հասցնում է «զգալի լրիվության»[142]: Նա տարբերում է խոսքի մասերի հետևյալ պաշտոններն ու հարաբերությունները. ա) «գոյական»—«ածական» (իմա՛ որոշյալ—որոշիչ), բ) «ենթական»—«դիմավոր բայ», գ) «դիմավոր բայ»—«մակբայ» (իմա՛ պարագա), դ) «խնդրող»—«խնդրյալ» և «բացահայտող»—«բացահայտիչ», զ) «հատկացուցող»—«հատկանալի», է) «հարաբերող»—«հարաբերյալ», ը) «դիմորոշ հոդ»—«դիմորոշելի», թ) «շաղկապող», ժ) «միջանկյալ բառ»:

Ինչպես տեսնում ենք, այս «պաշտոնները» միշտ չէ, որ համընկնում են նախադասության անդամներին, սակայն նախադասության կառուցվածքը համարյա ամբողջովին բնորոշված է, իսկ պաշտոնների համար էլ հիմնականում օգտագործված են տարբեր անվանումներ:

Սալլանթյանի խոսքի մասերի շարահյուսական քննությունը, կարծես թե, Աբեղյանի քննության նախատիպն է: Նա նախադասության կազմող բառերը քննում է՝ ա) մե՛կ որպես «անդամք խոսից» կամ նախադասություն կազմող ութ խոսքի մասեր, այսինքն «մասունք բանի», բ) մե՛կ որպես կապակցությունների անդամներ կամ պաշտոններ, այլ կերպ՝ նախադասության անդամներ, գ) մե՛կ էլ որպես նախադասության անդամների փոխհարաբերությունները («առնչությունները») կրողներ կամ իրականացնողներ:

Խոսքի մասերի ձևաբանական քննության մեջ Սալլանթյանի բերած մի քանի նորությունները նախ հիշատակելի է ստորադասականի ձևերը սահմանականին միավորելու և գրաբարի համար միայն սահմանական և հրամայական եղանակներ զանազանելու առաջարկն ու այդ հիմնավորելու փորձը: Ապա ավելի ուշագրավ են հայ քերականության մեջ առաջին ապտամ «անեղևույթը» (անորոշ դերբայը) եղանակների շարքից հանելը և այն ոչ իբրև բայ, այլ գոյական համարելու նրա ապացույցները: Որո՞նք են այդ ապացույցները. ա) բայը չհոլովվող, գործողությունը դեմքով, թվով,

---

142 Գ. Ջանուկյան, նշվ. աշխ., էջ 387:

ժամանակով և եղանակով ցույց տվող բառ է, մինչդեռ «անեզևությը» հոլովվող է և չունի դեմք, թիվ, ժամանակ և եղանակ. բ) «անեզևությը» իմաստով ընդհանրանում է վերացական գոյականներին, ունի անվան բոլոր «պարագաները», կատարում է անվան պաշտոններ. գ) «անեզևությի» սեռական ենթական «պատշաճաբար բերմաց զատանել և սեպհականէ մխում, զհասարակն մանաւորէ, զանորոշն որոշէ»[143]։

Ջամչյանի և Ավետիքյանի քերականությունների հետևությամբ գրված բազմաթիվ քերականությունների մեջ բավականին լայն գործածություն է ունեցել Վրթանես Զալըխյանի «Քերականութիւն հայկազնեան լեզուի» աշխատությունը, որ լույս է տեսել 1827 թ. Վենետիկում և վերահրատարակվել է ինն անգամ։ Խոսքի մասերի տեսության մեջ Զալըխյանն իր նախորդների համեմատությամբ որևէ նոր բան չի ավելացնում։ Նրա քերականության հաջողությունը պայմանավորված է իր պարզ կառուցվածքով և մատչելիությամբ։

Մեզ հետաքրքրող հարցերի տեսակետից ավելի կարևոր է այդ քերականության 1885 թ. հրատարակությունը, որը մշակված և լրացված է Այտընյանի կողմից և վերնագրված է՝ «Հ. Վրթանեսի Զալըխեան, Քերականութիւն հայկազնեան լեզուի, հանդերձ փոփոխմամբ և յաւելուածովք, աշխատասիրեալ ի Հ. Արսէնէ Վ. Այտընեան, Վիեննա, 1885»։ Այս աշխատության մեջ արտահայտված առանձին ուշագրավ դատողություններ, որոնք ներմուծված են Այտընյանի կողմից, գտնում ենք նաև նրա նշանավոր «Քննական քերականութեան» մեջ, ուստի կրկնությունից խուսափելու համար Զալըխյանի քերականութեան այդ տարբերակին ևս չենք անդրադառնում։

Անգլիացի հռչակավոր բանաստեղծ Բայրոնի խրախուսանքով Մխիթարյան միաբաններից Հարություն Ավգերյանը 1817 և 1819 թվականներին գրում է հայերենով՝ անգլերենի և անգլերենով՝ հայերենի քերականություններ։ Նրա անգլերենով գրած գրաբարի քերականությունը պրոֆ. Էդ. Աղայանի գնահատմամբ «չնայած իր փոքր ծավալին, կարելի է գրաբարի լավ ձեռնարկներից մեկը համարել»[144]։ Ինչ վերաբերում է Ավգերյանի «Քերականութիւն անգղիա-

---

[143] «Քերականութիւն գրաբառ լեզուի Հայոց» հատոր Ա. փոքր քերականութիւն, 1827, ի Մոսկով, էջ 491։ Համմտ. նաև Գ. Ջանուկյան, նշվ. աշխ., էջ 384։

[144] Է. Ռ. Աղայան, Հայ լեզվաբանության պատմություն, հատոր 1, էջ 140։

կան և հայերէն» «Grammar English and Armenian» աշխատությանը, որը տվյալ դեպքում մեզ ավելի է հետաքրքրում, ապա այն ուշագրավ է նրանով, որ այստեղ անգլերենի քերականությունների կանոնով ածականն առանձնացվում է գոյականից, որպես ինքնուրույն խոսքի մաս։ Որպես հայերենով գրված անգլերենի քերականություն, նրանում գոյականի և ածականի խոսքիմասային տարբերակումն «անունից» հայերենի խոսքի մասերի պատմության համար կարող էր և հետաքրքրություն չներկայացնել։ Սակայն Ավգերյանի այդ քերականությունը, ըստ էության, «անգղիական և հայերեն» զուգահեռ քերականություն է։ Ավգերյանի քերականության մեջ ածականը այն խոսքի մասն է, որ «յաւելեալ ի գոյական՝ յայտնէ զորպիսութիւն նորին»[145], մինչդեռ նրանից տարիներ անց Գարագաշյանի[146] «ածականը» նաև «ածական թվական» է։ «Ածական կըսուին այն բառերը, որ գոյականին որպիսութիւնը, այսինքն՝ ինչպես ըլլալը, և կամ քանակութիւնը, այսինքն՝ քանի հատ ըլլալը, կը ցուցնեն» [147], գրում է Գարագաշյանը։ Այնպես, որ, եթե Ավգերյանը ածականն ու գոյականը առանձին խոսքի մասեր է ճանաչում, լռության մատնելով թվական անվան խոսքիմասային պատկանելության հարցը, անգլերենի քերականության համար անհետևանք չի մնում։ Ա. Այտընյանը հավանաբար նաև Ավգերյանին նկատի ուներ, երբ գրում էր, թե «Կան քերականներ, որ զատ մասն-բանի կը համարին գոյականը և զատ մասն-բանի ածականը»[148]։

Հայերենի այլալեզու քերականություններից խոսքի մասերի պատմության տեսակետից ուշագրության արժանի է հայերենի համեմատական ուսումնասիրության հիմնադիրներից մեկի՝ Հայնրիխ Պետերմանի հայոց լեզվի լատիներեն քերականությունը, որ լույս է տեսել 1837 թ. Բեռլինում՝ «Grammatica linguae armeniacae» վերնագրով։

Շրյոդերի նման Պետերմանն էլ անփոփոխ խոսքի մասերը

---

145 Հ. Ավգերյան, նշվ. աշխ., էջ 17։

146 Հ. Օհանյանն ածականին նվիրված իր մենագրության մեջ գրում է. «Ա. Մ. Գարագաշյանը առաջինն էր, որ ածականն առանձնացրեց «անուն» խոսքի մասից և դիտեց իբրև ինքնուրույն խոսքի մաս». տե՛ս Հ. Ա. Օհանյան, Ածական անունը ժամանակակից հայերենում, 1962, էջ 31։

147 Ա. Մ. Գարագաշյան, Դպրություն կամ նոր քերականություն հայերեն, Կ. Պոլիս, 1880, էջ 30։

148 Այտընյան, Քննական քերականություն..., 1866, էջ 26։

միավորում է «մասնիկներ» («particulae») վերնագրի տակ և քննում միասնաբար։ Ի տարբերություն իր բոլոր նախորդների՝ նա «ընդունելիությունը» հանում է խոսքի մասերի թվից և մտցնում է բայ խոսքի մասի մեջ՝ այն համարելով բայի առանձին՝ 5-րդ ենթանակ։ Ավետիքյանի նման ընդունում է վեց հոլով։ Ամբողջացնում է դերանունների ցանկը՝ նրա տակ միավորելով մինչև այդ «միջակ անուններին» և մակբայների մեջ դասվող բոլոր դերանունները։ Տարբերում է դերանունների տասը տեսակ՝ 1. pronomina personalia («անձնական դերանուններ»)՝ ես, դու (մեք, դուք). 2. pronomina possessiva («սեռացական դերանուններ»)՝ իմ, ֆո, իւր, մեր, ձեր. 3. pronomina demonstrativa («ցուցական դերանուններ»)՝ սա, դա, նա, այս, այդ, այն, սոյն, դոյն, նոյն. 4. pronomina interrogativa («հարցական դերանուններ»)՝ ի՞, ո՞, ո՞վ. 5. pronomen relativum («հարաբերական դերանուն»)՝ որ. 6. pronomina indefinita («անորոշ դերանուններ»)՝ ոք, ոմն, իք, իմն. 7. pronomen difinitum («որոշյալ դերանուն»)՝ ինքն. 8. pronomina reciproca («փոխադարձ դերանուններ»)՝ միմեանց, իրեարց. 9. pronomina collectiva («հավաքական դերանուններ»)՝ այլ, միւս, երկաքանչիւր, իւրաքանչիւր, ամենիւր (անցնիւր), ամենայն, ճամայն, բոլոր, բոլորեքան, բոլորեցին, ճամակ, բնաւ, ոչչոյն. 10. pronomina correlativa («համահարաբերական դերանուններ»)՝ այսպէս, այսքան, այսչափ, որքան և այլն, որոնք կազմում են այս, այդ, այն, նոյն, որ դերանունների և պէս, քան, չափ անունների բաղադրամբ։ Սրանք ունեն «մակբայների կամ դերանունների իմաստ», իսկ պէս-ի վրա ի ավելանալով ստացվում են ածական դերանուններ՝ այսպիսի, որպիսի և այլն[149]։

4. Առսեն Բագրատունի.— Հայերենի ինքնատիպ քերականությունների և ընդհանրապես գրաբարի քերականությունների գագաթնակետը Առսեն Բագրատունու քերականությունն է։ Բագրատունին հրատարակել է քերականական մի քանի աշխատություն։ Առաջինը «Քերականութիւն գաղղիերէն լեզուի» (1821 թ.), իսկ երկրորդը «Քերականութեան տարերք» (1846 թ.) գրաբարի դպրոցական համառոտ ձեռնարկն էր։ Հեղինակի լեզվական հայացքների և հայերենի կառուցվածքի ընդարձակ շարադրանքը գտնում ենք նրա 1852 թ. հրատարակած «Հայերէն քերականութիւն ի պէտս գարգացելոց» մեծածավալ աշխատության մեջ։

---

[149] Տե՛ս Գ. Բ. Ջահուկյան, նշվ. աշխ., էջ 551—553։

Բագրատունու նպատակն է «առաւել զլեզուն ուսուցանել ըստ կարի չափ ևեթ և ոչ ոք զքերականականն գիտութիւն»։ Այս պատճառով էլ նա իր քերականութիւնը վերջնականապես մաքրում է ռացիոնալիստական քերականութիւնների «ընդհանուր քերականութեան և բանական արուեստին» վերաբերող տեսական դատողութիւններից և դրանք փոխարինում է լեզվական նյութի սպառիչ վերլուծութեամբ։

Բնութագրելով իր քերականութեան կառուցվածքը՝ Բագրատունին գրում է. «Յառաջին գիրս զնիւտական գիտելիս մասանց բանին կարգեմք բովանդակ, թէ զի՛նչ են, զի՛ նշանակեն և զիարդ փոփոխելիք ըստ պէտս պէտս. յերկրորդն՝ միայն զպարզ և զընտիր ևեթ շարադրութիւն նոցին. յերրորդին՝ զձևաւոր և զգերազանց շարագրածութիւնսն. ի չորրորդումն՝ զուղղագրութիւն»[150]։ Այսպիսով, առաջին գիրքը, որ վերնագրված է «Մասունք բանի կամ խօսից», տալիս է խոսքի մասերի ձևաբանական քննութիւնը, իսկ երկրորդ և երրորդ գրքերը՝ խոսքի մասերի շարահյուսական քննութիւնը։ Խոսքի մասերի ձևաբանական վերլուծութիւնը կատարելիս, Բագրատունին չի կրկնում իր նախորդներին։ Խոսքի մասերի գործնական և տեսական քննութիւնը չի առանձնացնում իրարից և քանի որ խուսափում է տեսական ավելորդ մեկնաբանութիւններից ու դատողութիւններից, ուստի տալիս է խոսքի մասերի սահմանումը և նրանց սեռ-տեսակային դասակարգութիւնը՝ աշխատելով պատասխանել երեք հարցի՝ «զի՛ են, զի՛նչ նշանակեն և զիարդ փոփոխին ի պէտս պէտս»։ Փոփոխական խոսքի մասերը ներկայացվում են իրենց հարացուցային ձևերի համարյա բոլոր տարբերակներով, իսկ անփոփոխները՝ բառակազմական առանձնահատկութեամբ և ամբողջական բառացանկով։ Խոսքի մասերի իմաստային և քերականական օրինաչափ հատկանիշներն ու կարգերը թվարկվում են որոշակի հաջորդականութեամբ, ապա «զիտելիք» խորագրով տրվում են լրացուցիչ տեղեկութիւններ, մեծ մասամբ՝ շեղումների, այլաձևվութիւնների, կիրառական փոխանցումների և այլոց մասին։ Նույն սկզբունքով շարադրված է խոսքի մասերի շարահյուսութիւնը, բայց այս անգամ երկու տարբեր գրքերում։ «Շարադրութիւն բանի կամ խօսից պարզ և ընտիր» վերնագրի տակ տրված են ճիշտ և կանոնավոր նախադասութիւն կազմող կամ միտք ձևակերպող

---

150 Հայերէն քերականութիւն ի պէտս զարգացելոյ, Վենետիկ, 1852, «Յառաջաբան»։

կանոնները կամ այլ կերպ՝ «գլխաւոր և սովորական օրէնք շարադրութեան», իսկ «Ձևաւոր և գերազանց շարադրութիւն կամ քերականական ձևք» վերնագրի տակ տրված են բոլոր այլաձևությունները, հիմնական շարահյուսական կանոններին զուգահեռ գործող մյուս կանոններն ու շեղումները, որոնք պիտի հագուրդ տան «բազմատեսչիկ ախորժակի զարգացելոցն դասու, որ ընդ խոր բարիս հայկականս բարբառոյ յառաւելագոյնսն նկրտիցին ի հռետորական և քերթողական մարզս»[151]*: Խոսքի մասերի բառակազմական առանձնահատկություններին անդրադառնում է նաև գրքին կցված հավելվածում «Յաղագս բարդութեան բառից» և «Յաղագս ածանցմանց բառից» վերնագրերի տակ:*

Բագրատունին խոսքի մասերը տարբերակում է ըստ խոսքի կազմության մեջ կատարած իրենց դերի, դրա համար էլ նա խոսքի մասերը անվանում է «մասունք բանի կամ խօսից»: Խոսքի մասերը տարբերակող և սրանց քննությունը որոշող հատվածում ասում է. «Բառից ոմք ազգ են, որ գան մտանեն ի կազմութիւն խօսից և նմին իրի ասին մասունք բանի. և են անուն, դերանուն, նախդիր, բայ, դերբայ, մակբայ, շաղկապ, ձայնարկութիւն, զորս տեսցուք մի ըստ միոջէ թէ ո՛ր են, ո՛ր՝նչ նշանակեն և ո՛ր՝դ փոփոխին ի պէտս պէտս:

Յոմն մասանց բանի չորք միայն փոփոխելիք են, անուն, դերանուն, բայ, դերբայ. և չորք անփոփոխ ամենևին, նախդիր, մակբայ, շաղկապ, ձայնարկութիւն»[152]*:*

Ինչպես տեսնում ենք, պահպանելով խոսքի մասերի ավանդական դարձող համակարգը՝ Բագրատունին «ընդունելությունը» փոխում է «դերբայ», իսկ «միջարկությունը»՝ «ձայնարկություն» անվանումներով, հոդը չի համարում խոսքի մաս և նախորդների նման խոսքի մասերը բաժանում է «փոփոխելիք» և «անփոփոխ» խմբերի:

Անունն իբրև խոսքի մաս այսպես է բնութագրվում Բագրատունու կողմից. «Առաջին ազգ բառից ասի Անուն, զի են կամ իսկ և յատուկ անուանք մարդոց և տեղեաց, որպէս Տիտան, Հայկ, Մարիամ, Աստղիկ, Աթէնք, Հռովմ, և կամ են հասարակ անուանք իրաց և նշանակեն՝ թէ զինչ կամ զինչպիսի ինչ են: Որք զինչ լինելն նշանակեն, կոչին գոյական կամ էական. և որ զինչպիսի լի-

---

151 Նույն տեղում:

152 Նույն տեղում, էջ 5:

նեին, ածական կամ վերադիր, մակդիր, զի ածին կամ դնին ի վերայ գոյականին. որպէս՝ մարդ, զարդ գոյական են. բարի, գեղեցիկ ածական են. զի ասի մարդ բարի, գեղեցիկ զարդ»[153]։

Անվան այս խոսքիմաստային բնութագրման մեջ նախ ուշագրավ է այն, որ Բագրատունին, ի տարբերություն իր բոլոր նախորդների, անունը բաժանում է «հատուկ» և «հասարակ» և ոչ թե «հատուկ», «հասարակ» և «հավաքական» կամ «բազմաձականուն» տեսակների։ Հավաքական համարված անունները (ժողովուրդ, ամբոխ, գունդ, նախիր և այլն), իրոք, ո՛չ իմաստային և ո՛չ էլ քերականական հատկանիշներով չեն կարող հակադրվել հատուկ և հասարակ անուններին և հասարակ անուններից առանձնանալ որպես առանձին իմաստային խումբ։ Այս տարբերակումը կարող էր առաջանալ անվան թվային հատկանիշի քննության ժամանակ միայն, երբ հավաքականները կհակադրվեին եզակի և հոգնակի գոյականներին, այն էլ ոչ իբրև հավասարարժեք հակադրություն։

Դարձյալ ի տարբերություն իր նախորդների՝ Բագրատունին աչառեղ անվան իմաստային ընդհանուր սահմանում չի տալիս։ Անունները իրերի ինչ կամ ինչպիսի լինելը նշանակող բառեր են, ըստ որի բաժանվում են գոյական և ածական տեսակների։ Այս տարբերակումն էլ հիմնված է ոչ այնքան անունների բառային նշանակության վրա, որքան նրանց շարահյուսական գործածության։ Ածականները գոյականների վրա դրվող, ուրեմն ոչ թե «բնութեամբ» այլ «ի դրութենէ սովորութեան» նրանցից տարբերվող բառեր են. «Թէպէտ և անունն յերկուս դասս որոշի, ի գոյական և ածական, բայց քանզի չիք ինչ բնութեամբ ի բառսն, այլ դրիւ է ամենայն, վասն որոյ ի դրութենէ սովորութեան երբեմն մի նոյն անուն գոյական է և ածական»[154]։

Վերջապես, անվան՝ «ինչ կամ ինչպիսի» լինելը ցույց տալը նրա շարահյուսական գործածությամբ պայմանավորելուց և ըստ այդմ՝ ածականը գոյականից տարբերելուց բացի, Բագրատունին անունների՝ առարկայի «զինչ կամ զինչպիսի ինչ» լինել ցույց տալու հատկությունը անմիջապես կապում է ոչ թե հատուկ, այլ հասարակ անունների հետ։ «... կամ են հասարակ անուանք իրաց,— գրում է նա,— և նշանակեն՝ թէ զինչ կամ զինչպիսի ինչ

---

153 Նույն տեղում, էջ 6։

154 Նույն տեղում, էջ 37։

են»։ Հատուկ անունները, իրոք, լոկ անվանումներ են և նրանց ինչ կամ ինչպիսի լինելը ցույց չեն տալիս։

Անվան թվի, հոլովի և հոլովման հատկանիշների քննության մեջ Բագրատունին հասնում է լեզվական նյութի լիակատար ընդգրկման և կանոնարկման։ Ավետիքյանի հետևությամբ ընդունում է վեց հոլով և հոլովական իմաստի և ձևի իր լեզվական ըմբռնմամբ հիմնավորում է, որ լատինաբան քերականների հորինած հոլովները չկան հայերենում։ Հոլովը համարելով բառի վերջավորությամբ ձև՝ նա ուղղականը նույնպես հայերենի համար իսկական հոլով չի համարում։ Այս մասին Բագրատունին գրում է։ «Այս փոփոխմունք վերջից անուան կոչին հոլովք և են հինգ միայն զանազան վերջահոլովք։ Ուղղական՝ որ չէ հոլով, այլ պարզ անուն. ուստի ասի և անուանական»[155]*։*

Հոլովները որոշում է անունների սեռական, գործիական, մասամբ նաև բացառական հոլովներում ունեցած տարբերություններով և այստեղ էլ հասնում է նյութի սպառիչ դասակարգման։

Թվականների հետ «միջակ անվան» տակ է դնում հարցական և անորոշ դերանունները։ Վերջիններիս մասին հեղինակը գրում է. «Միջակ և անորոշ ասին անուանք ինչ գոյականք և ածականք իբրև ընդ մէջ իմն անուան և դերանուան, որք ոչ նշանակեն յայտնի ինչ որոշեալ, այլ անյայտ և տարտամ»[156]*։*

Դերանունները սահմանում է դեմք կամ կարգ ցույց տալու, ապա անվան փոխարեն գործածվելու հատկանիշով և ըստ շարահյուսական գործածության դասակարգում է՝ ա) «էական կամ գոյական դերանուանք» և բ) «ածական դերանուանք» խմբերի։ «Դերանուն և փոխանուն են բառք, որ դէմս կամ կարգ ինչ յայտ առնեն և ի տեղի անուանց դնին առ ի չկրկնելոյ զայնս։ Կէս գոյական են և այլք ածական»[157]*։ Գոյական դերանունների մեջ դասում է ես, դու, (մեք, դուք), իմն (իմեանք) իւր (իւրեանք) անձնականները, սա, դա, նա (սոքա, դոքա, նոքա) ցուցականները և որ հարաբերականը։ Ածական դերանուն է համարում այս, այդ, այն (այսք, այդք, այնք, այսոքիկ, այդոքիկ, այնոքիկ), սոյն, դոյն, նոյն (սոյնք, սոքին և այլն) ցուցականները և իմ, ձո, ձոյ, մեր, ձեր, իւր, սոքա, մերայինք և այլ սեռացականները։*

---

155 *Նույն տեղում, էջ 6։*

156 *Նույն տեղում, էջ 62։*

157 *Նույն տեղում, էջ 85։*

«Դիմորոշ յօդք» վերնագրի տակ դերանուններից հետո առանձին քննում է ս, դ, և հոդերը, որոնք ծագումով համարվում են դերանունների «արմատք կամ տարերք», իսկ նշանակությամբ հավասարեցվում են անձնական, ստացական և ցուցական դերանուններին:

Նախդիրը սահմանում է իր հոլովակազմիչ դերով և, ի տարբերություն մյուս խոսքի մասերի, ոչ թե բառ է համարում, այլ անվան և դերանվան մաս կամ «տառ»: Այսպես՝ «նախդիրք մասն են անուանց և դերանուանց՝ իբրև գործիք և միջնորդք հոլովից նոցին և պէսպէս փոփոխմանց: Բուն նախդիր են տառքն և պարզ ձայնքն զ, ի, յ, ց, առ, ընդ, ըստ, որք եդեալ ի սկիզբն անուանց և հոլովից նոցա՝ ի պէսպէս միտս փոփոխեն զնոսա»[158]:

Նախորդների «նախադրություն» անվան փոխարեն Բագրատունին այս խոսքի մասը անվանում է «նախդիր» և իբրև այդպիսի առանձին խոսքի մաս հասկանում է միայն «բուն նախդիրները»: Ուրիշների զանազանած ոչ հոլովակերտ, այլ հոլովառու նախադրություններ, ըստ Բագրատունու, բուն նախդիրներ կամ նախադրություններ չեն, այլ «հոլովական» կամ «անհոլով» գոյականներ ու ածականներ են: Սրանք խմբավորելով «Հոլովառու բառք» վերնագրի տակ՝ նրանց մասին նա գրում է. «Կան և բառք ինչ պարզք և բարդք կամ ածանցեալք, գոյականք և ածականք, անհոլովք և հոլովականք, որք ընդ այլ և այլ հոլովս՝ պէս-պէս միտս տան անուանն»[159]: Սրանք լինում են ոչ միայն նախադաս, այլև ետադաս, «որոց և չմարթի ասել նախադրութիւն»:

Թեև բային տալիս է իմաստային սահմանում, բայց նախորդ բոլոր քերականների նման Բագրատունին էլ բայ ասելով նրա միայն դիմավոր ձևերն է հասկանում: «Բայ է բառ,— գրում է նա,— որ նշանակէ լինել կամ առնել կամ կրել ինչ. որպէս, ես եմ կամ լինիմ, գնամ, սիրեմ, սիրիմ, քաղցնում»[160]:

Բագրատունին բայի քերականական հատկանիշները բնութագրելիս զանազանում է բայերի չորս «սեռ» կամ «ազգ»՝ էական, ներգործական, կրավորական և չեզոք. երեք եղանակ՝ սահմանական, հրամայական և ստորադասական. երեք ժամանակ՝ ներկա, անցյալ և ապառնի, ընդ որում՝ անցյալը լինում է անցյալ

---

158 Նույն տեղում, էջ 95:

159 Նույն տեղում, էջ 157:

160 Նույն տեղում, էջ 131:

անկատար և անցյալ կատարյալ. երեք դեմք և չորս լծորդություն։ Ինչպես տեսնում ենք, ի տարբերություն իր նախորդ քերականների, Բագրատունին «աներևույթ» եղանակ այլևս չի ընդունում։ Նա այս տերմինը չի էլ գործածում։ Սրա տակ հասկացվող անորոշ դերբայը նա միավորում է անցյալ և ապառնի դերբայներին և սրանք միասին անվանում է դերբայ տերմինով, որպես հների «ընդունելության» փոխարեն առնված առանձին խոսքի մաս։

Բայը քննելիս, թեև Բագրատունին բայի առանձնահատկություն է համարում նաև դերբայական ձևեր ունենալը և առանձին պարագրաֆով հաստատում է, որ «են և դերբայ երեք, որ ըստ անուանն փոխանակ բայի դնին», բայց բայի նաև անվանական դեր կատարող այդ ձևերը նա էլ է համարում առանձին խոսքի մաս՝ զուգահեռներ տեսնելով անվան և դերանվան, բայի և դերբայի միջև։ Այսպես՝ դերբայի սահմանման մեջ ասվում է. «Այս ազգ բառից դերբայ ասին. զի անուն են և բայ՝ բազում անգամ փոխանակ բայի վարեալ կամ իբրև զբայ, որպէս դերանունն փոխանակ անուան»[161]։

Բագրատունին անորոշ դերբայն անջատում է եղանակային ձևերից ոչ այն պատճառով, որ նրանում դիմավոր բայաձևերի եղանակային հատկանիշներ (դեմք, թիվ, եղանակ, ժամանակ) չկան, այլ այն պատճառաբանությամբ, որ այդ հատկանիշները նրանում ընդհանուր, անորոշ արտահայտություն ունեն։ Ուստի անորոշը բայի անուն լինելով հանդերձ մնում է նաև որպես բայ։ Նույն էջի (197) տողատակում այդ մասին նա գրում է. «Անորոշդ, որպէս անունն իսկ յայտ առնէ, անորոշաբար զամենայն ժամանակս յայտ առնէ... Ոչ սոսկ անուն լինել՝ որպէս թուեցաւ ումեմն, այլ և տիրապէս դերբայ, անտի իսկ յայտ է, զի յաճախ վարի փոխանակ ամենայն եղանակի և ժամանակի և դիմի, մանաւանդ իբրև ապառնի, հրամայական և ստորադասական... և իբրև բայ առնու ուղղական տէր, տրական և հայցական. և նոյնպէս կայ առ հայցական խնդրով բայից և բնաւ իսկ անկախ զայլմէ բայէ՝ վարի փոխանակ դիմաւոր բայի, յորս եթէ ոչ բայ իցէ, չտանի այլ ինչ բանաւոր մեկնութիւն»։ Այս պատճառով էլ հեղինակը սխալ է համարում իր նախորդների կողմից անորոշի թեք ձևերը «դերբայ», իսկ ուղղականը՝ «աներևույթ» անվանելը, ինչպես նաև՝ անցյալ և ապառնի դերբայները «ընդունելություն» անվանելը, քանի որ վեր-

---

161 Նույն տեղում, էջ 197։

չիններս էլ անորոշի նման ունեն ոչ միայն անվանական, այլև բայական գործածություն և առանձին վերցրած էլ դիմավոր բայի դեր են կատարում։ Այլ է –օղ և լի վերջավորություն ունեցող բայաձևերի հարցը։ Սրանք ըստ Բագրատունու չունեն բայական այն հատկանիշները, ինչ «դերբայ» համարված անորոշը, անցյալը և ապառնին, ուստի և սրանք էլ համարվում են «բայածականներ»։ Այսպիսով, «դերբայ» խոսքի մասից հետո, «Բայածականք» վերնագրի տակ քննվում են -օղ, -իչ, -լի վերջավորությամբ բայաձևերը, որոնց խոսքիմասային պատկանելության հարցը Բագրատունու մոտ բաց է մնում։

Մնացած չթեքվող խոսքի մասերին տրվում են արդեն ավանդական դարձող սահմանումներ. «Մակբայ է բառ անհոլով, որ զհանգամանս նշանակութեան բայի և բայանուան կամ ածականի և կամ այլոյ մակբայի յայտ առնէ, որպէս զտեղի, զժամանակ, զորպէսն, զորքանն, զկարգ, զհարցումն, զհաստատութիւն «ուրացումն, զերկբայութիւն»[162]։ «Շաղկապ է բառ անհոլով, որ կապէ զբառ ընդ բառի կամ մանաւանդ թէ միշտ զբան ընդ բանի»[163]։ «Ձայնարկութիւն են բառք ինչ կամ ձայնք զորս արկանեմք ի խօսս առ ի յայտնել զկիրս հոգւոյ, զբարկութիւն, զերկիւղ, զխնդութիւն, զզարմանս, զիղձս, զհենգնումն, զխրախոյս և այլն։ Ոմանք յատուկ ձայնք են անհոլով և ոմանք անուանք հոլովելիք ևս, որպէս և կէս պարզք և կէսք յօդեալք»[164]։

Տողատակին հեղինակը տալիս է «միջարկությունը», «ձայնարկություն» վերանվանելու անհրաժեշտությունը հաստատող իր բացատրությունը, որը հիմնավորում է «միջարկություն» տերմինի ստուգաբանական իմաստի և ձայնարկությունների իմաստային ու շարադասական առանձնահատկությունների անհամապատասխանությամբ։

Ինչպես վերն ասվեց, Բագրատունին խոսքի մասերի շարադասությունը քննում է իր քերականության երկրորդ և Երրորդ գրքերում։ Խոսքի մասերը և նրանց փոփոխությունները Բագրատունին համարում է խոսքի շինության նյութ և առաղձ, ուստի իր քերականության երկրորդ գրքում քննում է խոսքի մասերի կապակցման և նախադասության մեջ սրանց ուղիղ շարադրման կա-

---

[162] *Նույն տեղում, էջ 213։*

[163] *Նույն տեղում, էջ 230։*

[164] *Նույն տեղում, էջ 239։*

նոնները։ «Ի միտ առեալ զմասունս բանի զփոփոխմունս նոցա իբրև նիւթս և առաղձս շինուածոյ,— գրում է նա,— պարտ է այժմ ուսանել զօրէնս յօդաւորութեան բարբառոյ կամ շինելոյ և յօրինելոյ վիօսս շարադրութեամբ նոցին, որ է ուղիղ կարգումն բառից ի բան»[165]։

Բագրատունին նախադասության անդամների համար շարունակում է գործածել իր նախորդների կողմից գործածվող անվանումներ։ Արդի ըմբռնմամբ ստորոգյալը շարունակում է անվանել «բայ», իսկ ենթական՝ «անուն բայի» կամ «տէր բայի»։ Գոյականի լրացումներից որոշիչը դարձյալ անվանում է «ածական», իսկ որոշյալի համար գործածում է «գոյական» անվանումը, այսինքն որոշիչի և որոշյալի կապակցությունը անվանում է «անուն ածական ընդ գոյականի»։ Գոյականի մյուս լրացումներն անվանում է «յատկացուցիչ» և «բացահայտիչ», որոնց լրացյալները համապատասխանաբար անվանում է «յատկացեալ» և «բացայայտեալ»։ Բայի լրացումները շարունակում է անվանել «խնդիր», ըստ որում՝ ուղիղ և ներգործող խնդիրները կոչում է «խնդիր սեռի», իսկ մնացած լրացումները (անուղղակի խնդիր. և պարագա) անվանում է «բնութեան խնդիր»։ Խնդիր կամ որոշակի հոլովով գոյական լրացում են առնում նաև գոյական բայանունները, բայածականները, բաղդատական աստիճանի ածականները, «միջակ անուններ» անվանված թվականներն ու դերանունները։ Մեր ըմբռնմամբ ստորոգելիական վերադիրը նա ճանաչում է որպես «խնդիր էական բայից»։ Մակբայները պարագայական պաշտոնում շարունակում է անվանել մակբայ։

Իր քերականության երրորդ գրքում, ուր Բագրատունին նպատակ է դրել շարադրել լեզվի ընդհանուր և սովորական օրինաչափությունների դուրս եղող «Զևաւտր՝ արտաքոյ այնց օրինաց և գերազանց» կանոնները, իբրև նախադասության տարբեր պաշտոններում հանդես եկող խոսքի մասերի հետ կապված այդ կարգի շարահյուսական երևույթներ, քննում է՝ ա) զեղչումը, բ) ավելադրությունը, գ) բակառությունը, դ) փոխադրությունը և ե) արտուղությունը։ «Փոխադրութիւն» կամ «փոխանակութիւն» վերնագրի տակ քննված են խոսքի մասերի և քերականական կարգերի փոխանցումները, իսկ «արտուղութիւն» վերնագրի տակ՝ նախադասության անդամների շրջուն շարադասությունը։

---

[165] Նույն տեղում, էջ 245։

Բագրատունու քերականությունը գրաբարի լեզվական նյութի ընդգրկման և սիստեմատիկ վերլուծության մեջ մնաց որպես հաջորդների կողմից չգերազանցված գործ։ Հետագայում աշխարհաբարով գրված գրաբարի քերականություններում բերվում են խոսքի մասերի ու նախադասության անդամների համակարգերին վերաբերող մասնակի նորամուծություններ։ Դպրոցներում գրաբարի ուսուցումը հաջորդում է աշխարհաբարի ուսուցմանը, որը թելադրում է գրաբարի քերականներին՝ իրենց քերականությունները Բագրատունու հետևողությամբ է՛լ ավելի բեռնաթափել տեսական դատողություններից ու սահմանումներից և նրանցում թողնել միայն բուն լեզվի նկարագրությունը։ Խոսքի մասերի տեսության զարգացումը գնալով կապվում է կենդանի, մշտապես փոփոխվող ու զարգացող գրական աշխարհաբարի պատմության հետ։

ԽՈՍՔԻ ՄԱՍԵՐԻ ԱՎԱՆԴԱԿԱՆ ՏԵՍՈՒԹՅԱՆ ՆՎԱՃՈՒՄՆԵՐԻ ԱՄՓՈՓՈՒՄԸ Ա. ԱՅՏԸՆՅԱՆԻ ԿՈՂՄԻՑ

19-րդ դարում հիմնադրվեց համեմատական լեզվաբանությունը։ Լեզուների ուսումնասիրության պատմահամեմատական մեթոդի ստեղծմամբ գիտական լեզվաբանությունը իր հետ բերեց լեզվի կառուցվածքի առավել ճշմարտացի ու հիմնավոր քննության պահանջ։ Կատարվեց էական տեղաշարժ լեզվական հասկացությունների ըմբռնման մեջ։

Այդ դարի առաջին կեսերին սկզբնավորված պատմահամեմատական հայագիտության մեջ անուրանալի մեծություն է Արսեն Այտընյանը, որի հայերենի «Քննական քերականություն...»-ը իրավամբ համեմատվել է պատմահամեմատական լեզվաբանության հիմնադիրներից մեկի՝ գերմանացի Յակով Գրիմմի «Գերմաներենի քերականության» հետ[1]։ Որպես ավանդական և նոր՝ համեմատական քերականության սահմանագլխին ապրարեզ իջած լեզվաբան, Ա. Այտընյանն իր վերոհիշյալ կոթողային աշխատությամբ մեզ ներկայանում է ավանդական քերականագիտության դարավոր փորձի և համեմատական լեզվաբանության նորագույն նվաճումների համադրողի դերով։

Խոսքի մասերի ուսմունքի միջին դարերի հայ քերականական մտքի նվաճումների ամփոփումը գտնում ենք Ա. Այտընյանի

[1] Տե՛ս Բ. Աղայան, նշվ. աշխ., էջ 270։

1866 թ. Վիեննայում հրատարակած «Քննական քերականութիւն աշխարհաբար կամ արդի հայերէն լեզուի» աշխատության մեջ, որը, լինելով աշխարհաբարի քերականական կառուցվածքի ծագման ու պատմական զարգացման ամբողջական ու համակողմանի վերլուծությունը, դրանով իսկ ներկայացնում է նաև գրաբարի քերականական համակարգը, չնայած որ հեղինակը գրաբարի քերականությանը նվիրել է մի առանձին բաժին։ Այստեղ անվանի հայագետը հայոց լեզվի խոսքի մասերը ներկայացնում է հետևյալ համակարգմամբ.

«Բառ կամ մասն-բանի 8 տեսակ է, 4-ը փոփոխական և 4-ն անփոփոխ.

Փոփոխականք.	*Անփոփոխք.*
1. Անուն	*5. Մակբայ*
2. Դերանուն	*6. Նախադրություն*
3. Բայ	*7. Շաղկապ*
4. Դերբայ	*8. Միջարկություն»*[2]։

Փոփոխում ասելով հասկացվում է բառերի ձևափոխությունն ըստ թվի, հոլովման ու խոնարհման։

Իր նախորդների պես Այտընյանն էլ, ինչպես վերն ասվեց, գոյական և ածական անվանումներով կոչում է ոչ թե առանձին խոսքի մասեր, այլ անուն խոսքի մասի տեսակներ, այսպես. «Անունը 2 տեսակ է. գոյական, որ բանին ինչ ըլլալը կը ցուցնե, և ածական, որ բանին ինչպէս ըլլալը կը ցուցնե»[3]։

Գոյական և ածական անուններն էլ իրենց հերթին ունենում են իրենց ենթատեսակները։

Այտընյանն ինչպես գոյականի, այնպես էլ ածականի համար զանազանում է հասարակ անվան և հատուկ անվան տեսակներ. եթե Արտաշես, Կյուրոս, Սոկրատ, Արմավիր, Եփեսոս հատուկ անուններ են, ապա Արտաշիսյան պատերազմներ, Սոկրատյան փիլիսոփայություն, Եփեսացի մեհյան»[4] *և այլ կապակցություններում ընդգծված ածականները հատուկ ածական անուններ են։*

Թվականները համարում է ածական անվան տեսակ։

---

[2] *Ա. Այտընյան, Քննական քերականութիւն աշխարհաբար կամ արդի հայերէն լեզվի, Վիեննա, 1866, էջ 4։*

[3] *Նույն տեղում, էջ 26։*

[4] *Նույն տեղում, էջ 29։*

Այտընյանը թեև դերանունն ընդունում է որպես առանձին խոսքի մաս, բայց անորոշ, որոշյալ, փոխադարձ և հարցական դերանունները «մասնական» կամ «միջական անուն» տերմինավորմամբ, ըստ իրենց գոյականական և ածականական գործածության, շարունակում է համարել գոյականի և ածականի մի առանձին տեսակ։

Այսպիսով, անուն խոսքի մասը Այտընյանի ներկայացրած համակարգում լինում է երկու հիմնական տեսակի՝ գոյական անուն, ածական անուն։ Գոյականն էլ իր հերթին բաժանվում է՝ 1. հասարակ գոյական անուն, 2. հատուկ գոյական անուն, 3. մասնական անուն (գոյական-դերանուն) ենթատեսակների։

Իսկ ածականը բաժանվում է՝ 1. հասարակ ածական անուն, 2. հատուկ ածական անուն, 3. թվական ածական անուն և 4. մասնական անուն (ածական-դերանուն) ենթատեսակների[5]*։ Իհարկե, Այտընյանը այս բոլորի համար գործածում է «տեսակ» անվանումը՝ հաշվի չառնելով տրոհման աստիճանականությունը։*

Դերանվան մեջ միայն մտցվում են անձնական, ցուցական, ստացական և nր հարաբերական դերանունները. թեև ծանոթագրության մեջ հեղինակը հիշեցնում է, թե «կան քերականներ, որ ածական դերանունները դերանվանց կարգը չեն դներ, այլ ցուցական ածական կամ ստացական ածական անվամբ ածականներու մեջ կը դասեն»[6]*։ Միաժամանակ Այտընյանը հիշեցնում է, որ կան քերականներ էլ, որոնք «մասնական անուն» գոյականները «անորոշ դերանուն» անվամբ դերանունների մեջ են դասում*[7]*։*

Ա. Այտընյանի ներկայացրած մյուս երկու «փոփոխական» խոսքի մասերը բայն ու դերբայն են։ Նա, դարձյալ ավանդությանը հետևելով, թեպետև դերբայը անջատում է բայից և փորձում է արդարացնել այդ առանձնացումը, բայց, կարծես, ավելի համոզված է, որ դրանք տարբեր խոսքի մասեր չեն։

«Թեպետ դերբայը բային մեկ եղանակն ըլլալով՝ բայեն զատ մասն բանի համարվելու չէր,— գրում է Անտընյանը,— բայց որովհետև միանգամայն անուն ալ է, հարկ է, որ քերականք իբր անունեն և բայեն զատ մասն-բանի՝ առանձին ճառեն դերբայի վրայ»[8]*։*

---

[5] *Տե՛ս Ա. Այտընյան, նշվ. աշխ., էջ 5—37։*

[6] *Նույն տեղում, էջ 39։*

[7] *Նույն տեղում, էջ 34։*

[8] *Նույն տեղում, էջ 100։*

«Փոփոխական» խոսքի մասերի փոփոխականությունը, ինչպես ասվեց, անունների մեջ՝ պայմանավորված է կամ արտահայտվում է նրանց հոլովմամբ, իսկ բայերի մեջ՝ խոնարհմամբ։ Դերանուններն այս հարցում հրևան են բերում անվան քերականական հատկանիշներ, իբրև գոյական դերանուն կամ ածական դերանուն, իսկ դերբայները՝ մե՛կ անվան, մե՛կ բայի հատկանիշներ, այսինքն՝ կամ օժանդակ բային միանալով՝ խոնարհվում են, կամ առանձին գործածվելով, որպես անուն, հոլովվում են։ Հոլովումն ու խոնարհումը ճանաչելով որպես աշխարհաբարի մի խումբ խոսքի մասերի քերականական կարևոր հատկանիշ՝ Այտընյանը փոփոխական մաս է համարում նաև ածականն ու ածական թվականները, ածական դերանունները և ածական դերբայները, թեև սրանք իրենց ածականական գործածության մեջ աշխարհաբարում մնում են անփոփոխ։ Ա. Այտընյանը լավ գիտի, որ աշխարհաբարի ածականը կամ ածականական գործածության մյուս բառերը, ի տարբերություն գրաբարի ածականի, գոյականին չեն համաձայնում, ուստի չեն փոփոխվում։ Այդ մասին ամեն անհրաժեշտ առիթով, որպես կանոն, Այտընյանը տալիս է քերականական սահմանում. «94. Հոլովելու առեն ածական միշտ անփոփոխ կը մնա, և միայն գոյականը կը հոլովի, թե եզակի և թե հոքնակի թվերուն մեջ» (էջ 26)։ Թվականների մասին գրում է. «119. Ասոնք ամենքն ալ ածական են, անոր համար ալ իրենց գոյականեն առաջ կը դրվին և անհոլով ու անփոփոխ կը մնան։ Երկու ձեռքով. Հինգհարյուր հոգվո. Չորրորդ տարի. Տասնական կտոր, (էջ 32)։ Նույնն է ասում ցուցական և ստացական ածական դերանունների մասին. «Ածական ցուցականներն ըստ կանոնի (94) անփոփոխ կը մնան թե ըստ թվույն և թե ըստ հոլովույն...» (էջ 44)։

Այս բոլոր բացատրություններն, այնուամենայնիվ, չեն խանգարել Այտընյանին ածականն ու ածական համարված թվականները, դերանունները և դերբայները աշխարհաբարում էլ փոփոխվող կամ թեքվող խոսքի մասեր համարելու, և ահա թե ինչու։

Այտընյանին, ինչպես տեսանք, հայտնի է առանձին քերականների՝ ածականը գոյականից տարբեր խոսքի մաս ճանաչելու տեսակետը։ Կարծես թե, ի պատասխան այդ կարծիքի, նա փորձում է ցույց տալ գոյականի և ածականի, որպես անուն խոսքի մասի տարատեսակների, ընդհանրությունը։ Այդ ընդհանրությունն այն է, որ սրանք երկուսն էլ առարկայի անուն են, միայն մեկը բուն անուն է, իսկ մյուսը՝ «պատահական»։ «91. Խոսքի մեջ յիշված

իր մը, կամ առարկա մը երկու կերպով կըրնա անուն առնուլ կամ անվանվիլ— 1. մեյ մը յուր բուն անունովը, ինչպես մարդ, ծառ, խնձոր, աշտարակ. *որով այն բանին ինչ ըլլալը կիմանանք։ Այս իրաց բուն կամ բնական անունը՝ քերականորեն կըսվի գոյական անուն.— 2. մեյ մ'ալ յուր պատահական անվամբը. զորօրինակ եթե մարդուն անուն տամ* բարի. *ծառին ըսեմ* պտղաբեր. *խընձորին՝* կարմիր. *աշտարակին՝* բարձր. *այս անուններով իրենց միայն ինչպես ըլլալը կ'իմանանք։ Այս իրաց էական չեղող կամ պատահական անունը՝ քերականորեն կ'ըսվի* ածական անուն։ — *Ուրեմն 92. Անունը երկու տեսակ է.* գոյական, *որ բանին ինչ ըլլալը կը ցուցնե. և* ածական, *որ բանին ինչպես ըլլալը կը ցուցնե»*[9]։ *Հետևաբար ածականը ոչ միայն առարկայի հատկանիշի անունն է, որ դրվում է նրա անվան վրա, այլև առարկայի «պատահական անունն է», որ կարող է առանձին էլ գործածվել, որպես առարկային տրված ոչ մշտական անուն։ Այս դեպքում արդեն ածականը կարող է հոլովվել, հոգնակի թվով հանդես գալ, հոդ ստանալ (բարձրը, բարձրին, բարձրները և այլն)։*

Այտընյանը ածականի և մյուս ածական խոսքի մասերի (թվական ածական, դերբայ ածական, դերանուն ածական) այս գոյականական կիրառությունը համարում է անուն խոսքի մասի ընդհանուր քերականական հատկանիշը՝ տարբերելով ածականի գոյականական կիրառությունը մյուս «անփոփոխական» խոսքի մասերի ու գոյական դերանունների գոյականաբար գործածվելու երևույթից։ «Որևիցե մասն-բանի,— գրում է Այտընյանը,— կրնա իբրև գոյական անուն գործածվիլ, հոքնակի ըլլալ, հոդ առնուլ, և այլն.— նաև երբեմն քանի մը բառ մեկտեղ. բարեկամն երկրորդ ես մըն է։ Այսիճիներու և զորօրինակներու համախութիւնը շատ անգամ ավելի մթութիւն կու տա խոսքերուդ...»[10]։

Այտընյանն այս հարցում էլ ցուցաբերում է խորաթափանցություն և երբ ածականն ու ածական դերանուններն ու դերբայները դնում է փոփոխվող խոսքի մասերի մեջ, ոչ թե մեխանիկորեն հետևում է գրաբարի քերականությանը, որի մեջ ածականի ու ածական դերանունների թեքվելը կանոնական երևույթ էր, այլ, ինչպես տեսանք, ածականի թեքումը տարբերում է ոչ անուն խոսքի մասերի գոյականական գործածությունից և սրանց թեքումից։

---

[9] *Նույն տեղում, էջ 25—26։*

[10] *Նույն տեղում, էջ 170—171։*

նույն հանգամանքը նկատի ունեն ժամանակակից հայագետները արդի հայերենի թեքվող և չթեքվող խոսքի մասերը խմբավորելիս։

Ա. Այտընյանը իր տարբերած փոփոխական խոսքի մասերից անուն ու բայը սահմանում է ըստ նրանց ընդհանուր նշանակության, ապա բնութագրում է սրանց քերականական մասնակի հատկանիշները, իսկ դերանունն ու դերբայը սահմանում է սրանց շարահյուսական հատկանիշներով, ապա նորից բնութագրում է սրանց քերականական հատկանիշները։

«Անփոփոխական» խոսքի մասերից մակբայը սահմանում է ըստ իր նյութական նշանակության, որպես բայի, ածականի, երբեմն էլ մակբայի «կերպը, տեղը, ժամանակը» բացատրող անփոփոխող խոսքի մաս, իսկ նախադրությունն ու շաղկապը ավանդական քերականության սկզբունքով սահմանում է ըստ իրենց շարահյուսական գործածության։

Արտաքուստ Այտընյանը խոսքի մասերի ավանդական սխեման՝ 8 տեսակով և երկու՝ «փոփոխական» և «անփոփոխ» տիպերի բաժանմամբ, ընդօրինակում է իր նախորդներից համարյա նույնությամբ։ Սակայն սրանց ներքին ստորակարգության, քերականական հատկանիշների վերլուծության, փոխադարձ կապերի պարզաբանման, բառակազմական ու շարահյուսական հատկանիշների նկարագրության մեջ այնքան նորություններ է բերում, որ դառնում է հայերենի խոսքի մասերի տեսությունը գիտականորեն առաջ մղող հայագետներից մեկը։

Այտընյանն, օրինակ, թեև դերանուններ է համարում գոյականի փոխարեն գործածվող բառերը և իր նախորդների նման դերանվան բնորոշ հատկանիշ է համարում նաև դեմքի քերականական հատկանիշը, գրելով թե. «147. Դերանուններն անվանց պես թիվ ու հոլով ունենալեն զատ՝ ունին նաև դեմք, որ կը ցուցնե խոսքին որ կողմանե ըլլալը»[11], բայց դերանվան խոսքիմասային էության մյուս կողմերը պարզաբանում է մեծ հմտությամբ։ Նա ոչ միայն «մասնական կամ միջակ անուն»-ների մեջ նրբորեն բացատրում է անորոշ, փոխադարձ, որոշյալ դերանունների թվի ու հոլովման դերանվանական առանձնահատկությունները, այլև նկատում է մակբայների և դերանվան խոսքիմասային հարաբերակցությունը։ Բուն դերանունների մեջ դնելով անձնական, ցուցական, ստացական և հարաբերական դերանունները՝ Այտընյանը

---

[11] Նույն տեղում, էջ 38։

սրանք համարում է գոյական կամ ածական դերանուններ։ Բայց դերանունների մեջ չդասված այդպես, այսպես, այնպես տիպի բառերն էլ մտցնում է մակբայների շարքը, որպես «դերանվանական մակբայներ»։

Թեև թվականն առանձին խոսքի մաս չէ, բայց ներկայացված է ոչ թե մասնական անունների մեջ, ինչպես վարվում էին նախորդ քերականները, այլ առանձին, որպես ածական թվական, իր երեք տարատեսակներով՝ բացարձակ կամ գլխավոր, դասական և բաշխական։

Ուշագրավ դիտողություններ կան դերբայների խոսքիմասային առանձնահատկությունների վերաբերյալ։ Ըստ շարահյուսական կիրառության դերբայները բաժանում է գոյական և ածական դերբայների. բայց փակագծում հեղինակը չի մոռանում հիշեցնել, որ «երբեմն բայի տեղ ալ կը բանին»։

Ենթակայական դերբայը, որ կոչված է «ընդունելություն», -լիք վերջավորության ապառնու և -ած վերջավորության անցյալ դերբայների հետ ածական դերբայ է։ Բայց Այտընյանը ենթակայականի մեջ տեսնում է նաև անվանողական, այսինքն գոյականական իմաստ, այն մեկնաբանում է իբրև գործողի անուն։ Ու վերջավորությամբ ապառնին, որը և՛ դիմավոր ձևեր է կազմում («տեսնելու եմ, էի»), և՛ իբրև ածական է գործածվում («վախենալու երազներ»), Այտընյանը ճանաչում է ոչ թե որպես առանձին դերբայ, այլ «աներևույթին սեռականը»։

Ուշադրության արժանի է հոդի պարզաբանման մեջ հոդերի որոշիչ (ը, ն) և անորոշ (մը, մի) տարբերումը, ապա սրանց սահմանման «Հոդ կըսվի այն գիրը կամ մասնիկը...» ձևակերպումը։ Ուրեմն անորոշ հոդը Այտընյանը համարում է մասնիկ, իսկ բառին միացած գրվող որոշիչ հոդը պարզապես անվանում է գիր։

Կիրառելով ուսումնասիրության պատմահամեմատական մեթոդ՝ Ա. Այտընյանը աշխարհաբարի խոսքի մասերի վերլուծությունը հաճախ կատարում է հին հայերենի, մասամբ էլ բարբառների համեմատությամբ՝ ներկայացնելով հայերենի խոսքի մասերի բառաքերականական հատկանիշների զարգացման ընթացքն ու շարժունությունը։

Ամփոփում.— Եթե փորձելու լինենք պատասխանել այն հարցին, թե հայ քերականագիտությունը իր հունաբան, լատինաբան և մխիթարյան ուղղություններով խոսքի մասերի ուսմունքի մեջ մինչև 19-րդ դարի վերջերը ի՞նչ հաջողությունների է հասնում,

ապա ընդհանուր գծերով պիտի նկատենք հետևյալ առաջընթացը.

1. Գնալով ճշգրտվում է «խոսքի մաս» տերմինի բովանդակությունը: Եթե Դիոնիսիոս Թրակացու քերականության հայերեն թարգմանության մեկնություններում խոսքի մաս անվանումը հունարենի logos («խոսք», «բան») բառի բազմիմաստության պատճառով գործածվում է ինչպես «խոսք», այնպես էլ խոսքի միավոր՝ «նախադասություն», ավելի նեղ՝ «բառակապակցություն» նշանակություններով[12], ապա գնալով իրարից սահմանազատվում են այս հասկացությունները, և շարահյուսության՝ ձևաբանությունից առանձնանալուց հետո խոսքի ու նրա միավորի՝ նախադասության, տարբերակմամբ տարբերակվում են նաև խոսքի մաս և նախադասության անդամ հասկացությունները: Խոսքի մասերը 19-րդ դարի քերականների համար ո՛չ թե նախադասության մասեր, այլ բառերի տեսակներ են: «Բառ կամ մասն-բառի 8 տեսակ է»[13], գրում է Այտընյանը:

2. Չնայած տերմինների որոշ ընդհանրության ու շփոթի՝ աստիճանաբար իրարից անջատվում են բառերի խոսքիմաստային և բառակազմական վերլուծությունները, որի հետևանքով տեղի է ունենում բառային միավոր չհանդիսացող բառակազմական և բառահարաբերական ձևույթների անջատումը խոսքի մասերից: Եթե հին և միջնադարյան քերականություններում լեզվի ամբողջ կառուցվածքը քննվում էր լեզվական բոլոր միավորները խոսքի մասերի տակ խմբավորելու և հաճախ բառակազմական ու բառահարաբերական ձևույթներն էլ խոսքի մասեր համարելու և դրանց շարքում վերլուծելու եղանակով[14], ապա հետագայում վերանում է բառակազմական և բառահարաբերական ձևույթների շփոթը խոսքի մասերի հետ: Լեզվի բառակազմական միջոցների քննությունը կատարվում է յուրաքանչյուր խոսքի մաս ըստ բառային բաղադրելիության, իսկ բառահարաբերական ձևույթներն ըստ փոխոխելիության, այսինքն՝ թեքման հատկանիշների, վերլուծելու եղանակով:

3. Աստիճանաբար ճշգրտվում են առանձին խոսքի մասերը բնութագրող սահմանումները: Սահմանումների ճշգրտությունը

---

[12] Համմ. Գ. Բ. Ջահուկյան, Լեզվաբանության պատմություն, Երևան, 1960, էջ 73:

[13] Ա. Այտընյան, նշվ. աշխ., էջ 4:

[14] Նույնիսկ Մ. Ջամշյանը դեռ շարունակում էր հայերենի դերանվանական հոդերը մոցնել դերանուն խոսքի մասի մեջ, իբրև նրա մի տեսակը:

պայմանավորված է քերականության՝ փիլիսոփայությունից ու բանասիրությունից անջատվելու և առանձին գիտություն դառնալու հրևույթով։ Սահմանումների ճգրտման մյուս ոչ պակաս նախապայմանը այն է լինում, որ նոր խոսքի մասերի առանձնացումը նախօրոք ճանաչվածներից, ոչ բառային արժեք ունեցող լեզվական միավորների սահմանազատումը խոսքի մասերից հնարավորություն են ընձեռում քերականներին՝ հատկանշային իրական չափանիշներով բառերն ըստ խոսքի մասերի խմբավորելու և ըստ այդմ էլ նրանք սահմանելու։ Փորձեր են արվում բառ և խոսքի մաս հասկացությունների տարբերակման։

4. Որոշ հստակություն է մտցվում խոսքի մասերը սահմանելու սկզբունքների մեջ։ Գնալով խոսքի մասերի սահմանման հիմունք են դառնում բառերի նյութական և քերականական նշանակությունների ընդհանրությունները։ Եթե նախկինում նյութական նշանակության խոսքի մասերը հիմնականում սահմանվում են երկու հատկանիշների՝ իմաստային և ձևական, բնութագրմամբ. օրինակ, «Անուն է մասն բանի հոլովական, մարմին կամ իր նշանակելով»[15], իսկ քերականական նշանակության խոսքի մասերը՝ քերականական-գործառական նշանակության բնութագրմամբ, օրինակ՝ «Ե՛ւ «շաղկապ» ասի ի շաղելոյ իմն և միաւորելոյ և կապելոյ ի կարգն զբառն ընդ բառն և զմիտս ընդ միտս...»[16], ապա 18—19-րդ դարերի հայ քերականները բառերի ձևական հատկանիշի հիման վրա զանազանում են խոսքի մասերի «փոփոխական» և «անփոփոխ» տարատեսակներ, իսկ խոսքի մասերն իրարից զանազանող բուն հատկանիշը մնում է իմաստային՝ նյութական, կամ քերականական-գործառական հատկանիշը։

5. Խոսքի մասերի տարբերակման վերոհիշյալ իմաստային հիմունքը գնալով զուգակցվում է բառերի շարահյուսական-գործառական հատկանիշին։ Եթե սկզբնապես ոչ նյութական խոսքի մասերն են միայն բնութագրվում շարահյուսական-գործառական հատկանիշներով, կամ այդ հատկանիշն է սրանց տարբերակող իմաստային հիմունքը, և համարյա բոլոր խոսքի մասերի համար հարկ է համարվում հիշատակել սրանց հոլովվելու կամ չհոլովվելու ձևաբանական հատկանիշը, ապա ուշ միջնադարի քերականություններում, ինչպես ասվեց, բառերի թեքման ձևաբանական

---

[15] Ն. Ադոնց, նշվ. աշխ., էջ 12։

[16] Վ. Առևելցի, նշվ. աշխ., էջ 150։

հատկանիշը դառնում է խոսքի մասերի երկու խմբերը իրարից զանազանող միջոց («փոփոխական» և «անփոփոխ» խոսքի մասեր), իսկ նյութական նշանակության խոսքի մասերի համար գնալով տարբերակիչ կամ, ավելի ճիշտ, ճանաչողական կարևոր չափանիշ է դառնում սրանց շարահյուսական-գործառական հատկանիշը։ Այս հանգամանքը պակաս դեր չի խաղում մի կողմից՝ դերբայն առանձին խոսքի մաս համարելու, իսկ մյուս կողմից՝ անուն խոսքի մասը գոյական և ածական խոսքի մասերի տրոհելու գործում։ Քննվող և հետագա շրջանների քերականություններում անուն գոյական–անուն ածական, դերանուն գոյական–դերանուն ածական, դերբայ գոյական–դերբայ ածական, թվական գոյական–թվական ածական հակադրությունները այլ հիմունք, քան բառերի շարահյուսական գործառությունն է, չունեն։ Թեև գոյական—ածական հակադրությունը իմաստային շատ որոշակի տարբերակում ունի (առարկա—հատկանիշ), սակայն խոսքի մեջ առարկայի ու հատկանիշի իրար փոխարեն ազատ գործածվելու պայմաններում, այդ իմաստային տարբերությունը սրանց խոսքիմասային պատկանելիությունը որոշելու խնդրում այնքան էլ կայուն ճանաչողական հիմունք չէ։ Ահա թե ինչու մեր քերականները ածականը գոյականից որոշակիորեն զանազանելու համար ստիպված են դիմելու այդ բառերի շարահյուսական կիրառության օգնությանը։

«Դյուրին կանոն գոյականի ածականեն որոշելու՝ սա է։ Ինչ անվան քով որ բան բառը չի դրվիր, գոյական է, որուն որ կը դրվի, ածական է»[17], գրում էր Ավետիքյանը։

Այսպես, ուրեմն, լեզվում քիչ չեն դեպքերը, երբ բառի նշանակությունը իմանալու համար անհրաժեշտ է դիմել նրա շարահյուսական կիրառության օգնությանը։ Ուստի խոսքի մասերի տարբերակման իմաստային սկզբունքին զուգահեռ նյութական նշանակության բառերում մասամբ մերժելով, մասամբ էլ ձևականորեն պահպանելով բառերի ձևաբանական հատկանիշների հաշվառումը, սրանք խոսքի մասերի տրոհելիս, հայ քերականները գրնալով առաջին պլան են մղում բառերի շարահյուսական հատկանիշները։

6. Արմատական տարբերություն է առաջանում խոսքի մասերը ներքին ստորակարգության ենթարկելու, բառերը խոսքի մասերի վրա ճիշտ բաշխելու և դրանց բառային ու խոսքիմասային

---

[17] Գ. Ավետիքեան, *Քերականութիւն հայկական*, էջ 193։

մասնակի քերականական հատկանիշները համակարգված վերլուծելու ասպարեզում։ Նախկին փիլիսոփայական-իմաստաբանական երկարաշունչ ու երբեմն սխոլաստիկ դատողությունների և լեզվական նյութի բանասիրական դասդասումների ու բնութագրումների փոխարեն, աշխատանք է տարվում լեզուն և նրա քերականությունը օտարամուտ խորթ ձևերից ու նրանց վրա հիմնված դատողություններից մաքրելու համար։

Խոսքի մասերի ուսմունքի գիտական մշակման բնագավառում լեզվաբանական մտքի զարգացման հետևությամբ հայ քերականագիտության վերոհիշյալ լուրջ առաջընթացը, այնուամենայնիվ, շատ է հեռու խնդրի ամբողջական լուծումից։ Խոսքի մասերի տեսության ձևավորման այս ամբողջ պատմաշրջանում գիտական պատասխան սպասող շատ հարցադրումներ, լեզվական փաստերի միասնական վերլուծություն պահանջող հակասական դասդասումներ ու տեսական իրարամերժ մեկնաբանություններ կամ շարունակում են մնալ գիտական վեճի առարկա, և կամ էլ հաճախ «լուծվում են» այս կամ այն կերպ ոչ թե գիտական հիմնավորմամբ, այլ ավանդույթի ուժ ստանալով։

Որո՞նք են այդ չլուծված վեճերն ու հարցադրումները.

1. Սկսելով անուն և բայ հակադրության, իբրև դատողության երկու հիմնական անդամների, երկու հազար տարուց ավելի ժամանակամիջոցում քերականագիտությունը երկու խոսքի մասից հասավ 9 խոսքի մասեր տարբերակելու աստիճանի։ Սակայն դեռևս մեր թվարկությունից առաջ սկսված և մինչև ուշ միջնադար շարունակվող վեճերն այն մասին, թե դերանունը առանձի՞ն խոսքի մաս է, թե՞ անվան մի տեսակ, կամ հատուկ և հասարակ անունները առանձի՞ն խոսքի մասեր են, թե՞ անուն խոսքի մասի տեսակներ, դերբայը առանձի՞ն խոսքի մաս է, թե՞ բայ խոսքի մասի տեսակ և այլն, և այլն, այդպես էլ մնացին գիտականորեն չպարզաբանված։

Չառարկելով Արիստոտելին «ընդունելությունը», «դերանունը» և «հոդը» առանձին խոսքի մասեր չճանաչելու և 8-ի փոխարեն 5 խոսքի մաս զանազանելու մեջ, ինչպես տեսանք, Վարդան Արևելցին իր «Մեկնությիւն քերականի» գործում գրում էր. «Տեսանե՞ս, զի Արիստոտէլ վասն այնորիկ եհան զերեք յութէն, զի այն երեքն չեն մասունք, այլ՝ մասանց մասունք»[18]։

---

[18] Վ. Արևելցի, նշվ. աշխ., էջ 102։

Հետագա քերականները թեև, հակառակ Արիստոտելի ու նրա բանավեճը շարունակող Վ. Արևելցու, վեճի առարկա այդ բառախմբերն ընդունեցին իբրև առանձին **խոսքի մասեր** և ոչ թե խոսքի մասի մասեր, սակայն այդ մոտեցումը գիտական լուրջ հիմնավորում երբեք էլ չունեցավ, իսկ վեճերն էլ դրանով չավարտվեցին։

Խոսքի մասի և նրա ենթամասերի՝ տեսակների, փոխհարաբերության հարցը այդպես էլ գիտականորեն չլուծվեց, քանի որ չգտնվեցին խոսքի մաս հասկացությունը գիտականորեն բնութագրող, խոսքի մասերն ու սրանց մասերը իրարից զանազանող կամ տարբերակող որոշակի չափանիշներ։

2. Չճշգրտվեց թվականի տեղը անունների շարքում։ Մինչև Այտընյանի քերականության հրապարակ գալը թվականը դեմք կամ դիմային հատկություն չարտահայտող դերանունների հետ, «միջական անունք» կոչմամբ, մտցվում է անուն խոսքի մասի մեջ, իբրև նրա երկու հիմնական տեսակներից՝ գոյական և ածական անուններից անջատվող և անվան ու դերանվան միջին դիրքի բառատեսակ։ «Միջական անվան» բառերը, այս թվում, ուրեմն, և թվականներն «իբրև թե անվան և դերանվան մեջ տեղը կը սեպվին»[19]։ Այտընյանը թվականն առանձնացնում է «միջական անուններից» և, անուն խոսքի մասի երկու հիմնական ենթատեսակներից՝ գոյականից և ածականից զատ, ընդունում է սրանց ստորադասվող երեք տիպի անուններ ևս, դրանք են՝ «1. հատուկ անվանք, 2. թվական անվանք և 3. մասնական անվանք»[20]։ Սակայն նախորդ քերականների պես Այտընյանն էլ թվականը համարում է ածականի տարատեսակ։ Այս մասին նա գրում է. «Ասոնք (թվականները — Հ. Բ.) ամենքն ալ ածական են, անոր համար ալ իրենց գոյականեն առաջ կը դրվին և անհոլով կը մնան. երկու ձեռքով, Հինգհարյուր հոգվո, Չորրորդ տարի, Տասնական կտոր»[21]։

3. Թեև ածականն ու գոյականը անջատվեցին անունից, իբրև առանձին խոսքի մասեր, բայց սրանց ստորակարգվող թվականներն ու դերանունները անվանը տրված սահմանումը դարձրին նրա ոչ բոլոր տեսակներին համապատասխանող նեղ սահմանում, ուստի և ածական տերմինը շարունակեց մնալ իբրև շարահյուսական տերմին, որի փոխարեն ազատորեն գործածվում էին նաև

---

19 Գ. Ավետիքեան, նշվ. աշխ., էջ 32։

20 Հ. Այտընյան, նշվ. աշխ., էջ 28։

21 Նույն տեղում, էջ 32։

«ածական»-ին համանիշ դարձած վերադիր, մականուն անվանումները[22]։

4. Դերանունն անուններից զատ առանձին խոսքի մաս, թե՞ անվան տարատեսակ համարելու վեճը լուծելով հօգուտ դերանվան առանձին խոսքի մաս ճանաչելու դատողության՝ հայ քերականագիտությունը, այնուամենայնիվ, չկարողացավ այդ բառախմբի խոսքիմասային առանձնահատկությունների համոզիչ և քիչ թե շատ միասնական նկարագրություն ու հիմնավորում տալ։ Այդ պատճառով մինչև Այտընյան ու նրանից դեռ հետո էլ դերանունների մի զգալի մասը «միջակ անուն» կամ «միջական անուն», «մասնական անուն», «ցուցական ածական», «ստացական ածական», «անորոշ ածական», «անորոշ և հարցական անուններ» և այլն տերմիններով անջատվում են դերանուններից և բաշխվում գոյական և ածական անունների վրա, իբրև սրանց տարբերակներ, կամ սրանց ու բուն դերանունների միջև ընկած բառային իրողություններ։

Միջնադարի հայ քերականները, դերանվան տարբերակման համար բացարձակ չափանիշ դարձնելով Դիոնիսիոսի սահմանումը, ըստ որի «դերանունութիւն է բառ փոխանակ անուան առեալ, որոշեալ դիմաց յայտական»[23], այս կամ այն բառի դերանուն լինելը որոշում են նրա երկու բնորոշ կողմերով՝ անվան փոխարեն գործածվելու և որոշակի դեմք ցույց տալու հատկանիշներով։

Թեև վաղ շրջանի առանձին քերականների, իսկ հետագայում մասնավորապես Այտընյանի կողմից դերանվան անուններին փոխարինելու հատկանիշը ստանում է գիտական և համարյա սպառիչ պարզաբանում, որից որոշակիորեն երևում է, որ դեմքի քերականական հատկանիշը բոլոր դերանուններին յուրահատուկ և պարտադիր հատկանիշ չէ, բայց այդ պարզաբանումը չի օգնում իրեն խակ Այտընյանին դիմային հարաբերություններ չարտահայտող դերանունները նույնպես, այլ խոսքի մասերի վրա կամ սրբրանց միջև բաշխելու փոխարեն, դերանուն համարելու։

Ահա թե ինչ է գրում Այտընյանն անվան և դերանվան հակադրության կամ տարբերության մասին. «Գոյականի կամ անվան և դերանվան իրարմե տարբերությունն այն է, որ գոյականը քանին անունը կու տա, առանց հայտնելու թե որն է. իսկ դերանունը կը ցուցնե թե որն է, առանց իրին անունը տալու։ Այսպես՝ ծառ, մարդ, fաղաf անուն են. ես, դուն, ասիկա դերանուն են»[24]։

[22] Տե՛ս Ա. Բագրատունու քերականության տերմինագործածությունը։

[23] Ն. Ադոնց, նշվ. աշխ., էջ 27։

[24] Ա. Այտընյան, նշվ. աշխ., էջ 38։

Այտընյանի այս հիանալի բացատրությանը դեռ մենք առիթ կունենանք անդրադառնալու, բայց այստեղ ավելացնենք, որ ընդհանրապես լեզվաբանը դերանվան՝ առարկան կամ հասկացությունը ոչ թե անվանելու, այլ առանց անունը տալու առարկան մատնանշելու հատկանիշի բացահայտմամբ պարզաբանում է դերանուն խոսքի մասի բուն էությունը։ Այտընյանի այս մեկնաբանությունից որոշակիորեն երևում է, որ դերանվան մյուս հատկանիշները երկրորդական կամ նրա մասնակի հատկանիշներն են, այդ թվում՝ և դեմքի քերականական հատկանիշը. սակայն Այտընյանը շարունակում է հետևել ավանդական դարձած դասակարգմանը և դիմային հարաբերություններ չարտահայտող դերանունները չի մղում այս խոսքի մասի մեջ։

Ս. Աբրահամյանն իր «Արդի հայերենի դերանունները» մենագրության մեջ, հայերենի դերանունը բառային ու քերականական բազմակողմանի վերլուծության ենթարկելիս, որոշակի նպատակադրմամբ անդրադառնում է հայ քերականագիտության մեջ դերանվան խոսքիմասային նկարագրին։

Մերժելով ավանդական քերականության մեջ անուններին փոխարինելու գործառույթը դերանվան բնորոշ հատկանիշ ճանաչելու մոտեցումը՝ Աբրահամյանն այդ սխալ մոտեցմամբ էլ բացատրում է մեր հին և միջին շրջանի քերականների կողմից դերանունների մի զգալի մասը դերանուն չհամարելու փաստը։ Թվարկելով ոմն, ուրիշ, ամենը, իրար, մեկը, ինչ, բանի, որ, ով, ոչինչ և այլն հարցական, անորոշ, որոշյալ, փոխադարձ, ժխտական դերանուններ՝ Ս. Աբրահամյանն այնուհետև գրում է. «Մեր անցյալի քերականները այս բառերը չէին մտցնում դերանունների շարքը, որովհետև դրանք չէին դիտվում իբրև փոխարինման ֆունկցիա կատարող բառեր, իսկ դերանունը ճանաչվում էր հենց այդ հատկանիշով»[25]։

Այս միտքը ճշգրտման կարիք ունի, մանավանդ որ հետագայում, ինչպես կտեսնենք, ուրիշների կողմից դերանվան հասկացությունը դարձվում է հիմք մյուս խոսքի մասերը զանազանելու համար։

Ինչպես վերն ասվեց, մինչև Այտընյանն ընկած ժամանակա-

---

[25] **Ս. Գ. Աբրահամյան**, *Արդի հայերենի դերանունները, Երևան, 1956, էջ 72։ Ս. Աբրահամյանի այս դատողությունը վկայակոչվում և հաստատվում է նաև է. Թումանյանի մենագրության մեջ։ Տե՛ս* **Э. Г. Туманян**, Древнеармянский язык, էջ 277։

շրջանում դերանունը բնորոշվում է իր ոչ թե մեկ, այն է՝ անունների փոխարինելու հատկանիշով, այլ դրա հետ միասին՝ նաև երկրորդ՝ որոշակի դեմք կամ դիմային հարաբերություն ցույց տալու հատկանիշով։ Անցյալի քերականները, մեր կարծիքով, դերանունների մի մասը այլ խոսքի մասերի մեջ են մտցնում ոչ իհարկե նրանց մեջ փոխարինման ֆունկցիա կատարելու հատկանիշ չտեսնելու պատճառով. այդպիսի հատկություն, ինչպես բազմաթիվ օրինակներով ցույց է տալիս Ս. Աբրահամյանը նշված գրքում, ունենում են ոչ միայն դերանունները, այլև ուրիշ խոսքի մասեր ու լեզվական միավորներ ևս։ Դրա պատճառն այն է, իհարկե, որ միջնադարի քերականները այդ դերանունների մեջ չեն գտնում իրենց որոնած երկրորդ, այսինքն՝ դեմքի հատկանիշը։

Դերանվան՝ անվան փոխարինելու հատկանիշին զուգահեռ նաև դիմային հարաբերություն արտահայտելու հատկանիշի պարտադրությունը Դիոնիսիոսի քերականության թարգմանության մեկնիչներից, ինչպես տեսանք, անցնում է հայերենի լատինաբան քերականներին։ Սրանք դերանունը սահմանելիս հաշվի չեն առնում նրա մյուս հատկանիշները։ «... Այդ սահմանումներում դերանվանական նշանակությունը հանգեցվում է անձի կամ դեմքի մատնանշման, որը առավելապես վերաբերում է անձնական դերանուններին, բայց ոչ մյուսներին»[26]։

Մխիթարյան քերականների համար էլ, ինչպես տեսանք, դիմային հարաբերություն արտահայտելը դերանվան էական հատկանիշն էր։ Ահա թե ինչ է գրում Գ. Ավետիքյանը դերանուն տերմինը մեկնաբանելիս. «Իսկ մյուսը որ կըսեն՝ թե դերանուն ըսվեցավ հատուկ մարդու անվան տեղ դրվելուն համար, ստույգ է. որովհետև անձնավոր բանի կըպատշաճի դեմք, և ան է, որ կըխոսի և կը լսե. ուստի բուն ստեղծվածքը նայելով, դերանունը հնարած է մարդու հատուկ անունը և դեմքը ցուցանելու համար. բայց սովորությամբ եղեր է հասարակ անվանք և անկենդան բաներու տեղ ալ գործածել»[27]։

Նույնիսկ Բագրատունու համար դեռևս դեմքի քերականական հատկանիշը դերանվան խոսքիմասային էության ու սրա սահմանման հիմնական բաղադրիչն է. «Դերանուն և փոխանուն են բառք,

[26] **В. Ш. Царукян,** Исследование структуры грабара в трудах грамматистов XVII века, Ер., 1970, *էջ 14 (թեկնածուական դիսերտացիայի ավտոռեֆերատ)*։

[27] **Գ. Ավետիքեան,** *նշվ. աշխ., էջ 268*։

որ դէմս կամ կարգ ինչ յայտ առնեն, և ի տեղի անուանց դնին առ ի չկրկնելոյ զայն»[28]։

5. Չլուծվեց բայի ու դերբայի խոսքիմասային փոխհարաբերության հարցը։ Բայը սահմանվում է իբրև գործողությունը եղանակով, դեմքով և ժամանակով արտահայտող խոսքի մաս, որով այն նույնացվում է, արդի ըմբռնմամբ, ստորոգյալին։ Գալով դերբայներին, սրանք շարունակվում են ճանաչվել առանձին խոսքի մաս ոչ սրանց խոսքիմասային ընդհանուր նշանակության բացահայտմամբ ու բնութագրմամբ, այլ այդ բառաձևերի խոսքիմասային քերականական (ձևաբանական և շարահյուսական) մասնակի հատկանիշների՝ խոսքի մեջ միաժամանակ և՛ բայի, և՛ անվան քերականական վարքագիծ դրսևորելու առանձնահատկությամբ։

6. Չմշակվեցին խոսքի մասերի տարբերակման որոշակի սկզբունքներ, բառերի խոսքիմասային ընդհանուր նշանակություններն ու դրանց բառային և քերականական մասնակի նշանակություններն իրարից զանազանող, սրանց փոխհարաբերությունները գիտականորեն պարզաբանող օրինաչափություններ։

Այդպիսի որոշակի սկզբունքների ու օրինաչափությունների բացակայության պատճառով, առանձին կարգի բառեր (դերանուններ, թվականներ, եղանակավորող բառեր, դերբայներ, կապական բառեր և այլն) տարբեր քերականների գործերում հայերենի խոսքի մասերի համակարգի տարբեր աղյուսակներ ու վանդակներ են ըզաղեցնում։ Շատ լայն է մակբայ խոսքի մասի տարողունակությունը, որի մեջ մտցվում են մյուս խոսքի մասերին չհամապատասխանող ամեն կարգի բառեր ու բառաձևեր։

Հայ քերականագիտությունը մինչև 19-րդ դարի վերջերն ընկած ժամանակաշրջանում խոսքի մասերի ուսմունքի մեջ իր ձեռք բերած նվաճումներով և դեռևս ունեցած սխալներով ու հակասություններով հանդերձ կանգնած էր այն ժամանակի լեզվաբանական գիտության մակարդակին, դրա համար էլ ընդհանուր շատ բան կա վերևում այդ մասին մեր ասածների և գերմանացի խոշոր լեզվաբան Հ. Պաուլի խոսքի մասերի դասակարգման տեսության այն ժամանակվա ընդհանուր վիճակի վերաբերյալ 1880-ական թվականներին արած հետևյալ եզրակացության մեջ.

«Հիմնական գծերով դեռևս անտիկ քերականներից եկող հընդեվրոպական լեզուներում ընդունված խոսքի մասերի դասակարգու-

---

[28] Ա. Բագրատունի, նշվ. աշխ. էջ 85։

մը իր հիմքում չունի հետևողականորեն կայուն տրամաբանական սկզբունքներ, այն ստեղծվել է որպես հարցի միանգամայն տարբեր կողմերի հաշվառման փորձերի հետևանք։ Դրա համար էլ նրան բնորոշ է ակնհայտ քմահաճություն։ Դժվար չէ ապացուցել, որ այն օժտված է մի շարք պակասություններով։ Բայց քանի դեռ մենք կձգտենք այն բանին, որ ամեն բառ դասենք որոշակի կարգի (классу), դժվար թե մեզ հաջողվի այս դասակարգումը փոխարինել առավել հաջող դասակարգմամբ։ Տարբերակման խիստ տրամաբանական համակարգ հաստատելու փորձերն ընդհանրապես անհիմն են։

Մեր օրերում ընդունված տարբերակման համակարգը որոշել են հետևյալ երեք հայեցակետերը՝ իր իսկ բառի նշանակությունը, նրա գործառությունը նախադասության մեջ, նրա առանձնահատկությունները թեման և բառակազմության բնագավառում»[29]։

Գերմանացի լեզվաբանի կարծիքով, բառերի այս երեք հատկանիշները ոչ զատ-զատ և ոչ էլ միասին վերցրած չեն կարող գիտական սկզբունք դառնալ բառերի խոսքիմասային խմբավորման համար։ Այս խնդրի անլուծելիության օգտին հետագայում արտահայտվեցին նշանավոր լեզվաբաններ Վանդրիեսը, Սեպիրը, Սոսյուրը և ուրիշներ։

Սակայն առանձին հեղինակություններ ու կարծիքներ չխանգարեցին քերականագիտությանն ու լեզվաբանությանը՝ իրենց զարգացման հաջորդ փուլերում ևս շարունակելու խոսքի մասերի տեսության մեջ եղած հակասությունները, սխալներն ու անճշտությունները վերացնելու, դասակարգման գիտական միասնական սկզբունքներ մշակելու փորձերը։

---

[29] **Г. Пауль,** Принципы истории языка. Москва, 1960, էջ 415։

ԵՐԿՐՈՐԴ ՄԱՍ

ԽՈՍՔԻ ՄԱՍԵՐԻ ՏԱՐԲԵՐԱԿՈՒՄԸ ՆՈՐ ԵՎ ՆՈՐԱԳՈՒՅՆ ՇՐՋԱՆԻ ՀԱՅ ՔԵՐԱԿԱՆԱԿԱՆ ԵՎ ԼԵԶՎԱԲԱՆԱԿԱՆ ԱՇԽԱՏՈՒԹՅՈՒՆՆԵՐՈՒՄ

Առաջին գլուխ

ԽՈՍՔԻ ՄԱՍԵՐԻ ԻՄԱՍՏԱՅԻՆ, ԳՈՐԾԱՌԱԿԱՆ ԵՎ ԻՄԱՍՏԱՅԻՆ-ԳՈՐԾԱՌԱԿԱՆ ԴԱՍԱԿԱՐԳՈՒՄՆԵՐԸ

ՀԱՅԵՐԵՆԻ ԽՈՍՔԻ ՄԱՍԵՐԻ ԻՄԱՍՏԱՅԻՆ–ՏՐԱՄԱԲԱՆԱԿԱՆ ԴԱՍԱԿԱՐԳՈՒՄԸ ՍՏ. ՊԱԼԱՍԱՆՅԱՆԻ ԱՇԽԱՏՈՒԹՅՈՒՆՆԵՐՈՒՄ

19-րդ դարի երկրորդ կեսը հայ քերականագիտության և լեզվաբանության համար նշանավորվում է ոչ միայն այդ դարաշրջանին հիմնադրված գիտական լեզվաբանությանը հաղորդակից դառնալու իրողությամբ, այլև հայերենի գործնական ու տեսական հարցերի մշակումը գրաբարից ու գրաբարագիտությունից աշխարհաբարի հիմքերի վրա փոխադրելու երևույթով։

Դեռևս 1820-ական թվականների վերջերին Արևելյան Հայաստանի Ռուսաստանին միավորելու փաստով հայ ժողովրդի պատմության մեջ սկսվեց մի նոր շրջան։ «Արևելյան Հայաստանի միացումը Ռուսաստանին խոշոր նշանակություն ունեցավ հայկական մշակույթի զարգացման գործում։ Ռուս ժողովրդի հարուստ ու առաջավոր կուլտուրան նպաստեց հայ գրականության, արվեստի ու գիտության ծաղկմանը»[1]։ Բացառություն չկազմեց նաև հայ լեզվագիտությունը, որի հետագա ուղին կապվեց ռուս լեզվագիտության զարգացման ուղուն։

Թեև Հայաստանի «Տնտեսական «նվաճումը» Ռուսաստանի կողմից շատ ավելի ուշ է կատարվել, քան քաղաքականը»[2], ինչ-

---

[1] *Հայ ժողովրդի պատմություն, Երևան, 1972, էջ 351։*

[2] *Վ. Ի. Լենին, Երկեր, հ. 3, էջ 770։*

պես գրել է Վ. Ի. Լենինը, բայց և այնպես այդ նվաճումից տասնամյակներ առաջ էլ ռուսական կայսրության տարածքի վրա ընկած հայկական գաղթօջախներում հայ մշակույթի զարգացման համար անհամեմատ նպաստավոր պայմաններ են եղել։

Ա. Այտընյանի ուսումնասիրություններից հետո աշխարհաբարի տեսության ու քերականության վերաբերյալ այս պատմաշրջանում տեսական որոշակի արժեք են ներկայացնում Ստ. Պալասանյանի «Ընդհանուր տեսություն արևելյան նոր գրավոր լեզվի հայոց» (1870 թ.) և «Քերականություն մայրենի լեզվի» (1874 թ.) աշխատությունները։

Լեզվի տեսության մեջ հետևելով Ա. Այտընյանին, իսկ մանկավարժության ու մեթոդիկայի հարցերում շարունակելով զարգացնել Խ. Աբովյանի հայացքները՝ Ստ. Պալասանյանը միաժամանակ քաջատեղյակ է և օգտագործում է իր ժամանակի ռուսագիտության և ռուսական մանկավարժական մտքի նվաճումները։ Ռուս ականավոր լեզվաբան Ֆ. Բուսլաևի պես Պալասանյանն էլ հետևում է քերականական տրամաբանական դպրոցին և մասամբ կրում է այդ ուղղության բացասական ազդեցությունը[3]։ Սակայն ինչպես Բուսլաևի[4], այնպես էլ Պալասանյանի աշխատությունները զերծ են տրամաբանական քերականության ծայրահեղություններից։ «Ստ. Պալասանյանը, օգտագործելով տրամաբանական քերականության այդ ամենաարժեքավոր կողմը (խոսքի և մտքի, քերականության և տրամաբանության սերտ կապի գիտակցումը— Հ. Բ.),— գրում է Թ. Ջուհարյանը,— ձգտել է հեռու մնալ նրա դիդակտիկական արատներից»[5]։

«Քերականություն մայրենի լեզվի» աշխատության մեջ Ստ. Պալասանյանն իր նախորդների զանազանած 9 խոսքի մասերին ավելացնում է 10-րդը՝ թվական անունը։ Գոյական և ածական անունների միջև ընկած «միջակ» կամ «միջական» անուններից նա առանձնացնում է թվականներն, իբրև գոյական և ածական անուններից տարբեր մի երրորդ անուն խոսքի մաս, իսկ մնացած «մի-

---

[3] Թ. Ջուհարյանի կարծիքով Պալասանյանի քերականությունը գրված է ոչ այնքան Բուսլաևի, որքան Ա. Սմիռնովի ռուսաց լեզվի դասագրքի սկզբունքներով (տե՛ս Թ. Գ. Ջուհարյան, Բայի ուսուցման հիմունքներ, Երևան, 1956, էջ 16)։

[4] Տե՛ս А. Е. Супрун, Части речи в русском языке, Москва, 1971, էջ 18—21։

[5] Թ. Գ. Ջուհարյան, նշվ. աշխ., էջ 17։

չակ անունները» բաշխում է դերանունների վրա՝ Դիոնիսիոսի և նրա թարգմանության հայ մեկնիչների ընդունած անուն և դերանուն խոսքի մասերին տալով համարյա այսօրվա տեսքը։ Նա թերևս ավանդապահ է մնում միայն դերբայի ըմբռնման հարցում։

«Ստ. Պալասանյանը դերբայների մասին գրելիս մեծ չափով հիմնվում է գրաբարի տրադիցիոն քերականության վրա։ Պահպանելով ավանդությունը՝ Պալասանյանը դերբայը թողնում է խոսքի մասերի շարքում, որպես, եթե կարելի է ասել, միջին խոսքի մաս»—նկատում է Ա. Ա. Աբրահամյանը[6]։

Ստ. Պալասանյանն, ի տարբերություն իր նախորդ բոլոր հայ քերականների, բառերը խոսքի մասերի բաժանելիս, որպես տեսական հիմունք, ընդունում է նրանց բառային նշանակությունները։ Բառերի խոսքիմասային պատկանելությունը նա բացատրում է «Բառերի նշանակությունը» վերնագրի տակ, ապա, շեշտը դնելով բառերի արտահայտած հասկացությունների վրա, եզրակացնում է. «Բառերը իրենց պարունակած հասկացողությունների համեմատ այլ և այլ կարգերի են բաժանվում, որոնք քերականության մեջ կոչվում են մասունք բանի, այսինքն խոսքի մասեր»[7]։

Իսկ ինչ է հասկանում Պալասանյանը բառային հասկացություններ կամ, իր տերմինով, «հասկացողություններ» ասելով։

Բառերի արտահայտած նշանակությունները կամ հասկացությունները պարզաբանելու համար Ստ. Պալասանյանն իր վերլուծություն սկսում է նախադասության մեջ բառերի կոնկրետ նշանակությունների բացատրությամբ։ Բայց այս մոտեցումը մեթոդական, մանկավարժական հնարք է միայն և երբեք էլ չի նշանակում, թե նրա համար խոսքի մասերի նշանակությունները խոսքային մակարդակի իրողություններ են և պայմանավորված են բառերի մասնակի կիրառություններում նրանց պարունակած հասկացություններով։ Այսպես, օրինակ, գոյականի խոսքիմասային իմաստը բացատրելիս, նա գոյականները գործածում է, ըստ նրանց նշանակության, զանազան պաշտոններում և միաժամանակ մատնանշում, որ գոյականի համար էականը ոչ թե նրա տարբեր պաշտոններ վարելն է, այլ այն, որ «... ըստ նշանակության, այդ բառերը այլ և այլ առարկաների անուններ են»։

Պալասանյանը, սակայն, գոյականը որպես առարկայի անուն

---

[6] Ա. Ա. Աբրահամյան, *Հայերենի դերբայները...*, էջ 34։

[7] Ս. Պալասանեան, *Քերականություն մայրենի լեզվի*, Տփխիս, 1894, էջ 39։

բնութագրելիս, նախ բնորոշում է առարկայի տրամաբանական հասկացությունը, այլ կերպ ասած՝ լեզվական մասնակի օրինակների հիման վրա տալիս է տրամաբանական հասկացության սահմանում. «Այն բառերը, որոնց մենք աչքով տեսնում կամ մտքով ըմբռնում ենք, կոչվում են առարկա»[8], որից հետո միայն տրամաբանականից անցում է քերականականին՝ արդեն սահմանելով գոյականը. «... բոլոր այս նյութական ու մտավոր, անշունչ ու շնչավոր առարկաները առանձին անուններ ունին, որոնք միասին առած՝ կոչվում են գոյական անուն»[9]։

Թեև վերջին օրինակները մենք բերեցինք Պալասանյանի գրաբարի քերականությունից, բայց աշխարհաբարի քերականության մեջ ևս սկզբունքը նույնն է։ Գոնե հասկացական նշանակության խոսքի մասերի մեջ, որպես բառերի խոսքիմասային նշանակություն, ճանաչվում է տվյալ բառատեսակը միավորող ամենաընդհանուր նշանակությունը։ Ուստի այս հարցում չի կարելի չհամաձայնել պրոֆ. Ա. Աբրահամյանին, որը գրում է. «Ինչպես տեսնում ենք, խոսքի մասերի տարբերման ու խմբավորման հիմքում (Պալասանյանը) դնում է բառերի պարունակած հասկացությունների (իր նշումով հասկացողությունների) բնույթը, այսինքն մոտավորապես այն, ինչ այժմ ըմբռնում ենք որպես բառի քերականական ընդհանուր իմաստ»[10]։

Սակայն խոսքի մասերը զանազանելու Պալասանյանի գործադրած այս տրամաբանական սկզբունքը միասնական կիրառում չէր կարող ունենալ, քանի որ բոլոր բառախմբերը կամ տեսակները չեն, որ արտահայտում են հասկացություն, ուստի և ունեն դասակարգման տրամաբանական կամ հասկացական հիմունք, և ապա նույն հասկացությունը կարող է լեզվական բոլորովին տարբեր միջոցներով արտահայտվել։ Ահա թե ինչու թեև Պալասանյանը նույնիսկ այնպիսի բացարձակ քերականական նշանակություն ունեցող խոսքի մասի համար, որպիսին նախադրությունն է, կարողանում է միջնադարի որոշ ռացիոնալիստների նման տրամաբանական սահմանում գտնել. «Այն բառերը, որոնք ցույց են տա-

---

[8] Ստ. Հովհ. Պալասանյան, *Գործնական քերականություն հայերեն լեզվի*, հ. 1-ին, Ստուգաբանություն, Թիֆլիզ, 1868, էջ 17։

[9] Նույն տեղում, էջ 18։

[10] Ա. Ա. Աբրահամյան, *Ս. Պալասանյանը և աշխարհաբարի քերականության իր դասագիրքը* («Հայոց լեզուն և գրականությունը դպրոցում», № 2, 1974, էջ 29)։

վիս առարկաների փոխադարձ հարաբերությունները, կոչվում են նախադրություն»[11], *բայց և այնպես դերանվան, դերբայի, շաղկապի սահմանումների ու վերլուծությունների հիմքում շարունակում է դնել բառերի քերականական, մասնավորապես շարահյուսական հատկանիշները։ Բայց չէ՞ որ նախադրության վերոհիշյալ սահմանումն էլ, վերջ ի վերջո, տրված է քերականական հիմունքով, քանի որ նախադրությունները առարկաների հարաբերությունները ցույց են տալիս ոչ թե որպես բառային անկախ միավորներ, այլ որպես նախադասության կառուցվածքի տարրեր, կամ բառերի որոշ կապակցությունների քերականական արտահայտիչներ։*

Մեր եղրակացությունը պարզ է։ Ստ. Պալասանյանը բառերը ըստ խոսքի մասերի դասակարգելիս իր տրամաբանական կամ իմաստային սկզբունքը կիրառում է միայն նյութական նշանակություն ունեցող բառերի նկատմամբ, իսկ քերականական նշանակության, այլև որոշ կարգի նյութական նշանակության բառերը տարբերակում է ըստ նախադասության մեջ իրենց կատարած շարահյուսական-քերականական գործառության և ըստ այդմ էլ դրանք սահմանում է։ Այսպես, օրինակ, «Այն բառերը, որոնք նախադասությունները և նախադասության անդամները միմյանց հետ կապում են, կոչվում են շաղկապ»[12]։ *«Այն բառերը, որոնք գործ են ածվում իբրև բայ և միանգամայն իբրև գոյական կամ ածական անուն, կոչվում են դերբայ»*[13]։ *«Այն բառերը, որոնք գոյական և ածական անունների տեղ են դրվում, կոչվում են դերանուն»*[14]։ *Իբրև մեր ասածի ընդհանրացում, չի կարելի չհիշել խոսքի մասերի դասակարգման միասնական սկզբունք մշակելու մասին Հ. Պաուլի վերևում հիշատակված այն միտքը, թե «Տարբերակման խիստ տրամաբանական համակարգ հաստատելու փորձերը ընդհանրապես անհիմն են»*[15]։

Այսուամենայնիվ հիմնական կամ նյութական խոսքի մասերն ըստ բառերի արտահայտած հասկացությունների տարբերակելու մոտեցումը շատ բանով օգնում է Պալասանյանին՝ հայերենի հիմնական խոսքի մասերը միասնական տրամաբանական սկզբունքով պարզաբանելու և սահմանելու, սրանց տարատեսակները նրբորեն

---

11 Ս. Պալասանյան, *Քերականություն մայրենի լեզվի, Տփխիս, 1894, էջ 79։*

12 Ս. Պալասանյան, *նշվ. աշխ., էջ 80։*

13 *Նույն տեղում, էջ 77։*

14 *Նույն տեղում, էջ 70։*

15 Г. Пауль, Принципы истории языка, М., 1960, էջ 415:

սահմանազատելու, վերջիններիս իմաստային և քերականական հատկանիշները ճիշտ բնութագրելու, նոր գրական հայերենի հոլովման և խոնարհման հարցույցները ճշգրտելու և նորմավորելու հարցերում։ Գոյականի նյութական և մտավոր (վերացական), շընչավոր և անշունչ, հասարակ և հատուկ տարատեսակների, ածականի որակական և հարաբերական, թվականների fանակական և դասական, *մակբայների* տեղական, ժամանակական, որակական և fանակական *տեսակների ստորակարգումն ու պարզաբանումները այսօր էլ չեն կորցրել իրենց գիտական և ուսուցողական արժեքը։*

Ինչպես ասվեց, Պալասանյանն առաջին քերականն էր, որ թվականն անջատեց ածականից, որպես առանձին խոսքի մաս։ Հետագայում նրա հետևողությամբ թվականն ինքնուրույն խոսքի մաս ճանաչեցին նաև Հար. Թումանյանն[16] *ու Գր. Վանցյանը*[17]*, և այդ տարբերակումը հայերենի քերականության մեջ քաղաքացիություն ստացավ։*

Ստ. Պալասանյանը մի շարք նորություններ բերեց նաև դերանունների ստորակարգման մեջ։ «Միջական անուններ»-ից հանեց մինչ այդ դերանուն չհամարվող ու «մասնական անուն» և «ընդհանրական անուն» տերմիններով դասակարգված բառերը և մտցրեց դերանունների մեջ, որպես «անորոշ դերանուններ»։ Ուրեմն Պալասանյանի անորոշ դերանունները իրենց մեջ միավորում են նրա նախորդների կողմից «միջական անունք» կոչված, իսկ հետագայում՝ 1930-ական թվականներից սկսած՝ որոշյալ, անորոշ, ժխտական, փոխադարձ դերանունների մեջ դասված բառերը։ Որոշ «միջական անուն»-ներ, ինչպես, օրինակ, ամեն, բոլոր, ողջ, ամբողջ, Պալասանյանը դեռևս դերանուն չի համարում։ Որ այս բառերը ոչ բոլոր հատկանիշներով են նույնանում բուն դերանուններին և սրանց դերանուն լինելը այսօր էլ վեճեր ու կասկածներ է հարուցում[18]*, խոսում է Պալասանյանի լեզվաբանական նրբանկատության օգտին։ Պալասանյանը անորոշ դերանունների մեջ է դրել նաև նախորդ քերականների կողմից «միջական անունների» մեջ իբրև վերաբերական անունների տարատեսակ համարված և դեռևս Զեյթունցու կողմից դերանուն ճանաչված* ինչպիսի, այսման, նույն-

---

[16] Հար. Թումանյանց, *Համառոտ ստուգաբանություն հայոց աշխարհաբար լեզվի, Թիֆլիս, 1904։*

[17] Գր. Վանցյան, *Դպրոցական քերականություն, Թիֆլիս, 1905։*

[18] *Տե՛ս* Մ. Ասատրյան, *Ժամանակակից հայոց լեզվի ձևաբանության հարցեր, Բ, Երևան, 1973, էջ 125։*

չափ և նման ցուցականները։ Նա, այսպիսով, իր քերականության մեջ ընդունում է դերանվան՝ անձնական, հարցական, ցուցական, ստացական, հարաբերական և անորոշ տեսակները։ Եթե սրանց ավելացնենք նաև որոշյալ դերանունները, որոնք թեև այստեղ միացված են անորոշներին, բայց Պալասանյանը իր «Ընդհանուր տեսություն արևելյան գրավոր լեզվի հայոց» գրքում համարում է դերանվան առանձին տեսակ, ապա կարող ենք ասել՝ Պալասանյանն առաջին հայ քերականն է, որի աշխատություններում հայերենի դերանունները ներկայացվում են անհամեմատ լրիվ տեսակավորմամբ և բառացանկով. մի բան, որ այլազգի լեզվաբաններ Շրյոդերն ու Հ. Պետերմանը վաղուց համարյա արել էին։

Ուշադրության է արժանի դերանունների ճարցական և պատասխանական խմբերի հակադրությունը, գոյական դերանուն—ածական դերանուն հակադրությունից զատ։

Այս բոլորով հանդերձ, Ստ. Պալասանյանն իր ներկայացրած աշխարհաբարի խոսքի մասերի համակարգով, ինչպես այն սպասելի էր, շատ թելերով դեռևս կապված է գրաբարի քերականությանը։ Այդ արտահայտվում է ոչ միայն այն բանում, որ նա առանձին խոսքի մաս է համարում դերբայը, թեև բայի խոնարհման հարացույցը ներկայացնելիս բայի դիմավոր ձևերի կողքին ներկայացնում է նաև նրա անդեմ ձևերը, որով այդ հարացույցը դառնում է բայի բոլոր ձևերի ամբողջություն,— այլև նյութական նշանակության մյուս խոսքի մասերի առանձին վերլուծություններում ու դասդասումներում։

Գրաբարի քերականության հետևությամբ է, անշուշտ, որ Պալասանյանը ընդունում է ստացական դերանվան առանձին տեսակ, իսկ հարաբերական դերանուն է համարում միայն որ դերանունը։ Թեև նրան հայտնի է և նրա կողմից բացատրվում է թվականի ու ածականի գոյականաբար գործածվելու երևույթը, բայց այդ խոսքի մասերը գրաբարի կանոնով համարվում են փոփոխվող, այսինքն՝ թեքվող խոսքի մասեր։ Թվականն անջատված է ածականից, որպես առանձին խոսքի մաս, բայց դերանվան և անուն խոսքի մասերի հարաբերակցությունը չի ճշգրտված։ Նախորդ շրջանի պես, դերանունները բաժանվում են գոյական և ածական դերանունների. իսկ թվական դերանուն, այլև մակբայական դերանուն հասկացությունները դեռևս չկան։

Սակայն Պալասանյանի բերած նորությունները հայ քերականագիտության, մասնավորապես գրական արևելահայերենի քերա-

կանական կառուցվածքի ուսումնասիրության մեջ այնքան ակնառու են, որ այս կարգի «ավանդապահությունները» չեն խանգարում նրա ծառայության գիտական գնահատմանը։

Հայ քերականագիտության մեջ Պալասանյանը խոսքի մասերի դասակարգման տրամաբանական սկզբունքի ամենահաջող և հետևողական կիրառողն է։

ՀԱՅԵՐԵՆԻ ԽՈՍՔԻ ՄԱՍԵՐԻ ԻՄԱՍՏԱԲԱՆԱԿԱՆ-ՇԱՐԱՀՅՈՒՍԱԿԱՆ ԴԱՍԱԿԱՐԳՈՒՄԸ Մ. ԱԲԵՂՅԱՆԻ ԱՇԽԱՏՈՒԹՅՈՒՆՆԵՐՈՒՄ

19-րդ դարը, ինչպես ասվեց, լեզվագիտության պատմության համար հայտնի է որպես գիտական լեզվաբանության հիմնադրման դարաշրջան։ Այդ շրջանում լեզվի կառուցվածքի վերլուծության ու նրա փիլիսոփայության մասին ստեղծված տեսական համարյա բոլոր հայտնությունները այս կամ այն չափով վերաբերում էին նաև խոսքի մասերի ուսմունքին։

19-րդ դարի վերջերին և 20-րդ դարի սկզբներին, երբ հայ լեզվաբանության ասպարեզ էր մտնում ապագա մեծ տեսաբան Մանուկ Աբեղյանը, նրան քաջ հայտնի էր պատմահամեմատական մեթոդի հիմնադիրներից մեկի՝ Յակոբ Գրիմմի, անունը, որը տասնամյակներ առաջ գրում էր. «Քերականության մեջ ինձ խորթ են ընդհանուր տրամաբանական հասկացությունները։ Նրանք, ինչպես երևում է, իրենց հետ բերում են սահմանումների խստություն (строгость) և հստակություն, բայց խանգարում են դիտողականությանը, որը ես համարում եմ լեզվական ուսումնասիրության հոգին»[19]*։*

Մ. Աբեղյանը գիտեր նաև ընդհանուր լեզվաբանության հիմնադիր Վիլհելմ Հումբոլդտի դրույթն այն մասին, թե «հիմնական կանոնը յուրաքանչյուր լեզու առաջին հերթին իր ներքին կապերի մեջ ուսումնասիրելն է, նրանում նկատված նմանությունները (аналогии) հայտնաբերելը և համակարգված դասավորելը, որպեսզի տիրապետենք լեզվում գաղափարների քերականական կապակցման միջոցների ակնհայտ գիտելիքների»[20]*։*

---

[19] **В. А. Звегинцев**, История языкознания XIX—XX веков в очерках и извлечениях, изд. 3, ч. I, М., 1964, *էջ* 18։

[20] *Նույն տեղում։*

19-րդ դարի երկրորդ կեսերին նախորդների հետևողությամբ ռուս լեզվաբան Ֆ. Ի. Բուսլաևը իր ռուսերենի պատմական քերականության մեջ (1858) ձայնարկությունն առանձնացրեց որպես առանձին բառախումբ, իսկ մյուս խոսքի մասերը բաժանեց հիմնական և սպասարկու կամ օժանդակ տարատեսակների։ Այս հարցը, ինչպես վերը տեսանք, հայ քերականագիտությունը լուծել էր վաղուց։ Մի կողմից՝ նկատելով սպասարկու խոսքի մասերից մի քանիսի սահմանափակ բառաքանակ ունենալու իրողությունը, մյուս կողմից խորացնելով բառերի բառային և քերականական հատկանիշների առանձնակի վերլուծությունները՝ Բուսլաևը հանգեց բառի երկակի բնույթի՝ մե՛կ իբրև բառարանային, այսինքն՝ բառային միավորի, մե՛կ իբրև քերականական միավորի ըմբռնմանը[21]։

Բառի քննությունը երկակի ձևով (բառիմաստային և բառաքերականական հարաբերություններում) կատարելու վերոհիշյալ մոտեցումը հետագայում Աբեղյանի խոսքի մասերի տեսության մեջ ստացավ իր դասական արտահայտությունը։

Ի հակադրություն քերականական լոգիցիզմին, 19-րդ դարի քերականագիտությունը ընդհուպ մոտեցավ այն դատողությանը, ըստ որի խոսքի մասերը արտացոլում են բառերի քերականական հատկանիշները։ 1860 թ. իր «Опыт русской грамматики» գրքում Կ. Ս. Ակսակովը գրում է. «Բառերի դասակարգումը պետք է լինի ոչ թե ըստ նրանց արտահայտած ներքին նշանակությունների, այդ դեպքում դա կլինի իրենց իսկ հասկացությունների և առարկաների դասակարգում, այլ ըստ այն ձևի, որ այդ նշանակություններին տրվում է իր իսկ բառի կողմից», ապա՝ «Այն, ինչ չի գտել իր տեղը, ինքնուրույն ձևը, առանձին արտահայտությունը իր իսկ բառի մեջ, նա չի կարող և չպետք է մտնի քերականության մեջ»[22]։

Մ. Աբեղյանը սկսում է զբաղվել հայերենի բառերի դասակարգման խնդրով այն ժամանակ, երբ լեզվաբանության մեջ մշակված է խոսքի մասերը ոչ թե տրամաբանական, այլ առաջին հերթին լեզվական կարգեր համարելու տեսակետը։ Աբեղյանին հայտնի է նաև շատերի, որոնց թվում նաև ռուս ականավոր լեզվաբան Ա. Պոտեբնյայի կողմից լեզուն որպես անընդհատ փոփոխվող ու

---

[21] *Տե՛ս* **А. Е. Супрун,** Части речи в русском языке, М., 1971, էջ 19—20:

[22] *Մեջբերումներն արված է ըստ Ա. Սուպրունի։ Տե՛ս նրա՝ նշվ. աշխ., էջ 21։*

զարգացող երևույթ ճանաչելու և նրա բաղադրիչները, այդ թվում նաև խոսքի մասերը պատմականորեն անընդհատ զարգացման ընթացքի մեջ դիտելու անհրաժեշտությունը։

Ինչպես քիչ հետո կտեսնենք, Մ. Աբեղյանի աշխատություններում բառերի տեսակների դասակարգման մեջ որոշակի արտահայտություն է գտնում հայ միջնադարյան քերականագիտության մեջ ևս արդեն լայնորեն գործածվող շարահյուսական մոտեցումը։ Սակայն Աբեղյանի աշխատություններում ներկայացված խոսքի մասերի համակարգը ընդհանուր կողմերով շատ է հիշեցնում ռուս լեզվաբան Վ. Բոգորոդիցկու՝ ռուսերենի համար առաջադրած խոսքի մասերի սխեման[23], թեև իր բազմակողմանիությամբ, վերլուծության խորությամբ և համակարգայնությամբ հայ լեզվաբանի դասակարգումը անհամեմատ ամբողջական ու հետևողական է և ավելի շուտ կարող է համեմատվել Վ. Վինոգրադովի կողմից հետագայում մշակված ռուսերենի խոսքի մասերի սխեմային։

Մ. Աբեղյանն իր և ոչ մի աշխատության մեջ խոսքի մասերի տեսության վերաբերյալ՝ բառերն ըստ խոսքի մասերի տարբերակելու սկզբունքների և այս մասին գոյություն ունեցող տեսակետների վերաբերյալ, առանձին քննություն չի կատարել։ Սակայն լինելով լեզվի խոշոր տեսաբան՝ Մ. Աբեղյանն զբաղվել է հայերենի բառային և քերականական կառուցվածքի համարյա բոլոր տեսական հարցերով, միաժամանակ այս կապակցությամբ անդրադարձել է լեզվի կառուցվածքի տրամաբանական և հոգեբանական բազմաթիվ իրակությունների. վերջապես, Մ. Աբեղյանը նաև մի շարք դասագրքերի հեղինակ է։ Մայրենի լեզվի կառուցվածքի և լեզվաբանության բնագավառների այսպիսի լայն հետաքրքրասիրություններ ունեցող լեզվաբանը չէր կարող չունենալ իր հայեցակետը բառերն ըստ սրանց զանազան հատկանիշների խմբավորելու և դասակարգելու և ապա որոշակի համակարգությամբ դրանք վերլուծելու գործում։ Այդ բանն Աբեղյանն անում է իր տարբեր աշխատություններում մեծ հմտությամբ, որը դառնում է հեղինակի՝ հայերենի խոսքի մասերի տեսությունը և այս հարցի պատմության մեջ մի նոր փուլ է նախանշում։

Մանուկ Աբեղյանը բառերի, ըստ խոսքի մասերի, դասակարգման հարցով սկսում է զբաղվել իր «Աշխարհաբարի քերականու-

---

[23] *Տե՛ս* **В. А. Богородицкий,** Общий курс русской грамматики, изд. 5, М.—Л., 1935, *էջ* 106:

թյամբ» (1906 թ.) և այդ հարցի լուծումը գիտական ավարտի է հասցնում «Հայոց լեզվի տեսության» մեջ (1931 թ.)։ «Աշխարհաբարի քերականության» մեջ, ինչպես և հետագայում, Մ. Աբեղյանը խոսք տերմինը գործածում է նախադասություն նշանակությամբ, ըստ այդմ էլ խոսքի մաս ասելով այստեղ նա հասկանում է նախադասության անդամ: «Խոսքը մտածության արտահայտությունն է բառերով»։

«Խոսքը քերականությունների մեջ սովորաբար կոչվում է նախադասություն» (Աշխ. ք., էջ 3)։

«Վերլուծել մի խոսք նշանակում է որոշել խոսքի մասերը, այսինքն՝ բայ, ենթակա և խնդիր» *(Աշխ. ք., էջ 47)։*

Մենք սկզբից ևեթ մեր ընթերցողի ուշադրությունն ենք հրավիրում Մ. Աբեղյանի լեզվական հասկացությունների տերմինավորման վրա, քանի որ այս հարցի անտեսումը ոչ միայն շարքային ընթերցողների, այլև առանձին ճանաչված հայագետների մղել է և կարող է դարձյալ մղել թյուրիմացությունների և Մ. Աբեղյանի հայացքների աղավաղված մեկնաբանությունների։ Եթե Մ. Աբեղյանի նախորդները խոսքի մասեր (մասունք բանի) հասկացության համար արդեն հավասարապես գործածում են նաև բառերի տեսակներ անվանումը, ապա Մ. Աբեղյանը քննվող աշխատության մեջ խոսքի մասը *գործածում է նախադասության անդամ հասկացությամբ, իսկ բառերի տեսակ ասելով մոտավորապես հասկանում է այն, ինչ ուրիշները անվանում են* խոսքի մաս: *Սակայն Աբեղյանի բառերի տեսակ և ուրիշների* խոսքի մաս *անվանումների մեջ էլ ուղղակի համապատասխանություն չկա, քանի որ Մ. Աբեղյանը բառերի նոր տեսակներ է համարում արդեն առանձին տեսակ ճանաչված բառախմբից անջատված ենթատեսակները նույնպես, որի հետևանքով տեսակ անվանումը դադարում է իր բոլոր կիրառություններում մի ընդհանուր հասկացություն արտահայտող տերմին լինելուց։*

Մ. Աբեղյանի քերականական համակարգում լեզվական վերլուծության հիմնական միավորը բառն է։ Քերականության երեք մասերում (հնչաբանություն, բառագիտություն, շարահյուսություն) նա բառը ենթարկում է հնչյունական, բառագիտական և շարահյուսական վերլուծությունների։

Բառի բառագիտական քննությունն ըստ Աբեղյանի այլ բան չէ, քան նրա իմաստի, խոսքի (իմա՛ նախադասություն) մեջ կատարած պաշտոնի, կազմության և ձևքման (ձևաբանական) հատկա-

նիշների վերլուծությունը։ «Աշխարհաբարի քերականության» մեջ բառերի տեսակները որոշող հիմնական չափանիշը նախադասության մեջ նրանց վարած պաշտոնն է, այսպես՝

«82. Բառերը նայելով խոսքի նկատմամբ կատարած պաշտոնին 4 տեսակ են.

Ա. Խոսք կազմող բառեր կամ բայ.

Բ. Խոսք լրացնող բառեր կամ լրացում.

Գ. Խոսքեր և լրացումներ կապող բառեր կամ զոդ.

Դ. Խոսքից դուրս մնացող բառեր կամ ձայնարկություն»[24]։

Լրացում և զոդ անուններով խմբավորված բառատեսակները դարձյալ ըստ շարահյուսական դերի հաջորդ աստիճանում բաժանվում են նոր տարատեսակների։ Քանի որ զոդ անվամբ միավորված բառերի նշանակությունները տրոհման բոլոր աստիճաններում մնում են քերականական-շարահյուսական, ապա նրանք «նայելով իրենց վարած պաշտոնին» բաժանվում են երկու նոր տեսակի՝ կապ և շաղկապ, իսկ շաղկապներն էլ, նայած այն բանին, թե բառերի կամ նախադասությունների համադասական կապակցություն են արտահայտում, թե ստորադասական, բաժանվում են համադասական և ստորադասական տարատեսակների[25]։

Լրացում անվամբ կոչված բառատեսակը, որն իր մեջ է առնում հայերենի նյութական նշանակության բոլոր բառերը, բացի դիմավոր բայից, երկրորդ աստիճանում հեղինակը նոր տեսակների է բաժանում սրանց նշանակությունների կամ իմաստային հատկանիշի հակադրմամբ. «98. Լրացումները նայելով իրենց իմաստին՝ երկու տեսակ են՝ գոյական և ածական» (էջ 48)։

Սակայն այս տեսակավորման հիմունքն էլ մնում է շարահյուսական, քանի որ եթե այդ հակադրության մի անդամը՝ գոյականը, ստանում է, կարծես, իմաստային բնութագիր և սահմանում, այսպես՝ «Գոյական ասվում են այն բառերը, որոնք ցույց են տալիս անկախ կամ իբրև անկախ մտածված առարկաներ...» (էջ 48), ապա հակադրության մյուս անդամը՝ ածականը, առանձնացվում է շարահյուսական հատկանիշով. «Ածական կոչվում են այն բառերը, որոնք դրվում են ուրիշ բառերի վրա» (էջ 56)։ Ածականի

---

24 Մ. Աբեղյան, Աշխարհաբարի քերականություն, Վաղարշապատ, 1906, էջ 40։

25 Տե՛ս Աշխ. քեր., էջ 69—71։ Այսուհետև տողատակերը չծանրաբեռնելու համար, ըստ հարմարության, էջերը նշում ենք մեջբերումների հետ։

Հետագա տրոհումը նոր տարատեսակների դարձյալ կատարվում է բառերի շարահյուսական գործառույթյան հաշվառմամբ. «49. Ածականների ցույց տված գաղափարները նայելով խոսքի մեջ կատարած պաշտոնին՝ մտածվում են անվան, բայիմաստի, ածականի հետ կապված, ուստի և ածականները լինում են՝ մականուն, մակբայ և մակածական: Օրինակ՝ նա խիստ մարդ է: Նա խիստ է խոսում: Նա խիստ գեղեցիկ է» (էջ 56)։

Ինչպես գոյականի, այնպես էլ այս մականուն, մակբայ և մակածական բացարձակ շարահյուսական անվանումների հետագա վերլուծություններն ու նոր ստորաբաժանումները Մ. Աբեղյանը կատարում է բառերի միայն իմաստային հատկանիշների հաշվառմամբ և ստանում է գոյականի և ածականի հետևյալ նոր տարատեսակները։

«101. Գոյականները նայելով իրենց իմաստին՝ երկու տեսակ են, անուն և դերանուն (էջ 48)։

«103. Անունները լինում են՝ հատուկ անուն, հասարակ անուն, բայանուն, անորոշ անուն և հարցական անուն» (էջ 49)։

«113. Դերանունները լինում են՝ անձնական, ցուցական, փոխադարձ և հարաբերական» (էջ 57)։

«121. Մականունները նայելով իրենց իմաստին լինում են՝ ոռակական, ֆանակական, դասական, ցուցական, բայածական, անորոշ, հարցական և հողեր» (էջ 57)։

«141. Մակբայները նայելով իրենց ցույց տված գաղափարներին՝ սովորաբար բաժանվում են հետևյալ տեսակների.

1. Տեղական մակբայներ

2. Ժամանակական մակբայներ

3. Որակական մակբայներ

4. Քանակական մակբայներ

5. Եղանակային մակբայներ

Մակածականներն էլ ըստ նշանակության լինում են՝ պարագայական և աստիճանի (էջ 67)։

Մ. Աբեղյանն իր այս ստորակարգումները տեղ-տեղ ավելի է մանրամասնում, սակայն ամփոփման մեջ ընդունում է իր տարբերակած բառերի չորս տեսակների՝ բայ, լրացում, զոդ, ձայնարկություն, հետևյալ ստորաբաժանումները. «Բառերի տեսակներն, ուրեմն, իրենց գլխավոր ստորաբաժանումներով հանդերձ լինում են՝ բայ, անուն, դերանուն, մականուն, մակբայ, մակածական, կապ, շաղկապ և ձայնարկություն» (էջ 78)։

Որո՞նք են Մ. Աբեղյանի նախադասության տրոհման և բառերի տեսակների որոշման մեթոդն ու սկզբունքները։

Իր այս քերականության մեջ հեղինակը, դասագրքի ընձեռած հնարավորությունների սահմաններում և լեզվի կառուցվածքի գոյծնական ուսուցման նպատակից ելնելով, իր տերմինավորմամբ ներկայացնում է նախադասության անդամների և բառերի տեսակների մի այնպիսի համակարգ, որի միավորներն իրար հակադրվում և, մյուս կողմից, ընդհանրացմամբ առանձնանում են և՛ շարահյուսական, և՛ իմաստային հատկանիշներով։ Թեև այդ իմաստն էլ նեղ բառային իմաստը չէ։

Բառերի դասակարգման շարահյուսական սկզբունքը հիմնականն է, բայց որքան տրոհումը մանրանում է, այնքան բառերի շարահյուսական-կիրառական տարբերակիչ հատկանիշները փոխվում են բառային կամ բառաքերականական իմաստային տարբերակիչ հատկանիշների։ Այնպես որ Մ. Աբեղյանի մշակած քերականական այս սխեման իր նախնական վիճակում իսկ ունի որոշակի ավարտվածություն, նա արտացոլում է նախադասության մեջ բառերի կապակցման թե՛ շարահյուսական-գործառական, թե՛ սրա հիմքում ընկած իմաստային-մտածական հատկանիշները, որոնցով էլ բնորոշվում է լեզվի կառուցվածքը։

Ինչպես նախադասության կառուցվածքի վերլուծման, այնպես էլ բառերի տեսակների որոշման ելակետը Մ. Աբեղյանի քերականության մեջ բայն է։ Ինքը բայը նախ տարբերակվում է նախադասության մեջ կատարած իր դերով, «Բայ ասվում են մենակ խոսք կազմող բառերը» (էջ 78)։ Այլ բառերի պես բայերը նույնպես ունեն իրենց իմաստային ընդհանրությունը՝ բայիմաստը, սակայն բառերն իմաստային հատկանիշներով նորանոր ենթատեսակների բաժանելիս այս բառախումբը նոր բառատեսակների չի բաժանվում, որովհետև բայի արտահայտած երեք գլխավոր գաղափարներից՝ բայիմաստ, դեմ և թիվ, տարբերակիչ արժեք ունեցող հատկանիշները դեմքն ու թիվն են, գործողության, ըստ հեղինակի, եղելության գաղափարին երբե չեն զուգակցվում դեմքի և թվի գաղափարները, բառը լավագույն դեպքում կարող է լինել այլ բառատեսակների շարքը դասվող դերբայ, բայց ոչ բայ։ Աբեղյանի «Առանց բայի խոսք չկա» (էջ 41) դատողությանը ըստ էության հետևում է՝ խոսքից դուրս բայ չկա եղրակացությունը։

Այս մեկնաբանությունը հայերենի կառուցվածքին շատ բնորոշ ու տիպական է, որը, հավանաբար, քիչ դեր չունի Մ. Աբեղ-

յանի՝ բառերի դասակարգման համակարգի հետևողականության և ամբողջականության մեջ։

Բայն առանձնացնելով որպես խոսքի կենտրոն, նրա գլխավոր անդամը՝ Մ. Աբեղյանը մնացած բառերն առանձնացնում է բայի և ապա նոր միմյանց հետ ունեցած նախ՝ շարահյուսական և ապա՝ իմաստային լրացական փոխհարաբերություններով։

Երբ հետևում ենք հեղինակի վերլուծության բովանդակությանը, մեծ մասամբ ստանում ենք լեզվական երկանդամ հակադրություն։

Այսպես՝ բայ— լրացում
գոյական— ածական
անուն— դերանուն
խոսք կազմող բառեր— խոսք չկազմող բառեր

Բառեր և խոսքեր կապող բառեր (զոդ)— խոսքից դուրս մնացող բառեր (ձայնարկություն) և այլն։

«Աշխարհաբարի քերականության» մեջ խիստ հետևողականություն չկա նախադասության կառուցվածքում բառերի դերը վերլուծելիս սրանց շարահյուսական և բառային տարբերակիչ հատկանիշների ընտրության և գործադրման մեջ։ Լրացումը հակադրված է բային իր շարահյուսական հատկանիշով, իսկ հաջորդ աստիճանում գոյականն ու ածականը առանձնացվում են իմաստային հակադրմամբ։ Գոյականի ներսում անունն ու դերանունը իրարից անջատվում են իմաստային հակադրությամբ (հաստատուն նշանակության բառեր— փոփոխական նշանակության բառեր), իսկ ածականի ներսում մականուն, մակբայ և մականվական բառատեսակները միմյանցից բաժանվում են միայն շարահյուսական տարբերակիչ հատկանիշներով (անվան հետ մտածվող, ուրեմն անվան վրա դրվող բառեր, բայի վրա դրվող բառեր և ածականի վրա դրվող բառեր)։ Այս ամենի հետևանքը լինում է այն, որ բառերի շարահյուսական-լրացական փոխհարաբերությունների հաշվառմամբ կատարված այս դասակարգման մեջ երկանդամ հակադրությամբ անջատված շարահյուսական միավորները, իբրև այդ կապակցություններից դուրս բառեր, բառային այլ հատկանիշներով, մասնավորապես իմաստային հատկանիշով իրար չեն հակադրվում ու միավորվում։ Այդ պատճառով էլ նույն բառերը տարբեր պաշտոններում դիտվում են որպես տարբեր տեսակի բառեր։ «Աշխարհաբարի քերականության» մեջ հաճախ կհանդիպեք հետևյալ կարգի զգուշացումների։ «Չպիտի շփոթել ի՞նչ հարցական անունը

և ինչ անորոշ անունը, որոնք գոյական են և մենակ են գործածվում, ի՞նչ հարցական մականվան հետ, որ իբրև ածական դրվում է անվան վրա, օրինակ՝ դու ի՞նչ ասացիր։ Ամեն ինչ կորած է։ Դու ի՞նչ գործ բռնեցիր» (էջ 61)։

Այս երևույթը հեղինակը նկատում է ոչ միայն դերանունների ու դերանվանացած բառերի, այլև բոլոր նյութական նշանակության բառերի մեջ։ Վերը տեսանք, թե ինչպես միևնույն խիստ բառը մե՛կ մականուն է, մե՛կ մակբայ, մե՛կ էլ մակածական։

Հետևելով լեզվաբանական այլ ուղղության՝ Մ. Աբեղյանն իր քերականության մեջ համարյա նկատի չունի Ստ. Պալասանյանի բերած նորությունները։ Նա յուրովի է լուծում 19-րդ դարի հայ քերականագիտության մեջ բառերի դասակարգման խնդրում եղած տարակարծությունները։

«Աշխարհաբարի քերականության» մեջ թվականը ածականի մի տեսակ է, որ մտցված է մականվան մեջ, իբրև սրա ֆանակական և դասական իմաստային տարատեսակը, մինչդեռ Պալասանյանը թվականը համարում է առանձին խոսքի մաս։ Դերանունը հակադրվում է անվանը և սրա հետ կազմում է գոյականի մի ենթատեսակը։ Ուրեմն Մ. Աբեղյանը այստեղ ճանաչում է միայն գոյական դերանուններ, չորս տարատեսակներով՝ անձնական, ցուցական, հարաբերական, փոխադարձ։ Մյուս դերանունները, որոնք նախորդների մոտ «միջական» անուններ էին, ըստ շարահյուսական գործառության, բաշխված են գոյական և ածական անունների ենթատեսակների վրա՝ հարցական և անորոշ անուն կամ մականուն տարբերակմամբ։ Այլևս առանձին խոսքի մաս կամ բառատեսակ չեն համարվում դերբայները։ Սրանցից անորոշը մըտցրված է գոյականի մեջ, իբրև անվան մի տարատեսակ՝ բայանուն, իսկ մնացածները՝ անկատար, ապառնի, անցյալ (վաղակատար և հարակատար) ենթակայական, դրված են ածականի տակ, որպես բայածականներ։ Մ. Աբեղյանի «Աշխարհաբարի քերականության» մեջ թերևս ամենավիճելին գնում, գնալիս, գնացել բայաձևերը բայածականներ համարելու պնդումն է, որ անգամ շարահյուսական մոտեցմամբ չի հիմնավորվում և հեղինակին առիթ է տվել հետագայում իր այդ մոտեցման վերանայմանը։

Հիշատակության արժանի է նաև հոդերի որպես մականվան, այսինքն՝ անկախ բառաձևի արժեք ունեցող լեզվական իրողության ճանաչելու Աբեղյանի մոտեցումը։

Իր ներկայացրած համակարգի ներսում զանազան բառերի ու

բառաձևերի դրսևորած տատանումների ու շեղումների վերաբերյալ տրված բոլոր բացատրություններից ու հիմնավորություններից զատ, հեղինակը երկու դեպքում միայն տալիս է բառերի տեղը կամ տեսակը վերջնականորեն չլուծող բացատրություն։

Պատասխանական այո՛, ո՛չ, չէ՛ բառերը դնելով մակբայների տակ՝ նա միաժամանակ գտնում է, որ «դրանք իսկապես մակբայ չեն և ոչ էլ ածական, որովհետև դրվում են ամբողջ խոսքի տեղ» (էջ 66)։

Ձայնարկությունները բնորոշվում են որպես խոսողի զգացումներն ու կամքը ցույց տվող բառեր, և քանի որ բնաձայնությունները ո՛չ զգացում և ո՛չ էլ կամք են ցույց տալիս, բայց մտցվում են ձայնարկությունների մեջ, Աբեղյանը այդ անում է հետևյալ վերապահությամբ. «173. Ձայնարկությունների մեջ են դնում և համանձայնությունները, ինչպես ծի՛վ ծի՛վ, ճըլըվը՛ստ, ճը՛ռ, թրը՛խկ և այլն» (էջ 77)։ Այս ձևակերպմամբ հեղինակը կամենում է ասել, թե բնաձայնությունները իսկական ձայնարկություն չեն։

«Աշխարհաբարի շարահյուսության» մեջ Մ. Աբեղյանի բառերի դասակարգման տեսությունն ավելի ամբողջական է։ Խոսքի կամ նախադասության մեջ բառերի շարահյուսական հատկանիշների վերլուծությունից առաջ «բառերի տեսակները» վերնագրի տակ հեղինակը անհրաժեշտ է համարում կատարել բառերի դասակարգում ըստ նշանակության։ «4. Մենք խոսում ենք բառերով։ Ամեն բառ ունի մի նշանակություն և ըստ այնմ մի պաշտոն է կատարում խոսքի նկատմամբ։ Ուստի բառերի պաշտոնը խոսքի մեջ ուսանելուց առաջ պետք է տեսնել, թե ինչպիսի նշանակություն ունեն բառերը և ինչպիսի տեսակների են բաժանվում ըստ իրենց նշանակության»[26]։

Թեև բառերի ըստ նշանակության տարբերակումը Մ. Աբեղյանը այստեղ կատարում է այն իր բուն նպատակին՝ բառերի շարահյուսական արժեքների վերլուծությանը, ծառայեցնելու համար, բայց և այնպես այդ կապակցությամբ պարզ է դառնում բառերի շարահյուսական կիրառությունների հիմքում սրանց հասկացական իմաստները տեսնելու նրա միանգամայն ճիշտ հայեցակետը։ Այս և հետագա աշխատություններում Մ. Աբեղյանը, նախադասության մեջ բառի բնութագիրը տալիս, միշտ նկատի ունի նրա կա՛մ նշա-

---

[26] Մ. Աբեղյան, Աշխարհաբարի շարահյուսություն, Վաղարշապատ, 1912, էջ 3։

նակությունը, կա՛մ պաշտոնը, քանի որ սրանք պայմանավորված են միմյանցով։ Եթե նկատի ունենանք նաև այն հանգամանքը, որ բառի շարահյուսական հատկանիշները հայերենում առավելապես ունենում են ձևաբանական դրսևորում, ապա պարզ կդառնա Մ. Աբեղյանի բառերի դասակարգման շարահյուսական սկզբունքի այնքան ամբողջական ու հետևողական պատկեր ունենալու գաղտնիքը։

Աբեղյանը բառերի դասակարգման տարբերակիչ հատկանիշ է դարձնում այն շարահյուսական կիրառությունները, որոնց հիմքում ընկած են բառային նշանակությունները, իսկ շարահյուսական կիրառություններն էլ հայերենում զուգորդվում են բառերի ձևաբանական փոփոխություններով։ Ըստ էության բառը բնութագրվում է և՛ իմաստային, և՛ շարահյուսական, և՛ ձևաբանական հատկանիշներով։

«Աշխարհաբարի քերականության» մեջ լեզվի կառուցվածքի ուսուցման նպատակից ելնելով՝ Մ. Աբեղյանը առանձին գլուխներով ներկայացնում է բառերի տեսակներն ըստ նշանակության, ըստ պաշտոնի, կազմության և ըստ թեքման կամ ձևաբանական հատկանիշների։ «Աշխարհաբարի շարահյուսության» մեջ բառերի տեսակները որոշվում են երկու չափանիշով՝ ըստ նշանակության և պաշտոնի։ «Բառերը նայելով իրենց նշանակության և խոսքի նկատմամբ կատարած պաշտոնին՝ ամենից առաջ բաժանվում են երկու մեծ խմբի...» (էջ 3), գրում է հեղինակը։ Հետագա վերլուծությունները, նայած անհրաժեշտության, լինում են ոչ միայն շարահյուսական, այլ նաև իմաստային հիմունքով։

Ի տարբերություն նախորդ աշխատության մեջ ներկայացված դասակարգման, ուր ձայնարկությունը բաժանվում է մյուս բառերից ամենավերջում, այստեղ Աբեղյանը բառախմբերի որոշման առաջին աստիճանում առանձնացնում է խոսքի մեջ ոչ մի պաշտոն չունեցող բառերը՝ ձայնարկությունները, խոսք կազմող բառերից։

Այսպիսի խմբավորումը հնարավոր է դարձնում հակադրության երկու միավորների բնութագրումը իմաստային և շարահյուսական դրական հատկանիշներով։ Հակադրության մի կողմում կան գաղափար ցույց տվող բառերը, որոնցով մենք մտածում և խոսում ենք, մյուս կողմում՝ զգացմունք և կամք ցույց տվող բառերը, որոնք նախադասության ներքին կապակցությունից դուրս են

մնում և ոչ թե միտք կամ դատողություն են արտահայտում, այլ զգացմունք։

Այս նախնական հաջող բաժանումը հեշտացնում և հետևողական է դարձնում բառերի դասակարգումը նաև հաջորդ աստիճաններում։

Գաղափար ցույց տվող բառերը ըստ նախադասության մեջ կատարած իրենց դերի լինում են.

«ա. Խոսք կազմող բառեր կամ բայ.

բ. Լրացական բառեր...

գ. Կապակցական բառեր...» (էջ 3—4)։

Նախորդ աշխատության մեջ տարբերակած լրացական բառերի երկու տեսակների՝ գոյականի և ածականի դիմաց «Աշխարհաբարի շարահյուսության» մեջ Աբեղյանը զանազանում է երեք բառատեսակ՝ գոյական, ածական, մակբայ (էջ 7)։

Մակբայն առանձնացվում է ածականից, այսինքն առարկայի հատկանիշ նշանակող բառերից, որպես բայի և ածականի լրացում հանդիսացող բառ կամ այլ կերպ՝ հատկանիշի հատկանիշ նշանակող բառ։ Սրանով էլ ավելորդ է դառնում ածականի տրոհումը մականուն, մակբայ, մակածական տարատեսակների, որպիսի բաժանում գտանք հեղինակի նախորդ աշխատության մեջ։

Մակբայ բառատեսակի առանձնացման կապակցությամբ Մ. Աբեղյանն անում է հայերենի կառուցվածքի համար շատ ուշադրավ մի դիտողություն ևս։ Նա նշում է, որ հայերենում պարագայական նշանակությամբ գործածվում են ոչ միայն ածականները, այլև գոյականները և, մինչդեռ պարագայական նշանակությամբ գործածված գոյականները չեն համարվում մակբայ, ածականները այդ պաշտոնում «դառնում են առանձին տեսակի բառեր՝ մակբայ»։ «Հայերենում բուն մակբայները սակավաթիվ են, այսինքն քիչ բառեր կան, որոնք միայն մակբայ գործածվեն։ Մեր մակբայներն ամենամեծ մասամբ դրությամբ միայն մակբայ են, երբ ածականի ցույց տված հատկանիշը վերաբերում է ոչ թե առարկային, այլ առարկայի հատկանիշին, այդ ժամանակ ածականներն առնվում են իբրև մակբայ» (էջ 8)։ Հայերենի մակբայների միայն դրությամբ, ուրեմն շարահյուսորեն ածականներից տարբերվելը իրավունք է տալիս Աբեղյանին ասելու, թե «այնպես որ կարելի է լրացական բառերն երկու տեսակի միայն բաժանել՝ գոյական և ածական, որոնք երկուսն էլ իրենց կողմից կարող են պարագայական նշանակությամբ գործածվել» (8)։

Այնուամենայնիվ հեղինակը բային հակադրվող գաղափար նշանակող լրացական բառախմբի ներսում տեսնում է երեք տեսակի բառեր՝ գոյական, ածական, մակբայ, որոնց շարահյուսական տրոհումն ու հակադրությունը (առարկա ցույց տվող լրացում՝ գոյական, հատկանիշ ցույց տվող լրացում՝ ածական, պարագա ցույց տվող լրացում՝ մակբայ) հիմնավորված են այդ բառերի իմաստային հատկանիշով ևս (առարկայի իմաստ, հատկանիշի իմաստ, հատկանիշի հատկանիշի իմաստ)։

Մ. Աբեղյանն իր «Աշխարհաբարի շարահյուսության» մեջ շարունակում է սույն երեք տեսակի բառերի հաջորդ աստիճանի, ավելի ցածր մակարդակի բաժանումը։ Նրա կառուցած համակարգում նախ նոր մեկնաբանում է ստանում դերանունը։

Թեև «Աշխարհաբարի քերականության» մեջ նա նախորդ շրջանի հայ քերականների պես ընդունում է միայն գոյական դերանուն և արդեն Պալասանյանի կողմից դերանուն համարված ածական դերանունները անուղղակի, դրսդրական, անձնական, հարցական ածական անվանումներով դնում է ածականի մականուն տարատեսակի տակ, ապա «Աշխարհաբարի շարահյուսության» մեջ Աբեղյանի անուն և դերանուն անվանումները ավելի լայն բովանդակություն են ստանում։ Բացի բայից, որ նրա համակարգում բայի միայն դիմավոր ձևն է և հավասարարժեք է նախադասության, նյութական նշանակության մյուս բոլոր բառերը, որոնք բառերի երեք տեսակ են կազմում՝ գոյական, ածական, մակբայ, իրենց հերթին, ըստ նշանակության, բաժանվում են անուն և դերանուն ենթատեսակների։ Սրանց տարբերակիչ իմաստային հատկանիշը հետևյալն է. «Անուններն ունեն անփոփոխ, հաստատուն նշանակություն, իսկ դերանունները հաստատուն նշանակություն չունեն, այլ ամեն անգամ նայելով, թե ինչ անվան տեղ են դրված կամ ինչ անուն են ակնարկում՝ նրա նշանակությունն էլ ստանում են» (էջ 8)։ Այս բացատրությունը, կարծես, Ա. Այտընյանի դերանվանը տված բացատրության շարունակությունն է։ Այտընյանի մեկնաբանությամբ դերանունը հակադրվում է անվանն առարկան չանվանելու, այլ մատնանշելու իր հատկությամբ։ Ըստ այդ բացատրության անունը անվանում է առարկան, բայց չի հայտնում, թե որն է, իսկ դերանունը ցույց է տալիս առարկան, առանց անունը տալու[27]։ Անվանելով առարկան կամ նրա զանազան

---

[27] Տե՛ս Ա. Այտընյան, նշվ. աշխ., էջ 38։

հատկանիշները՝ անունը ստանում է ամփոփոխ կամ հաստատուն նշանակություն, մինչդեռ դերանունը, չլինելով անուն, այլ առարկան կամ հատկանիշը մատնանշող բառ, նշանակություն է ստանում ըստ գործածության։ Մ. Աբեղյանի մշակած համակարգում դերանունն անուններից անջատվում և դառնում է գոյականի, ածականի ու մակբայի «երկրորդական տեսակ», բայց ոչ առանձին հիմնական բառատեսակ կամ մեր տերմինով ասած՝ առանձին խոսքի մաս, թեև Աբեղյանն այստեղ էլ «տեսակ» և «երկրորդական տեսակ» անվանումների հետևողական գործածություն չունի։

«Աշխարհաբարի շարահյուսության» մեջ Աբեղյանը վերջնականապես որոշել է հայերենի թվական անունների և դերբայների տեղը մյուս բառատեսակների շարքում[28]։ Շարահյուսության մեջ դերանվան պես թվականն էլ է բաշխված նյութական նշանակության բառատեսակների վրա։ Իմաստային ներփակ խումբ կազմող այս բառերը, նայած իրենց քերականական՝ բառակազմական և շարահյուսական հատկանիշների, բաշխվում են գոյական, ածական, մակբայ բառատեսակների վրա՝ դառնալով սրանց մի նոր տեսակ կամ «երկրորդական տեսակ»՝ թվական գոյական (տասնյակ, հիսնյակ, հարյուրյակ), թվական ածական (առաջին, երկրորդ, մի, երկու, երեք), թվական մակբայ (երկիցս, երիցս) անվանմամբ (էջ 9)։ Նույն սկզբունքով վերոհիշյալ երեք բառակարգերի վրա են բաշխվում նաև դերբայները։

«Աշխարհաբարի քերականության» մեջ Մ. Աբեղյանը անորոշ դերբայը համարում էր գոյական, իսկ մնացած դերբայները՝ ածականի տարատեսակ, թեև –ում վերջավորությամբ անկատար, ինչպես և վաղակատար դերբայները ածականական գործածություն չունեն։ Հեղինակն այս հարցում նույնպես կատարում է ճշգրտում։ Վերոհիշյալ երկու բայաձևերը, որոնք օժանդակ բայի կապակցությունից դուրս անկախ գործածություն չունեն (խաղում եմ, էի, խաղացել եմ, էի), եմ օժանդակ բային կապակցված մնում են որպես բայ, իսկ մնացած դերբայները, այդ թվում և ապառնին, ըստ իրենց շարահյուսական գործածության բաշխվում են գոյական, ածական, մակբայ բառատեսակների վրա՝ «Դերբայ գոյական կամ բայանուն, սովորաբար՝ անորոշ դերբայ (գնալ, ասել, գրել)», «Դերբայ ածական կամ բայածական (գրած, գրող)», «Դերբայական մակբայ կամ բայական մակբայ (գալիս, գրելիս)» անվանմամբ (էջ

[28] Տե՛ս «Աշխարհաբարի քերականություն», էջ 57։

9)։ Իբրև բայածականի օրինակ այստեղ հեղինակը բերել է հարակատարի և ենթակայականի օրինակներ՝ գրած, գրող, որից կարող է թվալ, թե նա ապառնին այլևս բայածական չի համարում, բայց «Հայոց լեզվի տեսության» մեջ Աբեղյանը փարատում է ընթերցողի այս կասկածը՝ այդ երկու օրինակին ավելացնելով նաև գրելու օրինակը[29]։

Այսպիսով, Մ. Աբեղյանը «Աշխարհաբարի շարահյուսության» մեջ «Բառերը նայելով իրենց նշանակության և խոսքի նկատմամբ կատարած պաշտոնին» բաժանում է բայ, գոյական, ածական, մակբայ, կապակցական բառեր և ձայնարկություն տեսակների։ Դերանունը, թվականը և անկախ գործածության դերբայները համարում է գոյականի, ածականի և մակբայի երկրորդական տեսակներ, իսկ կապակցական բառերի կապ և շաղկապ տարատեսակների մասին, սրանց առանձի՞ն բառատեսակ, թե կապակցական բառերի երկրորդական տեսակ լինելու մասին, որոշակի բան չի ասում։ Հետևությունը պարզ է. Աբեղյանը բառերի առանձին տեսակ է համարում այն բառախմբերը, որոնք ընդհանրացած են նախադասության մեջ կատարած շարահյուսական պաշտոնով։ Դերանուն, թվական, դերբայ տարբերակումները մնում են բառատեսակների ներսում, իբրև երկրորդական տեսակներ, քանի որ գլխավոր բառատեսակին ունեցած սրանց իմաստային հակադրությունը չի զուգորդվում նաև գործառական (ֆունկցիոնալ) հակադրությամբ։ Ահա թե ինչու Աբեղյանի բառերի դասակարգման մեթոդը, ինչպես իրավացիորեն նկատել են շատերը, իր գլխավոր հիմունքով մնում է շարահյուսական։

«Աշխարհաբարի շարահյուսության» մեջ էլ Աբեղյանը շարունակում է խոսքի մաս տերմինը գործածել նախադասության անդամ նշանակությամբ, ուստի բառերի տեսակներից բայը և նրա լրացումները (գոյական, ածական, մակբայ) կամ լրացական բառերը անվանվում են «խոսքի մասեր կամ նախադասության անդամներ» (էջ 9), իսկ կապակցական բառերը (կապ, շաղկապ)՝ «խոսքի մասնիկներ»։ Լրացման լրացումները «կոչվում են խոսքի կողմնակի մասեր կամ կողմնակի լրացումներ» (էջ 10)։

Այս աշխատության մեջ բայը և լրացական բառերը (գոյական, ածական, մակբայ) անվանվում են արդեն խոսքի մասեր, բայց դրանց տարբերակումը և քննությունը կատարված է «Բառերի տե-

[29] Տե՛ս Մ. Աբեղյան, Հայոց լեզվի տեսություն, Երևան, 1931, էջ 131։

ակներ»-ի վերլուծության մեջ՝ «խոսքի մասեր» վերնագրի տակ քննված են «խոսքի մասերը նայելով խոսքի մեջ իրենց կատարած պաշտոնին», որոնք լինում են՝ բայ-ստորոգյալ, ենթակա, խնդիր, պարագա, վերադիր (տե՛ս էջ 9—10)։ Այսպիսով, Մ. Աբեղյանն սկսում է «խոսքի մաս» անվանումը գործածել ոչ միայն նախադասության անդամի, այլև ավելի վայն նշանակությամբ՝ այդպես կոչելով նաև նախադասության անդամի դերով հանդես եկող բառատեսակները։

Քննվող հարցի վերաբերյալ Մ. Աբեղյանի հայացքները վերջնական ձևակերպում են ստանում «Հայոց լեզվի տեսության» մեջ, ուր հայերենի բառերի դասակարգման ավելի ամբողջական համակարգ է ներկայացվում։

Այս աշխատության մեջ հեղինակը բառերի խոսքիմասային դասակարգման հարցին անդրադառնում է երկու տարբեր գլուխներում։ Գրքի առաջին մասում, «Խոսվածքի վերլուծությունը» վերնագրի տակ, քննելով «հոգեբանական դատողության կամ մտածության» բառային արտահայտության հարցը, նա, այդ մտածության նյութ հանդիսացող պատկերացումները, ինչպես և նրանց համապատասխան բառերը ըստ դատողության մեջ կատարած իրենց դերի խմբավորելով, ստանում է «նյութական կամ իրական նշանակություն ունեցող բառերի երեք մեծ խմբեր՝ գոյական, ածական և բայ» (էջ 26)։

Մ. Աբեղյանը նյութական նշանակության բառերի այս երեք խմբերն ստանում է այդ կարգի բառերի երկանդամ երկաստիճան հակադրությամբ։ Առաջին աստիճանի երկանդամ հակադրության բովանդակությունը ներկայացվում է այսպես. «Մեր բոլոր պատկերացումներն արտաքին աշխարհի առարկաների ու երևույթների և մեր իսկ հոգեկան վիճակների մասին՝ իրար հետ զուգորդվելով կազմում են ամենից առաջ երկու մեծ խմբեր, առանց որոնց չենք կարող մտածել։ Այդ պատկերացումների մի մասը ներկայանում են մեզ իբրև ինքնակա, անկախ գոյություն ունեցող առարկաներ, մյուս մասը՝ իբրև ոչ ինքնակա հատկանիշներ— հատկություն, գործողություն, դրություն և այլն, որ մենք դիտում ենք առարկայի վրա, որոնք և անբաժան են կամ առարկայից և կամ նույնիսկ առարկայի հատկանիշից» (էջ 26)։ Այնուհետև մեր պատկերացումները ներկայացնելով որպես մեզանից դուրս և անկախ գոյություն ունեցող արտաքին աշխարհի արտացոլումներ՝ Աբեղյանը զարգացնում է այն միտքը, թե մեր այդ մտապատկերներն ու սը-

դանց բառային անվանումներն, այնուամենայնիվ, չեն նույնանում իրենց աղբյուրը հանդիսացող այդ արտաքին աշխարհի հետ։

«Առարկան և իր հատկանիշը,— շարունակում է հեղինակը,— մեր ըմբռողության համար կազմում են մի անբաժան միություն, որովհետև հատկանիշն առարկայի մեջ գտնվում է իբրև նրա բաղադրիչ մասը։ Բայց և այնպես, մենք մեր մտածողությամբ հաճախ հատկանիշն անջատում, վերացնում ենք առարկայից և պատկերացնում ենք իբրև ինքնակա գոյություն ունեցող բան, օրինակ՝ «սպիտակ» և «սպիտակություն» երկու բառն էլ ցույց են տալիս առարկայի նույն հատկությունը, նույն գույնը. այս երկու բառի նյութական նշանակությունն, ուրեմն, նույնն է։ Բայց մինչ «սպիտակ» բառի նշանակությունը պատկերացնում ենք իբրև ոչ-ինքնակա հատկանիշ, որ պատկանում է մի առարկայի և նրանից անկախ գոյություն չունի, ինչպես՝ սպիտակ ձյուն, սպիտակ թուղթ,— «սպիտակություն» բառով, ընդհակառակն, մենք նույն հատկանիշը պատկերացնում ենք իբրև ինքնակա գոյություն ունեցող մի առարկա։ Այսպես, օրինակ՝ երբ ասում ենք՝ «ինձ դուր է գալիս ձյան սպիտակությունը միայն», այդ ժամանակ մենք մտքով «սպիտակ» հատկությունը ձյունից բաժանում, վերցնում ենք և պատկերացնում իբրև մի ինքնակա բան և ձյունից միայն այդ հատկությունն ենք առնում իբրև դուրեկան...» (էջ 27)։

Այս երկար մեջբերումն արեցինք ոչ նպատակով, որ առանց ուշացնելու ասենք, որ չնայած իր տեսական դրույթների որոշ վիճելի հայացքներին, տարիներ շարունակ լեզվի տեսության մեջ իդեալիստական ու ֆորմալիստական մեղադրանքների ենթարկված Մ. Աբեղյանը իր ժամանակին լեզվական իրակությունները այսպիսի խորությամբ և մատերիալիստորեն վերլուծելու մեջ հավասարը չունեցող հայագետ էր։

Լեզվական մակարդակի իր այս վերլուծություններում նա գոյականների միավորման հիմքում որպես տարբերակիչ հատկանիշ դնում է ոչ թե առարկայի, այլ առարկայականության հասկացությունը, որը մաքուր լեզվական կարգ է և այս բառախմբի ընդհանուր կարգային (կատեգորիալ) նշանակությունն է։ Այս կամ այն բառը, ըստ Մ. Աբեղյանի մեկնաբանության, գոյական է նրա համար, որ մեր լեզվամտածության մեջ վերցված է որպես «ինքնակա գոյություն ունեցող կամ իբրև այնպիսին մտածված առարկա»։

Նյութական նշանակության բառերի դասակարգման երկրորդ աստիճանում ինքնակա առարկայական նշանակության բառերից

տարբեր ոչ-ինքնակա հատկանիշ ցույց տվող բառերն էլ իրենց հերթին հեղինակը բաժանում է երկու նոր տարատեսակների. «2. Ածականներ, որոնք նշանակում են ոչ-ինքնակա հատկանիշներ, որ մտածվում են իբրև առարկաներից անբաժան, նրանց մեջ գտնըված մի հատկություն, գործողություն, դրություն և այլն... 3. Բայեր, որոնք նույնպես նշանակում են ոչ-ինքնակա հատկանիշներ, բայց այնպիսի հատկանիշներ, որ խոսողը մի որոշ ժամանակում վերագրում է կա՛մ իրեն՝ առաջին դեմքին, կա՛մ երկրորդ դեմքին, կա՛մ երրորդ դեմքին...» (էջ 29)։

Եթե ածականի տարբերությունը գոյականից առարկայի և հատկանիշի լեզվական տարբերություն է և ունի լեզվական հանրույթի (ունիվերսալի) արժեք, ապա բայի տարբերությունն ածականից ունի միայն քերականական-շարահյուսական հիմունք և խոսքային աստիճանի տարբերակում է։ Թեև Աբեղյանը նյութական նշանակության բառերի իր տարբերակումն սկսում է այս անգամ ոչ թե բայից, այլ գոյականից, որն իրականում ընկած է նյութական բոլոր նշանակությունների հիմքում, այսուամենայնիվ, նրա կողմից բայի հասկացության նեղացումը դիմավոր բայի տահմաններում, դուռ է բացում այսպիսի տարբերակման դեմ ուղղված արդարացի քննադատության։

«Հայոց լեզվի տեսության» երկրորդ մասում, որ նվիրված է բառերի նշանակությունների վերլուծությանը կամ իմաստաբանությանը, «Բառերի տեսակներն ըստ նշանակության» գլխում Մ. Աբեղյանը տալիս է հայերենի բառերի իր դասակարգման ամբողջական ու ամփոփ պատկերը, որ հետևյալն է.

«... 1) գաղափար նշանակող բառեր, որոնցով մենք խոսում ենք.

2) զգացմունք ու կամք նշանակող բառեր, որոնք խոսքի մեջ ոչ մի պաշտոն չկատարելով՝ խոսքից դուրս են մնում. սրանք կարող են խոսքն ամեն կերպ ընդհատելով՝ ընկնել խոսքի մեջ, ուստի կոչվել են միջարկություն» (էջ 128)։

«Այսպես ուրեմն գաղափար կամ պատկերացում ցույց տվող բառերն իրենց նշանակությամբ բաժանվում են երկու խմբի.

1. բառեր, որոնք ունին նյութական նշանակություն, մեծ մասամբ նաև ձևական նշանակություն. դրանցից կազմվում է խոսքը, ուստի և կոչվում են խոսքի մասեր (բայ, գոյական, ածական, մակբայ).

2. բառեր, որոնք ունին միայն ձևական նշանակություն և

խոսքի մեջ ինքնուրույն մաս չեն կազմում, ուստի և կոչվում են խոսքի մասնիկներ (կապ, շաղկապ)» (էջ 130)։

Ինչպես «Աշխարհաբարի շարահյուսության» մեջ, այստեղ էլ Աբեղյանը նյութական նշանակության բառերը կամ խոսքի մասերը ըստ նշանակության բաժանում է չորս տեսակի՝ բայ, գոյական, ածական, մակբայ, սրանց տալով նույն բնութագրումները։ Կրկին անդրադառնալով ածականի և մակբայի տարբերության հարցին՝ հարկ է համարում նորից եզրակացնել, որ «Հայերենում մակբայն, ուրեմն, ածականի առանձին կիրառությունն է, շարահյուսական կապակցության մեջ» (էջ 131)։


Գոյական, ածական և մակբայ բառատեսակներն ըստ նշանակության դարձյալ բաժանվում են անվան և դերանվան, իսկ անուններն էլ՝ անուն նեղ մտով, թվական և դերբայ ենթատեսակների։

Խոսքի մասնիկները, որ իրենց նշանակությունն ստանում են ըստ գործածության, իրենց այդ ձևական (իմա՛ քերականական) նշանակությամբ բաժանվում են չորս տեսակի.

«Ա. Կապակցական բառեր... Բ. Եղանակական բառեր կամ մասնիկներ... Գ. Բացասական մասնիկներ՝ «ոչ», «չը», Դ. Պատասխանական բառեր՝ այո՛, ո՛չ» (էջ 132)։

Այստեղ Աբեղյանը կապակցական բառերի մեջ դնում է ոչ թե կապ—շաղկապ երկանդամ հակադրությունը, որ տեսանք քիչ առաջ «խոսքի մասնիկներ (կապ, շաղկապ)» (էջ 130), այլ կապակցական բառերը բաժանում է երեք ենթատեսակի՝ ստորադասական և համադասական շաղկապները համարելով կապերին հավասարապես հակադրվող միավորներ, այսպես՝ «... 1) Կապեր... 2) Ստորադասական շաղկապներ... 3) Համադասական շաղկապներ» (էջ 132)։ Երբ նյութական նշանակության բառերի դասակարգումը սկսում ենք գոյականի՝ տարբերակումից, ինչպես Մ. Աբեղյանը վարվում է իր «Հայոց լեզվի տեսության» 26—29 էջերում, նրա բառատեսակների դասակարգման համակարգը ունենում է հետևյալ գծապատկերը (տե՛ս էջ 182)։

Իբրև Մ. Աբեղյանի հայացքների ու վերլուծությունների վերաբերյալ մեր վերը շարադրածի ընդհանուր եզրակացություն, անհրաժեշտ է ավելացնել հետևյալը. Մ. Աբեղյանը հայերենի բառերի տեսակները (ընդունված տերմինավորմամբ՝ խոսքի մասերը) որոշում է բառերի ու բառախմբերի հակադրության, այն էլ հիմնականում՝ երկանդամ հակադրության եղանակով։



Տանոթազրություն խմբագրի.— *Մեր տեսակետով այս (182) էջի սխեման ճշտորեն չի համապատասխանում բառերի այն դասակարգմանը, որ տվել է Մ. Աբեղյանը «Հայոց լեզվի տեսության» § 58—62-ում։ Բացի այդ, համաձայն չենք նաև հեղինակի մի քանի բնութագրումներին, օրինակ, Մ. Աբեղյանի հայացքներին տրված այսպիսի գնահատականներին՝ «...խիստ հետևողականություն չկա...» (էջ 170), «...չի հիմնավորվում...» (171), «դուռ է բացում... արդարացի քննադատություն» (180) և այլն։*

Բառերը դասակարգվում են ըստ նախադասության մեջ կատարած իրենց դերի, բայց քանի որ բառերի հիմնական մասի գործառությունը պայմանավորված է նրանց նշանակությամբ, ապա դասակարգող հատկանիշ է դառնում իմաստային հատկանիշը։ Ահա թե ինչու հեղինակը իր դասակարգումը կատարում է «նյութական կամ իրական նշանակություն ունեցող բառերի երեք մեծ խմբեր...» և «Բառերի տեսակներն ըստ նշանակության» վերնագրերի տակ՝ վերնագրերի մեջ արդեն մատնանշելով իր տարբերակման իմաստաբանական հիմունքը։

Մ. Աբեղյանի վերլուծության մեջ նշանակակիր են բոլոր բառ միավորները։ Լեզվական նշանակությունների մասին խոսելիս, նա առաջնորդվում է իր ժամանակի լեզվագիտական ըմբռնումներով ու տերմինաբանությամբ։ Այդ նշանակությունների աստիճանականությունները՝ ընդհանուրից դեպի նեղը, մասնակին, լեզվի աստիճանականության (հիերարխիայի) արտապատկերումն է։ Լեզվական իմաստների տարբերակման ամենաընդհանուր կամ առաջին աստիճանում գաղափար նշանակող բառերից առանձնացնելով ձայնարկությունները, իբրև «զգացմունք ու կամք ցույց տվող բառեր», այնուհետև գաղափար նշանակող բառերի հետագա տարբերակումների ժամանակ հեղինակը միշտ գործ ունի նյութական և քերականական նշանակությունների հետ։

Բառատեսակները Մ. Աբեղյանն անջատում է բառապաշարի աստիճանական տրոհմամբ՝ յուրաքանչյուր հաջորդ աստիճանում բացահայտելով բառերը միավորող և մյուսներին հակադրող ավելի նեղ ընդգրկման ու ծավալի իմաստային բնութագրիչ հատկանիշ։

Հակադրված բառախմբերի գոնե մեկ անդամը անպայման օժտված է տարբերակիչ դրական հատկանիշով (գաղափար նշանակող բառեր— գաղափար չնշանակող կամ զգացմունք, կամք նշանակող բառեր. ինքնակա գոյություն ունեցող կամ իբրև այդպիսին մտածված առարկաներ նշանակող բառեր— ոչ-ինքնակա, հատկանիշ նշանակող բառեր և այլն)։

Բառերի տեսակավորման զանազան աստիճաններում որպես տարբերակիչ հատկանիշներ գործադրված տարբեր բովանդակության նշանակությունները միշտ զուգորդված են բառերի գործառական հատկանիշներով, քանի որ գաղափար ցույց տվող բառերի երկու մեծ խմբերից մեկի՝ նյութական նշանակության բառերի, բառիմաստները կոնկրետանում և ամբողջանում են սրանցով պայ-

մանավորված իրենց գործառությամբ, նախադասության մեջ կատարած մշտական պաշտոնով, իսկ ձևական (իմա՛ քերականական) նշանակության բառերն էլ իրենց այդ տարբերակիչ նշանակությունն ստանում են նախադասության մեջ նյութական նշանակության բառերի ու նախադասությունների հետ գործածվելիս։ Հետևաբար Մ. Աբեղյանի բառերի դասակարգման «ըստ նշանակության» անվանված սկզբունքը բոլոր աստիճաններում զուգորդված է նաև բառերի գործառական հատկանիշներով։ Այդ սկզբունքով է, որ բառերի դասակարգման առաջին իսկ աստիճաններում հայերենի բառապաշարը բաշխվում է երեք բառախմբերի մեջ՝ 1. նյութական և միաժամանակ ձևական նշանակության բառեր, որոնք խոսքի (իմա՛ նախադասության) մեջ կարող են ըստ իրենց նշանակությունների ինքնուրույն պաշտոններ վարել, ուստի և անվանվում են խոսքի մասեր, 2. միայն ձևական նշանակություն ունեցող բառեր, որոնք խոսքի մեջ ինքնուրույն մաս չեն կազմում, ուստի և կոչվում են խոսքի մասնիկներ (էջ 130), «3. զգացմունք ու կամք ցույց տվող բառեր, որոնք խոսքի մեջ ոչ մի պաշտոն չկատարելով՝ խոսքից դուրս են մնում. սրանք կարող են խոսքն ամեն կերպ ընդհատելով ընկնել խոսքի մեջ, ուստի կոչվում են միջարկություններ» (էջ 128)։

Այս տրոհման մեջ Մ. Աբեղյանի «խոսքի մասերը» և «խոսքի մասնիկները» ոչ թե նախադասության անդամներ ու «անդամիկներ» են, այլ բառախմբեր։ Խոսքի մաս տերմինը հեղինակն այստեղ (մասամբ նաև «Աշխարհաբարի քերականության» մեջ) գործածում է ոչ միայն նախադասության անդամ նշանակությամբ, այլև նախադասության անդամի պաշտոնում ինքնուրույնաբար հանդես եկող բառատեսակների համար։ Ուստի և ըստ նշանակության խոսքի մասեր են անվանվում գոյականը, բայը, ածականը և մակբայը։ Մ. Աբեղյանի համար «խոսքի մաս» տերմինը լայն հասկացություն ունի, այն չի նույնանում մեր գործածած ո՛չ խոսքի մասի և ո՛չ էլ նախադասության անդամի հետ։

Վերցնելով իր նախորդներից բառերի տեսակներ և խոսքի մասեր անվանումները՝ Մ. Աբեղյանը սրանք այլևս չի գործածում որպես նույնանիշներ։ Իր նախորդների խոսքի մաս հասկացության համար նա գործածում է բառերի տեսակ անվանումը, իսկ խոսքի մասը գործածում է նախադասության անդամ և այս պաշտոնով հանդես եկող բառատեսակների համար։ Այս երկու հասկացություններին էլ իրարից զանազանելու համար նա տալիս է խոսքի

մաս ըստ նշանակության և խոսքի մաս ըստ պաշտոնի ձևակերպումները։ Ահա թե ինչու խոսքի մասերն ըստ նշանակության նրա վերը քննված գրքերում լինում են՝ բայ, գոյական, ածական, մակբայ, իսկ խոսքի մասերն ըստ պաշտոնի լինում են՝ բայ-ստորոգյալ, ենթակա, խնդիր, վերադիր և պարագա։ Խոսքի մաս *տերմինն այստեղ* ընդհանուր է, բայց մտքի ձևակերպումն ու բովանդակությունը, ինչպես տեսնում ենք, բոլորովին տարբեր են։ Տերմինի գործածության այս երբույթները հաշվի չառնելով և հեղինակի վերլուծություններից մեջ չխորանալով՝ մինչև օրս նույնիսկ շատ հրատարակություններ շարունակում են Մ. Աբեղյանին մեղադրել խոսքի մասերը նախադասության անդամների հետ շփոթելու կամ նույնացնելու սխալի մեջ, որպիսի հանգամանք բնավ չկա, եթե նկատի ունենանք, որ իբրև բառերի առանձին տեսակ կամ խոսքի մաս անջատված բայ-ի փոխարեն նույնիսկ, որը մեր տերմինավորմամբ ստորոգյալ է, Աբեղյանը նախադասության անդամի համար գործածում է բայ-ստորոգյալ *տերմինը*։

Ինչպես վերն ասվեց, Աբեղյանը բառերի տեսակ անվան հետ երբեմն գործածում է բառերի երկրորդական տեսակ անվանումը, սակայն այս անվանագործածության մեջ հեղինակը հետևողական չէ։ Նա տեսակ բառն է գործածում հաճախ այնտեղ, ուր հեղինակն իրականում գործ ունի բառերի երկրորդական տեսակի կամ ենթատեսակի հետ։ Սակայն սա նույնպես չի խանգարում ուշադիր ընթերցողին ըմբռնելու, թե նա ո՛ր խմբերն է անվանում բառերի առանձին տեսակներ, ընդունված տերմինով ասած՝ առանձին խոսքի մասեր, և որո՛նք երկրորդական տեսակներ, այսինքն՝ ոչ առանձին խոսքի մասեր։

Բառերի դասակարգման առաջին աստիճաններից երևում է, որ բառերի տեսակների որոշման մեջ դասակարգիչ արժեք ունեն բառերի իմաստային կամ նշանակային այն ընդհանրությունները, որոնք տվյալ բառախմբի մեջ զուգորդված են նաև գործառական ընդհանրությամբ։ Նյութական նշանակությամբ միավորված բառերը միավորված են նաև նախադասության ինքնուրույն անդամ լինելու քերականական հատկությամբ, դրա համար անվանված են խոսքի մասեր։ Քերականական նշանակության բառերը միավորված են նյութական նշանակությունների զանազան հարաբերությյուններն արտահայտելու նշանակությամբ, որը և նրանց գործառական արժեքն է նախադասության մեջ, այսպիսով նրանք ունեն

մասնիկների իմաստային և գործառական արժեք, ուստի և անվանված են խոսքի մասնիկներ:

Սակայն այս հակադրության մեջ դեռևս բառախմբերի իմաստային և գործառական հատկանիշները շատ ընդհանուր են և տրոհելի: Այն հարցին, թե բառերն ի՞նչ նյութական և քերականական նշանակություններ ունեն և ինչպիսի՞ պաշտոններ են վարում նախադասության մեջ, պիտի պատասխան տրվի դասակարգման հաջորդ աստիճաններում, որտեղ էլ բառախմբերից անջատվում են բառատեսակները:

Բառերի իմաստային հատկանիշով կատարված դասակարգումը սահման չունի, այն, սկսվելով իմաստային լայն ընդհանրություններից, կարող է գալ հասնել մինչև առանձին բառերը, որոնք, լինելով տեսակի անուններ, իբրև նշանակություններ դարձյալ ընդհանուր են:

Մ. Աբեղյանի դասակարգման մեջ բառերի տեսակը ավելի մեծ բառախմբից և երկրորդական տեսակից որոշողը բառի այն ընդհանուր նշանակությունն է, որը նախադասության մեջ ունի գործառական տարբերակված և այլևս չտրոհվող հատկանիշ: Դրա համար էլ խոսքի մասերի ու խոսքի մասնիկների բառախմբերին հակադրվող միջակություններ թեև տրոհվում են բացականչական, կոչական և ընձայնական երկրորդական տեսակների, բայց այդ նշանակային հակադրությունը մնում է նույն բառատեսակի սահմաններում, որովհետև այս ենթատեսակները նախադասության մեջ գործառական տարբերություններ չունեն:

Նյութական նշանակության բառերը հաջորդ աստիճաններում տրոհելիս, Մ. Աբեղյանը բառերի տեսակը որոշող հատկանիշ է համարում բառի այն գործառությունը, որը պայմանավորված է նրա հիմնական նշանակությամբ: Գոյականը տարբերակվում է իր առարկայական գործածությամբ և ոչ թե հատկանշային ու պարագայական: Այդպիսի դերով նա կարող է հանդես գալ՝ մտնելով հակադրության մեջ իր բառային նշանակության հետ: Նույնը լինում է հատկանիշ նշանակող բառերի հետ, երբ սրանք ստանում են առարկայական կամ գոյականական կիրառություն: Այսպիսի դեպքերում միշտ հաշվի են առնվում բառերի մշտական, նրանց հիմնական նշանակություններով պայմանավորված գործածությունները, և ոչ թե այլ բառերի ու բառատեսակների դերով հանդես գալը: Այս դատողությունների մեջ էլ Մ. Աբեղյանը մնում է բառերի

տեսակները կամ խոսքի մասերը նախադասության անդամներից որոշակիորեն տարբերող հեղինակ։

Այս տեսակետից ուշագրավ է մակբայի, որպես առանձին բառատեսակի, ածականներից առանձնացնելու հարցը։ Սրանց առանձնացման իմաստային հիմունքը միանգամայն որոշակի է, և Աբեղյանը հստակորեն բնութագրում է դրանք՝ մեկը իբրև հատկանիշ, իսկ մյուսը՝ իբրև հատկանիշի հատկանիշ նշանակող բառերի տեսակներ։ Սակայն գործառական տեսակետից այդ տարբերակումը հայերենի համար այդպիսի որոշակիություն չունի, քանի որ ածականները մեծ մասամբ կարող են ունենալ նաև պարագայական կամ մակբայական կիրառություն։ Ահա այդ նկատի առնելով է, որ նա գրում է. «Հայերենում մակբայն, ուրեմն, ածականի առանձին կիրառությունն է շարահյուսական կապակցության մեջ» («Հ. լ. տ.», էջ 131)։ Այսուամենայնիվ Մ. Աբեղյանը հնարավոր է համարել ածական—մակբայ տարբերակում, քանի որ գտել է հայերենում որոշ քանակի բառեր, որոնք բուն մակբայներ են, այսինքն ունեն ածականից տարբեր գործառական հատկանիշ, անվան վրա չեն դրվում և ունենում են միայն պարագայական կիրառություն (էջ 130—131)։

Ուշագրավ ամփոփում ունի «Հայոց լեզվի տեսության» մեջ հայերենի քերականական նշանակության բառերի դասակարգումը։ «Աշխարհաբարի քերականության» մեջ, ինչպես տեսանք, Աբեղյանը, նախադասության մեջ կապակցական դեր կատարող բառերը առանձնացնելով խոսք (իմա՛ նախադասություն) կազմող երկու հիմնական բառախմբերից՝ բայ-ից և նրա լրացումներից, դրանք անվանում է զոդ և նրա ներսում, ըստ իրենց կապակցական դերի ու նշանակության, տարբերում է քերականական նշանակության բառերի երկու տեսակ՝ կապ և շաղկապ։ Այդ աշխատությունում եղանակավորող բառերը ճանաչվում են որպես «եղանակական մակբայներ» և այդ անվամբ մտցված են նյութական նշանակության բառերի մեջ, որպես ածականի մակբայ տարատեսակի մի ենթատեսակը։

«Հայոց լեզվի տեսության» մեջ Աբեղյանը վերջնականապես եկել է այն եզրակացության, որ «եղանակական մակբայները» նյութական նշանակության բառեր, ուստի և մակբայներ չեն, այլ խոսքը եղանակավորող քերականական նշանակության «եղանական բառեր կամ մասնիկներ» են։ Այլևս մակբայ չեն համարված նաև այո՛, ո՛չ պատասխանական բառերը, որոնք նույնպես համարվում

են քերականական նշանակության առանձին տեսակի բառեր։ Պատասխանական բառ չի համարված չէ-ն։ Մ. Աբեղյանը է էական բայի չէ ժխտական շեշտված ձևը այլևս չի համարում բառական առանձին միավոր, բայց դրա փոխարեն քերականական նշանակության բառերի կամ խոսքի մասնիկների մեջ տարբերակում է բառերի մի չորրորդ տեսակ՝ «բացասական մասնիկներ» անվամբ, ուր մտցնում է ժխտում արտահայտող կամ ժխտական նախադասություն կազմող «ոչ», «չը» միավորները։

Կապերի ու շաղկապների կողքին իր առանձնացրած այս երեք նոր բառատեսակների մասին Մ. Աբեղյանը գրում է. «Այս վերջին երեք տեսակի բառերը շատ քերականներ դնում են մակբայների մեջ. բայց դրանք իսկապես ձևական նշանակություն ունեցող բառեր են, ինչպես և կապակցական բառերը, որոնց բոլորի նշանակությունն ու ֆունկցիան բացատրվում է բառերի ու խոսքերի կապակցության-շարահյուսության մեջ» (էջ 132)։

Այսպես, ուրեմն, «Հայոց լեզվի տեսության» մեջ քերականական նշանակության բառերը ներկայացվում են իբրև չորս առանձին բառատեսակներ, ըստ նախադասության մեջ կատարած իրենց քերականական դերի ու նշանակության, դրանք են՝ «Ա. Կապակցական բառեր... Բ. Եղանակական բառեր կամ մասնիկներ... Գ. Բացասական մասնիկներ՝ «ոչ», «չը»... Դ. Պատասխանական բառեր՝ այո՛, ո՛չ» (էջ 132)։

Բառերի տեսակավորման կամ դասակարգման իր սկզբունքի հետևողական կիրառությունը, հավանաբար, Մ. Աբեղյանին այլ եղրակացության չէր կարող բերել։ Եթե մակբայից անջատված եղանակական բառերը այլևս հատկանիշի հատկանիշ չեն նշանակում և մակբայի այդ հասկացական նշանակությանը համապատասխան հարց չեն ստանում, հետևաբար և նախադասության մեջ պարագայական պաշտոն չեն վարում, էլ ի՞նչ հիմունքով պիտի շարունակվեն մակբայ կոչվել։ Մ. Աբեղյանն, այսպիսով, հայ քերականության մեջ առաջին անգամ եղանակական կամ եղանակավորող բառերը համարում է առանձին բառատեսակ, իր տերմինավորմամբ՝ առանձին «խոսքի մասնիկ»։

Այս հատվածում հեղինակը կատարել է մի ճշգրտում ևս։ Նա առանձին բառատեսակ է համարում բոլոր կապակցական բառերը (կապ, շաղկապ)՝ միասին վերցրած, իսկ կապակցական բառատեսակի ներսում կապերը, ստորադասական շաղկապները և համադասական շաղկապները կազմում են երեք հավասարարժեք

ենթախմբեր՝ դառնալով կապակցական բառատեսակի ենթատեսակներ։

Գործառական տեսակետից դժվար է ցույց տալ ստորադասական և համադասական շաղկապների մի այնպիսի ընդհանուր դրական հատկանիշ, որով նրանք միավորվեն և ապա հակադրվեն կապերին. մինչդեռ դրանց առանձնացումն իրենց կապակցական դերով և հավասարապես հակադրումը կապին, իբրև եռանդամի մի հակադրություն, շատ ավելի հիմնավոր է, հարազատ լեզվի իրավիճակին։ Եթե այդպիսի երկանդամ հակադրության և բաժանման բավարար հիմունքներ գտնվեն էլ, միևնույնն է, նույնպիսի հիմունքներ կան նաև ստորադասական և համադասական շաղկապները կապերին հավասարապես հակադրվող ինքնուրույն շարահյուսական միավորներ համարելուն, որպիսի լավ օրինակ է տալիս ռուսական քերականությունը, քանի որ ստորադասական շաղկապներն առավելապես միանում են ստորադասվող նախադասության ստորոգյալին և նրա հակադրությամբ են արտահայտում իրենց քերականական իմաստը (եթե գա, որ բերեց, թե ասի, որպեսզի լավանաս, որովհետև չգիտեմ և այլն) և այս տեսակետից հավասարապես հակադրվում են և՛ կապերին, և՛ համադասական շաղկապներին։

Մ. Աբեղյանի վերլուծմամբ բառերի դասակարգման ստորին աստիճաններում, երբ իմաստային հակադրությունները չեն զուգորդվում բառերի գործառական հատկանիշների հակադրությամբ, առաջանում են բառերի երկրորդական տեսակներ։ Այդպիսի իմաստային հակադրմամբ անջատվում են դերանուններն անուններից, իսկ անուններից էլ անջատվում են սրանց թվական և դերբայ տարատեսակները՝ առաջացնելով գոյական, ածական, մակբայ բառատեսակների՝ անուն, դերանուն, թվական, դերբայ ենթատեսակները։ Այս ստորակարգումը կատարելով դեռևս «Աշխարհաբարի շարահյուսության» մեջ՝ Մ. Աբեղյանը անուն տերմինը գործածում է ավելի նեղ նշանակությամբ, քան այն գործածում էին իր նախորդները։

Նախաաբեղյանական շրջանում անուն-ը մի կողմից հակադրվում է բայ-ին, իսկ մյուս կողմից՝ դերանվանը և իբրև անվանում տրվում է առարկաներին ու սրանց հատկանիշներին, ուստի և հետագայում տրոհվում է գոյական անուն, ածական անուն, թվական անուն տարատեսակների։ Մ. Աբեղյանի խոսքի մասերի համակարգում ոչ թե անունն է բաժանվում գոյական, ածական, թվա-

կան տարատեսակների, այլ գոյականը, ածականը, մակբայն են բաժանվում անուն և դերանուն տարատեսակների։

Այսպիսով, անուն տերմինը առաջին անգամ կիրառվում է նաև մակբայի նկատմամբ, «անվանական մակբայ» ձևակերպմամբ, ապա դերանվան հետ մտնում է գոյական, ածական, մակբայ հասկացությունների մեջ, որպես սրանց թեև գլխավոր, բայց մի ենթատեսակը։

Մ. Աբեղյանի «անուն նեղ մտքով» և թվական ու դերբայ հակադրությունից էլ պարզ երևում է, որ անունը լայն ըմբռնմամբ շարունակում է հակադրվել բային, որպես նախադասության հավասարարժեք լեզվական միավորի, իսկ մյուս կողմից՝ գոյականի, ածականի ու մակբայի ներսում «անունը նեղ մտքով» հակադրվում է սրանց նշանակություններով և գործածությամբ հանդես եկող թվականներին ու դերբայներին։

Դերանունները նյութական նշանակության մյուս խոսքի մասերի վրա բաշխելու իր մոտեցմամբ Մ. Աբեղյանը մնում է խիստ հետևողական իր դասակարգման սկզբունքին։ Դերանուններն, ըստ նրա մեկնաբանության, անփոփոխ կամ հաստատուն նշանակություն չունեցող բառեր են, նրանց նշանակությունն ըստ գործածության փոփոխվում է, որով նրանք հակադրված են հաստատուն նշանակություն ունեցող անուններին։ Բայց այդ հատկանիշը, ինչպես անունների, այնպես էլ դերանունների համար խոսքիմաստային կամ բառատեսակային տարբերակիչ հատկանիշ չէ, քանի որ անուն և դերանուն կոչված բառախմբերը ո՛չ իրենց նյութական նշանակությամբ և ո՛չ էլ շարահյուսական հիմնական կիրառությամբ մի ամբողջություն կամ ընդհանրություն չեն ներկայացնում։ Ինչպես անունները, այնպես էլ դերանուններն իրենց նյութական նշանակությամբ կա՛մ առարկա, կա՛մ առարկայի հատկանիշ, կա՛մ հատկանիշի հատկանիշ են նշանակում, ըստ այդմ էլ նախադասության մեջ նրանք հավասարապես կատարում են կա՛մ առարկայական, կա՛մ հատկանշային, կա՛մ պարագայական պաշտոններ։ Բառերի դասակարգման այս միասնական սկզբունքով էլ նրբանք բաշխվում են առարկա նշանակող և առարկայական պաշտոններ վարող գոյականի, հատկանիշ նշանակող և հատկանշային պաշտոններ վարող ածականի, հատկանիշի հատկանիշ նշանակող և պարագայական պաշտոններ վարող մակբայի վրա՝ անունը որպես սրանց հաստատուն նշանակություն ցույց տվող կամ անվանող տարատեսակ, իսկ դերանունը որպես սրանց ոչ հաստատուն,

ըստ գործածության փոփոխվող նշանակություն մատնանշող և ոչ անվանող տարատեսակ։

Թվականների և անկախ գործածության դերբայների բաշխումը նյութական մյուս խոսքի մասերի վրա Մ. Աբեղյանը կատարել է նույն սկզբունքի հետևողական կիրառմամբ։ Իրենց թվի ու գործողության նշանակությամբ բուն անուններից անջատվող թվականներն ու դերբայներն առանձին բառատեսակ կամ խոսքի մաս չեն դառնում, քանի որ այս աստիճանում նրանց իմաստային տարբերակումը անուններից չի զուգորդվում գործառական տարբերակմամբ։ Այդպիսի տարբերակում կատարված է նախորդ աստիճանում, ուր թվականների ու դերբայների արտահայտած թվի ու գործողության նշանակությունները վերցված են մե՛կ որպես ինքնակա գոյություն ունեցող կամ առարկայական, մե՛կ որպես ոչ ինքնակա հատկանշային, մե՛կ հատկանիշի հատկանշային հասկացություններ, որոնք էլ համապատասխանաբար կատարում են առարկայական, հատկանշային և պարագայական պաշտոններ ու դրանով էլ միավորվում են գոյական, ածական և մակբայ բառատեսակների մեջ։

Մենք ընդհուպ մոտեցանք բառերի խոսքիմասային նշանակությունների աբեղյանական ըմբռնման հարցին, և դրա պատասխանը խիստ անհրաժեշտ է ոչ միայն Աբեղյանի ներկայացրած համակարգի, այլև բառերի խոսքիմասային դասակարգման տեսական ընդհանուր սկզբունքի պարզաբանման համար։

Վերը կատարած վերլուծությունից պարզվեց, որ Մ. Աբեղյանը, գաղափար նշանակող բառերը բաժանելով նյութական և ձևական կամ քերականական նշանակության բառախմբերի, երկրորդների բառային նշանակությունը նույնացնում է նրանց քերականական նշանակությանը՝ գտնելով, որ այդ բառերը նշանակություն են ստանում ըստ գործածության, այսինքն՝ «նրանց նշանակությունը, ինչպես սովորաբար բառերի ձևական մասերի նշանակությունը, պարզ է լինում, երբ դրվում են խոսքի մեջ նյութական նշանակություն ունեցող բառերի կամ խոսքերի հետ»[30], դրա համար էլ անվանվում են խոսքի մասնիկներ։ Նյութական նշանակության բառերը, որոնք ի վիճակի են իրենց բառաձևերով արտահայտելու իրենց սեփական բառային նշանակությունները, խոսքի (իմա՛ նախադասության) մեջ պաշտոններ են ստանում ըստ

---

[30] Մ. Աբեղյան, Հայոց լեզվի տեսություն, էջ 132։

այդ նշանակությունների, դրա համար էլ կոչվում են խոսքի մասեր։ Իբրև այդպիսի խոսքիմաստային նշանակություններ, Մ. Աբեղյանը նյութական բառերի մեջ բացահայտում է անկախ առարկայականության, ոչ անկախ հատկանշայնության, ոչ անկախ հատկանիշի և միաժամանակ դեմքի ու թվի և հատկանիշի հատկանշայնության խոսքիմաստային իմաստներ։ Արդ ի՞նչ իմաստներ կամ նշանակություններ են այս խոսքիմաստային նշանակությունները, կամ «խոսքի մասերն ըստ նշանակության» ասելով՝ Մ. Աբեղյանը ի՞նչ նշանակություններ նկատի ունի։

Նյութական նշանակության բառերի երկու մեծ խմբերին՝ անկախ առարկայական նշանակություն ունեցող և ոչ անկախ հատկանիշ նշանակող բառերին վերը տված նրա բացատրությունից պարզ երևաց, որ Մ. Աբեղյանը խոսքիմաստային նշանակությունները ոչ միայն չի նույնացնում այդ կարգի բառերի նյութական կամ բառային նշանակություններին, այլև ըստ անհրաժեշտության դրանք նույնիսկ հակադրում է իրար։ Այսպես՝ «Օրինակ՝ «սպիտակ» և «սպիտակություն» երկու բառն էլ,— գրում է Աբեղյանը,— ցույց են տալիս առարկայի նույն հատկությունը, նույն գույնը. այս երկու բառի նյութական նշանակությունն, ուրեմն, նույն է։ Բայց մինչ «սպիտակ» բառի նշանակությունը պատկերացնում ենք իբրև ոչ-ինքնակա հատկանիշ, որ պատկանում է մի առարկայի և նրանից անկախ գոյություն չունի, ինչպես՝ սպիտակ ձյուն, սպիտակ թուղթ,— «սպիտակություն» բառով, ընդհակառակն, մենք նույն հատկանիշը պատկերացնում ենք իբրև ինքնակա գոյություն ունեցող մի առարկա։ Այսպես, օրինակ՝ երբ ասում են «ինձ դուր է գալիս ձյան սպիտակությունը միայն», այդ ժամանակ մենք մըտքով «սպիտակ» հատկությունը ձյունից բաժանում, վերցնում ենք և պատկերացնում իբրև մի ինքնակա բան և ձյունից միայն այդ հատկությունն ենք առնում իբրև դուրեկան. մինչդեռ, ընդհակառակն, երբ ասում ենք «ինձ դուր է գալիս սպիտակ ձյունը», այդ հատկությունը ձյունից անբաժան ենք մտածում, և դուրեկան է ոչ թե «սպիտակ» հատկությունը, այլ ձյունը, որի մեջ կա սպիտակությունը... Դարձյալ՝ երբ ասում ենք՝ «ձին վազում է», «վազող ձի», վազելու հատկանիշը, գործողությունը պատկերացնում ենք ձիուց անբաժան, բայց երբ ասում ենք՝ «ձիու վազելը (վազքը) երկար չտևեց», այժմ նույն գործողությունն անջատում, վերացնում ենք ձիուց և պատկերացնում ենք իբրև ինքնակա գոյություն ունեցող առարկա» (էջ 27—28)։

Ո՞րն է, ուրեմն, հատկանիշը, կայուն, թե փոփոխական, առարկայացնող, այդ բառային նշանակությանը առարկայականության խոսքիմաստային իմաստ տվող լեզվական իրողությունը: Համարյա նույն դատողության առթիվ և նույն օրինակի կապակցությամբ, բանավիճելով Օ. Պ. Սունիկի հետ, ռուս լեզվաբան Ա. Ն. Սավչենկոն գրում է. «Բանն այն է, որ այդ իմաստները (խոսքիմասային իմաստները— Հ. Բ.) իրենցից ներկայացնում են հետեվանք և արտացոլում այն շարահյուսական հարաբերությունների, որոնց մեջ մտնում են խոսքի մասերը նախադասություններում, բառակապակցություններում: Օրինակ, գոյականների հիմնական հատկանիշը Օ. Պ. Սունիկը համարում է առարկայականության քերականական հատկանիշը: Իսկ ինչո՞ւմ է արտահայտված առարկայականությունը այնպիսի գոյականում, ինչպիսին է «սպիտակությունը»: Իհարկե, ոչ այն բանում, որ խոսողները, ինչպես ենթադրում էր Ա. Մ. Պեշկովսկին, այդ բառի նշանակությունը պատկերացնում են առարկայի տեսքով: Խոսողները հիանալի պատկերացնում են, որ սպիտակությունը հատկանիշ է: Բայց նախադասության մեջ այդ բառը դրվում է այլ բառերի հետ այնպիսի հարաբերությունների մեջ, ինչպիսին առարկայի անունը: Այն կարող է դառնալ հատկանշակիր և ստանալ որոշիչ ածականներ, օրինակ՝ կուրացուցիչ սպիտակություն, կարող է դառնալ գործողության սուբյեկտ և բայը ենթարկել իրեն, օրինակ՝ սպիտակությունը շոյում է աչքը. կարող է դառնալ գործողության օբյեկտ և ենթարկվել բայի հոլովառությանը, օրինակ՝ տեսնում ենք սպիտակություն: Եվ միայն առարկաների անունների քերականական գործածության հետևանքով է, որ այնպիսի բառերում, ինչպիսին սպիտակությունն է, առաջանում է առարկայականության իմաստային երանգ»[31]:

Ռուսագետ Ա. Սավչենկոյի այս մեկնաբանությունը բառացիորեն համապատասխանում է Մ. Աբեղյանի «խոսքի մաս ըստ նշանակության» հասկացության պատկերացմանը: Կասկածից վեր է, որ մեր հայագետի համար խոսքի մասերը նախադասության մեջ իրենց հիմնական պաշտոններում քերականորեն մասնագիտացված նյութական նշանակության բառերի առանձին տեսակներ են, որոնց խոսքիմասային իմաստը միշտ չէ, որ համապատասխանում

---

[31] «Вопросы теории частей речи, на материале языков различных типов», Ленинград, 1968, էջ 186:

է նրանց բառային նշանակությանը, այդ անհամապատասխանության մեջ տարբերակիչ արժեք է ստանում բառի կապակցելիության շարահյուսական հատկանիշը, որը ինչպես հնդեվրոպական շատ լեզուներում, հայերենում ևս զուգակցվում է ոչ միայն բառակազմական, այլև բառի ձևաբանական տարբերակիչ հատկանիշներով, ուստի և խոսքի մասը չի նույնանում նախադասության անդամ հասկացության հետ։

Վերը բերված հատվածում Մ. Աբեղյանը հավասարապես գոյականներ է համարում «սպիտակություն», «վազելը», «վազք», ածականներ է համարում «սպիտակ» և «վազող» բառերը։ Իայց այդ բնավ չի նշանակում, թե գոյականի պաշտոնում հանդես եկող ամեն բառ նրա համար դառնում է գոյական, իսկ որոշիչի պաշտոնով հանդես եկող ամեն բառ՝ ածական։ Վերոհիշյալ բառերը գոյական կամ ածական են, ըստ Մ. Աբեղյանի, ոչ միայն կոնկրետ բառակապակցության մեջ, այլև՝ ընդհանրապես։ Առարկայականությունն ու հատկանշայնությունը այդ բառերի յուրաքանչյուր խմբի ընդհանուր հատկանիշն է, որպես սրանց շարահյուսական կայուն հատկանիշ։ Սակայն այս ընդհանրացմամբ բնավ էլ չեն անտեսվում առարկայական և հատկանշային տարբեր բառատեսակների կամ խոսքի մասերի ներսում երևան եկող բառային իմաստների ու խոսքիմասային իմաստների համապատասխանությունները ու անհամապատասխանությունները։ Ի հակադրություն ծառ, քար, աշակերտ թանձրացական գոյականների, որոնց բառային և խոսքիմասային նշանակությունների միջև հակասություն չկա, Աբեղյանի տարբերակած սպիտակություն, վազել, վազք գոյականները վերացական կամ ոչ թանձրացական գոյականներ են, որոնց հատկանշային բառային իմաստը առարկայացված է քերականորեն՝ ձևաբանական և շարահյուսական լեզվական միջոցներով։ Ներքին ստորակարգությամբ տարբերակված են նաև սպիտակություն, վազք և վազել վերացական գոյականները։ Առաջին երկուսը, ըստ Մ. Աբեղյանի, անուն գոյականներ են և ունեն կապակցելիության ու ձևաբանական իրենց որոշ առանձնահատկությունները ու տարբերությունը վազել գոյականից, որը բայանուն գոյական է և ունի ենթատեսակային իր առանձնահատկությունները։

Նույնպիսի ստորակարգում է կատարված սպիտակ ածականի և վազող բայածականի, ինչպես և ածականի մյուս տարատեսակների միջև։

Այսպիսով, Մ. Աբեղյանի բազմաստիճան ու բազմակողմանի դասակարգմամբ նյութական նշանակության բառերը կամ խոսքի մասերը դառնում են բառաքերականական կարգեր: Խոսքիմասային նշանակությունն, ուրեմն, բառերի նախադասության մեջ դրսևորած կապակցելիության քերականական-շարահյուսական իմաստն է, որ զուգորդում է տվյալ խոսքի մասի մեջ մտնող հիմնական կամ միջուկային այն բառային նշանակությանը, որով պայմանավորված է տվյալ խոսքի մասի գործառական կամ շարահյուսական հատկանիշը:

Եթե նկատի ունենանք միայն այն բառերը, որոնցում բառերի գործառական քերականական նշանակությունը հակասության մեջ է դրանց բառային նշանակության հետ (սպիտակություն, բարձրություն, վազք և այլն), ապա կարող ենք ասել, որ Մ. Աբեղյանն էլ Ա. Ա. Պոտեբնյայի պես կարող էր ասել, թե բառի որոշակի քերականական դասի (разряду) պատկանելը «որոշում է խոսքի մեջ բառի կատարած մշտական դերը, նրա մշտական հարաբերությունը այլ բառերի հետ»[32]:

Այսպիսի մոտեցմամբ խոսքի մասերը, իրոք, դառնում են ոչ թե բառաքերականական, այլ միայն քերականական ամենաընդհանուր կարգեր: Բայց քանի որ առարկայականությունը հայերենում, իբրև լեզվական հասկացություն, գոյական է առաջին հերթին առարկա նշանակող բառերի իմաստային ընդհանրացմամբ, և սրանց բառային իմաստների թելադրանքով է, որ նախադասության մեջ առաջանում են առարկայականության քերականական (ձևաբանական, շարահյուսական) հատկանիշներ, որոնք հետո որոշ ինքնավարությամբ առարկայացնում են նաև ոչ առարկայական հասկացությունները, ապա վստահորեն կարելի է ասել, որ Մ. Աբեղյանի բառերի դասակարգման համակարգում նրա տարբերակած բառերի տեսակները, մասնավորապես նրա բնութագրած խոսքի մասերը, ոչ թե քերականական, այն էլ շարահյուսական, այլ բառաքերականական կարգեր են:

Խոսքի մասերի դասակարգման քերականական սկզբունքի պաշտպան Պ. Յա. Սկորիկն իր «Բառերի խոսքիմասային դասակարգման սկզբունքների մասին» բանավիճային հոդվածում գրում է. «Խոսքի մասերի դասակարգման քերականական մոտեցման դեպքում բառերի բաժանումը հիմնականի (նյութական, անվանա-

---

[32] А. А. Потебня, Из записок по русской грамматике, М., 1958, էջ 35:

կան) և ոչ հիմնականի (ոչ նյութական, սպասարկու) ոչ մի նշանակություն չունի, այդպես էլ հարկ չկա բառերը բաժանել խոսքի «մասերի» և «մասնիկների»։ Քերականական տեսակետից բոլոր բառերը հավասար են։ Նրանցից յուրաքանչյուրը (ինչպես հիմնական, այնպես էլ սպասարկու) հակադրված են մյուս բոլոր բառերին, որպես լեզվի քերականական համակարգի որոշակի բաղադրիչ»[33]։

Այս դատողության էությունն էլ ժամանակին հայտնի էր Մ. Աբեղյանին, բայց և այնպես հայ լեզվաբանը բառերը դասակարգելիս հեռանում էր բառերը նյութական և ոչ նյութական, խոսքի մաս և խոսքի մասնիկ խմբերի բաժանող լեզվաբաններին, քանի որ նրա կիրառածը բառերի դասակարգման ոչ թե քերականական, այլ բառաքերականական սկզբունքն էր։

Այս եզրակացությամբ մենք բնավ չենք կամենում ասել, թե Մ. Աբեղյանի տարբերակած բառերի տեսակներն ու խոսքի մասերը բոլորն էլ հավասարապես բառաքերականական որոշակի հատկանիշներով իրար հակադրվող միավորներ են։ Ինչպես բոլոր կարգի ուսումնասիրություններում, այնպես էլ այստեղ վերլուծության մեթոդն ու եղանակը, դասակարգման տարբերակիչ հատկանիշները պայմանավորված են ուսումնասիրվող նյութով։ Այդ հատկանիշները բացահայտվում են վերլուծության ընթացքում և ոչ թե արհեստականորեն վերագրվում ուսումնասիրվող նյութին։

Խոսելով լեզվի քերականական կարգերի բնութագրման մասին՝ Ա. Վ. Իսաչենկոն իր մի աշխատության մեջ իրավացիորեն նկատում է, որ քանի դեռ ձյուն, կաթ, կիր, կավիճ, կտավ բառերը չեն միավորվում ոչ մի ձևական հատկանիշով, մենք իրավունք չունենք խոսելու տվյալ լեզվում սպիտակ առարկաներ արտահայտող «ձևաբանական կարգի» գոյության մասին[34]։ Բայց ուշադիր ընթերցողը նկատեց, որ բերված հինգ բառերից չորսի մեջ բառասկզբում հայերենի կ հնչյունի, այս դեպքում, իհարկե, բոլորովին պատահական, կրկնությունը բավական է, որպեսզի հայ լեզվաբանը այդ բառաշարքի մեջ ինչ-որ ձևական ընդհանրություն սկսի որոնել։

Սկսելով ամենաբնդհանուր նշանակություններից և աստիճա-

---

[33] «Вопросы теории частей речи...», էջ 286։

[34] Տե՛ս **А. В. Исаченко,** Грамматический строй русского языка в сопоставлении со словацким. Братислава, 1954, էջ 41։

նաբար իջնելով ավելի նեղ ծավալի լեզվական ընդհանրություններ՝ Մ. Աբեղյանը փորձում է բնութագրել բառախմբերն այնպես, ինչպես նրանք կան մեր լեզվում և լեզվամտածողության մեջ։ Եվ քանի որ լեզվի կենդանի համակարգում բառայինի ու քերականականի ոչ միայն արտահայտման ձևերն, այլև նշանակություններն անգամ հաճախ նույնանում են կամ չեն տարբերակվում, ուստի բառադասակարգման ընդհանուր սկզբունքներն են միայն մնում անփոփոխ, իսկ տարբերակիչ հատկանիշները դասակարգման տարբեր աստիճաններում փոխվում են։ Գոյականն անջատվում է նյութական նշանակության մյուս բառերից շարահյուսական այն հատկությամբ, որ ինքնակա առարկայի գաղափարը մեր մտածողության մեջ իր առաջնային գործածությամբ դառնում է հատկանշակիր հասկացություն։ Թանձրացական գոյականների համար սա բառաքերականական հատկանիշ է։ Վերացական գոյականների համար գոյականի այդ խոսքիմասային առանձնահատկությունը, ըստ ոմանց (տե՛ս Սավչենկոյի մեկնաբանությունը), միայն քերականական հատկանիշ է, նրանք լրացվում են ոչ ըստ բառային նշանակության, քանի որ նրանք իրենք իսկ գոյականացված հատկանիշներ են, այլ՝ ըստ խոսքիմասային նշանակության, իբրև ինքնակա առարկա գիտակցվելու համար։

Թեև իրենց բառային նշանակություններով բայերն ավելի միասնական ու ընդհանուր բառախումբ են, որպես գործողություն, եղելություն նշանակող բառեր, բայց Մ. Աբեղյանի համար նրանց տարբերակիչ հատկանիշը ածականից ու մակբայից· ոչ թե այդ բայիմաստն է, այլ խոսքի կապակցության մեջ այդ բայիմաստի հետ միաժամանակ նրա արտահայտած դեմքի ու սրանից անբաժան թվի գաղափարը, այսինքն՝ բայի շարահյուսական առաջնային և հեղինակի համար միակ գործառական հատկանիշը։ Բայց արդյո՞ք սա չէ լեզվի իրական պատկերը։ Աբեղյանին քննադատողը առաջին հերթին պիտի մտածի այս հարցի մասին։

Գալով ածականին և մակբային, Մ. Աբեղյանն ածական խոսքի մասի մեջ է խմբավորում քանակական ու դասական թվականները, ածական դերբայներն ու դերանունները։ Բառերի այսպիսի հավաքածուն, պարզ է, բառային նշանակությամբ ընդհանրացված չէ։ Սակայն Մ. Աբեղյանի վերլուծությամբ այդ բոլոր բառերի նյութական նշանակությունները ընդհանրացված են և ունեն շատ կարևոր միասնություն, այդ այն է, որ սրանք բոլորն էլ արտահայտում են ոչ ինքնակա հատկանիշներ, ուստի և շարահյուսորեն

ստորադասվում են գոյականին և դառնում նրա լրացումը։ Իսկ որ թվականները թվային հատկանիշ են ցույց տալիս և ոչ որակական, իսկ ածական դերանուններն էլ հատկանիշ չեն անվանում, այլ մատնանշում են, սրանք հեղինակի համար խոսքիմասային տարբերակիչ հատկանիշներ չեն։

Այս հարցում կարելի է վիճել Աբեղյանի հետ, և շատերը վիճել և շարունակում են վիճել։ Բայց այստեղ էլ վիճելուց առաջ հարկ կլինի պատասխանել որոշ հարցերի։ Ինչպես, օրինակ, այն հարցին, թե նրան քննադատողները, որ բառային տարբեր նշանակության թվականները, դերբայներն ու դերանունները ածական համարելը Մ. Աբեղյանի կողմից դիտում են որպես սոսկ շարահյուսական հիմունքով կատարված անընդունելի, այլև ոչ գիտական խմբավորում, ի՞նչ սկզբունքով են մեկ մակբայ խոսքի մասի մեջ միավորում լեզվամտածողությամբ իսկ միանգամայն տարբերակված (ինչպե՞ս, ինչքա՞ն (որքա՞ն), ե՞րբ, ո՞ւր տրամաբանական տարբեր հարցերի պատասխանող) ժամանակային, տեղի և այլ նշանակության որակական, բանականական՝ հայրաբար, առաջ-առաջ, բազմիցս, շատ-շատ, ինչ-ինչ, եռակի, ուշ, շուտ, ճիմա, ներհուստ, վեր, ներու և այլ բառեր։ Պատասխանը պարզ է, սրանց խմբավորողը այդ բառերի հատկանիշի հատկանիշ նշանակելու խոսքիմասային նշանակությունն է և սրանց բոլորի պարագայական գործառությունը։ Եթե այսպիսի բառախմբավորումը կարելի է անվանել բառաքերականական սկզբունքով կատարված խմբավորում, իսկ մեր կարծիքով, դա իրականում ավելի շուտ քերականական սկզբունքով կատարված խմբավորում է, ապա Մ. Աբեղյանի՝ ածական խոսքի մասի տարբերակման հիմունքն ավելի շուտ կարելի է բառաքերականական համարել, մանավանդ որ ածականի ներսում այնքան իմաստային խայտաբղետություն չկա, որքան մակբայի ներսում։

Կարծես ավելի վիճելի է թվում բուն թվականները թվական ածական համարելը, բայց այդ հարցում էլ Մ. Աբեղյանի մոտեցումը միանգամայն տրամաբանական է։ Թվականների դիրքը հնդեվրոպական լեզուների խոսքի մասերի շարքում ընդհանրապես որոշակի չէ։ Այդ վեճը միայն հայերենին վերաբերող վեճ չէ։

Ահա թվականների մասին արտահայտված այս կարգի կարծիքներից մեկը. «Թվականներն օժտված չեն խոսքի մասի վառ (ярко) արտահայտված հատկանիշներով և տարբեր լեզուներում զբաղում են տարբեր դիրք։ Այն լեզուներում, որտեղ նրանք չունեն

մյուս անուններից միանգամայն որոշակի քերականական տարբերություններ, ինչպես, օրինակ, թուրքական լեզուներում, առանձին խոսքի մաս չեն կազմում։ Հնդեվրոպական լեզուներում դասական թվականները ածականներ են, իսկ քանակականները լեզուների մեծ մասում ունեն ինչպես ձևաբանական, այնպես էլ շարահյուսական մի քանի առանձնահատկություններ, և պետք է ճանաչվեն որպես առանձին խոսքի մաս։ Բայց մի քանիսում, ինչպես լիտվերենում, սանսկրիտում որոշ թվականներ (լիտվերենում՝ մինչև տասը, սանսկրիտում՝ մինչև 20) ունեն ածականի քերականական հատկանիշներ, մյուսները՝ գոյականի և առանձին խոսքի մաս չեն կազմում»[35]։

Պարզ չէ՞, որ այս կամ այն լեզվի քերականական կառուցվածքի բնութագրման տեսակետից՝ ընդհանրապես, իսկ խոսքի մասերի վերլուծության տեսակետից՝ մասնավորապես, առարկաների թվային հատկանիշ ցույց տվող բառերը իմաստային մի բառախմբում ներկայացնելուց ոչ պակաս կարևոր է պարզել նաև այն, թե այդ բառերը շարահյուսական և ձևաբանական ինչ փոխհարաբերության մեջ են լեզվի մյուս բառատեսակների հետ։

Ասել, թե աշխարհի բոլոր լեզուներում հինգը հինգ է, իսկ հարյուրը՝ հարյուր, և սրանք մի բառատեսակ են կազմում, դեռ շատ բան չի նշանակում, բայց իմանալ, որ լիտվերենում՝ մինչև տասը, իսկ սանսկրիտում՝ մինչև 20-ը թվական ածական են, իսկ մյուս քանակականները՝ թվական գոյական, կամ, ասենք, իմանալ, որ պարսկերենում թվական-գոյական կապակցության մեջ հոլովվող անդամը ոչ թե գոյականն է (քսան աշակերտի, 20 աշակերտից), այլ թվականը («աշակերտ քսանի», «աշակերտ քսանից»), նշանակում է իմանալ այդ լեզուների կառուցվածքի այն բնորոշ կողմերը, որոնք կապված են թվային հատկանիշ ցույց տվող բառերի հետ։

Հետևաբար շարահյուսորեն ածականին նույնացող հայերենի թվականները կարող են համարվել ածականի մի տարատեսակ, և Մ. Աբեղյանը այս հարցում էլ իր մոտեցմամբ չի խախտում բառերը խոսքի մասերի բաժանելու ոչ բառաքերականական և ո՛չ էլ, մանավանդ, քերականական սկզբունքը։

Մ. Աբեղյանի մշակած քերականական համակարգի ամենից

---

[35] **А. Н. Савченко**, Части речи как грамматические и лексико-грамматические классы слов в индоевропейских языках (*նշվ. ժողվ.*, էջ 186—187)։

շատ վեճեր հարուցող խնդիրը բայի աբեղյանական ըմբռնումն է։ Ինչպես նախորդ տարակարծություններում, այստեղ էլ հարցը դուրս է գալիս հայերենի ու հայագիտության սահմաններից և դառնում է ընդհանուր լեզվաբանական վեճի առարկա։

Մ. Աբեղյանն այն առաջին հայ լեզվաբաններից է, որոնք դերբայ առանձին բառատեսակ կամ խոսքի մաս չեն ճանաչում։

Ա. Բահաթրյանցի դեռևս 1879 թ. լույս տեսած «Քերականություն աշխարհիկ լեզվի» աշխատության մեջ դերբայը, որպես առանձին խոսքի մաս, չի ներկայացվում, իսկ նրան հաջորդող հայ քերականներ Մելիք-Թանգյանը (Աշխարհաբարի քերականություն, Շուշի, 1893), Ա. Արաբաջյանը (Տարրական քերականություն հայոց աշխարհաբար լեզվի, 1903, Ալեքսանդրապոլ) և Հար. Թումանյան (Հար. Թումանյանց, Համառոտ ստուգաբանություն հայոց աշխարհաբար լեզվի, Թիֆլիս, 1904 թ.) դերբայները որոշակիորեն առանձին խոսքի մաս չեն համարում և դրանք քննում են բայական համակարգում, որպես բայաձևեր։

Հայերենի դերբայները, ինչպես վերը տեսանք, Մ. Աբեղյանը իր համակարգման սկզբունքների համաձայն բաշխում է չորս խոսքի մասերի՝ բայի, գոյականի, ածականի և մակբայի վրա։ Ըստ որում եմ բայից անջատ ինքնուրույն գործածություն չունեցող ում–ով անկատարը և վաղակատար դերբայը մնում են բայի հարուցույցում, իսկ մյուսները, ըստ իրենց շարահյուսական գործածության, ճանաչվում են որպես գոյական, ածական և մակբայ դերբայներ։ Մ. Աբեղյանի «Աշխարհաբարի քերականության» հրապարակ գալուց հետո, կարծես, հայագիտության համար դերբայների առանձին խոսքի մաս կամ բառերի ինքնուրույն տեսակ լինելու խնդիրը մեջտեղից վերանում է, բայց հրապարակ է գալիս մի այլ հարց, այն է, հայերենի ինքնուրույն գործածության դերբայներն իրո՞ք բայաձևեր են և մտնում են բայական համակարգը, թե՞ տարբեր բառեր են և պետք է բաշխվեն մյուս խոսքի մասերի վրա։ Այս հարցը վերջին հարյուրամյակի ընթացքում դրվել է և դրվում է ոչ միայն հայագետների, այլև հնդեվրոպական մի շարք լեզուների մասնագետների առաջ՝ չստանալով միատեսակ պատասխան։

ՍՍՀՄ գիտությունների ակադեմիայի լեզվի ինստիտուտի կողմից խոսքի մասերի տեսության վերաբերյալ 1965 թ. Լենինգրադում կազմակերպված բանավեճի մասնակից Վ. Մ. Ժիրմունսկին գրում է. «Հազիվ թե հիմք կա որպես առանձին խոսքի մաս ա-

ռանձնացնելու դերբայը (причастия), *մակբայական դերբայը* (деепричастия) *և անորոշը* (инфинитивы)՝ *չնայած սրանց բայական անվանական խառը բնույթին* (характер)...»։ *Գալով սրանց՝ ռուսերենի բառատեսակների մեջ ավելի նպատակահարմար բաշխելու խնդրին՝ նա համաձայն է այն մոտեցմանը, ըստ որի «դրանք մտցված են բայի բառաձևական համակարգը, որպես բայի առանձնահատուկ (անվանական) ձևեր՝ բայական ածականներ, մակբայներ, գոյականներ»*[36]։

Այլ մոտեցում ուներ Մ. Աբեղյանը։ Նա հայերենի քերականական համակարգի տեսակետից ավելի նպատակահարմար է գտնում այս բայական ածականները, մակբայները և գոյականները անուն խոսքի մասերի տարատեսակները համարել և ոչ թե բայի։ Նրա համար դերբայական **-ել, -ած, -ալ, -ող, -ելու, -ալու, -ելիս, -ալիս** *վերջավորությունները սովորական ձևակազմական թեքույթներ չեն։ Սրանցով բառարմատներից բայեր են կազմվում, ուրեմն դրանք ունեն բառակազմական արժեք և նաև ածանցներ են։ Այդ ձևույթները նյութական նույն նշանակությանը հաղորդում են շարահյուսական տարբեր արժեքներ, դրանք դառնում են, ըստ գործածության, տարբեր բառախմբեր կազմող միավորներ, իսկ Աբեղյանի մոտեցմամբ նման դեպքերում տարբերակիչ հատկանիշ է դառնում գործառական-շարահյուսական հատկանիշը։ Ուստի այս հարցում էլ նա մնում է իր սկզբունքին հավատարիմ։ Սակայն եթե նյութական նշանակության բառերի մյուս տեսակները տարբերակելիս բառերի շարահյուսական հատկանիշները մեծապես զուգորդվում են իրենց հիմքում ընկած նյութական, բառային նշանակություններով, ապա այստեղ, երբ ժամանակային հարաբերությամբ օժտված բայական նույն հասկացությունները բաշխվում են գոյականի, ածականի և մակբայի վրա, բաշխման հիմունքը դառնում է բացարձակ քերականական. գոյական դերբայ, ածական դերբայ և մակբայական դերբայ տարբերակման մեջ կարելի է միայն տեսնել, այսպես կոչված, քերականական տարբեր խոսքի մասեր և ոչ թե բառային։*

Այստեղ էլ հետևողականորեն կիրառելով իր սկզբունքները՝ Մ. Աբեղյանը **ճոսել, ճոսող, ճոսած, ճոսելու, ճոսելիս** *միավորնե-*

---

[36] **В. М. Жирмунский**, «О природе частей речи и их классификаций», (Вопросы теории частей речи..., Л., 1968, էջ 11)։

քը ոչ միայն մտցնում է տարբեր խոսքի մասերի շարքը, այլև սրանք համարում է տարբեր բառեր։

Դեռևս «Աշխարհաբարի քերականության» մեջ Մ. Աբեղյանն այն կարծիքին էր, որ դերբայները բայաձևեր չեն, այլ բայահիմքից կազմված առանձին բառեր են։ Այդ մասին նա գրում է. «Դերբայներն իսկապես բայ չեն, այլ բայի հիմքից կազմված անուն կամ ածական (մականուն, մակբայ). բայց որովհետև սովորաբար չեն համարվում առանձին բառեր, այլ միևնույն հիմքից կազմված բայի ձևեր, ուստի և մտնում են խոնարհման մեջ» (էջ 100)։

Մ. Աբեղյանը դերբայական վերջավորությունները դասում է վերջածանցների շարքը և սրանց մեջ տեսնում է բառակազմական արժեք ու այդպես էլ դերբայական ձևերը քննում է բառակազմության և ոչ թե ձևաբանության կամ թեքման մեջ։ Սակայն հայերենի դերբայների ինչ բառատեսակ լինելու խնդիրը սրանով չի լուծվում։

Ածանցման մեջ որպես տարբեր բառեր և ոչ բայաձևեր քննված ում վերջավորությամբ անկատար, ինչպես և վաղակատար դերբայները, որոնք, չունենալով անկախ (ինքնուրույն) գործածություն, չեն մտցվում անուն խոսքի մասերի շարքը, թեև մտցվում են բայական հարացույցը, որպես օժանդակ բայի հետ դիմավոր ձևեր բաղադրող դերբայներ, բայց Մ. Աբեղյանի սահմանմամբ, միևնույն է, բայ չեն համարվում, քանի որ առանձին վերցրած դեմքի և թվի գաղափար չեն արտահայտում։

Պարզ պատասխան չունի նաև այն հարցը, թե ածականի տարատեսակ համարված հարակատար և ապառնի դերբայները, երբ հանդես են գալիս ոչ որոշչի, այլ ստորոգյալի պաշտոնում և ըստ այդմ օժանդակ բայի հետ դառնում են բայական հարացույցի անդամ, մնում են արդյոք բայածակա՞ն, թե այս դիրքում նրանք արդեն բայ են, և մենք գործ ունենք համանուն տարբեր բառերի հետ։

Խոսքի մասերի տեսությանը նվիրված լենինգրադյան բանավեճին Ա. Ն. Սավչենկոն արտահայտել է հետևյալ ուշագրավ միտքը. «Տարածված է այն կարծիքը, թե տարբեր խոսքի մասերի պատկանող միավորները միշտ տարբեր բառեր են։ Այս կանոնը բացարձակ չէ։ Մաքուր քերականական բնույթի խոսքի մասերը տատանվում են առանձին բառերի և քերականական ձևերի միջև»[37]։

Բայի դիմավոր և անդեմ ձևերի կամ դերբայների իր դասդա-

---

[37] А. Н. Савченко, *նշվ. ժողով.*, էջ 189։

սումների ու նկարագրությունների մեջ Մ. Աբեղյանը, հավանաբար, կհամաձայներ ռուսագետի այս կարծիքին։ Այլ լեզուների «մաքուր քերականական բնույթի խոսքի մասերի» պես հայերենի դերբայներն էլ, կարելի է ասել, տատանվում են առանձին բառերի և քերականական ձևերի միջև։ Դերբայների մեջ բայական և անվանական հատկանիշների այդ երկակի բնույթի վերլուծությունը Մ. Աբեղյանի «Հայոց լեզվի տեսության» մեջ, չնայած իր յուրովի և հետևողական համակարգվածությանը, ավարտուն տեսք չունի։

Մ. Աբեղյանին հաջորդած հայագետները նախաաբեղյանական մեր հիշատակած քերականների պես դերբայները կրկին միավորում են բային, որպես նրա համակարգի միավորներ կամ բայաձևեր, այդպիսի մոտեցմամբ համաձայնելով այն ճշմարտությանն, ըստ որի՝ որևէ լեզվական միավոր կարող է չմտնել տվյալ բառի հարացույցը, բայց կարող է համարվել այդ բառի քերականական ձևը։ Նույն ռուս լեզվաբանի բառերով ասած, այս անգամ էլ «Անորոշ դերբայը չի մտնում բայի հարացույցը, բայց և այնպես համարվում է բայաձև»[38]։ Բայց հարացույցի լայն պատկերացման դեպքում անորոշի և դիմավոր ձևեր չկազմող մյուս դերբայների միացումը տվյալ լեզվի բայական հարացույցին այնքան էլ անհնար բան չէ, ուստի և այդպես է վարվում ժամանակակից հայ քերականագիտությունը։

Ինչպես երևում է, այն երկվությունները ու հակասությունները, որոնք գալիս են ոչ թե նախորդ ուսումնասիրողների գործադրած մեթոդներից ու դատողություններից, այլ բխում են լեզվի կառուցվածքից ու էությունից, ինչպես էլ որ մեկնաբանվեն և համակարգվեն, պիտի պահպանվեն։ Դերբայն, անուն խոսքի մաս ճանաչվելիս, պիտի հակադրության մեջ մտնի իր բայական հատկանիշների կամ էության հետ, բայ ճանաչվելիս՝ իր անվանական էության հետ, իսկ մի առանձին, ինքնուրույն խոսքի մաս ճանաչվելիս՝ թե՛ բայական, թե՛ անվանական էության հետ։ Համակարգեցեք, ուրեմն, այնպես, ինչպես ավելի նպատակահարմար է տրվյալ լեզվի կառուցվածքին։

Այս մեղմացուցիչ պարագաներով հանդերձ բայի մեկնաբանությունը Մ. Աբեղյանի խոսքի մասերի համակարգում մնում է նրա դեմ մղված վեճերի կենտրոնը։ Սակայն այդ վեճերից ազատվելու համար եթե փորձենք հրաժարվել Աբեղյանի բայի ըմբռնու-

---

[38] *Նույն տեղում, էջ 190։*

մից, դրանով հրաժարված կլինենք նաև նրա հորինած համակարգի միասնականությունից, ամբողջությունից և հետևողականությունից։

Մեր եզրակացությունները Մ. Աբեղյանի խոսքի մասերի տեսության մասին ավարտելուց առաջ նկատենք մի կարևոր հանգամանք ևս։

Մ. Աբեղյանն ըստ էության հայերենի բառապաշարը ներկայացնում է մի այնպիսի դասակարգմամբ, բառատեսակներով ու ենթատեսակներով, որ բառային ու քերականական ինքնուրույն նշանակությամբ օժտված հայերենի յուրաքանչյուր լեզվական միավոր այդ համակարգում գտնում է իր տեղը։ Այն շրջանում բայից անջատ գրություն ունեցող նույնիսկ «չը» մասնիկը «ոչ» ժխտական բառ մասնիկի հետ (ո՛չ գնա, ո՛չ եկ) այդտեղ դարձել են մի առանձին բառատեսակ։ Ի դեպ, չ-ն երևի հայերենի վերջին երկրորդական ձևույթն է, որ դեռևս դիտվում է որպես բառ մասնիկ և խոսքի մասերի մեջ առանձին բառի տեղ է զբաղեցնում։

Մ. Աբեղյանն իր «Աշխարհաբարի քերականության» մեջ այդպիսի անկախ միավորներ էր համարում նաև հոդերը։ Թեև, ինչպես տեսանք, դեռևս Չամչյանը հոդն այլևս առանձին խոսքի մաս չէր համարում, բայց նրա համար այն մնում էր որպես դերանվան մի տեսակ։

Այնպես որ հոդերի, որպես բառային արժեք ունեցող միավորների, հարցը գալիս հասնում է մինչև Մ. Աբեղյան։ Վերոհիշյալ աշխատության մեջ Աբեղյանը հոդը դիտում է որպես մականվան մի տարատեսակ, նրա սահմանմամբ դրանք այնպիսի մականուններ են, «որոնք իբրև առանձին բառ մենակ չեն գործածվում, այլ միշտ դրվում են մի անվան վրա վերջից, որի հետ և հոդված, այսինքն կպած, կցված են գրվում» (էջ 62)։ «Աշխարհաբարի շարահյուսության» մեջ հոդն այլևս մականվան տեսակ չէ։ Հոդերն այստեղ ճանաչվում են որպես մականուն վերադրի և անվան քերականական համաձայնության ձևական միջոց (այս օրերս, քո հայրդ)։ Երբ մականունները նման կապակցություններում գնալով դառնում են ավելորդ և դուրս են ընկնում, հոդերը մենակ արդեն մնում են որպես այդ մականունների դերանվանական իմաստները արտահայտող մասնիկներ, բայց ոչ բառ մականուններ (էջ 176—193)։

Ինչպես ամեն մի դասակարգում, այնպես էլ բառերի դասակարգումը հետապնդում է որոշակի նպատակ, և այդ նպատակը

ծառայում է ոչ այլ բանի, քան դասակարգվող նյութի հաջող վերլուծությանը։ Այս տեսակետից Մ. Աբեղյանի խոսքի մասերի տեսության նկարագիրն ու գնահատումը թերի կլինեն, եթե հաշվի չառնվեն այդ դասակարգման հիման վրա հեղինակի հետագայում կատարած բառերի ձևաբանական ու շարահյուսական հատկանիշների խոր վերլուծությունները, եթե նկատի չառնվեն գրական աշխարհաբարի հոլովման և խոնարհման համակարգերի աբեղյանական բացառիկ ճշգրիտ ու գիտական հարացույցները, քերականական նշանակության բառերի շարահյուսական-գործառական նշանակությունների բազմակողմանի նկարագրությունները։

ՀԱՅԵՐԵՆԻ ԽՈՍՔԻ ՄԱՍԵՐԻ ԻՄԱՍՏԱՅԻՆ ԿԱՄ ԻՄԱՅԱԲԱՆԱԿԱՆ ԴԱՍԱԿԱՐԳՈՒՄԸ Ա. ՂԱՐԻԲՅԱՆԻ ԵՎ Գ. ՍԵՎԱԿԻ ԱՇԽԱՏՈՒԹՅՈՒՆՆԵՐՈՒՄ

Հոկտեմբերյան հեղափոխության առաջ բերած գաղափարական մեծ տեղաշարժերից մեկն էլ մարքսիստական դիալեկտիկական-մատերիալիստական փիլիսոփայության հիման վրա սովետական լեզվաբանության աստիճանական առաջացումը եղավ։

Մարքսիզմի՝ կլասիկների ստեղծած մարքսիստական լեզվաբանության ընդհանուր փիլիսոփայական սկզբունքներն ու լեզվի մասին նրանց արտահայտած ասույթները հիմնաքար դարձած՝ սովետական լեզվաբանների մեծ բանակը հետհոկտեմբերյան շրջանում ձեռնամուխ եղավ և, ոչ, իհարկե, առանց դժվարությունների ու սխալների հաղթահարման, հաջողությամբ շարունակում է մարքսիստական լեզվաբանության ստեղծման գործը[39]։ Այս շրջանի լեզվաբանական նվաճումները հավասարապես վերաբերում են նաև խոսքի մասերի տեսությանը։

«Սովետահայ, ինչպես և ընդհանրապես սովետական քերականագիտությունը զգալի չափով առաջ տարավ խոսքի մասերի պրոբլեմի քննությունը» իրավացիորեն նկատում է Մ. Աբրահամյանն իր «Չթեքվող խոսքի մասերը և նրանց բառական ու քերականական հատկանիշների փոխհարաբերությունը ժամանակակից հայերենում» մենագրության մեջ[40]։

---

[39] Մանրամասներն, ըստ փուլերի, տե՛ս Գ. Բ. Ջահուկյան, Լեզվաբանության պատմություն, հատ. 2, 1962, էջ 407—542։

[40] Տե՛ս Ս. Աբրահամյան, նշվ. աշխատություն, էջ 31։

«Հայ իրականության մեջ,— շարունակում է իր վերոհիշյալ միտքը Ս. Աբրահամյանը,— խոսքի մասերի անցյալի ըմբռնման վերանայման պատիվը պատկանում է պրոֆ. Ա. Ղարիբյանին և Գ. Սևակին։ Ա. Ղարիբյանը գործնական, իսկ Գ. Սևակը էլ տեսական աշխատություններով խոսքի մասերի գնահատման ու որոշման հարցում զգալի ներդրում ունեցան։ Քերականության դասագրքերում որպես խոսքի մասերի որոշման հիմնական հիմունք ընդունվեց բառերի ընդհանուր իմաստը, ձևական ու շարահյուսական հատկանիշները մղվեցին երկրորդական պլան և շատ դեպքերում անտեսվեցին։ Սահմանազատվեցին ածականն ու թվականը, որոնք իրենց որոշիչի ֆունկցիայի պատճառով տարբերակված չէին որպես ինքնուրույն խոսքի մասեր, վերանայվեց բայի ըմբռնումը՝ իմաստային հիմքի վրա և դերբայները ևս ճանաչվեցին իբրև բայի արտահայտության ձևեր, վերանայվեց դերանվան տրադիցիոն ճանաչումը դարձյալ իմաստային հիմունքով, և այլ խոսքի մասերի շարքը դասված դերանունները միավորվեցին մեկ խոսքի մասի մեջ և այլն»[41]։

Ս. Աբրահամյանի այս մեկնաբանության մեջ անորոշ է մնում «խոսքի մասերի անցյալի ըմբռնումը» ձևակերպումը, և թույլ են տրվում պատմական որոշ անճշտություններ։

Պարզվում է, որ Ա. Ղարիբյանի և Գ. Սևակի հիմնական ծառայությունը հայերենի խոսքի մասերի ուսմունքի պատմության մեջ եղավ այն, որ նրանք խոսքի մասերի որոշման հիմունք ճանաչեցին բառերի ընդհանուր իմաստները, իսկ այնուհետև այդ սկզբունքի կիրառմամբ «սահմանազատվեցին ածականն ու թվականը..., որպես ինքնուրույն խոսքի մասեր», «... իմաստային հիմքի վրա դերբայները ևս ճանաչվեցին իբրև բայի արտահայտության ձևեր», «վերանայվեց դերանվան տրադիցիոն ճանաչումը դարձյալ իմաստային հիմունքով, և այլ խոսքի մասերի շարքը դասված դերանունները միավորվեցին մեկ խոսքի մասի մեջ...»։ Եվ այս ամենը «իմաստային սկզբունքով»։ Բայց չէ՞ որ Մ. Աբեղյանն էլ, ըստ նշանակության բառերի դասակարգում կատարելով, ստանում է չորս խոսքի մաս և, դարձյալ ըստ նշանակության, դերանունները բաշխում է երեք խոսքի մասերի վրա, իսկ Գ. Սևակն ու Ա. Ղարիբյանը «դարձյալ իմաստային», այսինքն նշանակության սկզբունքով բոլոր դերանունները միավորում են մեկ խոսքի

---

[41] Նույն տեղում, էջ 31—32։

մասի մեջ՝ ստանալով Աբեղյանի ստացածի հակառակ արդյունքը։ Նշանակում է՝ դեռ քիչ է ասել «ըստ նշանակության», կամ «ըստ ընդհանուր իմաստի», պետք է պարզել, թե այդ ո՞ր նշանակության մասին է խոսքը։ Գալով խոսքի մասերի իմաստային դասակարգման մեթոդին, ինչպես վերը տեսանք, այն հայտնի էր և կիրառվում էր քննվող ժամանակաշրջանից շատ տասնամյակներ, եթե ոչ հարյուրամյակներ առաջ, որի լավագույն հայ ներկայացուցիչն Ստ. Պալասանյանն էր։ Պալասանյանը նույն իմաստային սկզբունքով թվականը վաղուց էր անջատել ածականից, որպես առանձին խոսքի մաս, իսկ դերանուններն էլ միավորել՝ որպես մեկ առանձին խոսքի մաս, թեև գոյական դերանունները առանձին խոսքի մաս էին հարյուրամյակներ առաջ։ Մեր այս ասածները նոր հայտնություններ չեն։ Թվական անվան նվիրված իր մենագրության մեջ Ս. Գյուլբուդաղյանը գրում է. «Պալասանյանը, սակայն, թվական անունը ներկայացնում է իբրև առանձին խոսքի մաս... Թվականն իբրև առանձին խոսքի մաս ներկայացված է նաև Հար. Թումանյանի և Գր. Վանցյանի աշխատություններում»[42]։

«Իմաստային սկզբունքով» լուծված էր նաև դերբայների բայ խոսքի մաս ճանաչելու հարցը։ Դերբայների խոսքի մասային հարցի պատմության մասին Աշոտ Աբրահամյանը գրում է. «Պալասանյանից հետո մինչև Աբեղյանը հանդես եկած առանձին հեղինակների մոտ (օրինակ՝ Ա. Բահաթրյան, Հար. Թումանյան) քննարկվող հարցում նկատելի է մի կարևոր նորություն. այդ այն է, որ դերբայն արդեն չի համարվում առանձին խոսքի մաս. դերբայական ձևերը հանվում են խոսքի մասերի ցանկից և ուսումնասիրվում են բայի հետ»[43]։

Հոկտեմբերյան մեծ հեղափոխության առաջ բերած սոցիալական հեղաշրջմանը հաջորդած մշակութային հեղափոխությունը տեսական ու գործնական նոր խնդիրներ դրեց սովետական դպրոցի ու գիտության առաջ։ ՍՄԿԿ 1931—1932 թթ. դպրոցի վերաբերյալ ընդունած որոշումները ուղեցույց դարձան ուսուցման հին մեթոդներից հրաժարվելու, դպրոցական նոր ու կայուն ծրագրեր ու դասագրքեր ստեղծելու համաժողովրդական կարևորություն ունեցող գործի համար։

---

[42] Ս. Վ. Գյուլբուդաղյան, *Թվական անունը ժամանակակից հայերենում*, 1964, էջ 7։

[43] Ա. Ա. Աբրահամյան, *Հայերենի դերբայները և նրանց ձևաբանական նշանակությունը*, 1953, էջ 36։

1934 թ. լույս տեսավ Ա. Ղարիբյանի «Հայոց լեզվի քերականության դասագիրք»-ը, որն ընդգրկում էր հայերենի հնչյունաբանությունը, բառագիտությունը և ձևաբանությունը, իսկ 1936 թ. լույս տեսավ պրոֆ. Գ. Սևակի «Հայոց լեզվի շարահյուսություն»-ը որոնք, նույն հեղինակների ջանքերով ստեղծված կայուն ծրագրերի հիման վրա հետագա մշակման ենթարկվելով, ինչպես ամեն մի կայուն դասագիրք, որոշակի դեր կատարեցին հայերենի քերականական կառուցվածքի ոչ միայն դպրոցական ուսուցման, այլև նորմավորման գործում։

1972 թ. մի առիթով անդրադառնալով Խ. Աբովյանի անվան մանկավարժական ինստիտուտի հայոց լեզվի ամբիոնի գիտամանկավարժական գործունեության անցած շրջանի գնահատման՝ Ա. Ղարիբյանն այսպես է ներկայացնում 30-ական թվականներին իր և Գ. Սևակի դասագրքերի ստեղծման պատմությունը։

ՍՄԿԿ Կենտրոնական կոմիտեի 1931, 1932, 1933 թթ. «որոշումների մեջ պահանջ դրվեց ստեղծելու կայուն դասագրքեր կայուն գիտելիքներով։ Լեզվի բնագավառում դա նշանակում էր դուրս վռնդել դպրոցից այնտեղ 1924—1931 թվականներին իշխող ձևական քերականությունը և ստեղծել նոր տիպի քերականություն։ Այդ վերջին խնդիրը կատարելու համար մանկավարժական ինստիտուտի ամբիոնն ուներ երկու սիստեմի քերականական ժառանգություն՝ պալասանյանական և աբեղյանական։ Առաջինում գերակշռում էր տրամաբանության և բովանդակության սկզբունքը, ֆերագնահատվում էր ձևը, երկրորդում գերագնահատվում էր ձևը, նվազ ուշադրություն նվիրվում բովանդակությանը՝ հատկապես անունների ուսուցման մեջ...

Պարզվեց, որ անունների հարցում ճշտելով քերականության երևույթների բովանդակությունը, պետք է նրա հետ միասնաբար վերցնել ձևը, այսինքն՝ մարքսիստորեն օգտագործել պալասանյանական ժառանգությունը, իսկ բայերի հարցում ճշտելով ձևերը՝ նրանց հետ միասնաբար վերցնել բովանդակությունը, այսինքն՝ մարքսիստորեն օգտագործել Աբեղյանի մեծ գյուտը արդի հայերենի բայերի համակարգի բնագավառում...

Այս ձևով ստեղծվեց սովետական, այս թվում նաև սովետահայ դպրոցական քերականությունը, ձևաբանությունը։ Շարահյուսությունը ստեղծվեց Համալսարանում ակադեմիկոս Գ. Սևակի կողմից»[44]։

[44] Ա. Ղարիբյան, Լեզվաբանական միտքը Խ. Աբովյանի անվան մանկա-

Հարցի պատմությանն անդրադառնալիս, Ա. Ղարիբյանը գիտական հիմնավորում չունեցող իր որոշ դատողությունները, ինչպես, ասենք՝ Պալասանյանի քերականության մեջ թերագնահատված է լեզվական ձևը, Աբեղյանի քերականության մեջ անտեսված է լեզվական բովանդակությունը և այլն, կամենում է անցկացնել մարքսիզմի տեսական դրույթներից արված քաղվածքներով։

Այսպես, ուրեմն, «սովետահայ դպրոցական քերականության» հիմնադիր դառնալու համար նա պիտի ապացուցի, որ իր քերականությունը գրված է լեզվի ձևի և բովանդակության միասնության մարքսիստական դրույթին համապատասխան. իսկ այս ապացուցելու համար էլ նա պիտի ապացուցի, որ իր նախորդները այդպես չեն վարվել։ Սխեման պատրաստ է. մնում է ասել, որ Պալասանյանի տրամաբանական քերականության մեջ գերագնահատված են տրամաբանությունն ու բովանդակությունը և թերագնահատված է ձևը, իսկ Աբեղյանի քերականության մեջ գերագնահատված է ձևը և անտեսված՝ բովանդակությունը. այնուհետև այս երկուսի քննադատական օգտագործմամբ, բովանդակությանը նախապատվություն տալով՝ ձևի և բովանդակության միասնության սկզբունքով Ա. Ղարիբյանի կողմից ստեղծված է «սովետական համակարգի քերականության դասագիրք»։

Մի կողմ թողնելով հեղինակի «սովետական համակարգի քերականության դասագիրք» մեզ անհասկանալի ձևակերպումը՝ արդ տեսնենք, թե խոսքի մասերի ուսմունքի տեսակետից ինչ նորություններ էր բերում նրա դպրոցական դասագիրքը։

Գ. Սևակն իր «Խոսքի մասերի ուսմունքը» աշխատության մեջ այսպես է գնահատում երևանական թվականներին ֆորմալիզմի դեմ ծավալված պայքարը և սրա հետևանքով ստեղծված նոր դասագրքերը, որոնց թվում և Ղարիբյանի դասագիրքը։

«Հետևանքը եղավ այն, որ դպրոցն ստացավ սիստեմատիկ քերականություն, որի սիստեմը և բովանդակությունը, սակայն, ոչ մի նորություն չէին պարունակում (Շապիրո, Բարխուդարով և Դոսըշևա, Սիխարուլիձե, Ղարիբյան, Սևակ և այլն)։ Ռուսերենի, վրացերենի և հայերենի նոր, կայուն դասագրքերի այս հեղինակների աշխատանքի հաջողությունը կամ անհաջողությունը չափ-

---

վարժական ինստիտուտում («Հայոց լեզուն և գրականությունը դպրոցում» 6—1972, էջ 56—57)։

վում է նրանով, թե որքան լավ են կարողացել նրանք կոմպիլյացիա անել քերականության նախորդ դպրոցների տարբեր, հաճախ ներհակ դրույթներից, որքանով լավ նրանք կարողացել են նմանվել համապատասխան լեզվի կլասիկ քերականությանը»[45]։

«Հայերենի կայուն քերականության առաջին մասը Ա. Ղարիբյանինն է,— շարունակում է Գ. Սևակը։ — Արդեն երրորդ հրատարակություն ունեցող այս դասագիրքը նախադասության ենթակայի և ստորոգյալի, նախադասության մյուս անդամների հասկացողության մեջ մտցրել է իմաստաբանական որոշ մոմենտ։ Ավելին. այստեղ նախադասությունը դիտվում է խոսքի մեջ, իբրև խոսքի միավոր, որով ցույց է տրվում, «որ մի առարկա մի բան անում, կամ լինում է» (էջ 5)։ Ընդհանրապես այս գրքի ներածական մասը «Խոսք և նախադասություն» (էջ 3—9) տրված է իմաստաբանական և հաղորդակցական մոմենտի հաշվառումով և շատ ավելի հաջող է, քան մեր քննած նախորդ գրքի մեջ։

Սակայն նույնը չի կարելի ասել բուն գրքի բովանդակության մասին. այստեղ մենք գտնում ենք նույն, կամ համարյա նույն մեթոդաբանական դրույթները, ինչ որ նախորդի մեջ արդեն տեսանք, թեև, պետք է ընդգծել, Ղարիբյանի գրքի մեջ բառի շարահյուսական ֆունկցիան, դերը և պաշտոնը հաշվի չեն առնված խոսքի մասերի որոշման դեպքում։ Բայց ինչ վերաբերում է դերանվան, կապի, շաղկապի և ձայնարկության հասկացողությանը, պետք է ասել, որ այս խոսքի մասերը որոշվում են իրենց շարահյուսական պաշտոնով կամ գործածությամբ»[46]։

Դժվար է համաձայնել Գ. Սևակի կարծիքի այն մասին, որտեղ նյութական խոսքի մասերի որոշման մեջ բառերի շարահյուսական գործառությունը հաշվի չառնելը գնահատվում է դրական, իսկ դերանվան և ոչ նյութական խոսքի մասերի որոշման մեջ շարահյուսական գործառության հաշվի առնելը քննադատվում է։ Գ. Սևակը դերանվան խոսքիմասային բնութագման մեջ Ա. Ղարիբյանի դասագրքում նկատում է մի նորություն ևս. «Այստեղ ավելացված է այն,— գրում է նա տողատակին,— որ դերանունը փոխարինում է նաև մակբային. միակ նորությունը այս է, որը, սակայն, իմացա-

---

[45] Գ. Սևակ. Խոսքի մասերի ուսմունքը, ներածություն, (Երևանի պետական համալսարան, «Գիտական աշխատություններ» հ. 11, 1939, էջ 190—191)։

[46] Գ. Սևակ, նշվ. աշխ., էջ 198։

բանական որևէ արժեք չունի, այլ լայնացնում է դերանվան շարահյուսական իմաստի հասկացողությունը»[47]։

Դերանվան և մակբայի խոսքիմաստային հարաբերակցությանը հայ քերականագիտության մեջ առաջինը ուշադրություն է դարձնում Մ. Աբեղյանը, միայն թե Աբեղյանը մակբայական դերանունները դնում է մակբայ խոսքի մասի մեջ, որպես սրա մի տարատեսակը, ինչպես վարվում է գոյական և ածական (սրանց մեջ նաև թվական) դերանունների հետ՝ սրանք համապատասխանաբար համարելով գոյական և ածական խոսքի մասերի տարատեսակներ։

Ա. Ղարիբյանը, իր դասագրքում ճշգրտելով դերանունների ցանկն ու սրանց տեսակները, այդ դասագրքի հետագա հրատարակություններում կատարեց Գ. Սևակի վերոհիշյալ պահանջը նույնպես՝ դերանվան հասկացության նոր մեկնաբանությամբ, իր ոճով ասած, լայնացրեց նրա իմաստաբանական ըմբռնումը։ Այս դեպքում դերանունը պարզաբանվում է որպես «առարկա, որպիսություն, թիվ և գործողության հանգամանքներ ընդհանրապես, առանց կոնկրետության» ցույց տվող խոսքի մաս»[48]։

Խոսքն այստեղ վերաբերում է նրան, որ դերանունը դադարում է միայն անուններին (գոյական, ածական, թվական) հարաբերակից խոսքի մաս լինելուց, այն իր մեջ է առնում նաև մակբայական դերանունները, իսկ մյուս կողմից՝ դերանունները բնութագրվում են իրենց իմաստային ընդհանրականությամբ, որով էլ նրանք հակադրվում են անուններին։ «Ուրիշ լեզուների քերականությունների մեջ,— գրում է Ա. Ղարիբյանը,— առայժմ այդ ուղղումը կատարված չէ, բայց քերականության տեսությունը, խորը մշակվելուց հետո, կթելադրի քերականներին վարվելու այդպես»[49]։

Նրա ասելով՝ դերանվան ու մակբայի իմաստային հարաբերակցության և դերանվան ընդհանրապես առարկա, հատկանիշ, թիվ, գործողության հանգամանքներ ցույց տալու տեսական «նորույթը» դեռ ուրիշ լեզուների քերականություններին չի հասել։

Վ. Վ. Վինոգրադովի «Русский язык» գրքի դերանվանը նվիրված գլխի պատմական ակնարկից երևում է, որ Ա. Ղարիբյանի կողմից որպես քերականագիտական նորույթ ներկայացված հար-

---

[47] Նույն տեղում, էջ 198։

[48] Ա. Ղարիբյան, Հայոց լեզվի դասավանդման մեթոդիկա, Երևան, 1951, էջ 234։

[49] Նույն տեղում։

ցերով ռուս քերականագիտությունն սկսել է զբաղվել 19-րդ դարի երկրորդ կեսերից[50], իսկ մակբայական դերանունների առանձնացումը և դերանվան ոչ կոնկրետ, այլ ընդհանրապես առարկա կամ հատկանիշ ու հատկանիշի հատկանիշ ցույց տալու հասկացությունը ռուս քերականագիտության մեջ շատ վաղուց դասագրքային ճշմարտություն են դարձած[51]։

Ա. Ղարիբյանը խոսքի մասերը համարում է բառերի **fերական** տեսակներ, և այս կետում նրա հայացքը տարբերվում է Գ. Սևակի տեսակետից։ Նա, խոսքի մասերի համար բնորոշը համարելով նրանց իմաստային հատկանիշը, չի բացառում նաև շարահյուսական հատկանիշների հաշվառումը։ Իր դասագրքի 1964 թ. հրատարակության մեջ Ա. Ղարիբյանը գրում է. «Բառերի քերականական տեսակները հայերենում որոշվում են ըստ նրանց նշանակության, քիչ դեպքերում նաև ըստ գործածության, և կոչվում են խոսքի մասեր»[52]։

«Հայոց լեզվի դասավանդման մեթոդիկայում» տրված պարզաբանումներից երևում է, որ Ա. Ղարիբյանը խոսքի մասերը իրավացիորեն չի համարում բոլոր լեզուների համար ընդհանուր և մի պարտադիր սկզբունքով տարբերակվող հանրույթներ (универсалы)։

«Կան լեզուներ, որոնց բառային կազմի համարյա բոլոր բառերը կարելի է դասդասել ըստ խոսքի մասերի, առաջնորդվելով նաև նրանց ձևական կողմերով»։

Այս «նաև»-ը նշանակում է, որ Ղարիբյանի համար խոսքի մասերի դասակարգման հիմնական սկզբունքը մնում է իմաստային սկզբունքը։ Հայերենի համար Ղարիբյանը բացառում է բառի ձևական հատկանիշով նրա խոսքիմաստային պատկանելությունը որոշելու հնարավորությունը։

«Հայերենում խոսքի մասի հիմնական նշանակությունը կարելի է որոշել իմաստից դեպի ձևով»[53],— գրում է հեղինակը։ Այսուամենայնիվ նա խոսքիմաստային ձևական հատկանիշներ է համարում գոյականակերտ, ածականակերտ, մակբայակերտ, բվակա-

---

[50] *Տե՛ս* **В. В. Виноградов**, Русский язык, М., 1947, стр. 317—326։

[51] *Տե՛ս* **А. Н. Гвоздев**, Современный русский литературный язык, ч. I, 1961, էջ 280—283։

[52] **Ա. Ղարիբյան**, *Հայոց լեզու, դասագիրք 5—7-րդ դաս. համար, 1964, էջ 89։*

[53] **Ա. Ղարիբյան**, *Հայոց լեզվի դասավանդման մեթոդիկա, 1954, էջ 175։*

Ներկեր ածանցները, որոնք «որոշ չափով հնարավորություն են տալիս որոշելու ածանցավոր բառի այս կամ այն խոսքի մասին պատկանելը»։ Բացի այս, ձևաբանորեն տարբերակված են բայերը. «Միայն բայերն ունեն անխուսափելի ածանցներ (դերբայական վերջավորություն),— գրում է Ղարիբյանը,— առանց դերանց բայեր գոյություն չունեն հայոց լեզվի մեջ»[54]։

Ուշագրավ բացատրություն տալով անուն խոսքի մասերի և դերանվան հասկացությունների հարաբերակցության մասին՝ Ա. Ղարիբյանը ընդհանրացման տարբեր աստիճաններ ներկայացնող բույս, ծառ, տանձենի հասկացությունների համեմատությամբ հստակ կերպով բացատրում է գոյական անվան առարկայի տեսակի անուն լինելու հանգամանքը։ Եթե գոյականը առարկայի տեսակի անուն է, ապա դերանունը, ըստ Ղարիբյանի, առարկայի ընդհանուր անունն է։ Այս մասին նա գրում է.

«Ահա այդ առարկա հասկացության ընդհանուր անունը կոչվում է դերանուն։ Նշանակում է՝ ա) դերանունը առարկայի հասկացության ընդհանուր անունն է։ Այդ պատճառով էլ գոյականները անթիվ են, իսկ դերանունները՝ խիստ փոքրաթիվ»[55]։

«Անուն» տերմինի նման գործածությունը դերանունների առընչությամբ սկիզբ է առնում դերանվան ծագման և անվան հետ ունեցած փոխհարաբերության մասին հնացած ու մերժելի մի տեսակետից, որը մթագնում է անուն հասկացության լեզվաբանական ըմբռնումը և ոչնչով չի պարզաբանում դերանունը։ Այս հարցին մենք կանդրադառնանք քիչ հետո։

* * *

Նոր շրջանի հայագիտության մեջ, այլև ընդհանրապես, խոսքի մասերի տեսությունը առանձին ուսումնասիրության առարկա դարձնող առաջին հայագետը Գուրգեն Սևակն է։

1939 թ. Երևանի պետական համալսարանի «Գիտական աշխատություններ»-ի 11-րդ հատորում Գ. Սևակը հրատարակեց իր «Խոսքի մասերի ուսմունքը» ուսումնասիրությունը, որը դարձավ միաժամանակ նրա թեկնածուական դիսերտացիան։ Այդ ուսումնասիրության հիմնական տեսական դրույթները նրա հեղինակը պաշտպանեց իր «Ժամանակակից հայոց լեզվի տեսություն» (1939)

---

[54] Նույն տեղում։

[55] Նույն տեղում, էջ 230։

և «ժամանակակից հայոց լեզվի դասընթաց» (1955) աշխատություններում։

Գ. Սևակի «Խոսքի մասերի ուսմունքը» բաղկացած է «Ներածություն»-ից և «Խոսքի մասերի միասնական իմացաբանական հասկացողությունը» հիմնական մասից։ Ուսումնասիրությունը ներկայացված է հրատարակման, որպես հեղինակի կողմից պատրաստվող «Իմացաբանական քերականության ներածություն» աշխատության մի գլուխը, ուստի և Գ. Սևակը իր այս աշխատության ներածությունն սկսում է «նոր քերականություն կառուցելու անհրաժեշտության» պարզաբանմամբ։

«Յուրաքանչյուր դարաշրջան յուր գաղափարախոսության դրոշմն է դնում քերականության վրա, յուրաքանչյուր հասարակական խավ և դասակարգ յուր քաղաքական ու գաղափարական նպատակներին է ծառայեցնում քերականությունը, թեև միշտ չէ, որ այդ խոստովանում են իրենք քերականները»,—այսպես է սկսում նոր քերականության ստեղծման անհրաժեշտության հիմնավորումը Գ. Սևակը։ Այնուհետև մեջ բերելով Ա. Մեյեի կարծիքը այս մասին, ուր ասվում է, թե «յուրաքանչյուր դարաշրջան ունի յուր փիլիսոփայությանը համապատասխանող քերականությունը», Գ. Սևակը իր իսկ Մեյեի լեզվաբանական տեսությունը համարում է «բուրժուազիայի քաղաքական-գաղափարական պահանջներին» հարմարեցված տեսություն, իսկ հայ քերական Գ. Ավետիքյանի քերականությունը՝ «կղերական աստվածաբանական դոգմաներով» հագեցված քերականություն, և անցյալի քերականագիտական ժառանգության այսպիսի գնահատականից հետո, դժգոհելով սովետական շրջանում հին քերականագիտության մեջ մասնակի բարեփոխություններ կատարելու պրակտիկայից, նա եզրակացնում է. «Դպրոցը պետք է ստանա նոր սխեմ, նոր քերականություն, մեր դարաշրջանի փիլիսոփայությանը համապատասխանող քերականություն» (նշվ. աշխ., էջ 191)։

Նույն ներածականում «Քերականագիտության ավանդական հայացքների անճարակությունը» ենթավերնագրի տակ Գ. Սևակը քննադատում է հին հույներից ժառանգված խոսքի մասերի համակարգը, սրա ներքին հակասականությունը, խոսքի մասերի դասակարգման սկզբունքների ու սրանց սահմանումների մեջ եղող անսկզբունքայնությունը, ոչ միասնականությունը և, հաճախ էլ, անարդարացիությունը և այլն։

Գ. Սևակը ոչ միայն դժգոհ է «հին հույների և հռոմեացիների

առեղծած ձևական, մեխանիկական քերականություն»-ից, այլև՝ «հետագայում թեթև շտկումներով և առանձին լեզուներին հարմարեցնելով «ձևերի ուսմունքը» դարձած ու «Տեղատվության ու մակընթացության կարգով իրար հաջորդող այսպես կոչվող «ռացիոնալ», «տրամաբանական», «հոգեբանական», «ձևական» և այլ քերականություններ»-ից։

«Ներածության» վերջին՝ «Խոսքի մասերը խորհրդային ժամանակակից քերականության մեջ» ենթավերնագրի տակ, որոշ դրական խոսք ասելով կուսակցության կենտկոմի որոշումներից հետո «ֆորմալիստական» քերականությունների փոխարեն գործածության անցած դասագրքերի հեղինակների հասցեին, Գ. Սևակը այդ արվածը համարում է աննշան բան. նրա պնդմամբ, մինչև այդ (1939 թ.) «Ավելի մխիթարական դրություն չենք գտնում քերականագիտական նույնիսկ տեսական գրականության մեջ» (էջ 199)։

Գ. Սևակը գլխավոր ուշադրությունը դարձնում է խոսքի մասերի որոշման տեսական միասնական սկզբունքի բացակայության, որն արտահայտվում է նրանում, որ երբեմն իմաստային հատկանիշով բնորոշվող խոսքի մասերի կողքին մյուս խոսքի մասերը սահմանվում կամ բնութագրվում են կա՛մ ձևական, կա՛մ էլ, առավելապես, շարահյուսական-գործառական հատկանիշներով։ Իբրև ֆորմալիզմ է գնահատվում ոչ միայն բառերի խոսքիմասային պատկանելությունը ըստ նրանց թեքման ձևաբանական հատկանիշի որոշելը, այլև՝ խոսքի մասերի որոշման շարահյուսական մոտեցումը։ Այսպես, օրինակ, ֆորմալիստական է համարված պրոֆ. Շանիձեի զուտ շարահյուսական դասակարգումը, խիստ հակասական ու անհետևողական է համարված Մ. Աբեղյանի նյութական իմաստ արտահայտող բառերը ըստ նշանակության աստիճանական, երկանդամ հակադրությամբ, խոսքի մասերի դասակարգելու եղանակը, որի «խոսքի մասեր» և «խոսքի մասնիկներ» տարբերակումը, ինչպես նաև դերանվան և դերբայի յուրովի ըմբռնումները ճանաչված են որպես բացարձակ ֆորմալիստական վերլուծություններ։ «Սակայն պրոֆ. Մ. Աբեղյանի խոսքի մասերի ուսմունքի մեջ ամենից ավելի հիվանդագին լուծում է ստացել բայը»,— գրում է Սևակը։ Բայ համարելով միայն նրա դիմավոր ձևերը՝ Աբեղյանը ըստ էության խոսքի մասը նույնացնում է ստորոգյալին, ապա և ամբողջ խոսքին (նախադասությանը)։

Աբեղյանի բայի այսպիսի ըմբռնումը, ըստ Գ. Սևակի, նույնական է հոգեբանական-ձևական քերականության բոլոր ներկայացուցիչների ըմբռնմանը, որոնք «... ծայրահեղորեն գերագնահատելով բայը, վերջին հաշվով, դիմազրկում և սպանում են այն իբրև խոսքի մաս» (էջ 205)։

Գ. Սևակը հայագետ Մ. Աբեղյանի և ռուս անվանի լեզվաբան Վ. Վինոգրադովի խոսքի մասերի տեսական հայացքների մեջ նկատում է որոշակի ընդհանրություններ՝ հավասարապես քննադատելով նաև վերջինիս (տե՛ս էջ 207)։

Իր քննադատությունն սկսելով խոսքի մասերի տեսությանը վերաբերող առանձին հարցերից՝ Գ. Սևակն այն ծավալում և դարձնում է անցյալի ողջ քերականագիտության, ինչպես և հնդեվրոպական կամ պատմահամեմատական լեզվաբանության տեսական մերժման ու ոչ պիտանիության դատավճիռ։

«Քերականագիտությունը, իբրև լեզվաբանական դիսցիպլին,— ամփոփում է իր քննադատությունը նա,— վաղուց արդեն հասել է փակուղու, հենց այն փակուղուն, որի մեջ գտնվում և անարդյունավետ կերպով թիֆրտում է ինքը լեզվաբանությունը՝ լեզվի պատմահամեմատական ուսմունքը, այսպես կոչված հնդեվրոպական լեզվաբանությունը, որի դիսցիպլիններից մեկն էլ քերականությունն է։ Ինչքան էլ առանձին գիտնականներ փորձում են թարմացնել, նորոգել այդ դիսցիպլինը, նրանց այդ չի հաջողվում, որքանով նրանք դեռ շարունակում են ելնել լեզվաբանական նույն այդ հին աշխարհայացքից, որին վաղուց ի վեր ներդաշնակել է քերականությունը» (էջ 206)։

Գերմանացի լեզվաբան Հ. Պաուլը, ինչպես վերը տեսանք, Գ. Սևակի սույն դատողություններից շուրջ կես դար առաջ, դժգոհելով խոսքի մասերի ավանդական սխեմայից, սրա ներքին հակասականությունից և անհետևողական ու անտրամաբանական սկզբունքներից, հարցի անլուծելիությունը բացատրում էր իր իսկ լեզվի կառուցվածքով և այդ ուղղությամբ լեզվաբանների հետագա ջանքերը համարում էր ավելորդ։ Գ. Սևակը, սակայն, նկատելով նույն հակասությունները ու թերությունները, սրանց պատճառը համարում է քերականական հին աշխարհայացքը և այդ հին քերականությունն ու լեզվաբանությունը մերժելով հանդերձ՝ միանգամայն լավատեսորեն ուղի է նշում ոչ միայն խոսքի մասերի նոր ուսմունք, այլ նոր քերականություն ստեղծելու համար։ Ահա այդ ուղին. «Նոր սկզբունքներով, նոր սիստեմով, նոր ոգով քերակա-

նություն մեր դպրոցը կարող է ստանալ միայն այն բանից հետո, երբ տեսական քերականությունը գիտական-մարքսիստական լույսի տակ վերանայի քերականության բոլոր հիմնական հասկացություններն ու դրույթները՝ օգտագործելով ակ. Մառի լեզվի նոր ուսմունքի խոշոր նվաճումներն այդ բնագավառում» (էջ 191)։

Այս մեթոդով էլ Գ. Սևակը փորձում է իրագործել իր բուն նպատակը՝ «խոսքի մասերի միասնական իմացաբանական հասկացողության» շարադրանքը։

Աշխատության այս մասի առաջին՝ «Լեզվի հասկացողությունը և լեզվական կատեգորիաները» ենթավերնագրի տակ հեղինակը շարադրում է լեզվի մարքսիստական հասկացողությունը, ապա ըստ այդմ պարզաբանում է լեզվական կատեգորիաների իր ըմբռնումը, որը անվերապահորեն ներկայացվում է որպես լեզվի այդ մարքսիստական ըմբռնման տեսության անմիջական շարունակություն և հետևանք։

Լեզվի մարքսիստական հասկացողությունը Գ. Սևակը պարզաբանում է Մարքսի և Էնգելսի կողմից նրանց՝ լեզվի հայտնի բնորոշման մեջ ձևակերպված դիալեկտիկորեն իրար հետ կապված և իրարից բխող հատկանիշների թվարկումով։

Լեզվի և մտածողության միասնության մարքս-լենինյան թեզը ամուր հիմք է դառնում հեղինակի համար գալու այն եզրակացության, որ «Լեզվի կատեգորիաները (անուն, ածական, բայ, դերանուն, թիվ, հոլով, շնչավոր, անշունչ, իր, անձ և այլն, և այլն) սոսկ լեզվական ձևական կատեգորիաներ չեն, և անհանդուրժելի է, որ այսուհետև դիտվեն որպես այդպիսիք։ Դրանք միաժամանակ անխուսափելիորեն իմացաբանական և տրամաբանական կատեգորիաներ են, որոնց մարդկությունը հասել է հազարամյակներ տևող իր կյանքի ընթացքում՝ օր օրի հարստացնելով յուր լեզուն, յուր գիտակցությունը, յուր իմացությունը, յուր «բնական» տրամաբանությունը» (213)։

Հետևությունը պարզ է՝ **«խոսքի մասերը լեզվական–իմացաբանական այդպիսի կատեգորիաներ են»** *(էջ 214)։*

Շարադրելով «խոսքի մասերը իբրև լեզվական-իմացաբանական կատեգորիաներ և նրանց ծննդաբանությունը ըստ լեզվի նոր ուսմունքի»՝ Գ. Սևակը հիմնականում հետևում է Մառի այնքան էլ ոչ հստակ ու ոչ հետևողական դատողություններին, տուրք է տալիս նրա՝ մարդկային դատողությունը նախատրամաբանական

և տրամաբանական շրջանների բաժանելու, լեզվի քառաստիճան զարգացման և այլ տեսական չհիմնավորվող դրույթներին։

«Խոսքի մասեր և նախադասության անդամներ» հարցի համառոտ քննության բուն նպատակը խոսքի մասերի շարահյուսական սկզբունքի մերժումն է։ Ինչպես նախորդ գլխում, այստեղ էլ մտքի ու լեզվական կատեգորիաների հազարամյա պատմությունն սկսելով «նախնական տարտամ բառ-նախադասություն-խոսք հնչյունակոմպլեքսից»՝ Սևակը սահմանում է լեզվական միավորների ձևավորման կամ առաջացման հետևյալ հերթականությունը՝

ա) ավարտված ամբողջական խոսք կամ ասույթ,

բ) ավարտված ամբողջական նախադասություն,

գ) տարբերակված բառ խոսքի մասեր,

դ) տարբերակված բառ-նախադասության անդամներ։

Հենց այն, որ խոսքի մասերի հասկացության առաջացումը անջատված է և նախադասված է նախադասության անդամների առաջացմանը, նշանակում է, որ լեզվի շարահյուսական ու բառային վերոհիշյալ միավորների մասին, ըստ այդմ՝ լեզվի ձևաբանության ու շարահյուսության առաջացման մասին հեղինակի սահմանած հերթականությունը գիտական լուրջ հետաքրքրություն չի ներկայացնում։

Սույն հարցի քննության հիմնական եզրակացությունն այն է, որ նախադասության անդամները խոսքային աստիճանի «մտադատողական ընթացիկ, թռուցիկ կառուցվածքի միավոր» են, որոնց դերում խոսքի մասերը, որպես իմացաբանական կատեգորիաներ, հանդես են գալիս «իրենց նոր այլագույով», դրա համար էլ խոսքի մասը և նրա վարած պաշտոնը ոչ միայն չեն նույնանում իրար, այլև «խոսքի մասերը թեև ծագումաբանորեն բխում են նախադասությունից և ամրանում են նախադասության ու խոսքի մեջ (քանի որ նախադասությունից և խոսքից դուրս լեզվական ոչ մի կատեգորիա գոյ չունի), այնուամենայնիվ շարահյուսական միավոր չեն և ոչ մի կապ չունեն նախադասության անդամ հասկացության հետ» (էջ 217)։

Կասկածից վեր է, որ այս «ոչ մի կապ չունեն»-ը նույնքան անհիմն է ու մերժելի, որքան խոսքի մասերը նախադասության անդամներին նույնացնելը։

Գ. Սևակի առաջադրած «խոսքի մասերի որոշման հիմունքը», ինչպես վերնագրված է նրա ուսումնասիրության մյուս հատվածը,

քազմիցս քննության առարկա է դարձել վերջին երկու-երեք տասնամյակների ընթացքում։

Գ. Սևակը, մեջ բերելով իր ներքոհիշյալ եզրակացությունները հաստատող լեզվական առանձին օրինակներ, գտնում է.

ա) «Բառերի՝ խոսքի մասային կատեգորիան որոշելիս չպետք է ելնել նրանց շարահյուսական իմաստից կամ ֆունկցիայից»։

բ) «Բառերի խոսքի մասային կատեգորիան որոշելիս չպետք է հաշվի առնել նրանց բերականական ձևական հատկանիշները» *(էջ 221)*։

գ) «Բառերի խոսքի մասային կատեգորիան որոշելիս չպետք է ելնել նրանց իմաստային կոնկրետ, կոնտեքստային արժեքից» *(էջ 223)*։

դ) «Բառերի խոսքի մասային կատեգորիան որոշելիս չպետք է ելնել նրանց կառուցվածքային տարբեր հատկանիշներից» *(էջ 228)*։

Այսպիսով, ըստ Սևակի, խոսքի մասերի տարբերակման հիմունք «չեն կարող հանդիսանալ բառերի ո՛չ ձևական, ո՛չ իմաստաբանական-հոգեբանական, ո՛չ բառափոխական-բառակազմական, ո՛չ էլ շարահյուսական հատկանիշները թե՛ առանձին-առանձին և թե՛ միասին վերցրած» (էջ 228)։

Իսկ ո՞րն է բառերի խոսքի մասերի որոշման հիմունքը.

«Բառերի խոսքի մասային կատեգորիաները որոշելիս պետք է վերանալ նրանց խոսքային հատկանիշներից և բառը դիտել իբրև լեզվական կատեգորիա, իբրև լեզվի մաս»։

«Բառերի խոսքի մասային կատեգորիաները որոշելիս պետք է այդպիսիք դիտել իբրև լեզվական-իմացաբանական «հանգուցային կետեր», իբրև առարկայական աշխարհի ճանաչման աստիճանիկներ»։

«Բառերի խոսքի մասային կատեգորիաները պետք է որոշել նրանց լեզվական-իմացաբանական ընդհանուր իմաստով» *(բոլոր ընդգծումները հեղինակինն են— Հ. Բ.), (էջ 229—231)*։

Բառերի խոսքիմասային պատկանելությունը ըստ նրանց լեզվական-իմացաբանական ընդհանուր իմաստի որոշելու այս բանաձևը հայկրենի մեջ գործադրելու կամ հայերենի խոսքի մասերի այդ «լեզվական-իմացաբանական ընդհանուր իմաստները» ցույց տալու համար Գ. Սևակը դիմում է «դերանվան լենինյան հասկացության «օգնությանը»։ «Դուրս չգալով հանդերձ դասական քերականության սիստեմի ու տերմինաբանության սահմաններից» Սե-

վակը փորձում է կատարել «խոսքի մասերի նոր իմաստավորում և որոշում»։ Նա, ձեռքի տակ ունենալով արդեն իր իսկ ընտրած՝ խոսքի մասերի որոշման իմացաբանական, այսինքն՝ ընդհանուր իմաստային սկզբունքը, իր պարզաբանումները և իմաստային վերլուծությունները կատուցում է անվան և դերանվան հասկացությունների հակադրության վրա՝ դարձնելով «դերանվան լենինյան հասկացողությունը, իբրև բանալի անունների հասկացողության»։

Վ. Ի. Լենինը Հեգելի «Փիլիսոփայության պատմության դասախոսություններին» առիթով կազմած կոնսպեկտներում դերանունները համարում է «ամենաընդհանուր բառեր», որոնք արտահայտում են «զգայականն ընդհանրապես»։ Այս դատողության վկայակոչմամբ Գ. Սևակը առարկաներն ու նրանց հատկանիշները «առանց տարբերակման», «ընդհանրապես» ցույց տվող դերանուններին հակադրում է անուն խոսքի մասերը՝ սրանք էլ բնութագրելով որպես առարկաներն ու նրանց հատկանիշները «մասնավորապես կամ տարբերակված» ցույց տվող բառեր։ Դերանուններն, ըստ, այդմ, որոշվում են որպես չտարբերակված, ընդհանուր հասկացության բառեր, իսկ անուն խոսքի մասերը՝ որպես տարբերակված, մասնակի նշանակության բառեր։

Խոսքի մասերի իմաստային իր այս սահմանումների մեջ, սակայն, Սևակը նկատում է, որ նորությունը կամ հավելումը մի «տարբերակված կամ չտարբերակված» բառ է, ուստի նրա իմացաբանական արժեքը հասկացնել տալու համար զգուշացնում է՝ «Այդ ճշտումը, եթե նույնիսկ նա արտահայտվի միայն մի բառի հավելումով (գոյականը ոչ թե առարկա է ցույց տալիս, այլ տարբերակված առարկա), այնուամենայնիվ դա միայն հավելում կամ որոշման նոր խմբագրություն չէ, այլ միանգամայն նոր կոնցեպցիա, դիալեկտիկական, իմացաբանական կոնցեպցիա, որն արտահայտում է դերանվան և անունների հակադրությունների միասնությունը...» (էջ 236)։

Սա «Իմացաբանական քերականության» և 30-ական թվականներին գործածության անցած լեզվի դասագրքերի՝ հայերենի խոսքի մասերի տարբերակման ու բնորոշման մեջ մտցրած ամենահիմնական, Գ. Սևակի տերմինով ասած՝ «կոնցեպցիոն» նորություններից մեկն է։ Իսկ հետագա աշխատություններում հեղինակը շարունակում է հիշեցնել, թե դերանունը՝ «չտարբերակված», իսկ մյուս անուն խոսքի մասերը՝ «տարբերակված» առարկա ու առարկաների հատկանիշներ ցույց տվող բառեր հա-

մարելը լուծում է խոսքի մասերի դասակարգման գիտական սկզբունքի հարցը[56]։

Մեզ թվում է, թե իր սույն և հետագա աշխատություններում Սևակը անում է Վ. Ի. Լենինի դերանվան վերաբերյալ արված դատողություններից չբխող եզրակացություններ։

Վ. Ի. Լենինից մեջ բերված հատվածում շատ որոշակիորեն արտահայտված է դերանունների «զգայականն ընդհանրապես» ցույց տալու, դերանունների ընդհանրական բառեր լինելու միտքը։

Այսպես՝ «(«Это»? Самое общее слово). Кто это? Я. Все люди — я Чувственное вообще. Это есть общее и т. д., и т. д. «Этот»?? Всякий есть «Этот».	№ В в языке есть только общее[57].

Գ. Սևակն այս մտքը պարզաբանում է այսպես. «Այսպիսով, ուրեմն, ինչ է դերանունը ըստ Լենինի այս դիտողության. ինչ են это, этот, я դերանունները.— «ամենաընդհանուր բառեր», այսինքն բառեր, որոնք արտահայտում են ընդհանրական, չտարբերակված իմաստներ, «զգայականը ընդհանրապես» (էջ 236)։

Լենինին մեկնաբանելով իր քերականագիտական տերմինաբանությամբ՝ Սևակը, նախ, նրան վերագրում է դերանունների մեջ ոչ միայն «ընդհանրական», այլև չտարբերակված իմաստներ տեսնելու միտք, մինչդեռ Լենինն այդտեղ իմաստների ու հասկացությունների տարբերակվածության ու չտարբերակվածության մասին չէ, որ խոսում է։

Կա՞ն, արդյոք, հասկացությունների տարբերակված և չտարբերակված տեսակներ. մի՞թե «ամենաընդհանուրը» ցույց տալը նշանակում է չտարբերակված հասկացություն արտահայտել։ Եվ եթե Լենինի այդ դիտողությունից այդպես որոշակիորեն երևում է, որ դերանունները հասկացություն են արտահայտում, բայց՝ չտարբերակված հասկացություն, այդ դեպքում լեզվի և մտածողության փոխհարաբերության հարցերով զբաղվող փիլիսոփաները դերանվան բառային հասկացությունը քննելիս այսօր էլ ինչի՞ մասին են վիճում։

ՍՍՀՄ գիտությունների ակադեմիայի վերջերս հրատարակած «Լեզու և մտածողություն» ժողովածուում կարդում ենք. «Այս դերանունը լոկ մատնացույց է անում առարկաներ և երևույթներ՝

---

[56] Տե՛ս Գ. Սևակ, *Ժամանակակից հայոց լեզվի դասընթաց 1955, էջ 239։*

[57] Ленинский сборник, XII, М.—Л., 1930, էջ 222.

արտացոլված գիտակցության մեջ տեսողազգայական պատկերնե-րի ձևով, բայց չի հանդիսանում հասկացության արտահայտու-թյուն, քանի որ կապված չէ կոնկրետ առարկաների և երևույթների էական կողմերի ընդհանրացման հետ»[58]:

Մենք այստեղ հեռու ենք փիլիսոփաների վեճը այն մասին, թե դերանունը հասկացություն է արտահայտում, թե՞ «գիտակցված ընկալում», մեզ վրա վերցնելու ցանկությունից, մեր հիմնական առարկությունը վերաբերում է Գ. Սևակի եզրակացության երկ-րորդ մասին: Շարունակելով իր պարզաբանումը, նա այնուհետև գրում է. «... եթե ես դերանունը նշանակում է, ցույց է տալիս **սուբյեկտ ընդհանրապես,** *բոլոր մարդիկ, բոլոր սուբյեկտները* **все** ЛЮДИ— **я, ապա մարդ, աշակերտ, ուսուցիչ, մանուկ գոյա-կանները ցույց են տալիս սուբյեկտ, մարդ մասնավորապես, մարդ տարբերակված»** *(էջ 236):*

Վ. Ի. Լենինի այդ ասածից բնավ չի երևում թե **ես**–*ը ընդհանուրն է, իսկ մարդը՝ մասնավորը: Եվ ինչպե՞ս կարող է մարդը մասնա-վորը ցույց տալ, երբ «բոլոր մարդիկ* **ես** *են» և, բացի այդ, մենք գիտենք, որ ամեն մարդ* **ես** *է, երբ խոսում է, մինչդեռ բոլոր* **ես**–*երը՝ գումարած դու-երը և նա–երը, նորից մարդ են ու մարդ:*

Գ. Սևակի այս մեկնաբանությունը չի բխում Լենինի բուն մըտ-քից, քանի որ նա անտեսել է իր մեջ բերած Լենինյան դատողու-թյան հիմնական եզրակացությունը՝ **«№ В լեզվում կա միայն ընդ-հանուրը»** *(Վ. Ի. Լենին):*

Եթե «Այս-ը ամենաընդհանուր բառն է», այդ բնավ չի նշա-նակում, թե մարդ–ը ընդհանուր նշանակության բառ չէ և նշանա-կում է՝ «մարդ մասնավորապես»: Մի՞թե հասկանալի չէ, որ **մարդ** *բառը մասնավորողը այս «մասնավորապես» մակդիրն է: Իհարկե,* **մարդ**–*ը մասնավորված կամ տարբերակված է այնքանով, որ* **ծառ, քար, ամբիվ** *և այլն չի նշանակում, մի տարբերակում, որ* **այս** *դե-րանունը չունի: Բայց վերոհիշյալ և այլ գոյականներից տարբե-րակվելով՝* **մարդ**–*ը որքան որ մասնավորված է, այնքան էլ ընդ-հանրացված է:* **Մարդ–երկրագործ–ինձվոր, բույս–ծառ–ուռենի** *և այլ գոյականները, լինելով տարբեր աստիճանի ընդհանրացումներ, մասնավորում կամ առարկայական վերաբերություն են ստանում*

---

[58] **В. В. Бабайцев,** О выражении в языке взаимодействия между чув-ственной и абстрактной ступеням познания действительности («Язык и мышление», М., 1967, էջ 62).

նախադասության մեջ այլևայլ միջոցներով։ Դրա համար էլ Լենինն ասում է. «Լեզվում կա միայն ընդհանուրը»։ «Առանձինը գոյություն չունի այլ կերպ, քան այն կապակցությամբ, որը տանում է դեպի ընդհանուրը։ Ընդհանուրը գոյություն ունի միայն առանձինի մեջ, առանձինի միջոցով։ Ամեն մի առանձին (այսպես թե այնպես) ընդհանուր է»[59]։

Այսպես, ուրեմն, Գ. Սևակը Լենինի կողմից դերանունների մեջ տեսած «ընդհանուրն» ու «ամենաընդհանուրը» («самое общее») մեկնաբանում է որպես «ընդհանուր», «չտարբերակված», իսկ մյուս բառերին վերագրած «ընդհանուրը» («լեզվում կա միայն ընդհանուրը») մեկնաբանում է որպես «մասնավոր», «տարբերակված»։ Իմաստների այս փոխակերպումից հետո ավելացնում է.

«Դերանվան այս լենինյան հասկացողությունը, դերանվան ծննդաբանության ուսումնասիրության հետևանքով ստացված մառյան կոնցեպցիայի հետ միասին, մեզ տալիս է ոչ միայն դերանվան իմացաբանական ծավալուն հասկացողությունը, այլև բանալի է հանդիսանում մյուս անունների նույնպիսի ծավալուն և ճիշտ հասկացողության» (էջ 236)։

«Դերանվան ծննդաբանական ուսումնասիրության հետևանքով ստացված մառյան կոնցեպցիան», ինչպես երևում է, խանգարել է Գ. Սևակին և՛ դերանունների, և՛ մյուս խոսքի մասերի ծավալուն և խորը ըմբռնման ու բնութագրման գործում։ Հարցի էությունը չի փոխվել, երբ այս դատողությունը հեղինակը մեջ է բերել իր «Ժամանակակից հայոց լեզվի դասընթաց»-ում (1955, էջ 241), այս անգամ առանց «մառյան կոնցեպցիան» վերհիշելու։

Դերանվան խոսքիմասային առանձնահատկության խնդիրը քննելիս, Գ. Սևակը իր քննադատությունն ուղղում է դերանվան մեջ որոշակի իմաստ չտեսնող և այն միայն անուններին փոխարինելու իր գործառույթամբ գնահատող լեզվաբանների դեմ, այնուհետև աշխատում է ապացուցել, «որ դերանունը ոչ միայն այսօր, այժմյան լեզուների մեջ, անուններին կամ այլ խոսքի մասերին փոխարինող բառ չէ իր էությամբ, այլև ծագումնաբանորեն իսկ այդպիսին չի եղել» (էջ 234—235)։ Հետևաբար դերանունը բնավ էլ դերանուն չէ, այլ անուն է, միայն թե ընդհանուր, չտարբերակված նշանակության անուն։ Դերանվան իր այս ըմբռնման համապատասխան, Սևակը այդ խոսքի մասը սահմանում է այսպես. «Ին-

---

[59] Վ. Ի. Լենին, Երկեր, հ. 20, Երևան, 1962, էջ 458։

տանուն կոչվում են այն բառերը, որոնք ցույց են տալիս առարկա, հատկանիշ, թիվ և թվական կարգ առանց տարբերակման՝ իբրև նրանց ընդհանուր անուն»[60]:

Դերանունների մեջ միայն անուններին փոխարինելու հատկանիշ տեսնելը կամ նրանց միայն այդ շարահյուսական հատկանիշով բնութագրելը կարող է անընդունելի ու սխալ համարվել: Բայց եթե դերանունը միշտ չէ, որ փոխարինում է անվան, կամ միայն դերանունը չէ, որ կատարում է անվան փոխարինողի դեր, այդ բնավ չի նշանակում, թե դերանունը դառնում է անուն:

Վ. Վինոգրադովի մեջբերմամբ՝ դեռևս իր ժամանակին Ս. Պոտեբնյան առարկում էր գերմանացի լեզվաբան Ֆիկին, որը դերանունների մեջ տեսնում էր «նախնական իսկական անուններ» և հետագա անուն խոսքի մասերը համարում էր «դերանունների փոխարինողներ»[61]:

Բայց դերանունը անուն համարելու այս հնացած կարծիքը, որի մասին խոսք եղավ նաև Ա. Ղարիբյանի հայացքների շարադրման կապակցությամբ, ոչ միայն լույս չի սփռում մյուս խոսքի մասերի հասկացությանը, այլև մթագնում է իր իսկ դերանվան հասկացությունը, որն ավանդական մեկնաբանությամբ շատ ավելի ճշմարիտ է:

Դժվար է դերանուն խոսքի մասի գիտական հստակ պատկերացումը ունենալ, առանց ընդունելու, որ դերանունը առարկայի և հատկանիշի «ընդհանուր անունը չէ»: Դերանվան համընդհանուր նշանակության բառ լինելը, ամեն առարկայի ու հատկանիշի իմաստով գործածվելը պայմանավորված են նրա ոչ անվանողական արժեքով: Մի՞թե ավելի ճիշտ չէր Ա. Այտընյանը, որ գրում էր, թե «Գոյականի կամ անվան և դերանվան իրարմե տարբերությունն այն է, որ գոյականը բանին անունը կու տա՝ առանց հայտնելու թե որն է, իսկ դերանունը կը ցուցնե թե որն է՝ առանց իրին անունը տալու»[62]: *Այդ պատճառով էլ «Անուններն ունեն անփոփոխ, հաստատուն նշանակություն, իսկ դերանունները նշանակություն չունին, այլ ամեն անգամ նայելով, թե ինչ անվան տեղ են դրված կամ ինչ անուն են ակնարկում՝ նրա նշանակությունն էլ ստանում են»*[63]:

---

60 Գ. Սևակ, *ժամանակակից հայոց լեզվի դասընթաց, 1955, էջ 248:*

61 В. В. Виноградов, Русский язык, 1947, էջ 322:

62 Ա. Այտընեան, *Քննական քերականութիւն..., էջ 38:*

63 Մ. Աբեղյան, *Աշխարհաբարի շարահյուսություն, էջ 8:*

Դերանունը չի անվանում, ուստի և զուրկ է բառային կոնկրետ նշանակությունից։ Նա մատնանշում է «զգայականն ընդհանրապես» (Լենին), ըստ այդմ էլ՝ նայած այն բանին, թե տվյալ խոսքային իրադրության մեջ դերանվան մատնանշածը զգայական ընկալման մեջ ինչ է, այդ էլ դառնում է նրա բառային կոնկրետ նշանակությունը՝ մնալով չանվանված։

Անունների և դերանունների իմաստային տարբերությունների ամենահստակ բացատրությունը, որը միաժամանակ հերքում է դերանունները առարկայի և հատկանիշի ընդհանուր անուն ճանաչելու միտքը, Հ. Աճառյանինն է, որ ավելորդ չենք համարում մեջ բերել ամբողջությամբ։

«Քերականության այդ աբստրահումը առանձնապես ցայտուն կերպով է դրսևորվում դերանունների մեջ, որոնք արտահայտում են ոչ թե որևէ առարկայի հատկանիշի հասկացություն, այլ որևէ խոսքի մասի (գոյական, ածական և այլն) իմաստ։ Իրոք, այն դեպքում, երբ սեղան գոյականն արտահայտում է սեղան առարկայի ընդհանուր հասկացությունը, գեղեցիկ ածականն արտահայտում է գեղեցկության հատկանիշի ընդհանուր հասկացությունը, ապա դերանունը արտահայտում է ընդհանրապես առարկայի (գոյականի) հասկացություն, այսպիսի դերանունը՝ ընդհանրապես հատկանիշի (ածականի) հասկացություն և այլն։ Նշանակում է, դերանուններն ունեն խոսքի մասային իմաստ։ Հենց այս էլ պայմանավորում է դերանունների կիրառական այն յուրահատկությունը, որ միայն նրանց է հատուկ։ Դերանունների այս ընդհանրական խոսքի մասային իմաստի վրա հատուկ ուշադրություն է դարձրել Վ. Ի. Լենինը իր «Փիլիսոփայական տետրակներում», ցույց տալով, որ «այս»-ը ամենաընդհանուր բառն է («Философ. тетради», էջ 258)։

Ըստ այսմ՝ դերանունը նյութական նշանակությունից զուրկ է։ Աշխարհիս անցյալ, ներկա և ապագա միլիարդավոր բնակիչները կարող են ասել, ես, և այս բառը կարող է նշանակել այդքան անհատ։ Բոլոր այդ միլիարդավոր բնակիչները կարող են ասել իմ կամ իմը և նշանակել իրենց մի թել մազից սկսած մինչև իրենց ամբողջ երկիրը։ Նրանք կարող են ասել այս և ցույց տալ խոտի մի թելից սկսած մինչև աստղերը, հորիզոնն ու արեգակը։

Ըստ այսմ՝ դերանունն ամբողջապես անորոշություն է և որևէ կապակցությամբ միայն կարող է նշանակել այսինչ առարկա։ Այլ ձևով դատելով՝ գոյականն առարկայի ընդհանուր անունն է, ա-

ռանց ցույց տալու, թե որն է, իսկ դերանունը ցույց է տալիս, թե որն է, առանց այդ առարկայի անունը տալու»[64]։

Այս վերլուծության մեջ, որտեղ իր մասն ունի աշխատության խմբագիր Էդ. Աղայանը, տարբեր տերմինագործածության պատճառով ոմանց համար կարող է վիճելի լինել միայն Հ. Աճառյանի «դերանունը նյութական նշանակությունից զուրկ է» միտքը։ Դրան մենք կանդրադառնանք հետո։ Բայց որ առարկաների ու հատկանիշների ընդհանուր հասկացությունները անվանվում են անուն խոսքի մասերով և ոչ թե դերանուններով, որ դերանունը արտահայտում է ոչ թե որևէ առարկայի կամ հատկանիշի ընդհանուր իմաստ, այլ ընդհանրապես առարկայի կամ հատկանիշի իմաստ, այսինքն միայն խոսքիմասային իմաստ, և որ առարկաներն ու հատկանիշները, ինչ աստիճանի ընդհանրացում էլ լինեն, անվանվում են անուններով և ոչ թե դերանուններով, այսինքն՝ որ առարկայի ընդհանուր անունը գոյականն է և ոչ թե դերանունը,— կասկածից վեր են և բնավ չեն խոսում հակառակը պնդող դերանվան նոր հասկացողության տեսության օգտին։ Շտապում էր, ուրեմն, Գ. Սևակը՝ 30-ական թվականներին հայտարարելով, թե դերանվան իր նոր մեկնաբանությամբ գտնված է անունների հասկացության, հետևաբար նաև խոսքի մասերի գիտական անսխալ դասակարգման բանալին։

«Խոսքի մասերի ուսմունքը» աշխատությունը ավարտվում է «Նյութական և ձևական խոսքի մասեր» գլխով, ուր Սևակը մերժում է «մինչայժմյան քերականագիտության բոլոր շկոլաների» կողմից դարձյալ խոսքի ու նախադասության պրիզմայով, այսինքն բառերի նախադասության մեջ ունեցած մասնակցության արժեքով խոսքի մասերը երկու մեծ խմբի՝ ա) «նյութական կամ ինքնուրույն» իմաստ ունեցող, կամ «հիմնական», «նշանակական» խոսքի մասերի խմբի» և բ) «ձևական» կամ «ոչ ինքնուրույն» իմաստ ունեցող, կամ «աննշանակ», «սպասարկու» խոսքի մասերի կամ խոսքի «մասնիկների» խմբի բաժանելու տեսակետը (էջ 238)։

Առանձին օրինակներով Սևակը աշխատում է ցույց տալ, որ «ձևական» կամ «սպասարկու» խոսքի մասերը կամ «մասնիկները» իրենց «լեզվական-իմացաբանական արժեքն ու իմաստն ունեն նաև

---

[64] Հ. Աճառյան, *Լիակատար քերականություն հայոց լեզվի, հ. 2, 1954, էջ 4—5։*

խոսքից դուրս, այն է՝ լեզվի մեջ»։ Հետևաբար այս կարգի բոլոր բառերն էլ իրենց ինքնուրույն խոսքիմաստային «ընդհանուր իմաստը» ունեցող բառեր են։

Կապերի, շաղկապների ու ձայնարկության խոսքիմաստային իմաստը Սևակը մեկնաբանում է որպես «վերաբերական կամ ռելյացիոն» իմաստ, ուստի այդ խոսքի մասերն, ի հակադրություն նյութական կամ, իր անվանմամբ՝ «գոյային խոսքի մասերի», անվանում է «վերաբերական խոսքի մասեր»։ Իր մեկնաբանության էական տարբերությունը ֆորմալիստների և ոչ ֆորմալիստների կողմից մինչև այդ «ոչ-նյութական» խոսքի մասերին տրված բացատրություններից համարում է այն, որ ինքը այդ բառերը չի դիտում որպես նախադասության անդամների կամ բառերի հարաբերություն արտահայտող բառեր, այլ կերպ՝ նա վերաբերական խոսքի մասեր ասելով հասկանում է «ոչ թե խոսքի կամ նախադասության մեջ բառերի զանազան կախման վերաբերություններ կամ հարաբերություններ ցույց տվող excellence խոսքային խոսքի մասեր, այլ առարկայական աշխարհի մեջ առկա գոյային տարբեր հարաբերություններ ցույց տվող խոսքի մասեր, par excellence լեզվական խոսքի մասեր, որոնց խոսքային իմաստից ու պաշտոնից մենք վերանում ենք միաժամանակ» (էջ 244)։

Այնուամենայնիվ Գ. Սևակը իր «ժամանակակից հայոց լեզվի դասընթացում» ոչ միայն չի հրաժարվում խոսքի մասերը հիմնական և երկրորդական կամ նյութական և քերականական խմբերի բաժանելուց, այլև տեսնում ու թվարկում է այդ խմբերից յուրաքանչյուրը միացնող և մյուսին հակադրող լեզվական առանձնահատկությունները։ Միաժամանակ խոսքի մասերը բաժանում է թեքվող և չթեքվող խմբերի և, թեքվողները տրոհելով հոլովվող և խոնարհվող ենթատեսակների, այդպիսով կատարում է հայերենի խոսքի մասերի բացարձակ ձևաբանական խմբավորում։

Հայերենի առանձին խոսքի մասերի ու սրանց բառաքերականական հատկանիշների վերաբերյալ Գ. Սևակի կողմից տրված մի շարք սահմանումներ և վերլուծություններ լայն տարածում գտան վերջին մի քանի տասնամյակներում հայագիտության մեջ, որպիսի հանգամանքը նաև ապացույց է այս ասպարեզում հեղինակի գիտական վաստակի դրական գնահատանքի։ Ինչ վերաբերում է խոսքի մասերի նրա առաջարկած իմաստային կամ իմացաբանական դասակարգմանը, ապա այդ դասակարգումը տրամաբանական քերականագիտության հետևությամբ խոսքի մասերն ըստ իրենց

ընդհանուր նշանակությունների դասակարգելու մի նոր փորձ է, որը, չունենալով այլ սկզբունքներով կատարված դասակարգումներին փոխարինելու կամ համընդհանուր դասակարգման արժեք, մնում է որպես նորարարության փորձ, բայց ոչ նորություն։ Հր. Աճառյանի ուշադրությունն էլ այդ աշխատանքը գրավել է առավելապես նախորդ դասակարգումների իր քննադատությամբ և ոչ թե բերած նորություններով։ «Բայց այստեղ էլ,— գրում է Աճառյանը «խոսքի մասերի ուսմունքի» մասին,— կա միայն հին սիստեմի քննադատությունը, հերքումը, բայց թե ինչ է իր առաջարկելիք նոր ձևը, բնավ հայտնի չէ»[65]։

Գ. Սևակի առաջարկածը, իհարկե, շատ որոշակի է ու հայտնի, այս կետում Աճառյանի հեգնանքն այլ իմաստ ունի։ Բանն այն է, որ այդ դասակարգումը որքանով էլ որ ներկայացվում է մի միասնական սկզբունքի անունից ու, կարծես, գործադրվում է հետևողականորեն, սակայն ըստ էության չունի այդ ցանկալի միասնությունն ու հետևողականությունը ո՛չ իր քննադատական և ո՛չ էլ իր սեփական բնորոշումների ու վերլուծությունների մասերում։

Գ. Սևակի՝ վերլուծվող ուսումնասիրության մեջ առաջին էջերից սկսած մինչև նրա վերջին նախադասությունը, հատուկ ընդգծված է խոսքի մասերի ոչ թե խոսքային, այլ լեզվական, այն էլ լեզվական-իմացաբանական կարգեր լինելու միտքը։ Հայագիտության մեջ (է. Աղայանի, Ս. Աբրահամյանի, Գ. Ջահուկյանի կողմից) այս մոտեցումը գնահատված է որպես հարցի պատմության մեջ գիտական առաջընթաց քայլ։

«Միանգամայն իրավացի է Գ. Սևակը,— գրում է Ս. Աբրահամյանը,— որ խոսքի մասերը դիտում է իբրև լեզվական միավոր, ի հակադրություն խոսքայինի», սակայն «լեզվականը գնահատելու և ճանաչելու գործում Գ. Սևակը փաստորեն մերժում է խոսքի դերը, խոսքը հաշվի առնելու հնարավորությունը»[66]։

Այո՛, Գ. Սևակը խոսքի մասերի լեզվական մակարդակի իրողությունները ոչ միայն չի բախեցնում խոսքից և ամրապնդում խոսքային իրողություններով, այլև հակադրում է դրանց։ Այդ պատճառով էլ խոսքիմասային լեզվական կարգերը մեկնաբանվում են որպես տրամաբանական կամ իմացաբանական կարգեր, որով,

---

[65] Հ. Աճառյան, Լիակատար քերականություն հայոց լեզվի, հ. 3, 1957, էջ 20։

[66] Ս. Գ. Աբրահամյան, Չքնքվող խոսքի մասերը..., 1965, էջ 33։

առնվազն, անտեսվում են տարբեր լեզուների լեզվական ու կառուցվածքային առանձնահատկություններն այս հարցում, առանց որոնց չեն կարող լինել իսկական լեզվական կարգեր և սրանց գիտական պարզաբանում։

Լեզվի ու խոսքի փոխհարաբերության հարցը պարզաբանելիս, սովետական լեզվաբանության մեջ Գ. Ջահուկյանը չի մոռանում հիշատակել նաև Գ. Սևակի կարծիքը։ «Հայ լեզվաբան Գ. Սևակը,— գրում է նա,— փորձում է խոսքի մասերի և նախադասության անդամների փոխհարաբերության հարցը լուծել լեզվի և խոսքի փոխհարաբերության պլանով։ Ընդհանուր առմամբ ճիշտ դնելով այդ երկու կարգի կատեգորիաները հստակ կերպով տարբերակելու անհրաժեշտության հարցը՝ Գ. Սևակը, սակայն, մի կողմից՝ գրեթե անտեսում է դրանց լեզվական սպեցիֆիկան և փորձում է հարցը լուծել միայն «իմացաբանական» հիմունքով, մյուս կողմից՝ բավարար չափով հաշվի չի առնում դրանց անցումները, դնում է կողք-կողքի, անջատում իրարից, խստորեն հակադրում միմյանց»[67]։

Խոսքայինը լեզվականին հակադրելու և հարցը միայն «իմացաբանական» հիմունքով լուծելու պատճառով Գ. Սևակը, «նյութական» և «ոչ նյութական» նշանակության խոսքի մասերի իմաստային և գործառական հատկանիշների տարբերությունները քաջ գիտենալով հանդերձ, սրանք դնում է մի ընդհանուր և հավասար աստիճանի վրա, իրականության լեզվական արտացոլման մեջ սրբանցից յուրաքանչյուրին վերագրում է իր սեփական և անկախ, բայց իրավահավասար դերը։ Սա «լեզվի նոր ուսմունքի» տեսական սխալ դրույթների արտահայտությունն էր, երբ արհամարհվում էին լեզվական տարբերությունները ու լեզվական ձևն, ընդհանրապես, ուստի և «... չնչվում էր լեզվի մեջ գլխավորի և երկրորդականի սահմանը, լեզվի բոլոր տարրերը դիտվում էին որպես հավասարարժեք բաներ, քերականությունը և բառապաշարը, այլև բառապաշարի բոլոր մասերը դիտվում էին միևնույն ձևով»[68]։

Չի կարելի ասել, թե լեզվական միավորների ու սրանց փոխհարաբերության հարցերի քննության մեջ լեզվաբանությունն այսօր այս կարգի վեճեր չունի։

«Լ. Հյմսլևի կարծիքով,— գրում է Ա. Ն. Սավչենկոն,— մենք

---

[67] Գ. Բ. Ջահուկյան, *Լեզվաբանության պատմություն*, հ. 2, 1962, էջ 471։

[68] Նույն տեղում, էջ 455—456։

չենք կարող, օրինակ, ընդունել, որ գոյականը ավելի նշանակային է (более значимо), քան նախդիրը, կամ որ բառը ավելի նշանակային է, քան բառակազմական կամ բառափոխական ածանցը, այսինքն՝ ամեն մի նշանակություն լեզվում լրիվ շարակարգային է (контекстуально), իրադրական (ситуативно), բայց այս տեսակետը ելնում է հասկացության գոյության և ճանաչողական արժեքի բացասումից և մատերիալիստական մոտեցման դեպքում չի կարող ուշադրության արժանանալ»[69]։

Ելմսլևը լեզվական նշանակությունների ու սրանց կրող լեզվական միավորների մասին հնարավոր է համարում խոսել միայն խոսքային աստիճանում, որից դուրս դրանց միջև որևէ տարբերություն չի տեսնում, մինչդեռ Գ. Սևակը այդ ամենը տեսնում է լեզվական աստիճանում, առանց խոսքի օգնությանը դիմելու։ Սրանք երկու ծայրահեղություններ են, հավասարապես անընդունելի։

Գ. Սևակի ուսումնասիրության մեջ ճիշտ չի գնահատված Մ. Աբեղյանի խոսքի մասերի տեսությունը։

«Հանրածանոթ իրողություն է,— գրում է Գ. Սևակը,— որ ռուս ֆորմալիստներն էլ (Պեշկովսկի, Ուշակով, Շապիրո, Ավանեսով, Դոդել և այլն) բառերի ձևից ելնելով՝ դերանունները, թվականները դիտում էին իբրև գոյական, ածական, մակբայ խոսքի մասերի յուրահատուկ տեսակներ, հայտնի են նաև նրանց существительные местоимения, прилагательные местоимения, существительные числительные, прилагательные числительные և այլ հորջորջումները, որոնք համեմատ են պրոֆ. Մ. Աբեղյանի գոյական-դերանուն, գոյական-թվական, ածական-դերանուն և այլ «տերմիններին» (էջ 204)։

Գ. Սևակի կողմից չակերտավոր համարված տերմիններն այսօր ռուսաց լեզվի բուհական ու դպրոցական դասագրքերի, այլև ակադեմիական քերականության մեջ լայն գործածություն ունեցող գիտական տերմիններ են, և ոչ մի ռուսագետ այդ հասկացությունների մեջ ֆորմալիզմ չի տեսնում։ Դերանունն ու թվականը առանձին խոսքի մաս չհամարելը և մյուս խոսքի մասերի վրա դնելը չի խանգարում այսօր Պեշկովսկուն իր այդ դատողությունների համար ոչ միայն ֆորմալիստ չհամարվելու, այլև ռու-

---

[69] **А. Н. Савченко**, Язык и системы знаков. («Вопросы языкознания», 1972, № 6, էջ 23).

սերենի խոսքի մասերի դասակարգման տեսության մեջ, որոշակի ծառայություններ մեր ճանաչվելու[70]։

Նույն կարգի «սխալների» համար Մ. Աբեղյանի կողքին ֆորմալիզմի աճուռին նստեցված ռուս անվանի լեզվաբան Վ. Վինոգրադովի խոսքի մասերի տեսության մասին ռուսաց լեզվի բուհական մի դասագրքում ասված է.

«Լայն տարածում է ստացել ակադեմիկոս Վիկտոր Վլադիմիրովիչ Վինոգրադովի կողմից առաջադրված խոսքի մասերի կառուցվածքաիմաստաբանական դասակարգումը. 1) խոսքի մասեր, 2) խոսքի մասնիկներ, 3) եղանակավորող բառեր, 4) ձայնարկություններ։

Առավել խոշոր կառուցվածքաիմաստաբանական կարգերը՝ խոսքի մասերը և խոսքի մասնիկները, ստորակարգվում են յուրաքանչյուրը մի շարք նոր խմբերի...

Ռուսաց լեզվի ժամանակակից դասագրքերի և ուսումնական ձեռնարկների մեծ մասը կառուցվում են Վ. Վ. Վինոգրադովի խոսքի մասերի ուսմունքի հիման վրա»[71]։

Ինչպես ցույց են տալիս խոսքի մասերի տեսության վերաբերյալ վերջին տասնամյակում ծավալված բանավեճերի արդյունքները, ռուսագիտությունը, նայած տվյալ լեզվի կառուցվածքի, ֆորմալիզմ ու անգիտություն չի տեսնում ո՛չ թվականներն ու դերանունները մյուս խոսքի մասերի վրա բաշխելու, ո՛չ խոսքի մասեր և խոսքի մասնիկներ տարբերակելու, ո՛չ էլ դերբայները բայի հարացույցից հանելու տեսակետների մեջ։ Դեռ ավելին. այդ տեսակետները գնալով լայն ճանաչում ու գործածություն են գտնում։

Այդպես չէ իրադրությունը հայագիտության մեջ։ Մ. Աբեղյանի խոսքի մասերի տեսությունը, որը ներկայացնում էր այս հարցի իր ժամանակի լեզվաբանական նվաճումները, չարժանացավ ճիշտ գնահատման և հանիրավի վարկաբեկվեց, որով հայերենի խոսքի մասերի ուսմունքը վերադարձավ 19-րդ դարի վերջերի պալասանյանական տրամաբանական քերականագիտության մակարդակը։ Մ. Աբեղյանի խոսքի մասերի տեսության ոչ փաստարկված քննադատությունը մոդայական բան դարձավ և եկավ հասավ մինչև մեր օրերը։

---

[70] Տե՛ս **В. М. Жирмунский**, О природе частей речи и их классификации («Вопросы теории частей речи»), Л., 1968, էջ 19)։

[71] **Н. С. Валгина и др.**, Совр. русский язык, М., 1971. էջ 156—157։

Ամփոփենք։ Ա. Ղարիբյանի և Գ. Սևակի քերականագիտական գործունեության շնորհիվ հայագիտության մեջ գիտական ճանապարհ գտան խոսքի մասերի տեսության մի քանի վիճելի հարցերի հետևյալ լուծումները.

1. Թվականն իր բոլոր տեսակներով վերահաստատվեց որպես առանձին խոսքի մաս, թեև լեզվաբանության մեջ նրա ինքնուրույն խոսքի մաս լինելու տեսական վեճը չի ավարտված։

2. Դերանունն, իր ճշգրտված բառացանկով, վերահաստատվեց որպես առանձին խոսքի մաս, թեև լեզվաբանության մեջ այդ մասին եղած տեսական վեճը շարունակվում է։

3. Ամրացավ և տեսականորեն հիմնավորվեց դերբայների՝ բայ խոսքի մաս կամ բայաձևեր համարվելու տեսակետը, թեև լեզվաբանության մեջ առանձին դերբայների խոսքիմասային պատկանելության մասին տեսական վեճերը նույնպես ավարտված չեն։

4. Տեսականորեն հիմնավորվեց և ավելի գործնական դարձավ խոսքի մասերի իմաստային կամ տրամաբանական դասակարգման սկզբունքը, թեև շարունակվում է քննադատությունը՝ այդ սկզբունքի, դասակարգման մյուս սկզբունքներից անջատ, հետևողականորեն կիրառելու անօգտակարության ու անհնարինության վերաբերյալ։

ՀԱՅԵՐԵՆԻ ԽՈՍՔԻ ՄԱՍԵՐԻ ՇԱՐԱՀՅՈՒՍԱԿԱՆ ԴԱՍԱԿԱՐԳՈՒՄԸ ՀՐ. ԱՃԱՌՅԱՆԻ ԱՇԽԱՏՈՒԹՅՈՒՆՆԵՐՈՒՄ

Հայերենի խոսքի մասերի իր դասակարգումը և սրանց պատմահամեմատական ամենալայն ու խոր վերլուծությունն է տվել մեծանուն հայագետ Հրաչյա Աճառյանը «Լիակատար քերականություն հայոց լեզվի» բազմահատոր աշխատության մեջ։ Ոչ միայն իր անցած փուլերի, այլև հնդեվրոպական ու բազմաթիվ այլ լեզվաընտանիքների լեզուների համեմատությամբ քննվող հայերենի համար Հ. Աճառյանը շատ հարմար է գտել խոսքի մասերի ավանդական սխեման։

«Լիակատար քերականության» 3-րդ հատորի սկզբում գոյականի քննությունից առաջ Աճառյանը շատ համառոտ շարադրում է լեզուներում խոսքի մասերի առաջացումը և սրանց բառախմբերի ու առանձին տեսակների «տրամաբանական բաժանումը»։ Ա-

ները, որպես խոսքի մաս, նախ բաժանվում են երկու խմբի՝ 1. փոփոխվող և 2. անփոփոխելի:

Փոփոխվող խոսքի մասերն ունենում են երկու ստորաբաժանում՝ անուն և բայ: «Անունն իր հերթին բաժանվում է զանազան տեսակների, այն է՝ գոյական, ածական, դերանուն»: Կան բառեր էլ, որոնք նշանակությամբ բայ են, իսկ գործածությամբ՝ անուն, սրանք էլ կոչվում են անեռևույթ կամ դերբայ:

Անփոփոխելի բառերն էլ լինում են մակբայ, նախադրություն և շաղկապ:

«Բոլորովին դուրս է մնում ձայնարկությունը: Ձայնարկությունները իրապես բառեր չեն, այլ ձայներ, որոնց նշանակությունը կախված է արտահայտության տոնից»:

«Այս է ահա բառերի տեսակների տրամաբանական բաժանումը, որ և կոչվում է խոսքի մասեր (մասունք բանի)»[72]:

Նախ նկատենք, որ Հ. Աճառյանը բառերը խոսքի մասերի տրոհելիս գործածում է հայերենի ավանդական քերականության մեջ տարածում գտած «խոսքի մաս» (մասունք բանի) կամ «բառերի տեսակ» տերմինները որպես հոմանիշներ: Այս տերմինագործածության մեջ նա նմանվում է Այտընյանին և ոչ թե Աբեղյանին:

Խոսքի մասերի դասակարգման և բնութագրման մեջ նա դիմում է բառերի իմաստային, ձևական և շարահյուսական հատկանիշներին՝ ըստ անհրաժեշտության:

Բառերի հիմնական խմբերը որոշելիս հաշվի են առնվում բառերի ձևական հատկանիշները: Այսպես՝ «1) փոփոխելի բառեր, այսինքն նրանք, որոնք ենթարկվում են թեքման օրենքներին և 2) անփոփոխելի բառեր, այսինքն նրանք, որոնք թեքումից ազատ են»:

Փոփոխելի բառերն էլ դարձյալ ըստ ձևական հատկանիշի ունենում են երկու ստորաբաժանում. ա) անուն, այսինքն այն կարգի բառեր, որոնք ընդունակ են կրելու հոլովական փոփոխություններ, բ) բայ, այսինքն այն կարգի բառեր, որոնք ընդունակ են կրելու դեմք արտահայտող փոփոխություններ» (էջ 15)[73]:

---

[72] Հ. Աճառյան, Լիակատար քերականություն հայոց լեզվի, հ. 3, 1957, էջ 15—17:

[73] Տողատակերի մեջբերումներից ու կրկնություններից խուսափելու համար մեջբերումներից հետո նշում ենք էջը և, ըստ անհրաժեշտության, «Լիակատար քերականության» հատորը միայն:

Հ. Աճառյանը գտնում է, որ բառերի այս խմբերը, ապա և առանձին տեսակները կարող են ունենալ նաև իմաստային բնութագրում, այսինքն՝ «կարելի է տալ նրանց վերացական սահմանը՝ անկախ գործածության եղանակից»։ Այդ դեպքում «Անունը ցույց է տալիս մի գաղափար, լինի դա նյութական թե վերացական (այն է՝ առարկա, էակ, հատկություն և այլն) և կարելի է ըմբռնել առանձին, անկախ որևէ նախադասությունից. այսպես, օրինակ, մի որևէ կոչական, իսկ բայը ցույց է տալիս. 1) գործողություն, 2) ընթացք, 3) պայման և անկարելի է ըմբռնել առանց որևէ նախադասության» (էջ 16)։

Այսպես ուրեմն, եթե բայը նախադասությունից դուրս չի կարելի ըմբռնել, որովհետև Աճառյանն էլ Աբեղյանի պես բայը միայն նրա դիմավոր ձևն է համարում, ապա անունը կապակցությունից դուրս էլ հասկացվում է։ Այդպես ըստ նշանակության տարբերվում են նաև անվան տեսակները, այսինքն՝ «երբ անունը ցույց է տալիս անձը կամ առարկան, գոյական է, իսկ երբ ցույց է տալիս նրա հատկությունը, ածական է, օր. մարդը եկավ, մարդ է նա» *(էջ 16)։*

Սակայն ինչպես երևում է հենց այս օրինակից, նույնիսկ նյութական նշանակության կամ փոփոխելի բառերի տեսակները, այսինքն նրանց խոսքիմաստային պատկանելությունը որոշելու համար ոչ նրանց ձևական և ոչ էլ, մանավանդ, իմաստային հատկանիշները էական չեն։ Ձևական հատկանիշները էական չեն ոչ միայն նրանով, որ կան լեզուներ, որոնք ընդհանրապես թեքում չունեն, այլև նրանով, որ թեքումը մեծապես պայմանավորված է բառերի գործածությամբ՝ գոյականի պաշտոնով վերցված ածականը հոդ է ստանում և հոլովվում է։ Գալով իմաստին, ըստ Աճառյանի՝ անվան առարկա, թե հատկություն ցույց տալը դարձյալ պայմանավորված է նրա գործածությամբ։ Մարդը եկավ *նախադասության մեջ* մարդ *գոյական է,* մարդ է նա *նախադասության մեջ* մարդ *ածական է։ Դրա համար էլ Աճառյանը գրում է, որ «գոյական և ածական հաճախ միևնույն բաներն են», ոստի և «բառերի տեսակների այս բաժանումը հիմնված է նրանց գործածության եղանակի վրա, ուրեմն, հենց որ գործածության եղանակը փոխվեց, փոխվում է նաև բառի տեսակը... Ինչպես՝* կարմիր գլխարկ,— *այստեղ* կարմիր *ածական է. բայց՝* կարմիրը լավ է, կարմիրները եկան, կարմրին եմ նայում, կարմիր եմ ուզում. *այս բոլորի մեջ* կարմիր *գոյական է» (էջ 17)։*

Եզրակացությունը պարզ է. Հ. Աճառյանի՝ խոսքի մասերի կամ բառերի տեսակների որոշման հիմունքը բացարձակապես շարահյուսական է, և քնավ չի սխալվում Ս. Աբրահամյանը, որ այդ առթիվ գրում է. «Ակնհայտ է, որ խոսքի մասերը որոշելու Աճառյանի ելակետը խոսքն է, բառի կիրառության յուրահատկությունները (ֆունկցիոնալ և ձևային) խոսքի մեջ։ Նշենք նաև, որ խոսքի մեջ ունեցած ձևաբանական որոշ հատկանիշներ հենց իր Աճառյանի բերած օրինակներում պայմանավորվում են ֆունկցիայով»[74]։

Որ Աճառյանի համար խոսքի մասերը բացարձակապես շարահյուսական-քերականական կարգեր են, այս քանում բոլորովին կասկած չի մնում, երբ կարդում ենք նրա հետևյալ տողերը. «Կարելի է որևէ դարձված, նույնիսկ ամբողջ նախադասություններ իբրև առարկա ըմբռնել և այն ժամանակ նա կլինի անուն (գոյական) և կենթարկվի, բնականաբար, հոլովման» (հ. 3, էջ 18)։

Ինչպես ասվեց, բառերի դասակարգման այդ շարահյուսական եղանակը միակ հարմար եղանակն է, որ Հ. Աճառյանը կիրառում է իր բերած հսկայական բառաքանակի պատմահամեմատական քննության և քերականական դասակարգման համար։ Հետևաբար նրա նպատակից դուրս է եղել Մ. Աբեղյանի պես հայերենի կոնկրետ փուլի համար բառերի մի միասնական ու ավարտուն դասակարգում կատարելը։

Բայց կարծել, թե «կարմիր գլխարկ» և «կարմիրը լավ է» կապակցություններում կարմիր-ը մեկ ածական, մեկ գոյական համարող Աճառյանը չգիտի, որ երկու դեպքում էլ գործ ունի կարմիր ածականի հետ և որ՝ երկրորդ դեպքում նույն ածականն է գոյականացած, նշանակում է չարաչար սխալվել։ Թթե կասկածում եք, լսեք իրեն Աճառյանին. «Մասունք բանիների փոխանակության տվյալներն երևույթ է բոլոր լեզուների մեջ։ Կարող է գոյականը ածական դառնալ և ածականը՝ գոյական, բայց գոյականը նախ գոյական է և էապես գոյական է, որ հետո մենք կարող ենք ածականաբար առնել, նմանապես ածականը նախ ածական է և էապես ածական է, հետո մենք կարող ենք այն գոյականաբար գործածել։ Օրինակ, էշ նախ գոյական է և անշուշտ գոյական է, բայց երբ ասենք էշ մարդ, էշ-ը դառնում է ածական,

---

[74] Ս. Գ. Աբրահամյան, *Չթեքվող խոսքի մասեր..., էջ 19։*

նույնպես կարմիր ածական է և միայն ածական, երբ ասենք կարմիրները եկան, դառնում է գոյական» (հատ. 5, էջ 5)։

Ինչպես տեսնում ենք, Աճառյանի համար էլ կան էապես կամ մշտապես գոյականներ, որ կարող են ածականաբար առնվել, կան և էապես կամ մշտապես ածականներ, որ կարող են գոյականաբար առնվել, այդպես էլ կան էապես դերանուններ, որ ածականական կիրառություն ունեն և ուղղակի ածական են անվանվում և այլն։ Հետևաբար Հ. Աճառյանի, այլև Մ. Աբեղյանի հայացքներում «խոսքի մասերի և նախադասության անդամների նույնացում ու շփոթ» տեսնելուց առաջ, լեզվաբան հետազոտողը կամ հայ քերականագիտության պատմության ուսումնասիրողը պետք է խորամուխ լինի նրանց գործածած տերմինների էության մեջ, նկատի ունենա նրանց խոսքի մասերի յուրովի ըմբռնումն ու արտահայտման նպատակադրումը։ Ո՛չ Աբեղյանի, ո՛չ Աճառյանի մոտ ածականը չի նույնանում որոշիչին, քանի որ այդ ածականը, որոշիչ լինելուց բացի, լինում է նաև ստորոգյալ (կամ ստորոգելիական վերադիր), գործածվում է գոյականաբար և ստանձնում է գոյականական պաշտոններ, դրվում է բայի վրա և դառնում է պարագա. վերջապես, որոշիչի պաշտոնում գործածվում են ածական դերբայներ, որոնք ըստ Աճառյանի առանձին խոսքի մաս են, և այլն, և այլն։

Այսուհանդերձ խոսքի մասերի ավանդական սխեմայի ներսում առանձին բառատեսակների համեմատական քննության ժամանակ Հ. Աճառյանն անում է նաև այլ կարգի շատ ուշագրավ դատողություններ, որոնք անկախ նրանից, թե այսօր ընդունելի են, թե ոչ, տվյալ խոսքի մասի ընդհանուր նկարագրի համար ունեն որոշակի արժեք։

Այս տեսակետից հետաքրքրական են բայի և դերբայների, անվան և դերանվան, ինչպես նաև մակբայի ու սրա բառային սահմանների վերաբերյալ տատանմամբ կարծիքներ շարունակ վեճերի ու տարբեր կարծիքների առարկա հանդիսացող հարցերի մեկնաբանությունները Հ. Աճառյանի «Լիակատար քերականության» հատորներում։

Բայական կարգերին ու խոնարհմանը նվիրված չորրորդ Ա հատորի հենց առաջին գլխում, «Բայի տարբերակումը գոյականից» վերնագրի տակ, Աճառյանը մի շարք լեզուների պատմական օրինակների մեջբերմամբ գտնում է, որ աշխարհի շատ ու շատ լեզուներում տարբերակված գոյական և բայ խոսքի մասերից նախ

գիտակցվել է գոյականը, ապա նրանից գոյացել կամ անջատվել է բայը (տե՛ս հ. 4, Ա., էջ 3—11)։ Այս հարցում չի կարելի չհամաձայնել Աճառյանի «վիպափառ քերականության» խմբագիր էդ. Աղայանի հետևյալ կարծիքին, որ արտահայտված է նույն հատորի առաջաբանում.

«Իրականում, ինչպես ցույց է տալիս լեզվի պատմությունը, չի կարող պատահել, որ գոյականը ձևավորվի, առանձնանա իբրև խոսքի մաս, առանց բայի առանձնացման, և ընդհակառակը։ Մեկի առանձնացումը ինքնին ենթադրում է նաև մյուսի առանձնացումը...» (հ. 4, Ա գիրք, էջ 6)։

Խոսքի մասերի զանազանման իր շարահյուսական մոտեցումը հետևողական կերպով կիրառելու դեպքում Հ. Աճառյանը դերբայ առանձին խոսքի մաս չպետք է ընդուներ։ Սակայն հետևելով ավանդական քերականությանը, ապա այլ լեզուների և իր՝ տարբեր փուլերի հետ հայերենի համեմատությունը հեշտացնելու համար նա անուններից ու բայից անջատում է դերբայը՝ բացատրելով, որ դրա ըմբռնումը և տերմինաբանությունը գալիս են հունարենի քերականությունից։

Ինչպես վերը տեսանք, Աճառյանի մեկնաբանությամբ՝ բայը, ի տարբերություն անունների, ցույց տալով «1) գործողություն, 2) ընթացք, 3) պայման, անկարելի է ըմբռնել առանց որևէ նախադասության»։ Ուրեմն բայը գործողություն է ընթացքի և որոշակի պայմանների մեջ։ «Եթե գործողությունից անկախ կուզենանք ըմբռնել գաղափարը (գործողությունը— Հ. Բ.) կունենանք մի այնպիսի բառ, որ բռնում է երկուսի միջին տեղը. այն է անեռևույթ կամ դերբայ, որ նշանակությամբ պատկանում է բային, իսկ գործածությամբ՝ անվան, որովհետև զուրկ է դեմքի արտահայտությունից և կարող է հոլովվել» (հ. 3, էջ 16)։

Նշանակում է, որ դեմքի գաղափարից անջատ գործողության գաղափարը մեր մտածողության մեջ ներկայանում է կամ իբրև նրա անունը, այսինքն՝ գոյական, կամ իբրև հատկանիշ, այսինքն՝ ածական։ Ըստ այդմ էլ՝ «Երբ բայը կատարում է գոյականի դեր, կոչվում է անեռևույթ (infinitiv), իսկ երբ կատարում է ածականի դերը, կոչվում է դերբայ (participe)»։ Ըստ Աճառյանի՝ «այս երկուսն էապես նույնն են», դրա համար նա հարմար է գտնում հայերենում դրանք անվանել դերբայ միանունական անունով՝ անեռևույթի փոխարեն գործածելով ամբողջ դերբայ անվանումը։ Ավանդական քերականությամբ միաժամանակ բայի և անվան

հատկանիշներ ունեցող դերբայ համապատասխան բառերին Աճառյանը տալիս է հետևյալ սահմանումը. «Այն բայերը, որոնք ձևով անուն և իմաստով բայ են, կոչվում են դերբայ կամ անեռևույթ» (հ. 5, էջ 5)։

Դերբայները ձևով անուն են, որովհետև, ինչպես ասվեց, կարող են հոլովվել և ապա գործածվել որպես գոյական կամ ածական, բայ են, որովհետև ունեն գործողության իմաստ և ապա բուն բայական գործածության համար կազմում են նաև դիմավոր ձևեր։

Քանի որ Աճառյանը բայերի խոսքիմաստային արժեքը հիմնականում ըստ նրանց գործածության եղանակի, այսինքն ըստ շարահյուսական գործառության որոշելուց բացի, ճանաչում է նաև բառի խոսքիմաստային պատկանելության «ըստ էության, մշտապես» («ըստ էության գոյական, ըստ էության ածական»), ապա այդ նկատառումով նրա համար «ըստ էության» դերբայները բայ են, դրա համար էլ դերբայը սահմանելիս նա գրում է. «Այն բայերը, որոնք ...»։ Բայց այսպիսի մոտեցմամբ դերբայի միջանկյալ խոսքիմաստային էությունը նոր պարզաբանում չի ստանում, բայ խոսքի մասի հասկացությունը չի դարձրում հակասական լինելուց։

Բառերի տեսակները որոշելով շարահյուսական սկզբունքով՝ Հ. Աճառյանը դերբայները բայածևե՞ր, թե առանձին բառեր ճանաչելու հարցադրում չունի։ Ի տարբերություն Մ. Աբեղյանի, նրա համար դերբայները բայածևեր են, և նրանցում գործողության իմաստը, անկախ նրանից, թե տվյալ դերբայը բայական է, թե անվանական կիրառություններ ունի, միշտ զուգորդվում է ժամանակի, բայի կրավորական և ժխտական ձևեր կազմելու ներունակությամբ։ Անորոշը, որ «իր բոլոր ձևերով գոյական է և հոլովվում է» (հ. 5, էջ 50), դարձյալ բնութագրվում է՝

ա) ժամանակային նշանակությամբ, այն է՝ «Անորոշ դերբայի ժամանակն անհայտ է. նա ծառայում է ընդհանրապես թե՛ իբրև ներկա, թե՛ իբրև անցյալ, թե՛ իբրև ապառնի։ Սրանից էլ ծագել է իր անունը» (հ. 5, էջ 49)։

բ) Սեռով՝ «Դերբայները կարող են ունենալ իրենց կրավորական սեռը... օրինակ՝ սիրել–սիրվիլ–սիրվել, տեսնել–տեսնվիլ–տեսնվվել, շարժիլ–շարժվիլ–շարժվել, անցնիլ–անցնվիլ–անցնվել (էջ 49)։

գ) ժխտականի կազմությամբ՝ «Թե՛ ներգործական և թե՛ կրավորական ձևերը կարող են դառնալ բացասական՝ ստանալով չ

մասնիկը. ինչպես՝ չսիրել–չսիրվիլ (չսիրվել), չկարդալ–չկարդացվիլ (չկարդացվել)» (էջ 50)։

Դերբայի այս առանձնահատկություններն են, որ անորոշը իրրև բայական զանազանում են –ություն, –ում և այլ ածանցներով կազմված նրան համազոր վերացական գոյականներից կամ բայանուններից։

2. Աճառյանը բայանունը համարում է դերբայից անբաժան հատկացություն և առաջինների տարբերությունը վերջիններից տեսնում է բառակազմության և ժամանակային հարաբերության մեջ։ Նա այդ մասին գրում է.

«Դերբայից անբաժան է բայանունը։ Այս բառով հասկանում ենք այն բառերը, որոնք ունեն դերբայի իմաստ, բայց ձևով բոլորովին տարբեր են։ Դրանցից մի մասը գոյական է և մի մասը ածական (այս դեպքում կոչվում է բայածական)։ Հոլովվում և հոդ են ստանում, միևնույն ժամանակ բայի նման խնդիրներ են ստանում, բայց զուրկ են ժամանակից» (հ. 5, էջ 26)։

Մինչդեռ Աբեղյանը բայանունը նույնացնում է անորոշ դերբային՝ գործածելով «բայանուն կամ անորոշ դերբայ» անվանումը, իսկ Աճառյանը բայանուն առելով հասկանում է բայահիմքից ածանցված գոյականները։

Աճառյանի բայածական-ը, ինչպես տեսնում ենք, բայանուն ածականն է, և ոչ թե Մ. Աբեղյանի բայածականը, որը ածական դերբայն է։ Սակայն դերբայների ընդհանուր նկարագիրը տալիս, նա երբեմն դերբայ է համարում բայահիմքից կազմված այնպիսի ձևեր, որոնք հայերենի հետագա փուլի համար ոչ թե դերբայ են, այլ բայանուն գոյական կամ ածական։ Այսպես, օրինակ, ներկա (իմա՝ ենթակայական) դերբայի ձևեր են համարվում –ան ածանցով կազմված վիպասան, ճարտասան, խթան, ակցան, վազան, սուտասան և այլ գոյականներն ու ածականները.—ուն ածանցով կազմված մնայուն, շարժուն, տոկուն, փայլուն և այլ ածականները։

Հայերենի քերականական կառուցվածքի համեմատական նկարագրությունը տալիս, Աճառյանը հաջորդ փուլերի համար իրրև համեմատության եզր միշտ էլ վերցնում է գրաբարը։ Այս պատճառով էլ բարբառների ու աշխարհաբարի լեզվական իրողությունները քննում է գրաբարի ավանդական քերականության տերմինավորմամբ և հաճախ էլ այդ իրողությունները մեկնաբանում է գրաբարի դիրքերից ու անտեսում է սրանց բնորոշ հատկանիշները։

Ահա այդպես էլ հայերենի բոլոր շրջանների ու հատվածների դերբայները ներկայացնում է գրաբարի չորս դերբայական անուններով՝ անորոշ, ներկա, անցյալ և ապառնի, ուստի և՝ վաղակատարն ու հարակատարը իրրև անցյալ դերբայի երկու ձևեր ներկայացնելուց բացի,—ում և –իս վերջավորությամբ դերբայական ձևերն էլ միացնում է –ող վերջավորությամբ ներկա դերբային, որպես այդ դերբայի բարբառային, ապա աշխարհաբարային ձևեր։

Դերբայների ձևաիմաստային բնութագիրը տալիս, Հ. Աճառյանը, բայաձևերի կազմությունը մեկնաբանելուց հետո, թվարկում է նրանց անվանական և բայական գործածությունները, որոնք բնորոշում են դերբայը որպես խոսքի մաս։ Այս վերլուծությունից պարզվում է, որ հայերենի դերբայներն իրենց խոսքիմաստային ընդհանուր նշանակությամբ, այն է՝ մե՛րթ անվան, մե՛րթ բայի դեր կատարելով, միատեսակ ու ամբողջական կարգ չեն ներկայացնում։ Այսպես՝ «Անորոշ դերբայն իր բոլոր ձևերով գոյական է և հոլովվում է...» (հ. 5, էջ 50). «–ող ձևով դերբայները թե՛ ածական են և թե՛ գոյական, վերջին դեպքում կարող են ստանալ հոդ և հոլովվում են» (էջ 53). «–ած մասնիկը կազմում է անցյալ դերբայ, որ կարող է գործածվել թե՛ իբրև ածական, և թե՛ իբրև գոյական։ Վերջին դեպքում գործածվում է առանձին, ստանում է որոշիչ կամ ստացական հոդ և հոլովվում։ Իբրև դերբայ՝ կազմում է բաղադրյալ ձևեր և ունի իր կրավորական ու բացասական ձևերը» (էջ 55)։

«Ապառնի դերբայի ստվորական մասնիկներն են –լու և –լիք։ –լու իրապես անորոշ դերբայի սեռականն է. գործածվում է՝

ա. Նախ իբրև ածական. ինչպես՝ **բնակելի տուն, վախենալու երազներ...**

բ. Ավելի քիչ անգամ իբրև գոյական. ինչպես՝ **ուտվելուները կեր, չուտվելուները թող։**

գ. Ամենից ավելի գործածական է իբրև դերբայ և կազմում է բաղադրյալ ձևեր. ինչպես՝ տեսնելու եմ, տեսնելու էի...» (էջ 56—57)։

Աշխարհաբարի վաղակատար և անկատար դերբայները հարմար չեն գալիս ինչպես Աբեղյանի, այնպես էլ Աճառյանի՝ դերբայներին տված ընդհանուր բնութագրին։ Բայց այդ դժվարությունը նրանք «հաղթահարում են» յուրովի։ Մ. Աբեղյանը, ինչպես տեսանք, –իս-ով անկատարը դնում է մակբայի մեջ, իսկ վաղակատար և –ում-ով անկատարը թեև համարում է առանձին բառա-

ձևեր, բայց բայական հարացույցից դուրս սրանց խոսքիմաստային այլ նշանակություն չի վերագրում։

Հ. Աճառյանը, որ դերբայների մեջ տեսնում է մի՛րթ գոյական, մի՛րթ ածական, մի՛րթ դերբայ խոսքիմաստային իմաստներ, անցյալ և ներկա դերբայ անվանումներով ներկայացված աշխարհաբարի վաղակատար և անկատար դերբայների մեջ, բնականաբար, որևէ անվանական (գոյական կամ ածական) իմաստ ու գործածություն չի տեսնում։ Այս բառաձևերը դերբայի ո՛չ ավանդական, ո՛չ էլ աճառյանական հասկացությանը չեն համապատասխանում, սրանք իրենց մեջ անվանական ո՛չ շարահյուսական և ո՛չ էլ ձևական որևէ հատկանիշ չունեն, հետևաբար բուն իմաստով դերբայ չեն։ Բայց քանի որ Աճառյանի բնութագրմամբ էլ բայերը դեմքի գաղափար ունեցող բայաձևեր են միայն, հետևաբար սրանց համար մնում է գործածել դերբայ տերմինը, ուստի և սրանց դիմավոր ձևեր կազմելու գործառական նշանակությունը Աճառյանը անվանում է դերբայական նշանակություն։ Անկատարի ձևերի մասին նա գրում է. «Ներկա դերբայի համար մեջ բերված բոլոր վերոհիշյալ մասնիկները հատուկ են թե՛ արևելյան և թե՛ արևմտյան գրական լեզուներին։ Բայց արևելյանին միայն հատուկ են –ում, և –լիս, որոնք սահմանականի ներկան և անկատարը կազմող մասնիկներ են, ինչպես գիտենք։

Այս մասնիկները կարող են գործածվել սակայն նաև իբրև զուտ դերբայ։ Ինչպես՝ Այն մարդը գնում տեղը խոսում է։ Ուսելիս ինչո՞ւ ես շրթունքներդ չփչփացնում» (էջ 55)։

Այստեղ զուտ դերբայ ասելով հասկացվում է, որ անկատարի երկու ձևերն ունեն անկախ բառագործածություն, այն էլ ոչ անվանական։ Բայց քանի որ «գնում տեղը» տիպի կապակցությունը, որ բերում էր նաև Աբեղյանը, արդի հայերենին հատուկ չէ, իսկ –իս վերջավորությամբ ձևերը, ինչպես նկատում է ինքը Աճառյանը, ցույց են տալիս «գործողությունը կատարելու ժամանակ» (էջ 47), ապա այս «զուտ դերբայները» այլևս չեն համապատասխանում Աճառյանի ու նրա նախորդների դերբայ հասկացությանը։

Նույնը պիտի ասել վաղակատարի մասին, որը Աճառյանի կողմից դարձյալ բնութագրվում է որպես զուտ դերբայ։ Խոսելով անցյալ դերբայի ձևերի մասին՝ Աճառյանը գրում է՝ «Սրանցից զուտ դերբայն է –ել–եր, որ ծառայում է կազմելու բազմաթիվ բաղադրյալ ձևեր. ինչպես՝ տեսել եմ–տեսեր եմ, տեսել էի–տեսեր էի և այլն» (էջ 55)։

Այսպես, ուրեմն, Աճառյանի մեկնաբանմամբ անորոշն ու –ող վերջավորությամբ ներկա (իմա՛ ենթակայական) դերբայը ունեն միայն անվանական (գոյական, ածական) գործառություն և զուրկ են դերբայական գործառույթից, հարակատար անցյալն ու ապառնին ունեն և՛ անվանական, և՛ դերբայական գործածություններ, –ում,–իս վերջավորությամբ ներկան (իմա՛ անկատարը) և –ել,–եր վերջավորությամբ վաղակատար անցյալ դերբայը ունեն միայն դերբայական գործածություն և զուրկ են անվանական գործածությունից։ Միանգամայն հասկանալի է, որ շարահյուսական սկզբունքով դասակարգված խոսքի մասերի շարքում գործառական այս անհամաչափ միավորումները չէին կարող սկզբունքի հետևողական կիրառմամբ մի խոսքի մաս համարվել, և դա էլ Աճառյանի մոտեցման հակասականության բուն պատճառն է՝ դերբայների խմբավորման ու բնութագրման հարցում։

Սրանց միավորողը մնում է Աճառյանի հիշատակած բայական իմաստը, որին զուգորդում են քաչալական ժամանակի հասկացությունը, այս ձևերի խնդրառական հատկանիշը, ապա նաև դրական ու ժխտական, ներգործական ու կրավորական ձևերի հակադրությունները, որոնց մասին տարբեր առիթներով խոսում է հեղինակը։

Եթե այստեղ էլ հարցին նայելու լինենք նույն տեսանկյունից, թե դերբայների մեջ տարբեր խոսքիմաստային իմաստներ տեսնող Աճառյանը այլ ձևերի համար էական, մշտական իմաստը, ինչպես ինքն էր ասում, ո՞րը կհամարեր՝ բայականո՞ւը (իր տերմինով՝ դերբայականո՞ւը), թե անվանականը, ապա բոլոր դերբայների համար մի ընդհանուր պատասխան դժվար թե ստանայինք։ Բայց մի բան պարզ է, որ Աճառյանը, ի տարբերություն Աբեղյանի, դերբայները տարբեր բառաձևեր չի համարում։ Հայերենի խոնարհումը ներկայացնելիս, նա դերբայները մտցնում է խոնարհման հարացույց։ Աճառյանի համար բայի դերբայական ձևերը նրա հարացույցի մի մասն են ներկայացնում, և դերբայների տարբեր խոսքիմաստային նշանակություններով գործածվելը նրա կողմից դիտվում է ոչ թե որպես համանուն տարբեր բառերի արտահայտություն, այլ որպես նույն բառի բազմիմաստություն։ Այսպես, օրինակ, ճոգված մարդ և ճոգված է կապակցություններում կա նույն դերբայը՝ ածականական և դերբայական կիրառություններով. տեսնելու տուն և տեսնելու եմ կապակցություններում տեսնելու ոչ միայն նույն ապառնի դերբայն է, այլև «իրապես անորոշ դերբայի սեռականն է»՝

ածականական և բայական գործառութիւններով (տե՛ս էջ 52 և 56)։

Դերբայի բայական և անվանականացման գործածութիւնները որոշելով նրա օժանդակ բայի հետ դիմավոր ձև կազմելու և չկազմելու դերով՝ Աճառյանը հարակատարով և օժանդակ բայով կազմված ձևերում ճանաչում է դերբայ+օժանդակ բայ կաղապար, դրա համար էլ Աբեղյանի դատողությունը արևմտահայերենի այդ ձևերով ածական դերբայ+օժանդակ բայ տեսնելու մասին մեջ է բերում վերապահումով։ Ահա այդ միտքը. «Հարակատարի երկու ձևերը՝ -ած եմ և -ել եմ ձգտում են միանալու կամ երանգի նոր նրբութեամբ դանազանվելու։ Աբեղյանի դատողութեամբ սրանք տարբերվում են իրարից՝ հետևյալ ձևով.

Արևմտահայոց մեջ -ած (եմ) երբեմն գոստ ածականաբար է գործածվում. ինչպես՝ խմած է =ուրիշ բառով՝ գինով է. պառկած է =իբր թե՝ հիվանդ է. երկուսն էլ ածականի փոխարեն. իսկ նրանց բայական ձևը լինում է խմեր է, պառկեր է և այլն» (հ. 4, Ե գիրք, էջ 223)։

Մենք արդեն առիթ ունեցանք խոսելու Աճառյանի դերանվան խոսքիմատային հասկացութեան մեկնաբանման մասին։ Ս. Աբրահամյանն իր «Արդի հայերենի դերանուններ» (1956 թ.) մենագրութեան 83—87 էջերում տվել է Աճառյանի այդ մեկնաբանման բավականին հանգամանալից տեսութեյունը, որտեղ իրավացիորեն եզրակացվում է, որ թեև նրա «Լիակատար քերականութեյան» դերանունը ներկայացնող հատորը լույս է տեսել 1954 թվականին, բայց Աճառյանը կանգնած է դերանվան հասկացութեյան ավանդական տեսակետի վրա։

Վերջինս արտահայտվում է նախ և առաջ դերանվան հասկացութեյան սահմանման կամ որոշման մեջ, որից էլ հավանաբար բխում են նրա մյուս եզրակացութեյունները։ Ըստ Աճառյանի՝ «Դերանունն այն բառն է, որ գործ է ածվում նախապես հիշված մի գոյականի փոխարեն, նույնը չկրկնելու նպատակով» (հ. 2. էջ 4)։ Ըստ այսմ էլ նա իր տերմինավորոմամբ ու բացատրութեյամբ դերանուն է համարում միայն գոյական դերանունները։ Այստեղից էլ Աճառյանի դերանվան ըմբռնման ու վերլուծութեյան դեմ ուղղված այն արդարացի քննադատութեյունը, թե «դերանունների քանակը պրոֆ. Աճառյանի մոտ շատ սահմանափակ է» և որ «հայերենի բոլոր հատվածներից Հ. Աճառյանը առավել ուշադրութեյուն է դարձ-

նում գրաբարի վրա... հաճախ նկատի է ունենում նաև հնդեվրոպական հիմք լեզվի համապատասխան դերանունները»[75]։

Սակայն դերանվան խոսքիմասային բուն էության ըմբռնման մեջ Հ. Աճառյանը շատ է հեռանում դրանք սոսկ գոյականին փոխարինող բառեր ճանաչելու նեղ պատկերացումից։ Նախ որ Աճառյանը ուրիշ բառերի փոխարինելու հատկությունը միայն դերանվան մենաշնորհը չի համարում։ «Երբեմն էլ գոյականներն են,— գրում է նա,— որ դերանունների տեղ են գործածվում, ինչպես ևվաստս, հրամանդ, Ձերդ մեծությունը. պրս. bande «ծառա» բառը շարունակ գործածվում է իբրև Ա դեմքի անձնական դերանուն» (հատ. 3, էջ 17—18)։ Բայց այլ բառի կամ անվան փոխարինող ամեն բառ դեռևս դերանուն չէ։ Դերանվան ծագումը բացատրելիս, Աճառյանը, կարծես, համամիտ է իր բերած այն մտքին, թե «լեզվի մեջ ամենաուշ առաջացած խոսքի մասը դերանունն է»։

«Կարելի է ենթադրել,— ավելացնում է նա,— թե դերանունները նախապես գոյականներ էին, որոնք հետո, գործածության մեջ շարունակ մաշվելով, դարձան կրճատ, անճանաչելի բառեր՝ դերանուններ (հատ. 2, էջ 1)։

Դերանունների գոյացման այդ նախավիճակը դեռևս պահպանող մի շարք լեզուներից համապատասխան օրինակներ բերելուց հետո նա ավելի հստակորեն եզրակացնում է. «Այս բոլորը ցույց են տալիս, որ դերանունները նախապես սովորական գոյականներ էին» (էջ 4)։

Հենց այստեղ էլ Աճառյանն անում է քերականության պատմության համար մի ուշագրավ դիտողություն ևս. «Դերանունների համար նկատելի մի կարևոր կետն այն է,— շարունակում է նա,— որ քերականական կարգերը ավելի շուտ նրանց մեջ են սկսվել, քան գոյականների» (հ. 2, էջ 8)։

Բայց այստեղ մեզ հետաքրքրողը դերանվան ու քերականական կարգերի առաջացման հերթականությունը չէ, այլ այն, թե բառաքերականական ի՞նչ փոփոխություն է կատարվում գոյականի հետ, երբ այն դառնում է դերանուն։ Աճառյանի բացատրություններից ու նկարագրություններից պարզ երևում է, որ բառերի դերանվանացումը մի կողմից՝ պայմանավորված է նրանց դիմային հատկանիշ ձեռք բերելու հետ, ինչպես, ասենք, տամբերե-

---

[75] Ս. Գ. Աբրահամյան, *Արդի հայերենի դերանունները*, էջ 85—86։

նում «lu» «մարդ»՝ գործածվում է նաև իբրև «ես», ka- «բերան»՝ գործածվում է նաև իբրև «դու» (հատ. 2, էջ 1), մյուս կողմից՝ բառերի առարկայական, հատկանշային որոշակի իմաստներից նրանց ընդհանուր, անորոշ գաղափարների անցնելու հետ։ Ըստ այսմ՝ դերանունները բաժանելով երկու խմբի, Աճառյանը դրանք ներկայացնում է հետևյալ ստորակարգությամբ. «...առաջին խմբի մեջ մտնում են անձնական, անդրադարձ, փոխադարձ և ստացական դերանունները, երկրորդի մեջ՝ ցուցական, հարաբերական, հարցական և անորոշ դերանուններն ու ածականները։ Սրանց տարբերությունն այն է, որ առաջինները կապված են միշտ դեմքի հետ, իսկ երկրորդները ընդհանուր և անորոշ գաղափարներ են և դեմքի հետ կապված չեն» (էջ 8)։ Բայց այս երկու խմբերի համար էլ էական հատկանիշը դառնում է այն, որ սրանք, ըստ Աճառյանի, չանվանելով առարկան կամ հատկանիշը, այլևս նյութական իմաստ չունեն, նրանց արտահայտած այդ դեմքի կամ անձի իմաստը, այլև՝ առարկայական այդ ընդհանուր կամ անորոշ գաղափարը այս բառակարգի կամ խոսքի մասի խոսքիմաստային իմաստն է և ուրիշ ոչինչ։ Դերանվան այդ արտահայտած ընդհանուր առարկան կամ հատկանշային իմաստը, իբրև խոսքիմաստային իմաստ, նյութակա՞ն իմաստ է, թե քերականական, շատերի համար մնում է վիճելի հարց։ Քանի որ Աճառյանի համար խոսքի մասերը բացառապես քերականական-շարահյուսական բառակարգեր են, իսկ նրանց խոսքիմաստային իմաստներն էլ՝ քերականական ամենաընդհանուր իմաստներ, ապա նրա դերանվանական ընդհանուր նշանակությանը տված բնորոշումը, այս սկզբունքից ելնելով, միանգամայն հիմնավորված է։

Ինչ վերաբերում է Աճառյանի կողմից ածական դերանուններ դերանուն չհամարելու խնդրին, ապա այստեղ էլ հարցի լուծումը այդպիսի կատեգորիկ բնույթ չունի։ Ավանդական տերմինավորմամբ (այլև սահմանումով) ճանաչելով միայն գոյական դերանուն՝ Աճառյանը դերանվան խոսքիմաստային հատկացությունը բացատրելիս, ինչպես տեսանք, հավատարիմ է նկատի ունի նաև ածական դերանունները. «Սա դերանունը,—գրում է նա,—արտահայտում է ընդհանրապես առարկայի (գոյականի) հատկացություն, այսպիսի դերանունը՝ ընդհանրապես հատկանիշի (ածականի) հատկացություն... (հատ. 2, էջ 4—5)։ Բացի այս, ածական դերանունների համար գործածելով «ցուցական ածական», «ստացական ածական», «հարցական ածական», «անորոշ ածական» տերմիններ-

րը՝ սրանք նրա կողմից ներկայացվում և քննվում են որպես դերանուններ։ Այդ կապակցությամբ Աճառյանը գրում է. «Հին քերականները ածականները բաժանում էին հինգ տեսակի. որակական, թվական, ցուցական, ստացական և անորոշ։ ...Մենք այստեղ խոսում ենք միայն որակական ածականի մասին. մյուսները տե՛ս թվականի և դերանունների բաժնում» (հ. 1, էջ 4—5)։

Ինչպես տեսնում ենք, Աճառյանը պարզապես հետևում է իր ասած հին քերականների տերմինաբանությանը, իսկ լեզվի համակարգը ներկայացնելիս ոչ միայն ածական դերանուններն էլ դերանուն է համարում և դերանվան մեջ էլ վերլուծում, այլև ածական խոսքի մաս համարված թվականն էլ առանձնացնում է և քննում իբրև իմաստային բոլորովին ինքնուրույն բառակարգ՝ անդրադառնալով նրա ծագմանը և մարդու մտածելու կարողության զարգացման զուգահեռ տարբեր կառուցվածքի ու զարգացման աստիճանի լեզուների թվային այլազան պատկերին։ Այլ բան է, իհարկե, որ Հ. Աճառյանը ոչ միայն տերմինագործածության, այլև շատ հասկացությունների սահմաններում մնում է որոշ հնացած ըմբռնումների պաշտպանի դերում, լեզվի տարբեր փուլերի իրողությունները քննում է միևնույն չափանիշների կիրառմամբ, հետևաբար, հաճախ առաջին պլանն են մղվում լեզվական ընդհանրությունները միայն, իսկ տարբերություններն անտեսվում են, ուստի և լեզվի մի շրջանի կարգերն ու կաղապարները վերագրվում են մի այլ շրջանի, որը, մանավանդ, լեզվի համաժամանակյա վերլուծության տեսակետից միանգամայն մերժելի է և իրավացիորեն քննադատվել է հայ քերականագիտության պատմության մեջ։

Հ. Աճառյանի խոսքի մասերի շարքում դարձյալ ավանդական քերականության հետևությամբ շարունակում է լայն ծավալով մնալ մակբայը։ Այլ խոսքի մասերի չպատկանող և գործողության հետ կապվող բոլոր կարգի բառերը այստեղ դիտվում են որպես մակբայ։

Ենթ Մ. Աբեղյանը մակբայի խոսքիմաստային նշանակության հիմքում տեսնում է հատկանիշի հատկանիշ նյութական իմաստը և սրանով մակբայները մտցնում է նյութական նշանակության մյուս խոսքի մասերի շարքը և սրանք քննում է դրանց հետ ունեցած ընդհանրությունների և տարբերությունների տեսանկյունից, ապա Հ. Աճառյանը մակբայը դնում է անփոփոխելի, այսինքն՝ քերականական նշանակության խոսքի մասերի շարքը, ուստի և

այն քննում է սրանց հետ ունեցած իր կապի ու փոխհարաբերության մեջ։

«Անփոփոխելի բառերի մեջ ամենակարևոր տեղն են բռնում նախադրություններն ու մակբայները,— գրում է Աճառյանը։— Այս երկու կարգի բառերը իրապես միևնույնն են, միայն թե առաջիններն ցույց են տալիս առարկայի հանգամանքներն ու պարագաները (տեղ, ժամանակ, եղանակ և այլն), իսկ երկրորդները՝ գործողության։ Քերականության լեզվով խոսելով, նախադրությունները վերաբերում են գոյականներին, իսկ մակբայները՝ բայերին։ Այսպես՝ յեռոյ բառը նախադրություն է, երբ ասում ենք երկու տարի յեռոյ և մակբայ է, երբ ասում ենք յեռոյ կզամ» (հատ. 5, էջ 191)։

Չմոռանալով շոշափել նաև սրանց առաջացման հարցը՝ նա ավելացնում է. «Մակբայների գործածության այս խորությունը (մակբայ կամ նախադրություն) հետո առաջացած երևույթ է և սկզբնապես նախադրություն և մակբայ միևնույնն էին (Meillet, Traité, 480)» (հ. 5, էջ 191)։

Հետագա շրջանի համար, իհարկե, մակբայների առաջացման ամենատարածված ուղին հոլովման և խոնարհման զանազան ձևերի մակբայացումն է, որը մակբայները մյուս կողմից կապում է թեքվող խոսքի մասերի հետ և առավել ընդարձակում նրա սահմանները։ Ուստի և Աճառյանի ներկայացրած մակբայը նորից իր մեջ է առնում բոլոր եղանակավոր բառերն ու մասնիկները, այլև՝ այսպես, այսման, այսչափ, բոլոր, ամբողջ և այլ դերանունները (տե՛ս հատ. 5, էջ 317)։

Հայտնվել է այն կարծիքը, որ թեև Հ. Աճառյանի «Լիակատար քերականության» հրատարակ եկավ 50-ական թվականներին, բայց խոսքի մասերի տեսության վերաբերյալ այն ներկայացնում է ոչ այդ թվականների լեզվաբանական մակարդակը, և որ, «Պրոֆ. Աճառյանը իր զառամյալ տարիքի, վատառողջ լինելու, գուցե և այլ պատճառներով հնարավորություն չի ունեցել վերանայելու իր հայացքները և օգտագործելու սովետական լեզվաբանության մի շարք նվաճումներ»[76]։

Լեզվաբանության պատմությանը առայժմ հայտնի չէ լեզվաբանական որևէ ուղղություն կամ մեթոդ, որն իր առավելությունների կողքին չունենար նաև իր թերությունները։ Իբրև պատմա-

[76] Ս. Գ. Աբրահամյան, Արդի հայերենի դերանունները, էջ 83։

համեմատական լեզվաբանության խոշոր ներկայացուցիչ՝ Հ. Աճառյանն իր հայագիտական ուսումնասիրություններում ներկայացնում է այդ մեթոդի դասական մակարդակը՝ իր առավելություններով ու թերություններով հանդերձ։ Ըստ այդմ էլ Աճառյանի՝ մեր քննության ենթակա հարցի, ինչպես և լեզվաբանական այլ հարցերի վերաբերյալ արտահայտած հայացքներում, իհարկե, կարելի է ցույց տալ շատ հնացած ու մերժելի բաներ։ Բայց ինչ վերաբերում է իր ժամանակի լեզվաբանական նվաճումներին անհաղորդ լինելուն և վատատողջության պատճառով խոսքի մասերի դասակարգման ու բնորոշման մեջ հնացած հայացքներ պաշտպանելուն, ապա այդ մտքին դժվար է համաձայնել։

Անհրաժեշտության դեպքում, լեզվի տեսական հարցերը քննելիս Աճառյանը հաճախ դիմում է մարքսիզմի կլասիկների ստույգ-ներին, լեզվական փաստերն ու սրանց վերլուծությունները շարադրելիս մեջ է բերում սրանց վերաբերող տեսական մամուլում անգամ ապտահայտված կարծիքներ։ Ի դեպ, Աճառյանը խոսքի մասերը դասակարգում է «ձևական ու շարահյուսական տեսակետից» ոչ նրա համար, որ տեղյակ չէ խոսքի մասերի «իմացաբանական դասակարգմանը», այլ նրա համար, որ այնքան էլ ոգեվորված չէ այդ դասակարգմամբ։ Ահա թե ինչ է գրում այդ մասին նա.

«Ինչպես տեսանք, բառերի տեսակների բաժանմունքը հիմնված է նրանց ձևաբանական կամ շարահյուսական գործածության վրա. այդ պատճառով էլ բառերի տեսակները կարող են շարունակ փոփոխվել (փոխակարգություն), նոր ուղղության քերականները հենց այս կետը գտնում են թերի և անհիմն. բառերի տեսակների բաժանումը հիմնել ձևաբանության կամ շարահյուսության վրա անտրամաբանական է. բառի տեսակի որոշումը պետք է լինի քերականության այդ երկու ճյուղերից անկախ և ինքնագլուխ. նա պիտի հիմնվի իմացաբանության վրա։ Բայց թե ինչ է այդ իմացաբանությունը, և այդ իմացաբանության վրա հիմնված բաժանումը բառերի ինչ տեսակներ պիտի որոշե, բոլորովին հայտնի չէ դեռ» (Հատ. 3, էջ 20)։

Ուրեմն, Հր. Աճառյանը քաջատեղյակ է լեզվաբանական նոր ուղղություններին, սրանց բառերի տեսակների որոշման ձևական կամ շարահյուսական մեթոդների քննադատությանը. բայց չի ընդունում այդ քննադատությունը և ավելի գիտական ու գործադրելի է

համարում իր մեթոդը։ Այլ բան է, իհարկե, թե որքանով է արդարացի նա։

Էզուների՝ բառերի ըստ խոսքի մասերի դասակարգման տարբեր մոտեցումները՝ ձևական, շարահյուսական, իմաստային կամ իմացաբանական, խառը, լեզվաբանության զարգացման որոշակի ու տարբեր աստիճաններ չեն ներկայացնում, սրանցից յուրաքանչյուրն ունի իր առավելությունն ու թերությունը, գործադրման իր կոնկրետ ասպարեզը և նպատակադրումը։ Այնպես որ Աճառյանի գործադրած շարահյուսական եղանակը քննադատելի է, բայց հարցի տեսության ու պատմության տեսակետից ո՛չ մերժելի է, ո՛չ էլ անցած էտապ[77]։

---

[77] *Տե՛ս* 1. «Вопросы теории частей речи» *(1968 թ.) ժողովածուի նյութերը.* 2. **Э. Т. Атаян,** Предмет и основные понятия структурального синтаксиса, Ереван, 1968 *և այլն։*

Երկրորդ գլուխ

ՀԱՅԵՐԵՆԻ ԽՈՍՔԻ ՄԱՍԵՐԻ ԻՄԱՍՏԱԲԱՆԱԿԱՆ ԲԱԺՄԱՆՄԱՆ ԴԱՍԱԿԱՐԳՈՒՄՆԵՐ

ՀԱՅԵՐԵՆԻ ԽՈՍՔԻ ՄԱՍԵՐԻ ՏԱՐԱՀԱՏԿԱՆԻՇ ԱՍՏԻՃԱՆԱԿԱՆ ԴԱՍԱԿԱՐԳՈՒՄԸ Ս. ԱԲՐԱՀԱՄՅԱՆԻ ԱՇԽԱՏՈՒԹՅՈՒՆՆԵՐՈՒՄ

Սերգեյ Աբրահամյանի վերջին երկու տասնամյակների տեսական ուսումնասիրությունների մեջ իրենց առանձնակի տեղն ունեն հայերենի խոսքի մասերի համակարգին, սրանց դասակարգման սկզբունքներին, փոխհարաբերություններին ու տեսական նկարագրին վերաբերող հարցերը։

Ս. Աբրահամյանը խոսքի մասերի հարյուրամյակների պատմություն ունեցող բանավեճերի ասպարեզ է մտնում իր «Արդի հայերենի դերանունները» (1956 թ.) գրքով, ուր թեմայի պահանջով քննարկման առարկա է դարձնում նաև դերանվան խոսքիմաստային առանձնահատկությունները, նրա փոխհարաբերությունները մյուս խոսքի մասերի հետ, ապա՝ հայերենի դերանունների դասդասումը։

Ըստ Ս. Աբրահամյանի, դերանվան հատկացության պատմական տեսությունը դերանունների խոսքիմաստային էական կամ նույնիսկ միակ գլխավոր հատկանիշ է համարել նրանց այլ խոսքի մասերի փոխարեն գործածվելը։ Դերանվան տարբեր տեսակներից, այլ խոսքի մասերից բերված օրինակների վերլուծությամբ հեղինակը գալիս է այն եզրակացությանը, որ «փոխարինման ֆունկցիան դերանունների, որպես խոսքի մասի, հիմնական հատկանիշը չէ»[1], քանի որ դերանունների մեծ մասը զուրկ է փոխարինման ֆունկցիայից և «Այդ նույն իմաստով փոխարինման ֆունկցիա հաճախ կատարում են նաև այլ խոսքի մասեր» (էջ 39—40)։

Այս եզրակացությունն օգնում է գիտնականին՝ ճշգրտելու հա-

---

[1] Ս. Գ. Աբրահամյան, *Արդի հայերենի դերանունները, 1956, էջ 40։*

ջերենի դերանունների բառացանկը և վերջնականապես հաստատելու փոխարինման գործառույթն չունեցող դերանունների դերանուն խոսքի մասի անդամ համարվելու իրավունքը:

Ս. Աբրահամյանի՝ դերանվան խոսքիմատային էությունը պարզաբանող հարցադրումներից մեկն էլ դերանունների և սրանց հարակից խոսքի մասերի փոխհարաբերության հարցն է: Նրա կարծիքով, դերանունները մյուս անուն խոսքի մասերի վրա բաշխելու միակ հիմունքը համապատասխան դերանունների շարահյուսական-գործառական հատկանիշն է, որով նրանք ընդհանրանում են իրենց զուգահեռ նյութական խոսքի մասերին, իսկ այդպիսի մոտեցումը հենց ձևաբանականի ու շարահյուսականի, խոսքի մասի և նախադասության անդամի շփոթ ու նույնացում է նշանակում: Իսկ իրականում «...դերանունները հարաբերակից խոսքի մասերի մեջ բաշխելը և ինքնուրույն խոսքի մաս չհամարելը չի արդարացվում, նախ, տեսականորեն» (էջ 43):

Ճիշտ է, ասում է Աբրահամյանը որ «դերանունները միօրինակ քերականական հատկանիշներ չունեն. նրանց մի մասը չի հոլովվում, մյուս մասը հոլովվում է, վերջիններս էլ մեկ ընդհանուր բնույթ չունեն: Որոշ դերանուններ ունեն դերանվանական, մյուսները անվանական հոլովում: Միօրինակ չեն նաև դերանունների շարահյուսական առանձնահատկությունները»: Բայց «... դերանունների քերականական բնույթի ընդհանրության բացակայության կողքին չունենք քերականական բնույթի ընդհանրության այլ խոսքի մասերի և նրանց համապատասխան հարակից դերանունների միջև» (էջ 43): Ս. Աբրահամյանի մեկնաբանությամբ՝ գոյական դերանունների և անուն գոյականների խոսքիմատային միավորումը քերականական հիմունքով էլ չի արդարացվում, քանի որ թեև սրանք երկուսն էլ ունեն թվի և հոլովի քերականական հատկանիշներ և նախադասության մեջ նույն պաշտոնները են վարում, սակայն այս ընդհանրությունների մեջ բացարձակապես նույնական չեն:

Ս. Աբրահամյանը դերանուններին և սրանց հարաբերակից խոսքի մասերի քերականական տարբերություններից հարկ է համարել հիշատակել 7 դեպք, որոնցից չորսը վերաբերում են անուն գոյականի և դերանուն գոյականի քերականական տարբերություններին՝ որոշ (ուշադրություն դարձրեք՝ որոշ) կամ մի քանի դերանուններ 1. ունեն դերանվանական հոլովում, 2. կամ ուղղակի չեն հոլովվում, 3. չունեն ուղղական հոլով և 4. հոգնակին եզակի ուղղականի ձևից չեն կազմում (էջ 44): Ուրեմն այս, կարելի է ասել,

քերականական աննշան տարբերությունները ըստ Աբրահամյանի և այլոց պնդման տեսականորեն խանգարում են գոյական դերանունները անուն գոյականների հետ քերականական նույն կարգի բառեր ճանաչելուն, բայց այն, որ ածական ու մակբայ դերանունները ո՛չ թիվ ունեն և ո՛չ էլ հոլովում և նախադասության մեջ էլ վարում են ոչ թե գոյականական, այլ ածականական ու մակբայական պաշտոններ, բնավ տեսականորեն չեն խանգարում գոյական դերանունը ածական և մակբայ դերանունների հետ միասին քերականական նույն կարգի բառեր համարելուն:

Ս. Աբրահամյանի հիշատակած անվան և դերանվան քերականական տարբերություններից մեկն էլ այն է, որ թվականը դառնում է միայն որոշիչ, բայց ոչ պարագա, մինչդեռ այսման, այդման, որման և այլ թվական դերանունները դառնում են նաև բայի լրացում՝ պարագա. «օր. այսման մարդ, այդման գիրք, այդման աշակերտ, այլև՝ այդման խոսել, այսման աշխատել, որման պատասխեց և այլն» (էջ 45):

Այս և այն դատողությունները, որ անում է Ս. Աբրահամյանը ածականի ու ածական դերանունների կապակցությամբ, դարձյալ պայմանավորված են ածականի ու թվականի՝ մի կողմից, և դերանվան՝ մյուս կողմից, բառային ու խոսքիմաստային իմաստների փոխհարաբերությամբ:

Թվականն ածականից տարբերվող իր բառային առանձնահատուկ նշանակության պատճառով նախադասության մեջ սովորաբար լինում է քանակական որոշիչ (հինգ մարդ), մինչդեռ գործողությունը որոշվում է ոչ թե քանակով, այլ տևողությամբ կամ կրկնվածությամբ, ուստի կարելի է ասել՝ հինգ ժամ խոսեց, կամ հինգ անգամ խոսեց: Ածականն այս սահմանափակումը չունի, կարելի է ասել և՛ լավ մարդ, և՛ լավ խոսեց:

Հետևաբար երբ ասվում է այսման մարդ և այսման խոսել, այս կապակցությունների այսման-ը ածականական արժեք ունի, այսման խոսել կարող է նշանակել՝ այսման ժամ, այսման տևողությամբ, կամ ուղղակի՝ շատ, բիչ կարճ, երկար և այլն, բայց ոչ այսման անգամ: Իսկ եթե այդ այսման-ը իրոք թվային հատկացություն ստանձնի, ապա թվականների պես նա էլ կկապակցվի անգամ բառին, և կստացվի՝ այսման անգամ խոսել, որ նշանակում է երկու, երեք, հսան և այլն անգամ խոսել:

Այս կարգի շարահյուսական, այլև ձևաբանական տարբերություններ կարելի է ցույց տալ ոչ միայն դերանվան և նրա հարա-

բերակից անուն խոսքի մասի միջև, այլև նույն անվան խոսքի մասի իմաստային տարբեր շրջաններն զբաղեցնող բառախմբերի միջև։

Ահա թե ինչու մեզ համար անհավատալի է հնչում հայագետի այն եզրակացությունը, թե «Դերանունների և հարաբերակից խոսքի մասերի քերականական բնույթի այս թեկուզ և համառոտ համեմատությունից երևում է, որ քերականական ընդհանրություններ չկան նաև դերանունների ու հարաբերակից խոսքի մասերի միջև։ Ուրեմն, եթե դերանունները մասնատենք և դատենք այդ խոսքի մասերի շարքը, ապա դրանով իսկ կառաջացնենք ձևաբանական ու շարահյուսական տարբերություններ մյուս խոսքի մասերի մեջ» (էջ 46)։

Մեր խորին համոզմամբ դերանունները, բոլորն ի մի հավաքած մեկ խոսքի մասի մեջ, շատ ավելի ամեն կարգի ու այդ թվում նաև «ձևաբանական ու շարահյուսական տարբերություններ» են ունենում, քան մյուս խոսքի մասերի վրա բաշխելիս։ Ուստի դերանունների այդ հատկանիշը չէ, կամ նաև այդ հատկանիշը չէ, որ պիտի վկայակոչվի նրանք մի խոսքի մասի մեջ համախմբելու տեսակետի օգտին։ Լեզվաբանները վաղուց գտել են այդպիսի տարբերակիչ հատկանիշ, այն էլ իրոք էական հատկանիշ, դա իմաստային հատկանիշն է, որին էլ համամիտ է Ս. Աբրահամյանը։

Այսպես, ուրեմն, շատ ու շատ լեզվաբանների պես առաջնորդ ունենալով այն տվյալությունը, թե «...դերանվան, որպես խոսքի մասի որոշման հարցում քերականական հատկանիշները երկրորդական են, և կարևորը նրանց իմաստային կողմն է, իմաստային առանձնահատկություններն են»՝ Ս. Աբրահամյանն անցնում է այդ իմաստայինի վերլուծությանը, բայց քանի որ դարձյալ իմաստային հատկանիշով, ինչպես մեզ հայտնի է, շատ լեզվաբաններ էլ այդ թվում և Մ. Աբեղյանը, դերանունները չեն համարում առանձին խոսքի մաս, այլ դրանք բաշխում են մյուս խոսքի մասերի վրա, մեզ մնում է պարզել, թե ով ինչ է հասկանում՝ «ըստ նշանակության» կամ «ըստ իմաստի» ասելով։

Անուն խոսքի մասերի և սրանց հարաբերակից դերանունների իմաստային ընդհանրությունները Աբեղյանը համարում է էական և սրանք դասում է նույն խոսքի մասերի շարքը, իսկ Ս. Աբրահամ-

յանը, վկայակոչելով այլ հայագետների[2], էական է համարում դերանց իմաստային տարբերությունները և փորձում է դերանուններ մեջ տեսնել իմաստային մի այլ ավելի էական ընդհանրություն: Նախ անուն խոսքի մասերի և դերանունների իմաստային տարբերությունների մասին:

Մեր կարծիքով, ճիշտ չէ անվան և դերանվան իմաստային տարբերությունները բացատրելիս հատուկ և հատարակ գոյական անունները գոյական դերանվան հավասարապես հակադրելը և այդ հակադրության մեջ հատուկ անունների իմաստային կառուցվածքը հասարակ անուններին հավասարեցնելը: Մի բան, որ տեղ է գտել Ս. Աբրահամյանի վերլուծություններում (տե՛ս էջ 49):

Նյութական նշանակության խոսքի մասերի և սրանց հարաբերակից դերանունների իմաստային առնչության հարցը քննելիս, մեջ բերելով Վ. Ի. Լենինի հայտնի դիտողությունը, Աբրահամյանը վերահաստատում է այն կարծիքը, թե դերանունները չլինելով առարկայի և նրա հատկանիշի անուններ, ի հակադրություն անունների, այդ հասկացություններն արտահայտում են ամենաընդհանուր կերպով, բացի այս, կան որոշ քանակի դերանուններ էլ, որոնց իմաստային հարաբերակցությունը մյուս խոսքի մասերի նկատմամբ այնքան անորոշ է, որ այդպիսի իմաստային ընդհանրացում դժվար է կատարել, ուստի իմաստային մոտեցմամբ դերանունները մյուս խոսքի մասերի վրա բաշխելը անհնար է կամ պարզապես սխալ: Իմաստային տեսակետից ավելի էական է բոլոր կարգի դերանունների առարկայական և հատկանշային իմաստները ամենաընդհանուր կերպով, առանց տարբերակման ու անվամանման, արտահայտելու առանձնահատկությունը, որով նրանք հակադրվում են մյուս խոսքի մասերին և միավորում իրար: Բայց քանի որ նյութական ընդհանուր իմաստներ կարող են արտահայտվել նաև այլ խոսքի մասերով, ասենք, գոյական անուններով (մարդ, բաճ և այլն), «Այստեղից միայն մեկ հետևություն կարելի է անել. ընդհանուր կամ չտարբերակված իմաստը դերանվան միակ առանձնահատկությունը չէ, այլ առանձնահատկություններից մեկը: Դերանվան, որպես խոսքի մասի, մյուս առանձնահատկությունը,— վերջապես ամփոփում է հեղինակը,— հանդիսանում է առարկան

---

[2] Գ. Սևակ, *Ժամանակակից հայոց լեզվի դասընթաց*, Երևան, 1955 թ., Բ. Վերդյան, *Դերանվան որոշման հարցի շուրջը (ՀՍՍՀ ԳԱ «Տեղեկագիր» (հաս. գիտ.) 1953, № 8)*:

կամ հատկանիշը որևէ հարաբերությամբ ցույց տալը, այսինքն՝ հարաբերության իմաստը» (էջ 58)։ Հետևաբար դերանուններն իրար միավորողը և նրանց նյութական մյուս խոսքի մասերին հակադրողը դերանունների՝ իրարով պայմանավորված հետևյալ երկու իմաստային հատկանիշներն են՝ իմաստի ընդհանրությունը և այդ իմաստի (առարկա, հատկանիշ) «որևէ հարաբերությամբ ցույց տալը, այսինքն՝ հարաբերության իմաստը»։

«Այսպիսով, դերանուն կոչվում են այն բառերը, որոնք ունենալով ընդհանուր, չտարբերակված իմաստ, ոչ թե անվանում են առարկան, հատկանիշը, այլ դրանք ցույց են տալիս կամ ակնարկում են որևէ հարաբերությամբ»[3]։

Եթե դերանունները իրոք մի բառակարգ են և ունեն կարգային կամ խոսքիմաստային իմաստ, ապա այդ վերոհիշյալ սահմանմամբ բնութագրված իմաստն է։

Բայց ձեզ չի թվո՞ւմ, որ դերանունները ըստ իմաստի մեկ խոսքի մաս համարող լեզվաբանները, որոնց թվում և Ս. Աբրահամյանը, իմաստ ասելով՝ մի քիչ ուրիշ բան են հասկանում։ Պահպանվո՞ւմ է արդյոք դասակարգման իմաստային սկզբունքը, երբ դերանունների մասին խոսելիս ասվում է, թե «...դերանվան և նյութական իմաստ ունեցող մյուս խոսքի մասերի հակադրությունն ու տարբերությունը որոշվում է ոչ թե ինչ ցույց տալու, այլ ինչպես ցույց տալու հիման վրա։ Մի կողմից գոյականը, ածականը, թվականը, մակբայը, մյուս կողմից դերանունը ցույց են տալիս առարկա, հատկանիշ՝ առաջիններները անվանելով դրանք, իսկ դերանունները՝ առանց անվանելու, այլ այս կամ այն հարաբերությամբ»[4]։

ՍՍՀՄ ԳԱ լեզվաբանության ինստիտուտի հրատարակած «Общее языкознание, внутренняя структура языка» (1972) գրքում բառերն ըստ իրենց իմաստային կառուցվածքի և լեզվի ներկառուցվածքային գործառության հենարկված են հետևյալ խմբավորման.

«Յանկացած լեզվի բառացանկի (вокабуляр-ի) բառային

---

[3] *Ս. Գ. Աբրահամյան, Ժամանակակից հայերենի քերականություն, Երևան, 1969, էջ 108։*

[4] *Ս. Գ. Աբրահամյան, Չբեկվող խոսքի մասերը և նրանց բառական ու քերականական հատկանիշների փոխհարաբերությունը ժամանակակից հայերենում, Երևան, 1965, էջ 55։*

միավորները ըստ իմաստային բովանդակության և լեզվում կատարած գործառության բաժանվում են չորս հիմնական դասի.

1. Բառային լիիմաստ բառեր, որոնք օժտված են լրիվ իմաստային կառուցվածքով...

2. Բառային թերիմաստ բառեր, որոնք իմաստային ոչ մի կառուցվածք չունեն և լեզվում կատարում են սոսկ անվանական-ճանաչողական դեր. դրանք այսպես կոչված հատուկ անուններն են...

3. Բառ նշաններ, որոնք չունեն բառային նշանակության հիմքում ընկնող սեփական առարկայա-տրամաբանական բովանդակություն... (ես, դու, նա, այնտեղ, այստեղ, այսօր, երեկ և այլն),

4. Բառ նշաններ, որոնք իրենց բովանդակությունն ստանում են բացառապես շարակարգային գործառության մեջ, կախված սրանց կապակցվող միավորներից, դրանք այսպես կոչված կապակցական բառերն են...» (էջ 446—448):

Ինչպես տեսնում ենք, իմաստային կառուցվածքով և լեզվի ներկառուցվածքային գործառությամբ որոշ այլ կարգի բառերի հետ մի դաս կազմող դերանունները հակադրված են ոչ թե խոսքի մասերին, այլ նյութական և ձևական կամ քերականական նշանակության երեք ուրիշ դասեր կազմող բառախմբերին, ուստի եթե այդ հակադրությունն ունի իրոք իմաստային հիմունք, ապա այն խոսքիմաստային չէ, որովհետև նրանք չունեն և նրանցում չի կարելի ցույց տալ բոլոր դերանուն բառերի իմաստներից աբստրահված մի ընդհանուր կատեգորիալ իմաստ:

Դերանունների վերաբերյալ Ս. Աբրահամյանի հետ մեր բանավեճն ավարտելուց առաջ մեզ մնում է կատարել մի հարցադրում ևս և այս հարցն համարել ավարտված: Եթե բառերի խոսքիմաստային իմաստը սրանց բառական իմաստներից աբստրահված ընդհանուր իմաստն է և «իր թե՛ հիմունքով և թե՛ էությամբ բառական է»[5], ապա դերանունների խոսքիմաստային իմաստը բառային ի՞նչ իմաստներից է աբստրահված, երբ դերանունը չի արտահայտում առարկայական ու հատկանշային, ասել է թե բառային և ոչ մի կոնկրետ իմաստ: Ինչպես հասկանալ չեղած բառային իմաստներից խոսքիմաստային ընդհանուր իմաստի աբստրահումը:

Մեզ պարզ է, թե այս հարցին ինչ պատասխան կտա մեր ընդդիմախոսը: Շատերը, այդ թվում և Ս. Աբրահամյանը, ունեն

---

[5] Տե՛ս նշվ. աշխ., էջ 51:

դերանվան բառային ու խոսքիմաստային իմաստների իրենց ըմբռնումը։

Եթե, ասենք, Հր. Աճառյանը, ինչպես և ուրիշները, դերանվան մեջ չեն տեսնում նյութական նշանակություն և նրա տարբեր տեսակների մեջ գտնում են միայն առարկայականության և հատկանշայնության խոսքիմաստային ընդհանուր իմաստներ և ըստ այդմ զանազանում են գոյական և ածական դերանուններ, ապա Ս. Աբրահամյանը, մի շարք այլ լեզվաբանների պես, դերանունները համարում է նյութական նշանակության բառեր և սրանց արտահայտած առարկայական ու հատկանշային ընդհանուր իմաստներն էլ համարում է սրանց բառային իմաստը։ Այլ կերպ ասած՝ այն իմաստները, որոնք գոյականի, ածականի և մակբայի համար խոսքիմաստային իմաստ են, դերանունների մեջ դառնում են բառային իմաստ, իսկ դերանուններն այդ առարկայական ու հատկանշային իրենց ընդհանուր նշանակություններից աբստրահում են մի այլ կարգի ավելի ընդհանուր խոսքիմաստային իմաստ, որը նրանց՝ առարկաներն ու հատկանիշները ոչ անվանողաբար, այլ որևէ հարաբերությամբ արտահայտելու իմաստն է։ Կա՞ արդյոք մի այսպիսի նոր աստիճանի իմաստային վերացարկում, թե պարզապես գործ ունենք իմաստների շփոթի ու իմաստ կամ նշանակության տերմինի չարաշահման հետ։ Եթե կա այսպիսի մի նոր աստիճանի վերացարկում, որը դառնում է դերանվանական խոսքիմաստային իմաստ, այդ դեպքում այդ վերացարկումը ինչո՞ւ խոսքիմաստային տարբերակիչ արժեք չունի անուն խոսքի մասերի ներսում։ Չէ՞ որ սրանք էլ հակադրվում են դերանվանը իրենց անվանելու և հասկացությունները անվանողաբար և ոչ թե հարաբերությամբ ցույց տալու «իմաստային հատկանիշներով». այդ հակադրության մեջ նրանք էլ պիտի դերանունների պես ներկայանան մեկ միասնական խոսքիմաստային իմաստով, այսինքն՝ անուն խոսքիմաստային իմաստով։ Կարծեմ, մեր ասելիքը պարզ է. եթե կա մեկ դերանուն խոսքի մաս և դերանվանական խոսքիմաստային մեկ իմաստ, ապա պետք է լինի նաև մեկ անուն խոսքի մաս և անվանական մեկ խոսքիմաստային իմաստ։ Իսկ եթե չկա անուն խոսքի մաս և անվանական խոսքիմաստային իմաստ, այլ դրա փոխարեն կան գոյական, ածական, թվական, մակբայ խոսքի մասեր և խոսքիմաստային այդքան էլ իմաստներ, ապա պետք է լինեն նաև գոյական, ածական, թվական, մակբայ դերանուններ կամ այդքան դերանուն խոսքի մասեր և այդքան էլ դերանվանա-

կան խոսքիմասային իմաստներ, այլապես մեր դասակարգումը չէր ունենա ոչ մի տրամաբանական հիմունք, որքանով էլ այն ապահովագրվի դասակարգման տարբեր աստիճաններում տարբերակիչ այլ չափանիշներով օժտված լինելու սկզբունքով, և ապա, որ ավելի էական է, կվերանա խոսքիմասային իմաստ, հետևաբար նաև խոսքի մաս լեզվական կարգի բովանդակությունը, այն կդառնա անորոշ, ոչ համակարգային և անբնութագրելի ու անսահմանելի։

Դերանվան խոսքիմասային արժեքի վերաբերյալ մեր այս և նման կարգի առարկությունները, իհարկե, չեն վերաբերում հեղինակի՝ արդի հայերենի դերանունների տեսակավորմանը, սրանց կազմութիւնը, ոճական կիրառութիւններին ու այլ խոսքի մասերի հետ ունեցած իմաստային ու գործառական փոխհարաբերութիւններին վերաբերող համարյա ապառիչ նկարագրութիւնը։

Ս. Աբրահամյանը խոսքի մասերը քննարկման առարկա է դարձրել իր հաջորդ՝ «Ժամանակակից հայերենի չբեքվող խոսքի մասերը» (Երևան, 1959 թ.) աշխատութիւնում։ Այս գրքում շոշափած մեզ հետաքրքրող հարցերին նա անդրադարձավ նույն թեմային վերաբերող իր մի այլ, ավելի ծավալուն և ամբողջական աշխատութեան մեջ, որի մասին մենք արդեն առիթ ենք ունեցել խոսելու։

Այդ աշխատութիւնը «Չբեքվող խոսքի մասերը և նրանց բառական ու քերականական հատկանիշների փոխհարաբերութիւնները ժամանակակից հայերենում» ուսումնասիրութիւնն է։

Այստեղ խոսքի մասերի արդի ըմբռնումներն ու նրանց դասակարգման ձանազան սկզբունքները վերլուծելիս, հեղինակը շոշափում է հետևյալ տեսական հարցեր. 1. «խոսքի մասերի և բառային կազմի փոխհարաբերութիւնը», 2. «բառականն ու քերականականը խոսքի մասերի մեջ», 3. «աբստրահման ու հակադրութիւնների տարբեր մակարդակներն ու բնույթը խոսքի մասերի համակարգում»։ Այս հարցերի պարզաբանումից հետո, որպես եզրահանգութիւն և սեփական հայացքների գործնական կիրառումը հայերենի լեզվական նյութի վրա, ներկայացնում է իր խոսքի մասերի աստիճանական դասակարգման սկզբունքներն ու գծապատկերը։

Իր դասակարգումը նախորդների կողմից թույլ տրված սխալներից ու թերութիւններից զերծ պահելու համար Ս. Աբրահամյանը հանգամանորեն վերլուծում է խոսքի մասերի դասակարգման

մեջ եղող տարակարծությունների սուբյեկտիվ և օբյեկտիվ պատճառները։

Հեղինակի հիշատակած սուբյեկտիվ պատճառներից առաջինը, որն էլ, հավանաբար, խոսքի մասերի դասակարգման տարակարծությունների հիմնական պատճառներից մեկն է, եթե ոչ ամենահիմնականը, «լեզվի, իբրև լեզվաբանության առարկայի, տարբեր ըմբռնումներն» են, որոնք դառնում են ելակետ խոսքի մասերի որոշման համար։ Եվ քանի որ «լեզվի, իբրև լեզվաբանության ուսումնասիրության առարկայի, միակողմանի ըմբռնումը ստեղծում է խոսքի մասերի նույնպիսի միակողմանի ըմբռնում», պետք է այդ հնարավոր սխալից խուսափելու համար հասնել լեզվի էության ճիշտ գիտակցման։ Սակայն «Բանն այն է, որ լեզվաբանությունը մինչև այժմ մի ընդհանուր կարծիքի չի եկել իր ուսումնասիրության առարկայի՝ լեզվի էության և հենց իր իսկ լեզվաբանության էության, նրա բուն նպատակի հարցում» (էջ 38)։

Այս իրողությունը ոչ միայն իրավունք է տալիս Աբրահամյանին, այլև դառնում է տեսական հիմունք՝ լեզվի էության տարբեր ըմբռնումների դիրքերից կատարված համարյա բոլոր դասակարգումները կա՛մ միակողմանի ու անկատար, կա՛մ, պարզապես, սխալ ու անընդունելի ճանաչելու համար։

Ս. Աբրահամյանն, այնուամենայնիվ, հետևում է այն լեզվաբաններին, «որոնք լեզուն բնորոշում են նրա հաղորդակցման ֆունկցիայով և այն քննում են մտածողության հետ անխզելի կապի մեջ, խոսքի մասերի բնորոշման մեջ հատուկ նշանակություն են տալիս նրանց իմաստային կողմին» (էջ 38—39)։

Լեզվի էությունն ու լեզվաբանության բուն նպատակը համեմատաբար ճիշտ ըմբռնող այս լեզվաբաններն էլ, ըստ Աբրահամյանի, խոսքի մասերի դասակարգման հարցում միատեսակ մոտեցում չունեն. «ոմանք իբրև խոսքի մասերի որոշման հիմունք ընդունում են միայն բառական ընդհանուր-իմաստը, ուրիշները դրա հետ միասին նաև ձևաբանական ու շարահյուսական, կոնտեքստային հատկանիշները» (էջ 39)։

Աբրահամյանի կարծիքով՝ «խոսքի մասերի տարբերությունների և ընդհանրությունների քննությունը ցույց է տալիս, որ նրանց դասակարգման խնդրում առավել մեծ տեղ պետք է տալ բառերի ընդհանուր իմաստին» (էջ 54)։ «Մասնավորապես նյութական իմաստ ունեցող խոսքի մասերի որոշման հիմքում պետք է դնել բառերի ընդհանուր խոսքիմասային իմաստը, որպես դա-

սակարգման ընդհանուր հիմունք...» (էջ 222)։ «Այդ հիման վրա են միմյանցից տարբերվում և միմյանց հակադրվում ածականն ու թվականը, եղանակավորող բառերն ու ձայնարկությունը և այլն» (էջ 54)։

Ընդգծած խոսքի մասերի որոշման մեջ բառերի ընդհանուր իմաստի կատարած այս մեծ դերին՝ Աբրահամյանը, այնուամենայնիվ, գտնում է, «որ բառերի ընդհանուր իմաստը ևս չի կարող հանդիսանալ միակ ընդհանուր հիմունք բոլոր խոսքի մասերի միասնական դասակարգման համար» (էջ 55)։

Այս եղրակացության էլ հեղինակը հանգում է լեզվական փաստերով խոսքի մասերի փոխհարաբերությունների և սրանց էական հատկանիշների վերլուծությամբ։ Այս վերլուծությունները Աբրահամյանին բերում են այն համոզման, որ բառերի ընդհանուր իմաստով կատարված խմբավորումը «չի բացառում, որ առանձին խոսքի մասերի ամբողջական ուսումնասիրման դեպքում հաշվի առնվեն նրանց ունեցած այլ էական հատկանիշները ևս» (էջ 222), և, բացի այս, կան առանձին խոսքի մասեր էլ, ինչպես կապն ու շաղկապը, որոնց որոշման հիմունքը բացարձակապես շարահյուսական է. «Սրանց տարբերությունն ու հակադրությունը չի կարելի որոշել առանց շարահյուսական հատկանիշի» (էջ 54)։

Իր այս դատողություններով Ս. Աբրահամյանը հանգում է մի յուրօրինակ եղրակացության։ Նա գտնում է, որ բառերի իմաստային, ձևաբանական, շարահյուսական և բառակազմական հատկանիշները ո՛չ զատ-զատ և ո՛չ էլ միասին վերցրած չի կարելի համարել խոսքի մասերի դասակարգման ընդհանուր հիմունք։ Այս հատկանիշներից նույնիսկ «բառային ընդհանուր իմաստը» ինչպես ասվեց, խոսքիմասային ընդհանուր տարբերակիչ արժեք չունի, էլ չենք խոսում մյուսների մասին։ Բազմահատկանիշ դասակարգումն էլ «չի արդարացվում ոչ գործնականորեն, ոչ տեսականորեն։ Գործնականորեն այն չի արդարացվում, որովհետև բառերի խմբավորումն ըստ իմաստի, կազմության, ըստ ձևաբանական հատկանիշի և ըստ շարահյուսական հատկանիշի հանգեցնում է տարբեր արդյունքների, որոնք իրար չեն ծածկում, այլ շատ դեպքերում հակասում են» (էջ 55)։ Տեսականորեն այն չի արդարացվում, որովհետև այդ կարծիքը պաշտպանող լեզվաբանները խոսքի մասերի էական հատկանիշներից ոչ թե առանձնացնում են ամենաէականը, դասակարգող արժեք ունեցող հատկանիշը, այլ «բառերի բոլոր հատկանիշները (բառական, ձևաբանական, շարահյու-

ական) միաժամանակ դնելով դասակարգման հիմքում՝ (...) դասակարգման հիմունքը նույնացնում են խոսքի մասերի բոլոր հատկանիշների հետ։ Բնավ անհրաժեշտ չէ և անկարելի է դասակարգվող միավորների բոլոր հատկանիշները դնել դասակարգման հիմքում։ Եվ դասակարգումն այդ հատկանիշներից միայն մեկով կատարելը բնավ մյուսների անտեսում չի նշանակում ընդհանրապես (էջ 61)։

Աբրահամյանի այս մտքի հետագա պարզաբանմանն անծանոթ ընթերցողը չի կարող չզարմանալ, թե խոսքի մասերի որոշման առանձին հատկանիշները և՛ զատ-զատ, և՛ միասնաբար դասակարգման ընդհանուր հիմունք չընդունող լեզվաբանը հանկարծ ինչպե՞ս է գրում, թե «դասակարգումն այդ հատկանիշներից միայն մեկով կատարելը բնավ մյուսների անտեսում չի նշանակում ընդհանրապես»։

*Եթե այս ձևակերպման մեջ այդ ցուցականը չլիներ («այդ հատկանիշներից»), կարելի էր ենթադրել, թե Աբրահամյանը մերժելով բառերի իմաստային, ձևաբանական, շարահյուսական հատկանիշները դասակարգման ընդհանուր հիմունք դարձնելու տեսակետները, գտել է դասակարգման մի այլ ընդհանուր հիմունք։ Սակայն այս «այդ»-ը որոշակի ասում է, որ նա հնարավոր է համարում բառերի խոսքիմաստային իմաստի տարբերակիչ հատկանիշ համարել վերը նշված հատկանիշներից **միայն մեկը**, որը «բնավ մյուսների անտեսում չի նշանակում»։ Ինչպես հասկանալ այս «ինքնահակասումը»։*

Այս հարցին պատասխան տալուց առաջ անհրաժեշտ է պարզաբանել այն հանգամանքները, որոնք Աբրահամյանին բերել են այս արտաքուստ հակասական թվացող եզրակացությանը։

Խոսքի մասերի դասակարգման գիտական հիմունքը որոշելու համար Աբրահամյանը անհրաժեշտ է համարում նախ պարզել իր ուսումնասիրության առարկայի, այսինքն՝ ավանդական քերականությամբ պատկերված խոսքի մասերի էության հարցը, այլ կերպ ասած՝ սրանց բնույթի և խոսքիմաստային ընդհանուր իմաստի ըմբռնման հարցը։ «Ինչպիսին են իրենց բնույթով խոսքի մասերը. բառակա՞ն կարգեր, քերականակա՞ն, թե բառա-քերականական», հարցնում է նա և անմիջապես պատասխանում. «Այս հարցի մասին միասնական կարծիք գոյություն չունի» (էջ 41)։

Բերելով լեզվաբաններ Մ. Ի. Ստեբլին-Կամենսկու, Ն. Ս. Պոսպելովի, Օ. Պ. Սունիկի, Ա. Ա. Ռեֆորմատսկու, Վ. Ի. Կոդու-

խոսքի կարծիքները, որոնք բառերի խոսքիմասային իմաստը համարում են քերականական իմաստ, իսկ խոսքի մասերը՝ «մաքուր քերականական կարգեր (Սունիկ) և սրանց հակադրելով Ա. Ի. Սոբոլևսկու, Ե. Վ. Կրոտևիչի կարծիքները, որոնք խոսքիմասային իմաստը համարում են բառական իմաստ, Աբրահամյանը փորձում է հիմնավորել վերջինիս ճշմարտացիությունը։

Խոսքիմասային իմաստը ոտնձգություն համարելու տեսակետն, ըստ Աբրահամյանի, հիմնված է լեզվական բոլոր կարգի վերացարկումները որպես քերականական իրողություններ դիտելու սխալ մոտեցման վրա։ Լեզվի մեջ մասնավորից կամ կոնկրետից վերացարկմամբ ու ընդհանրացմամբ առաջանում են լեզվական տարբեր հասկացություններ ու կարգեր, որոնք վերաբերում են լեզվի կառուցվածքի ոչ միայն քերականական, այլև հնչյունական ու բառային միավորներին (հնչույթ, ձայնավոր, բաղաձայն, ձևույթ, ածանց արմատ, բառ և այլն)։

Խոսքի մասերի իմաստը քերականական իմաստ չէ, բառային է, քանի որ նրա հիմքում չկան մասնավոր քերականական իմաստներ, որոնցից պիտի վերացարկվեր այն։

Երկրորդ, խոսքիմասային իմաստը համարել քերականական իմաստ նշանակում է խզել կապը բառայինի ու քերականականի միջև, չնջել քերականական իմաստի որոշման հիմունքը։

Երրորդ, բառերի խոսքիմասային իմաստը համարել քերականական՝ նշանակում է խոսքի մասերի շարքից դուրս թողնել այն բառերն ու բառարմատները, որոնք քերականական դեր չունեն (ձայնարկություններ, եղանակավոր բառեր և այլն) (տե՛ս էջ 48—50)։

«Այսպիսով,— եզրակացնում է Աբրահամյանը,— խոսքիմասային իմաստը ոչ թե քերականական, այլ տվյալ խոսքի մասի մեջ մտնող բառերի ընդհանուր իմաստն է, բառական իմաստներից կատարված աբստրահում է, և բնականաբար իր թե՛ հիմքով, և թե՛ էությամբ բառական է» (էջ 57)։

Բայց քանի որ «խոսքիմասային իմաստը իր բնույթով ու էությամբ լինելով բառական բարձր մակարդակի վերացություն, ունի նաև քերականական դեր, այն հիմք է հանդիսանում տվյալ խոսքի մասի մեջ մտնող բառերի քերականական փոփոխությունների և ընդհանրապես քերականական կատեգորիաների, քերականական հատկանիշների համար» (էջ 51), ուրեմն «խոսքի մասերը կարելի է համարել բառաֆեռականական կարգեր» (էջ 52)։

Ս. Աբրահամյանի վերոհիշյալ դատողություններն ու պարզաբանումները մեզ ավելի հիմնավոր չեն թվում, քան նրա կողմից այս հարցում քննադատվող կարծիքները: Դժվար թե տարի, ժամ, կամք, միտք, վազք, ընթացք, սպիտակություն գոյականների առարկայականության խոսքիմաստային իմաստի ընդհանրությունը ծառ, քար, ջուր, շուն, լեռ և այլ գոյականների հետ ավելի համոզիչ լինի սրանց բառային իմաստների ընդհանրության մեջ տեսնելը, որպեսի ընդհանրություն շատերը իրավացիորեն չեն էլ տեսնում, քան այդ միասնությունն ու ընդհանրությունը քերականական ընդհանրացում համարելը, որը շատ ակնառու է: Այս հարցում մեզ ավելի համոզիչ է թվում Ա. Ն. Սավչենկոյի պարզաբանումը, ուր բառայինի ու քերականի փոխհարաբերության հարցը ոչ միայն տարբեր խոսքի մասերի, այլև նույն խոսքի մասի ներսում այդպիսի միօրինակ ու կատեգորիկ լուծում չունի: Սավչենկոյի պնդումն այն մասին, թե «մակբայները չունեն բառային իմաստի միասնական տիպ» և նրանց «հատկանիշի հատկանիշ» հատկացության մեջ միավորելը կատարվում է ոչ թե սրանց իմաստային բովանդակության հիման վրա, այլ բային, մասամբ էլ ածականին, ստորադասվելու քերականական առանձնահատկությամբ, կամ՝ «ոչ թանձրացական գոյականները մաքուր քերականական ենթադաս (подкласс) են»[6] և այլն մեզ համար կասկածից վեր են, թեև Աբրահամյանի համար այս կարգի դատողությունները ոչ միայն անընդունելի են, այլև խոսքի մասերի ճիշտ որոշման համար մոլորեցնող:

Բառերի խոսքիմաստային իմաստները բառային իմաստներից վերացարկված ընդհանուր իմաստներ համարելը այս տեսակետը պաշտպանող լեզվաբաններին (որոնց թվում նաև Ս. Աբրահամյանին) բերում է իրենց համար մի ցանկալի եզրակացության, «խոսքի մասեր են կազմում լեզվի բառային կազմի մեջ մտնող բոլոր բառերը, ամբողջ բառային կազմը, և ամեն մի բառ, ածկախ նրա բնույթից, խոսքի մասերի կազմում պետք է գտնի իր տեղը»[7]:

Այս նշանակում է՝ տեսականորեն մերժված են «խոսքի մաս» և «խոսքի մասնիկ» հակադրությունը, խոսքի մասեր և սրանցից

---

[6] Տե՛ս «Вопросы теории частей речи», 1968, էջ 188—189:

[7] Ս. Գ. Աբրահամյան, նշվ. աշխ., էջ 50:

դուրս գտնվող բառատեսակների բաժանումը և նման կարգի բոլոր դատողությունները։

Քանի որ արդեն յուրովի ապացուցված է, որ բոլոր բառերը խոսքի մասեր են, իսկ խոսքիմասային իմաստներն էլ բառային իմաստների վերացարկմամբ առաջացած լեզվական հասկացություններ են, ինքնին հետևում է սրանից, որ բառերը ըստ խոսքի մասերի դասակարգելիս տարբերակիչ հատկանիշ է դառնում բառերի իմաստային հատկանիշը, որի մասին խոսվեց քիչ առաջ։

Ս. Աբրահամյանի վերլուծություններից պարզվեց, որ խոսքի մասերի որոշման մեջ թեև իմաստային սկզբունքը կարևոր ու հիմնական է, բայց բացարձակ ու համընդհանուր չէ։ Կան լեզվի բուն կառուցվածքով կամ խոսքի մասերի համակարգի էությամբ պայմանավորված իրողություններ, որոնք անհնար են դարձնում բոլոր բառերը մի ընդհանուր, ասենք, իմաստային հատկանիշով մի աստիճանի վրա խոսքիմասային դասակարգման ենթարկել։ Ըստ Աբրահամյանի, խոսքի մասերի համակարգի ու նրա զարգացմամբ պայմանավորված այդ օբյեկտիվ հանգամանքները երկուսն են.

«ա) տարբեր խոսքի մասերի պատմական փոխանցումներ և այդ պատճառով հաճախ նրանց ոչ որոշակի սահմանազատվածություն բուն իսկ լեզվի մեջ.

բ) խոսքի մասերի տարբեր բնույթի ու տարբեր մակարդակների հակադրությունները միմյանց նկատմամբ» (էջ 38)։

Խոսքի մասերի համակարգի էությամբ պայմանավորված այս դժվարությունները հաղթահարելու համար Աբրահամյանը խոսքի մասերի որոշման իմաստային սկզբունքին օգնության է կանչում այլ հատկանիշների հիման վրա այս կամ այն խոսքի մասը առանձնացնելու անհրաժեշտության սկզբունքը, որով էլ ահա ձեռնավորվում է այն միտքը, թե «դասակարգումն այդ հատկանիշներից միայն մեկով կատարելը բնավ մյուսների անտեսում չի նշանակում ընդհանրապես»։

Եթե բոլոր բառերը խոսքի մասեր են և իրենցից ներկայացնում են տարբեր բնույթի ու տարբեր մակարդակների հակադրությունների արտահայտություններ, ապա սրանք մի աստիճանի վրա մեկ չափանիշով որոշվել չեն կարող։ Այդ որոշումը պետք է լինի բազմաստիճան և յուրաքանչյուր աստիճանում պիտի գործի տվյալ հակադրությունը բնորոշող էական տարբերակիչ մեկ չափանիշ։

Այսպիսով, Աբրահամյանը հանգում է խոսքի մասերի իր աստիճանական դասակարգման մտքին, որի նպատակն է.

«1. Հաշվի առնել խոսքի մասերի և նրանց հակադրությունների տարբեր բնույթները։

2. Հաշվի առնել խոսքի մասերի հակադրությունների տարբեր մակարդակները կամ աստիճանները։

3. Յուրաքանչյուր մակարդակում, դասակարգման յուրաքանչյուր օղակում ունենալ հիմունքի միատեսակությունն։

4. Ընտրել դասակարգման այնպիսի հիմունք, որի շնորհիվ ավելի ճիշտ կերպով բացահայտվեն խոսքի մասերի օբյեկտիվորեն գոյություն ունեցող հակադրությունները և դրանով իսկ յուրաքանչյուր խոսքի մասի բուն էությունը։

5. Բացահայտել բոլոր հիմնական հակադրությունները, քանի որ այդ դեպքում մեր պատկերացումը խոսքի մասերի, իբրև ֆունկցիոնալ կատեգորիաների, ավելի ճիշտ ու ավելի ամբողջական կլինի, ավելի ճիշտ կորոշվի յուրաքանչյուր խոսքի մասի տեղը թե՛ ավյալ խմբում և թե՛ խոսքի մասերի ամբողջ համակարգում» (էջ 76—77)։

Եթե նկատի ունենանք այն հանգամանքը, որ Աբրահամյանն իր այս նպատակադրումն իրագործելուց հետո, հայերենի խոսքի մասերը աստիճանական երկանդամ հակադրությամբ, յուրաքանչյուր աստիճանում դասակարգման հիմունքի միատեսակության պահպանումով, կամ դասակարգիչ մեկ էական հատկանիշի կիրառմամբ ատանում է համարյա թե նույն խոսքի մասերը, նույն բնորոշմամբ, ապա այս փաստից առնվազն կարելի կլինի եզրակացնել, որ Աբրահամյանի վերոհիշյալ պահանջները ժամանակին կատարվել են նաև ավանդական քերականագիտության մեջ, խոսքի մասերը դասակարգելիս։ Աբրահամյանն ինքն էլ նկատում է, որ «Քերականության պատմության մեջ եղել են խոսքի մասերի այս կամ այն չափով աստիճանական կերպով բաժանումների փաստեր» (էջ 75), և, իբրև օրինակ, հիշում է Մ. Աբեղյանի, Վ. Վինոգրադովի, Էդ. Աղայանի դասակարգումները։ Իհարկե, այս անունների ցանկը կարելի է շարունակել, բայց էականը այդ չէ։ Բանն այն է, որ Աբրահամյանն աշխատում է ստեղծել աստիճանական դասակարգման տեսություն, և փորձում է այդ տեսությունը հետևողականորեն գործնականում կիրառել։

Աբրահամյանի դասակարգումն իրենից ներկայացնում է հետևյալ պատկերը։

Առաջին աստիճանում հայերենի բոլոր բառերը եռանդամ հակադրությամբ «ըստ բառերի իմաստի ընդհանուր բնույթի», ապա

նաև «լեզվի հաղորդակցական ֆունկցիաների մեջ ունեցած դերով» բաժանվում են երեք մեծ խմբի՝

ա) նյութական իմաստ ունեցող բառեր (խոսքի մասեր),

բ) քերականական իմաստ ունեցող բառեր (խոսքի մասեր) և

գ) վերաբերմունքային իմաստ ունեցող բառեր (խոսքի մասեր)»։

Այս երեք բառախմբերից հաջորդ աստիճաններում երկանդամ հակադրությամբ աստիճանաբար առանձնացվում են հետևյալ խոսքի մասերը։

Նյութական իմաստ ունեցող բառերի ներսում, հակադրվելով իրողություններն անվանումով արտահայտող բառերին, անջատվում են դերանուններ, որպես «իրողությունները ոչ անվանումով, այլ հարաբերությամբ ցույց տվող բառեր»։

Անվանական բառախմբի ներսում, որպես ինքնակա իրադրություն կամ առարկա անվանող բառեր, հակադրվելով հատկանիշ նշանակող բառերին, անջատվում են գոյականներ։

Իբրև գործողության հատկանիշ նշանակող բառեր, հակադրվելով առարկայի հատկանիշ նշանակող բառերին, անջատվում են մակբայներ։

Հակադրվելով առարկայի կայուն հատկանիշ անվանող բառերին, որպես առարկայի փոփոխվող հատկանիշ նշանակող բառեր, անջատվում են բայերը։

Նյութական իմաստ ունեցող բառերի բաժանման վերջին աստիճանում «առարկայի հարաբերականորեն կայուն հատկանիշ անվանող բառերն» էլ ըստ հատկանիշի իմաստի՝ որակական հատկանիշ—թվային հատկանիշ հակադրության, բաժանվում են ածական և թվական խոսքի մասերի։

«Քերականական իմաստ ունեցող բառերը ըստ իրենց քերականական դերի բաժանվում են երկու խոսքի մասի՝ ա) կապ և բ) շաղկապ»։

«Վերաբերմունքային իմաստ ունեցող բառերը ըստ իմաստի բաժանվում են երկու խմբի կամ երկու խոսքի մասի՝ ա) եղանակավորող բառեր և բ) ձայնարկություններ» (էջ 77—80)։

Սույն դասակարգումը Աբրահամյանը ներկայացնում է առանձին գծապատկերով (էջ 81)։

Խոսքի մասերի աստիճանական դասակարգումը հեղինակին հանգեցնում է տեսական մի քանի եզրակացությունների։

Այս դասակարգումը բացահայտում է խոսքի մասերի ընդ-

հանրությունների և հակադրությունների տարաստիճան և տարաբնույթ լինելը։ Ընդ որում՝ հակադրությունները լինում են անմիջական և ոչ անմիջական։

«Տարբեր մակարդակներում խոսքի մասերի դասակարգման հիմունքը կարող է տարբերվել մյուսներից» (էջ 82)։

Իսկ ինչո՞ւ է պետք եղել Ս. Աբրահամյանին այս տեսակետը դրույթը։ Սա խոսքի մասերի համակարգի էությամբ պայմանավորված, նրա համակարգի գիտական վերլուծությունից բխող եզրակացությո՞ւն է, թե հեղինակի կանխակալ դատողությունները հաստատող հնարանք։

Այս հարցի երկու հնարավոր պատասխաններն էլ կարող են փաստարկվել և հիմնավորվել, եթե մեզ հայտնի լինի, թե բառերի ո՛ր հատկանիշներն են, որ ընդհանրապես կամ տվյալ աստիճանում դասակարգող կամ առանձին խոսքի մաս տարբերակող արժեք ունեն։ Լեզվաբանությունն այդ հարցի որոշակի պատասխանը դեռ չի տվել. իսկ կարծիքներ՝ որքան ուզեք։ Բայց մի բան պարզ է. Աբրահամյանը իր դասակարգման քննհանուր իմաստային սկզբունքից շեղվում է և դասակարգման երկու լրացուցիչ դասակարգող հատկանիշներ ևս ընդունում է, որպեսզի խոսքի մասերի իր համալիրում տեղ հատկացնի նաև կապին ու շաղկապին, ապա նաև դերանուններին, որոնք զանազանվում են, առաջիններըը՝ ըստ շարահյուսական գործառության, կամ դերի, երկրորդներն՝ ըստ իրողությունները ոչ անվանումով, այլ որևէ հարաբերակցությամբ ցույց տալու հատկանիշի։ Իսկ թե այդ հատկանիշները իրոք խոսքի մասեր բնորոշող հատկանիշներ են, դրա դրական պատասխանի գիտական միակ հիմունքը այդ խոսքի մասերի առանձին գոյությունն է ավանդական քերականության մեջ. բայց արդյո՞ք նաև լեզվի կառուցվածքում, չգիտենք։

Կարելի է չառարկել Ս. Աբրահամյանի այն դատողությանը, թե «Աստիճանական դասակարգման դեպքում փաստորեն մենք ունենում ենք ոչ թե մեկ, այլ մեկից ավելի դասակարգումներ» (էջ 53)։ Բայց քանի որ հեղինակի շոշափած այս հարցը վերաբերում է խոսքի մասերի որոշման ոչ միայն հիմունքին, այլև մինչ այդ եղած դասակարգումների ամենաավիճելի և հակասական հարցերին, ապա նրա տեսական վերահիշյալ հետևությունները դեռևս քիչ են հարցի հիմնավոր լուծման համար։

Մեզ համար վիճելի ու վերջնականապես չհիմնավորված են մնում Աբրահամյանի այնպիսի դատողություններ, ինչպիսիք են.

«Ինչպես երևում է, բառերի որոշ հատկանիշներ չեն դրվում դասակարգման հիմքում, քանի որ խոսքի մասերի ճանաչման համար ընդհանուր սահմանազատիչ արժեք չունեն» (էջ 83)։

«Այսպես, ածականը և թվականը իրարից տարբերվում են նրանով, թե ինչ հատկանիշ են ցույց տալիս, մինչդեռ ածականի ու գոյականի տարբերությունը որոշելիս առաջինի բուն խոսքիմասային իմաստը կարևոր չէ. կարևորն այն է, որ նա առարկայի հատկանիշ է ցույց տալիս։ Բայց բուն իմաստը բացառիկ կարևորություն ունի ածականի ու թվականի բաժանումը կատարելիս, քանի որ նա միակ չափանիշն է այդ հարցում» (էջ 78)։

Բայց արդյո՞ք չափանիշ է. իսկ ինչո՞ւ ոմանք այդ իմաստային հատկանիշին խոսքիմասային սահմանազատիչ դեր չեն տալիս և ածականն ու թվականը մի խոսքի մասի տարատեսակներ են համարում։ Կամ եթե այս մակարդակում հատկանիշի իմաստային տարբերությունը խոսքիմասային սահմանազատիչ դեր ունի, ապա նախորդ աստիճանում հատկանիշի հատկանիշ նշանակող մակբայների մեջ իմաստային տարբերությունը (ժամանակ, տեղ, չափ, ձև կամ որակ) ինչո՞ւ սահմանազատիչ չէ, և անկախ իմաստից բոլորը մեկ մակբայ խոսքի մաս են ճանաչվում։

Այս կարգի չլուծված և լուծման հարցադրում պահանջող դատողություններից է նրա դերանվան խոսքիմասային իմաստի սահմանազատման վերաբերյալ տված բնորոշումը։ «...Դերանվան և նյութական իմաստ ունեցող մյուս խոսքի մասերի հակադրությունն ու տարբերությունը,—գրում է Աբրահամյանը,—որոշվում է ոչ թե ինչ ցույց տալու, այլ ինչպես ցույց տալու հիման վրա» (էջ 55)։ «Այն (դերանունը,—Հ. Բ.) միանգամից հակադրվում է մի քանի խոսքի մասերի (բայ, ածական, թվական, մակբայ) և նրանցից տարբերվում է ոչ թե ինչ ցույց տալու, այլ ինչպես ցույց տալու հատկանիշով» (էջ 78)։

Որևէ առարկությունից դուրս է այն միտքը, որ դերանունը հակադրվում է մյուս նյութական խոսքի մասերին և մի շարք էական հատկանիշներով կազմում է մի բառախումբ։ Բայց սրանց միավորող այդ հատկանիշները կամ հատկանիշը խոսքիմասային սահմանազատիչ արժեք ո՞ւնի, թե ոչ, միայն «այո՛» պատասխանելով՝ այդ հարցը չի լուծվում։ Այս կապակցությամբ, ինչպես վերն ասվեց, բավական է նկատել աստիճանական դասակարգման մեջ անունների հաջորդ աստիճանում նոր խոսքի մասերի բաժանելու, իսկ դերանունները չտրոհելու փաստը, որպեսզի կասկածի

տակ առնվի դերանվան «ինչպես ցույց տալու հատկանիշի» խոսքիմասային սահմանազատիչ արժեքը։

Դերանուններն անուններից անջատելիս, Աբրահամյանը դերանունների համար հասկացությունը ոչ անվանումով, այլ հարաբերությամբ ցույց տալը համարում է խոսքիմասային տարբերակիչ հատկանիշ, բայց չգիտես՝ ինչո՞ւ անունների համար հասկացության ինչպես առոգաբայտելու հատկանիշը չի դառնում տարբերակիչ հատկանիշ։ Անունները մնում են բառախումբ, իսկ դերանունը՝ խոսքի մաս։ Հաջորդ աստիճանում նյութական նշանակություն անվանող բառերը ըստ այն բանի, թե ինչ են անվանում՝ առարկա՞, հատկանի՞շ հատկանիշի հատկանի՞շ, բաժանվում են նոր խոսքի մասերի, մինչդեռ դերանունների ներսում այս անգամ էլ ինչ նշանակելը որևէ արժեք չի ունենում։ Հետևողականություն չկա, բայց հետևողականորեն ասվում է, որ դերանվան համար ինչ նշանակելը խոսքի մասային հատկանիշ չէ։ Դեռ ավելին. ոչ թե ինչ, այլ «ինչպես ցույց տալը» դերանունների համար դառնում է դերանունները միավորող խոսքիմասային իմաստ. չէ՞ որ նրանք այդ հատկանիշով են հակադրվում անուն խոսքի մասերին և այդ հատկանիշով էլ միավորվում են։ Հասկանալի է, թե այստեղ ինչ արժեք ու բովանդակություն ունի «խոսքիմասային իմաստ» տերմինը։

Ս. Աբրահամյանի խոսքի մասերի աստիճանական դասակարգման այս կարգի հակասություններն ու թերությունները երևի նկատի ունի Մ. Ասատրյանը, որ, ընդհանրապես դրական գնահատելով այդ դասակարգումը, միաժամանակ արդարացիորեն գրում է.

«Այդ դասակարգման մեջ արված է հնարավոր ամեն ինչ ավանդական քերականության մշակած խոսքի մասերի ուսմունքին տրամաբանական հետևողականություն ու գիտական ժամանակակից տեսք տալու համար»[8]։

Այլ կերպ, երևի, դժվար է պատկերացնել աստիճանական դասակարգման արդյունքները, երբ խոսքի մասերի ավանդական սխեմայի պահպանմամբ տարբեր հիմունքներով կատարված «մեկից ավելի դասակարգումները», առանց մի նոր ընդհանուր հիմունքի, պարտադիր կերպով միավորվում են մեկ ընդհանուր աս-

---

[8] Մ. Ասատրյան, *Ժամանակակից հայոց լեզվի ձևաբանության հարցեր*, Ա, 1970, էջ 91։

տիճանական անվանված դասակարգման մեջ և նախորդ բոլոր դասակարգումների թերությունները ու սխալները համարվում են վերացած։

Լեզվի իրական պատկերը նկատի ունենալով և այսպիսի հակասականությունից խուսափելու համար է, որ առանձին լեզվաբաններ «խոսքի մաս» տերմինով անվանում են միայն այն բառատեսակները, որոնք իմաստային և ձևական հակադրմամբ և ընդհանրացմամբ լեզվական խոսքիմասային կարգ են գոյացնում, իսկ այն բառատեսակները (քերականական նշանակության բառեր, ձայնարկություններ, եղանակավոր բառեր ու մասնիկներ), որոնք այդպիսի հակադրությունից ու ընդհանրությունից դուրս են, այլ անվամբ կոչելով («խոսքի մասնիկներ», «սպասարկու» կամ «օժանդակ» բառեր կամ խոսքի մասեր, «եղանակավորող բառեր», «ձայնարկություններ» և այլն), միացնում են խոսքի մասերի համակարգին, որպես բառային կազմի մեջ մտնող այլ բնույթի ու արժեքի բառատեսակներ։ Այդպիսի դասակարգում է կատարել ռուսերենի համար Վ. Վինոգրադովը, նրանից առաջ և հետո՝ նաև ուրիշները։ Հայերենի համար Ս. Աբրահամյանը խոսքի մասերի աստիճանական բաժանման օրինակ է համարում Մ. Աբեղյանի դասակարգումը, որի մասին գրում է. «Թեև այդ դասակարգումն ամբողջությամբ մերժվել է սովետահայ քերականագիտության կողմից՝ խոսքի մասերի մի մասը նրանց համակարգից դուրս թողնելու և դասակարգման սկզբունքի անընդունելի լինելու պատճառով, այնուամենայնիվ այն ունի գիտական հետաքրքրություն, և նրանում մանավանդ գնահատելի է խոսքի մասերը աստիճանական կերպով բաժանելու բուն փաստը, որը խոսքի մասերի համակարգի Աբեղյանի պատկերացման արտահայտությունն է»[9]։

Աբրահամյանն այստեղ շատերի պես տեղին չի գործածում «սովետահայ քերականագիտություն» հասկացությունը։ Աբեղյանի դասակարգումը «ամբողջությամբ մերժվել է» ոչ թե սովետահայ քերականագիտության, այլ առանձին քերականագետների կողմից։ Այդ մասին մենք վերը առիթ ունեցանք խոսելու։ Ինչ վերաբերում է «այնուամենայնիվ այն ունի գիտական հետաքրքրություն» մտքին, պիտի ասենք, որ Աբեղյանի դասակարգումը, ինչպես այն վերլուծելիս տեսանք, որպես հայերենի խոսքի մասերի աստիճանական դասակարգման օրինակ, ավելի տրամաբանական

[9] Ս. Գ. Աբրահամյան, նշվ. աշխ., էջ 75։

ու հետևողական է, քան Ս. Աբրահամյանի այս քննվող դասակարգումը։

Ս. Աբրահամյանն, այնուամենայնիվ, խոսքի մասերի ավանդական համակարգում կատարել է մի նորամուծություն։ Հետևելով հայագիտության, ինչպես և ռուսագիտության մեջ եղանակավորող բառերը առանձին բառատեսակ կամ խոսքի մաս ճանաչելու տեսակետին՝ նա առանձնացրել է հայերենի եղանակավորող բառերը մյուս խոսքի մասերից, քննել սրանց բառային ու քերականական առանձնահատկությունները, սրանց և մյուս խոսքի մասերի բոլոր կարգի փոխհարաբերությունները և եկել այն հաստատ համոզման, որ սրանք չեն կարող նույնացվել ո՛չ մակբային և ո՛չ էլ չթեքվող խոսքի մասերից որևէ մեկին, ուստի և մի առանձին խոսքի մաս են կազմում։

Մակբայներին նույնացվող կամ սրանց մի տեսակը համարվող եղանակավորող բառերը, ըստ Աբրահամյանի, իրականում չեն նույնանում մակբայներին, քանի որ մակբայները՝ 1. «ցույց են տալիս հատկանիշի օբյեկտիվ հատկանիշ», 2. հետևաբար ունեն նյութական իմաստ, 3. «դրվում են հատկանիշ ցույց տվող բառերի վրա» և 4. «կատարում են պարագայի ֆունկցիա», մինչդեռ եղանակավորող բառերը՝ 1. «այս կամ այն երանգն են հաղորդում նախադասության մտքին, խոսողի վերաբերմունքն են արտահայտում այս կամ այն իրողության առարկայի նկատմամբ», 2. «չունեն նյութական իմաստ» 3. «դրվում են գերազանցապես նախադասությունների, ինչպես նախադասության այլ անդամների վրա, անկախ այն բանից, թե վերջիններս ինչ խոսքի մասով են արտահայտված», 4. «նախադասության անդամ չեն լինում» (էջ 503—504)։

Եղանակավորող բառերը, որպես վերաբերմունք արտահայտող բառեր, նմանվում են ձայնարկություններին, սակայն այդ նմանությունը նրանց չի նույնացնում իրար։ Այդ երկու կարգի բառատեսակները, ըստ Աբրահամյանի, տարբեր են ոչ միայն ծագումով՝ ձևով ու կազմությամբ, այլև խոսքիմասային իմաստով։

Ձայնարկությունները զգայական վերաբերմունք, այսինքն՝ «հիացմունք, ուրախություն, զարմանք, ցավ ու վիշտ, զղվանք և այլն» արտահայտող բառեր են, մինչդեռ եղանակավորող բառերը մտածական, դատողական վերաբերմունք, այսինքն՝ «հաստատում, ժխտում, երկբայություն և այլն» արտահայտող բառեր են։

Չնայած այլ խոսքի մասերի հետ իրենց ունեցած մերձավոր

հարաբերությանը և նրանցից «խստորեն սահմանազատված» չլինելուն՝ «եղանակավորող բառերը ժամանակակից հայերենում ինքնուրույն խոսքի մասեր են» (էջ 505), եզրակացնում է հեղինակը, եղանակավորող բառերին տալով հետևյալ սահմանումը՝

«Եղանակավորող բառերն արտահայտում են խոսողի մտածական վերաբերմունքը, որով եղանակավորում կամ երանգավորում են նախադասությունը, նրա որևէ անդամը» (էջ 507):

Եղանակավոր բառերի խոսքի մասերի շարքում գրաված առանձնահատուկ դիրքի վրա ուսագիտության մեջ սկսում են ուշադրություն դարձնել դեռևս 19-րդ դարի սկզբներին: Այդ բառերը, սակայն, իրենց հիմնական մասով կապված լինելով մակբայներին, երկար ժամանակ համարվում էին եղանակական մակբայներ: Վ. Վինոգրադովը, որը խոսքի մասերի իր տեսությունը շարադրելիս գտնում է, որ «խոսքի մասերի առանձնացմանը պիտի նախորդի բառերի կառուցվածքա-իմաստաբանական հիմնական տեսակների որոշումը»[10], ռուսերենում առաջին անգամ մասնիկների (частицы) հետ եղանակավորող բառերը միավորում է բառերի «կառուցվածքաիմաստաբանական» առանձին դասի մեջ, դրանց համար բնորոշ համարելով կապակցական բառերի պես ոչ անվանողական արժեքը, թեև սրանք ավելի բառային են (лексичные), ապա նաև՝ նախադասության անդամ չլինելը: Արտահայտելով «խոսող սուբյեկտի տեսակետը խոսքի և իրականության փոխհարաբերության նկատմամբ», ըստ Վինոգրադովի, «եղանակավորող բառերը դուրս են մնում և՛ խոսքի մասերի, և՛ խոսքի մասնիկների սահմաններից, թեև արտաքուստ կարող են նմանվել թե՛ մեկին և թե՛ մյուսին»[11]:

Այսպիսով, խոսքի մասերի, խոսքի մասնիկների և ձայնարկությունների հետ եղանակավորող բառերն ու մասնիկները Վինոգրադովի խոսքի մասերի համակարգում ներկայացնում են ռուսերեն բառային կազմի «կառուցվածքաիմաստաբանական» չորս դասերից կամ տեսակներից մեկը:

Վինոգրադովն իր «Русский язык» աշխատությամբ, ինչպես և սրա նախորդ հրատարակության («Современный русский язык», 1938) մեջ հարցի պատմության և տեսության շարադրանքից բացի, տալիս է եղանակավորող բառերի նկարագրությունը՝

---

[10] **В. В. Виноградов**, Русский язык, էջ 29:

[11] Նույն տեղում, էջ 725, 30:

սրանք քննելով ստուգաբանական-ծագումնաբանական, կառուցվածքային և կիրառական-իմաստային կողմերով։

Եղանակավորող բառերը «առանձին բառաիմաստաբանական» կարգ համարելու Վինոգրադովի տեսակետը առաջինը մանրակիրթեն քննադատում է ակադեմիկոս Ի. Մեշչանինովը։ «Այնուհետև այս սահմանափակ թվով օրինակներից երևում է,— գրում է Մեշչանինովը,— որ եղանակավորող բառերի կազմի մեջ են ընկնում խոսքի ամենաայլազան ներկայացուցիչներ, ընդ որում՝ ամենաայլազան շարահյուսական նշանակությամբ և կառուցվածքով...»։ Այնպիսի բառեր, ինչպիսին է ասում են (говорят) և նմանները, «իրենցից ներկայացնում են ոչ թե մի առանձին, այլ լավ հայտնի և լեզվում հարուստ կերպով արդեն ներկայացված խոսքի մաս։ Մասնավորապես, ասում են բայ է՝ հոգնակի թվի երրորդ դեմքով, դիմային անորոշ նշանակությամբ. համմտ. ինձ ասում են, թե այդ եզրակացությունն ունի իր հիմնավորումը։ Այդպիսին նա մնում է նաև նախադասության միջանկյալ անդամի դերքում։ Այստեղ (համմտ. նա, ասում են, երկար աշխատեց) բայն ստանում է ամբողջ նախադասության ընդհանուր բնութագրման իմաստային երանգ։ Բայց իր այդ երանգով նա պարտական է ոչ թե իր այլ խոսքի մասի անցնելուն, այլ նախադասության մեջ իր շարահյուսական դիրքին։ Նա ստանում է այդպիսի երանգ ոչ թե եղանակավորող բառի վերածվելու, այլ նախադասության միջանկյալ անդամի դերով հանդես գալու պատճառով»[12]։

Բերելով այս քաղվածքը՝ Վ. Ժիրմունսկին ավելացնում է. «Նույնը վերաբերում է «եղանակավորող բառերին և մասնիկներին» մնացած բոլոր խմբերին։ Ведь և мол մնում են մասնիկներ, кажется և видиш՝ բայեր, собственно говоря և в самом деле՝ բառակապակցություններ. решительно, собственно, действительно տիպի բառերը պետք է դիտվեն որպես եղանակային մակբայներ՝ պարագայական մակբայներին մոտ, բայց նրանցից տարբեր շարահյուսորեն՝ ոչ թե առանձին բառի, այլ ամբողջ նախադասության իրենց վերաբերությամբ։ Իր իսկ Վ. Վ. Վինոգրադովի բնորոշման համաձայն, եղանակավորող բառերն իրենցից ներկայացնում են «առանձին բառաիմաստաբանական» (և ոչ թե բառաքերականական!) «բառակարգ»։ Այդ կարգի ձևաբանակա-

[12] **И. И. Мещанинов,** Члены предложения и части речи, М.—Л., 1945. էջ 287։

նացման ոչ մի նշան մենք չենք նկատում։ Եղանակավորող բառերն, անկասկած, արժանի են ուսումնասիրողի ուշադրությանը, բայց ոչ թե որպես առանձին խոսքի մաս, այլ որպես եղանակավորման քերականական արտահայտության (խոնարհման, եղանակային կիսաօժանդակ բայերի) բառային համարժեք»[13]։

Այսպես էին ընդունում ռուսերենում եղանակավորող բառերի առանձին բառակարգ կամ խոսքի մաս ճանաչելու տեսակետը Մեշչանինովն ու Ժիրմունսկին, այսպես են ընդունում այժմ նաև շատ այլ ռուսագետներ։ Նրանց կարծիքով, Վինոգրադովի կողմից եղանակավորող բառերի կարգի մեջ մտցված բառերն ու բառակապակցությունները զանազան խոսքի մասերի ու սրանցից կազմված բառակապակցությունների ու դարձվածքների եղանակավորման նշանակությամբ վերցված շարահյուսական իրողություն են և չեն կարող ո՛չ բառային կառուցվածքով ու նշանակությամբ, ո՛չ ձևաբանորեն մի բառային կարգի մեջ միավորվել։

Նույնը չէ՞, արդյոք, հայերենում։

Եղանակավոր բառերի կազմությունը քննելիս, Ս. Աբրահամյանը գրում է. «Եղանակավորող բառերը ըստ կազմության կարելի է բաժանել հետևյալ տեսակների՝ պարզ, ածանցավոր, քերականական ձևերից առաջացած, բարդ և նկարագրական»[14]։

Ինչն է ստիպել Աբրահամյանին՝ հայերենի բառակազմության բոլորին հայտնի կանոնից շեղվելու և հայերենի պարզ, բարդ և ածանցավոր բառերի կողքին զանազանելու նաև «քերականական ձևերից առաջացած» և «նկարագրական» բառակազմական «տիպեր», երբ ընթերցողը լավ գիտի, որ այս «քերականական ձևերից առաջացած» և «նկարագրական» եղանակավորող բառերը, եթե իրոք բառեր են, ապա կազմությամբ պիտի լինեն կամ պարզ, կա՛մ բարդ և կա՛մ էլ ածանցավոր։

Քերականական ձևերից առաջացած եղանակավորող բառերի մեջ կան գրաբարի հոլովման ու խոնարհման հնացած ձևեր, որոնցում թեքման վերջավորությունները ձուլվել են թեքված բառի արմատին և, չնայած արմատի առանձին ըմբռնմանը, հայերենի արդի փուլում գիտակցվում են որպես պարզ կամ արմատա-

---

[13] **В. М. Жирмунский**, նշվ. աշխ. («Вопросы теории частей речи», էջ 13)։
[14] **Ս. Աբրահամյան**, նշվ. աշխ., էջ 508։

կան բառեր, ինչպիսիք են՝ իրավ, հարկավ, հազիվ, գուցե, երևի և այլն[15]։

Աբրահամյանի բերած այդ տիպի եղանակավորող բառերի մի մասն էլ բարդ կամ բարդ ածանցավոր բառեր են, ինչպիսիք են՝ այսուամենայնիվ, արդարև, ինչևէ, միգուցե և այլն։ Սրանց կազմության հարցը նույնպես չի մտահոգել Աբրահամյանին։ Նրան, մեր կարծիքով, անհանգստություն են պատճառել կարծեմ, կարծես, կարծես թե, կարծեք, ասես, ասես թե, ինչ ուզում է լինի, ինչ գնով էլ լինի, ով գիտի, ով իմանա և նման տիպի բայական ձևերը, սրանցով կազմված բառակապակցություններն ու երբեմն էլ՝ նախադասությունները, որոնք եղանակավորման դեր կատարելիս վերցվում են որպես եղանակավորող բառեր։

Է. Աղայանը կարող է իրավ, հասցե ձևերում ավ, ցե ձևույթները միավորել բառարմատին և ստանալ ժամանակակից հայերենի համար նոր արմատ, քանի որ գրաբարի այդ քերականական ձևույթները արդի հայերենի համար անիմաստ ու մեռած ձևույթներ են։ Իսկ ինչպե՞ս վարվի Աբրահամյանը կարծեմ, կարծես, կարծեք, չլինի թե, ով գիտի և նման բայաձևերի ու նախադասությունների հետ, որոնցում և՛ արմատի, և՛ բայական վերջավորությունների գիտակցումն ու սրանց հակադրությունը արդի հայերենում ոչ միայն զգալի ու կենդանի են, այլև գործող օրինաչափություն են։

Ընդունելով բայաձևերից ու սրանց կապակցություններից առաջացած վերոհիշյալ տիպի եղանակավորող բառերի գոյությունը՝ Աբրահամյանը լռելյայն ընդունում է սրանց և իրենց նախատիպ բայաձևերի համանունությունը։ Մնում էր, որ նա որոշակիորեն պատասխան տար այդ տիպի եղանակավորող բառերի կազմության վերաբերյալ իր առաջադրած հարցին, այսինքն՝ որոշեր, թե կարծես-ը, ասես-ը, ով իմանա-ն ինչ կազմության բառեր են, սրանց «երբեմնի» թեքման վերջավորությունները ձուլվել են բայարմատի՞ն, թե դարձել են եղանակավորող բառեր կազմող վերջածանցներ։

Մեզ հայտնի է, որ Աբրահամյանն այդպիսի վերջածանցներ հայերենում չի ճանաչում։ «Գոյություն ունեն ածանցավոր եղանակավորող բառեր, սակայն գոյություն չունեն եղանակավորող

---

15 Համմ. է. Թ. Աղայան, *ժամանակակից հայերենի հոլովումը և խոնարհումը*, էջ 86—87։

բառեր կազմող հատուկ ածանցներ» (էջ 510), ասում է հեղինակը։

Մնում է ենթադրել, որ Աբրահամյանը դրանք համարում է պարզ արմատական բառեր։ Բայց ինչպես երևում է, նա այդ էլ չի ուզում ասել, դրա համար էլ եղանակավորող բառերի կազմության գոյություն ունեցող և ընդունված տեսակներին խառնում է նաև արանց առաջացման եղանակները, որպես բառակազմության տեսակներ։

Հարցի այսպիսի մասնակի շրջանցումով խնդիրը դարձյալ չի լուծվում։ Եղանակավորող բառերի բառակազմական հարցի լուծումն ավելի է խճճվում, երբ Աբրահամյանը մեջ է բերում «նկարագրական բնույթի եղանակավորող բառեր» հասկացությունը։ Վերլուծությունից պարզվում է, որ եղանակավորող բարդ բառերը կցական և մեծ մասամբ հարադրական բարդություններ են, «իսկական բարդությամբ կազմված եղանակավոր բառեր չկան» (էջ 512)։ Այստեղ էլ անորոշ են մնում հարադրական բարդ բառերի և եղանակավորող բառերի իմաստով գործածվող բառակապակցությունների սահմանները։ Այս կարգի բառակապակցություններին տալով «նկարագրական եղանակավորող բառեր» անվանումը՝ Աբրահամյանը սրանց համար բերված օրինակները մեկնաբանում է տարբեր, երբեմն, հակասական բնութագրմամբ։

Ինչ էլ լինի, ինչ էլ ուզում է լինի, ինչ գնով էլ լինի, ինչ գնով ուզում է լինի, առանց այլևայլության, ըստ երևույթին, ուր մնաց թե, ուր է (էր) թե, ով գիտե, ով իմանա *և այլ միավորները մե՛կ ճանաչվում են որպես եղանակավորող բառերին հարող* բառակապակցություններ *(էջ 513), մե՛կ էլ՝ եղանակավորող բառերի կազմը մշտապես հարստացնող* բառեր *(էջ 514)։*

Եզրակացությունը պարզ է. ինչպես ռուսերենում, այնպես էլ հայերենում «եղանակավոր բառեր» անվամբ ներկայացվում են ոչ թե կամ՝ ոչ միայն եղանակավոր բառեր, այլև այլ խոսքի մասեր, բառակապակցություններ, նույնիսկ նախադասություններ, որոնց եղանակավորման գործառությունը սոսկ շարահյուսական հիմունք ունի։

Իսկ ինչպիսի՞ն է եղանակավոր բառերի կամ այդ անվամբ ներկայացվող լեզվական միավորների իմաստային ընդհանրությունը, չէ՞ որ Ս. Աբրահամյանի դասակարգման մեջ կարևոր դերը պատկանում է խոսքիմաստային իմաստի որոշմանը։

Եղանակավորող բառերը, որպես «վերաբերմունքային իմաստ

ունեցող բառեր», ձայնարկությունների հետ կազմում են մի ընդհանուր բառախումբ և հակադրվում են նյութական և քերականական իմաստ ունեցող մյուս երկու բառախմբերին։ Եղանակավորող բառերն Աբրահամյանի համակարգմամբ ձայնարկություններին հակադրվում են իրենց արտահայտած դատողական կամ մտածական վերաբերմունքի հատկանիշով կամ խոսքիմաստային իմաստով, մինչդեռ ձայնարկություններին բնորոշ է զգացական վերաբերմունքի արտահայտման հատկանիշը կամ խոսքիմաստային իմաստը։

Իրենց բառային նշանակությամբ հիմնականում հարելով մակբայներին՝ եղանակավորող բառերը չեն ընդհանրանում նրանց հետ, քանի որ զուրկ են նյութական իմաստից, ուստի և չեն արտահայտում որևէ օբյեկտի հատկանիշ, որի համար էլ նախադասության անդամ չեն լինում։ Սա հիմք է տալիս Աբրահամյանին՝ այդ բառերը ավելի մեծ ընդհանրացմամբ միավորելու ձայնարկություններին։

Խոսողի սուբյեկտիվ մտածական վերաբերմունքը, որ եղանակավորող բառով արտահայտվում է նախադասության որևէ անդամի կամ ամբողջ նախադասության բովանդակության նկատմամբ, ըստ հեղինակի, կարող է լինել՝ **հաստատական, ցուցական, երկբայական, սաստկական, սահմանափակման, կամային, զիջական, ժխտական, բաղձանքի** *(էջ 515)։ Ըստ այսմ՝ եղանակավորող բառերը բաժանվում են իմաստային նույնքան տեսակի։*

Եղանակավորող բառերի Աբրահամյանի իմաստային վերլուծության թեթևակի ծանոթացումը մեզ բերում է այն համոզման, որ իմաստային հատկանիշով էլ այդ խոսքի մասի տակ միավորված բառերը մի ընդհանրություն չեն ներկայացնում։

Մեր կարծիքով, մակբայը իրավացիորեն մաքրելով սրա խոսքիմաստային իմաստը և գործառական հատկանիշը կորցրած ամեն կարգի բառերից՝ Ս. Աբրահամյանն այս անգամ էլ այլ խոսքի մասերի չնույնացող կամ նրանցից զանազանվող ամեն բառ ու բառակապակցություն, որ նախադասության անդամ չէ և այդ անդամները չի կապակցում, դարձնում է եղանակավորող բառ։

Եթե որոշ տիպի եղանակավորող բառերում (սահմանափակման, կամային վերաբերմունքի), իր իսկ Աբրահամյանի պընդմամբ, եղանակավորման իմաստը թույլ է արտահայտված կամ նվազ, ապա որոշ տիպի բառերում էլ (ցուցականն, ժխտականն, պատասխանականն), մեր կարծիքով, պարզապես կա ոչ թե եղանա-

կավորման իմաստ, այլ այդ անվան տակ անցկացվող լեզվական այլ երևույթ[16]։

Եղանակավորող բառերի խոսքիմասային իմաստի հասկացությունը Աբրահամյանի մեկնաբանությամբ վիճելի է մնում նաև իր մի այլ կողմով։ Ինչպես վերը տեսանք, նա նյութական և քերականական նշանակության բառախմբերից առանձնացնում է սրանց է հակադրում ձայնարկություններն ու եղանակավորող բառերը, որպես նյութական ու քերականական իմաստներից զուրկ նյութական ու քերականական նշանակություն ունեցող բառերի գործառությամբ հանդես չեկող բառախմբի։ Բացի վերոհիշյալ բացասական հատկանիշներից, եղանակավորող բառերն ու ձայնարկությունները միավորվում են մեկ խմբի մեջ իրենց վերաբերմունքային նշանակությամբ։ Բայց քանի որ ձայնարկությունները զգայական վերաբերմունք են ցույց տալիս, իսկ եղանակավորող բառերը՝ մտածական, ուստի և խոսքիմասային արժեք ստանում է այս հակադրությունը, և այդ բառախումբը տրոհվում է երկու խոսքի մասի։

Թե ինչո՞ւ խոսքիմասային իմաստներ են մտածական և զգացական իմաստները զատ-զատ և ոչ թե վերաբերմունքային իմաստն ընդհանրապես, այս հարցին ո՛չ Աբրահամյանը և ո՛չ էլ մեկ ուրիշը չի կարող հավաստի պատասխան տալ։ Բայց մեր նպատակը այդ հարցի պատասխանն ստանալը չէ։ Մեզ հետաքրքրում է այն հարցը, թե Ս. Աբրահամյանը, և, ապա, նրա հետեվությամբ, էդ. Աղայանը որքանո՞վ են ճիշտ վարվում՝ եղանակավորող բառերի արտահայտած սուբյեկտիվ վերաբերմունքային իմաստը ոչ թե քերականական վերաբերական իմաստ, այլ մի նոր տեսակի, այն էլ ձայնարկությունների զգայական իմաստներին հակադրվող և դրանց հետ ընդհանրացող վերաբերմունքային իմաստ համարելով։

Ե՛վ ռուսական, և՛ հայ քերականագիտության մեջ, անկախ այն բանից, թե եղանակավորող բառերը որ խոսքի մասերի հարաբերակցությամբ են քննվել, առանձին բառատեսակ կամ խոսքի մաս են համարվել, թե ոչ, նրանք վերլուծվել են որպես քերականական նշանակության բառեր։

Համաձայնելով Ի. Ի. Մեշչանինովի այն նախազգուշացմանը,

---

[16] Այս մասին մանրամասն տե՛ս մեր «Հայերենի խոսքի մասերի տարբերակման սկզբունքները» աշխատության 203—206 էջերը։

քե նախադասության մեջ ներթափանցող ամեն կարգի սուբյեկտիվ բնույթի ու հուզական երանգի լեզվական միավոր միտում ունի ճանաչվելու եղանակավորող բառ, միաժամանակ արձանագրելով, որ «եղանակավորման կարգի մեջ գործառությամբ մերձենում և միավորվում են տարբեր կառուցվածքի և նշանակության բառեր և դարձվածքներ (выражения)»՝ Վ. Վ. Վինոգրադովը, այդուհանդերձ, եղանակավորող բառերի ցույց տված վերաբերմունքային իմաստը աներկբա համարում է քերականական իմաստ։ Ռուսերենի եղանակավորող բառերի իր ամենաբազմակողմանի ուսումնասիրությունը նա սկսում է այս նախադասությամբ. «Քերականական հարաբերությունները կարող են լինել երկու կերպ՝ կա՛մ օբյեկտիվ-շարահյուսական հարաբերություններ բառերի միջև բառակապակցություններում և նախադասություններում, կա՛մ ամբողջ ասացվածքի կամ նախադասության հարաբերությունը իրականության նկատմամբ, որն անվանվում է սուբյեկտիվ-օբյեկտիվ կամ եղանակային...։

Եղանակային հարաբերություններն արտահայտվում են ոչ միայն բայի քերականական ձևերով կամ առանձին ձևական նշաններով։ Նրանք կարող են արտահայտվել նաև խոսքի մասերի տարբեր ձևերի, ինչպես և ամբողջ շարույթների կամ, նույնիսկ, նախադասությունների յուրատեսակ «միջանկյալ» օգտագործմամբ։ Բայց ռուսերենում շարահյուսական եղանակավորման կարգի արտահայտման համար կա բառերի առանձին բառիմաստային դաս (разряд)[17]։

Բառերի այս բառիմաստային դասից, որն անվանվում է եղականավորող բառերի կարգ, շատ բառեր ու, նույնիսկ, միջանկյալ բառակապակցություններ կարող են վերածվել մասնիկների, քերականացվել, այսինքն «դառնալ բառային անկախությունից և ինքնուրույնությունից զրկված, նախադասության եղանակավորում արտահայտող քերականական պարզ արտահայտիչ»[18]։

Եղանակավորող բառակապակցություններից, բառերից դեպի մասնիկներ գնացող պրոցեսի մեջ Վինոգրադովը տեսնում է ռուսաց լեզվի վերլուծական կառուցվածքի զարգացման խորացման և նրա հետ՝ եղանակավորման կարգի ձևական-շարահյուսական գործառության ընդլայնման արտացոլումը։

---

[17] **В. В. Виноградов**, *նշվ. աշխ.*, *էջ 731, 725։*

[18] *Նույն տեղում, էջ 725։*

Վինոգրադովը եղանակավորող բառերի և ձայնարկություննե-
րի միջև իմաստային և ծագումնաբանական ինչ-որ ավելի մոտ
կապ, քան եղանակավորող բառերի ու բայերի, մակբայների, դե-
րանունների կամ շաղկապների միջև չի տեսնում։

Եղանակավորող բառերը համարելով եղանակավորման քե-
րականական իմաստի բառային արտահայտիչներ՝ Վինոգրադովը
քերականական ընդհանրություն է տեսնում սրանց և շաղկապների
միջև։ Սակայն նկատելով սրանց գործառական որոշակի հարա-
բերությունները՝ նա եղանակավորող բառերն ու բառակապակցու-
թյունները ներկայացնում է որպես առանձին բառախումբ, ռուսե-
րենի բառապաշարի կառուցվածքաիմաստաբանական կամ քե-
րականական-իմաստաբանական չորս հիմնական կարգերից մե-
կը։

Եղանակավոր բառերի ցույց տված վերաբերական եղանա-
կային իմաստը քերականական իմաստ է համարում Վ. Ժիրմունս-
կին նույնպես։ Իր վերը հիշատակված բանավիճային հոդվածում
նա, ինչպես ասվեց, եղանակավորող բառերը համարում է «եղա-
նակավորման քերականական արտահայտության (խոնարհում, ե-
ղանակային կիսաօժանդակ բայեր) բառային համարժեքներ»[19]։

Հայ քերականագիտության մեջ եղանակավորող բառերի ա-
ռանձին տեսակ դանազանող Մ. Աբեղյանը նույն սկզբունքով ու
տրամաբանությամբ այդ բառերը համարում է քերականական
նշանակության բառեր։

«Այս վերջին երեք տեսակի բառերը (եղանակավորող բառեր,
բացասական մասնիկներ և պատասխանական բառեր,— Հ. Բ.),—
գրում է Աբեղյանը,— շատ քերականներ դնում են մակբայների
մեջ. բայց դրանք իսկապես ձևական նշանակություն ունեցող բա-
ռեր են, ինչպես և կապակցական բառերը, որոնց բոլորի նշանա-
կությունն ու ֆունկցիան բացատրվում է բառերի ու խոսքերի կա-
պակցության շարահյուսության մեջ»[20]։

Ս. Աբրահամյանը չի փորձում հերքել վերոհիշյալ կարծիքները.
դեռ ավելին, իր վերլուծություններով հաճախ հաստատում է դր-
անց իսկությունը։ Նա նկատում է, թե ինչպես բառակազմու-
թյան, կազմավորման, այլ խոսքի մասերից փոխանցմամբ առա-
ջանալու հատկանիշներով եղանակավորող բառերը հակադրվում

---

[19] В. М. Жирмунский, նշվ. աշխ., էջ 13։

[20] Մ. Աբեղյան, Հայոց լեզվի տեսություն, էջ 131։

են ձայնարկություններին և ընդհանրություններ են ցուցաբերում կապակցական բառերի և մյուս չթեքվող խոսքի մասերի հետ։

Աբրահամյանի հետագա վերլուծությունից պարզվում է, որ եղանակավորող բառերն իրենց «բնույթով և իմաստային յուրահատկությամբ» ևս ավելի մոտ են քերականական նշանակության բառերին, քան ձայնարկություններին։

Խոսքի մասերի ներսում «բառականի ու քերականականի (մասնավորապես շարահյուսականի) փոխհարաբերության» հարցի քննությունը Աբրահամյանին բերում է այն համոզման, որ «եղանակավոր բառերի և ձայնարկությունների տեսակների կիրառությունների մեջ էական քերականական բնույթի տարբերություն չկա» (էջ 173—174)։

Հետագա քննությունից, սակայն, Աբրահամյանն այստեղ էլ նկատում է մի «մասնակի» տարբերություն։ Պարզվում է, որ, ի տարբերություն ձայնարկությունների, «Շատ եղանակավորող բառեր, պայմանավորված իրենց իմաստով; հաճախ միջանկյալ գործածություն չունեն, այլ հանդես են գալիս նախադասության անդամների հետ կապակցված ձևով» (էջ 174)։

Աբրահամյանը միաժամանակ նկատում է, որ «եղանակավորող բառերը, այսպես ասած, զգայուն են հատկապես նախադասության ստորոգյալի նկատմամբ, և դրանց միջև գոյություն ունի որոշ համապատասխանություն» (էջ 180)։

Աբրահամյանին այստեղ հետաքրքրում է որոշ կարգի եղանակավորող բառերի բայի եղանակային ձևերին զուգահեռ առանձին կառուցվածքի նախադասություններում գործածության սահմանափակ ոլորտ ունենալու հարցը. ուստի նաև ի միջի այլոց խոսում է դիմավոր բայաձևերի եղանակային քերականական իմաստի և եղանակավոր բառերի եղանակային իմաստների ընդհանրությունների մասին։ Այս հարցի հանգամանալից քննությունը հեղինակին չէր կարող չհանգեցնել այն վաղուց հայտնի ճշմարտությանը, ըստ որի՝ եղանակավորող բառերի բառային իմաստը, չնույնանալով բայական եղանակավորման քերականական կարգի հետ, այնուամենայնիվ ոչ թե նյութական բառային իմաստ է, այլ քերականական։

«Երևի քնած է» և «քնած կլինի» բայաձևերը, եղանակային որոշ երանգային տարբերությամբ հանդերձ, հավասարապես ենթադրություններ են։ Առաջինի մեջ ենթադրական եղանակայնությունը արտահայտվում է երևի բառով, իսկ երկրորդի մեջ՝ կլինի

ենթադրական բայաձևով։ Երկրորդը բայական կարգի անդամ է, առաջինը՝ ոչ։ Առաջինի մեջ բայաձևը սահմանական եղանակի է, որի եղանակային ստուգությունը երևի երկբայական եղանակավորող բառի միջոցով փոխվել է ենթադրության։ Երկու դեպքում էլ գործ ունենք լեզվական նույն իմաստի հետ, տարբեր են արտահայտման եղանակները։

Եթե մեջ կապի համար նրա արտահայտած հոլովական իմաստը (դաշտի մեջ=դաշտում), միաժամանակ նրա բառային իմաստը լինելով, մնում է քերականական իմաստ, ապա գուցե եղանակավորող բառի իմաստը (գուցե վերադարձել է) ինչո՞ւ չպիտի քերականական բառային իմաստ համարվի։

Եղանակավորման քերականական իմաստի բառային արտահայտումը, ըստ Մեշչանինովի, յուրահատուկ է ոչ միայն անձև, այլև թեքական լեզուներին։ «Թեքական լեզուներում եղանակների թիվը քիչ է, և հեշտ է հաշվի առնել։ Դրա հետ միասին նրանցում աճում են բազմատեսակ պարագայական բառեր, որոնք ստորոգյալին տալիս են այն, ինչ չի արվում թեքական կառուցվածքի բայաձևերով»[21]։

Հայերենում եթե կա եղանակավորող բառերի առանձին կարգ կամ խոսքի մաս, ապա դրա մեջ առաջին հերթին պիտի մտցվեն բայի դիմավոր ձևերի, ինչպես և նախադասության այլ անդամների հետ կապակցվող մտածական սուբյեկտիվ վերաբերմունքի քերականական նշանակության ոչ մեծ թիվ կազմող բառեր։ Եղանակավորման իմաստով գործածվող այլ խոսքի մասերը և, մանավանդ, նախադասությունից տրոհվող զանազան կազմության միջարկությունները եղանակավորման շարահյուսական միջոցներ են և չպիտի նույնացվեն առանձին բառատեսակ կազմող բուն եղանակավորող բառերին։ Անկախ այն բանից, թե եղանակավորող բառը նախադասության ստորոգյալի վրա է դրված, թե մի այլ անդամի, նա արտահայտում է խոսողի սուբյեկտիվ վերաբերմունքը դեպի խոսքի բովանդակությունը կամ տրամաբանական ստորոգումը։ Այսպես օրինակ՝

Արամը վաղը երևի մեկնի Մոսկվա։
Արամը երևի վաղը մեկնի Մոսկվա։
Արամը վաղը մեկնի երևի Մոսկվա։
Երևի Արամը վաղը մեկնի Մոսկվա։

---

[21] **И. И. Мещанинов**, Глагол, М.-Л., 1948, էջ 75:

Այս բոլոր կազմություններից միայն առաջինում է, որ եղանակավոր բառը դրված է իր անմիջական տեղում և կապված է ստորոգմանն անմիջապես՝ **երևի մեկնի**: Սա եթե ոչ քերականական, ապա իմաստային մի ամբողջություն է, դիմավոր բայի և եղանակավորող բառի կապակցություն:

Իմաստային այդպիսի անմիջական կապ չկա եղանակավորող բառի և նախադասության մյուս անդամների միջև: **Երևի վաղը, Երևի Մոսկվա, Երևի Արամը** «կապակցությունները» իմաստային ամբողջություն չեն, առանց ստորոգյալի, սրանց կապակցությունը անիմաստ է: Այս գործածություններում եղանակավորող բառը թեական կամ երկբայական է դարձնում ոչ թե գործողության կատարումն ընդհանրապես, այլ՝ նրա կատարումը տվյալ անձի կամ առարկայի կողմից, նրա նկատմամբ, տվյալ պարագայում, այսինքն՝ **երևի վաղը, երևի Մոսկվա, երևի Արամը** *կապակցություններ չկան, այլ կան* **երևի վաղը մեկնի, երևը Մոսկվա մեկնի, երևի Արամը մեկնի** *նախադասություններ: Եթե այդ կապակցություններն առանձին գործածվեն էլ, միևնույնն է, ստորոգյալը սրանց հետ դիտակցվում է: Հետևաբար եղանակավորումը վերաբերում է ոչ առարկաներին ու հանգամանքներին առանձին վերցված. այստեղ եղանակավորող բառերը, բայի վրա անմիջապես չդրվելով հանդերձ, եղանակավորում կամ խոսողի սուբյեկտիվ վերաբերմունքն են արտահայտում այդ առարկաների ու հանգամանքների և գործողության կապի նկատմամբ, առարկայի ու հատկանիշի ստորոգման նկատմամբ:*

Եղանակավորման լեզվական իրողության այսպիսի մեկնաբանությունից պարզ երևում է, որ եղանակավորող բառերը քերականական նշանակության բառեր են և առավելապես մերձավոր են կապակցական քերականական նշանակության բառերին, քան ձայնարկություններին:

Սակայն մենք բնավ էլ այն կարծիքին չենք, թե եղանակավորող բառերի ու ձայնարկությունների միջև որևէ կարգի ընդհանրություններ չկան: Այդպիսի ընդհանրություններ ճիշտ կերպով ցույց է տալիս ինքը Աբրահամյանը, այդ հանգամանքը նկատվել է նաև այլ լեզվաբանների կողմից: Վ. Վինոգրադովը ռուսերենի եղանակավորող բառերի և այլ խոսքի մասերի ծագումնաբանական կապի թվարկումը ավարտում է այսպես.

«Ըստ երևույթին, եղանակավորող բառերի մեծ մասի սուբյեկտիվ վառ երանգի ուժով է, որ սրանց հեշտությամբ մոտենում

են ձայնարկություններ։ Իսկապես, երբ ձայնարկություններն ուղեկցում են այս կամ այն արտահայտությանը (высказывание) որպես նրա եղանակային, խիստ հուզական արժեքի արտահայտություն, նրանք դառնում են եղանակավորող բառեր»[22]։

Այս ընդհանրությունը չի խանգարում լեզվաբանին միաժամանակ ասելու, թե «Ձայնարկությունները միանգամից հանդիսանում են և՛ բառերի, և՛, շատ հաճախ, նախադասությունների համարժեքներ։ Դրա համար էլ նրանք իրենց լեզվական բնույթով տարբերվում են ինչպես խոսքի մասերից ու խոսքի մասնիկներից, այնպես էլ եղանակավորող բառերից»[23]։

Ինչպես բառակազմական հատկությամբ, այնպես էլ իրենց բառային նշանակություններով եղանակավորող բառերը առավելապես կապված են կապակցական, քերականական նշանակություն ունեցող բառերին՝ կապերին և շաղկապներին։ Աբրահամյանը եղանակավորող բառերը չի համարում քերականական նշանակության բառեր և, սրանք միավորելով ձայնարկություններին, ստանում է վերաբերմունքային նշանակության մի ընդհանուր բառախումբ՝ խոսքի մասերի աստիճանական դասակարգման իր ներկայացրած համակարգում երկանդամ հակադրության սկզբունքը պահպանելու, հակադրության առաջին աստիճանում ոչ խոսքի մաս, այլ հավասարապես բառախմբեր ունենալու և, վերջապես, եղանակավորող բառերի առանձին խոսքի մաս լինելու իր տեսակետը հեշտությամբ հիմնավորելու համար։

Եղանակավորող բառերի խոսքիմասային պատկանելության հարցը պարզաբանելուց հետո Աբրահամյանը քննում է Երևանի պետական համալսարանի «Ուսանողական գիտական աշխատանքների» ժողովածուում (1948, № 4) Ռ. Իշխանյանի կողմից հայերենում «մասնիկներ» առանձին խոսքի մաս ընդունելու առաջարկը և մերժում է այն (էջ 532—533)։

Ձայնարկությունը քննելիս, Աբրահամյանն էլ Աբեղյանի պես նմանաձայնություններ դնում է ձայնարկությունների մեջ, թեև սրանք չեն համապատասխանում նրա՝ ձայնարկությանը տված իմաստային սահմանմանը, որովհետև ո՛չ զգացում են արտահայտում և ո՛չ էլ կամային վերաբերմունք։

Պարզ երևում է, որ Աբրահամյանը խոսքիմասային իմաստ-

---

[22] **В. В. Виноградов**, նշվ. աշխ., էջ 741։

[23] Նույն տեղում, էջ 746։

ների որոշման իր սկզբունքը այս կարգի բառերի նկատմամբ էլ հետևողականորեն չի կիրառում։ Այլապես նա հեշտությամբ նմանաձայնությունները կարող էր համարել առանձին խոսքի մաս։

Խոսքի մասերի տեսության վերաբերյալ Ս. Աբրահամյանի արտահայտած կարծիքների ու առանձին դատողությունների մեր քննադատությունը, ունենալով բանավիճային բնույթ, չի կարող չափանիշ լինել հայերենի խոսքի մասերի տեսության զարգացման մեջ հեղինակի կատարած ծառայության արժանի գնահատման։

Իր աշխատություններում Ս. Աբրահամյանը քննարկում և լուծում է հայերենի խոսքի մասերի ու սրանց տեսությանը վերաբերող մի շարք հարցեր, որոնցից էականները կարելի է ամփոփել հետևյալ կետերում.

1. Հայերենի դերանուն խոսքի մասի պատմության, սրա խոսքիմասային կամ բառաքերականական հատկանիշների քննության։

2. Հայերենի չբեքվող խոսքի մասերի այլ խոսքի մասերի ու իրար նկատմամբ ունեցած հարաբերությունների, սրանց բառային ու քերականական հատկանիշների քննության։

3. Խոսքի մասերի աստիճանական դասակարգման հիմունքի տեսական հիմնավորում և կիրառում։

4. Եղանակավորող բառերի, իբրև հայերենի առանձին խոսքի մասի, տեսական հիմնավորում և վերլուծություն։

5. Տարբեր լեզվաբանների և լեզվաբանական ուղղություններ՝ խոսքի մասերի տեսության տեսական դրույթների վերլուծություն և արժեքավորում։

ՀԱՅԵՐԵՆԻ ԽՈՍՔԻ ՄԱՍԵՐԻ ԲԱԶՄԱՀԱՏԿԱՆԻՇ ԱՍՏԻՃԱՆԱԿԱՆ ԴԱՍԱԿԱՐԳՈՒՄԸ ԷԴ. ԱՂԱՅԱՆԻ ԱՇԽԱՏՈՒԹՅՈՒՆՆԵՐՈՒՄ

Էդ. Աղայանը հայերենի խոսքի մասերի տեսության հարցերի վերաբերյալ առաջին անգամ ուշագրավ վերլուծություններ ու դատողություններ է անում իր «Հայ լեզվաբանության պատմություն» դոկտորական դիսերտացիայի մեջ (1945 թ.)։

Այդ աշխատությունը Աղայանը վերամշակեց և հրատարակեց երկու հատորով 1958 և 1962 թվականներին։ Մինչև այդ աշխատության հրատարակելը հեղինակը հասցրել էր արդեն հրապարակ հանել իր «Լեզվաբանության ներածությունը», մի քանի հրատարակություններով, որի մեջ, այլոց կարծիքների ու տեսակետների վեր-

լուծության առթիվ նախորդ աշխատություններում արված դատողությունների փոխարեն, նա շարադրում է խոսքի մասերի դասակարգման իր ամբողջական տեսակետը, որից էլ մենք սկսում ենք մեր վերլուծությունը։

Անհրաժեշտ չենք համարում անդրադառնալ նաև «Լեզվաբանության ներածության» 1949 թ. հրատարակության մեջ խոսքի մասերի վերաբերյալ արծարծված այն մի քանի անընդունելի ու հակասական դատողություններին, որոնք որպես Մառի «լեզվի նոր ուսմունքի» ազդեցության արտահայտություն, քննադատվել ու մերժվել են իր իսկ Աղայանի կողմից։

«Լեզվաբանության ներածության» մեջ այսպես է ձևակերպում Աղայանը խոսքի մասերի դասակարգման իր սկզբունքը.

«Այսպիսով, խոսքի մասերի դասակարգման ժամանակ ելակետ պիտի ունենանք երեք բան՝ բառի խոսքի մասային իմաստը, բառի ձևավորումը և նրա կիրառությունը խոսքի մեջ»[24]։

Այստեղ Աղայանը ընդգծում է այն միտքը, որ «բառերի կիրառությունը նախադասության մեջ համախ պայմանավորված է հենց նրանց խոսքի մասային իմաստով» և ապա՝ «բառերը նախադասությունից դուրս էլ գոյություն ունեն իբրև անկախ միավորներ՝ իրենց բառային իմաստով», հետևաբար «խոսքի մասերի դասակարգման ժամանակ մենք պետք է ելակետ ընդունենք առաջին հերթին բառերի խոսքի մասային իմաստը»։

Իսկ թե ի՞նչ է բառային, ի՞նչ է խոսքիմասային իմաստը, Աղայանը այդ մասին տալիս է հետևյալ պարզաբանումը.

«Հատկապես իմաստային կողմի վրա ուշադրություն դարձնելով՝ տեսնում ենք, որ լեզվի մեջ բառերը, բացի իրենց բառային իմաստից, ունեն նաև խոսքի մասային իմաստ, այսինքն, այն, թե իրենց արտահայտած իմաստը դիտվում է որպես առարկայի հասկացություն, թե որպես հատկանիշի հասկացություն և այլն»[25]։

Ինչպես տեսնում ենք, Աղայանն էլ Ս. Աբրահամյանի և այլոց պես խոսքիմասային իմաստը համարում է բառերի բառային իմաստներից վերացարկված, տվյալ բառադասի կամ բառակարգի բոլոր բառերի համար հավասարապես ընդհանուր իմաստ։

Հայերենի գոյականի խոսքիմասային իմաստը բառային համապատասխան օրինակներով շատ որոշակի ու հստակ կերպով

---

[24] Է. Բ. Աղայան, Լեզվաբանության ներածություն, 1967, էջ 385։

[25] Նույն տեղում, էջ 384, 383։

մեկնաբանելով հանդերձ, էդ. Աղայանն էլ այս տեսակետը պաշտպանող այլ լեզվաբանների պես չի փորձում պատասխանել այդ մեկնաբանությունը չընդունող լեզվաբանների հակառակ փաստարկումներին։ Տուն, սեղան, fur գոյականների առարկայական կոնկրետ հասկացություններից աբստրահելով գոյականի առարկայականության ընդհանուր խոսքիմասային իմաստը՝ նա նույնպես մոռանում է վազք, շարժում, խաղություն, բարձրություն և այլ գոյականների գոյությունը, որոնց առարկայականության խոսքիմասային իմաստի հիմքում ընկած են ոչ թե առարկայական ընդհանուր բառային հասկացություններ, այլ հատկանշային։

Խոսքի մասերի դասակարգման հիմնական ելակետ ունենալով բառերի այս խոսքիմասային իմաստները, ապա հաշվի առնելով նաև նրանց ձևավորումը և կիրառությունը խոսքի մեջ՝ Աղայանը լեզվի բոլոր բառերը բաժանում է 5 խմբի՝ «առարկայի հասկացություն արտահայտող բառեր, հատկանիշ արտահայտող բառեր, խոսքի մասային իմաստ ունեցող բառեր, նյութական իմաստից զուրկ բառեր, զգացմունքի բառեր» (էջ 385)։

1. «Առարկայի հասկացություն արտահայտող բառերը գոյականներն են» (էջ 385)։

2. «Հատկանիշ արտահայտող բառերը բաժանվում են 4 խմբի՝ բայ, ածական, թվական, մակբայ» (էջ 386)։

3. «Թվարկված խոսքի մասերին հակադրվում են դերանուններ, որոնք արտահայտում են ոչ թե առարկայի կամ հատկանիշի հասկացություն, այլ որևէ խոսքի մասի (գոյականի և այլն) ընդհանուր իմաստ» (էջ 396)։

4. «Նյութական իմաստից զուրկ, քերականական իմաստ արտահայտող բառերն են կապերը, շաղկապները, հոդերը» (էջ 398)։

5. «Զգացմունքի բառեր... Իբրև խոսքի մաս այդ բառերը կոչվում են ձայնարկություններ կամ միջարկություններ» (էջ 400—401)։

Ներկայացնելով խոսքի մասերի այս ավանդական համակարգը՝ Աղայանը նրանց սահմանումների մեջ նորություն չի մըտցընում։ Սակայն ելնելով իր աշխատության բնույթից՝ նա խոսում է նաև տարբեր լեզուներում այս կամ այն խոսքի մասի նկարագրի, մասնավոր հատկանիշների, ստորակարգային կամ ներքին դասակարգման առանձնահատկությունների մասին։ Վերջում անհրաժեշտ է գտնում նաև հիշատակել, որ «Թվարկված խոսքի մասերը, իհարկե, պարտադիր չեն բոլոր լեզուների համար. կան

լեզուներ, որոնք չեն զանազանում ածականն ու մակբայը, կան լեզուներ, որոնք զուրկ են իսկական կապերից, կան լեզուներ, որոնք հոդ չունեն և այլն։ Սակայն լեզուների գերակշռող մասում առկա են գոյականները, բայերը, թվականները, դերանունները, ձայնարկությունները, ածականները, մակբայները, կապերն ու շաղկապները։ Քիչ են այն լեզուները, որոնց մեջ ածականը նույնանում է մակբայի կամ բայի հետ» (էջ 401)։

Այստեղից նախ իմանում ենք, թե հեղինակը ինչ կարծիք ունի խոսքի մասերի, որպես լեզվական հանրույթների (ունիվերսալներ) մասին, ապա այդ եզրակացությունից միայն կարելի է իմանալ նաև, որ նա հայերենի համար հոդերն առանձին խոսքի մաս չի համարում։ Այլապես նրա գրքում հայերենի հոդերը վկայակոչվում և քննվում են այդ խոսքի մասը զանազանող լեզուների բառային անկախություն ունեցող հոդերի օրինակներին զուգահեռ, առանց լրացուցիչ բացատրության ու վերապահումի։

Սակայն Աղայանի այս դասակարգման մեջ Ս. Աբրահամյանը ճիշտ է նկատում, որ «նյութական իմաստից զուրկ բառերը» հակադրված են, այլ բառերից բացի, նաև «զգացմունքի բառերին» (ձայնարկություններ), մինչդեռ վերջիններս նույնպես նյութական իմաստից զուրկ են։ Այնուհետև «խոսքի մասային իմաստ ունեցող բառերի» տակ էդ. Աղայանը նկատի ունի միայն դերանունները, մինչդեռ ամեն մի խոսքի մաս էլ ունի խոսքիմասային իմաստ։

Ձայնարկությունները համարում է հասկացություն արտահայտող բառեր[26]։

Քանի որ էդ. Աղայանն իր «ժամանակակից հայերենի հոլովումը և խոնարհումը» աշխատության մեջ այս մասնակի թերություններն ու հակասությունները վերացրել է, ուստի կարելի էր, նույնիսկ, այս քննադատությանը չանդրադառնալ։ Բայց բանն այն է, որ Աղայանի խոսքի մասերի դասակարգման մեջ Աբրահամյանի նկատած «որոշ անհարմարությունների» կողքին կարելի է տեսնել ավելի էական հակասություններ։

Իր սույն աշխատության ընդհանուր լեզվաբանական բնույթից ելնելով՝ ինչպես լեզվական մյուս հարցերը, այնպես էլ բառի ու բառերի դասակարգման խնդիրները պարզաբանելիս, Աղայա-

---

[26] Տե՛ս Ս. Գ. Աբրահամյան, Չթեքվող խոսքի մասերը և նրանց բառական ու քերականական հատկանիշների փոխհարաբերությունը ժամանակակից հայերենում, էջ 76, 537։

նը դուրս է գալիս դրանց քննության նեղ հայագիտական սահմաններից։

Լեզվական բոլոր իմաստները, ընդունված կանոնի համաձայն, բաժանելով երկու տեսակի՝ բառային իմաստներ և քերականական իմաստներ, սրանց Աղայանը տալիս է հետևյալ սահմանումները.

«Բառիմաստ այն ընդհանուր հասկացությունն է, որ հասարակական գիտակցությամբ ու արժեքավորմամբ պարունակում է բառը» *(էջ 243)*, *կամ՝* «Բառիմաստը տվյալ լեզվական հաճույքի կողմից հասարակական գործունեության շնորհիվ օբյեկտիվ իրականության ճանաչողությունն է, արտահայտված բառային ձևով» *(էջ 248)։ Այսպիսով, բառային իմաստը, որ Աղայանն այստեղ հավասարապես անվանում է նաև բառիմաստ տերմինով, արտահայտում է «որևէ առարկայի կամ երևույթի, հատկանիշի և այլնի հասկացություն» (էջ 238)։*

Անցնելով քերականական իմաստներին՝ Աղայանը գրում է՝ «...բացի բառային իմաստներից, մենք արտահայտում ենք նաև երկրորդական ածանցական, հարաբերական իմաստներ... Բոլոր այդ երկրորդական իմաստները քերականական իմաստներ են։ Հետևաբար, բոլոր այն իմաստները, որոնք կոնկրետացնում, մասնավորեցնում են արմատի (և բառի) բառային իմաստը և կամ արտահայտում են այդ կոնկրետացած իմաստների (բառիմաստների) փոխադարձ հարաբերությունը խոսքի մեջ, կոչվում են էերականական իմաստներ» (էջ 323)։

Այս երկրորդական կամ քերականական իմաստները կարող են արտահայտվել ոչ միայն երկրորդական ձևույթներով, այլև առանձին բառերով։ Սա այն առաջին հիմնական հակասությունն է, որ ստեղծվում է բառերի իմաստային դասակարգման ժամանակ, և որի վերացումը այնքան էլ հեշտ չէ։

Լեզվում նկատելով բառային և քերականական իմաստների հակադրություն և սրանց տալով որոշակի սահմանումներ, միաժամանակ տեսնելով, որ կապերը, շաղկապները, առանձին լեզուներում նաև անկախ գործածություն ունեցող հոդերը արտահայտում են քերականական իմաստներ միայն և ունեն երկրորդական ձևույթների արժեք՝ հետազոտողը չի կարող հետևցնել, որ քերականական նշանակության այս բառերը ունեն քերականական, բայց ոչ բառային իմաստ, այլ կերպ ասած, լինելով բառեր, զուրկ են բառային իմաստներից։ Ուրիշ լեզվաբաններն, իհարկե, այդ քերականական իմաստներն էլ համարում են այս տիպի բառերի

բառիմաստները, բայց Աղայանը այդպես չի վարվում, քանի որ նա ունի բառային իմաստի և քերականական իմաստի իր հատուկ տարբերակումը և արդարացիորեն չի ուզում սրանք այս կետում նույնացնել, այլապես նա պիտի փոխեր բառային իմաստի իր հասկացությունն ու սրա սահմանումը, այլև՝ բառի սահմանումը։

Տալով բառի իր սահմանումը՝ Աղայանն անմիջապես շարունակում է. «Այս սահմանումը, սակայն, ընդգրկում է այնպիսի բառերը, ինչպիսիք են ծառ, քար, ուտել, գնալ, կանաչ, գեղեցիկ և այլն։ Մինչդեռ լեզվի մեջ կան բառեր, որոնք թեև ինքնուրույն բառային ձև ունեն, բայց զուրկ են բառային իմաստից, օրինակ՝ դեպի, մասին, և, ու, բայց և այլն ձևական ինքնուրույնության տեսակետից նույնանալով բառերի հետ, իմաստի և դերի տեսակետից նրանք համընկնում են մասնիկների հետ։ Հենց այստեղից ելնելով էլ, բառերը բաժանում են երկու կարգի՝ լիիմաստ բառեր և թերիմաստ բառեր» (էջ 239)։

Այս անվանումներն ու խմբավորումը չեն լուծում հարցը, քանի որ «բառային իմաստից զուրկ» միավորները նախ բառ, ապա «թերիմաստ բառ» ճանաչելը նոր բան չի ապացուցում, բացի հետազոտողի անհետևողականությունից։ Այս բանը քաջ է գիտակցում Աղայանը և ուրիշների այդ անհետևողականությունից խուսափելու համար ավելացնում է. «Լեզվաբանության մեջ երկրորդ կարգի բառերը դիտվում են որպես բառերի ու մասնիկների միջև գտնվող միավորներ, ըստ այն բանի, որ դրանք մի կողմով (ձևով) համընկնում են բառերին, իսկ մյուս կողմով (իմաստով)՝ մասնիկներին։ Սրանից ելնելով էլ, ոմանք այդ կարգի բառերն անվանում են բառ-մասնիկներ, ոմանք՝ ձևական բառեր և այլն։ Ինչ էլ որ անվանելու լինենք, մի բան պարզ է, որ այդ կարգի բառերը որակապես տարբերվում են առաջին կարգի բառերից և լեզվաբանական տեսակետից բառ համարվել, բուն իմաստով, չեն կարող» (էջ 240)։

Հակասությունը միայն այն չէ, որ բուն իմաստով բառ չեղող և բառային իմաստից զուրկ այս միավորները «ձևական բառեր» անվամբ պիտի միավորենք նյութական նշանակության բառերին և ըստ նշանակության էլ դասակարգման ենթարկենք, առավել հակասականն այն է, որ սրանցում պետք է որոնենք և ցույց տանք նաև խոսքիմասային իմաստներ։

Բառերն ըստ խոսքի մասերի դասակարգելիս, բառային և քե-

քակտնական իմաստներից բացի, հրապարակ է գալիս նաև խոսքիմաստային իմաստ հասկացությունը։ Ճիշտ է, Աղայանը չի անդրադառնում այն բանավեճին, թե խոսքիմաստային իմաստը բառա՞յ՞ն, թե քերականական իմաստ է, բայց, ինչպես վերը տեսանք, նրա բացատրություններից երևում է, որ այդ իմաստը չնույնացնելով սրանցից և ոչ մեկին, նա բառերի խոսքիմաստային իմաստը անմիջականորեն կապում է նրանց բառային իմաստներին, վերացարկում է նրանցից։ «Եթե բառիմաստը, ինչպես տեսանք, տվյալ առարկայի, երևույթի և այլնի ընդհանուր հասկացությունն է,— գրում է Աղայանը,— ապա խոսքի մասային իմաստը առարկայի կամ հատկանիշի և այլնի ընդհանուր, վերացած հասկացությունն է» (էջ 383)։

Եթե բառերի խոսքիմաստային իմաստները բառերի բառային իմաստներից վերացարկված հասկացություններ են, ինչպես գրտնում է էդ. Աղայանը, ապա հետևողական լինելու դեպքում նա բառային իմաստից զուրկ «ձևական բառերում» չպիտի որոներ ու տեսներ նաև խոսքիմաստային իմաստ։ Այսինքն, եթե ասվում է, թե «այդ կարգի բառերը որակապես տարբերվում են առաջին կարգի բառերից և լեզվաբանական տեսակետից բառ համարվել, բուն իմաստով, չեն կարող» (էջ 240), ապա պիտի նաև ասվի, թե այդ կարգի բառերը որակապես տարբերվում են առաջին կարգի բառերից և լեզվաբանական տեսակետից խոսքի մաս համարվել, բուն իմաստով, չեն կարող։

Ինչպես որ այս կարգի բառերն ու սրանց իմաստները չեն համապատասխանում Աղայանի կողմից բառին ու բառային իմաստին տված սահմանումներին ու դուրս են մնում նրանց սահմաններից, այնպես էլ դրանց իմաստները չեն համապատասխանում նրա խոսքի մասերին ու խոսքիմաստային իմաստներին տված սահմանումներին ու դուրս են մնում նրանց սահմաններից։ Դրությունը չի փրկվում, երբ ասվում է, թե «նրանց դասակարգումը հիմնված է գլխավորապես ոչ թե նրանց իմաստի, այլ նրանց դերի վրա» (էջ 408)։

Էդ. Աղայանը թեև դերանունները համարում է մեկ խոսքի մաս, բայց նրանց մեջ տեսնում է ոչ թե մեկ, այլ չորս տարբեր խոսքիմաստային իմաստներ։ Ըստ այսմ՝ Աղայանը կարևոր է համարում դերանունների և սրանց հարաբերակից խոսքի մասերի ձևաբանական ու շարահյուսական ընդհանրությունների մատնանշումը, որպես լեզվի կառուցվածքի համար կարևոր իրողու-

թյուն, իսկ Մառին էլ քննադատում է այն բանում, որ դերանունների առաջացումը փոխադրում է խոսքի մասերի ծագման ավելի վաղ շրջան՝ անբացատրելի թողնելով այն հարցը, թե «ինչպե՞ս կարող է լինել գոյականի խոսքի մասային իմաստ արտահայտող դերանուն, եթե լեզվի մեջ դեռևս չլինի գոյականն իբրև խոսքի մաս» (էջ 40)։

Այս միանգամայն համոզիչ ու լեզվի կառուցվածքից բխող մեկնաբանությունները, սակայն, չեն վերացնում այն հակասությունը, որ կա Աղայանի կողմից տրված խոսքիմասային իմաստի ընդհանուր բնութագրման և դերանվան խոսքիմասային իմաստի մասնավոր բնութագրման միջև։

Նա, ով դերանունների մեջ տեսնում է գոյականի, ածականի և այլնի խոսքիմասային իմաստներ, հետևողական լինելու համար, դերանունները ըստ խոսքիմասային պատկանելության պիտի բաշխի այդ խոսքի մասերի վրա, այլապես դերանվան համար նա մի նոր միասնական խոսքիմասային իմաստ չի կարող հորինել և դերանունների հետևողական դասակարգում չի կարող կատարել։ Այդպես է պատահում այստեղ Աղայանի հետ, որը դերանվանը տալիս է խոսքիմասային մի մեկնաբանում, բայց իբրև դրա շարունակությունը մատնանշում է բոլորովին այլ սկզբունքով կատարված դերանունների ստորակարգություն։ «Յուրաքանչյուր դերանուն որևէ խոսքի մասի ընդհանուր իմաստն է արտահայտում,— գրում է Աղայանը,— և դրան համապատասխան էլ դերանունները բաժանվում են տարբեր խմբերի (ցուցական, անձնական և այլն)»[27]։ Ըստ իրենց արտահայտած «որևէ խոսքի մասի ընդհանուր իմաստի» դերանունները կլինեն ոչ թե «ցուցական, անձնական և այլն», այլ գոյական դերանուն, ածական դերանուն և այլն։ Սեփական նոր մոտեցումը ավանդականին արհեստականորեն *աշտեցնելը այլ հետևանք չէր կարող ունենալ։

Էդ. Աղայանի «Լեզվաբանության ներածության» մեջ, իբրև խոսքի մաս, ավարտուն մեկնաբանություն չի ստանում նաև ձայնարկությունը։

Լեզվական բոլոր իմաստները բաժանելով **բառային և fbrականական** տարատեսակների՝ նա ձայնարկությունները կա՛մ պետք է համարեր բառային ու fbrականական իմաստներից զուրկ, մի

---

[27] Է. Աղայան, *Լեզվաբանության ներածություն ըստ լեզվի նոր ուսմունքի*, 1949, էջ 221։

բոլորովին առանձին կարգի բառեր, որոնք դուրս են գտնվում խոսքի մասերի շարքից, ինչպես այդ անում են որոշ լեզվաբաններ, կա՛մ էլ, դրանք համարելով առանձին խոսքի մաս կազմող բառեր, նրանցում պետք է տեսնեին բառային իմաստներ։ Նա ընտրում է վերջին մեկնաբանությունը։ Եթե ձայնարկությունները անիմաստ հնչյուն կամ հնչյունախումբ չեն, ուրեմն, իմաստ ունեն, այդ իմաստներն էլ եթե քերականական չեն, ուրեմն բառային են. իսկ եթե բառային են, այդ նշանակում է հասկացություններ են։ Այս դատողություններից յուրաքանչյուրը նման է շախմատային հարկադրական քայլի (ցուգցվանգ)։ Աղայանը շատ լավ գիտի, որ լեզուն իրարից տարբեր երկու համակարգերի՝ «բառիմաստների (հասկացությունների) արտահայտման համակարգի» և «զգացմունքների արտահայտության համակարգի» միասնություն է (էջ 252), բայց երբ ընդունում է ձայնարկությունների խոսքի մաս լինելը և նրանցում տեսնում է խոսքիմաստային իմաստ, ապա դրանով իսկ ակամա ընդունում է նրանց հասկացական նշանակությունը՝ անուշադրության մատնելով հասկացություն տերմինի իր ըմբռնումը։

Այսպիսով, Էդ. Աղայանի դանազանած հինգ բառախմբերից երկուսը՝ «առարկայի հասկացություն արտահայտող բառերի» և «հատկանիշ արտահայտող բառերի» խմբերը, որոնք բովանդակում են գոյական, ածական, թվական, բայ և մակբայ խոսքի մասերը, դասակարգվում են իմաստային սկզբունքով, որոնց մեջ հեղինակի կողմից բառային, քերականական և խոսքիմաստային իմաստների մեկնաբանությունները կատարված են միասնական սկզբունքով, հասկանալի ու հետևողական են։ Այս երկուսին միավորած դերանունների, ձևական բառերի և ձայնարկությունների բառախմբերը, որպես այլ կարգի բառեր, նախորդների հետ չունենալով խոսքիմաստային համասեռ հատկանիշներ, արհեստականորեն բնութագրվել են այդ չունեցած հատկանիշներով՝ մասամբ զրկվելով սեփական հատկանիշների իրական նկարագրից, մասամբ էլ խախտելով առարկայական ու հատկանշային խոսքի մասերի վերաբերյալ մշակված հասկացություններ գիտականության ու սրանց հետևողական կիրառումը։

Այսպիսի պատկեր իրենից ներկայացնում է խոսքի մասերի դասակարգման արդի տեսությունը, և սա միայն Աղայանի սույն աշխատությանը բնորոշ երևույթ չէ։ Նա այդ տեսության հակասություններն ու թերությունները լավ գիտակցում է և եթե որոշ

հնարավոր շարումներ տեղնուտեղը չի մտցնում, ապա դրա պատճառներից մեկն էլ այս քննվող աշխատության դասագրքային բնույթն է, որն ստիպում է հեղինակին ընդունված դատողություններից ու սխեմաներից շատ չհեռանալ։ Իր մի այլ, ոչ դասակարգային բնույթի աշխատության մեջ Աղայանը կատարում է խոսքի մասերի ավելի խոր, բազմահատկանիշ վերլուծություն, որի մեջ վերը նշված հակասությունների ու թերությունների զգալի մասը սրբագրված է։

Հր. Աճառյանի «Լիակատար քերականության» 4-րդ հատորի Ա գրքի առաջաբանում, ինչպես իր տեղում տեսանք, Աղայանը քննադատում է ուրիշների պես Աճառյանի կողմից ևս պաշտպանվող այն կարծիքը, թե խոսքի մասերի առաջացումն ունի գոյական, բայ, դերանուն հերթականությունը, ընդ որում՝ բայն ու դերանունը անջատվում են գոյականից։ Նրա կարծիքով, «Հիշյալ խոսքի մասերի առաջացման հաջորդականության մասին հարցադրումն անգամ ճիշտ չէ»[28]։

Էդ. Աղայանը իր «Լեզվաբանության ներածության» մեջ, սակայն, միանգամայն հնարավոր է համարում «իսկ ինչպե՞ս են առաջացել խոսքի մասերը և ի՞նչ հաջորդականությամբ» հարցադրումը և տալիս է այդ հարցի իր պատասխանը։

Տարբեր կառուցվածքի, զարգացման տարբեր աստիճանի վրա գտնվող լեզուների խոսքի մասերի համակարգերի տվյալները Աղայանին բերում են այն համոզման, որ «...լեզվի զարգացման պրոցեսում տարորոշված նախադասության առաջացումը զուգորդվում է խոսքի մասերի առաջացմամբ, որոնցից առաջին հերթին առանձնանում են գոյականները, բայերը (իբրև հատկանիշ, ընդհանրապես), դերանունները և ձայնարկությունները» (էջ 408)։

Բայը, որ այստեղ գործածված է ընդհանրապես հատկանիշ ցույց տվող բառակարգի նշանակությամբ, հետագայում տրոհվում է բայի և ածականի, կամ այլ կերպ՝ բայից անջատվում է ածականը։ Քանի դեռ չի առանձնացել ածականը, «հասկանալի է, որ չի առանձնացել նաև մակբայը» (էջ 408)։

Թվականի առաջացումը ըստ Աղայանի «...կապված է ոչ այնքան խոսքի մասերի առանձնացման, որքան մարդկանց հաշվելու կարողության զարգացման հետ» (409)։ Հետևաբար «... թվական-

---

[28] Հ. Աճառյան, Լիակատար քերականություն հայոց լեզվի, հատոր 4, Ա գիրք, էջ 4։

ները առանձնանում են որպես խոսքի մաս ավելի ուշ, քան մյուս խոսքի մասերը» (էջ 410)։

Ինչ վերաբերում է քերականական նշանակության խոսքի մասերին, այսինքն՝ կապերին, շաղկապներին և հոդերին, ապա, ըստ Աղայանի, ծագումնաբանորեն էլ սրանք մի որոշակի միասնություն չեն կազմում բուն խոսքի մասերի համակարգի հետ։ Այնպես որ «խիստ արտահայտվելով կարելի է ասել, թե կապերը, շաղկապներն ու հոդերը խոսքի մաս են համարվում որոշ պայմանականությամբ» (էջ 408)։

Արդ տեսնենք, թե ինչ է իրենից ներկայացնում էդ. Աղայանի խոսքի մասերի բազմահատկանիշ աստիճանական դասակարգումը։

Իր «Ժամանակակից հայերենի հոլովումն ու խոնարհումը» աշխատությամբ (1967 թ.) «հեղինակը նպատակ է ունեցել ուսումնասիրել ժամանակակից գրական հայերենի հոլովման ու խոնարհման կառուցվածքը լեզվաբանական նոր մեթոդների կիրառումով»[29]։

Լեզվի կառուցվածքային վերլուծության իր տեսական սկզբունքները շարադրելիս, Աղայանը լեզվի կառուցվածքի բառային մակարդակի քննության մեջ առանձին տեղ է հատկացնում բառերի ըստ խոսքի մասերի դասակարգման հարցին։ Արձանագրելով ժամանակակից լեզվաբանության մեջ բառերի դասակարգման հարցում գոյություն ունեցող մեծ տարաձայնությունների փաստը՝ նա այս խնդրի վերաբերյալ կատարվող բոլոր փորձերից գալիս է այն համոզման, «...որ առավել ճիշտը ավանդական դասակարգումն է ըստ խոսքի մասերի։ Սա արդարանում է թե՛ ձևական, թե՛ ձևաբանական, թե՛ իմաստային և թե՛ շարահյուսական այն ընդհանուր հատկանիշներով, որոնք բնութագրում են տվյալ խոսքի մասի մեջ մտնող բառերը» (էջ 112)։

Եթե ավանդական դասակարգումը այդպես համակողմանի բնութագրմամբ խմբավորեր բառերը խոսքի մասերի համակարգում, չիներ անհետևողական ու պակասավոր, էլ ինչո՞ւ պիտի լինեին այդքան շատ տարաձայնություններ այս հարցում։ Աղայանը այդպես է բնութագրում ավանդական դասակարգումը, քանի որ նրա զանազանած խոսքի մասերի սխեմայից շեղվելու նպատակ

---

29 Է. Բ. Աղայան, *Ժամանակակից հայերենի հոլովումը և խոնարհումը, 1967, էջ 5։*

չունի, բայց այդ դասակարգման թերություններն էլ լավ գիտի, ուստի և շտապում է ավելացնել. «Այստեղ էլ, սակայն, այնքան հակասական տեսություններ են բախվում իրար, որ ըստ էության ոչ մեկն էլ չի կարելի բացարձակ ճիշտ համարել։ Թեև յուրաքանչյուրի մեջ, բնականաբար, ճշմարտության հիմնական տարրը անուրանալի է» (էջ 112)։

Էդ. Աղայանը այստեղ չի զբաղվում հարցի պատմությամբ։ Նա հարկ է համարում, սակայն, «կանգ առնել մի դասակարգման վրա միայն, որը ուշագրավ է խոսքի մասերի իմաստային խմբավորման տեսակետից» (էջ 112)։ Դա ռուս լեզվաբան Մ. Վ. Պանովի դասակարգումն է[30]*։*

Մ. Վ. Պանովը իր «Ռուսաց լեզվի խոսքի մասերի վերաբերյալ» և ապա «Ռուսաց լեզու» ծավալուն հոդվածներում առաջարկում է ռուսերենի խոսքի մասերի այսպիսի դասակարգում։ Բոլոր բառերը նախ բաժանում է երկու խմբի՝ բառային նշանակություն ունեցող 1. ոչ սպասարկու բառեր, 2. սպասարկու բառեր։ Վերջիններս, որպես խոսքիմասային ընդհանուր իմաստից զուրկ բառեր, անվանվում են խոսքի մասնիկներ և ձայնարկությունների հետ միասին դուրս են մնում խոսքի մասերի շարքից։

Բառային իմաստ ունեցող ոչ սպասարկու բառերը, որոնք անվանվում են խոսքի մասեր, լինում են՝ գոյական, ածական, բայ, մակբայ, մակբայական դերբայ (деепричастие)։ Վերջինս, չգիտես ինչու, Աղայանը դուրս է թողնում Պանովի ներկայացրած համակարգից։

Դերանուններն ու թվականները ըստ ձևաբանական հատկանիշների և խոսքիմասային ընդհանուր իմաստի բաշխվում են նախորդ չորս խոսքի մասերի վրա։

Այս դասակարգումը Աղայանը համարում է «խոսքի մասերի իմաստային խմբավորում» և գտնում է հետաքրքրական «այն տեսակետից, որ դերանունների և թվականների մեջ ներքին դասակարգումով բացահայտում է զանազան խմբերի հարաբերակցությունը խոսքի մյուս մասերի հետ ըստ իմաստի։ Բայց դրա հետ միասին նա ստեղծում է խառնաշփոթություն խոսքի մասերի դասակարգման մեջ» (էջ 113)։

---

[30] *ա)* **М. В. Панов,** О частях речи в русском языке. (Научные доклады высшей школы, Фил. науки, 1960, № 4, էջ 3—15)։ *բ)* **М. В. Панов,** Русский язык. (ЯН СССР, 1, М., 1966, էջ 71—102)։

Ինչպես «Современный русский язык» բուհական դասագրքի հեղինակները[31], այնպես էլ մենք այս դասակարգման մեջ խոսքի մասերի ոչ մի խառնաշփոթություն չենք տեսնում, այդ խառնաշփոթը ցույց տալու որևէ փորձ չի անում նաև Աղայանը։ Բայց պակաս կարևոր չէ նաև այն, որ Մ. Աբեղյանից մոտ կես դար հետո ռուսերենի համար առաջարկելով համարյա նույն դասակարգումը՝ Մ. Վ. Պանովը այստեղ ներկայացվում է որպես «խոսքի մասերի իմաստային խմբավորման» տեսության ներկայացուցիչ, մինչդեռ Աբեղյանի դասակարգումը Աղայանի մի այլ աշխատության մեջ[32] ներկայացվում է որպես «ձևական հատկանիշների սկզբունքով» կամ քերականագիտական «ֆորմալիստական ուղղության» մեթոդով կատարված դասակարգում։ Մեր կարծիքով Աղայանի այս բնութագրումը հնացած է, և հեղինակը պիտի այն վերանայի։ Ինչ վերաբերում է Պանովի դասակարգման քննադատությանը կամ գնահատմանը, այն թերի է ու ոչ հիմնավոր։

Անցնելով հայերենի բառերի դասակարգման իր դրույթներին՝ Աղայանը որոշ չափով խմբագրում է «Լեզվաբանության ներածության» մեջ (1952) բառերի դասակարգման իր առաջարկած սկզբունքը։ Եթե այնտեղ ասվում էր, թե «խոսքի մասերի դասակարգման ժամանակ ելակետ պետք է ունենանք երեք բան՝ բառի խոսքի մասային իմաստը, բառի ձևավորումը և նրա կիրառությունը խոսքի մեջ»[33], ապա «Ժամանակակից հայերենի հոլովումը և խոնարհումը» մենագրության մեջ հեղինակը ավելացնում է չորրորդ հատկանիշը. «ա) իմաստ, բ) ձև, գ) ձևավորում, դ) գործառույթ» (էջ 113)։

Այսպիսով, Աղայանը եկել է այն համոզման, որ, բառերն ըստ խոսքի մասերի խմբավորելիս, բառի իմաստային, ձևաբանական և գործառական հատկանիշներից բացի պիտի հաշվի առնել նաև նրա ձևը կամ հնչույթային կազմը։ «Այդ սկզբունքը ճիշտ է ընդհանուր լեզվաբանության տեսակետից, որովհետև շատ լեզուներում բառի ձևը վճռական նշանակություն ունի խոսքի մասային պատկանելությունը որոշելու համար» (էջ 113)։

---

[31] Տե՛ս **Н. С. Валгина, Д. Э. Розенталь** и др., Современный русский язык, М., 1971, էջ 157։

[32] Տե՛ս է. Բ. Աղայան, *Հայ լեզվաբանության պատմություն, հատոր 2, 1962, էջ 184։*

[33] է. Բ. Աղայան, *Լեզվաբանության ներածություն, 1967, էջ 384։*

Այս չորս հատկանիշներից երկուսը հայերենի բառերի դասակարգման համար անհրաժեշտ չեն։ «Հայերենում խոսքի մասերը ձևական տարբերակում չունեն», ուստի հայերենի համար այն գործադրելի չէ, բառի ձևը այստեղ չի օգնում նրա խոսքիմասային պատկանելությունը որոշելուն։ Ձևաբանական հատկանիշով կարելի է զանազանել բայը գոյականից ու դերանունից, այս երեքն էլ մյուս խոսքի մասերից։ Բայց քանի որ բայը, գոյականը և դերանունը խոսքիմասային իմաստով շատ որոշակի հակադրված ու տարբերակված են իրարից, ձևաբանական հատկանիշի օգնության կարիքը չկա։ Այս բացատրություններից հետո Աղայանը հանգում է հետևյալ եզրակացության. «Հետևաբար հայերենի բառերն ըստ խոսքի մասերի դասակարգելու համար իբրև գործնական ելակետ ընդունում ենք առայժմ երկու հիմունք՝ խոսքիմասային իմաստ և գործառություն։ Գործառությունն ասելով նկատի ունենք ոչ միայն բառերի շարահյուսական դերը, այլև նրանց յուրահատուկ հարաբերությունը բառակազմության հետ, ուրեմն նաև՝ գործառությունը բառային մակարդակում» (էջ 114)։

Վերջին լրացուցիչ մեկնաբանությունից պարզվում է, որ հեղինակը հայերենի բառերի դասակարգման համար բնորոշ հատկանիշներ է համարում նրանց **խոսքիմասային իմաստը, շարահյուսական կիրառությունը և բառակազմական արժեքը**։ Բայց քանի որ ձևաբանական հատկանիշները, նրա կարծիքով, հայերենի բառերի խոսքիմասային դասակարգման համար որոշիչ չեն, ուստի նա բառակազմությունը, մի առանձին տարբերակիչ հատկանիշ չդրածնելու համար, միավորում է բառերի գործառական կամ շարահյուսական հատկանիշին։

Քանի որ Աղայանի համար «առավել ճիշտը ավանդական դասակարգումն է ըստ խոսքի մասերի», նա այդ դասակարգմամբ հայերենի համար զանազանված 9 խոսքի մասերից մեկական բառ ընտրելուց հետո սրանց ավելացնում է մեկ եղանակավորող բառ՝ **անշուշտ, մեկ բնաձայնություն՝ շրխկ**։ Այդ բառացանկից արդեն երևում է, որ հեղինակը հայերենի համար, իբրև իր դասակարգման հետևանքը, պիտի ստանա 11 բառակարգ կամ խոսքի մաս։

Վերցված բառերում սրանց իմաստային և գործառական հատկանիշները բացահայտվում են առտիճանական երկատման կամ երկանդամ հակադրության եղանակով։ Հակադրվող միավորները բնութագրվում են կամ հակադիր դրական հատկանիշներով, ինչպես՝ առարկայնություն—որակայնություն, որակային հատկանիշ—քանակային հատկանիշ, ինքնավար միավոր—կախյալ միավոր և այլն, կամ հակադիր դրական և բացասական հատկանիշներով, ինչպես՝ հատկացական իմաստ—ոչ հատկացական իմաստ, գործընթացայնություն—ոչ գործընթացայնություն, բնաձայնություն—ոչ բնաձայնություն և այլն։

Ըստ Աղայանի, այսպիսի աստիճանական երկատման «դրական կողմն այն է, որ վեր է հանում առանձին խոսքի մասերի իմաստային ընդհանրություններն ու հակադրությունները և դրանով իսկ բացահայտում առավել ընդհանուր իմաստների ու մասնավոր խոսքիմաստային իմաստների ստորակարգությունը (ընդհանրապես հատկանիշի հատկացություն, ապա՝ փոփոխական հատկանիշ և կայուն հատկանիշ և այլն») (էջ 125)։

Էդ. Աղայանը հայերենի բառերում բացահայտում է իմաստային և գործառական հետևյալ հատկանշային հակադրությունները։

«Ա. Իմաստային

1. Հատկացական իմաստ—ոչ հատկացական իմաստ
2. Տարբերակված իմաստ—չտարբերակված իմաստ
3. Առարկայնություն—որակայնություն
4. Գործընթացայնություն—ոչ գործընթացայնություն
5. Ինքնակա հատկանիշ—զուգորդող հատկանիշ
6. Որակային հատկանիշ—քանակային հատկանիշ
7. Քերականական իմաստ—արտահայտչական իմաստ
8. Վերաբերական իմաստ—կապակցական իմաստ
9. Զգացմունքային վերաբերմունք—մտածական վերաբերմունք
10. Բնաձայնություն—ոչ բնաձայնություն

Բ. Գործառական

1. Անվանողական—ոչ անվանողական
2. Յուցողական—արտահայտչական

3. Հիմույթային—ոչ հիմույթային
4. Նախադասության անդամ—ոչ անդամ
5. Փոխարինող—չփոխարինող
6. Ասույթի ինքնավար միավոր—կախյալ միավոր
7. Համակցական—ոչ համակցական» (էջ 125—126)։

Բնութագրվող բառերում հակադրության առաջին հատկանիշի առկայությունը նշելով +, իսկ երկրորդ հատկանիշի առկայությունը՝ —, տվյալ հակադրության բացակայությունը՝ 0 նշաններով, վերոհիշյալ իմաստային և գործառական 17 երկանդամ հակադրություններով Աղայանը կազմում է հայերենի խոսքի մասերի բազմահատկանիշ տախտակը[34]։

Սույն հատկանշային հակադրություններով բառերը բաժանվում են խմբերի՝ ապա՝ ենթախմբերի, մինչև որ յուրաքանչյուր բառ կամ բառախումբ մնում է իր խոսքիմաստային հատկանիշով և այլևս չի տրոհվում։ Յուրաքանչյուր բառի՝ այդ տախտակում ունեցած հատկանիշների գումարը կազմում է տվյալ բառի կամ նրանով ներկայացվող խոսքի մասի խոսքիմաստային բովանդակությունը։

Գործառական հատկանիշների հակադրության օգնությամբ որոշ խոսքի մասերի՝ կապի, շաղկապի և ձայնարկության, խոսքիմաստային իմաստները ճշգրտելուց հետո, Աղայանը հնարավոր է համարում, իբրև լրացուցիչ հատկանիշներ, դրանք այլևս չօգտագործել։

«Քանի որ խոսքի մաս կոչվածը,— գրում է նա,— բառերի խոսքիմաստային իմաստով է բնութագրվում, ապա պարզ է, որ մենք կարող ենք մի կողմ թողնել լրացուցիչ հատկանիշները և իբրև հայերենի խոսքի մասերի դասակարգման հիմունք ընդունել միայն խոսքամասային իմաստը» (էջ 131)։

Էդ. Աղայանը, հայերենի խոսքի մասերի դասակարգման համար բառերի գործառական հատկանիշները դիտելով որպես լրացուցիչ, ոչ էական հատկանիշներ և իր իմաստային դասակարգման տախտակից սրանք դուրս հանելուց հետո, ոչ էական և դրանվան ու մակբայի խոսքիմաստային բովանդակությունից դուրս է համարում նաև այն հակադրությունները, որոնցում այս խոսքի մասերը բնութագրվում են երկակի հատկանիշներով (±)։ Այսինքն՝ առարկայականություն–ոչառարկայականության և հատկացական

---

[34] Է. Ֆ. Աղայան, նշվ. աշխ., էջ 127։

խոսքի մասերին վերաբերող մյուս հակադրություններից դիմաց դերանունը ստանում է 0 նշում, որը նշանակում է, թե դերանվան համար առարկա՞, հատկանի՞շ, թե հատկանիշի հատկանիշ, որակակա՞ն հատկանիշ, թե քանակական հատկանիշ և այլն արտահայտելը խոսքիմասային արժեք չունի, և դերանունների վրա այդ հակադրությունները չեն տարածվում։ Այսպես էլ մակբայների համար էական չէ որակային հատկանիշ–քանակային հատկանիշ հակադրությունը, ուստի և այդ հակադրությունը կարելի է չտարածել մակբայների վրա։

Այս սրբագրումներից հետո Աղայանի բառերի իմաստային բազմահատկանիշ աստիճանական դասակարգման տախտակը ստանում է հետևյալ պատկերը (տե՛ս տախտակ 4)։

Խոսքի մասերի բովանդակությունը ներկայացնող բանաձևերի կամ № 4 տախտակի օգնությամբ Աղայանը իր աշխատության 136 և 138 էջերում ներկայացնում է երկու նոր տախտակներ (№ 5 և № 6)։

Էդ. Աղայանի առաջարկած խոսքի մասերի այս իմաստային բանաձևերի ու տախտակների օգնությամբ հնարավոր է դառնում որոշել խոսքի մասերի և սրանց խմբերի բազմաբնույթ համասեռ և տարասեռ հակադրությունները, որոնց վերլուծությունից հեղինակը հանգում է այն եզրակացության, որ «խոսքի մասերի համակարգն էլ ներկայացնում է փակ համակարգ (ավելի փակ, քան նույնիսկ հնչույթայինը), որ ունի ընդամենը 11 միավոր» (էջ 140)։

Նմանաձայնությունները, որ ճանաչված են որպես առանձին խոսքի մաս, ձայնարկությունների պես մտնում են ոչ հասկացական իմաստ ունեցող բառախմբի մեջ։ Այստեղ նրանք, միավորվելով վերաբերմունքային նշանակության բառերին, այսինքն եղանակավորող բառերին և ձայնարկություններին, իբրև արտահայտչական նշանակության բառախմբի անդամ, հակադրվում են քերականական նշանակության բառերին (կապեր, շաղկապներ)։ Մյուս կողմից նմանաձայնությունները անջատվում են վերաբերմունքային նշանակության բառերից այդ հատկանիշի բացակայության և դրա փոխարեն բնաձայնական հատկանիշով բնութա-

Տախտակ № 435

		Գոյական	Ածական	Թվական	Դերանուն	Բայ	Մակբայ	Կապակցական բայեր	Նախադրական բայեր	Կապ	Ձայնարկություն	Նախադրություն
1.	Հասկացական իմաստ /Հ/-ոչ հասկացական իմաստ /$\overline{Հ}$/	+	+	+	+	+	+	—	—	—	—	—
2.	Տարբերակված իմաստ /Տ/-չտարբերակված իմաստ /$\overline{Տ}$/	+	+	+	—	+	+	+	+	—	—	+
3.	Առարկայնություն /Ա/-որակայնություն /$\overline{Ա}$/	+	—	—	0	—	—	0	0	0	0	0
4.	Գործընթացայնություն /Գ/-ոչ գործընթաց. /$\overline{Գ}$/	0	—	—	0	—	—	0	0	0	0	0
5.	Ինքնակա հատկանիշ /Ի/-զուգորդող հատկանիշ /$\overline{Ի}$/	0	+	+	0	0	—	0	0	0	0	0
6.	Որակային հատկանիշ /Ո/-քանակային հատ. /$\overline{Ո}$/	0	+	—	0	0	0	0	0	0	0	0
7.	Քերականական իմաստ /Ք/-արտահայտչական իմաստ /$\overline{Ք}$/	0	0	0	0	0	0	—	—	+	+	—
8.	Վերաբերական իմաստ /Վ/-կապակցական իմաստ /$\overline{Վ}$/	0	0	0	0	0	0	0	0	+	—	0
9.	Ձգայական վերաբերմունք /Զ/-մտածական վերաբ. /$\overline{Զ}$/	0	0	0	0	0	0	—	—	0	0	0
10.	Բնաձայնություն /Բ/-ոչ բնաձայնություն /$\overline{Բ}$/	0	0	0	0	0	0	—	—	0	0	+

Փակագծերի մեջ նշանակված տառերը հակադրությունների առաջին եզրի բառերի սկզբնատառերն են, նրանց վրա դրված գծիկը հակադրության երկրորդ եզրի՝ «բացասական» հատկանիշի նշանն է»։

[35] *Տե՛ս է. Ռ. Աղայան, ժամանակակից հայերենի հոլովումը և խոնարհումը, էջ 138։*

գրվելու առանձնահատկությամբ: Սրանք անմիջական հակադրություն են կազմում վերաբերմունքային իմաստի խոսքի մասերին ՀՏՔՋԲ—ՀՏՔՋԲ—ՀՏՔԲ բանաձևով: Այսինքն՝ ձայնարկությունների ու եղանակավորող բառերի խոսքիմաստային բովանդակությունը բնութագրվում է որպես ոչ հասկացական տարբերակված արտահայտչական զգայական կամ մտածական ոչ բնաձայնական իմաստ, իսկ նմանաձայնություններինը բնութագրվում է որպես ոչ հասկացական տարբերակված արտահայտչական բնաձայնական իմաստ:

Էդ. Աղայանը, բառային մակարդակի լեզվական իրողությունների քննությունը կատարելով հիմնականում հնչույթային մակարդակի հակադրությունների օրինաչափություններին զուգահեռ, իր առջև խնդիր է դնում պարզելու, թե հնչույթների պես խոսքի մասերի միջև էլ կարո՞ղ է լինել չեզոքացում:

Վերլուծություններից պարզվում է, որ հայերենում խոսքի մասերի փոխանունության և համանունության երևույթների կողքին ածականների և մակբայների մեջ կատարվում է նաև խոսքի մասերի չեզոքացում: Այդ երևույթը Աղայանը սահմանում է այսպես. «2. Եթե ավյալ խոսքի մասին պատկանող բառը նույն ձևով հանդես է գալիս մի ուրիշ խոսքի մասի ոլորտում՝ փոխարինելով նրա հատուկ ձևավորում ունեցող իր հակադրությանը, ապա տեղի է ունենում խոսքամասային չեզոքացում: Այսպես, քաջ բառը ածական է. քաջ կովեց կապակցության մեջ նա հանդես է եկել մակբայական ոլորտում և փոխարինել է մակբային հատուկ ձևավորում ունեցող քաջաբար բառին, որով և վերացել է քաջ և քաջաբար միավորների հակադրությունը, ուստի և այստեղ ունենք լոքացում» (էջ 144):

Քանի որ հնչույթային և ձևույթային մակարդակներում չեզոքացումը հանգեցնում է գերհնչույթին (արխիֆոնեմա) և գերձևույթին (արխիմորֆեմա), ապա Աղայանը, առաջնորդվելով տարբեր մակարդակների իրողությունների համաստեղության սկզբունքով, լիս է այն հետևությանը, թե ածականի և մակբայի խոսքիմաստին չեզոքացումը հանգեցնում է «գերխոսքամասի»:

Չեզոքացման դեպքում ածականն ու մակբայը զրկվում են իրենց յուրահատուկ իմաստային հատկանիշ–զուգորդող հատկանիշ կատրությունից. նրանց համար տարբերակիչ հատկանիշ է մնում որակային հատկանիշը, որով նրանք տարբերվում են թվանից: «Քանի որ որակային հատկանիշը արժույթային է ածա-

կանի համար, և քանի որ ածականի ձևն է հանդես գալիս մակբայի ոլորտում, ապա գերխոսքամասն է ածականը», եզրակացնում է հեղինակը (էջ 144)։

Աղայանի այս մեկնաբանությունը կասկած չի հարուցում և այլ բան չէ, քան իր ժամանակին Մ. Աբեղյանի կողմից ձևակերպված հետևյալ մտքի վերահաստատումը. «Մեր մակբայներն ամենամեծ մասամբ դրությամբ միայն մակբայ են. երբ ածականների ցույց տված հատկանիշը վերաբերում է ոչ թե առարկային, այլ առարկայի հատկանիշին, այդ ժամանակ ածականներն առնվում են իբրև մակբայ»[36]։

Այս ամենին պիտի ավելացնենք նաև այն, որ Աղայանը բառերի երկատման տարբեր աստիճանների տարբերակիչ հատկանիշների բնույթի ու բովանդակության վերաբերյալ հաճախ է տալիս ոչ միայն հայերենի տեսության, այլև լեզվաբանության համար շատ ուշագրավ և արժեքավոր վերլուծություններ ու պարզաբանումներ։

Մեր դիտողություններն Աղայանի դասակարգման վերաբերյալ տարբեր բնույթի են։ Նրանք մասամբ վերաբերում են բառերի երկատման տեխնիկային և այնքան էլ էական չեն։ Իսկ մասամբ էլ վերաբերում են դասակարգման էությանը։

Է դ. Աղայանը թեև հայերենի խոսքի մասերի ընդհանուր բազմահատկանիշ դասակարգում է կատարում, բայց և այնպես ձևաբանական հատկանիշները դուրս է թողնում իր կազմած հատկանիշների հակադրության բոլոր տախտակներից՝ գտնելով, որ այդ հատկանիշներով օժտված բառերն իմաստային այնքան որոշակի տարբերակում ունեն, որպես առանձին խոսքի մասեր, որ ձևաբանական հատկանիշների օգնության դիմելու կարիք չկա։ Այդ բացատրությունն, իհարկե, մեզ չի համոզում հեղինակի այդ վարմունքի գիտականության ճշտության մեջ։ Բավական է հիշել հայերենի խոսքի մասերի շարժման ու փոխանցումների մեջ թեքման քերականական իմաստների վերացման ու բառաձևերի հարացույցներից դուրս գալու երևույթը գոյական—կապ, գոյական—մակբայ, բայ—մակբայ, բայ—եղանակավոր բառ և այլ անցումների ժամանակ, որպեսզի համոզվենք, որ այդ անցումների ընթացքում բառերի ձևաբանական հատկանիշներով էլ պայմանավորվում են նրանց իմաստային ու գործառական հատկանիշները, կամ՝ հա-

---

[36] Մ. Աբեղյան, *Հայոց լեզվի տեսություն, 1965, էջ 364։*

կառակը, ուստի և այդ ձևաբանական հատկանիշները չեն կարող նկատի չառնվել այս կարգի բառերի խոսքիմասային պատկանելությունը որոշելու համար։ Այս բանը լավ է ցույց տվել Ս. Աբրահամյանն իր «Չթեքվող խոսքի մասերը...» աշխատության մեջ, և մենք նոր օրինակների մեջ բերման կարիք չենք զգում։

Նույն կարգի առարկությունն են հարուցում բառերի գործառական հատկանիշների երկրորդական կամ լրացուցիչ միջոց համարելը և դասակարգման հիմնական տախտակից դուրս թողնելը։ Բառերի խոսքիմասային դասակարգումը կատարելով բառային մակարդակում՝ Աղայանը նախապես դիմում է նաև նրանց գործառական հատկանիշների օգնությանը, այսինքն բառային մակարդակից անցնում է շարահյուսականին։ Որոշ կարգի բառերի շարահյուսական արժեքով որոշելով նրանց իմաստային արժեքը, վերջինս արդեն համարում է բառային մակարդակում գիտակցված իրողություն և հիմնավոր է գտնում գործառական հատկանիշների հաշվառման բացառումը նույնպես։ Սա որոշակի հակասություն է, որը հեղինակը գիտակցաբար անտեսում է։ Կապերի ու շաղկապների շարահյուսական քերականական իմաստները, որոնք համարված են սրանց բառիմաստը և խոսքիմասային իմաստը, բառային մակարդակում կարելի է որոշել այդ իմաստները նախապես իմանալով միայն։ Մի բան, որ առանց շարահյուսական մակարդակի օգնության դիմելու հնարավոր չէ։ Էլ ի՞նչ արժեք ունի գործառական հատկանիշների այդպիսի բաց թողումը։

Իր դասակարգումը ամփոփելիս Աղայանը գրում է. «Վերը մենք խոսքի մասերի հատկանիշները որոշելով, յուրաքանչյուր խոսքի մաս հանգեցրինք որոշ բանաձևի։ Այդ բանաձևերի համաձայն կարելի է ավտոմատիկ կերպով որոշել տվյալ բառի խոսքիմասային պատկանելությունը, եթե մեզ տրված են այդ բառի իմաստային հատկանիշները» (էջ 148)։ Իսկ եթե քերականական նշանակության բառերի իմաստի որոշումը կատարվում է շարահյուսական կապակցության մեջ, ապա բառային մակարդակում ո՞վ պիտի մեզ տա դրանց իմաստային տարբերակումը։ Ահա և հակասությունը, որը բառերի իմաստային դասակարգումը լեզվի միայն մեկ մակարդակում դարձնում է անգործնական։

Բառերի երկատման էդ. Աղայանի գործադրած եղանակի և սրա տեխնիկական միջոցների մեջ ևս նկատվում են որոշ անհարմարություններ, անմիօրինակություն և մասնակի հակասություններ։

Բառերի իմաստային ու գործառական հատկանիշների հակադրությունները բացահայտելիս, հեղինակը հակադրության առաջին անդամը գնահատում և ըստ այդմ տերմինավորում է դրական հատկանիշով, իսկ երկրորդը՝ երբեմն դրական, երբեմն էլ բացասական հատկանիշով։ Այսպես, օրինակ, առարկայականություն—որակայնություն, ինքնակա հատկանիշ—զուգորդող հատկանիշ, ասույթի ինքնավար միավոր—կախյալ միավոր և այլն դրական հատկանիշով բնութագրված հակադրություններ են, իսկ հասկացական իմաստ—ոչ հասկացական իմաստ, տարբերակված իմաստ—չտարբերակված իմաստ, գործընթացայնություն—ոչ գործընթացայնություն, անվանողական—ոչ անվանողական և այլն հակադրությունները դրական և բացասական հատկանիշներով բնութագրված հակադրություններ են։ Թե ինչ սկզբունքով ու հիմնավորմամբ է Աղայանը հակադրությունների այս երկու տիպերը կիրառում նույն տախտակում, այս մասին ոչինչ չի ասվում։ Մեր կարծիքով այս հարցում որևէ հետևողականություն չկա, բանը հանգեցվում է ուղղակի տերմինավորման, մինչդեռ այդպես չպիտի լիներ։

Խոսքի մասերի իմաստային ու գործառական հատկանիշների բանաձևեր կազմելիս, վերոհիշյալ խառը տիպի հակադրությունների պատճառով հեղինակը հանդիպել է նաև տեխնիկական մի անհարմարության։ Անկախ այն բանից, թե հակադրության երկրորդ անդամը ինչ հատկանիշով է բնութագրվում՝ դրական, թե բացասական, բանաձևի կամ տառային արտահայտության մեջ հանդիպում ենք միայն դրական և բացասական հակադրության։ Այսպես Ա—$\overline{Ա}$, Հ—$\overline{Հ}$, Գ—$\overline{Գ}$, Ք—$\overline{Ք}$ և այլն։ Այս կարգի բանաձևման անհարմարությունն այն է, որ Հ—Հ, Գ—$\overline{Գ}$ և այլն պիտի հասկանանք՝ հատկացական—ոչ հասկացական, գործընթացային—ոչ գործընթացային և այլն, մինչդեռ Ա—$\overline{Ա}$, Ք—$\overline{Ք}$ և այլն, պիտի հասկանանք՝ առարկայնություն—որակայնություն, քերականական իմաստ—արտահայտչական իմաստ և այլն։ Այլ կերպ ասած, բանաձևերում երկրորդ անդամի դրական հատկանիշով բնութագրվող միավորները ներկայացվում են ոչ թե իրենց սկզբնատառով, այլ հակադրության առաջին միավորի բացասական նշում ունեցող սկզբնատառով՝ $\overline{Ա}$, Ք և ոչ թե Ո (որակայնություն), Ա (արտահայտչական իմաստ), որպիսի նշանակության համար գործածվում են նրանք։

Էդ. Աղայանը բառերի դասակարգման իր տախտակներում ± նշանը գործածում է այս կամ այն խոսքի մասը ներկայացնող

բառի կամ բառերի այն հատկանշային հակադրության վանդակում, ուր տվյալ խոսքի մասը բնութագրվում է հակադրության երկու հատկանիշներով էլ։ Այսպես օրինակ՝ նախադասության անդամ — ոչ անդամ հատկանշային հակադրության դիմաց գոյական անունն ունի ± նշում, որը նշանակում է, թե գոյականը և՛ լինում է նախադասության անդամ, և՛ չի լինում։ Իրրև կոչական նա նախադասության անդամ չէ, իսկ մյուս դեպքերում նախադասության անդամ է։

Այսպիսի նշում ունեն նաև դերանունները առարկայնություն — որակայնություն, գործընթացայնություն — ոչ գործընթացայնություն, ինքական հատկանիշ — զուգորդող հատկանիշ, որակային հատկանիշ — քանակային հատկանիշ հակադրություններին վերաբերող վանդակներում։ Այդ վանդակների ± նշանը ցույց է տալիս, որ դերանունը արտահայտում է և՛ առարկայնություն, և՛ որակայնություն, այն էլ՝ և՛ որակական, և՛ քանակական ինքնակա ու զուգորդող հատկանիշներ, մինչդեռ նյութական նշանակության մյուս խոսքի մասերը կարող են արտահայտել այս հասկացություններից մեկն ու մեկը միայն։

Առաջին իսկ հայացքից, սակայն, երևում է, որ Աղայանն իր այս ± նշանը գոյականների և դերանունների համար նույն նշանակությամբ չի գործածել։ Թեև միևնույն գոյականը կամ բոլոր գոյականները նախադասության մեջ կարող են և՛ կոչական լինել, և՛ նախադասության անդամ, ուստի և բնութագրվել այդ երկու հատկանիշով էլ, ապա նույն դերանունը կամ բոլոր դերանունները չէ, որ ցույց են տալիս և՛ առարկա, և՛ որակային հատկանիշ, և՛ քանակային հատկանիշ և այլն։ Դերանուններն ըստ այս հատկանիշների տարբեր խմբերի են բաժանվում, ուստի և նրանցից յուրաքանչյուրն այդ հատկանշային հակադրությունների դիմաց պիտի ունենա կա՛մ +, կա՛մ — նշանը, բայց ոչ երկուսը միասին։ Այս հակադրություններում, ուրեմն, էդ. Աղայանը խախտում է դասակարգման սկզբունքը, ± նշանը գոյականի համար գործածում է այլ նշանակությամբ, դերանունների համար՝ այլ։ Պատճառը հայտնի է. նա պիտի հիմնավորի դերանունների մեկ խոսքի մաս լինելու ավանդական տեսակետը. իսկ վերոհիշյալ հատկանշային տարբերությունները ոչ թե հաստատում, այլ հերքում են այդ տեսակետը, կամ, մեղմ ասած, չեն խոսում դրա օգտին։ Ահա թե ինչու բոլոր դերանուններին հավասարապես վերագրվում են գոյականի, ածականի, թվականի և մակբայի խոս-

քմահաճային իմաստներ, իսկ հետո էլ սրանք դերանվան համար էական հատկանիշ կամ խոսքիմասային իմաստ չեն ճանաչվում, և Աղայանի կազմած իմաստային դասակարգման տախտակը մաքրվում է այս ± նշանից և նրա բերած վերոհիշյալ հակասություններից։

Ուշադրության է արժանի նաև այն, որ ռուս լեզվաբան Մ. Վ. Պանովի խոսքի մասերի դասակարգումը քննադատելիս, Աղայանը, չհամաձայնելով դերանունը մյուս խոսքի մասերի վրա բաշխելու նրա տեսակետին, ռուսերենի «ինչ անել» հարադրական բայը «դերանվանական բայ» կոչելու նրա ձևակերպման կողքին դնում է զարմանքի նշան (!)[34]։ Բայց երբ Աղայանն ինքն է որոշում դերանվան իմաստային բովանդակությունը, այն բնութագրում է որպես գործընթացայնություն—ոչ գործընթացայնություն հատկանիշներով օժտված (±) խոսքի մաս։ Այլ կերպ ասած, այս դեպքում Պանովի պես նա ևս գտնում է, որ «դերանունը կարող է ունենալ... նույնիսկ բայի խոսքիմասային իմաստ» (էջ 131)։

Որոշակի երևում է, որ իր գործադրած երկանդամ հակադրության սկզբունքը չխախտելու համար Աղայանը բառերի դասակարգման իր առաջարկած հակադրությունների 9 և 10-րդ աստիճաններում ստեղծել է երկանդամ ձևական հակադրություն ի վնաս բովանդակության։ Արտահայտչական իմաստ ունեցող բառերն ըստ բովանդակության կազմում են եռանդամ հակադրություն՝ 1. զգացմունքային վերաբերմունք, 2. մտածական վերաբերմունք, 3. բնաձայնություն ցույց տվող բառեր։ Մինչդեռ հեղինակն իր դասակարգման 9-րդ կետում արտահայտչական բառերը բաժանում է զգացմունքային և մտածական վերաբերմունք ցույց տվող բառատեսակների, որոնց գումարը չի տալիս արտահայտչական իմաստ ունեցող բառերի ամբողջությունը, քանի որ հակադրությունից դուրս են մնացել բնաձայնական բառերը, որոնք ո՛չ մտածական և ո՛չ էլ զգացմունքային իմաստ չեն ցույց տալիս։ 10-րդ աստիճանի՝ բնաձայնություն—ոչ բնաձայնություն հակադրությունն էլ ձևական է, քանի որ ոչ բնաձայնություն ցույց տվող վերաբերմունքային իմաստ ունեցող արտահայտչական բառերը 9-րդ աստիճանում արդեն առանձնացված են, և սա ավելորդ կրկնություն է։

---

[37] Տե՛ս է. Թ. Աղայան, նշվ. աշխ., էջ 113։

Աղայանի դասակարգման մեջ նկատում ենք վեճեր հարուցող տերմինագործածության առանձին օրինակներ։

Բառերի իմաստային երկատման 7-րդ աստիճանում հեղինակն ընդունում է բերականական իմաստ–արտահայտչական իմաստ հակադրությունը։ Բառերն ըստ գործառական հատկանիշների երկատելիս երկրորդ աստիճանում ընդունում է ցուցողական–արտահայտչական հակադրությունը։ Այսպիսով, արտահայտչական անվանումը գործածվում է մե՛կ իմաստային, մե՛կ գործառական նշանակություններով կամ բովանդակությամբ՝ առաջացնելով տերմինի բազմիմաստություն, որը նման դեպքերում բնավ խրախուսելի չէ։

Իմաստային հակադրության երրորդ աստիճանում ստանում է առարկայություն–որակայություն հակադրությունը, ուր որակայության հատկանիշով բնութագրված են գոյականին, որպես առարկայական նշանակության բառի, հակադրվող հատկանշային բոլոր բառերը՝ բայ, ածական, թվական, մակբայ։ Դասակարգման 6-րդ աստիճանում ածականի և թվականի հատկանշային հակադրությունը ձևակերպված է որակային հատկանիշ–քանակային հատկանիշ (էջ 126), այսինքն այստեղ էլ որակայնությունը հակադրվում է քանակայնության։

Երկատման 5-րդ աստիճանում մակբայը ածականից և թվականից անջատող հատկանիշ է համարված իմաստական հատկանիշ–զուգորդող հատկանիշ հակադրությունը։ Եթե զուգորդող հատկանիշ անվամբ կարելի է բնութագրել մակբայը որպես հատկանիշի վրա դրվող, ուստի նրան զուգորդող հատկանիշ, ապա իմաստական հատկանիշ անվանումը, որպես ածականի և թվականի իմաստային հատկանիշի անվանում, շատ աննպատակահարմար և շփոթեցնող է։ Աղայանն իզուր է իր իսկ քանիցս գործածած «առարկայի հատկանիշ—հատկանիշի հատկանիշ» ձևակերպումը փոխարինել «ինքնակա հատկանիշ—զուգորդող հատկանիշ» ձևակերպումով։

Զուգորդող հատկանիշ կամ հատկանիշի հատկանիշ արտահայտող բառերի առանձնացումը հատկանիշ ցույց տվող բառերից թե՛ Ս. Աբրահամյանի, թե՛ Աղայանի դասակարգման մեջ կատարվում է երկատման ավելի բարձր աստիճանում, քան ածականի և թվականի տարբերակումն իրարից։ Այնպես որ մակբայ խոսքի մասի առանձնացումն ու ճանաչման ընթացքը նախորդում են ածականին ու թվականին միևնույն պիտի լինի հակառակը։

«Ժամանակակից հայերենի հոլովումը և խոնարհումը» աշխատության մեջ ճշգրտելով «Լեզվաբանության ներածության» մեջ արտահայտած իր կարծիքը՝ Աղայանը ձայնարկություններն անջատում է հասկացություն կամ նյութական նշանակություն ցույց տվող բառերից և միավորում է «ոչ հասկացական իմաստ» ունեցող այլ կարգի բառերին։

Հայերենի բառերը երկանդամ հակադրություններով ըստ խոսքի մասերի դասակարգելու այս առաջին իսկ աստիճանում Աղայանը հարկադրված է լինում տալու իմաստաբանությանը վերաբերող իր գործածած որոշ տերմինների ու սրանց հասկացությունների պարզաբանումը։ Նա վեճի է բռնվում լեզվաբան Լ. Օ. Ռեզնիկովի հետ այն հարցում, որ նա գտնում է, թե «Որոշ հասկացությունների բովանդակությունը կարող է բաղադրվել ոչ թե առարկայական (թանձրացական), այլ հենց գործառական բնույթ ունեցող հատկանիշներից։ Դրանք որոշ հարաբերությունների (կախման, վերաբերության, պատկանելության և այլն) հասկացություններն են։ ...Իսկ սա իր հերթին նշանակում է, թե սպասարկու բառերը, ինչպես և լիիմաստները, արտահայտում են որոշակի հասկացություններ» (էջ 116—117)։

Բերելով բառերի զանազան հարաբերությունների արտահայտման վերաբերող օրինակներ և սրանք հակադրելով իրերի հարաբերություններն արտահայտող հասկացությունների հետ՝ Աղայանը եզրակացնում է. «Ինչպես տեսնում ենք, իրարից բոլորովին տարբեր բաներ են առարկաների միջև եղած հարաբերությունների հասկացությունները և բառերի միջև եղած հարաբերությունները. առաջինները օբյեկտիվ առարկաների հարաբերություններն են վերացարկված և ընդհանրացված մեր գիտակցության մեջ, իբրև հարաբերություն ինքնին, անկախ առարկաներից. երկրորդները բառերի միջև ստեղծված հարաբերություններն են նրանց կապակցության միջոցով, որոնք ոչ թե որևէ հարաբերության հասկացություն են արտահայտում, այլ ստեղծում են հենց որևէ հարաբերություն» (էջ 120)։

«Այս բոլորի եզրակացությունն այն է, որ կապերն ու շաղկապներն ունեն բառիմաստ, բայց նրանց բառիմաստը հասկացություն չէ, այլ քերականական իմաստ, և իբրև այդպիսին հասկացական տարբերակում չունի» (էջ 122)։

Հասկացություն տերմինի իր սույն ըմբռնման շարադրանքով՝ Աղայանը նոր մոտեցում է ցուցաբերում բառերի իմաստային կա-

ուշվածքին և նրանց իմաստային դասակարգման խնդրի նկատմամբ։

Նա հայագիտության մեջ առաջին անգամ տարբերակում է մտցնում բառային իմաստ և բառիմաստ անվանումների, հետևաբար նաև՝ սրանց հասկացությունների մեջ։ Նրա մեկնաբանությամբ ամեն բառ ունի իր իմաստը, լինի այն հասկացական, թե քերականական, որն անվանվում է բառիմաստ։ Բայց ոչ բոլոր բառերն են, որ ունեն բառային իմաստ։ Բառային իմաստ այն բառիմաստն է, որը բովանդակում է հասկացություն կամ հասկացություններին հարաբերակցվող զգացմունք ու վերաբերմունք։ Այս մոտեցմամբ բոլոր բառերն ունեն իմաստ կամ բառիմաստ. ընդ որում՝ կապերի ու շաղկապների բառիմաստը նրանց արտահայտած քերականական իմաստն է, նյութական նշանակության խոսքի մասերի բառիմաստը սրանց արտահայտած առարկայական ու հատկանշային հասկացություններն են, որոնք միաժամանակ բառային իմաստ են, իսկ ձայնարկությունների, եղանակավորող բառերի և բնաձայնությունների բառիմաստը սրանց արտահայտած զգացմունքը, վերաբերմունքն ու նմանաձայնություններն են, որոնք հարաբերակցվելով հասկացություններին նույնպես դառնում են բառային իմաստ։

Աղայանն այս եղանակով կամեցել է լուծել նաև ձայնարկությունների և այլոց ու իր կողմից սրանց միավորված եղանակավորող բառերի ու բնաձայնությունների իմաստային պատկանելության հարցը, բայց, ինչպես երևում է, այդ հարցը վերջնական լուծում չի ստացել։

Իրականում իմաստային եռանդամ հակադրություն՝ **ճասկացական իմաստ, էբեականական իմաստ, ոչ ճասկացական և ոչ էլ էբեականական իմաստ,** *մտցվում է երկանդամ հակադրության մեջ՝* **էբեականական բառիմաստ–բառային բառիմաստ,** *վերջինիս միավորելով ոչ հասկացական իմաստ ունեցող* **վերաբերմունքային** *նշանակության խոսքի մասերը, որպիսի միավորումը հիմնավորվում է ոչ այլ բանով, քան «հարաբերակցվում են դրանց հասկացությունների հետ» ձևակերպումով։*

Աղայանն այստեղ Ս. Աբրահամյանի պես միավորում է ձայնարկություններն ու եղանակավորող բառերը, որպես իմաստային ընդհանուր տիպի խոսքի մասեր։ Նա էլ ձայնարկությունների և եղանակավորող բառերի տարբերակիչ իմաստային հատկանիշը համարում է զգայական վերաբերմունք–մտածական վերաբերմունք

հակադրությունը։ Բայց քանի որ նա սրանց է միավորում նաև բնաձայնությունները, որպեսզի հետո սրանք առանձնացնի որպես առանձին խոսքի մաս, ուստի և վերջիններիս մեջ չտեսնելով վերաբերմունքայնության որևէ իմաստ՝ այս երեք խոսքի մասերի համար միավորիչ իմաստային հատկանիշ է համարում արտահայտչական իմաստը, որով նրանք հակադրվում են ճեռականական իմաստ ունեցող ոչ հասկացական խոսքի մասերին։

Աղայանը, սրանք արտահայտչական իմաստ ունեցող բառեր համարելով, իր այս տերմինին իմաստային պարզաբանում ու որևէ սահմանում չի տալիս։ Հետևաբար Աղայանը նույնպես ոչնչով չի հիմնավորում, որ եղանակավորող բառերը ոչ թե քերականական, այլ մի ինչ-որ այլ կարգի իմաստ ունեն։

Մեր կարծիքով, հստակ բովանդակություն չունի տարբերակված իմաստ–չտարբերակված իմաստ հակադրությունը, որով դերանունները միավորվում են կապերին ու շաղկապներին, որպես չտարբերակված իմաստ ունեցող խոսքի մասեր, իսկ մյուս բոլոր խոսքի մասերը՝ հասկացական ու ոչ հասկացական, միավորվում են մի խմբի մեջ, որպես տարբերակված իմաստ ունեցող խոսքի մասեր։ Լեզվական ի՞նչ արժեք ունի այս հակադրությունը, երբ դեպի–ն ու բայց–ը պիտի բնութագրվեն որպես չտարբերակված իմաստներ, իսկ անշուշտ–ն ու շրխկ–ը՝ տարբերակված։

Չտարբերակված տերմինը, ի հակադրություն տարբերակվածի, շատ է գործածվում դերանունների իմաստային տարբերությունը անուններից ցույց տալու համար։ Աղայանը թեև ընդլայնել է սրա գործածության շրջանակը, բայց դերանունների համար էլ այդ տերմինի գործածությունը հստակ բովանդակություն չունի։ Աղայանը դերանվան մեջ տեսնում է միայն խոսքիմասային իմաստ։ Իրենց խոսքիմասային իմաստով դերանունները միանգամայն տարբերակված են. դեռ ավելին, նրանցում, ըստ Աղայանի, կա և՛ իրենց խոսքիմասային ընդհանուր իմաստը, և՛ մյուս նյութական խոսքի մասերի իմաստը։ Եթե խոսքիմասային իմաստը առարկայականության, հատկանշայնության և այլնի ընդհանուր իմաստն է, ապա դերանուններն այդ ընդհանուր իմաստները որոշակիորեն արտահայտում են։ Հետևաբար չտարբերակված տերմինը թեև համարվում է դերանվան խոսքիմասային իմաստի որոշիչ, բայց վերաբերում է դերանվան բառային իմաստին։ Աղայանն իրավացիորեն դերանվան մեջ բառային իմաստ չի տեսնում։ Այստեղ էլ, ուրեմն, այդ չտարբերակվածը վերաբերում է չեզած ի-

մաստին։ Չեզած բանի տարբերակված կամ չտարբերակված լինելը ո՞րն է։

Հայերենի խոսքի մասերի դասակարգման տեսության մեջ մտցնելով ենթախոսքամաս հասկացությունը՝ Աղայանը դրանով կրկին շոշափում է խոսքիմաստային իմաստը ըմբռնումը։ Դերանունների մեջ տեսնելով «նույնպիսի հարաբերություն, ինչ որ հնչույթաբանության մեջ՝ հնչույթների ու ենթահնչույթների միջև» (էջ 133)՝ Աղայանը գտնում է, որ դերանունների մեջ առարկայնություն—հատկանշայնություն, որակայնություն—քանակայնություն և այլ հատկանշային հակադրությունները խոսքիմաստային տարբերիչ արժեք չունեն, ուստի և էական չեն դերանվան խոսքիմաստային պատկանելությունը որոշելու հարցում։

«Այս պատճառով էլ,— եզրակացնում է նա,— առարկայնության կամ որակայնության, ինչպես և զուգակցվող կամ ինքնակա, որակային կամ քանակային հատկանիշի իմաստ արտահայտող դերանունները կդիտվեն իբրև դերանվան ենթախոսքամասեր, այսինքն՝ այն, ինչ որ սովորական լեզվով կոչում ենք դերանվան տեսակներ» (էջ 133)։

Նախ որ սովորական լեզվով դերանվան տեսակներ կոչվածները (անձնական, ցուցական, հարցական և այլն) բնավ էլ տարբերակված չեն իրենց առարկայնության կամ որակայնության, զուգակցվող կամ ինքնակա, որակային կամ քանակային հատկանիշների հիման վրա։ Գալով այն բանին, որ հնչույթի հնչյունական տարբերակները իմաստազատիչ դեր չունեն և դրա համար էլ չեն մտնում նրա հնչույթային բովանդակության մեջ, իրոք այդպես է և հիմնավորվում է լեզվական համապատասխան օրինակներով։ Ինչ վերաբերում է դերանվան հասկացական չտարբերակված խոսքիմաստային իմաստին և նրա ներսում եղած առարկայական, որակային, քանակային և այլ հատկանշային իմաստների հարաբերությանը, ապա սրանցից վերջիններիս խոսքիմաստային իմաստի որոշման մեջ ոչ իմաստազատիչ արժեք վերագրելը Աղայանը ոչ թե հիմնավորում է լեզվական օրինակներով, այլ այն դատողությամբ, թե «մյուս հատկանիշները (ինքնակա—զուգորդող, որակային—քանակային) չեն մտնում խոսքիմաստային բովանդակության մեջ, որովհետև չկա մի ուրիշ խոսքի մաս, որն արտահայտեր դրժվել չտարբերակված հասկացական իմաստ, բայց ցույց չտար առարկայնության կամ որակայնության հատկանիշ» (էջ 133)։

Իսկ ո՞վ է որոշել, որ այդպիսի մի այլ խոսքի մաս չկա, և որ առարկայնություն—որակայնություն և այլ հակադրություններն այստեղ խոսքի մասեր տարբերակելու չափանիշ չեն։

Ինչպես Ս. Աբրահամյանի տեսակետները քննարկելիս արդեն ասել ենք, մեզ համար այս մոտեցումը գիտական արժեք կունենար, եթե առարկայական—հատկանշային հակադրություններին խոսքիմասային տարբերակիչ արժեք չտրվեր նաև անուն խոսքի մասերը իրարից զանազանելու մեջ։ Եթե անուններում այդ հակադրություններով որոշվում են խոսքի մասեր և ոչ թե «ենթախոսքամասեր», ապա այստեղ այլ մոտեցում ցուցաբերելը այլ կերպ չի կարող գնահատվել, քան դասակարգման սկզբունքի խախտում կամ անհետևողականություն։

Նույն հիմնավորմամբ Աղայանը մակբայի ներսում «ենթախոսքամասային» հակադրություններ է համարում որակային, քանակային, ժամանակային, տարածական իմաստների հակադրությունները։

Հեղինակի «ենթախոսքամաս» տերմինը իմաստային տեսակետից «խոսքամասային իմաստ» տերմինի պես դառնում է անորոշ ու անսահմանելի, երբ «ենթախոսքամասեր» են ճանաչվում ընդունված խոսքի մասերի բոլոր ենթատեսակները, ինչպիսիք են գոյական անվան՝ հատուկ և հասարակ, թանձրացական և վերացական, շաղկապի՝ ստորադասական և համադասական և այլն տեսակները։

Էդ. Աղայանի խոսքի մասերի իմաստային դասակարգման վերաբերյալ մեր վերոհիշյալ դիտողությունները հիմնականում ունեն այդ դասակարգումն ավելի հետևողական ու անթերի տեսնելու նպատակ, և մենք հեռու ենք այն մտքից, թե մեր քննադատությունն անվերապահորեն ընդունելի ու առավել համոզիչ է, քան հեղինակի այդ դատողությունները ու կարծիքները։ Լեզվական իմաստներն այնքան վերացական ու անշոշափելի իրողություններ են, որ նրանց մասին ու նրանց օգնությամբ տեսություններ հորինելիս դրանց իսկությունը հաստատող օբյեկտիվ ու անառարկելի չափանիշներ վկայակոչելը շատ դժվար է։ Այս բանը քաջ գիտակցում է Աղայանը, դրա համար էլ իմաստային դասակարգման իր տարբեր տախտակներն ու բանաձևերը կառուցելուց հետո ի վերջո իր խոսքն ավարտում է այսպես. «Այդ բանաձևերի համաձայն կարելի է ավտոմատ կերպով որոշել տվյալ բառի խոսքամասային պատկանելությունը, եթե մեզ տրված են այդ

բառի իմաստային հատկանիշները։ Բայց որտեղի՞ց մենք գիտենք, թե, օրինակ, հայր բառն ունի առարկայության հասկացական տարբերակված իմաստ. միայն լեզվի իմացությամբ, մեր ներքին ըմբռնումով։ Չկա որևէ չափանիշ կամ միջոց, որն օբյեկտիվորեն և մեքենայորեն որոշեր նրա իմաստային այդ հատկանիշները։ Թեև այսպես է, ավելի դժվար է նրանց բառիմաստի ավտոմատիկ որոշումը։ Եվ այդ է պատճառը, որ հակառակ այս բնագավառում կատարված հսկայական աշխատանքին, առայժմ իմաստների ձևական նկարագրությունը դեռևս մեծ հաջողությունների չի հասել» (էջ 148—149)։

Մենք դժվարանում ենք ասել, թե իմաստների ձևական նկարագրությունը երբ մեծ հաջողությունների կհասնի, բայց քանի որ առայժմ դրան չի հասել, ապա խոսքի մասերի իմաստային դասակարգումը մնում է որպես մասնակի դասակարգում. այն կամ պետք է համալրվի լեզվական այլ հատկանիշներով, կամ էլ նրան զուգահեռ պիտի կատարվեն այլ հիմունքներով կատարված դասակարգումներ։

Այսուամենայնիվ էդ. Աղայանի հայերենի խոսքի մասերի բազմահատկանիշ աստիճանական դասակարգումը, որպես բառերի իմաստային դասակարգման օրինակ, խիստ ուշագրավ է։

Իբրև այդ դասակարգման առավելություններ կարելի է հիշատակել հետևյալները։

1. Հայերենի բառերի ըստ խոսքի մասերի դասակարգման համար իմաստային հիմունքը բավարար համարելով հանդերձ, Աղայանը չի անտեսում բառերի մյուս՝ բառակազմական, ձևաբանական, շարահյուսական հատկանիշները։ Նրա առավել լայն ու բազմահատկանիշ տախտակներում հաշվի են առնվում նաև բառերի այս կարգի հատկանիշները։

2. Շարունակում և կատարելագործում է հայերենի խոսքի մասերի դասակարգման աստիճանական երկանդամ հակադրության եղանակը։

3. Հեղինակը մտցնում է հասկացական իմաստ–ոչ հասկացական իմաստ, բառիմաստ–բառային իմաստ հասկացությունների տարբերակումը և սրանց վերաբերյալ տալիս է գիտական նոր պարզաբանումներ։

4. Հայերենի խոսքի մասերի համակարգում բացահայտում է խոսքի մասերի չեզոքացման և գերխոսքամասի գոյության իրողությունը։

5. Հայ քերականագիտության մեջ խոսքի մասերի տեսակների կամ ենթատեսակների համար Աղայանն առաջին անգամ գործածում է «ենթախոսքամաս» տերմինը, որի խոսքի մասերի հետ ունեցած իմաստային փոխհարաբերության հետագա ճշգրտումը անպայման կնպաստի բառերի իմաստային դասակարգման և նրանց խոսքիմասային փոխանցումների ու շփման երևույթների պարզաբանման գործին:

6. Դերանունների մեկնաբանության մեջ պատշաճ ուշադրություն է դարձնում դերանունների և սրանց հարաբերակից խոսքի մասերի իմաստային ու քերականական ընդհանրությունների վրա:

7. Աղայանը վերահատատում է եղանակավորող բառերի, որպես ինքնուրույն խոսքի մասի, գոյությունը հայերենում, ապա իր հերթին առաջին անգամ նմանաձայնություններն առանձնացնում է ձայնարկություններից որպես առանձին խոսքի մաս:

Ընդհանուր ամփոփում.— Հայերենի խոսքի մասերի դասակարգման նոր շրջանի տեսությունների մեջ կատարած քննությունից պարզվում է, որ այդ դասակարգումները, չնայած իրենց տեսական սկզբունքների ու տերմինագործածության տարբերությունների, իրև դասակարգման արդյունք ստանում են խոսքի մասերի նույն ավանդական համակարգը: 19-րդ դարում այլ լեզուների քերականագետների նման հայ քերականներն էլ, նախկին «անուն» խոսքի մասը տրոհելով գոյական, ածական, թվական խոսքի մասերի, հայերենում տարբերակում են տասը խոսքի մաս: Պալասանյանի հաջորդները, իրագործելով Պետերմանի առաջարկը, դերբայ (նախկին «ընդունելություն») խոսքի մասը մեքավորում են բային և ստանում հայերենի խոսքի մասերի այսօրվա համակարգը: Պալասանյանի ու նրա հաջորդների ծառայությունը լինում է այս ավանդական համակարգի մեջ առանձնացված խոսքի մասերի էական ու երկրորդական հատկանիշների գիտական վերլուծությունն ու նրանց փոխհարաբերությունների պարզաբանումը:

Եթե մի կողմ թողնենք հայերենի խոսքի մասերի համակարգում եղանակավորող բառերի և նմանաձայնությունների, իրև ինքնուրույն խոսքի մասերի, առանձնացման առաջարկները, ինչպես նաև որոշ խոսքի մասերի բնութագրման վերաբերյալ եղած առանձին տարակարծությունները, ապա խոսքի մասերի դասակարգման նոր շրջանի վերը բնութագրված տեսությունների մեջ հիմնականը և ամենատարածվածը իմաստաբանական-տրամաբանական դասակարգումը կամ հայերենի խոսքի մասերի ավան-

դական համակարգը իմաստային-իմացաբանական հիմունքով մեկնաբանելու, հիմնավորելու մոտեցումը կլինի։ Նոր շրջանի հայագետների մեծամասնությունը (Ստ. Պալասանյան, Ա. Դարիքեան, Գ. Սևակ, Էդ. Աղայան, Ս. Աբրահամյան) խոսքի մասերի դասակարգման միակ կամ հիմնական սկզբունք են համարում բառերի իմաստային հատկանիշը, ըստ այդմ էլ մեկնաբանում են խոսքի մասերի ավանդական համակարգը։

Հեռու գինելով խոսքի մասերի իմաստաբանական դասակարգմանը հետևող բոլոր հայագետներին այս հարցում նույն հայացքները վերագրելու մտքից (նրանց հայացքների ընդհանրություններն ու տարբերությունները տեսանք իր տեղում)՝ մենք նկատում ենք Մ. Աբեղյանի և Հր. Աճառյանի՝ խոսքի մասերի դասակարգման տեսական սկզբունքների տարբերությունները բոլոր նախորդներից և միմյանցից։

Մ. Աբեղյանը, ինչպես տեսանք, խոսքի մասերի դասակարգման իմաստաբանական-շարահյուսական կամ իմաստաբանական-գործառական սկզբունքի հետևորդ է։ Աբեղյանը բառերը բաժանում է խոսքի մասերի ըստ այն նշանակությունների, որոնցով պայմանավորվում է նրանց հիմնական կիրառությունը նախադասության մեջ։ Եթե բառի նշանակության տարբերակմանը չի հետևում գործառական տարբերակում, ապա այդ իմաստային բաժանումը խոսքիմասային տարբերակիչ արժեք չունի։ Այդ սկզբունքի հետևողական կիրառությունը Աբեղյանին բերում է այն համոզման, որ նախադասության անդամ չեղող և նյութական բովանդակություն չունեցող բառերը խոսքի մասեր չեն։ Դրանք հայերենում երկու այլ խմբեր կազմող բառեր են.

ա) ձայնարկություններ, որ ընդհանրապես դուրս են մնում խոսքի կապակցությունից և բ) ձևական (քերականական) նշանակության բառեր, որոնք անվանվում են «խոսքի մասնիկներ»։

Հր. Աճառյանը թեև նախադասությունից դուրս ընդունում է ըստ նշանակության կամ էապես իրարից տարբերվող խոսքի մասեր, բայց և այնպես բառերի այլ խոսքի մասերի պաշտոնով գործածվելը համարում է խոսքիմասային փոխանցում։ Այսպիսով, Աճառյանի խոսքի մասերի որոշման հիմունքը դառնում է բացարձակ շարահյուսական, չնայած որ նա «Լիակատար քերականության» հատորներում թվականը քննում է թվական, դերանունները՝ դերանուն, իսկ դերբայները՝ բայ անվանումներով։

Այսպիսով, խոսքի մասերի տարբերակման մեր քննած տե-

սությունները լինում են երեք սկզբունքի՝ 1. իմաստաբանական, 2. իմաստաբանական-շարահյուսական, 3. շարահյուսական։

Իրենց բուն էությամբ այս սկզբունքներից և ոչ մեկը անխառն չէ։ Այսուամենայնիվ Մ. Աբեղյանը մնում է որպես իմաստային-շարահյուսական, իսկ Հ. Աճառյանը՝ շարահյուսական սկզբունքով հայերենի խոսքի մասերը դասակարգող լեզվաբան։ Իմաստաբանական սկզբունքին հետևող հայագետները այդ սկզբունքի ըմբռնման ու կիրառման, ապա նաև բառերի իմաստային և այլ հատկանիշների փոխհարաբերությունների հաշվառման մեջ տարբեր մոտեցումներ ունեն։

Իմաստաբանական սկզբունք կիրառող Ստ. Պալասանյանը առաջարկում է խոսքի մասերի տրամաբանական դասակարգում. բոլոր բառերի նշանակությունները համարում է **հասկացություններ** *և «բառերը իրենց պարունակած հասկացությունների համեմատ» բաժանում է խոսքի մասերի։ Ուսուցողական նպատակով գրված քերականության մեջ նա նպատակ չունի բառերի դասակարգման ավելի խոր տեսություն տալու, նրանց այլ հատկանիշների և իմաստային հարաբերությունը վերլուծելու և այլն։*

Մեր այս պահանջը կատարում է Գ. Սևակը, որը, բոլոր բառերի մեջ հավասարապես տեսնելով «լեզվական-իմացաբանական ընդհանուր իմաստ», սա էլ դարձնում է նրանց խոսքիմասային տարբերակման միակ հիմունքը՝ մերժելով բառերի մնացած բոլոր (ձևական-ձևաբանական, բառակազմական, իրադրային, շարահյուսական) հատկանիշները։

Ս. Աբրահամյանի խոսքի մասերի աստիճանական դասակարգման մեջ թեև ասված է, որ «բառերի ընդհանուր իմաստը և չի կարող հանդիսանալ միակ ընդհանուր հիմունք բոլոր խոսքի մասերի միասնական դասակարգման համար»[38], բայց հեղինակը չի մոռանում ասել նաև, որ «նրանց դասակարգման խնդրում առավել մեծ տեղ պետք է տալ բառերի ընդհանուր իմաստին»[39], այնպես որ բառերի ձևաբանական, շարահյուսական, բառակազմական հատկանիշները կարող են գնահատվել «առանձին խոսքի մասերի լրիվ ու սպառիչ ճանաչման համար ըստ անհրաժեշտության» միայն։ Ահա թե ինչու Աբրահամյանի աստիճանական դասակարգման եթե ոչ միակ, ապա հիմնական սկզբունքը դառնում

---

[38] Ս. Գ. Աբրահամյան, *Չքեզվող խոսքի մասերը...*, էջ 55։

[39] *Նույն տեղում*, էջ 54։

է իմաստային, սրա ամենալայն իմաստով, իսկ մյուսները մեկնում են որպես լրացուցիչ, ըստ անհրաժեշտության գործադրվող սկզբունքներ։

Ա. Ղարիբյանը թեև այդ լրացուցիչ սկզբունքների գործադրման անհրաժեշտության հարցում ավելի վարանոտ է, բայց նա ևս գտնում է, որ բառերը պիտի դասակարգել «ըստ նրանց նշանակության, քիչ դեպքում նաև ըստ գործածության»[40]։

Ի տարբերություն Աբրահամյանի, որը մերժում է դասակարգման տարբեր սկզբունքների միասնական կիրառումը և հնարավոր է համարում իմաստային սկզբունքներին զուգահեռ բառերի այլ հատկանիշների հիման վրա խոսքի մասի տարբերակում դասակարգման տարբեր աստիճաններում միայն՝ էդ. Աղայանը խոսքի մասերի դասակարգման ընդհանուր հիմունք է համարում բառերի չորս հատկանիշ. «ա) իմաստ, բ) ձև, գ) ձևավորում, դ) գործառություն»[41]։ Հայերենի համար սրանցից էական է համարում երկուսը՝ «խոսքիմաստային իմաստ և գործառություն»։ Այս երկու հատկանիշների հիման վրա կատարած վերլուծություններից հետո գալիս է այն համոզման, «որ մենք կարող ենք մի կողմ թողնել լրացուցիչ հատկանիշները և իբրև հայերենի խոսքի մասերի դասակարգման հիմունք ընդունել միայն խոսքիմաստային իմաստը»[42]։ Այսպիսով, Աղայանի հայերենի խոսքի մասերի բազմահատկանիշ դասակարգման ողջ ընթացքը դառնում է աշխատանքային մեթոդ կամ եղանակ, որով ըստ հեղինակի, ապացուցվում է, որ հայերենի խոսքի մասերի դասակարգումը կարելի է կատարել մեկ հիմնական, այն է՝ իմաստային սկզբունքով։ Ճիշտ է, թե՛ Աբրահամյանը, թե՛ Աղայանը այստեղ խոսում են ոչ ամեն կարգի իմաստի, այլ խոսքիմաստային իմաստի բացահայտման և ըստ այդմ՝ բառերի դասակարգման մասին, բայց այդ «խոսքիմաստային իմաստ» հասկացությունը ո՛չ նրանց և ո՛չ էլ այլոց համար դեռևս ճանաչման միասնական հիմունքներ ու գիտակցում չունի։

---

[40] Ա. Ղարիբյան, *Հայոց լեզու, դպրոցական դասագիրք, 1964, էջ 83։*

[41] Է. Բ. Աղայան, *Ժամանակակից հայերենի հոլովումը և խոնարհումը, էջ 113։*

[42] *Նույն տեղում, էջ 131։*

Երրորդ գլուխ

ՀԱՅԵՐԵՆԻ ԽՈՍՔԻ ՄԱՍԵՐԻ ՏԵՍԱԿԱՆ ՆՈՐ ՎԵՐԼՈՒԾՈՒԹՅՈՒՆՆԵՐ ԵՎ ՏԱՐԱԲՆՈՒՅԹ ԴԱՍԱԿԱՐԳՈՒՄՆԵՐ

ՀԱՅԵՐԵՆԻ ԽՈՍՔԻ ՄԱՍԵՐԻ ՏԵՍԱԿԱՆ ՀԱՐՑԵՐԻ ՔՆՆՈՒԹՅՈՒՆԸ Ա. ԱԲՐԱՀԱՄՅԱՆԻ ԱՇԽԱՏՈՒԹՅՈՒՆՆԵՐՈՒՄ

Իր տարբեր բնույթի ու ծավալի մենագրական աշխատություններում և գիտական հոդվածներում հայերենի խոսքի մասերի տեսության հարցերին բազմիցս անդրադարձել է Ա. Աբրահամյանը։

Դեռևս 1953 թ. հրատարակած «Հայերենի դերբայները և նրանց ձևաբանական նշանակությունը» աշխատության մեջ Ա. Աբրահամյանը համոզիչ շարադրում է դերբայների առաջացման ու ձևափոխությունների ողջ պատմությունը, միաժամանակ տալով սրանց խոսքիմասային առանձնահատկությունների, դասակարգումների պատմական տեսությունն՝ ըստ հայ քերականագիտության։

Ստ. Պալասանյանի որոշ հետևորդների կողմից դերբայն արդեն առանձին խոսքի մաս չհամարելը Աբրահամյանը դիտում է որպես հայ քերականության պատմության համար «մի կարևոր նորություն», այնուհետև, հայերենի դերբայների աբեղյանական մեկնաբանության համառոտ նկարագիրը տալուց հետո, իրավացիորեն եզրակացնում է. «...պարզ է՝ հարցն արմատապես չի լուծված»։ Սակայն այդ եզրակացությունը չի խանգարում Աբրահամյանին նաև ավելացնելու, թե «պրոֆ. Աբեղյանը դերբայների բաժնում ևս ունի զգալի ներդրումներ քերականագիտության մեջ»[1]։ Հայերենի բայի անդեմ ձևերը դիմավորների հետ բայական մի ընդհանուր համակարգում միավորելու և այդ միավորումը տեսա-

[1] Ա. Ա. Աբրահամյան, *Հայերենի դերբայները և նրանց ձևաբանական նշանակությունը, Երևան, 1953, էջ 37—38։*

կանորեն հիմնավորելու դրական աշխատանքի համար դրվատանքի խոսք է ասում նոր շրջանի հայագետների հասցեին։

Վերոհիշյալ գրքում, ապա «Բայը ժամանակակից հայերենում» ծավալուն մենագրության մեջ Ա. Աբրահամյանը շարունակում է զարգացնել բայի, որպես բառի ու խոսքի մասի, քերականագիտական ըմբռնումը։ Սկսած բայի խոսքիմասային բնորոշ հատկանիշների պարզաբանումից ու բայական բառույթի ծագման հարցից, մինչև այդ բառույթի բառակազմական ու խմաստային նրբերանգների բացահայտումը,— այս ամենը բազմակողմանիորեն քննելով՝ Աբրահամյանը հիմնավորում է հայերենի դերբայների բայական բառույթի առանձին ձևեր և ոչ թե առանձին բառեր լինելու հանգամանքը։

Դերբայներում գործողության գաղափարի ոչ առարկայացված, այլ ընթացքային յուրահատուկ վերացարկմամբ արտահայտվելը, զուգորդվելով բայի սեռի և հոլովառության հատկանիշներին, ըստ Աբրահամյանի, դառնում են բոլոր բայաձևերը մեկ միասնական համակարգում միավորող խոսքիմասային հատկանիշներ[2]։

Բայ խոսքի մասի ու բայական բառույթի մի շարք առանձնահատկությունների հետ՝ հեղինակն առաջին անգամ ընդգծում է, որ «...բայական բառույթները ցուցաբերում են նաև միայն իրենց հատուկ բառակազմական իրողություն. դա բայակազմական մասնիկավորումն է, որը արտահայտվում է իր որոշակի օրինաչափություններով և գործադրման միջոցներով»[3]։

Բայական այս առանձնահատկությունն արտահայտվում է նաև այն բանում, որ, ի տարբերություն մյուս խոսքի մասերի, «Հայերենի բայական բառույթները բնորոշ են կազմության բաղադրականությամբ։ Նրանք սովորաբար միաձուլյի չեն լինում, հիմնական ձևույթի արմատի հետ միշտ մասնիկավորված են լինում»[4]։

Ա. Աբրահամյանը ժամանակին արել է հայերենի խոսքի մասերի պատմությանը վերաբերող այլ կարգի ուշագրավ դիտողություններ ևս։ 1951 թ. հրատարակած «Հայոց լեզվի ուսուցման հիմունքները միջնակարգ դպրոցում» գրքույկում հայոց լեզվի քերականական հարցերի անմշակվածության հետևանք է համարում

---

[2] Տե՛ս Ա. Ա. Աբրահամյան, Բայը ժամանակակից հայերենում, հ.1 , Երևան, 1962, էջ 27։

[3] Նույն տեղում, էջ 69։

[4] Նույն տեղում։

այն հանգամանքը, որ այնպիսի բառեր ու մասնիկներ, ինչպիսիք են թող, հեռց, ապաթե, ևեթ, սոսկ, միայն, մի, տեղավորում են մակբայների մեջ։ «Մեր արդի գրական լեզվում,— գրում է նա,— բավականաչափ հիմքեր կան եղանակավորող բառերի կատեգորիայի, ինչպես նաև մասնիկների ճանաչման համար»[5]։ Այստեղ Աբրահամյանը պաշտպան է կանգնում Մ. Աբեղյանի 30-ական թվականներին արտահայտած կարծիքին, թեև մեջ չի բերում այն, և վերստին հաստատում է հայերենում եղանակավորող ինքնուրույն բառատեսակի և քերականական արժեք ունեցող մասնիկների գոյության միտքը։

Հայերենում եղանակավորող բառերը որպես առանձին խոսքի մաս ճանաչելու իր տեսական եզրակացությանը Աբրահամյանը 1952 թ. տալիս է գործնական կիրառություն։ Նա իր «Գրաբարի ձեռնարկում» առաջին անգամ գրաբարի մակբայներից առանձնացնում է եղանակավորող բառերը, որպես առանձին բառատեսակ, և սրանք ըստ եղանակավորման իմաստի բաժանում է հինգ ենթատեսակի՝ «հաստատական, երկբայական, հարցական, ժխտական, ցուցական»[6]։

Հայերենի խոսքի մասերի տեսության մի շարք պրոբլեմային հարցերի սեփական պարզաբանումներով հեղինակի մյուս աշխատություններից առանձնակի ուշադրության է արժանի «Խոսքի մասերի և նախադասության անդամների փոխհարաբերության հարցի շուրջ» ծավալուն հոդվածը, որ լույս տեսավ «Հայոց լեզուն և գրականությունը դպրոցում» ամսագրի 1971 թ. 6-րդ համարում։ Թեև Աբրահամյանի հիմնական նպատակն այստեղ հայերենի նյութի վրա բառ, խոսքի մաս և նախադասության անդամ հասկացությունների քննությունն է, բայց այս կապակցությամբ տրվում են խոսքի մասերի տեսությանը և, մասնավորապես, հայերենի խոսքի մասերի համակարգին վերաբերող մի շարք վիճելի հարցերի յուրովի պարզաբանումներ։

Բառը, որպես խոսքի իրականացմանը ծառայող լեզվական իմաստակիր միավոր, Աբրահամյանի կողմից առանձնացվում և հակադրվում է նախադասությանը, որպես մտքի ձևավորման ու հաղորդակցման միավորի։ Նա համաձայն է է. Բենվենիստին, ըստ

---

[5] Ա. Ա. Աբրահամյան, *Հայոց լեզվի ուսուցման հիմունքները միջնակարգ դպրոցում, 1951, էջ 3։*

[6] Ա. Ա. Աբրահամյան, *Գրաբարի ձեռնարկ, 1952, էջ 316։*

որի «...բառը կարելի է սահմանել որպես նվազագույն իմաստավոր ազատ միավոր, որը կարող է նախադասություններ կազմել»[7]։

Բայց քանի որ նախադասության բաղադրիչ բառերը «նախադասության մեջ մտնում են ոչ միայն բառական, այլև քերականական արժեքով», ապա լեզվաբանության մեջ բառական մակարդակի այդ կառուցվածքային միավորները (բառույթները), ըստ Աբրահամյանի, պիտի ճանաչվեն ու գնահատվեն նաև իրենց «ունեցած քերականական արժեքով և կիրառական հատկություններով»։ Այսպիսով, բառը դիտելով որպես բազմադիմի կամ բազմակողմանի լեզվական միավոր՝ Աբրահամյանը աշխատում է պարզաբանել բառի մեջ նրա բառային, քերականական և գործառական արժեքների կամ հասկացությունների փոխհարաբերությունը, որը այլ բան չէ, քան բառ, խոսքի մաս և նախադասության անդամ հասկացությունների փոխահարաբերության պարզաբանում։

Ա. Աբրահամյանը այլոց նման քննադատում է կառուցվածքային լեզվաբանության այն ուղղությունները, որոնք կա՛մ ձևական մոտեցմամբ խոսքի մասերը սահմանափակում են ձևական հատկանիշներով իմբավորվող մի քանի բառախմբերով՝ բաց թողնելով շատ ու շատ բառեր, կա՛մ էլ շարահյուսական մոտեցմամբ «խոսքի մասերն ու նախադասության անդամները ներառում են իբրև մեկ հասկացություն՝ մեկ խմբի մեջ ընդգրկելով այնպիսի խոսքի մասեր, որոնք իրականում տարբեր են»[8]։ Այս հարցում Աբրահամյանը համամիտ է այլոց հետ նաև Վ. Վինոգրադովին, որը գտնում է, թե «խոսքի մասերի և նախադասության անդամների միջև կա կապ և նույնիսկ փոխհարաբերություն, բայց չկա զուգահեռականություն»[9]։

Խոսքի մասերի պատմական ըմբռնման հակիրճ շարադրանքից հետո Աբրահամյանը իր սույն աշխատանքում, ի պատասխան «Ի՞նչ են խոսքի մասերը մեր ժամանակների ըմբռնմամբ» իր առաջադրած հարցի, Օ. Ս. Ախմանովայի «Լեզվաբանական տերմինների բառարանի» համապատասխան բառահոդվածի մեջբերմամբ, թվարկում է հետևյալ որակումները. «բառերի քերականական-իմաստաբանական կարգեր», «բառերի քերականական-իմաս-

---

[7] «Հայոց լեզուն և գրականությունը դպրոցում», № 6, 1971, էջ 35։

[8] Նույն տեղում, էջ 36։

[9] Նույն տեղում։

տաբանական դասեր (խմբեր)», «բառերի քերականական դասեր (խմբեր)», «բառերի բառային-քերականական դասեր (խմբեր)», «նախադասության ձևաբանական անդամներ», «բառերի հարացուցային դասեր (խմբեր)», «բառերի ձևային խմբեր»[10]:

Ա. Աբրահամյանի՝ այդ հարցին տված սեփական պատասխանը հետևյալն է. «Լեզվական նյութի կողմից խոսքի մասերը բառեր են, իսկ քերականական վերացարկվածության կողմից՝ քերականական հասկացություններ: Բառերի՝ որպես խոսքի մասերի, խմբավորումները հենվում են հենց նրանց քերականական վերացարկվածության վրա: Ուրեմն այս տեսանկյունից խոսքի մասային խմբերը քերականական հասկացություններ են: Պարզ է, որ առանց բառային նյութի չէր կարող լինել քերականական խոսքիմասային որևէ վերացարկում: Հիշյալ երկու կողմերը լեզվի մեջ միասնական են»[11]:

Յուրաքանչյուր բառ, ըստ Աբրահամյանի, ունի վերացարկված կամ ընդհանրացած բառային իմաստ, ապա նաև՝ քերականական վերացարկված իմաստ, այսինքն՝ խոսքիմասային իմաստ, հետևաբար «գոյական, ածական, թվական, դերանուն, բայ... հասկացությունները քերականական հասկացություններ են: Այդպիսով էլ նրանք քերականական յուրովի կարգեր են»[12]: Այս հարցում նա համամիտ է Ա. Ռեֆորմատսկուն և նրանից մեջբերում է կատարում ոչ թե նրան քննադատելու համար, ինչպես անում էր Ս. Աբրահամյանը, այլ իր միտքը հաստատելու համար:

Ա. Աբրահամյանը խոսքի մաս հասկացությունը կապում է բառային միավորի հասկացության հետ: «Խոսքիմասային արժեք են ունենում բառապաշարի ինքնուրույն միավորները (բառությունները)»: Ըստ այսմ՝ նա անընդունելի է համարում բառերը խոսքի մասերի և ոչ խոսքի մասերի կամ «խոսքի մասնիկների» ու այլ կարգի բառախմբերի բաժանելու մոտեցումները՝ հանգելով այն եզրակացության, որ «...թեթև լեզվական տվյալ միավորը որպես բառ ճանաչում ունի, ապա պիտի ունենա նաև խոսքիմասային ճանաչում»[13]:

Խոսքի մասերի որոշման հիմունքները քննելիս, Ա. Աբրահամյանը շատերի պես հիմնականը համարում է բառերի դուստ խոս-

---

[10] Նույն տեղում, էջ 38:

[11] Նույն տեղում:

[12] Նույն տեղում:

[13] Նույն տեղում, էջ 39:

քիմաստային իմաստները, ասել է թե՝ իմաստային դասակարգումը։ Քանի որ խոսքիմաստային իմաստն, ըստ նրա, «բառիմաստային վերացարկվածության քերականական վերացարկվածություն է», ապա բառերի խոսքիմաստային դասակարգման հիմնական հիմունքը բառերի այդպիսի իմաստային տարբերակումն է։ Բառերի խոսքիմաստային ընդհանուր իմաստից բխում է և նրանով պայմանավորված են քերականական այլևայլ հատկանիշներ (հոլովում, խոնարհում, թիվ, ժամանակ և այլն)։ Վերջիններիս և բառերի խոսքիմաստային իմաստների փոխհարաբերության մեջ Աբրահամյանը նախապատվությունը տալիս է խոսքիմաստային իմաստին։ Նա համամիտ է Լ. Վ. Շչերբայի այն հայտնի ձևակերպմանը, թե «...Մենք սեղան, աոջ գոյականներ ենք համարում հազիվ թե այն պատճառով, որ նրանք հոլովվում են, ավելի ճիշտ մենք դրանք հոլովում ենք նրա համար, որ գոյականներ են»[14]։

Բայց քանի որ ոչ բոլոր բառերն են իմաստային և կատեգորիալ հատկանիշներով հստակ սահմանազատված, ուստի նաև դիմում ենք բառերի շարահյուսական կիրառությունների, իսկ երբեմն էլ՝ բառաձևափական ձևի օգնությանն։ Ըստ Աբրահամյանի, «Այսպիսով՝ կարելի է ընդունել խոսքի մասերի որոշման գլխավոր կամ հիմնական և օժանդակ հիմունքներ ու միջոցներ։ Գլխավոր հիմունքը ընդհանուր քերականական վերացարկված իմաստն է։ Լրացուցիչ հիմունք է առանձնահատուկ քերականական կարգերի առկայության հաշվառումը, որը կիրառելի է միայն որոշ խոսքի մասերի որոշման մեջ։ Ամենից մասնավոր բնույթ ունի կազմության հաշվառումը։ Օժանդակ միջոց է խոսքիմաստային ընդհանուր իմաստի պարզաբանմանը ուղղված շարահյուսական կիրառության հաշվառումը՝ առանձին դեպքերի համար»[15]։

Ըստ դասակարգման հիմնական հիմունքի կամ խոսքիմաստային ընդհանուր իմաստի հայերենի բառապաշարը տրոհվում է հետևյալ իմաստային խմբերի՝ «առարկայականություն, ընթացայնություն (փոփոխական հատկանիշ), հարաբերականորեն կայուն հատկանշայնություն, քանակական հատկանշայնություն, հատկանիշի հատկանշայնություն, հասկացությունների ընդհանուր նշանակություն՝ փոխարինումով, դատողական վերաբերմունքայնություն, զգայական վերաբերմունքայնություն, լրացուցիչ վերաբեր-

---

[14] Նույն տեղում, էջ 40։

[15] Նույն տեղում, էջ 41։

մունքայնություն, վերաբերականություն արտահայտող բառախմբեր, ըստ այդմ՝ գոյական, բայ, ածական, թվական, մակբայ, դերանուն, եղանակավոր բառեր, ձայնարկություն, կապ, շաղկապ խոսքի մասեր»[16]:

Աբրահամյանը տալիս է սրանց իմաստաբանական սահմանումները և կատեգորիկ ու գործառական լրացուցիչ բնութագրումները: Ի վերջո այսպես է ձևակերպում խոսքի մաս հասկացության իր սահմանումը. «... խոսքի մասերը այն խմբերն են, որոնց մեջ բառերը միավորվում են ըստ իրենց քերականական էության ընդհանրությունների՝ առաջին հերթին ըստ ընդհանուր վերացարկված իմաստի և ապա՝ սրանից բխող ու սրանով պայմանավորվող քերականական զանազան հատկանիշների»[17]:

Աբրահամյանը չի բաժանում որոշ լեզվաբանների այն կարծիքը, թե բոլոր խոսքի մասերը լեզվական հավասարարժեք միավորներ են: Ուստի հիմնական և երկրորդական, նյութական և ձևական, կամ սպասարկու և այլ հասկացությունները նրա համար խորթ չեն: Խոսքի մասերի դիրքային, ծավալային ու, մանավանդ, նպատակային տարբերությունները հաշվի առնելով՝ նա ընդունում է հայերենի խոսքի մասերի 3 խումբ. «ա) քերականական վերացարկվածությամբ հասկացություններ արտահայտող (գոյական, ածական, թվական, բայ, մակբայ) կամ հասկացություններ մատնանշող (դերանուն) խոսքի մասեր, բ) վերաբերմունք արտահայտող խոսքի մասեր (եղանակավորող բառեր, ձայնարկություններ), գ) վերաբերական խոսքի մասեր (կապ, շաղկապ): Միավորբառերի ընդգրկմամբ մեծ ծավալ ունեն գոյականը, բայը, ածականը, թվականը, համեմատաբար փոքր ծավալ ունեն դերանունները, մակբայները, եղանակավորող բառերը, ապա և՝ ձայնարկությունները»[18]:

Տերմինագործածության որոշ տարբերությամբ Ա. Աբրահամյանը ընդունում է խոսքի մասերի նույն երեք խմբերը, ինչ Ս. Աբրահամյանը, ասա՝ էդ. Աղայանը և ուրիշներ, բայց նյութական կամ հասկացական նշանակության խոսքի մասերի մեջ Ա. Աբրահամյանը դերանունների համար մտցնում է իր ուշադրության արժանի խմբագրումը: Դերանունները, ի տարբերություն անունների, ճա-

---

16 Նույն տեղում:

17 Նույն տեղում:

18 Նույն տեղում:

նաչվում են որպես «հատկացուցիչներ մատնանշող» և ոչ թե արտահայտող բառեր։

Անցնելով նախադասության անդամ շարահյուսական միավորի քննությանը՝ հեղինակը նույն խոսքի մասերի տարբեր գործառույթյունների և նույն նախադասության անդամի տարբեր խոսքի մասերով արտահայտվելու բազում օրինակներով ցույց է տալիս դրանց տարբերությունները։ Նախադասության անդամը սահմանվում է այսպես. «Նախադասության անդամը նախադասության այն կազմիչ մասն է (չենք ասում բառը, որովհետև կարող է արտահայտվել նաև մեկից ավելի բառերով), որը, ըստ քերականական (շարահյուսական) հարաբերության բովանդակության և կապակցական բնույթի՝ արտահայտում է մի ամբողջական պաշտոն»[19]։

Ա. Աբրահամյանը քննում է խոսքի մասերի և նախադասության անդամների փոխհարաբերության հարցերը։ Ըստ այսմ խոսքի մասերը բաժանում է երեք խմբի՝ ա) նախադասության անդամ դարձող խոսքի մասեր, բ) նախադասության անդամ չդարձող խոսքի մասեր, գ) նախադասության անդամի ամբողջությունը լրացնող խոսքի մասեր։ Խոսում է խոսքի մասերի պաշտոնակրության կամ գործառական տարբեր առանձնահատկությունների, խոսքի մասերի ու նախադասության անդամների որոշ հարաբերակցության, առաջիններ հիմնական ու երկրորդական կիրառությունների մասին։

Այսպիսով, թեև, ի տարբերություն Ս. Աբրահամյանի, Ա. Աբրահամյանը խոսքիմասային իմաստները համարում է ոչ թե բառաքերականական, այլ պարզապես քերականական իմաստային վերաբերմունքներ, սակայն դրանց առնչակից քննությունը, Ս. Աբրահամյանի պես կատարում է ավանդական խոսքի մասերի սահմաններում՝ այդ համակարգին ավելացնելով եղանակավորող բառերի խումբը։ Ա. Աբրահամյանը չի շոշափում նյութական, վերաբերմունքային և քերականական կամ վերաբերական խոսքի մասերի բառային ու խոսքիմասային իմաստների փոխհարաբերության վիճելի հարցերը. չի մտնում դերանուններին ու թվականին, որպես ինքնուրույն խոսքի մասերի, վերաբերող բանավեճի մեջ. չի պարզաբանում խոսքի մասերի դասակարգման իր առաջարկած գլխավոր՝ իմաստային և մյուս՝ լրացուցիչ հիմունքների գործնական կիրառման մեթոդիկան։ Այնպես որ մեր բանավեճն ու քըն-

---

19 Նույն տեղում։

նախադասությունը Ս. Աբրահամյանի և մասամբ էլ Էդ. Աղայանի այս կարգի հարցադրումների վերաբերյալ հավասարապես վերաբերում են նաև Ա. Աբրահամյանի հայացքներին։ Այստեղ էլ, սակայն, մենք չենք հավակնում մեր քննադատության ու կարծիքների անվերապահ ճշմարտացիության մեջ և նորից ընդգծում ենք Ա. Աբրահամյանի վերոհիշյալ տեսական վերլուծությունների ու դրույթների կարևոր արժեքը հայերենի խոսքի մասերի տեսության պատմության մեջ։

ՀԱՅԵՐԵՆԻ ԽՈՍՔԻ ՄԱՍԵՐԻ ՊԱՏՄՈՒԹՅԱՆ ԵՎ ՆՐԱՆՑ ՏԱՐԱԲՆՈՒԹՅԱՆ ԴԱՍԱԿԱՐԳՄԱՆ ՀԱՐՑԵՐԻ ՔՆՆՈՒԹՅՈՒՆԸ Գ. ՋԱՀՈՒԿՅԱՆԻ ԱՇԽԱՏՈՒԹՅՈՒՆՆԵՐՈՒՄ

Հայ քերականագիտության և լեզվաբանության մեջ այսօր դժվար է անվանել տեսական կամ պատմական նշանակության որևէ հարց, որի քննությանը անդրադարձած չլինի Գ. Ջահուկյանը։

Գ. Ջահուկյանն իր «Լեզվաբանության պատմության» երկու հատորներում (1960, 1962 թթ.) լեզվաբանական այլ հարցերի պատմության զուգընթաց շարադրել է նաև խոսքի մասերի դասակարգման տեսությունների ձևավորման ու զարգացման ողջ պատմությունը։

«Քերականական և ուղղագրական աշխատությունները հին և միջնադարյան Հայաստանում» (1954 թ.), ապա «Դրաբարի քերականության պատմություն» (1974 թ.) աշխատություններում Ջահուկյանը հայ քերականության ձևավորման և նրա գրաբարի շրջանի պատմության հետ հավասարապես շարադրում է նաև խոսքի մասերի տարբերակման ու նրանց նկարագրման պատմությունը։

Գ. Ջահուկյանը, վաղ շրջանի առանձին քերականների այլ կարգի, այդ թվում նաև խոսքի մասերին վերաբերող հայացքները առաջին անգամ ձեռագրերից վեր հանելով և քննության ենթարկելով, այդ ամենը դարձնում է հայ քերականության պատմության սեփականություն։

«Հայոց լեզվի զարգացումը և կառուցվածքը» (1969 թ.) աշխատության մեջ ժամանակակից հայերենի թեքվող խոսքի մասերի

բառաձևերի համակարգը քննելիս, նա հետևողականորեն կիրառում է նրանց ձևաբանական դասակարգման սկզբունքը։

Կատարելով հայոց լեզվի և հայ քերականության պատմության գիտական շրջանաբաժանումներ՝ Ջահուկյանը դրանով իսկ նպաստում է հայերենի կառուցվածքի ու նրա զարգացման պատմության ամեն կարգի ուսումնասիրություններին։

Մեր սույն ուսումնասիրությունն ավարտված էր, երբ լույս տեսավ Գ. Ջահուկյանի «Ժամանակակից հայերենի տեսության հիմունքները» (1974) աշխատությունը։ Այդ աշխատության մեջ առանձին էջեր են նվիրված խոսքի մասերի դասակարգման տեսությունների վերլուծությանը, տրված են հեղինակի տարբեր սկզբունքներով կատարած մի քանի դասակարգումներ։

«Կարելի է վիճել բառերի խմբավորման տարբեր սկզբունքների մասին,— գրում է Ջահուկյանը,— բայց որ բառերի որոշակի խմբավորումը կազմում է լեզվաբանության կարևոր խնդիրներից մեկը, կասկած չի հարուցում»[20]։ Ուստի և հայերենի ձևաբանական կառուցվածքի տեսության հիմունքները շարադրելուց առաջ Ջահուկյանը, ելնելով այդ անհրաժեշտությունից, իր վերլուծությունն սկսում է խոսքի մասերի դասակարգման հարցից։

Համառոտ կանգ է առնում հայագիտության մեջ հանդես եկած իմաստաբանական, գործառական-շարահյուսական և իր ձևակերպմամբ ասած՝ «բավարար հստակությամբ չձևակերպված» ձևաբանական և ճամադրական սկզբունքների վրա՝ միաժամանակ նկատելով այս սկզբունքների տարբեր դրսևորումները հայ քերականագիտության զարգացման տարբեր փուլերում, ապա և տարբեր լեզվաբանների գործերում։

Անցնելով այն խնդրին, թե «նկարագրված սկզբունքներից ո՞րն է ամենից ավելի ընդունելին» և «ի՞նչ չափանիշներով պետք է առաջնորդվել դրանցից որևէ մեկին առաջնություն տալու դեպքում»՝ Ջահուկյանը հանում է հետևյալ եզրակացությունները.

«1) Բառերի խոսքի-մասային դասակարգումը սկզբունքորեն չի տարբերվում լեզվաբանական այլ կարգի միավորների դասակարգումից։ Սա նշանակում է՝ ա) դասակարգման ժամանակ պետք է ելնել ոչ թե մեկ հատկանիշից, այլ հատկանիշների ամբողջությունից. բ) հատկանիշների քանակը ոչ թե պատահական թիվ է՝ այլ

---

20 Գ. Բ. Ջահուկյան, *Ժամանակակից հայերենի տեսության հիմունքները*, Երևան, 1974, էջ 125։

որոշվում է դասակարգվող միավորների թվով։ Հայտնի է, որ հայերենի խոսքի մասերի թիվը տրվում է սովորաբար իննից-տասը։ Եթե ընդունենք, որ հայերենի խոսքի մասերի թիվը չի կարող փոքր լինել ութից և չի կարող անցնել տասնվեցից, ապա սրանց դասակարգման համար հիմք ընդունված հատկանիշների քանակը պետք է լինի առնվազն չորս, չորս հատկանիշը բավական է 9—16 միավոր նկարագրելու համար։ Այսպիսով, հատկանիշների ընտրությունը պետք է կատարել այնպես, որ նրանով ըստ հնարավորին շատ միավորներ բնութագրվեն։

2) Հատկանիշների ընտրությունը կարող է կատարվել կամ մնալով միևնույն սկզբունքի սահմաններում (այսինքն՝ ընտրելով միայն իմաստաբանական, միայն ձևաբանական չափանիշներ), կամ դիմելով տարբեր սկզբունքների։ Այս առումով, ըստ հեղինակի, հարցի լուծմանը փոքր-ինչ մոտենում են Ս. Աբրահամյանի աստիճանական, Է. Աթայանի կատեգորիական-գործառական և է. Աղայանի եռասկզբունք դասակարգումները, որոնք սակայն տարբեր պատճառներով չեն հասնում հարցի վերջնական լուծման։

3) Իմաստաբանական, գործառական և ձևաբանական սկզբունքների պարզ (մեխանիկական) միացումը չի կարող գոհացուցիչ արդյունքների հասցնել։ Պետք է նկատի առնել, որ իմաստաբանական և գործառական սկզբունքները ընդհանրական բնույթի են և կարող են ծառայել որպես բոլոր լեզուների խոսքի մասերը դասակարգելու հիմք, մինչդեռ ձևաբանական և բառակազմական սկզբունքները կիրառելի են ամեն մի կոնկրետ լեզվի համար՝ ըստ նրա առանձնահատկությունների։ Առաջին կարգի (իմաստաբանական և գործառական) չափանիշները, տարբեր լեզուների համար կիրառելով, կտան միևնույն արդյունքները, երկրորդ կարգի (ձևաբանական և բառակազմական) չափանիշները՝ տարբեր արդյունքներ. վերջին դեպքում ավելի լավ են երևում այս կամ այն լեզվի կառուցվածքային առանձնահատկությունները, բացահայտվում են միայն այդ լեզուներին բնորոշ բառային կարգերը։ Ձևաբանական և բառակազմական չափանիշները ինքնին առնվազն չեն կարող համարվել ձևական կամ ոչ ձևական չափանիշներ։ Այդ չափանիշները ծառայում են ավելի լեզվում բառերի իմաստային և գործառական յուրահատկությունների դրսևորմանը, դրանք չեն մնում ձևաբանության և բառակազմության սահմաններում, այլ անցնում են իմաստաբանական և գործառական-շարահյուսական «մակարդակների»։

4) Խոսքի մասերի իդեալական դասակարգումը նույնն է ձևույթային իմաստների դասակարգման հետ, որովհետև իդեալական անձև-անջատական լեզվում բառը համընկնում է ձևույթի հետ, և բոլոր ձևույթային իմաստները պետք է նկատի առնվեն... Այս դեպքում վերջին հաշվով դասակարգման համար երկու կարգի չափանիշ՝ իմաստաբանական-կատեգորիական և գործառական-շարակարգային։ Ձևաբանական մոտեցման համեմատությամբ տարբերությունն այն կլինի, որ այստեղ հարկ կլինի ելնել միայն վերլուծական հարացույցից։

5) «Ձուտ» իմաստաբանական դասակարգումը չէր լինի լեզվաբանական դասակարգում. այսպիսի դասակարգումը կլիներ փիլիսոփայական (գոյաբանական, իմացաբանական, տրամաբանական) և հոգեբանական կատեգորիաների առանձնացում՝ առանց լեզվական չափանիշները նկատի առնելու... Խոսքի-մասային դասակարգումը անհրաժեշտորեն պարունակում է գործառական հայեցակետը, հաշվի առնում բառերի՝ խոսքի մեջ կատարած ֆիմնական գործառույթյունները։ Այս առումով խոսքի մասերը նախադասության անդամների նկատմամբ յուրաքանչյուր տվյալ լեզվում անփոփոխականներ են, և նախադասության անդամները հանդես են գալիս որպես փոփոխականներ։

6) Խոսքի մասերի՝ բառերի որոշ խմբեր լինելու դրույթը պետք է հասկանալ պայմանականորեն... Բառային միավորների հասկացությունը պետք է տարբերել բառերի հասկացությունից։ Խոսքի մասերը ոչ թե բառերի խմբեր են, այլ բառային միավորների խմբեր»[21]։

Մենք գիտակցաբար խուսափեցինք Գ. Ջահուկյանի՝ մեջ բերված մտքերը վերաշարադրելուց՝ նպատակ ունենալով ընթերցողին ներկայացնել լեզվաբանի եզրակացությունները սեփական ոճով, մանավանդ որ այդ եզրակացությունները, որպես խոսքի մասերի դասակարգման սկզբունքների տեսական վերլուծություն, ըստ էության, ամփոփումն են այս հարցում ժամանակակից լեզվաբանության նվաճումների, թեև այդ եզրակացությունները դեռևս հարցի ոչ միայն վերջնական, այլև քիչ թե շատ անառարկելի լուծում չեն նշանակում։

Ի վերջո, Ջահուկյանը խոսքի մասերի դասակարգման տարբեր սկզբունքների բնորոշ առանձնահատկությունները քննելուց հետո

---

21 Նույն տեղում, էջ 128—133։

գալիս է այն համոզման, որ «... խոսքի մասերի ընդհանրական դասակարգում կատարելիս պետք է ընտրել հատկապես իմաստաբանական-կատեգորիական և գործառական հատկանիշներ», որոնք առանձին լեզուների մեջ «կդրսևորվեն հարացուցային և շարակարգային տարբեր հատկանիշներով»[22]։ Անցնելով կոնկրետ հայերենի խոսքի մասերի դասակարգման խնդրին՝ հեղինակը ասում է. «Բուն հայոց լեզվի համար կատարվող դասակարգումը պետք է սկսվի ձևաբանական և բառակազմական չափանիշներից և լրացվի իմաստային և գործառական հատկանիշներով. վերջին հաշվով կատեգվեն բառային միավորների իմաստա-գործառական կամ, լայն առումով, բառաքերականական խմբեր։ Ձևաբանական և բառակազմական չափանիշներից սկսելու դեպքում էլ պետք է նկատի առնել հատկապես ձևաբանական և բառակազմական միջոցների արտահայտած իմաստները»[23]։

Խոսքի մասերին, որոնք, ինչպես տեսանք, Ջահուկյանը ոչ թե բառերի, այլ բառային միավորների խմբեր է համարում, բնորոշ են բառաքերականական մի շարք հատկանիշներ, այլ կերպ՝ դրանք բառերի իմաստային այնպիսի խմբեր են, «որոնք լեզվի կառուցվածքում ստանում են բառակազմական, շարահյուսական և ձևաբանական համապատասխան արտահայտություն»[24]։ Ըստ որում՝ կարելի է կատարել առանձին լեզուների խոսքի մասերի տարբեր բնույթի դասակարգումներ։ Եվ քանի որ «իմաստային հանգամանալից դասակարգումը կհամընկներ ընդհանրական գոյաիմացաքանական կարգերի» իր կողմից տրված դասակարգման հետ[25] հեղինակը տալիս է իր խոսքով ասած՝ «մասնակի դասակարգում՝ նկատի ունենալով միայն ավանդաբար առանձնացվող խոսքի մասերը և դրանք ենթարկելով տրամաբանական համապատասխան ճշգրտումների»[26]։

Ինչպես տեսնում ենք, ավանդական դասակարգումը Գ. Ջահուկյանին էլ հանգիստ չի տալիս, և եթե այստեղ էլ հակասություններ ու անավարտ բաներ տեսնենք, մեղքը մնում է ավանդական դասակարգմանը։

---

22 Նույն տեղում, էջ 133։

23 Նույն տեղում։

24 Նույն տեղում, էջ 128։

25 Նույն տեղում, էջ 36—37։

26 Նույն տեղում, էջ 133։

Դասակարգման հիմք դարձնելով չորս հատկանիշ՝ ա) գոյակազմություն, բ) իրադրայնություն, գ) մակդրականություն, դ) էանշություն, որպես արդյունք ստանում է 16 խոսքի մաս (տե՛ս էջ 136, աղյուսակ 4).

Խոսքի մասեր	Հատկանիշներ			
	Գոյակազմություն	Իրադրայնություն	Մակդրականություն	Էանշություն
Ածական դերանուն	+	+	+	+
Քանակական դերանուն և հոդ	+	+	+	—
Գոյական դերանուն	+	+	—	+
Հարաբերական դերանուն	+	+	—	—
Ածական	+	—	+	+
Թվական	+	—	+	—
Գոյական	+	—	—	+
Կապ	+	—	—	—
Իրադրական մակբայ	—	+	+	+
Բառ—մասնիկ	—	+	+	—
Զայնարկություն	—	+	—	+
Եղանակական	—	+	—	—
Որակական մակբայ	—	—	+	+
Քանակական մակբայ	—	—	+	—
Բայ	—	—	—	+
Շաղկապ	—	—	—	—

Այս և հետագա դասակարգումներում դասակարգիչ հատկանիշների ընտրության և սրանց հատկացությունների վերաբերյալ հեղինակը երբեմն անհրաժեշտ պարզաբանումներ չի տալիս։ Այս կապակցությամբ նա գրում է. «Պետք է նկատի առնել, որ հատկանիշների անվանումները որոշ պայմանականություն ունեն, և նրանց մեջ պետք է դնել այն իմաստը, ինչ տրվում է հատկանիշների թվարկման հետ կապված բացատրությունների մեջ»[27]։ Բայց քանի որ հատկանիշներից շատերի ոչ միայն անվանումներն են առաջին անգամ գործածվում, այլև նրանց կիրառումը տարածվում է խոսքի մասերի ու սրանց ամբողջական խմբերի վրա, հաշախ առանց բառային օրինակների վկայակոչման, որից կոնկրետ հետևություններ անելը այնքան էլ հեշտ չէ, ապա Ջահուկյանի առանց այն էլ

[27] Նույն տեղում, էջ 134։

նորամուծություններով լի ու խրթին շարադրանքը տեղ-տեղ դառնում է դժվարամարս։ Մատուցված նյութերի մատչելիության մտահոգությունը հեղինակի փոխարեն մեզ վրա չվերցնելով՝ մենք մեզ իրավունք չենք վերապահում նրա դասակարգումները լրացուցիչ մեկնաբանություններով օժտելու։

Ջահուկյանի հայերենի խոսքի մասերի իմաստային-գործառական սկզբունքով կատարած վերոհիշյալ դասակարգման մեջ առաջին հերթին աչքի է զարնում իմաստային սկզբունքով կատարված այլոց դասակարգումներում մեր կողմից նկատված որոշ հակասությունների յուրովի լուծումը։ Դրանցից առաջինը դերանվան խոսքիմասային պատկանելության հարցն է։ Եթե Մ. Աբեղյանը իր նույն իմաստագործառական սկզբունքով կատարած դասակարգման մեջ դերանուններն ըստ իրենց խոսքիմասային իմաստի բաշխում է գոյական, ածական, մակբայ խոսքի մասերի վրա, իբրև սրանց դերանուն տարատեսակի, ապա Ջահուկյանը դերանվան մեջ առարկայականություն, հատկանշայնություն, հատկանիշի հատկանշայնություն, որոնք զուգորդվում են գործառական լեզվական տարբեր հատկանիշներով, համարում է խոսքիմասային տարբերակիչ հատկանիշներ և ստանում է դերանվանական առանձին խոսքի մասեր (ածական դերանուն, գոյական դերանուն, քանակական դերանուն և այլն)։ Եվ քանի որ դերանուններին բնորոշ իրադրայնությունը Ջահուկյանը վերցնում է ավելի լայն ըմբռնմամբ (ոչ միայն խոսքային իրադրություն, այլև հաղորդակցման իրադրություն) և այն իրավամբ տարածում է նաև այլ խոսքի մասերի վրա, ուստի մակբայական դերանուններին տալիս է իրադրական մակբայ անվանումը՝ սրա տակ հավանաբար հասկանալով նաև ոչ դերանվանական իրադրային մակբայները (հիմա, այժմ, վաղը և այլն)։ Դերանվանական առանձին խոսքի մաս են դառնում նաև հարաբերական դերանունները։

Մյուս հակասությունը թվականն առանձին խոսքի մաս, իսկ թվական դերանունը, այլև թվական մակբայը դերանվան և մակբայի տարատեսակ համարելու ուրիշների մոտեցումն էր։ Աբեղյանը այդ հարցը լուծում էր թվականը առանձին խոսքի մաս չհամարելու և մյուս խոսքի մասերի վրա բաշխելու սկզբունքով։ Ջահուկյանի աղյուսակում ինչպես թվականը, այնպես էլ «քանակական դերանունը» և «քանակական մակբայը» իրենց ոչ-էականությամբ անջատվում են ածական, ածական դերանուն, որակական մակբայ էանիշ խոսքի մասերից և դառնում են առանձին խոսքի մասեր։

Վերջապես, այստեղ առանձին խոսքի մաս են ոչ միայն հեղանակական բառերը, այլև բառ-մասնիկները: Ընդ որում՝ վերջիններս անջատվում են հեղանակական բառերից և առանձին խոսքի մաս են դառնում իրենց մակադրականության հատկանիշով: Հեղանակական բառերը վիճակակազմիչ իրադրական, ոչ-մակադրական, ոչ-էանիշ բառեր են, մինչդեռ բառ-մասնիկները (եապա, անգամ, ևենց, մանավանդ, գոնե, գեթ, միայն և այլն) վիճակակազմիչ, իրադրական, մակադրական, ոչ-էանիշ բառեր են:

Ջահուկյանի այս աղյուսակում ոչ հստակ ու մասամբ վիճելի է մնում այս բառ-մասնիկների մակադրական, իսկ հեղանակական բառերի ոչ մակադրական լինելու մեկնաբանությունը և ըստ այդմ սրանց խոսքիմասային ինքնավարություն տալու մոտեցումը, ապա նաև՝ իրադրական մակբայ անվան տակ միավորված «բառային միավորների» դերանվանական և ոչ դերանվանական տիպերի մեզ համար ոչ այնքան էլ պարզ խառնուրդը:

Նպատակադրվելով կատարել «հատկապես գործառական հատկանիշների» հաշվառմամբ դասակարգում և մի կողմ թողնելով ածականների ու մակբայների որակական և քանակական տիպերի տարբերակումը, որ գործառական հիմունք չունի՝ Ջահուկյանն իր ընտրած ներքոհիշյալ դասակարգիչ գործառական հատկանիշների հիման վրա ստանում է հետևյալ 12 խոսքի մասերը:

Աղյուսակ 6[28]

Հատկանիշներ	խոսքի մասեր															
	Գոյական	—	Ածական	Մակբայ	Բայ	—	Թվական	Դերանուն	Դրական	—	Կապ	Ստ. շաղկապ	Ձայնարկություն	—	Բառ-մասնիկ	Համադասական շաղկապ
Հաղորդակազմություն	+	+	+	+	+	+	+	+	—	—	—	—	—	—	—	—
Միագործառություն	+	+	+	+	—	—	—	—	+	+	+	+	—	—	—	—
Ինքնահաղորդայնություն	+	+	—	—	+	+	—	—	+	+	—	—	+	+	—	—
Վրացականություն	+	—	+	—	+	—	+	—	+	—	+	—	+	—	+	—

[28] Նույն տեղում, էջ 140:

Ինքնին հասկանալի է, որ գործառական այլ հատկանիշների ընտրության դեպքում նույնպիսի հաջողությամբ կարելի կլիներ թվականը միավորել ածականին, իսկ դերանունը տրոհել մի քանի նոր խոսքի մասերի, ինչպես արված էր նախորդ աղյուսակում։ Այս կարգի դասակարգումներում վճռականը դասակարգիչ հատկանիշների ընտրությունն է, եթե այն պայմանավորվի միայն լեզվաբանի նպատակադրմամբ և ոչ թե լեզվի բուն կառուցվածքով, այս տիպի դասակարգումները բազմաթիվ կլինեն, իսկ խոսքի մասհասկացությունն էլ կդառնա մի տեսակ «իրադրային»։ Իհարկե լեզվաբանի դերն էլ հենց այն է, որ կարողանա ընտրել տարբերակիչ այնպիսի հատկանիշներ, որոնք ավելի հարազատորեն արտացոլեն տվյալ լեզվի խոսքիմաստային համակարգը։ Բայց քանի դեռ չենք պարզել այն հարցը, թե ինչ ենք հասկանում խոսքի մաս կամ խոսքիմաստային համակարգ ասելով, ամեն կարգի ու ցանկացած խոսքիմաստային աղյուսակներ կարող ենք ստանալ։

«Տարբեր կարգի դասակարգումների փոխհարաբերությունը պարզելու նպատակով» Ջահուկյանը հարկ է համարում խոսել նաև հայերենի խոսքի մասերի ձևաբանական և բառակազմական դասակարգումների մասին։ Հեղինակը հնարավոր է համարում ձևաբանական դասակարգման երկու դրսևորում՝ «ա) բուն ձևաբանական (ձևական-ձևաբանական, արտահայտական-ձևաբանական), որի դեպքում հիմք են ընդունվում ձևաբանական արտահայտության միջոցները և բ) կատեգորիական-ձևաբանական, որի դեպքում հաշվի է առնվում քերականական կարգերի (կատեգորիաների) բաշխումը»[29]։

Բուն ձևաբանական դասակարգումը հայերենում հանգեցնում է բառերի հոլովվող և խոնարհվող ձևաբանական խմբերի առանձնացման, որոնց հակադրվում են չհոլովվող մյուս բոլոր բառախմբերը[30]։ *Ուստի՝ «Բուն ձևաբանական դասակարգումը,— եզրակացնում է Ջահուկյանը,— բավարար մանրամասնություն չունի և անխուսափելիորեն պետք է լրացվի այլ կարգի հատկանիշներով, եթե ցանկանում ենք ունենալ բառային միավորների խոսքիմաստային հանգամանալից, ավանդական դասակարգմանը մոտեցող դասակարգում»*[31]։

---

[29] *Նույն տեղում, էջ 139։*

[30] *Տե՛ս նշվ. աշխ., էջ 141, աղյուսակ № 8, 9։*

[31] *Նույն տեղում, էջ 142։*

Թեև կատեգորիական-ձևաբանական դասակարգումն, ըստ հեղինակի, նույնպես «սահմանափակ բնույթ ունի և չի բավարարում նվազագույն հատկանիշների պահանջը», այնուամենայնիվ, որպես դասակարգիչ հատկանիշներ ընտրելով **եղանակությունը, ենթադրյալությունը, բաղդատականությունը և սեռայնությունը,** Ջահուկյանը, ըստ ձևաբանական-կատեգորիական սույն հատկանիշների, № 10 աղյուսակում իր այս մասնակի դասակարգմամբ ստանում է 9 խոսքի մաս՝ անորոշ դերբայ, գոյական, ածական դերբայ, ածական, թվական, դերանուն, մակբայ, մակդերբայ, դիմավոր բայ:

Հեղինակը նպատակահարմար չի գտնում՝ նաև զուտ բառակազմական բազմահատկանիշ դասակարգմանն փորձ կատարելու:

Ամփոփելով իր կատարած իմաստային-գործառական, գործառական, բուն ձևաբանական, կատեգորիալ ձևաբանական *դասակարգումները՝ Ջահուկյանը եզրակացնում է. «Այս կամ այն կոնկրետ լեզվի խոսքի մասերի քննության ժամանակ հնարավոր է երկու մոտեցում. ա) կամ ելնել ընդհանրական իմաստաբանական-գործառական դասակարգումներից և ցույց տալ դրանց կոնկրետ լեզվական արտահայտությունն ու, հետևաբար, խոսքի-մասային դրսևորումները. բ) կամ ելնել տվյալ լեզվի ձևաբանական, շարահյուսական ու բառային միջոցների բաշխումից ու փոխհարաբերությունից և դրանցից անցնել խոսքի-մասային իմաստների բացահայտմանն ու դասակարգմանը: Առաջինը իմաստա-հարաբերակցական (ներհարաբերակցական), երկրորդը՝ ձևա-հարաբերակցական (արտահարաբերակցական) մոտեցում է»*[32]:

Առաջին տիպի դասակարգման բոլոր նախապայմաններն ու հնարավորությունն ունենալով հանդերձ՝ Ջահուկյանը դիմում է երկրորդ սկզբունքին՝ նպատակ ունենալով «ժամանակակից հայերենի տեսության հիմունքները» գրքում կատարված դասակարգմամբ ու վերլուծություններով ամբողջացնել իր «Հայոց լեզվի զարգացումը և կառուցվածքը» գրքի նյութը: Վերլուծվող գրքում կիրառված սկզբունքը հեղինակը կոչում է «համադրական կաղապարային»: Նա այստեղ խոսքի մասերի քանակն ու նրանց տիպերը որոշում է «ըստ բառերի լեզվա-կաղապարային բաշխման»: Ըստ արտահայտության և բովանդակության պլանների՝ հաշվի են առնվում և՛ մակարդակային, և՛ մանավանդ, աստիճանային տարբե-

---

[32] Նույն տեղում, էջ 147:

րույթյունները, «մակարդակային են համարվում ստորոգական և ոչ-ստորոգական (նշանային) միավորների տարբերությունները», իսկ «աստիճանային են համարվում բառային միավորների և բառակապակցությունների տարբերությունները»: Եվ քանի որ Գ. Ջահուկյանը բառային միավոր ասելով հասկանում է «բառային մեկ արժեք ունեցող համադրական և վերլուծական կազմությունները, այսինքն մեկ «լիիմաստ» բառի և մեկ կամ մի քանի մասնիկների ու ոչ-«լիիմաստ» բառերի զուգակցությունները», ապա նրա համար խոսքի մասերը ոչ միայն բառեր, այլև, իր վերոհիշյալ ըմբռնմամբ վերցված, «բառային միավորներ» են:

Կատարելով խոսքի մասերի համադրական-կաղապարային վերլուծություն՝ Ջահուկյանը ձևաբանության բաժնում, ըստ հայերենի հոլովման և խոնարհման հարացուցային երկու կաղապարների, առանձնացնում է հոլովվող բառեր կամ գոյականներ և խոնարհվող բառեր կամ բայեր: Ըստ հոլովման երկու տիպերի՝ անվանական և դերանվանական, առանձնացվում են գոյական անուններ և գոյական դերանուններ:

Հոլովման և խոնարհման հարացույցների վերլուծական ձևերում, որպես կաղապարների համադրական ձևերի շարքերի վերլուծական անդամներ, առանձնացվում են ձևաբանական բառ-մասնիկներ: Իբրև այդպիսիք գոյականի հարացույցում առանձնանում է մի անորոշ հոդը, իսկ բայական հարացույցում՝ մի արգելականը, պիտի եղանակիչը և եմ, լինել, տալ օժանդակ բայերը, սակայն «որոշ վերապահությամբ սրանց կարելի է միացնել և բաղադրյալ ստորոգյալ կազմող այլ ձևեր»:

Շարահյուսության մեջ գոյական բառակապակցության կաղապարի վերլուծությամբ առանձնացվում են երեք կարգի որոշիչ բառեր՝ ա) ածական կամ բուն ածական, բ) թվական կամ թվական ածական, գ) դերանվանական կամ դերանվանական ածական և հարաբերիչ բառեր կամ կապեր: Գոյական բառակապակցության մեջ ածականն ու թվականը կարող են ունենալ մակորոշիչ բառեր (մակածականներ և մակթվականներ), որոնք հեղինակը միացնում է մակբայների հետ՝ դնելով ընդհանուր պայմանական «մակբայ» անվան տակ:

Բայական բառակապակցության քննության մեջ առանձնացվում են՝ ա) որոշիչ բառեր կամ մակբայներ և բ) հարաբերիչ բառեր կամ ստորադասական շաղկապներ:

Այս երկու՝ գոյական և բայական բառակապակցություններից

դուրս, որպես նախադասությանը հարող կաղապարի մեջ մտնող բառեր, առանձնացվում են **ձայնարկությունները և եղանակական բառերը:**

Վերջապես, այս բոլորից զատ, առանձնացվում են տարբեր տիպի կաղապարների տարբեր «լիմաստ» միավորները որոշող կամ հարաբերող բառերի երկու խմբեր՝ ա) **եղանակական բառմասնիկներ,** *բ)* **համադասական շաղկապներ:**

Այսպիսով ստացվում է խոսքի մասերի հետևյալ համակարգը՝ 1. **գոյական անուն,** *2.* **գոյական դերանուն,** *3.* **ձևաբանական բառմասնիկներ,** *4.* **ածական** *(բուն ածական), 5.* **թվական** *(թվական ածական), 6.* **դերանվանական** *(դերանվանական ածական), 7.* **կապ,** *8.* **բայ,** *9.* **մակբայ,** *10.* **ստորադասական շաղկապ,** *11.* **ձայնարկություն,** *12.* **եղանակական բառեր,** *13.* **եղանակական բառմասնիկներ,** *14.* **համադասական շաղկապներ:**

Իմաստային պլանում հստակ պարզաբանված չեն ձևաբանական բառ-մասնիկները. անորոշ է մնում սրանց խոսքիմասային առանձին միավոր լինելու հարցը: Գործառական տեսակետից այնքան էլ համոզիչ չէ եղանակական բառ-մասնիկների և եղանակական բառերի տարբերակումը և իրար հակադրելը:

«Ժամանակակից հայերենի անդեմ բայաձևերը («Դերբայները») ծավալուն հոդվածում (1975 թ.), քննելով նաև դերբայների խոսքիմասային պատկանելության հարցը, Գ. Ջահուկյանը նպատակահարմար է գտնում դերբայները թողնել բայի համակարգում: Սակայն հեղինակը միաժամանակ կատարում է դերբայների գործառական տարբերակում և դրանց գոյականանական, ածականական, մակբայական գործածութիւնները դիտում է որպես դիմավոր բայի «գործառական փոխակերպումներ»[33]*:*

Գ. Ջահուկյանը 1976 թ. հրատարակած իր «Խոսքի մասերի կաղապարային դասակարգումը» աշխատանքում լրացումներ ու ճշգրտումներ է կատարում «Հայոց լեզվի տեսության հիմունքներում» խոսքի մասերի իր կատարած գործառական-շարահյուսական դասակարգման մեջ: «Որքան մեզ հայտնի է, —գրում է նա,— խոսքի մասերի կաղապարային դասակարգման սկզբունքը լեզվաբանության մեջ որպես այդպիսին հստակորեն ձևակերպված է առաջին անգամ»: «Խոսքի մասերի կաղապարային դասակարգումը,— պարզաբանում է հեղինակը,— բառային միավորների խմբ-

---

[33] *Տե՛ս «Բանբեր Երևանի համալսարանի», № 3, 1975, էջ 49:*

բավորումն է ըստ նախադասության կազմող և լրացնող կապակարների մեջ նրանց դրաված որոշակի դիրքերի (բաշխման)։ Ի տարբերություն նախադասության անդամների՝ այս դեպքում բացահայտում են կրկնվող տարրերը, և հաշվի չեն առնվում նախադասության մեջ առանձին շարույթ կազմող բառերի ու բառակապակցությունների ենթակա-խնդրային ու պարագայական գործառույթյունները»[34]։

Բացի այս, այստեղ «կազմակարների անդամները քննվում են ըստ հիմնական, իրենց էությանը հատուկ գործառության (հին քերականների հորջորջմամբ՝ «ըստ բնության») և ոչ թե ըստ երկրորդական, փոխանցմամբ կամ փոխակերպմամբ պայմանավորված, գործառության («ըստ դրության»)»[35]։

Ըստ հեղինակի՝ «Այդ սկզբունքը հնարավորություն է տալիս խուսափելու մյուս սկզբունքների միախողմանիությունից և բառերը քննելու իմաստաքերականական բոլոր հատկանիշների ամբողջության մեջ»[36]։ Այս և հեղինակի՝ բառակապակցության կառուցվածքի յուրովի ըմբռնումը հնարավոր են դարձրել որպես առանձին խոսքի մասեր տարբերակելու նաև այնպիսիները, որոնք «զուտ» գործառական-շարահյուսական սկզբունքով չեն առանձնացվում»։

Տարբերելով նախադասության երկու պլան՝ հաղորդային և հաղորդակցակոնտեքստային՝ Ջահուկյանը որպես խոսքի մասերի առանձին հիմք ծառայող միայն հաղորդային կազմակարի օրինակ է վերցնում բայական այն ամենածավալուն կազմակարը, որ բավարարում է երկու պայմանի՝ 1. պարունակում է բոլոր հնարավոր տարբերակված անդամները, 2. այդ անդամները չեն կրկնվում նույնությամբ, չեն փոխարինվում գործառական համարժեքներով, նորից հանդես չեն գալիս գործառական այլ վերլուծություններով կամ առոգանական տարբերությամբ, այսինքն՝ արդյունք չեն փոխանցման, փոխարինման կամ փոխակերպման:

Հիմք ծառայող ծավալուն նախադասությունից վերոհիշյալ սկզբունքով ընտրելով «Այսպիսով, եթե ավելի արագ շարժվեր դեպի այդ երկու շատ մեծ fաղաfներ և...» կազմակարային նմուշը՝

---

[34] ՀՍՍՀ ԳԱ Լրաբեր հասարակական գիտությունների, № 1, 1976, էջ 16։

[35] Նույն տեղում, էջ 18։

[36] Նույն տեղում։

Ջահուկյանը հայոց լեզվի բառերի ու բառային միավորների քնական հաջորդականության կաղապարի կառուցմամբ տարբերակում է տասներկու խոսքի մաս։

Հաղորդային միավորների դասակարգումից հետո անցնելով խոսողի զգացմունքը, կամքը, վերաբերմունքը իր և խոսակցի հաղորդման նկատմամբ արտահայտող բառերի, այլ կերպ ասած, նախադասությանը ուղեկցող կամ միջանկյալ բառերի դասակարգմանը՝ հեղինակը տարբերակում է ևս չորս խոսքի մաս։ Այսպիսով, Ջահուկյանի կաղապարային դասակարգման արդյունքում առանձնացվում են «տասնվեց խոսքի մաս՝ յոթ «լիիմաստ» (որպես նախադասության անդամ հանդես եկող)՝ գոյական, ածական, թվական, դերանուն, բայ, մակբայ, մակլրացական, հինգ կապահարաբերական՝ կապ, ստորակապ, համակապ, առկապ, բառ-մասնիկ և չորս եղանակավորող՝ ձայնարկություն, իմացարկություն, եղանակ (ակ)ան, երանգական»[37]։

«Դերանվանական ածականը» երբ ինքնուրույնաբար հանդես է գալիս որպես գոյական շարույթի բաղադրիչ, այդ գործառությամբ ճանաչվում է որպես առանձին խոսքի մաս։ Մնացած դեպքերում բոլոր դերանունները քննվում են որպես խոսքիմասային փոխանցման և փոխարկման արտահայտություններ։

Այս դասակարգմամբ իբրև առանձին խոսքի մաս տարբերակված մակլրացականները (շատ, մի քիչ, ոչ այնքան, լիովին, արտաքնապես, կրկնակի, մոտավորապես) գործառությամբ մականուններից (ածական, թվական) ու մակբայներից տարբերվող և ածականի, թվականի, մակբայի վրա դրվող բառեր են։ Սրանք ուրիշ քերականների կողմից դրվում են մակբայների շարքում։

Առկապ խոսքի մասի մեջ դրված բառերը (այսպիսով, այսուհանդերձ, այսուամենայնիվ) գործածվում են անկախ կամ գլխավոր նախադասության սկզբում, որպես «բուն արժեքով կապակցական բնույթի» բառեր։ Ուրիշ քերականների կողմից դրվում են եղանակավորող բառերի կամ շաղկապների շարքում։

Երանգականները (նույնիսկ, հենց, միայն, մի՞թե, արդյո՞ք, ոչ), ի տարբերություն եղանակ(կա)նների (բարեբախտաբար, ցավոք սրտի), որոնք եղանակավորում են ամբողջ նախադասությունը, դրվում են բոլոր «լիիմաստ» բառերի վրա։

Իմացարկությունները (այո՛, ո՛չ) պատասխանական բառեր

---

37 Նույն տեղում, էջ 26։

են, որոնց գործառույթամբ հանդես են գալիս նաև հարցական և որոշ եղանակական բառեր։

Հայերենի խոսքի մասերի տեսության մեջ Գ. Ջահուկյանի վերը շարադրված տեսական վերլուծություններն ու դասակարգումները հարցի լուծման ճանապարհին արժեքավոր են և տարբերվում են նախորդ հեղինակների քննություններից նաև նրանով, որ այստեղ հեղինակը սեփական խոսք է ասում դասակարգման տարբեր սկզբունքների թերությունների ու առավելությունների մասին՝ երբեք չջանալով հիմնավորել սրանցից մեկի անվերապահ նախապատվությունը մյուսների հանդեպ, միաժամանակ չմոռանալով հիշեցնել՝ լեզվական բոլոր կարգի վերլուծությունները լեզվական իմաստների քննությանը ծառայեցնելու մասին։

* * *

Հայերենի խոսքի մասերի տեսությունը, հայ քերականության սկզբնավորումից սկած մինչև մեր օրերն ընկած ողջ շրջանում, իր նվաճումներով ու թերություններով հանդերձ, խոսքի մասերի ընդհանուր լեզվաբանական տեսության մասնավոր արտահայտություններից մեկն է եղել։ Ինչպես պարզվում է սույն հարցի պատմության մեր ամբողջ շարադրանքից, հայ քերականագիտությունը վաղ միջնադարից մինչև նոր ու նորագույն ժամանակներ, հաղորդակից լինելով աշխարհի առաջավոր ժողովուրդների քերականագիտական, ապա նաև լեզվաբանական մտքի նվաճումներին, հայերենի կառուցվածքի, այդ թվում նաև նրա խոսքի մասերի համակարգի տեսական ու գործնական քննության մեջ միշտ համընթաց է եղել իր ժամանակաշրջանին։

Չորրորդ գլուխ

ՀԱՅԵՐԵՆԻ ԱՌԱՆՁԻՆ ԽՈՍՔԻ ՄԱՍԵՐԻՆ ՎԵՐԱԲԵՐՈՂ ՎԵՐՋԻՆ ՏԱՍՆԱՄՅԱԿՆԵՐԻ ԳՐԱԿԱՆՈՒԹՅԱՆ ՀԱՄԱՌՈՏ ՏԵՍՈՒԹՅՈՒՆ

Մենք մեր ուսումնասիրության մեջ մինչև այժմ քննության ենթարկեցինք հայերենի քերականական և լեզվագիտական այն գործերն ու սրանցում արտահայտված այն տեսակետները, որոնք կա՛մ ամբողջությամբ են նվիրված խոսքի մասերի դասակարգման տեսությանը, կա՛մ էլ շոշափում են այդ տեսության զարգացման պատմական ընթացքը պարզաբանող հարցեր։ Սակայն լայն առումով խոսքի մասերին ու նրա տեսությանն են վերաբերում բառերի համատարած ամեն կարգի (իմաստաբանական, բառակազմական, ձևաբանական, շարահյուսական) քննությունները։ Եթե մենք փորձենք մեր ուսումնասիրության մեջ թեկուզ շատ հպանցիկ անդրադառնալ այս կարգի բոլոր ուշադրության արժանի ուսումնասիրություններին, այդ դեպքում մեր աշխատանքը կնույնանար հայերենի քերականության և նույնիսկ բառագիտության պատմության։

Հետևաբար այս վերնագրի տակ մենք պիտի տանք առանձին խոսքի մասեր համակողմանի քննությունը կամ էլ բոլոր խոսքի մասերը որևէ համակարգմամբ քերականորեն վերլուծող աշխատությունների մատենագիտությունը՝ տեսական անհրաժեշտ մեկնաբանություններով։

Վերջին երկու-երեք տասնամյակների ընթացքում հրապարակ եկան հայոց լեզվի առանձին խոսքի մասերին կամ սրանց այս կամ այն քերականական հատկանիշին նվիրված մի շարք ուշագրավ մենագրություններ։ Այդպիսի մենագրություններ կան համարյա բոլոր խոսքի մասերի վերաբերյալ, որոնցում ուսումնասիրողները, իբրև կանոն, քննում են նաև տվյալ խոսքի մասի մասնավոր քերականական հատկանիշները՝ այս կապակցությամբ նաև

անդրադառնալով այդ խոսքի մասի հայերենի մյուս խոսքի մասերի շարքում ունեցած տեղի և սրանց փոխհարաբերության հարցերին։

Խոսքի մասերի տեսությունը որպես քերականության թե՛ տեսական և թե՛ գործնական նշանակության կենտրոնական հարցերից մեկը իր արտահայտությունն է գտել նաև դրաբարի ու ժամանակակից հայերենի գործնական քերականություններում, քերականական ու լեզվաբանական ընդհանուր բնույթի աշխատություններում։

Արդի հայերենի թվական անվան բառաքերականական ընդհանուր նկարագրին է նվիրված Ս. Գյուլբուդաղյանի «Թվական անունը ժամանակակից հայերենում» (1964 թ.) ուսումնասիրությունը։

«Թվական անունն իբրև խոսքի մաս» բնութագրելուց առաջ հեղինակը համառոտակի շարադրում է անուն խոսքի մասերից հայ քերականության մեջ ամենից ուշ առանձնացված այս խոսքի մասի պատմությունը։ Այդ առանձնացումը կատարվեց 19-րդ դարի վերջերին։ Առաջինը, ինչպես վերը տեսանք, Ստ. Պալասանյանն է, որ թվականը անջատում է ածականից և քննում որպես ինքնուրույն խոսքի մաս։ Ս. Գյուլբուդաղյանը արձանագրում է այս փաստը, բայց Պալասանյանի աշխատություններում գտնելով նաև թվականը ածականի մի տեսակ համարելու միտք՝ եզրակացնում է, թե նա «խոսքի մասերը բնորոշելիս, դարձյալ, ելնում է բառի շարահյուսական դերից, ուստի թվականը ածականի մի տարատեսակ է համարում»[1]։

Գյուլբուդաղյանի երկմտությունն այս հարցում ավելորդ է։ Պալասանյանը որոշակիորեն թվականը առանձնացնում է ածականից և քննում է այն, որպես անկախ խոսքի մաս, որին հետագայում հետևում են և ուրիշ քերականներ, ինչպես ճիշտ նկատում է ինքը Գյուլբուդաղյանը։

Ճշգրտման կարիք ունի նաև այն միտքը, թե Պալասանյանը «խոսքի մասերը բնորոշելիս, դարձյալ, ելնում է բառերի շարահյուսական դերից»։ Ստ. Պալասանյանն, ինչպես իր տեղում տեսանք, խոսքի մասերը հիմնականում որոշում է տրամաբանական և ոչ շարահյուսական սկզբունքով, որի ապացույցներից մեկն էլ հենց թվականը ածականից անջատելն է։

---

1 Ս. Վ. Գյուլբուդաղյան, Թվական անունը ժամանակակից հայերենում, 1964, էջ 7։

Թվական խոսքի մասի վերաբերյալ տրված նոր շրջանի վերլուծություններին ու ամփոփումներին մեջ Գյուլբուդաղյանը ավելի ընդունելի ու գիտական է համարում Գ. Սևակի թվականի բնորոշումը, ուստի և նրա հետևողությամբ տալիս է թվականի հետևյալ սահմանումը. «Թվական կոչվում են այն բառերը, որոնք ցույց են տալիս առարկաների տարբերակված քանակային հատկանիշ՝ թիվ ու թվական կարգ և կարող են արտահայտվել հատուկ թվանշաններով» (էջ 10):

Թվականի, որպես առանձին խոսքի մասի, տարբերությունը ածականից և քանակային հատկանիշ ցույց տվող մյուս բառերից Ս. Գյուլբուդաղյանը տեսնում է հետևյալ կետերում.

1. Քանակային նշանակության մյուս բառերը (այսքան, այդքան, շատ, քիչ և այլն) «ցույց են տալիս քանակ ընդհանրապես, առանց տարբերակելու, թե դա կոնկրետ որքան է, իսկ թվականը ցույց է տալիս տարբերակված քանակը...»:

«2. Թվական անունների առանձնահատկություններից մեկն էլ այն է, որ նրանք կարող են արտահայտվել ոչ միայն ամբողջական բառերով, այլև թվանշաններով՝ 6 (վեց), 8 (ութ), 100 (հարյուր), 5-րդ (հինգերորդ), 6-րդ (վեցերորդ), 5—5 (հինգ-հինգ), 1/5 (մեկ հինգերորդ), 3/4 (երեք չորրորդ կամ երեք քառորդ) և այլն, և այլն» (էջ 10):

«3. Թվականների 3-րդ առանձնահատկությունն այն է, որ նրանք որևէ որոշիչ չեն ունենում, առավել ևս թվական որոշիչ» (էջ 11):

«4. Թվականները թվի քերականական կատեգորիա չունեն, հոդ չեն ստանում, եթե թիվ կամ թվական կարգ ցույց տվող բառը հոդնակի թվով է գործածված կամ որևէ հոդ ունի, նշանակում է տվյալ թվականը գործածված է գոյականաբար, փոխանուն է» (էջ 12):

«5. ...Թվական անվանի մյուս առանձնահատկությունն այն է, որ նա բայի հետ պարագայի պաշտոնով չի կարող գործածվել, նա կարող է դրվել միայն գոյականի կամ գոյականաբար գործածվող բառի հետ» (էջ 13):

Այսպես, ուրեմն, թվականի խոսքիմասային իմաստը «տարբերակված քանակային հատկանիշ» ցույց տալը կամ անվանելն է, որը բոլոր լեզուների համար ունի լեզվական հանրույթի (ունիվերսալի) արժեք և կարող է արտահայտվել թվանշաններով: Թվականի այս խոսքիմասային իմաստը զուգորդվում է նաև ձևաթա-

նական և շարահյուսական վերը հիշատակված առանձնահատկություններով, որոնցով, հակադրվելով ածականին ու թվականից կազմված մյուս խոսքի մասերին, թվականն առանձնանում է որպես ինքնուրույն խոսքի մաս։ Սա է թվականը ածականից անջատ առանձին խոսքի մաս ճանաչելու կասկածները փարատող ամենաածանվալուն և հիմնավոր բացատրությունը նոր շրջանի հայագիտության մեջ։

Այստեղ էլ, երևի, հարցի վերջնական կամ միանշանակ լուծում դժվար է գտնել, ուստի կասկածները լրիվ չեն փարատված։

Նյութական նշանակության խոսքի մասերից ածականին նվիրված մենագրություն ունի Հ. Օհանյանը։ 1962 թվին նա հրատարակեց «Ածական անունը ժամանակակից հայերենում» ուսումնասիրությունը, որի մեջ քննում է ածականի խոսքիմաստային առանձնահատկությունները, նրա տեսակները՝ ըստ նշանակության և կազմության, ապա՝ ածականի շարահյուսական կիրառությունները։

Գոյականի խոսքիմաստային համառոտ քննություն է կատարված Ֆ. Խլղաթյանի «Գոյական անուն» (1968 թ.) գրքույկում։

Բայի և գոյականի անվանո խոսքիմաստային առանձնահատկությունների տարբեր հարցեր են քննված մեր «Արդի հայերենի բայի և խոնարհման տեսություն» (1953 թ.) և «Հատուկ անուն» (1964 թ.) աշխատություններում։ Առաջինի մեջ «Աշխարհաբար գրական լեզվի բայի և նրա խոնարհման քննությունը հայ քերականության պատմության մեջ» (էջ 27—84) վերնագրի տակ շարադրվում է գրական աշխահաբարի բայի դիմավոր ձևերի և սրանց քերականական հատկանիշների ողջ պատմությունը։ «Հայերենի բայական կատեգորիաների տարբերակումը» (էջ 112—136) վերնագրի տակ խոսվում է բայի խոսքիմաստային առանձնահատկությունների և այն քերականորեն բնորոշող բայական խնդրառության, սեռի, կազմության կերպի հատկանիշների մասին։ Վերջիններից առանձնացվում են բայի ժամանակի, դեմքի, թվի և եղանակի կարգերը, որպես բայի ստորոգելիական կարգեր։ Այսպիսով, մենք առաջին անգամ փորձել ենք կատեգորիալ հատկանիշների հիման վրա բայը բնութագրել մե՛կ որպես խոսքի մաս, մե՛կ որպես նախադասության անդամ։

«Հատուկ անուն» ուսումնասիրության մեջ «Հատուկ անվան հասկացությունը» (էջ 3—43) վերնագրի տակ, քննելով հասարակ և հատուկ անունների բառաքերականական առանձնահատկու-

թյունները, եկել ենք այն համոզման, որ հատուկ անունները, չառանձնանալով հասարակ անուններից որպես առանձին խոսքի մաս, այդուհանդերձ մնում են իբրև գոյական անվան իմաստային մի խիստ առանձնացված կամ անկախ բառախոսք, որը բնութագրվում է հետևյալ առանձնահատկություններով.

1. Հասարակ գոյականը անուն է ոչ թե եզակի առարկաների ու հասկացությունների, այլ սրանց ամբողջ տեսակի, սեռի, դասի, կարգի, խմբի կամ ընդհանուր հասկացության. այն առանձին առարկաների ու հասկացությունների է վերագրվում միայն կոնկրետ կիրառության մեջ, լեզվական այլ միջոցների օգնությամբ: Հատուկ անունը անուն է եզակի անձերի ու առարկաների:

2. Հատուկ անունն առաջանում է որպես պատահականորեն անհրաժեշտ լեզվական կատեգորիա՝ առարկաներն ու անձերը, առանց լեզվական այլ միջոցների, միայն անոմնով անհատականացնելու, կոնկրետացնելու համար:

3. Անվանապես անհատականացնելով, կոնկրետացնելով առանձին անձեր ու առարկաներ՝ հատուկ անունն իր հերթին դառնում է շրջապատի այլ առարկաներն ու երևույթները տարբերակելու, կոնկրետացնելու լեզվական միջոց:

4. Հոգնակի թիվը հատուկ անվան բնորոշ կարգ չէ: Ընհանուր հասկացություն կամ տեսակի անուն չլինելու և միշտ առանձին անձ կամ առարկա անվանելու հանգամանքը դրանք զրկում է հոգնակի թվի քերականական հատկանիշից:

5. Հատուկ անունը հասկացություն չի անվանում, «անիմաստ է»: Հասկացություն են արտահայտում նյութական բոլոր խոսքի մասերը, մինչդեռ հասկացություն են անվանում ոչ բոլորը, այդ թվում և հատուկ անունները:

6. Բոլոր հատուկ անոմնները ծագումով հասարակ անուններ են՝ առաջացած փոխաբերական գործածությամբ, իմաստի նեղացմամբ, ապա «իմաստազրկումով»:

7. Կորցնելով հասարակ անվան նախկին իմաստը՝ հատուկ անունը դառնում է սոսկ պայմանական անվանում և կարող է հավասարապես վերագրվել հատուկ անուն կրելու անհրաժեշտություն ունեցող ամեն անհատի ու առարկայի:

8. Ամբողջ պայմանականությամբ հանդերձ, անձերի ու առարկաների անվանակոչությունը՝ սրանց հատուկ անուններ դնելը, ունենում է նաև տրամաբանական հիմունք և որոշ դրդապատճառներ:

9. «Հատուկ անվան փոխելը հասարակի կապվում է բառի նոր հասկացության, նոր «էական հատկանիշներ» ձեռք բերելու հետ, և այդ հասկացությունը կարող է բոլորովին այլ լինել, քան այն

հակացուցիչ, որ կապված էր սկզբնական հասարակ անվան հետ»։

10. Հատուկ անունները լեզվի բառապաշարի ինքնատուն, մյուս բոլոր բառերից տարբերվող, անթարգմանելի և մասամբ էլ բոլոր լեզուների համար, մի տեսակ, ընդհանուր շերտ են ներկայացնում։

11. Հատուկ անունները միաժամանակ հասարակական-իրավական արժեք ունեցող բառաշերտ են, որոնց համար ժողովուրդները անվանակոչության, սրանք սերնդից սերունդ փոխանցելու, սրանց նկատմամբ հասարակական վերաբերմունքի իրենց սովորույթներն ու պետական-իրավաբանական նորմաներն ունեն։

12. Հատուկ անունները ժողովուրդների ու սրանց մշակույթի պատմության կարևոր պատմական աղբյուրներից են. դրանց պահպանումն ու ուսումնասիրությունը գիտական լուրջ կարևորություն ունի»[2]։

«Հատուկ անվան տեսակների» (էջ 43—60) վերլուծությունը մեզ բերել է այն համոզման, որ **բուն հատուկ անուններ** *անձնանուններն ու տեղանուններն են, ապա՝ անձնանունների նմանողությամբ կենդանիներին տրվող մականունները, իսկ մյուս կարգի բոլոր անունները (կազմակերպությունների, միությունների, հաստատությունների, ստեղծագործությունների և այլն)* **հատուկ անվանումներ են:**

Նյութական նշանակության խոսքի մասերից մակբայի մասին մենագրական ուսումնասիրություն է գրել Ա. Քյուրքչյանը։ 1956 թ. «Մակբայը ժամանակակից հայերենում» թեմայով պաշտպանած նրա դիսերտացիոն աշխատանքը այս խոսքի մասի բազմակողմանի ու ամբողջական քննություն է։ Ա. Քյուրքչյանը Մ. Աբեղյանից և Ա. Աբրահամյանից հետո այն առաջին հայագետներից է, որ իր առանձին ուսումնասիրություններում հիմնավորում է եղանակավորող բառերի հայերենում առանձին խոսքի մաս լինելու տեսակետը։

Առանձին մենագրական աշխատանքներ են գրվել նաև հայերենի քերականական նշանակության խոսքի մասերի՝ կապերի ու շաղկապների վերաբերյալ։

Ալ. Մարգարյանի «Արդի հայերենի կապերը» (1955 թ.) ուսումնասիրության բուն նպատակը կապի տեսական վերլուծու-

---

[2] *Հ. Խ. Բարսեղյան, Հատուկ անուն, Տեսական նկարագրական ակնարկ, Երևան, 1964, էջ 42—43։*

թյունն է։ Նա իր տերմինով ասած, «կապային խոսքի մասի կատեգորիա» է համարում ուրիշների զանազանած «բուն» կամ իսկական» կապերը միայն, ուստի նրան լեզվական նյութի քննության համար շատ բան չի էլ մնում։ Բացի այս, իր իսկ հեղինակի պնդմամբ՝ Աբեղյանը արդեն տվել էր «կապերի և կապական բառերի տրոշակի ցանկը»։

Ինչպես գիտենք, ըստ Այտընյանի նախադրությունները համարվում են «Գոյականի և դերանվան մը բայի հետ ունեցած հարաբերություն»[3] ցույց տվող բառեր, իսկ Պալասանյանի սահմանմամբ «Այն բառերը, որոնք ցույց են տալիս առարկաների փոխադարձ հարաբերությունները, կոչվում են նախադրություն»[4]։

Մարգարյանը Պալասանյանի այս իմաստային-տրամաբանական սահմանումը նույնացնում է Այտընյանի շարահյուսական սահմանմանը և երկուսի մասին հավասարապես եզրակացնում՝ «...բոլոր դեպքերում նրանց ելակետը մնում է ոչ թե «նախադասության» մեջ մտնող բառերի բառային իմաստը, այլ՝ դրանց «շարահյուսական պաշտոնը»[5]։

Կապերը շարահյուսական սկզբունքով զանազանելու մեջ բոլորից խիստ քննադատվածը Մ. Աբեղյանն է, որի մասին ասվում է. «Հիմք ընդունելով բառերի շարահյուսական պաշտոնը և առանձին ձևական հատկանիշներ, Մ. Աբեղյանը այսպիսով ոչ միայն չի պարզաբանում կապային խոսքի մասի կատեգորիայի հարցը, այլև ավելի է խճողում այն՝ այլ խոսքի մասերի վերագրելով կապային խոսքի մասի իմաստ ստացած շատ բառեր»[6]։

Ճիշտ է, որ Աբեղյանը կապերը որոշում է շարահյուսական սկզբունքով, այսինքն այնպես, ինչպես բոլոր հայ քերականները։ Իսկ թե Աբեղյանը ինչով է կապի հարցը ավելի խճողում՝ «այլ խոսքի մասերի վերագրելով կապային խոսքի մասի իմաստ ստացած շատ բառեր», ընդհանրապես մնում է անհասկանալի։

Խոսքի մասերի տարբերակման միակ հիմունք ընդունելով Գ. Սևակի առաջարկած՝ բառերի «լեզվական-իմացաբանական ընդհանուր իմաստը» հաշվի առնելու սկզբունքը՝ Մարգարյանը փորձում է Սևակի այդ իմացաբանական տեսությունը ավելի առարկայականորեն մեկնաբանել՝ հայտարարելով, որ նախադասության

---

[3] Ա. Այտընյան, Քննական քերականություն..., էջ 119։

[4] Ս. Պալասանյան, Քերականություն մայրենի լեզվի, 1894, էջ 79։

[5] Ալ. Մարգարյան, Արդի հայերենի կապերը, Երևան, 1955, էջ 5։

[6] Նույն տեղում, էջ 7։

մեջ ինքնուրույն պաշտոն չվարող բառերի խոսքիմասային պատկանելությունը նրանց շարահյուսական գործառույթյամբ որոշելը նշանակում է այդ խոսքի մասերի խոսքիմասային իմաստի մերժում, նրանց նույնացումը շարահյուսական կատեգորիայի: «Իսկ նման մոտեցումը,— եզրակացնում է նա,— չի բխում լեզվի մարքսիստական ուսմունքից»[7]:

Իսկ ինչպես է հարցի մարքսիստական լուծումը պատկերացնում Մարգարյանը: Ընդօրինակելով Ստալինի այն միտքը, թե բառային կազմը լեզվի շինանյութն է և այն քերականության միջոցով է որ լեզու է կազմում՝ Մարգարյանը, հարցի լուծման մարքսիստական բանաձևին արդեն գտած համարելով, շարունակում է. «Լեզվի բոլոր բառերը մտնում են մի ընդհանուր կատեգորիայի՝ խոսքի մասերի մեջ: Եվ դա այն պարզ պատճառով, որ նրանք լեզվի համար հանդիսանում են շինանյութ, ունեն իրենց խոսքիմասային իմաստը և միայն քերականության տրամադրության տակ դրվելիս էլ կազմում են լեզու»[8]: Մարգարյանը, այսպիսով, բոլոր բառերը միավորում է «մի ընդհանուր կատեգորիա» հանդիսացող խոսքի մասերի մեջ և այդ «ընդհանուր կատեգորիան» որպես շինանյութ դնում է քերականության տրամադրության տակ, որպեսզի այս երկու ինքնուրույն լեզվական կատեգորիաներից ստանա լեզու՝ բոլորովին չմտահոգվելով, որ առանց քերականական հասկացությունների ու կարգերի խոսքի մասեր ու խոսքիմասային հասկացություններ չեն լինում: Ոչինչ չասող հայտարարություն է նաև Մարգարյանի այն պնդումը, թե «խոսքի մասային կատեգորիան ընդհանրապես որոշելիս պետք է ելնել նրանց լեզվական շինանյութ լինելու հանգամանքից, իսկ առանձին խոսքի մասերը որոշելիս՝ նրանց ինչպիսի շինանյութ լինելու, ինչպիսի լեզվական-իմացաբանական իմաստ ունենալու հանգամանքից»[9]: Բառերի այս «ինչպիսի շինանյութ լինելու» տեսանկյունից կապերի խոսքիմասային իմաստը բնորոշվում է որպես «իրականության երևույթների միջև եղած յուրօրինակ հարաբերությունների իմաստ»: Եվ քանի որ այդպիսի յուրօրինակ հարաբերությունները կարող են արտահայտվել նաև նյութական խոսքի մասերով, ուստի կապերը պետք է բնութագրվեն որպես «բառեր, որոնք ինքնուրույն նյութական բովանդակու-

---

[7] Նույն տեղում, էջ 13—14:

[8] Ալ. Մարգարյան, նշվ. աշխ., էջ 14:

[9] Նույն տեղում, էջ 15:

թյուն չունեն և գոյային հարաբերության իմաստ են արտահայտում»[10]։ Այս «գոյայինն» էլ ասում է Գ. Սևակը, որպեսզի կապը շաղկապից չոկվի։ Ահա սա է Մարգարյանի կապի խոսքիմասային հասկացության նոր մեկնաբանությունը, որից եթե հանենք հեղինակի անճիշտ դատողությունները, կմնա Սևակի սահմանումը։ Այդ սահմանումն էլ իրականում չի գոհացնում ո՛չ իրեն՝ Գ. Սևակին, և ո՛չ էլ նրան հետևող հայագետներին։ Այսպես՝ Գ. Գարեգինյանը, նկատի ունենալով Սևակի կողմից կապի և շաղկապի «հասկացական» մեկնաբանությունն ու սահմանումը, գրում է. «Ասել, թե [կապերը] ցույց են տալիս գոյային տարբեր վերաբերություններ, կամ, մասնավորելով խոսքը շաղկապի մասին՝ բայական տարբեր վերաբերություններ, նույնպես բավարար չէ։ Այդ է անշուշտ պատճառը, որ պրոֆ. Սևակը շաղկապի սահմանման մեջ ավելորդ չի համարում վերոհիշյալ իմացաբանական հատկանիշին ավելացնել նաև շարահյուսականը, այսինքն «... իրար շաղկապելով համադաս բառեր կամ համադաս և ստորադաս նախադասություններ «լրացուցիչ բացատրությունը»[11]։

Մարգարյանի տեսական մյուս նորույթը «անիսկական կապերը» կապ խոսքի մաս չհամարելու փորձն է[12]։ Խոսքի մասերի իմացաբանական դասակարգումը, որը պահանջում է բառերի խոսքիմասային պատկանելությունը որոշել նախադասությունից և բառերի կապակցությունից դուրս, առանձին վերցրած նրանց արտահայտած հասկացական իմաստով, թելադրում է նրան ամեն բառ դնել միայն մեկ խոսքի մասի մեջ։ Ուստի եթե կան բառեր, որոնք մե՛կ կապ են, մե՛կ էլ գոյական, մակբայ կամ այլ խոսքի մաս, ապա պիտի որոշել, թե այդ բառի մեջ խոսքից դուրս խոսքիմասային որ իմաստն է հիմնականը և ըստ այդմ այն մտցնել մեկ կամ մյուս խոսքի մասի մեջ, բայց ոչ երբեք՝ երկուսի։ Եվ քանի որ բոլոր կապական բառերը և անիսկական կապերի մի մասը ունեն ոչ թե կապի, այլ ուրիշ խոսքի մասերի իմաստ, ապա սրանք «կապային խոսքի մասի կատեգորիայի մեջ մտնել չեն կարող և չեն էլ մտնում։ Այդպիսի բառերն իսկական կապերից տարբերելու համար

---

10 Գ. Լ. Գարեգինյան, *Շաղկապները ժամանակակից հայերենում*, Երևան, 1963, էջ 35։

11 Նույն տեղում։

12 Սրա քննադատությունը տե՛ս Մ. Ասատրյան, *Ժամանակակից հայոց լեզվի ձևաբանության հարցեր*, Ա, 1970, էջ 312—317։

պարելի է անվանել անիսկական կապեր, որով ցույց կտրվի, որ դրանք կապերի մի տեսակը չեն»[13]: *Հակառակ սրանց, այն բառերը, «որոնք միշտ էլ կապի շարահյուսական դեր են կատարում», նա անվանում է իսկական կապեր: Բայց քանի որ միշտ կապի դեր կատարող բառերի թիվը այնքան էլ շատ չէ, չնայած իր գործածած այս «միշտ» մակբային, Մարգարյանը իսկական կապեր է դարձնում ուրիշների կողմից անիսկական համարված և ոչ միշտ կապի դեր կատարող մոտ, վրա, մեջ, տակ, շուրջ, դեմ և այլ բառեր, իսկ սրանց գոյականի պաշտոնով ճանդես գալը և հոլովվելը համարում է կապերի գոյականաբար գործածվելու արտահայտություն: Բայց քանի որ ոչ բոլոր կապերն են հոլովաձևեր ունենում, նա փորձում է հոլովվողների և չհոլովվողների միջև իմաստային տարբերություն գտնել և «գտնում է»: «Արդի հայերենում հոլովվում են միայն այն կապերը, որոնց արտահայտած տարածական հարաբերությունը վերաբերում է առարկայի այս կամ այն, բայց միայն մի կողմին, իսկ եթե կապը արտահայտում է առարկայի վերաբերող տարածական հարաբերություններ՝ նրա մի քանի կողմերով, ապա չի կարող հոլովվել, որովհետև դրա համար պետք է տարածական ընդհանուր հարաբերության իմաստի կոնկրետացում, որը, ասկայն, նա չի կարող ստանալ»*[14]: *Ահա թե ինչու շուրջ (ը), միջև, ներsn և նման կապերը չեն հոլովվում, եզրակացնում է հեղինակը, իսկ տակ և նմաններդը հոլովվում են: Ուրեմն, երբ ասում ենք՝ այգու շուրջը ցանկապատված է, շուրջը այս նախադասության մեջ ո՛չ կոնկրետացված է, ո՛չ էլ հոլովված, որովհետև «տարածական հարաբերությունները մի քանի կողմերով է ցույց տալիս», իսկ երբ ասում ենք՝ գոնվել մեկի իշխանության տակ կամ իշխանության ներsn, սրանցից տակը կհոլովվի (դուրս գալ իշխանության տակից), իսկ ներsnն չի հոլովվի, որովհետև վերջինս ունի «շատ ընդհանուր տարածական հարաբերության իմաստ»*[15]: *Բայց չէ որ տակն ու ներsnն նույնանիշներ են: Պարզ է, այստեղ էլ լեզվական փաստերն ու Մարգարյանի ասածը իրար չեն համապատասխանում: Անկախ այն բանից, թե տակ, մեջ, վրա, մոտ և այլ բառերի հոլովված ձևերը հոլովված կապեր կհամարենք*[16], *թե գոյականներ,*

---

[13] Ալ. Մարգարյան, նշվ. աշխ., էջ 20:

[14] Նույն տեղում, էջ 53:

[15] Նույն տեղում:

[16] *Տե՛ս* Վ. Ս. Քոսյան, *ժամանակակից հայերենի բառակապակցություններ:*

արանցում ոչ թե կապի գոյական առում կա, այլ գոյականների կապի պաշտոնով գործածվելու կամ այս ճանապարհով կապ պատնաելու իրողություն: Հետևաբար այս հարցում միանգամայն արդարացի է Ս. Աբրահամյանը, որ գրում է. «Այսպիսի դեպքում մենք պարզապես գործ ունենք գոյականների և ոչ կապերի գոյականաբար կիրառությունների հետ: Չէ՞ որ այդ բառերը ունեցել են և այժմ էլ մասամբ ունեն նյութական իմաստ. էլ ինչո՞ւ բառի ունեցած իմաստի դրսևորումը դիտել և անվանել մի այլ խոսքի մասի (կապի) տեսանկյունից, որի հետ բառի տվյալ կիրառությունը ոչ մի կապ չունի»[17]:

Անհնսկական կապերի մեծ մասը «կապային խոսքի մասի կատեգորիայից» դուրս հայտարարելուց հետո, թվում է, թե Մարգարյանը կապերի կիրառությունները քննելիս պիտի զբաղվեր իր կողմից իսկական կապ ճանաչված բառերի գործառական հատկանիշի և խնդրառության վերլուծությամբ միայն: Բայց այդպիսի հետևողականություն և սկզբունք այստեղ էլ չկան: Իսկական կապերի հետ հավասարապես մեջ են բերվում նաև իր կողմից «անիսկական» կամ ոչ կապ խոսքի մաս համարվածները՝ ընդ որում դրանցից կատարված ընտրությունը արդեն լրիվ կամային սկզբունք ունի:

60-ական թվականների սկզբներին հայերենի չթեքվող խոսքի մասերից շաղկապի մասին երկու առանձին ուսումնասիրություններ լույս տեսան, որանցից առաջինը Պ. Շարաբխանյանի «Կրաբարի շաղկապները» (1960 թ.) ուսումնասիրությունն է, իսկ երկրորդը Գ. Գարեգինյանի «Շաղկապները ժամանակակից հայերենում» (1963 թ.) աշխատանքն է:

Շարաբխանյանը շաղկապի խոսքիմասային առանձնահատկությունները քննելիս բաժանում է այն լեզվաբանների կարծիքը, որոնք շաղկապները, կապերի և այլ լեզուներում բառային ինքնուրույնություն ունեցող հոդերի հետ հակադրելով նյութական իմաստ ունեցող բառերին, նրանցից առանձնացնում են և գնահատում որպես նյութական իմաստից զուրկ սպասարկու բառեր:

Շաղկապների արտահայտած իմաստները վերացական իմաստներ են. «դրանք առարկաների, հատկանիշների, գործողությունների, եղելությունների, երևույթների միջև եղած փոխհարաբերու-

---

Առանձնատիպ «Գիտ. աշխատություններ» (Հայոց լեզվի բաժին) ժողովածուի № 2-ից, Երևան, 1967, էջ 74:

17 Ս. Գ. Աբրահամյան, *Չթեքվող խոսքի մասերը..., 1965, էջ 300—301:*

թյուններ նշող իմաստներ են», ուստի դրանք «վերաբերական կամ քերականական իմաստներ» են[18]։

Քանի որ շաղկապները նյութական իմաստ չունեն, քերականական իմաստ են արտահայտում և կատարում են սոսկ կապակցական դեր, լեզվաբանները, մյուս սպասարկու բառերի հետ միասին, սրանց տալիս են **թերիմաստ բառեր, բառ-մասնիկներ, երկրորդական խոսքի մասեր, խոսքի մասնիկներ, ձևական բառեր, օժանդակ բառեր** և այլ անվանումներ։ Մեջ բերելով այս բոլոր անվանումները՝ Շարաբախյանը այլոց պես իր ուսումնասիրությունը չի ակսում այս տերմիններից քննադատությամբ ու մերժման փորձով։ Պարզ երևում է, որ նա, այս բոլոր անվանումների մեջ տեսնելով նրանց հեղինակների կողմից սպասարկու բառերի և նյութական կամ հիմնական նշանակություն ունեցող բառերի իմաստային ու գործառական տարբերությունների արձանագրումը, այդ անվանումները բնավ էլ անհարմար ու մերժելի չի համարում։

Շաղկապներն, իհարկե, կապակցական հարաբերություններ կամ «զուտ քերականական արժեք» ունեցող միակ խոսքի մասը չեն։ Այդպիսի արժեք ունեն նաև կապերը. բայց «շաղկապներն ունեն վերաբերական իմաստներ արտահայտելու իրենց հատուկ ձևը, եղանակը»[19]։ Եթե նախդիրներն ու նախադրությունները «նշում են նախադասության անդամների կախման հարաբերություններ», ապա «...շաղկապները նախադասության ոչ համազոր անդամները՝ լրացումն ու լրացյալը, չեն կարող կապակցել, նախադասության ներսում նրանք կապակցում են միայն համազոր միավորներ»[20]։ Շարաբախանյանը Աբեղյանի պես այս տեսակետից նախդիրներին մոտ է համարում ստորադասական շաղկապները, որոնք «... իրագործում են գլխավոր և երկրորդական նախադասությունների, այսինքն՝ լրացման և լրացյալի կապը, սակայն դարձյալ սրանց միջև մնում է այն տարբերությունը,— շարունակում է հեղինակը,— որ կապերը լրացման և լրացյալի, այսինքն՝ կախման հարաբերություններ նշում են նախադասության ներսում, նրա անդամների միջև, իսկ շաղկապները՝ նախադասությունների միջև»[21]։ Վերջապես, եթե շաղկապի առնչությունը բայի թեքման

---

[18] Պ. Ե. Շարաբախանյան, Գրաբարի շաղկապները, Երևան, 1960, էջ 5։

[19] Նույն տեղում, էջ 8։

[20] Նույն տեղում, էջ 9։ Տե՛ս նաև Овсянико-Куликовский, Синтаксис русского языка, էջ 269:

[21] Նույն տեղում, էջ 10։

ձևերի մոտ «լոկ մասնակի երևույթ է», ապա «կապերի սերտ առընչությունը կապի խնդրի ճոլովի հետ մշտական ու պարտադիր է»[22], որի համար էլ կապը իր խնդրի հետ միասին դառնում է նախադասության անդամ, մինչդեռ շաղկապն այդպիսի արժեք չոնի։

Վերացական ու ինքնահնար դատողությունների փոխարեն իր տեսական բոլոր վերլուծությունները կատարելով լեզվական նյութի վրա՝ Շարաբխանյանը շաղկապի խոսքիմասային առանձնահատկությունները բնորոշում է, ոչ թե խոսքից դուրս նրա ունեցած «իմացաբանական» նշանակությամբ, այլ՝ ա) նյութական նշանակությունների միջև վերաբերական իմաստներ կամ հարաբերություններ արտահայտելու՝ իմաստային, բ) սպասարկու դերով շարահյուսական միավորներ կապակցելու՝ գործառական և գ) «ձևաբանական փոփոխությունների չենթարկվելու և նախադասության անդամ չդառնալու»՝ ձևական հատկանիշներով։

Շաղկապի հասկացության վերոհիշյալ պարզաբանումից հետո հեղինակը տալիս է այդ խոսքի մասի հետևյալ սահմանումը. «Շաղկապներն այն բառերն են, որոնք կապակցում են նախադասության համազոր անդամներ, նախադասություններ, խոսքի առանձին հատվածներ ու պարբերություններ՝ դրանց մեջ արտահայտելով զանազան հարաբերություններ»[23]։

Հեղինակին հետաքրքրող երկրորդ հարցը շաղկապների առընչությունն է այլ խոսքի մասերի հետ։ Այստեղ բուն շաղկապների հետ, ինչպիսիք են և, թե, եթէ, բանզի, վասն զի ,թեպէտ, որովհետև և այլն, առանձնացվում են շաղկապի գործառությամբ հանդես եկող երկու խումբ բառեր ևս։ Դրանք են՝ «բ) բառեր, որոնք մեկ իմաստով ու կիրառությամբ շաղկապ են, իսկ մի այլ իմաստով ու կիրառությամբ ուրիշ խոսքի մաս, ինչպես՝ զի, այլ, քայց, կամ, ուստի և այլն, գ) բառեր, որոնք ունեն ոչ թե շաղկապի, այլ որևէ ուրիշ խոսքի մասի արժեք, բայց միաժամանակ կատարում են շաղկապի դեր, ինչպես՝ որ, որ ինչ, ուր, մինչև, իբրև, յորժամ և այլն»[24]։

Վերջին տեսակի հարաբերական կամ շաղկապական բառերը հիմնականում դերանուններ ու մակբայներ են, որոնք միաժամանակ հանդես են գալիս շաղկապի դերով՝ չկորցնելով իրենց հիմնա-

---

[22] Նույն տեղում, էջ 11։

[23] Նույն տեղում, էջ 15։

[24] Նույն տեղում, էջ 16։

կան խոսքիմատային նշանակութիւնը։ Երկրորդ տեսակի բառերը, որոնք մե՛կ շաղկապ են, մե՛կ էլ որևէ այլ խոսքի մաս, պարզապես տարբեր խոսքի մասերի պատկանող համանուններ են։ Այս երկու կարգի բառերը միայն շաղկապի դերում հանդես եկող բառերի հետ կազմում են զրաբարի «շաղկապական համակարգը»։ Բուն շաղկապների բառացանկը տալուց հետո Շարաբխանյանը կատարում է դրանց դասակարգումը և ապա վերլուծութիւնը։ Շաղկապները վերլուծվում են հետևյալ դասակարգմամբ.

1. ըստ կազմութեան (ձևաբանական կամ բառակազմական դասակարգում).

2. ըստ իմաստի (իմաստաբանական դասակարգում).

3. ըստ շարահյուսական դերի (շարահյուսական դասակարգում).

4. ըստ կիրառութեան եղանակի[25]։

Գ. Գարեգինյանի «Շաղկապները ժամանակակից հայերենում» աշխատութիւնն սկսվում է «Շաղկապի ըմբռնումը արևելահայ աշխարհաբարի քերականութեան մեջ» հարցով, որը, ինչպես տեսնում ենք, հեղինակին զբաղեցնող հարցի կամ գրական արևելահայերենի շաղկապի տեսութեան պատմութիւնն է։

Անցնելով «Շաղկապը որպես խոսքի մաս» հարցին՝ Գարեգինյանը հարկադրաբար արձանագրում է խոսքի մասերի, այդ թվում նաև շաղկապների ըմբռնման ու դասակարգման միանշանակն հիմունքի բացակայութեան փաստը։ Ըստ այդմ՝ «Եթե խոսքի մաս տերմինի տակ հասկանում ենք բառերի այնպիսի կարգեր, որոնք իրարից տարբերվում են իմաստային, ձևաբանական, շարահյուսական որոշակի հատկանիշներով ու առանձնահատկութիւններով,— գրում է Գարեգինյանը,— ապա անտարակույս շաղկապը բառական այդպիսի կարգ է, իսկ եթե այդ տերմինն օգտագործենք իմաստային առումով, նյութական բովանդակութեան ակնարկելու տեսակետից, ապա պարզ է, շաղկապներն ու կապերը դուրս են մնում խոսքի մասերի շարքից»[26]։

Իր այս հարցադրմանը պատասխան տալու համար հեղինակը բերում է շաղկապի խոսքիմատային ինքնուրոյնութեանը կասկածի տակ առնող կամ որոշակիորեն մերժող օտարազգի, ռուս և հայ որոշ լեզվաբանների (Ժ. Վանդրիես, Ի. Ի. Մեշչանինով, Վ. Վի-

[25] Նույն տեղում, էջ 31։

[26] Գ. Գարեգինյան, Շաղկապները ժամանակակից հայերենում, Երևան, 1963, էջ 20։

նոգրադով, Մ. Աբեղյան) կարծիքներ և բանավիճում է նրանց հետ։ Այս խնդրում, ըստ Գարեգինյանի, ճիշտ են վարվում ռուսերենի ակադեմիական քերականության հեղինակները, որոնք խոսքի մասերը բաժանում են նշանական և սպասարկու խմբերի՝ շաղկապը մտցնելով երկրորդ խմբի մեջ։

Գարեգինյանը համամիտ չէ Մ. Աբեղյանի այն կարծիքին, թե շաղկապների նշանակությունը կամ իմաստը «պարզ է լինում, երբ դրվում են խոսքի մեջ նյութական նշանակություն ունեցող բառերի կամ խոսքերի միջև։ «Չէ՞ որ նախադասությունից, խոսքից դուրս էլ մենք շատ պարզ կերպով զգում ենք և, իսկ, բայց, որովհետև, որպեսզի, եթե, բանի որ և այլ շաղկապների միջև եղած իմաստային տարբերությունները»[27], իրավացիորեն առարկում է Գարեգինյանը։ Նա այս հարցում հիմնականում համամիտ է Գ. Սևակին, որը խոսքի մասերը դասակարգելով «լեզվա-իմացաբանական կոնցեպցիայով», գտնում է, որ ինչպես մյուս բոլոր բառերը, կապերն ու շաղկապներն էլ «իրենց լեզվական-իմացաբանական արժեքն ու իմաստն ունեն նաև խոսքից դուրս, այն է՝ լեզվի մեջ»։

Ընդունելով ոչ նյութական խոսքի մասերի, մանավորապես շաղկապների իմաստային ինքնուրույնության մասամբ չափազանցված այս կարծիքը՝ Գարեգինյանը Գ. Սևակի նման հետևողականություն չի ցուցաբերում դասակարգման վերոհիշյալ սկզբունքի կիրառման մեջ. «Որպես հիմունք ընդունելով պրոֆ. Գ. Սևակի լեզվական-իմացաբանական կոնցեպցիան՝ կապերը և շաղկապները խոսքի մաս համարելու հարցում,— գրում է Գարեգինյանը,— գտնում ենք տակայն, որ խոսքի մասերի, մանավանդ նյութական բովանդակություն չունեցող խոսքի մասերի սահմանման, բնորոշման համար միայն իմացաբանական հատկանիշով առաջնորդվելը բավարար չի։ Շաղկապի սահմանման, բնութագրման համար անհրաժեշտ է հաշվի առնել իմաստային, ձևաբանական և շարահյուսական հատկանիշները միասնաբար, քանի որ այդ երեք կողմերով է ամբողջանում նրա լեզվական պատկերը»[28]։

Գարեգինյանը թեև գտնում է, որ շաղկապների մեծ մասը ունի իմաստային որոշակի կիրառություն, անկախ շարահյուսական կառուցվածքից, բայց և այնպես վերոհիշյալ հատկանիշներից

---

[27] Նույն տեղում, էջ 31։

[28] Նույն տեղում, էջ 33—34։

նախադասությունը տալիս է շաղկապի շարահյուսական դերին։ Ճիշտ է, նա քննադատում է նախորդ շրջանի քերականներին շաղկապը միայն շարահյուսական դերով սահմանելու համար, բայց միաժամանակ գտնում է, որ «շաղկապի շարահյուսական դերը գերիշխող դերք է գրավում նրա իմաստային և ձևաբանական հատկանիշների համեմատությամբ»[29]։ Շարահյուսական կողմը հիմնական է դառնում նաև այս կարգի բառերի տարբեր խոսքիմասային նշանակություններում գործածվելու դեպքերը որոշելիս։ Վերջապես, շաղկապի չհոլովվելու ձևաբանական հատկանիշը օգնում է մեզ, նկատում է հեղինակը, շաղկապական գործառության թեքվող խոսքի մասերը բոլն շաղկապներից տարբերելու համար։

Իբրև այս ամենի եզրակացություն, հեղինակը տալիս է շաղկապի հետևյալ սահմանումը. «Այն սպասարկու բառերը, որոնք որոշակի իմաստային հարաբերություններով կապակցում են նախադասության համազոր անդամներն ու բարդ նախադասության բաղկացուցիչ մասերը, ինչպես նաև ավարտված նախադասություններն ու խոսքի տարբեր հատվածները, կոչվում են շաղկապներ»[30]։

Եղանակավորող բառերի քննությանն է նվիրված Վ. Ավագյանի «Եղանակավորող բառերը և նրանց ուսուցումը» (1975) աշխատությունը։ Այս ուսումնասիրության հեղինակը վերստին հաստատում է եղանակավորող բառերի խոսքիմասային ինքնուրույնությունը հայերենում և կատարում է սրանց բառակազմական և իմաստային-կիրառական վերլուծություններ։

Չթեքվող խոսքի մասերից միայն շարահյուսական գործառությամբ բնութագրվող կապերի ու շաղկապների շարահյուսական կիրառությունները քննված են նաև Վ. Առաքելյանի «Հայերենի շարահյուսություն» (1958 թ. Ա հատոր, 1964 թ. Բ հատոր), «Ժամանակակից հայերենի հոլովների և հոլովական կապակցությունների իմաստային առումները» (1957 թ.), Ն. Պատնասյանի «Ստորադասական կապակցությունը արդի հայերենի բարդ նախադասություններում» (1961 թ.), Բ. Վերդյանի «Բարդ ստորադասական նախադասության շարահյուսություն) (1970 թ.) աշխատություններում։

Խոսքի մասերի շարահյուսական կիրառությունների, սրանց

---

[29] Նույն տեղում, էջ 38։

[30] Նույն տեղում, էջ 40։

հետ կապված նրանց իմաստային տարբեր կողմերի վերաբերյալ մի շարք ուշագրավ դիտողություններ են նկատված Վ. Քոսյանի «Ժամանակակից հայերենի բառակապակցությունները» (1967 թ.) և Ն. Պառնասյանի «Շարահյուսական համանիշները ժամանակակից հայերենում» (1970 թ.) ուսումնասիրություններում։

Ժամանակակից հայերենի խոսքի մասերի բավականին ընդարձակ և ամբողջական քննություն է կատարված Մ. Ասատրյանի «Ժամանակակից հայոց լեզվի ձևաբանության հարցեր» ուսումնասիրության մեջ, որի Ա, Բ, Գ գրքերը լույս են տեսել 1970, 1973, 1977 թվականներին։ Մենք մեր շարադրանքի ընթացքում քանիցս առիթ ունեցանք դիմելու Ասատրյանի այդ աշխատությունում արտահայտված կարծիքներին։ Իր աշխատության Ա գրքում Ասատրյանը «Խոսքի մասերի որոշման հիմունքը» վերնագրի տակ, բերելով հայ քերական լեզվաբաններ Պալասանյանի, Աբեղյանի, Սևակի, Աղայանի մեզ արդեն հայտնի կարծիքները, ապա քննադատորեն վերլուծելով դրանք, Աղայանի նման գտնում է, որ «խոսքիմասային կարգերը որոշելիս բառերի ընդհանուր իմաստի և ձևավորման ու ձևաբանական առանձնահատկությունների հետ միաժամանակ պետք է հաշվի առնել նաև նրանց շարահյուսական կիրառությունները»[31]։

«Խոսքի մասերը հայերենում» վերնագրի տակ հեղինակը տալիս է հայերենի խոսքի մասերի տեսության համառոտ պատմական ակնարկ։ Շեշտը դնելով նորագույն շրջանի հեղինակների դասակարգումների վրա և կատարելով սրանց, հիմնականում ընդունելի, քննադատական վերլուծությունը՝ Ասատրյանը եզրակացնում է. «Պետք է նկատի ունենալ, որ խոսքի մասերի հարցն ընդհանրապես և դրանց դասակարգման հարցը մասնավորապես եղել է և մնում է լեզվաբանության ամենաբարդ պրոբլեմներից մեկը, որը մինչև այսօր էլ դեռևս իր բավարար լուսաբանությունն ու լուծումը չի ստացել։ Սույն աշխատության մեջ խոսքի մասերը ներկայացվում են հայերենի ավանդական քերականության մշակված սկզբունքներով, ելնելով նրանից, որ նորագույն լեզվաբանությունը, քննադատելով դասական լեզվաբանության խոսքի մասերի ուսմունքը, ինքը ավելի ընդունելի ու տրամաբանական և հակասություններից զերծ համակարգ չի մշակել»[32]։

---

[31] Մ. Ասատրյան, Ժամանակակից հայոց լեզվի ձևաբանության հարցեր, Ա., 1970, էջ 80։

[32] Նույն տեղում, էջ 91։

Ըստ այս ավանդական դասակարգման և նրա հետագա մասնակի լրացումների՝ Աստուրյանը ընդունելի է համարում հայերենի խոսքի մասերը բաժանել՝ «ա) Նյութական իմաստ արտահայտող կամ հիմնական խոսքի մասեր», «բ) Ձևական, քերականական իմաստ արտահայտող կամ երկրորդական խոսքի մասեր», «գ) Վերաբերմունքային խոսքի մասեր» խմբերի։ Ս. Աբրահամյանի նման այսպիսի խմբավորում կատարելուց հետո Աստուրյանը համաձայնում է նրան՝ եղանակավորող բառերը ևս առանձին խոսքի մաս ճանաչել և ձայնարկությունների հետ մտցնել երրորդ խմբի մեջ։

Հեղինակը նոր դատողություններ է անում խոսքի մասերի փոխանցման և, մասնավորապես փոխանունության վերաբերյալ։ Աստուրյանի պարզաբանումը փոխանունության և լեզվական «ինքնանվանողական» տարբերությունների մասին համոզիչ են և մեզ համար ընդունելի, բայց որ նա լեզվական ամեն մի միավորի, այդ թվում նաև ոչ-իմաստատիպիր հնչյունական միավորների ինքնուրույն գործածության դեպքում վերագրում է «ինքնանվանողական» կամ պարզապես անվանական դեր, ոչ թե վիճելի, այլ պարզապես անընդունելի է։ Ասել թե «գոյական անվան մեջ, եթե կարելի է այսպես արտահայտվել, կրկնակի առարկայականություն կա՝ մեկ տվյալ բառի նշանակած առարկան և մեկ էլ՝ տվյալ բառի անունը»[33], կամ՝ «այդ առումով ամեն ինչ, որ արտասանում է մարդկային լեզուն, որպես իր անուն, գոյական է[34] առնվազն նշանակում է մոռացության մատնել այն նվաճումը, ինչի հասել է քերականագիտությունը անվան հասկացության մեջ։

Իր հրապարակ հանած այս գրքերում Մ. Աստուրյանը քննադատական վերլուծություններ և տեսական-գործնական նոր առաջարկներ է անում հայերենի մյուս խոսքի մասերի, մասնավորապես՝ կապերի, դերանունների և բայի դերբայական ձևերի վերաբերյալ։

Բառերի խոսքիմասայինդասակարգում և սրանց բառային ու քերականական քննություն են կատարված գրաբարի և ժամանակակից հայերենի վերջին տասնամյակներում լույս տեսած մի քանի դասագրքերում[35]։ Սակայն, ինչպես վերն ասվեց, հայերենի

---

[33] Նույն տեղում, էջ 102։

[34] Նույն տեղում, էջ 106։

[35] Նկատի ունենք Ա. Առաբելյանի, Ս. Ղազարյանի, Պ. Շարաբխանյանի

խոսքի մասերի ուսմունքի մեջ սրանք տեսական նորություններ չեն բերում։

Գրաբարի կառուցվածքի, մասնավորապես խոսքի մասերի բառակազմության և ձևակազմության հարցերի ժամանակակից լեզվաբանական մակարդակի քննություն է կատարված է. Թումանյանի Մոսկվայում հրատարակված «Հին հայերեն» («Древнеармянский язык», 1970) մենագրության մեջ։

Խոսքի մասերի կառուցվածքա-իմաստաբանական և ձևակազմական վերլուծությունները Թումանյանը կատարում է խոսքի մասերի հետևյալ իմբավորմամբ. Թեքվող խոսքի մասերը քննում է իր աշխատության երրորդ և չորրորդ մասերում «Անունների, թվականների և դերանունների ձևաբանություն», «Բայի ձևաբանություն» վերնագրի տակ, իսկ չթեքվող խոսքի մասերը ավանդական եղանակով միավորում է «Չթեքվող խոսքի մասեր» վերնագրի տակ, որ դառնում է ուսումնասիրության 5-րդ մասը։ Հեղինակը բաժանում է Ա. Աբրահամյանի կարծիքը՝ գրաբարում եղանակավորող բառերը առանձին խոսքի մաս համարելու վերաբերյալ և նրա հետևողությամբ նախդիրների ու նախադրական բառերի, մակբայների, շաղկապների և ձայնարկությունների հետ, որպես առանձին խոսքի մաս, քննում է նաև եղանակավորող բառերը։

Նախդիրների և նախադրական բառերի խոսքիմասային արժեքը է. Թումանյանը համարում է նրանց հոլովական նշանակություններ արտահայտելը կամ պարզապես առանձին հոլովաձևեր կազմելը։ Գալով շաղկապներին, Թումանյանը, ի տարբերություն Գ. Գարեգինյանի, սրանց բառիմաստը ոչ թե հիմնականում կամ գլխավորապես, այլ ամբողջությամբ համարում է շարահյուսական իմաստ, այն էլ, չգիտես ինչու, անվանելով «հասկացություն»։ «Գրաբարի, ինչպես և այլ լեզուների շաղկապները,— գրում է Թումանյանը,— բառային արժեքով հանդիսանում են փուչ բառեր և արտահայտում են մաքուր շարահյուսական հասկացություններ, թեև առաջացել են երբեմնի ինքնուրույն խոսքի մասերից՝ դերանուններից, մակբայներից և մասամբ նախադրություններից»[36]։

Խոսքի մասերի տեսության վերաբերյալ հարցի ընդհանուր

գրաբարի ձեռնարկները. Ա. Գրիգորյանի հայոց լեզվի երկու դասագրքերը, Էդ. Աղայանի և Հ. Բարսեղյանի հայոց լեզվի դասագիրքը. Ս. Աբրահամյանի, Բ. Վեդյանի և Վ. Քոսյանի արևմտահայերենի դասագիրքը։

[36] Э. Г. Туманян, Древнеармянский язык, М., 1971, էջ 432։

լեզվաբանական առումով խիստ ուշագրավ հարցադրում և քննարկում ենք գտնում է. Աթայանի «Կառուցվածքային շարահյուսության առարկան և հիմնական հասկացությունները» (1968 թ.) և «Խոսքի մասերը և նրանց ածանցյալ հատկանիշներն ու դասակարգման չափանիշները» (1970 թ.) ուսումնասիրություններում: Ինչպես այլուց մոտ, այստեղ էլ համոզիչ կերպով ցույց են տրվում խոսքի մասերի ավանդական համակարգի, նրանց դասակարգման տարբեր մոտեցումների հակասականությունն ու անհետևողականությունը: Հեղինակը հաստատում է խոսքի մասերի ընդհանուր լեզվաբանական և ոչ թե ընդհանուր իմացաբանական կամ առանձին լեզուներին յուրահատուկ քերականական-ձևաբանական կարգեր լինելու հանգամանքը, ըստ որում՝ մերժելով խոսքի մասերի դասակարգման իմաստային-տրամաբանական, քերականական-ձևաբանական սկզբունքները, միաժամանակ անհնար և լեզվի կառուցվածքին անհարիր համարելով տարբեր սկզբունքների միաժամանակ գործադրումը, ճիշտ է համարում խոսքի մասերի դասակարգման միայն շարահյուսական սկզբունքը: Խոսքի մասերը, ըստ Աթայանի, ինչպես և այդ տեսության այլ ներկայացուցիչների, «շարահյուսական նվազագույն միավորների դասեր» են, որոնցում բառերը խմբավորում են իրենց կատեգորիալ (առաջնային-գործառական) հատկանիշներով[37]:

Եվ քանի որ սպասարկու բառերը (կապ, շաղկապ), ձայնարկությունները այդպիսի գործառույթամբ հանդես չեն գալիս, ուրեմն խոսքի մասեր չեն: Առանձին խոսքի մաս չեն նաև դերանունները, որոնք բաշխվում են մյուս խոսքի մասերի վրա, թվականը նույնանում է ածականին:

Է. Աթայանի վերոհիշյալ հայացքների ծավալուն վերլուծությունն այստեղ չենք կատարում, քանի որ, լինելով ընդհանուր լեզվաբանական բնույթի, դրանք կոնկրետ հայերենի խոսքի մասերի համար չեն ստեղծված: Նույն նկատառումով մենք չենք անդրադարձել Գր. Ղափանցյանի՝ բառերի դասակարգման տեսությանը:

Այսուամենայնիվ, վերջում համառոտ մեջ ենք բերում Գր. Ղափանցյանի դասակարգումը, որը հայերենի խոսքի մասերի տեսության նոր շրջանի պատմության համար շատ ուշագրավ դեր է խաղացել:

---

[37] Տե՛ս Э. Р. Атаян, Предмет и основные понятия структурального синтаксиса, Ереван, 1968, էջ 157—181:

«Բառերը ցույց են տալիս կամ մտքի առարկա կամ զգացմունքի առարկա..., թեպետ վերջիններն էլ կարող են մտածվել երբեմն որպես մտքի առարկա... և մտքի առարկաներն էլ կարող են զգացմունքային ուժեղ շեշտում ստանալ...»— գրում է Ղափանցյանը[38]: «Մտքի առարկա» բառերը, ըստ Ղափանցյանի, կարող են ունենալ երկու տեսակի դասակարգում՝ ձևական կամ «քերականական» (բառակազմական և բառահարաբերական) և բովանդակային:

Բառերի ձևական դասակարգումը տարբեր լեզուներում, ըստ սրանց քերականական կառուցվածքի, տարբեր է լինում:

Բառերի բովանդակային դասակարգմամբ, որ հավասարապես վերաբերում է բոլոր լեզուներին, «մտքի առարկա» բառերը բաժանվում են երկու խմբի (դասերի)՝ 1. «բառեր-անվանումներ», որոնք ցույց են տալիս հատկանիշներ (սպիտակ, սպիտակություն, ընթանալ, ընթացքում) կամ այդ հատկանիշները պարունակող առարկաներ (ձյուն, ինքնաթիռ, սեղան...) և 2. «բառեր-դերանուններ», որոնք միշտ կոնկրետ են՝ ցույց տալով առարկաներ (ես, դու, նա, ով, ինչ...) կամ հատկանիշներ ու հարաբերություններ (այս, իմ, որ...)»[39]:

Ըստ հեղինակի, այս երկու խմբի կամ դասի բառերն էլ իրենց հերթին ըստ բովանդակության կարող են ենթարկվել մանր ստորաբաժանումների, որոնք հանգեցնում են խոսքի մասերի:

«Այսպիսով, ուրեմն,— եզրակացնում է Ղափանցյանը,— մենք ունենում ենք հետևյալ «մասունք բանի»-ները— 1) ձայնարկություն..., 2) գոյական..., 3) ածականներ..., 4) թվական..., 5) դերանուն..., 6) բայ..., 7) մակբայ..., 8) կապական ֆորմալ բառեր— նախադիր կամ հետադիր և շաղկապ...»[40]: Սրանցից հեղինակը նախնական և հիմնական խմբեր է համարում գոյականը, ածականը և բայը:

Գր. Ղափանցյանը միաժամանակ նկատում է, որ բառի ձևային (մասնիկավոր) դրսևորում ունեցող լեզուներում խոսքի մասերը ինքնորոշվում են ձևաբանորեն, թեև այստեղ էլ բառերը կախվածության մեջ են նախադասության մեջ գրաված դիրքից: Անմաս-

---

[38] Գր. Ղափանցյան, Ընդհանուր լեզվաբանություն, հ. 1, Երևան, 1939, էջ 314:

[39] Նույն տեղում, էջ 317—318:

[40] Նույն տեղում, էջ 316—317:

նիկ («ամորֆ») լեզուներում «բառի տարբերացումը ըստ բովանդակության (առարկա, հատկանիշ-հարաբերություն հատկանշի հատկանիշ) լինում է միայն նախադասության այլ ձևական հանգամանքների միջոցով (դասավորություն, շեշտ)»[41]: Ըստ այսմ, արձանագրելով լեզուներում նույն բառի տարբեր խոսքի մասերի պաշտոնով և բովանդակությամբ գործածվելու երևույթը, Գր. Ղափանցյանը միաժամանակ նկատում է, որ «վերջիվերջո մեր մտածողության մեջ թեկուզ այդպիսի կոնկրետավորվող ըստ բովանդակության բառը ունենում է մի գերիշխող իմաստ (կամ առարկա և առարկայացնող հատկանիշ և հարաբերություն»[42]: Այսինքն՝ թեև «քար սիրտ» կապակցության մեջ քար-ը ածական է, բայց իր գերիշխող իմաստով քար-ը մեր մտածողության մեջ մնում է գոյական:

Վերջում Ղափանցյանը բառերը ինն խոսքի մասերի բաժանելու դպրոցական դասակարգումը համարում է նաև ուսուցողական և ձևական նկատառումներով կատարված բաժանում, որը մասամբ էլ «ավանդական է և լոգիցիզմով հագեցված»: Բացի այս, ըստ հեղինակի, դրանում, «պատմական ասպեկտը կործես չկա»[43]:

Բառերի իր դասակարգումը Գր. Ղափանցյանը ամփոփում է այսպես. «Ուրեմն, եթե մի հանրագումարի վերածենք բառերի դասակարգումը ըստ բովանդակության, ապա հնարավոր են չորս հիմնական և մեծ խմբեր— նախ էմոցիոնալ (աֆֆեկտի) բառեր, ինչպես ձայնարկությունն է և մասամբ այդպիսի դրության մոտեցող կոչական բառերը (Հրդեհ!, Սուրեն!): Երկրորդ՝ առարկա ցույց տվող... կամ այդպիսին մտածվող բառեր, որոնք են գոյականները (սեղան, սպիտակություն) և անձնական դերանունները (ես, դու, նա...). երրորդ՝ հատկանիշ ցույց տվող բառեր, կամ որպես մնայուն հատկանիշ (ածական, թվական, մասամբ դերանուն և մակբայ) կամ փոփոխվող ըստ ժամանակի հատկանիշ (բայ). և չորրորդ՝ հարաբերություն կամ կապակցություն ցույց տվող բառախումբը (նախդիր-հետդիր, շաղկապ և մասամբ դերանուններ՝ ցուցական, հարաբերական և ստացական)»[44]:

---

41 Նույն տեղում, էջ 317:

42 Նույն տեղում, էջ 318:

43 Նույն տեղում:

44 Նույն տեղում:

ԵՐՐՈՐԴ ՄԱՍ

ՀԱՑԵՐԵՆԻ ԽՈՍՔԻ ՄԱՍԵՐԻ ՀԱՄԱԿԱՐԳԸ

Առաջին գլուխ

ԲԱՌԵՐԻ ԻՄԱՍՏԱԳՈՐԾԱԿԱՆ ՀԱՏԿԱՆԻՇԸ ՈՐՊԵՍ ՆՐԱՆՑ ԽՈՍՔԻՄԱՍԱՅԻՆ ԴԱՍԱԿԱՐԳՄԱՆ ԸՆԴՀԱՆՈՒՐ ՀԻՄՈՒՆՔ

Հայերենի, և ոչ միայն հայերենի, խոսքի մասերի պատմությունը ցույց է տալիս, որ բառերի իմաստային դասակարգումը, եթե այն նպատակ չունի զանազան սխոլաստիկ մեկնաբանություններով արդարացնելու խոսքի մասերի ավանդական համակարգը, ապա հետևողական լինելու դեպքում հանգում է բառերի բոլոր լեզուների համար ընդհանուր տրամաբանական դասակարգմանն։

Բայց քանի որ բառերի հիմնական քերականական հատկանիշների հիմքում ընկած են նրանց բառային իմաստները և բառերի իմաստային հիմնական խմբերը տարբեր լեզուների համար հանրությային (ունիվերսալ) արժեք ունեն, ապա խոսքի մասերի բոլոր կարգի դասակարգումների մեջ հիմնականը շարունակում է մնալ բառերի իմաստային դասակարգումը։ Այսուամենայնիվ, տարբեր լեզվաբաններ ու լեզվաբանական ուղղություններ բառերի միանգամայն տարաբնույթ իմաստային դասակարգումներ են կատարում, որի հիմնական պատճառը, ինչպես նկատում է Ա. Ս. Չիկոբավան, այն է, որ «Առայժմ բառի և շարույթի իմաստաբանական կարգերի տեսություններ մշակված չեն»[1]։ Եվ բացի այս, ինքը՝ իմաստ կամ նշանակություն բառը գործածվում է լեզվի բովանդակային պլանի տարբեր ծավալի ու բնույթի իրողություններ համար[2] և իմաստային անորոշության պատճառով դառնում է

---

[1] **А. С. Чикобава,** Части речи как понятие филологической грамматики и как понятие описательного научного анализа (ВТЧР, 1968, էջ 63):

[2] *Տե՛ս* **В. В. Виноградов,** Русский язык, Москва, 1972, էջ 15—16:

ոչ այնքան գործնական տեսմին, մանավանդ որ իմաստային նրբությունները դժվար ընկալելի են, և նրանց ըմբռնումները ունենում են նաև սուբյեկտիվ բնույթ։

Հարցի դժվարությունը մեծանում է նաև նրանով, որ լեզվաբանորեն վերջնականապես ճշգրտված չէ խոսքի մասերի բովանդակության պլանը։ Լեզվական միավորների մեջ, լինեն դրանք մասնիկ, բառ, թե բառակապակցություն, կամ թե նախադասություն, ի՞նչ իմաստներ ենք որոնում, ի՞նչ է խոսքիմասային իմաստն ընդհանրապես։ Այս հարցի անորոշ պատասխանը անորոշ է դարձնում նաև խոսքի մասերի պատկերը։ Եթե շատերի համար «խոսքի մասերի ուսմունքը ուսմունք է բառերի մասին»[3] միայն, ապա ուրիշների համար այն ուսմունք է շարահյուսական միավորների, այսինքն ոչ միայն բառերի, այլև բառակապակցությունների մասին։ Ըստ այս մոտեցման, «Խոսքի մասերը (...) հետևողական քերականական մոտեցման դեպքում դառնում են ոչ թե բառերի կարգեր, այլ վերլուծական կամ համադրական բառաձևերով արտահայտվող միավորների կարգեր։ Ընդ որում, նույն բառույթի հարացույցը մտնող բառաձևերը կարող են պատկանել տարբեր խոսքի մասերի... Դրանից հետևում է, որ խոսքի մասերը մինիմում շարահյուսական միավորներ են և ոչ թե ձևաբանական միավորներ, ինչպես հաճախ կարծում են...»[4]։

Այն հանգամանքը, որ գործառական դերի փոփոխությամբ, լրացուցիչ իմաստային ծանրաբեռնվածություն ստանալով, լեզվի տարբեր մակարդակների միավորներն իրենց աստիճանական ստորակարգության մեջ հավասարվում են իրար՝ ձևույթը դառնում է բառ, բառը՝ նախադասություն, անլուծելի դժվարություններ է հարուցում լեզվաբանության առջև այդ միավորների ձևական և իմաստային ճշգրիտ տրոհման և սահմանման գործում։ Եթե միևնույն լեզվում լեզվական նույն նշանակությունը կարելի է արտահայտված գտնել և՛ կախյալ ձևույթով, և՛ բառով, և՛ բառերի կապակցությամբ, որոնք լեզվի տարբեր մակարդակների միավորներ են, ապա լեզվական տվյալ խնդրի քննությունը մեկ մակարդակում սպառել չի կարելի, իսկ տարբեր մակարդակներում էլ, այնուամե-

---

[3] **Ա. Ս. Չիկոբավա**, նույն տեղում, էջ 51։

[4] **Է. Ր. Ատայո**, Части речи, их дифференциальные признаки и критерии классификации («Теоретические и практические вопросы преподавания иностранных языков», АН СССР, М., 1970, էջ 27—28)։

նայնիվ, գործում են տարբեր օրինաչափություններ, որոնք մեխանիկորեն չեն համադրվում: Այս և նման կարգի այլ դժվարությունները քաջ գիտակցելով հանդերձ՝ լեզվաբանությունն իր առավել գիտական ու առաջադեմ ուղղություններով չի հրաժարվում բառը որպես լեզվի հիմնական իմաստակիր միավոր ճանաչելու դատողությունից և լեզվի տարբեր մակարդակներում այն տարբեր կողմերից (բառագիտական, ձևաբանական, շարահյուսական) քննության ենթարկելու պրակտիկայից:

Հայագիտության մեջ Գ. Ջահուկյանը, նկատի ունենալով խոսքիմաստային առանձին իմաստների արտահայտման վերլուծական բաղադրությունները (ոչ մի կերպ, ինչ խոսք, գրել տված է լինում, կարծես թե, ոչ միայն–այլև, ճայտնի է որ, ճազիվ թե, ինչ էլ որ լինի, չի կարող պատահել որ և այլն, գալիս է այն եզրակացության, որ «խոսքի մասերը ոչ թե բառերի խմբեր են, այլ բառային միավորների խմբեր»[5]:

Իր տեղում անդրադառնալով այս հարցին՝ մենք աշխատել ենք ցույց տալ, որ բառային միավորներ, իսկ այլոց կողմից՝ պարզապես բառ համարված այդ բաղադրությունները կամ կապակցությունները շարահյուսական իրողություններ են, և որ ճիշտ են այն լեզվաբանները (Մ. Աբեղյան, Ի. Ի. Մեշչանինով, Վ. Վ. Վինոգրադով և այլն), որոնք խոսքի մասերը համարում են բառերի խմբեր, իսկ խոսքիմաստային իմաստների արտահայտման այդ կարգի վերլուծական կառուցվածքների քննությունը, որպես լեզվական այլ մակարդակի իրողությունների քննություն, թողնում են շարահյուսությանը:

Հայերենի խոսքի մասերի տեսության պատմության մեջ որոշակիորեն տեսնում ենք բառերի իմաստային դասակարգման կամ խոսքի մասերի իմաստաբանական տարբերակման մի քանի մոտեցումներ: Սկսած Դիոնիսիոս Թրակացու քերականության առաջին մեկնիչներից մինչև ուշ միջնադարի հայերենի տրամաբանական քերականության ներկայացուցիչները մշտապես փորձում, հաճախ էլ որոշակիորեն կատարում են խոսքի մասերի տրամաբանական դասակարգում: Բառերի իմաստային դասակարգումը, ինչպես նկատված է, նրանք կատարում են բառային ամեն կարգի իմաստ իրրև հասկացություն ընդունելու մոտեցմամբ: Այդ ուղղու-

---

5 Գ. Բ. Ջահուկյան, *Ժամանակակից հայերենի տեսության հիմունքները, 1974, էջ 133:*

թյան ամենաճանաչված ներկայացուցիչ Ստ. Պալասանյանը հենց այդպես էլ գրում է. «Բառերը իրենց պարունակած հասկացությունների համեմատ այլ և այլ կարգերի են բաժանվում, որոնք քերականության մեջ կոչվում են մասունք-բանի, այսինքն՝ խոսքի մասեր»[6]:

Սակայն, ինչպես ցույց է տրված մեր աշխատության՝ Ստ. Պալասանյանին նվիրված մասում, իր նախորդների պես այս հեղինակն էլ իրականում տրամաբանական սկզբունքը կիրառում է միայն հասկացական նշանակություն ունեցող բառերի նկատմամբ, մինչդեռ դերանուն, դերբայ, շաղկապ խոսքի մասերը առանձնացվում և սահմանվում են սոսկ նախադասության մեջ կատարած իրենց շարահյուսական-քերականական դերով:

Նույն հակասությունը կամ անհետևողականությունն ենք տեսնում նաև Գ. Սևակի դասակարգման մեջ, որտեղ բառերի խոսքիմասային դասակարգման հիմք է ճանաչվում նրանց «լեզվական-իմացաբանական ընդհանուր իմաստը», որով ոչ միայն բոլոր խոսքիմասային իմաստները հավասարապես համարվում են տրամաբանական-հասկացական բոլոր լեզուների համար ընդհանուր իմաստներ, այլև փորձ է արվում նույնիսկ քերականական-սպասարկու խոսքի մասերի իմաստները ներկայացնել իբրև խոսքից դուրս լեզվական անկախ վերացարկումներ:

Թեև Մ. Աբեղյանը կատարում է հայերենի խոսքի մասերի ոչ թե իմացաբանական, այլ իմաստաբանական-շարահյուսական դասակարգում, բայց, ինչպես նկատված է մեր կողմից, նրա դասակարգումը բառերի իմաստային հատկանիշների ու սրանց վրա հենված իմաստային ստորակարգության բացահայտման տեսակետից առավել հետևողական և ճշմարիտ դասակարգում է:

Խոսքի մասերի աբեղյանական իմաստաբանական վերլուծությունը հայագիտության մեջ քննադատաբար յուրացված է Ս. Աբրահամյանի՝ հայերենի խոսքի մասերի տարահատկանիշ աստիճանական դասակարգման, ինչպես նաև Էդ. Աղայանի՝ հայերենի խոսքի մասերի բազմահատկանիշ աստիճանական դասակարգման մեջ, որոնց քննադատական արժեքավորումը տրված է մեր սույն աշխատության համապատասխան բաժիններում:

Ինչպես հայերենի առանձին խոսքի մասերի, այնպես էլ նրանց ընդհանուր տեսությանը վերաբերող մեր ուսումնասիրություն-

---

[6] Ս. Պալասանյան, Քերականություն մայրենի լեզվի, Տփխիս, 1894, էջ 39:

Նեղում մենք խոսքի մասերի նոր դասակարգում կամ դասակարգման նոր սկզբունքներ առաջարկելու փորձ չենք կատարում։ Հայ քերականագիտությունը, ինչպես նաև լեզվաբանական գիտությունն ընդհանրապես շատ հարուստ են խոսքի մասերի դասակարգման այդպիսի զանազան փորձերով ու տարբերակներով։ Շատերի պես մենք էլ այստեղ հիմնականը համարում ենք լեզվի խոսքիմասային համակարգի ճշմարտացի ու հարազատ նկարագրությունը, որպիսի նպատակադրմանը պիտի ծառայեցված լինեն դասակարգման բոլոր կարգի սկզբունքներն ու միջոցները։ Փորձը ցույց է տալիս, որ խոսքի մասերի դասակարգման և ոչ մի սկզբունք, առանձին վերցրած, չի կարող ապահիչ կերպով լուծել այս խնդիրը։ Խոսքի մասերը, որպես լեզվական տարբեր մակարդակների իրողություններ, այդ մակարդակներից որևէ մեկին բնորոշ սկզբունքներով լիակատար ու համակողմանի բնութագիր ստանալ չեն կարող։ Դասակարգման յուրաքանչյուր հետևողական սկզբունք, եթե չի աղավաղում լեզվի իրական պատկերը, կարող է խոսքի մասերի համակարգը ներկայացնել իր արտապատկերմամբ, լեզվական իր կիրառած չափանիշների դիրքերից, քնավ չբացառելով այլ սկզբունքների ու չափանիշների գործադրման հնարավորությունը։ Այս դատողությամբ էլ մենք հայերենի խոսքի մասերի դասակարգման տեսությունները քննելիս ոչ թե նպատակ ենք դնում դրանցում անվերապահորեն ընդունելի և մերժելի սկզբունքներ ցույց տալ, այլ աշխատում ենք տարբեր սկզբունքներով կատարված դասակարգումների անհետևողական ու հակասական կողմերը բացահայտել և միաժամանակ այդ դասակարգումները ամբողջության մեջ գիտականորեն արժեքավորել։ Մենք անվերապահորեն մերժում ենք գիտական այս կամ այն սկզբունքով կատարված դասակարգման անվերապահ մերժումը միայն։

Լինելով ամենատարածված և գործադրելի սկզբունք՝ խոսքի մասերի իմաստաբանական դասակարգումը իր արդյունքի մեջ շարունակում է մնալ ամենից տարատեսակ դասակարգումը։ Նայած այն բանին, թե իմաստային ինչ տարբերակիչ հատկանիշ և հատկանիշի ինչ բովանդակություն է դառնում բառախմբերն ու խոսքի մասերը իրարից զանազանող դասակարգիչ չափանիշ, ըստ այդմ էլ գծագրվում է տվյալ լեզվի խոսքի մասերի ամբողջական պատկերը։ Այս խնդրում ոչ պակաս դեր է կատարում նաև այն, թե խոսքիմասային իմաստների արտահայտման ի՛նչ միջոցներով և լեզվական ո՛ր մակարդակներով է ներկայացվում խոսքի մասերի

արտահայտության պլանը (բառ, բառաձև, բառակապակցություն, նախադասություն)։ Հետևաբար, շարունակում է չլուծված մնալ ոչ միայն այն հարցը, թե խոսքի մասերի իմաստաբանական դասակարգման ժամանակ իմաստային ի՞նչ հատկնիշների ենք դասակարգիչ արժեք տալիս, կամ ո՞ր իմաստներն ենք համարում խոսքիմաստային իմաստ, այլև այն հարցը, թե արտահայտության պլանի ո՞ր աստիճանում և լեզվական ո՞ր միավորում է ամբողջանում խոսքի մասը. կա՞ն արդյոք բառից զատ նաև բառաձև, շարույթ կամ բառակապակցություն, նախադասություն շարահյուսական միավոր խոսքի մասեր. իսկ մյուս կողմից՝ բոլոր բառերում կարելի՞ է գտնել խոսքիմաստային իմաստներ, այլ կերպ՝ արդյո՞ք բոլոր բառերը խոսքիմաստային պատկանելություն ունեն։

Վերը խոսքի մասերի իմաստաբանական դասակարգման լեզվական առարկայի մասին խոսելիս ասվեց, որ մենք այստեղ գործ ենք ունենալու ոչ թե շարահյուսական միավորների, այլ բառերի հետ։ Ինչպես բառային իմաստների, այնպես էլ խոսքիմաստային իմաստների արտահայտման շարահյուսական միջոցների քննությունը պիտի կատարվի շարահյուսության մեջ, և այն բառերի դասակարգման բուն խնդրից դուրս է։ Ծծմբաթթու և ծծմբական թթու քերականական համանիշներ են, լեզվական այս միավորներում արտահայտված ենք գտնում նյութական նույն իմաստները։ Սակայն բառաքերականական իմաստների ամբողջությամբ այդ միավորները բնավ էլ նույնական չեն։ Ծծմբաթթու բառում ծծմբայնության հատկանշային իմաստը վերագրվում է թթվին բառաբարդության մեջ, ուր հատկանիշի արտահայտությունը քերականական որոշակի ձևավորում չունի և այդ բաղադրության մեջ արժույթային էլ չէ (կարելի է հասկանալ նաև ծծմբի թթու). մինչդեռ երկրորդում՝ բառակապակցության մեջ, հատկանիշի հատկացությունը անկախության հետ միասին ունի նաև իր քերականական ձևավորումը՝—ական ածանցով, որտեղ հատկանիշի քերականական իմաստը, ունենալով իր արտահայտման ձևը, այդ ածականի մեջ նաև արժույթային է։ Ահա թե ինչու բառերի խոսքիմաստային դասակարգման ժամանակ ծծմբաթթու բառը, իբրև առարկայական հասկացություն նշանակող բառ, կդրվի գոյականների շարքը; մինչդեռ ծծմբական թթու միավորը կտրոհվի երկու բառային միավորի՝ իբրև ածականի և գոյականի կապակցություն։ Նույնպես կվարվենք նաև հայրաբար–ճոր պես, ճմռտրեճ–ճմռուտ կերպով, ցրտից–ցրտի պատճառով, դաշտում–դաշտի մեջ, անպատճառ–ինչ

գնով էլ որ լինի, հավանաբար–կարող է պատահի որ և այլ համանիշների հետ՝ երկրորդ միավորները համարելով խոսքիմասային իմաստների արտահայտման շարահյուսական իրողություններ, որոնք որպես առանձին բառերի կապակցություններ տրոհելի են։

Բայց մեր բերած վերջին համանիշ զույգերը, ինչպես նկատեցինք, այլ բնույթի են։ Եթե ծծմբական թթու կապակցությունը շարահյուսորեն տրոհվում է նախադասության երկու՝ որոշիչ—որոշյալ անդամների, ապա ճոր պես, ճմուտ կերպով, դաշտի մեջ, ցրտի պատճառով և այլն միավորները շարահյուսորեն մի ամբողջություն են՝ նախադասության մեկ անդամ։ Այսպես, ուրեմն՝ եթե տրամաբանորեն ծծմբաթթու և ծծմբական թթու նույն կոնկրետ հատկացությունն են՝ լեզվական երկու ձևերով արտահայտված, ապա լեզվաբանորեն սրանք, համանիշներ լինելով հանդերձ, լեզվական տարբեր մակարդակների ու ըստ այդմ՝ ամբողջությամբ իրար չնույնացող լեզվական իմաստների ու հատկացությունների արտահայտիչներ են։ Ճոր պես բառակապակցությունը, սակայն, իրեն հայրաբար համանիշի նման դառնալով նախադասության մեկ անդամ, խոսքիմասային իմաստով էլ դառնում են մի ամբողջություն. ճոր պես վարվել կապակցության մեջ գործողության հատկանիշի (ճայրաբար) գաղափարը չեն արտահայտում ո՛չ ճոր և ո՛չ էլ պես բառերը՝ զատ-զատ վերցրած, այլ այդ իմաստը արտահայտում են միասնաբար, շարահյուսորեն՝ պես-ը այդտեղ դառնում է գոյականը մակբայացնող փոխակերպիչ (տրանսլյատոր)։ Արդ, լինելով երկու բառ, բայց նախադասության մի-ակ անդամ և արտահայտելով մեկ մակբայական խոսքիմասային իմաստ՝ այդ տիպի միավորները շարունակո՞ւմ են մնալ տարբեր խոսքի մասեր, եթե այո, ապա ի՞նչ խոսքի մասեր։ Պատասխանել այս հարցին նշանակում է միաժամանակ պատասխանել այն հարցին, թե ինչպիսի՞ ընդհանրացումներ են բառ, խոսքի մաս և նախադասության անդամ հատկացությունները, և ի՞նչ կապ կա սրանց միջև։ Այս հարցն էլ դեռևս լեզվաբանության համար մնում է որպես չլուծված հարց։

Տարածված կարծիքն այն է, որ «բառը բառային կարգ է, խոսքի մասը՝ բառաքերականական, իսկ նախադասության անդամը՝ սոսկ քերականական, ավելի ճշգրիտ՝ շարահյուսական կարգ»[7]։

---

[7] **Е. В. Кротевич,** Слово, часть речи, член предложения. («Вопросы русского языкознания», գիրք 4, Львов, 1960, էջ 12)։

Բայց այս սահմանման խոսքիմասին վերաբերող դատողությունն ունի նաև տարբեր մեկնաբանումներ ու այլ մոտեցումներով ներկայացվող ձևակերպումներ: Պայմանավորված այն բանով, թե լեզվաբանը խոսքի մասը, ի տարբերություն բառի ու նախադասության անդամի, բառայի՞ն, բառաքերականակա՞ն, թե սոսկ քերականական կարգ է համարում, ըստ այդմ էլ տալիս է վերն առաջադրված հարցերի պատասխանը: Հայտնի է նաև, որ «բառայինի և քերականականի միջև անհաղթահարելի պատնեշ չկա» ոչ միայն առանձին լեզուներում, այլև նույն լեզվի տարբեր խոսքի մասերում, նույն խոսքի մասի տարբեր իմաստային դաշտերում միևնույն նշանակությունը կարող է ունենալ և՛ բառային, և՛ քերականական դրսևորում: Այս իրողությունն է, որ խոսքի մասերի քննությունը լեզվի բառային մակարդակից փոխադրում է նաև հաջորդ աստիճաններ, թեև բառակազմության մեջ արդեն կարելի է ընդհանուր գծերով տեսնել խոսքի մասերի բոլոր հիմնական հատկությունները և լեզվի կառուցվածքային առանձնահատկությունները:

Մեր տեսական վերլուծություններում աշխատել ենք հիմնավորել կարծիքները այն լեզվաբանների, որոնք խոսքի մասերը դիտում են իբրև իմաստային ընդհանրությունների հիման վրա ֆերականական հատկանիշներով միավորված և շարահյուսական առանձին գործառություններում մասնագիտացված բառախմբեր: Դրանով իսկ շատերի նման մեզ համար էլ խոսքի մասերը դառնում են բառաֆերականական կարգեր, իսկ լեզվի խոսքիմասային դասակարգումը՝ բառերի դասակարգում: Նման մոտեցմամբ ևոր պես տիպի կառուցվածքները, անկախ այն բանից, որ դրանցով արտահայտված է մակբայական խոսքիմասային իմաստ, չեն դառնում ոչ մեկ բառ, ոչ էլ մեկ խոսքի մաս: Նրանք նախադասության մեջ մեկ անդամ են՝ մակբայական նշանակությամբ, բայց շարունակում են մնալ երկու բառ՝ իրենց խոսքիմասային ինքնուրույն նշանակություններով, ընդ որում ևոր գոյական բառաձևը այդ դեպքում վերցված է իր ոչ առաջնային գործառությամբ: Այս հարցում մենք համամիտ չենք է. Ռ. Աթայանին, որն իր «խոսքի մասերը, նրանց տարբերակիչ հատկանիշները և դասակարգման չափանիշները» խիստ ուշագրավ ուսումնասիրության մեջ վերոհիշյալ շարահյուսական մակարդակի կառույցները համարում է բառաձևեր և առանձին խոսքի մասեր՝ մերժելով նրանցում «լիիմաստ» բառերի շարահյուսական երկրորդական գործառության տեսակետը: Չի

կարելի անտեսել այն հանգամանքը, որ այդ կապակցություններում «լիիմաստ» բառերը շարունակում են պահպանել իրենց նախկին բուն խոսքի մասին առանձնահատուկ կապակցելիության շարահյուսական առանձնահատկությունները (բարի ճոր պես, սաստիկ ցրտի պատճառով):

Ի դեպ, ճոր պես կապակցությունը իր հերթին կարող է վարել ածականի պաշտոն (ճոր պես մարդ), որը կնշանակի, թե բառակապակցությամբ (շարահյուսորեն) արտահայտված ածական—մակբայ խոսքիմասային իմաստներն էլ բառային արտահայտություն ունեցող ածական—մակբայի պես միայն դիրքային տարբերակում ունեն (լավ մարդ, լավ խոսել, ճոր պես մարդ, ճոր պես սիրել):

Ռուսերենի խոսքի մասերի տեսության ճանաչված գիտակ Ա. Ե. Սուպրունն, իհարկե, չի սխալվում, երբ գտնում է, որ խոսքի մասերի մեջ բառային ու քերականականի իմաստային բարդ հարաբերությունները որոշելիս և դրա հիման վրա խոսքի մասերը սահմանելիս չի կարելի չհետևել Կուրիլովիչի և Սլոտտի այն դատողությանը, ըստ որի «առաջնային շարահյուսական գործառությունները բխում են խոսքի մասերի բառային նշանակություններից և իրենցից ներկայացնում են այդ նշանակությունների յուրահատուկ փոխակերպումը (транспозицию)»[8]:

Սակայն շատերի նման մեր այս հեղինակն էլ իրավացիորեն նկատում է, որ Կուրիլովիչի պաշտպանած վերոհիշյալ դրույթը ընդունելի է ոչ միշտ: Այսպես, օրինակ, թվականների համար բառային իմաստներից ծագած կամ ձևավորված քերականական թվական խոսքիմասային իմաստ դժվար է ցույց տալ, սրանցում քերականական հատկանիշները բացասական բնույթ ունեն, մինչդեռ դերանունները միանգամայն քերականացված խոսքի մաս կամ խոսքի մասեր են: Այս նկատառումով բոլորովին այլ խմբեր են կազմում կապակցական բառերն ու ձայնարկությունները, որոնց բառային ու խոսքիմասային իմաստների ու սրանց փոխհարաբերության հարցը հավանաբար դեռևս շատ պիտի զբաղեցնի լեզվաբանությանը:

Հայերենի խոսքիմասային դասակարգումը որոշակիորեն համարելով միայն բառերի և ոչ թե բառային-շարահյուսական այլ կարգի միավորների դասակարգում՝ մենք վարանում ենք մեր առա-

---

[8] Е. Куролович, Очерки по лингвистике. Сборник статей. М., 1962, էջ 61:

ջադրած մյուս հարցի անմիջական պատասխանի մեջ։ Արդյո՞ք այդ դասակարգումն ընդգրկում է լեզվի ողջ բառապաշարը. մի՞թե բոլոր բառերին է առանձնահատուկ բառախոսքիմաստային իմաստային կառուցվածքը։ Հայերենի խոսքի մասերի մասնավորապես նոր շրջանի տեսությունների մեր կատարած վերլուծություններում մեր բոլոր դատողություններն այս հարցի վերաբերյալ հանգում են այն բանին, որ ավանդականորեն խոսքի մաս համարվող բառախմբերը ինչպես արտահայտությամբ, այնպես էլ իմաստային կառուցվածքով իրար հակադրվող նույնատիպ միավորներ չեն։ Բառերի խոսքիմաստային իմաստներին տրված ամենահաջող ու համոզիչ լեզվաբանական բնութագրումներից ելնելով՝ առանց տատանվելու կարելի է համաձայնել այն լեզվաբանների հետ, որոնց կարծիքով բառերն ըստ խոսքի մասերի դասակարգելիս «որոշ բառերի, ասենք, կվերագրվի խոսքիմաստային բացասական հատկանիշ. այնինչ բառերը կարող են հայտարարվել «ոչ խոսքի մասեր» կամ ինչ-որ «զրո խոսքի մասեր...»[9]։

Հայերենի քերականության զարգացման պատմության ողջ ընթացքում թվականի, դերանվան, դերբայների, քերականական նշանակության բառերի ու ձայնարկությունների խոսքիմաստային պատկանելության մասին շարունակվող զանազան վեճերը բնավ էլ անհիմն չեն։ Այդ հանգամանքը ինքնին ապացույց է այն բանի, որ բոլոր բառերը հավասարարժեք խոսքի մասեր համարելը և դրանց բոլորի վերաբերյալ լեզվական իմաստների մեզ ծանոթ կառուցվածքների հիման վրա միասնական ու քիչ թե շատ ընդունելի համակարգ ներկայացնելը անհնար է։ Մեզ հայտնի չէ խոսքիմաստային իմաստ հասկացության մի այնպիսի սահմանում, որ հավասարապես վերաբերեր եթե ոչ խոսքի մաս համարվող բոլոր բառախմբերին, ապա գոնե նյութական կամ հիմնական խոսքի մասերին՝ ամբողջությամբ վերցրած։ Երբ, օրինակ, հայերենում բոլոր դերանունները միավորվում են մեկ խոսքի մասի մեջ, բոլոր մակբայները՝ մի այլ, իսկ թվականները դիտվում են իբրև ածականներից անկախ իրենց բառային իմաստներից աբստրահված խոսքիմաստային առանձին իմաստ ունեցող բառախումբ, խոսքիմաստային իմաստ հասկացությունը անգամ նյութական նշանակության բառերի համար դառնում է անհասկանալի ու անսահմանելի։

Խոսքի մասերի իմաստաբանական դասակարգումը հետևողա-

---

[9] **А. Е. Супрун,** Части речи в русском языке, Москва, 1971, էջ 109։

վան և արդյունավետ կարող է լինել միայն այն դեպքում, երբ այն ճիշտ է ներկայացնում լեզվի իմաստաբանական կարգերի ստորադասարգությունը: Լեզվի բովանդակության պլանում ձայնարկություններն ու բնաձայնությունները ցույց են տալիս զգացմունք ու կամք կամ չիմաստավորված բնական ձայներ և դուրս են մնում կապակցված խոսքից: Կապակցական նշանակության բառերը իմաստային կոնկրետություն և իրական դրսևորում ստանում են կապակցված խոսքի մեջ միայն, որից դուրս նրանց դիտակցումը դարձյալ ենթադրում է այդ կապակցությունները: Այս բառախմբերը դնել անունների շարքում, որոնք հասկացություններ են անվանում և հիմք են դառնում կապակցված խոսքի, և այս ու մնացած կարգի բոլոր բառերի համար աշխատել գտնել մի ընդհանուր «խոսքիմաստային իմաստ» հատկանիշ,— այլ բան չի նշանակում, քան հրաժարում դասակարգման իմաստային սկզբունքից: Այս կարգի հասկացություններն ու անհետևողականությունները ի վերջո հանգեցնում են այն բանին, որ ոմանց կողմից խոսքի մասերի դասակարգման մեջ «իմաստաբանական չափանիշը» ընդհանրապես հայտարարվում է կեղծ չափանիշ (фиктивный)[10]:

Հարցի յուրատեսակ լուծում է տրվում այն լեզվաբանների կողմից, որոնք առանձնացնում են ոչ միայն խոսքի մասեր, այլև խոսքի մասերի խմբեր: Վերջիններիս մեջ բացահայտվում են իմաստային և գործառական ընդհանրություններ, որոնք հեշտացնում են ամբողջ համակարգի միավորների հարաբերությունների նկարագիրը, ապահովում են նրանց տրվող սահմանումների գիտականությունը: Այս նկատառումով, ինչպես նկատված է ռուսագիտության մեջ, ռուսերենի համար շարունակում է օրինակելի մնալ Վ. Վ. Վինոգրադովի դասակարգումը, որտեղ խոսքի մասերը բաժանվում են և՛ խոսքի մասնիկներից, և՛ ձայնարկություններից, և՛ եղանակավորող բառերից, որով նրանց նկատմամբ հեղինակի կիրառած իմաստակառուցվածքային վերլուծությունը դառնում է միանգամայն հետևողական: Հայերենի համար նմանօրինակ դասակարգում կատարում է Մ. Աբեղյանը՝ այն տարբերությամբ միայն, որ այստեղ եղանակավորող բառերը միավորվում են խոսքի մասնիկներին:

Բառերի խոսքիմաստային այսպիսի խմբավորման և տերմինավորման դեմ հիմնական առարկություններից մեկն այն է, որ լեզ-

---

10 Տե՛ս նույն տեղում, էջ 90:

վի ողջ բառապաշարը բաժանվում է խոսքի մասերի և ոչ խոսքի մասերի, ու խոսքի մաս հասկացությունը դարարում է բոլոր բառերին առանձնահատուկ լեզվական կարգ լինելուց։ Իրոք որ այդպիսի դասակարգմամբ խոսքի մասերի համակարգից դուրս են թողնվում նախ ձայնարկությունները և ապա խոսքի մասնիկներ համարվող քերականական նշանակության բառերը՝ կապերն ու շաղկապները, իսկ այլ լեզուների համար՝ նաև հոդերը։ Նշանակավորող բառերն ու բառ-մասնիկները առանձին խոսքի մասեր համարվելու դեպքում այդ համակարգից նույնպես դուրս են մնում։ Այսպիսի մոտեցումը, որ հակասում է լեզվի բոլոր բառերը խոսքի մասերի տրոհելու ավանդական դարձած սովորությանը, բառապաշարը բաժանում է խոսքիմասային իմաստ ունեցող և այդպիսին չունեցող խմբերի, որով, խոսքիմասային իմաստները բառային իմաստներից վերացարկվելու տեսակետից ելնելով, թվում է, թե մերժվում է ոչ խոսքի մաս եղող բառերի նաև բառային իմաստ ունենալու հանգամանքը, դրանով իսկ, ի վերջո, մերժվում է նրանց որպես լիարժեք բառեր ճանաչելու դատողությունը ևս։

Որ ձայնարկությունները և քերականական նշանակության բառերը իրենց իմաստային կառուցվածքով և գործառական արժեքով բառապաշարի մնացած մասից որակապես տարբեր երևույթ են, այդ հայտնի է լեզվաբանությանը և քննության առարկա է եղել և մնում է, իբրև այդպիսին՝ անկախ բառերի խոսքիմասային դասակարգման հարցից։ Հետևաբար այստեղ զարմանալու շատ բան չկա։ Այդ տարբեր բառախմբերի անհավասարարժեքությունը ցույց տալու համար գոնված են «լիիմաստ»—«թերիմաստ», «նյութական նշանակություն»—«ձևական կամ քերականական նշանակություն», «գաղափար նշանակող»—«զգացմունք և կամք ցույց տվող», «բառ-սիմվոլներ»—«բառ-նշաններ», «բառեր»—«բառ-մասնիկներ» և այլ գիտական անվանումներ։ Յավոք, լեզվաբանության մեջ միասնական լուծում չունի այս երկրորդ խմբի բառերի ոչ միայն խոսքիմասային իմաստի, այլև հենց բառային իմաստի կամ իմաստային կառուցվածքի հարցն՝ ընդհանրապես։ Աբեղյանից հետո հայագիտության մեջ այս խնդրի վերաբերյալ լեզվաբանության արդի փուլին համապատասխան համոզիչ և ընդունելի վերլուծություններ է կատարում Էդ. Աղայանը։ Հետաքրքրասեր ընթերցողի ուշադրությանը հանձնելով հեղինակի համապատասխան աշխատությունները, որոնք վկայակոչված և վերլուծված են «Հայերենի խոսքի մասերի տարբերակման սեռությունները» մեր աշխատու-

թյան 217—268 էջերում՝ այսուամենայնիվ պետք է նկատենք, որ բառերի իմաստային կառուցվածքի բնութագրման ասպարեզում լեզվաբանությունը, չնայած իր անընդհատ առաջադիմությանը, դեռևս շատ է հեռու հարցի բավարար լուծումից։

Կարելի է, իհարկե, չհամաձայնել Ա. Ե. Սուպրունի այն դատողությանը, թե «Հազիվ թե նպատակահարմար է արդի փուլում առարկայականությունը (և նույնիսկ բայի համար «ժամանակի մեջ վերցրած հատկանիշը») դիտել որպես նշանակություններ, որոնք կարող են ծառայել իբրև չափանիշ խոսքի մասեր տարբերակելու համար»[11]։ Սակայն բառերի իմաստաբանական դասակարգում կատարելիս չի կարելի անուշադրության մատնել առանձին խոսքի մասերի իմաստային հատկանիշների վերաբերյալ լեզվաբանների արտահայտած խիստ հակասական ու իրարամերժ կարծիքները, որոնցից և ոչ մեկը առայժմ անվերապահորեն ու ամբողջությամբ մերժելի կամ ընդունելի չէ։ Ռուսերենի խոսքի մասերի միանգամայն հաջողված իմաստաբանական դասակարգման հեղինակ Վ. Ա. Բոգորոդիցկին քացականչությունները, իբրև զգացական ոլորտին վերաբերող բառեր, հակադրում է մտածական պատկերացումների ոլորտին վերաբերող բոլոր մյուս բառերին։ Վերջիններս էլ տրոհում է սեփական նշանակություններ ունեցող և չունեցող ենթատեսակների՝ կապը, շաղկապը և մասնիկները համարելով «սեփական նշանակություններից զուրկ բառեր»[12]։

Այլ բան նկատի չունի, իհարկե, Ժ. Վանդրիեսը, որ խոսքի մասերի շարքից նախ հանում է ձայնարկությունները և ապա ավելացնում. «Մեր քերականություններից շատերի «խոսքի մասերը» այլ բան չեն, քան ձևույթներ։ Այսպիսին են նախդիր և շաղկապ կոչված մասնիկները»[13]։

Ա. Ի. Գերմանովիչը իր «Ռուսերենի ձայնարկությունները» աշխատության մեջ, թվարկելով ձայնարկությունների ընդհանուր հատկանիշները, գրում է. «ա) բառային նշանակության բացակայություն»[14]։

Ռուսերենի ակադեմիական քերականության մեջ ասված է.

---

[11] **А. Е. Супрун,** *նույն տեղում, էջ 91։*

[12] **В. А. Богородицкий,** Общий курс русской грамматики, М.—Л., 1935, էջ 106։

[13] **Ж. Вандриес,** Язык, М., 1937, էջ 114։

[14] **А. И. Германович,** Междометия русского языка, Киев, 1966, էջ 13։

«Նախդիրները *որպես սպասարկու բառեր ինքնուրույն բառային նշանակություն չունեն, որի համար էլ լեզվում մյուս բառերից անկախ չեն գործածվում*»[15]:

«*Հատուկ անունները իրենց մեջ չեն պարունակում ո՛չ հասկացություն, ո՛չ իմաստ: Նրանք միայն տարբերակիչ նշաններ են*»[16], գրում է Ե. Մ. Գալկինա-Ֆյոդորուկը:

Կ. Բյուլերը, առարկելով անունների դերանուններից առաջացած լինելու կարծիքին, հատկորեն սահմանազատում է ցուցական բառերը անուններից: Համաձայնելով այդ մտքին՝ Կ. Ե. Մայտինսկայան գրում է. «*Հիմք չկա անվանական բառերը՝ այդ անթիվ զանազան հասկացությունների նշանները, հանգեցնել բառերի (դերանունների—Հ. Բ.), որոնք հասկացություններ ընդհանրապես չեն արտահայտում*»[17]: Հիշատակված խոսքի մասերի իմաստային կառուցվածքի կամ բովանդակության մասին արտահայտված սույն կարծիքները ամբողջությամբ բաժանում են նաև ՍՍՀՄ ԳԱ լեզվաբանության ինստիտուտի հրատարակած «Ընդհանուր լեզվաբանություն, լեզվի ներքին կառուցվածքը» գրքի հեղինակները, որոնք, լեզվի բառապաշարն ըստ իմաստային բովանդակության խմբավորելիս, ձայնարկությունները բոլորովին դուրս են թողնում այդ շարքից, հատուկ անունները համարում են իմաստային ոչ մի կառուցվածք չունեցող թերիմաստ բառեր, դերանունները՝ բառային նշանակության հիմքում ընկնող սեփական առարկայատրամաբանական բովանդակություն չունեցող բառ-նշաններ, իսկ կապակցական բառերը՝ միայն շարակարգային գործառության մեջ բովանդակություն ստացող բառ-նշաններ[18]:

Դերանուններին, ձայնարկություններին և քերականական նշանակության խոսքի մասերի մեջ հասկացություն կամ պարզապես բառային իմաստ չտեսնող լեզվաբանների թիվը սրանցով չի սահմանափակվում. այդ կարծիքները յուրովի մեկնաբանություններով հայագիտության մեջ պաշտպանում են Մ. Աբեղյանը, Հր. Աճառյանը, Էդ. Աղայանը և սրանց նախորդած այլ հայագետներ:

Բայց քիչ չէ նաև հակառակ կարծիքը պնդող լեզվաբանների

---

[15] Грамматика русского языка, т. I, Изд. АН СССР, М., 1952, էջ 653.

[16] **Е. М. Галкина-Федорук**, Слово и понятие, Учпедгиз, 1956, էջ 53:

[17] **К. Е. Майтинская**, Местоимения в языках разных систем, М., 1969, էջ 32:

[18] *Հմմտ.*. «Общее языкознание, внутренняя структура языка», М., 1972, էջ 446:

թիվը: Այսպես, օրինակ, Լ. Օ. Ռեզնիկովը իր «Հասկացություն և բառ» աշխատության մեջ կասկածի տակ է առնում միայն ձայնարկությունների հասկացություն արտահայտելու հանգամանքը, այդ մասին գրում է. «Այդ հարցի դրական պատասխանի համար բավականին հիմքեր չկան»: Դալով մյուս բառախմբերին՝ ծավալուն վերլուծություններից հետո եզրակացնում է. «Ըստ այդմ պետք է ընդունել, որ նաև նախդիրները, եռադրությունները, շաղկապները և նմանները, որպես հարաբերությունների արտահայտիչներ, նույնպես օժտված են իրենց հարաբերականորեն ինքնուրույն նշանակությամբ, հասկացական բովանդակությամբ, հետևաբար և ունեն բառային նշանակություն»[19]:

«Բառ-ձայնարկությունները արտահայտում են տվյալ լեզվական կոլեկտիվի կողմից ընդհանրացված և գիտակցված զգացական-կամային երևույթներ, որոնք իրենց հիմքում, իրենց միջուկում ունեն հասկացական իմաստ, թեև մեր հոգեբանության զգացական և կամային կողմով պարուրված (завуалированное)»[20]:

«Զգացմունքները հոգեբանական պրոցես չեն՝ բոլորովին կտրված գիտակցական պրոցեսից,— ձայնարկությունների հարցում առարկում է ուրիշներին չեխ լեզվաբան Տրավնիչեկը,— այլ գտնվում են նրա հետ սերտ կապի մեջ»: Բառերը «բոլորին հասկանալի են այն պատճառով, որ նրանք արտահայտում են մտածողության ձևերից մեկը, այն է՝ հասկացությունն», և եթե «բոլոր բառը բոլորին հասկանալի է, դրանից հետևում է, որ այն արտահայտում է հասկացություն»[21]:

Ա. Վ. Յուրինը, առանձին աշխատությամբ քննելով սպասարկու բառերի իմաստաբանության հարցը, Ա. Ի. Սմիռնիցկու հետևողությամբ, աշխատում է հիմնավորել այն կարծիքը, թե այս բառերն ունեն և՛ բառային, և՛ քերականական իմաստներ: Նրա ընդհանուր եզրակացությամբ՝ եթե ածանցների մեջ քերականական իմաստը միակն է, նախկին բառիմաստը լրիվ ջնջվել է, ապա սպասարկու բառերի մեջ այդ իմաստը կա, թեև դժվարությամբ է ջոկվում նրա ընդհանուր քերականական իմաստից[22]:

---

[19] **Л. О. Резников**, Понятие и слово, Л., 1958, էջ 72, 69—70:

[20] **Е. В. Кротевич**, նշվ. աշխ., էջ 15:

[21] **Фр. Травничек**, Некоторые замечания слова и понятия (ВЯ, № 1, 1956, էջ 74):

[22] *Տե՛ս* **А. В. Юрин**, К вопросу о семантике служебных слов, Чарджоу, 1960:

Ա. Ն. Տիխոնովը խոսքի մասերի բանավիճային իր հոդվածում գրում է. «Սպասարկու բառերը հիշեցնում են անտարորոշ (синкретические) ձևույթներ, որոնք իրենց մեջ համատեղում են բառային և քերականական իմաստներ»[23]:

Այս կարգի կարծիքները նույնպես օտար չեն հայագիտությանը: Դեռևս Ստ. Պալասանյանը, ինչպես վերն ասվեց, բոլոր բառերի մեջ, որպես առանձին խոսքի մասերի, տեսնում է հասկացություններ:

Ա. Ղարիբյանն ու Գ. Սևակը բոլոր բառերի մեջ տեսնում են սրանց յուրահատուկ բառային և խոսքիմաստային հասկացությունների իմաստներ:

Խոսքի մասերի միայն առանձին տեսակների իմաստային կառուցվածքի մասին բերված այսքան իրարամերժ կարծիքների վկայակոչումից հետո կարող էր բնական թվալ բառապաշարի իմաստաբանական դասակարգման անարդյունավետության եզրակացությունը միայն: Սակայն մենք մնում ենք այդպիսի դասակարգման հնարավորության և անհրաժեշտության մտքի պաշտպաններից մեկը և այժմ կփորձենք այդ միտքը հիմնավորել:

Բառերի իմաստաբանական դասակարգման հիմնական դժվարությունն, անշուշտ, շարունակում է մնալ լեզվի բառային իմաստաբանության, ապա առավել ևս քերականական իմաստաբանության անբավարար ուսումնասիրվածությունը: Այդ է պատճառը, որ լեզվական իմաստների ու հասկացությունների մասին այնքան իրարամերժ դատողություններ ենք գտնում: Միաժամանակ այս բանում չի կարելի չնկատել տարբեր լեզվաբանների կողմից երևույթների տարբեր կողմերի ու հատկանիշների առաջնության կամ նախապատվության համար հարցերի լուծման միտումը և, մանավանդ, տարբեր տերմինագործածության: Այս հանգամանքները նկատի ուներ Լ. Վ. Շչերբան, որը ավանդական լեզվաբանության գնահատելիս ուշադրություն էր հրավիրում նրա տերմինագործածության վրա՝ գտնելով, որ այդ ավանդականորեն սահմանված տերմինների տակ թաքնված են լեզվական դիտողություններ, փաստեր, որոնք գուցե մենք լավ չենք տեսնում, բայց փորձով ստուգված են, կան: Կարևորն, ըստ Շչերբայի, մեզ հասածի ճշգրտումն ու լրա-

[23] **А. Н. Тихонов**, Части речи—лексико-грамматические разряды слов. (Вопросы теории частей речи, Л., 1968, էջ 223):

ցումն է[24]։ Այս նկատառումով խնդրին նայելիս, հաճախ որոշ ընդհանրություններ ու հաշտություն եզրեր կարելի է գտնել նույնիսկ ծայրահեղ հակադիր թվացող կարծիքների մեջ անգամ։ Բանն այն է, թե ով ինչ է հասկանում իմաստ, բառային իմաստ, բերականական իմաստ, խոսքիմաստային իմաստ, հասկացություն, խոսքի մաս, խոսքի մասնիկ, նյութական խոսքի մաս, ձևական խոսքի մաս և նման տասնյակ տերմինների տակ։

Լեզվի բովանդակության պլանում ամեն բառ թե բառ-մասնիկ նշանակային է, հետևաբար նրան վերագրվում է իմաստ։ Այն առումով կամ ընդհանուր դատողությամբ իմաստակիր են լեզվի բոլոր բառ-միավորները։ Լեզվաբանությունը վաղուց է արձանագրել լեզվական նշանի և նրա նշանակության անբաժանելիության կամ միասնության գաղափարը։ Այս ամենը քաջ իմանալով հանդերձ՝ լեզվաբաններից շատերը, ինչպես տեսանք, բառերի առանձին տեսակներ համարում են անիմաստ կամ սեփական իմաստից զուրկ։ Հասկանալի է, որ այդպիսի գիտնականները ունեն իմաստ տերմինի իրենց հասկացողությունը։ Թեև իմաստները յուրահատուկ համարենք դատողություն արտահայտող կապակցված խոսքին և նրանում նյութական աշխարհի առարկայական և հատկանշային բոլոր անվանական իմաստները ընդունենք որպես հասկացություններ, ապա, իրոք, ձայնարկությունները կդառնան և՛ բառային, և՛ քերականական իմաստներից զուրկ բառեր, իսկ կապակցական գործառության բառերին էլ քերականական իմաստներ կվերագրվեն միայն կապակցության մեջ։ Բայց եթե իմաստ ու հասկացություն ասելով հասկանանք լեզվական յուրաքանչյուր նշանի ոչ թե մտածական-դատողական պրոցեսում կատարած իմաստային դերը, այլ հաղորդակցման մեջ նրա ունեցած արժեքը և այս լեզվական հասարակական գիտակցումը, ապա բոլոր բառերին յուրահատուկ կլինեն բառային իմաստներ, լինեն դրանք առարկայահատկանշային կամ հասկացական, թե առարկայահարաբերական քերականական և կամ կամային-զգացական, միևնույնն է։

Այժմ առանձին բառատեսակների իմաստային, ավելի ճիշտ, իմաստագործառական վերլուծությամբ տեսնենք, թե այս դատողություններից որն է մեզ համար համոզիչ և ընդունելի։

---

[24] Հմմտ. Е. В. Кротевич, նշվ. աշխ., էջ 12։

Երկրորդ գլուխ

ԽՈՍՔԻՄԱՍԱՅԻՆ ԿԱՄ ԿԱՐԳԱՅԻՆ (ԿԱՏԵԳՈՐԻԱԼ) ԲԱՅԱՍԱԿԱՆ ՀԱՏԿԱՆԻՇՈՎ ԲՆՈՒԹԱԳՐՎՈՂ ԲԱՌԱԿԱՐԳԵՐ

Ա) ՁԱՅՆԱՐԿՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ ԵՎ ՆՄԱՆԱՁԱՅՆՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ ՈՐՊԵՍ ՏԱՐԲԵՐ ԲԱՌԱՅԻՆ ԱՐԺԵՔՆԵՐ ԿԱՄ ԲԱՌ–ՆՇԱՆՆԵՐ

Ինչպես հայտնի է, լեզվաբանությունը լեզուն համարում է որպես բառային իմաստների (հասկացությունների) և զգացմունքների արտահայտման համակարգերի միասնություն: Հետևաբար, իմաստաբանական տեսակետից առաջին հերթին մեզ հետաքրքրում է այս երկու համակարգերի բովանդակային առանձնահատկությունների և փոխհարաբերության հարցը, որով հավանաբար որոշվում է նաև ձայնարկությունների և ոչ ձայնարկությունների իմաստային տարբերությունների հարցը: Վերը տեսանք, որ չեխ լեզվաբան Ֆր. Տրավնիչեկը ձայնարկությունը հասկացական խոսքի մաս է համարում այն հիմնավորմամբ, որ եթե «Թռ՜ւ բառը բոլորին հասկանալի է, դրանից հետևում է, որ այն արտահայտում է հասկացություն»: Սակայն մեզ ավելի համոզիչ է թվում լեզվի մտածական և զգացական կողմերի հարաբերությունների վերաբերյալ Ա. Ի. Սավչենկոյի կատարած վերլուծությունը՝ «Լեզու և նշանների համակարգեր» հոդվածում:

Նախ լեզուն զանազանելով այլ կարգի նշանային բոլոր միջոցներից ու համակարգերից՝ Ա. Ն. Սավչենկոն համարձակորեն բանաձևում է հետևյալ միտքը: «Իսկ եթե նշանագետը (семиолог) ցանկանում է լինել մարքսիստ, նա առաջին հերթին չպիտի գիտակցությունը շփոթի նշանային համակարգի հետ»[25]: Այնուհետև քննադատում է լեզվաբանության մեջ տարածված այն կարծիքը, թե «Բառի նշանակությունը նրա հարաբերությունն է գիտակցության տարրին և ոչ թե այդ տարրն է, որովհետև վերջինս, պատկանելով գիտակցության ոլորտին, չի կարող պատկանել լեզ-

[25] А. Н. Савченко, Язык и системы знаков (ВЯ, № 6, 1972, стр. 25):

վին»[26]։ Բառի նշանակության եղող ու նրանով արտահայտվող այդ գիտակցության տարրը, սակայն, ըստ հեղինակի, նոր տերմինի կարիք ոմնի։ «Հաճախ այդ կապակցությամբ խոսում են հասկացության մասին,—շարունակում է Սավչենկոն,—բայց դա բոլորովին ճիշտ չէ, որովհետև բառը կարող է արտահայտել և ոչ հասկացություն, այլ ընդհանրացված պատկերացում, իսկ եթե և հասկացություն է արտահայտում, ապա լեզվի իմաստաբանական համակարգի ներգործությանը ենթարկված և հուզական գունավորման ու ոճական երանգների հետ կապակցված։ Կոչենք նրան կոնցեպտ»[27]։ Բառի իմաստային բովանդակությունը հանդիսացող այդ «գիտակցության» տարրի կամ իր տերմինով՝ կոնցեպտի հասկացության հետագա վերլուծությունները հեղինակին բերում են հետևյալ համոզման. «Բառերի ինչպես բառային, այնպես էլ քերականական նշանակությունների առանձնահատկությունների վերլուծությունները վկայում են այն մասին, որ կոնցեպտը պատկանում է ոչ միայն մտածողությանը, այլև լեզվին, որ այն հանդիսանում է ոչ թե բառի նկատմամբ ինչ-որ արտաքին բան, այլ նրա անբաժան բաղադրիչ տարրն է, և որ հենց դա պիտի համարել բառի նշանակություն, որովհետև հակառակ դեպքում իմացաբանության և քերականության մեջ կառաջանան անհաղթահարելի դժվարություններ»[28]։ Այս դատողությամբ բառը ընդհանրապես ճանաչելով որպես նշանի և նշանակության միասնություն՝ Սավչենկոն տալիս է նաև լեզվի իր սահմանումը. «Այսպիսով՝ լեզուն նշանների յուրահատուկ համակարգի և մտածողության յուրահատուկ ձևի միասնություն է»[29] (ընդգծումը հեղինակինն է,—Հ. Բ.)։

Սակայն խոսքի մտածական կողմը, ըստ հեղինակի, իրենից ներկայացնում է ոչ միայն հասկացությունների տրամաբանական կապակցություններ, «նրանում մեծ դեր են կատարում նաև զգացմունքներն ու երևակայությունները (воображение)»։ Վերջիններս խոսքը դարձնում են հուզական (эмоционально)։ Զգացական վերաբերմունք դեպի խոսքի բովանդակությունը կարելի է արտահայտել համապատասխան հասկացական նշանակության բառերով։ Ինչպես, ասենք, ուրախության զգացմունքը արտահայտվում է ես ուրախանում եմ ձևակեպմամբ։ Սակայն այստեղ խոսքը

---

[26] Նույն տեղում։

[27] Նույն տեղում։

[28] Նույն տեղում, էջ 27։

[29] Նույն տեղում, էջ 28։

հուզական չէ։ Հուզական է դառնում այն, երբ կամ գործածում ենք հուզականության այդպիսի երանգ տվող հասկացական բառեր, ասենք՝ ես ինացած եմ, ես յոթերորդ երկնքումն եմ և այլն, և կամ էլ երբ վերաբերմունքը արտահայտում ենք պարզապես զգացմունքի ոչ հասկացական, այլ անմիջական վերաբերական բառերով՝ ձայնարկություններով, ինչպես, ասենք, համապատասխան հնչերանգով արտահայտված՝ ա՜խ։ Ըստ Սավչենկոյի՝ «Զգացման ոչ հասկացական արտահայտությունը ծագմամբ իրենից՝ լեզվից էլ հին է»։ «Այսպիսով,—շարունակում է նա,—հուզականությունը հարաբերականորեն անմիջական (հասկացության մեջ չընդհանրացված), գիտակցության ոչ տրամաբանական տարրերի (զգայությունների և երևակայությունների) զգացական արտահայտությունն է»[30]։ Հետագա դատողությունները հեղինակին բերում են այն եզրակացության, որ տարբերվելով հասկացական մտածողությունից, խոսքի հուզական տարրերը լեզվի միջոցով մտնում են հասարակական գիտակցության համակարգը։ «Անհատական զգացական (эмоциональные) հարաբերությունները ձեռք են բերում իրենց ողջ նշանակությունը այն դեպքում, երբ հուզականորեն արտահայտված լինելով, վեր են ածվում սոցիալական փորձի և ներգործում են ուրիշների զգացմունքներին»[31]։

Ըմբռնելով հասկացության արտահայտիչներ՝ ձայնարկությունները էլ, որպես լեզվի հուզաարտահայտչական տարրերից մեկը, ոչ միայն նշանակությունից զուրկ չեն, այլև լեզվի զգացական ողջ համակարգի հետ միասին դառնում են գիտակցության անբաժան տարր՝ «մտածողության լեզվական ձևի անբաժան տարր»։ Ուստի պատահական չէ, որ Կ. Մարքսն ու Ֆ. Էնգելսը լեզուն համարում են գործնական, իրական գիտակցություն (և ոչ թե մտածողություն)։ «Այդ հաստատում է նաև հոգեբանությունը։ Ինչպես ցույց են տվել Լ. Ս. Վիգոդսկու հոգեբանական ուսումնասիրությունները, գիտակցությունը բանական և զգայական (интеллектуальный и аффектный) պրոցեսների միությունն է և այդպես էլ այն ձևավորվում է խոսքում»[32]։

Այս հանգամանքը թելադրում է հեղինակին ճշգրտելու լեզվին տված իր նախկին սահմանումն այսպես. «Լեզուն յուրատեսակ նշանների համակարգի և հասարակական գիտակցության յուրա-

[30] Նույն տեղում, էջ 29։

[31] Նույն տեղում, էջ 30։

[32] Նույն տեղում։

ճատուկ ձևի միասնություն է»[33] (ընդգծումը հեղինակինն է,— Հ. Բ.)։

Այսպիսով, լեզվի մտածական և զգացական գործունեության իրականացմանը մասնակցող բոլոր միավորները հասարակականորեն գիտակցված, ուստի և նշանակային են։ Բայց եթե ձայնարկությունները արտահայտված այդ զգացական զանազան վերաբերմունքների գիտակցումը Ֆր. Տրավնիչեկի համար բառիմաստհատկացություն է, ապա Ա. Ն. Սավչենկոյի համար՝ բառային նշանակություն է, բայց ոչ հատկացություն։ Մենք այստեղ կրկին վերադառնում ենք լեզվաբանության իմաստաբանության բաժնի գիտական հատկացությունների ու սրանց տերմինավորման անբավարար վիճակի խնդրին։ Այդուհանդերձ մեզ համար ավելի ընդունելի են Սավչենկոյի մեկնաբանությունները։

Վերաբերմունքը դեպի եղելությունը, ինչպես ասվեց, կարող է ներկայացվել որպես դատողություն՝ ես դատապարտում եմ նրա արարքը. ես ինացած եմ նրա արարքով. ես ուրախ եմ. ես շատ եմ ուզված և այլն։ Զգացական վերաբերմունքը կարելի է արտահայտել դատողության խոսքերում հատկացություն արտահայտող այնպիսի բառերով, որոնք ունեն հուզաարտահայտչական երանգ։ Նա fնում է, ճստած է, ուտում է և այլ արտահայտչականորեն չեզոք մտքերի դիմաց կարող են լինել՝ նա ներում է, բազմած է, ճաշակում է, կամ՝ նա մռփում է, շնթռկած է, խժռում է սուբյեկտիվ վերաբերմունքի զուգորդմամբ արտահայտված մտքեր։ Երկրորդ դեպքում զգացական վերաբերմունքը արտահայտված է հատկացական նշանակության բառերի միջոցով, որպես սրանց հուզաարտահայտչական հատկանիշ (քնել—նիրհել—ննջել—մրափել—մռփել. ուտել—ճաշակել—խփշտել—խժռել—լափել և այլն)։ Այս դեպքում, ուրեմն, սուբյեկտիվ վերաբերմունքի գիտակցումը հետևանք է բառի հատկացական նշանակությանը և նրանից անբաժան է ու ոչ անկախ։

Խոսքին հուզաարտահայտչական երանգ են տալիս զգայական վերաբերմունք արտահայտող առանձին տեսակի բառեր՝ չա՞ ա՞խ, ախա՞յ, վա՞յ, ամա՞ն, օ՞ֆ, բո՞ւ և այլն։ Սրանք էլ հուզական վերաբերմունքի սուռ արտահայտություն են, առանց հատկացության զուգորդման։ Սրանց նշանակությունը լուռ իրենցով արտահայտված տարբեր զգացական վերաբերմունքների գիտակցումն է մեր կողմից։ Ձայնարկությունների բառային լիարժեքությունը

[33] Նույն տեղում։

հիմնավորելու համար նրա իմաստային համակարգում կարելի է մատնանշել համանշության, հականշության, բազմիմաստության երևույթներ։

Իմաստային նույն առանձնահատկությամբ են օժտված կամային վերաբերմունքի բառերը՝ դե՛, ես՛յ, հարա՛յ, փի՛շտ, ֆշա՛–ֆշա՛ և այլն։ Սրանցում բառիմաստի գոյության ապացույցը դարձյալ այն պատճառաբանությունն է, որ լեզվական ավանդույթով այս կարգի բառերն էլ հասարակայնորեն գիտակցվում են, որպես զանազան կամային ցանկություններ, պահանջներ արտահայտող բացականչություններ։ Սակայն սրանցում այդ կամային-հրամայական ցանկությունների գիտակցական ընկալումն անհամեմատ թույլ է։ Այս կարգի մի շարք բառերի մեջ իմաստային որոշակի տարբերակումներ շատ դժվար է նկատել. նրանք սոսկ բառականչեր են, դրդիչներ, որոնցով խոսողը, կարծես, մարդկանց, կենդանիների ուշադրությունն է հրավիրում մի բանի և ուրիշ ոչինչ։ Երբեմն այդ նշանակությունները հասկացական բառերով մեկնաբանել հնարավոր էլ չէ։

— Արա՛մ։

— Հը՛։

Ի՞նչ է նշանակում «հը»-ն, «լսում եմ», «լսում եմ էլի» «այստեղ եմ», «ի՞նչ», «ի՞նչ ես անհանգստանում», թե՞ խոսակցության բռնվելուց առաջ իր ներկայությունը խոսակցին հայտնելու սոսկ բացականչություն։ Համապատասխան հանգամանքների նման բացականչություններ են ես՛յ, էհե՛յ, ծո՛, տո՛, ֆա՛, լո՛–լո՛–լո՛ և այլն։ Այսպիսի կոչական, իր տերմինով՝ հրամայական ձայնարկությունները Ա. Ի. Գերմանովիչը վերը նշված աշխատության մեջ իրավացիորեն համարում է ոչ թե սովորական բառեր, այլ բառհարաբերություններ, յուրատեսակ դրդիչներ։

Կամային նշանակության ձայնարկությունները, հիմնականում վերաբերելով մարդու և կենդանական աշխարհի հարաբերություններին, ինչ-որ չափով հիշեցնում են կենդանական «լեզուն»։ Թուխսը իր ձագերին հսկում և խնամում է՝ օգտագործելով իր «լեզվական» ողջ կարողությունները. շան հաչոցի, ձիու խրխինջի «զգացական» ու «իմաստային» բազում երանգներ կարելի է ցույց տալ։ Եվ եթե կենդանական «լեզվում» հաճախ ենք նկատում սոսկ բնազդականից դեպի, եթե չասենք գիտակցականը, բայց խելացի արարքները միտվող երևույթ, ապա մարդկային լեզվում ձայնարկությունների մեջ կարելի է նկատել հույզերի ու զգացումնե-

րի, հոգեկան զանազան ապրումների այնպիսի բառահնչերանգային արտահայտություններ, որոնք գիտակցականից միտվում են դեպի ենթագիտակցականը, այդ պատճառով էլ լեզվի մտածական-արտամարդանական միջոցներով դժվար թարգմանելի են լինում։

Ինչպես նկատված է, լեզվի սովորական բառերից երբեմն ձայնարկությունները հեռանում են նաև արտաստանությամբ. պատահում են այնպիսիք, որոնց ճշգրիտ գրությունը տվյալ լեզվի հնչյունական համակարգի ու այբուբենի միջոցով անհնար է լինում (օրինակ, դրոռ՛, թյո՛, ծր՛-ծր՛ և այլն, որոնցում կան երկշրթնային և ներշնչումով արտասանվող այնպիսի ձայներ, որոնք հայերենի հնչյունական համակարգից դուրս են)։

Ձայնարկությունների իմաստային կողմի քննության մեջ ուսումնասիրողները մասնավորապես ընդգծում են հնչերանգի դերը։ Սրանք այնպիսի բառեր են, որոնց իմաստային արժեքը պայմանավորված է հնչերանգով, ինչպես նաև դիմախաղով և շարժումներով։ Հայերենում ճե՛յ-ճե՛յ կոչական ձայնարկությունը «Հե՛յ-հե՛յ,— կանչում են հովիվները սարում» և «Հե՛յ-հե՛յ, մի սրան տեսնք» տեքստերում, միանգամայն տարբեր հնչերանգներով արտասանված, բոլորովին տարբեր իմաստներ ունեն։ Ավելի ճիշտ՝ առաջինում այդ ձայնարկությունը սոսկ կանչ է, այլ իմաստ նրանում չենք գտնի, մինչդեռ երկրորդ դեպքում, նայած խոսքի իրադրության, կարող է նշանակել՝ «ինձ չես խաբի», «ամեն ինչ հասկանում եմ», «համաձայն չեմ», «այդպիսով գլուխ չի գա» ու նման վերաբերմունքներ։ Երբեմն նման մի ձայնարկություն ոչ միայն ավելի արտահայտիչ է, այլև ավելի բովանդակալից է ու ասում է այնքան բան, ինչքան չի տավի վարակցված մի երկար խոսքով։

Իրենց նշանակությամբ առավելապես սահմանավորված լինելով հնչերանգով՝ ձայնարկությունների իմաստային կոնկրետացումը մեծապես կախված է նաև խոսքի իրադրությունից, մտածական բառերի այն կապակցություններից, որոնց հետ գործածվում է ձայնարկությունը։ «Հե՛յ-ջա՛ն Հայրենի՛ք, ինչքան սիրուն ես», «Հե՛յ-վա՛խ, կոտրան իմ թևերս», «Հա՛յ-Հարա՛յ, փախեք» և այլ նախադասություններում, ինչպես պարզ նկատվում է, ձայնարկություններով արտահայտված հիացմունքի և ուրախության, վշտի ու տխրության, զգուշացում-բացականչության վերաբերմունքների իմաստային գիտակցումը որոշակի է դառնում, կոնկրետանում է այդ նախադասությունների բովանդակությամբ։ Այս

նկատի ունեն այն լեզվաբանները, որոնք ձայնարկությունները դնում են իրադրային նշանակության խոսքի մասերի (դերանուն, հոդ, եղանակական բառեր ու բառ-մասնիկներ) շարքը:

Ձայնարկություններն իրենց իմաստային և ձևական-հնչյունային կողմերով նաև մերձավոր են հոգեկան ամենաբարձր ապրումներ արտահայտող ծիծաղի ու լացի բացականչությունների, որոնք, ուրախության և ցավի, վշտի բուռն զգացման արտահայտության լինելուց բացի, նաև տարբեր աստիճանի ու աստկության վերաբերմունքների արտահայտություններ են: Պակաս բովանդակալից չեն մարդու դիմախաղով ու շարժումներով զուգորդվող ուրախ ծիծաղը, նուրբ քմծիծաղը, արհամարհանքի կամ համակրանքի ժպտի հետ արձակված քրթմնջյունը, լիաթոք քրքրքիջը: Իսկ որքան բան է ասում մարդը միայն իր լուռ հայացքով: Բայց սրանք բոլորը, այդ թվում մասամբ նաև սրանց նմանվող ձայնարկությունները, իրոք որ ենթարկվում են այլ օրենքների, քան սովորական բառերը:

Իմաստային «կառուցվածքով» միանգամայն այլ տիպի բառեր են ձայնարկությունների տեսակ համարվող նմանաձայնությունները: Ընդհանրապես վերաբերելով խոսքի հուզաարտահայտչական կողմին՝ սրանք, ի տարբերություն ձայնարկությունների, զգացական ու կամային ոչ մի վերաբերմունք չեն արտահայտում: Այդ նկատի ուներ լ. վ. Շչերբան, որ գրում էր, թե «Ինքնին հասկանալի է, որ միյաո՛-միյաո՛, վաո՛-վաո՛ և նման այսպես կոչված նմանաձայնությունները՝ ձայնարկություններ համարելու ոչ մի հիմք չկա»[34]: Հայագիտության մեջ էդ. Աղայանը նույն հիմունքով նմանաձայնությունները համարում է առանձին խոսքի մաս:

«Նմանակերպության (изобразительные) բառերը, որպես ինքնուրույն խոսքի մաս» բանավիճային իրենց հոդվածում Ռ. Կ. Կոնգուրովը և Ա. Ն. Տիխոնովը վկայակոչում են նմանաձայնությունները ո՛չ ձայնարկություն, ո՛չ խոսքի մաս և ո՛չ էլ բառ համարելու մի շարք կարծիքներ: Առանձին գիտնականներ գտնում են, որ «նմանաձայնությունը ընկած է լեզվական հաղորդակցման միջոցների համակարգից դուրս» և որ նմանաձայնությունները ոչ թե բառեր են, այլ ազդանշաններ, որոնք «ենթարկվում են այլ օրենքների, քան սովորական բառերը»[35]: Շատերն էլ նմանաձայ-

[34] **Л. В. Щерба**, Избранные работы по русскому языку, М., 1957, էջ 67:

[35] **Р. К. Кунгуров, А. Н. Тихонов**, Изобразительные слова как самостоятельная часть речи. («Вопросы теории частей речи», 1968, էջ 254):

նությունները համարում են բառեր և իրրև այդպիսին նրանցում տեսնում են «կոլեկտիվի կողմից գիտակցված իմաստային բովանդակություն» (վ. վ. Վինոգրադով), որը և նրանց բառային իմաստն է։ Ըստ վերոհիշյալ հոդվածի հեղինակների՝ «Բթթե բառային իմաստ անվան տակ հասկանանք բառի իմաստային բովանդակությունը, որը մնացած բառերի շարքից առանձնացնում է նրան որպես ինքնուրույն միավորի, օժտում է վերարտադրելու կարողությամբ, ապա չի կարող ոչ մի տարակուսանք լինել, որ նմանակերպության բառերը բառային իմաստ ունեն»[36]։

Սրանցում, ըստ այս հեղինակների, սովորական բառերի պես նկատվում են բազմիմաստություն, ճյուղավորված իմաստային կառուցվածք ու սրա փոփոխում, մյուս բառերից քիչ տարբեր, բայց կայուն հնչունական համակարգ։

Տարբեր լեզուներում, իհարկե, նմանաձայնությունների լեզվական արժեքը տարբեր է։ «Սլավոնական լեզուներում նմանաձայնությունների քերականական հատկանիշները խիստ անգույն են արտահայտված։ Մինչդեռ թյուրքական լեզուներում նմանաձայնությունը և նմանակերպությունը ավելի սերտորեն են կապված լեզվի քերականական համակարգին»[37]։ Դրանք հեշտությամբ կապակցվում են օժանդակ բային, կատարում են նախադասության գլխավոր և երկրորդական անդամների դեր, կազմում են բառ-նախադասություն։ Ի տարբերություն ձայնարկությունների, մտնում են շարահյուսական կապերի մեջ, թեև չունեն ձևաբանական հատկանիշներ։ Մեծ է այդ լեզուներում նմանաձայնությունների հիմույթային-բառակազմական դերը։

Նկատի ունենալով օսերենը՝ վ. Ի. Աբաևը գրում է. «Ձևաբանական տեսակետից շարժումնանմանակերպության (мимео-изобразительные) բառերը անվերապահորեն պետք է հատկացվեն գոյական անուններին»[38]։ Ռուսագիտության մեջ հայտնի է նմանաձայնությունները, որպես առարկաների շարժման հետ տարբեր ձայնային ընդօրինակումներ, գործողության չկոնկրետացած, տարատամ գաղափարներ արտահայտող բառեր համարելու կարծիքը։

Նմանաձայնությունները առանձին խոսքի մաս համարող լեզվաբանները նրանցում տեսնում են իմաստային հետևյալ առանձնահատկությունները.

---

36 Նույն տեղում։

37 Նույն տեղում, էջ 256։

38 Նույն տեղում, էջ 257։

«ա) ձայնարկություններն արտահայտում են հուզմունք և կամք, նմանաձայնության բառերը հանդես են գալիս որպես ձայնային կամ շարժումնային տպավորությունների (образов) քայլմանական արժեքներ և չեն արտահայտում ո՛չ հույզ, ո՛չ կամք.

բ) նմանակերպության բառերն ունեն հնչյունական կազմությամբ պայմանավորվող նշանակություն, նրանք անմիջաբար արտահայտում են երևույթներ. դրանով նրանք տարբերվում են ոչ միայն ձայնարկություններից, այլև մնացած խոսքի մասերից.

գ) նմանակերպության շատ բառեր հակված են բազմիմաստության. բազմիաստ նմանակերպության բառերում վառ արտահայտված է երկրորդական նշանակություններ զարգացնելու միտում, որ յուրահատուկ է մյուս խոսքի մասերին (հիմնական և սպասարկու), այն դեպքում, երբ ձայնարկություններում այդպիսի նշանակություններ չեն առաջանում.

դ) կրկնությունները նմանակերպության բառերում ծառայում են ոչ միայն ընդօրինակված երևույթների ուժեղացման համար, ինչպես այդ տեղ է գտնում ձայնարկությունների մեջ, այլ մատնանշում են նրանց տևականությունը, բնութագրում են այդ երևույթները քանակական և որակական տեսակետներից»[39]:

Եթե մի կողմ թողնենք, հեղինակների տերմինավորմամբ՝ նմանակերպության բառերի, այսինքն՝ նմանաձայնությունների իմաստային այն հատկանիշները, որոնք նրանք ձեռք են բերում առանձին լեզուներում (վերևն դրանք ֆյուրքական, թե այլ լեզուներ) շարահյուսական կապակցության մեջ, և անդրադառնանք դրանց սոսկ բառային նշանակության հարցին, ապա չենք կարող չնկատել երկկողմյան ծայրահեղություններ: Մի կողմից, նմանաձայնությունները բառ չհամարելու դեպքում, ոմանք սրանցում իմաստային ոչ մի բան չեն տեսնում, իսկ մյուս կողմից՝ առանձին խոսքի մաս համարելու դեպքում, ուրիշները սրանք իրենց իմաստային կառուցվածքով համարյա հավասարեցնում են հիմնական խոսքի մասերին:

Նմանաձայնություններն առանձին, որպես այդպիսին վերցված, լեզվական հանրույթային երևույթ են և, մեր կարծիքով, ունեն բոլոր լեզուների համար ընդհանուր իմաստային «կառուցվածք», որով նրանք, իրոք անջատվում են և՛ մյուս բոլոր խոսքի մասերից, և՛ ձայնարկություններից:

[39] Նույն տեղում, էջ 258:

Ի տարբերություն լեզվի մնացած ամբողջ բառապաշարի, նմանաձայնություններն, ինչպես տեսանք, չեն արտահայտում ո՛չ առարկաների ու հատկանիշների, ո՛չ սրանց հարաբերությունների գաղափարներ և ո՛չ էլ զգացական ու կամային զանազան վերաբերմունքներ։ Նրանք նյութի շարժման ձայնային տպավորությունների լեզվական պատճեններն են և ունեն հենց այդ «հնչյունական կազմությամբ պայմանավորվող նշանակություն»։ Այդ նշանակությունը լեզվական «իմաստ» է դառնում այնքանով, որ հասարակայնորեն գիտակցվում է իբրև բնական այս կամ այն երևույթի ձայնային ընդօրինակում, որով էլ տր՛զ բացականչությունը կապվում է ոչ թե շան, այլ ճանճի հետ, ընկալվում է իբրև նրա արձակած ձայնը, իսկ հա՛ֆ–հա՛ֆ՝-ը իբրև շան հաչոցի ձայնը, որպիսի տարբերակմամբ էլ նրանք գիտակցվում և լեզվում վերարտադրվում են իբրև բառեր։

Նմանաձայնություններն, իհարկե, բնության մեջ եղած ձայների բացարձակ ընդօրինակումը չեն, նրանք իրական ձայները, շարժումը արտացոլում են լեզվականորեն, մարդկային լեզվի տարորոշված հնչյուններով։ Դրա համար էլ տարբեր լեզուներ ճանճի տզոցն ու շան հաչոցը տարբեր, սեփական նմանաձայնություններով են արտահայտում, թեև պատճենվողի նույնության պատճառով ձևական նմանություններն այստեղ շատ են։ Այս է պատճառը, որ նմանաձայնությունները, ի վերջո, դառնում են բառեր, կամ բառային համարժեքներ։

Այսուհանդերձ, իբրև այս կամ այն երևույթի ձայնային պատճեններ, նմանաձայնությունները սովորական իմաստով նշանակալիր կամ նշանակային բառեր չեն։ Տր՛զ-ը, ծի՛վ–ծի՛վ-ը համարել իմաստալից սովորական բառ, նշանակում է անհնար դարձնել և՛ լեզվական իմաստ, և՛ բառ–հասկացությունների գիտական մեկնաբանությունն ու սահմանումը։ Ընդունելով հանդերձ, որ նմանաձայնությունները լեզվի մեջ բառային արժեք ունեն և նույնիսկ առանձին տեսակի բառեր են, որ նրանք գիտակցվում են որպես առարկայական, կենդանական աշխարհին վերաբերող կոնկրետ երևույթներ, և որ այդ գիտակցումն էլ նրանց բովանդակությունն է, միաժամանակ նաև պիտի ընդունել, որ այդ լեզվական բովանդակությունը որակապես տարբեր է բառային մյուս բոլոր կարգի իմաստներից, որի թվում և ձայնարկությունների իմաստներից։ Եթե մյուս բոլոր բառերը լեզվական նշանակությունը արտահայտում են հնչյունական այնպիսի կապակցու-

թյամբ, որը անվանում, կամ մատնացույց է անում՝ հասկանալի դարձնում այդ նշանակությունը, որ կա այդ հնչյունակապակցությանը զուգահեռ, ապա նմանաձայնություններում այդպիսի լեզվական նշանակություն չկա։ Այստեղ «բառիմաստը» հենց հնչյունակապակցությունն է, կամ նրա, իբրև առանձին ձայնային երևույթի, գիտակցումը։ Թեև մյուս բոլոր բառերում բառիմաստի ու հնչյունական ձևի միջև անմիջական կապ չկա, այսինքն բառի բովանդակությունը հաղորդվում է, Աբեղյանի տերմինով ասած, կցորդությամբ, ապա նմանաձայնություններում բառ-նշանն ու «նշանակությունը» նույնանում են, նշանը նշանակության սիմվոլը չէ։

Իմաստային այս աղքատությունը, սակայն, ոչ միայն չի խանգարում, այլև որոշ իմաստով նպաստում է նմանաձայնություններին կատարելու խոսքի մասեր կազմելու ակտիվ դեր։ Այդ հանգամանքն, իհարկե, ունի իր բավականին հասկանալի պատճառը։ Ինչպես տեսանք, լինելով առարկաների և կենդանիների շարժման ու ձայնարձակման լեզվական անմիջական տպավորություններ, նմանաձայնություններն ստանում են բնաձայնական բայերի արժեք։ Նրանց հնչյունական միացությունը, որ բովանդակային պլանում ուրիշ բան չունի, ընկալվում է որպես ձայնարձակման պրոցես, գործողություն։ Հայտնի է, որ անվանական բառույթների դասը գտնվում է բառային, իսկ բայական արմատ ձևույթների դասը՝ ձևույթային մակարդակի վրա,[40] այս տեսակետից նմանաձայնություններն իրենց բառային արժեքով, կարծես հավասարվում են բայարմատ ձևույթներին (տր՛զ-տզալ, բր՛զ-բզա՛լ, շրր՛խկ-շրխկալ, fր՛ստ-fր՛ստ-fստfստալ և այլն)։ «Որոշ դեպքերում էլ նրանք փոխարինում են դիմավոր բայերին և հանդես գալիս ոչ թե հաղորդակցային, այլ հաղորդային գործառությամբ, որպես նախադասության անդամ. այդ գործառությունը հատուկ է մանավանդ բնաձայնական ձայնարկություններին՝ «Հակոբը շրր՛խկ նրա երեսին»[41]։

Հայերենի դերբայական -ալ վերջավորությամբ ձևավորվելով որպես բայ՝ նմանաձայնությունները հետո ազատ կերպով ածանցմամբ դառնում են ածականներ և գոյականներ. (տզան, բզան, շրխկան, fստfստան, տզոց, բզոց, շրխկոց, fստfստոց

[40] *Համմ.* А. А. Уфимцева, Слово в лексико-семантической системе языка, М., 1968, էջ 29—30։

[41] *Գ. Բ. Ջահուկյան, Ժամանակակից հայերենի տեսության հիմունքները, 1974, էջ 368։*

և այլն)։ Վերոհիշյալ խոսքի մասերի մեջ նմանաձայնությունները ածանցների միջոցով ձեռք են բերում խոսքիմաստային իմաստներ և քանի այդմ դառնում են ձայնարձակման գործողություն՝ բայ, ձայնարձակման ընդունակ լինելու կայուն հատկանիշ՝ ածական, ձայնարձակման երևույթ՝ գոյական։ Այս նկատառումով ուշագրավ են սույն նմանաձայնական խոսքի մասերի խոսքիմաստային (կատեգորիալ) և բառային իմաստների փոխհարաբերության, ինչպես և նրանց անվանական արժեքի հարցերը։ Նմանաձայնությունների խոսքի մաս կազմող այս ակտիվ դերը պայմանավորված է, իհարկե, նաև նրանով, որ նրանք չունեն իմաստային այլ կարգի ծանրաբեռնվածություն, բառակազմական բաղադրյալ ձևեր, որոնք կարող էին իմաստային և ձևական տեսակետից խանգարել նրա ազատ անցմանը այլ խոսքի մասերի։ Նմանաձայնությունները, այսպիսով, բայ, ածական և գոյական խոսքի մասերի կազմության համար մի տեսակ մաքուր, իդեալական հիմքեր են, դրանց խոսքիմաստային իմաստները քերականորեն (բառակազմությամբ) արտահայտելու լավ օբյեկտ։

Այս ամենը մեզ բերում են այն համոզման, որ նմանաձայնությունները, իրոք, իրենց բովանդակությամբ և բառային հատկանիշներով տարբերվում և առանձնանում են ձայնարկություններից որպես առանձին բառատեսակ։

Ձայնարկությունները բնութագրվում են հետևյալ հատկանիշներով՝

ա) ձայնարկությունների բառային իմաստը (лексическое зн.) կամ, էդ. Աղայանի տերմինով ասած, բառիմաստը (значение слова) նրանցում մարդու զգացական ու կամային վերաբերմունքների գիտակցումն է տվյալ լեզվով խոսող հասարակության կողմից.

բ) իրենց այդ վերաբերմունքային բովանդակությունը ձայնարկություններն արտահայտում են համապատասխան հնչերանգով, որը նրանցում հարուստ ու բազմազան է.

գ) ձայնարկությունների հնչերանգը հաճախ զուգակցվում է նաև դիմախաղով (мимика) և այլ շարժումներով.

դ) կոչական այս կամային ձայնարկությունները բովանդակությամբ անհամեմատ աղքատ են. նրանք ավելի շուտ բառ-կանչեր են, բառ-դրդիչներ.

ե) ձայնարկությունները զուրկ են բառակազմական և բառաթեքական առանձնահատկություններից. կոչական ձայնարկու-

թյունները մեծ մասամբ կրկնավորներ են (քշա՛-քշա՛, չո՛ւ-չո՛ւ-չո՛ւ, հե՛յ-հե՛յ, ծի՛վ-ծի՛վ).

զ) ձայնարկությունները արտատանորեն երբեմն դուրս են գալիս լեզվի հնչյունական համակարգի սահմաններից.

է) ձայնարկությունները արտահայտում են մարդու զգացմունքը և կամքը անմիջաբար. դրանք հիմնականում ոչ-հաղորդակցական, արտահայտչական բնույթի են, այսինքն նախատեսված են ոչ թե հաղորդակցման, այլ արտահայտչության համար[42].

Նմանաձայնությունները բնութագրվում են հետևյալ հատկանիշներով՝

ա) Նմանաձայնությունները չեն արտահայտում ո՛չ զգայական, ո՛չ էլ կամային որևէ վերաբերմունք, նրանք ձայնային կամ շարժումնային տպավորությունների պատճառներ են, կամ բնական ու կենդանական ձայների ընդօրինակումներ.

բ) Նմանաձայնությունների նշանակությունը անմիջականորեն պայմանավորված է նրանց հնչյունական կողմով, որի հետ կապվում է տվյալ լեզվով խոսող հանրության կողմից այդ երևույթի դիտակցումը.

գ) Նմանաձայնությունները բառ-նշաններ են, որոնցում նշանը նշանակության սիմվոլը չէ, այստեղ բառ-նշանն ու «նշանակությունը» նույնանում են.

դ) Նմանաձայնություններն ունեն հնչյունական արտահայտության և արտասանական-հնչերանգային յուրահատկություններ.

ե) Նմանաձայնությունները զուրկ են բառակազմական և բառաթեքական առանձնահատկություններից.

զ) Նմանաձայնությունները կատարում են բառակազմական-հիմունքային ակտիվ դեր[43].

Բառերի խիստ հետևողական և անընդմեջ իմաստային դասակարգումը, ինքնին հասկանալի է, կարող է անվերջանալի լինել, որովհետև այն կիջնի մինչև առանձին բառային իմաստների տարբերակման աստիճանը, իսկ լեզվի ամբողջ բառապաշարն ու սրանց իմաստները դեռ ոչ մի լեզվում սպառիչ գրանցում չունեն: Բայց քանի որ մեր նպատակը բառերի խոսքիմաստային դաս-

---

[42] *Չմմտ.* А. И. Германович, *նշվ. աշխ., էջ 13, 37:* Գ. Բ. Ջաճուկյան, *նշվ. աշխ., էջ 361—368:*

[43] *Չմմտ.* Р. К. Кунгуров, А. Н. Тихонов, *նշվ. աշխ. էջ 254, 258;* Գ. Բ. Ջաճուկյան, *նշվ. աշխ., էջ 364:*

կարգումն է, ուստի մեզ պետք է հետաքրքրեն ոչ բառերի ու բառախմբերի ամեն կարգի իմաստային ընդհանրություններ, այլ այնպիսիք, որոնք առանում են խոսքիմաստային տարբերակիչ արժեք։

Ձայնարկություններն առանձին խոսքի մաս համարող բոլոր լեզվաբանները դրանցում այդպիսի խոսքիմաստային իմաստ են համարում զգացական ու կամային վերաբերմունքի արտահայտումն ընդհանրապես։ Նմանաձայնություններից մեջ չտեսնելով այդպիսի ընդհանուր իմաստ՝ ուրիշներն, ինչպես տեսանք, վերջիններն առանձնացնում են իբրև առանձին խոսքի մաս և սրանց համար էլ խոսքիմաստային իմաստ են ճանաչում բնական ձայների, իբրև ձայնային տարրեր երևույթների, դիտակցումն ընդհանրապես։ Նմանաձայնությունները ձայնարկություններին միավորող լեզվաբաններից ոմանք էլ, ճշգրիտ լինելու համար, ձայնարկությանն իբրև խոսքի մաս իմաստաբանորեն սահմանում են այնպես, որ իր մեջ միավորի նաև նմանաձայնությունները. այն է՝ «Այսպիսով, ձայնարկություններն արտահայտում են անմիջական զգացմունք ու կամք կամ հանդես են գալիս որպես ձայնական տպավորության անմիջական արտահայտություն»[44]։

Ինչպես տեսնում ենք, ձայնարկությունների սովանդական խմբի մեջ կարելի է տեսնել բառային տարբեր իմաստների ընդհանրացմամբ ստացվող մեկ խոսքիմաստային իմաստ, կարելի է և, բառային իմաստների այլ խմբավորմամբ, ստանալ երկու խոսքիմաստային իմաստ։ Գիտական հիմքից բնավ էլ զուրկ չէր լինի զգացմունքի ձայնարկությունները կամային-կոչական ձայնարկություններից իմաստաբանորեն անջատելը և վերջիններիս մեջ առանձին խոսքիմաստային իմաստ տեսնելը։ Այս պարագայում կունենայինք երեք խոսքի մասեր՝ խոսքիմաստային երեք իմաստներով։ Սրանք մեկ խոսքի մասի մեջ միավորելիս սահմանման մեջ իմաստային հատկանիշները գումարվում են, երկուսի կամ երեքի բաժանելիս՝ հանվում, անջատվում են։ Սա կամ նշանակում է տարբերակիչ հատկանիշների ոչ ճիշտ կիրառում, կամ էլ բառերի տարբեր տիպի դասակարգումների շփոթում։ Եթե խոսքի մասերն ու խոսքիմաստային իմաստները իրական լեզվական կարգեր են, ապա սրանց բովանդակության այդպիսի ազատ ու այլակերպ մեկնաբանություն չի կարող լինել։ Մենք արդեն քանիցս նկատել

---

[44] Գ. Բ. Ջանուկյան, նշվ. աշխ., է 364։

ենք, որ նման մոտեցմամբ խոսքի մասերի ու խոսքիմասային իմաստների թիվը գնալով կարող է աճել։

Խոսքի մասերը ճանաչելով որպես բառաքերականական կարգեր՝ խոսքի քերականական կատեգորիայից դուրս մնացող բառերում լեզվի քերականական կառուցվածքի թելադրանքով ու նրանով պայմանավորված խոսքիմասային վերացարկված քերականական իմաստների որոնումը մենք շատ այլ լեզվաբանների պես համարում ենք անօգտակար գործ։ Եթե խոսքի մասերն իմաստային ընդհանրությունների հիման վրա շարահյուսական գործառույթամբ մասնագիտացված բառախմբեր են, ապա խոսքիմասային իմաստը բառային նշանակություններ հիման վրա գոյացող այն ընդհանուր բերականական իմաստն է, որն արտահայտվում է բառերի կապակցելիության կամ լրացականության ներունակությամբ։ Հետևաբար, ձայնարկությունները կարելի է իմաստային եթե ոչ երեք, ապա երկու նոր խմբերի բաժանել, նմանաձայնությունները դիտելով որպես միևնգամայն այլ բովանդակային պլան ունեցող բառախումբ։ Բայց այս տարբերակումը խոսքիմասային չէ։ Ձայնարկությունները զուրկ են խոսքիմասային իմաստից կամ ունեն խոսքիմասային զրո իմաստ։ Հայերենի խոսքիմասային համակարգի մեջ նրանք կարող են մտնել որպես այդ համակարգի բացասական հատկանշակիր անդամ։

Բ) ԿԱՊԱԿՑԱԿԱՆ ԲԱՌԵՐԻ ԻՄԱՍՏԱՅԻՆ ԿԱՌՈՒՑՎԱԾՔԸ ԵՎ ՆՐԱՆՑ ԴԱՍԱԿԱՐԳՈՒՄԸ

Ինչպես վերևում ասվեց, կապակցական նշանակության բառերի իմաստային առանձնահատկության մասին լեզվաբանության մեջ արտահայտված են բոլորովին իրարամերժ կարծիքներ։ Ոմանց կարծիքով կապերը, շաղկապները, հոդերը «սեփական նշանակությունից զուրկ», «միայն շարակարգային գործառության մեջ բովանդակություն ստացող բառ-նշաններ» են։ Մինչդեռ ուրիշների մեկնաբանությամբ այդ բառերը, «որպես հարաբերությունների արտահայտիչներ, օժտված են իրենց հարաբերակատեգորեն ինքնուրույն նշանակությամբ, հասկացական բովանդակությամբ, հետևաբար և ունեն բառային նշանակություն»։ Լ. Ա. Ռեզնիկովի այս դատողությամբ, որը նախորդ էջերում մեր կողմից մեջ է բերվել, ուրեմն, կապակցական բառերը ոչ միայն

ունեն բառային նշանակություն, այլև այդ նշանակությունները մենք գիտակցում ենք որպես հասկացություններ։ Լեզվալեզվի այդ դատողության բավականին հիմնավոր քննադատությունը, որ վկայակոչված է մեր «Հայերենի խոսքի մասերի տարբերակման տեսությունները» աշխատության մեջ, տվել է Էդ. Աղայանն իր «Ժամանակակից հայերենի հոլովումն ու խոնարհումը» աշխատության մեջ։ Խուսափելով կրկնությունից՝ ավելացնենք, որ ոչ քիչ թվով լեզվաբաններ էլ, ինչպես ասվեց, գտնում են, որ կապակցական կամ սպասարկու բառերն «իրենց մեջ համատեղում են և՛ բառային, և՛ քերականական իմաստներ» (Ա. Ն. Տիխոնով, Ա. Վ. Յուրին), այնպես որ սրանց և նյութական նշանակության շատ բառերի իմաստային կառուցվածքների միջև այդ գիտնականները տարբերություն համարյա չեն նկատում։

Առայժմ մի կողմ թողնելով կապակցական բառերի խոսքիմասային իմաստի խնդիրը՝ տեսնենք, թե ինչպես է լուծվում սրանց բառային ու քերականական իմաստների հարաբերության հարցը։ Այս հարցի պատասխանն էլ մասամբ պայմանավորված է նրանով, թե լեզվաբանը ինչ սկզբունքով է զանազանում բառային ու քերականական իմաստները. այդ էլ այն դեպքում, երբ «բառայինի ու քերականականի միջև անհաղթահարելի պատնեշ չկա», և «այն, ինչ այս լեզվում ունի բառային, մյուսում կարող է ունենալ քերականական արտահայտություն»[45]։ Այսուհանդերձ դասական լեզվաբանության մեջ այս հարցի ամենատարածված մեկնաբանությունն այն է, որ բառային իմաստը իրականության այս կամ այն կողմի արտահայտումն է, նրա անվանումը. այն կապված է արտաքին աշխարհի հետ և նրա արտացոլումն է։ Քերականական իմաստը այդ բառային իմաստները կապում է իրար։ Բառային իմաստը լեզվի արտաքին աշխարհի հասկացությունն ու կապն է, քերականականը՝ նրա ներքին, բառերի կապը[46]։ Ուրիշները ճշգրտում են այս մեկնաբանությունը՝ նշելով, որ քերականական իմաստը նույնպես արտաքին աշխարհին է վերաբերում, այն արտաքին հարաբերությունների արտացոլումն է. ուստի նրա մեջ կա ոչ թե բառերի, այլ դրանցով նշվող առարկաների կապը[47]։

---

[45] А. Е. Супрун, *նշվ. աշխ., էջ* 89:

[46] *Տե՛ս* **А. А. Шахматов,** Синтаксис русского языка, Л., 1941, *էջ* 431—432:

[47] *Տե՛ս* **А. И. Смирницкий,** Лексическое и грамматическое в слове. («Вопросы грамматического строя», изд. АН СССР, М., 1955.

Այս մոտեցումը ձևակերպված ենք գտնում նաև այսպես. «Բառային իմաստները կազմում են մեր մտքի հիմնական նյութը և միայն այդ իմաստով նրանք հանդիսանում են «իրական» կամ «առարկայական», իհարկե, ոչ թե տառացի, այլ խիստ առանձնահատուկ, ֆիգուրալ (фигуральном) իմաստով: Իսկ քերականական իմաստները մեր մտքին տալիս են ձևավորում: Դրա համար էլ ոչ առանց հիմքի առաջինները որոշ լեզվաբանների կողմից անվանվում են նաև «հիմնական» («самозначающими»), իսկ երկրորդները՝ «ուղեկցող», «զուգորդող» (сопутствующими», «созначающими») կամ «ձևական»[48]*: Բառային իմաստն, ուրեմն, անկախ և անջատված է, ուստի և այն ունեցող բառերը դառնում են նախադասության անդամ: Այդ իմաստը կարելի է որոշել անկախ նրան ուղեկցող քերականական իմաստներից, կամ այլ բառային իմաստներից: Քերականական իմաստը լուկ ուղեկցում է բառային իմաստին, ձևավորում է այն: Բառային և քերականական իմաստների այսպիսի ըմբռնում ունեցող լեզվաբանների կողմից (Ա. Ա. Շախմատով, Ա. Մ. Պեշկովսկի, Մ. Աբեղյան և այլն) կապակցական կամ սպասարկու բառերը, որպես միայն քերականական իմաստներ արտահայտող բառեր, նշանակությամբ ու գործառական դերով հավասարեցվելով քերականական թեքույթների, կա՛մ հանվում են խոսքի մասերի շարքից, կա՛մ տարբեր անվանումներով անջատվում նյութական իմաստ ունեցող հիմնական խոսքի մասերից:*

Բառային ու քերականական իմաստների այլ ըմբռնումների դեպքում կապակցական բառերի իմաստային կառուցվածքին տրվում են ուրիշ մեկնաբանություններ: Թեև ընդունվում է, որ «Բառի բառային իմաստը արտացոլում է իրական աշխարհի առարկաներն ու երևույթները» և «ըստ այդմ բառային իմաստով օժտվում են լեզվի բոլոր բառերը»[49]*, ապա կապակցական բառերի իմաստային համակարգում անպայման մատնանշվում է նաև բառային իմաստը: Ինչպես ասվեց, վ. վ. Վինոգրադովը սպա-*

էջ 32—33): Այս և հաջորդ որոշ մեջբերումները կատարված են ըստ Ա. վ. Յուրինի «К вопросу о семантике служебных слов» աշխատության:

[48] **М. И. Стеблин-Каменский,** Об основных признаках грамматического значения («Вестник Ленинградского университета»), Л., 1954, № 6, էջ 165):

[49] **А. Н. Тихонов,** Части речи—лексико-грамматические разряды слов *(Նշվ. ժողովածու, էջ 222):*

սարկու բառերի բառային իմաստը նույնացնում է նրանց քերականական իմաստին[50], այսինքն այդ բառերի գործառական դերով պայմանավորված քերականական-շարահյուսական իմաստները սրանց համար դիտվում են որպես բառային իմաստներ։ Այս դեպքում, ըստ ոմանց (Լ. Ս. Բարխուդարով, Ի. Ա. Բուդագով, Ի. Պ. Իվանով և այլն) սպասարկու բառերում քերականական իմաստը նույնանում է նրանց բառային իմաստին, իսկ ըստ ոմանց էլ (Լ. Բ. Զինդեր և Տ. Վ. Մատուսևա-Սոկոլսկայա, Ա. Մ. Ֆինկել և Ե. Մ. Բաժանով և այլն)՝ դրանց քերականական իմաստը հենց իրենց բառային իմաստն է, այսինքն՝ նրանք ունեն զուտ քերականական իմաստ։ Այդպիսի մոտեցմամբ քննվող բառերի իմաստային կառուցվածքում մատնանշվում է միայն մեկ իմաստ։ Դա նրանց քերականական-շարահյուսական կապակցող իմաստն է, որը այդ տեսակետի հետևողները կա՛մ նույնացնում են բառային իմաստին, կա՛մ էլ դարձնում են նրան համարժեք՝ շարունակելով այն համարել սոսկ քերականական իմաստ, որպեսզի «բառային իմաստ» տերմինի իրենց հասկացողությունը չաղավաղվի։

Այլ կերպ են մոտածում սպասարկու բառերում ոչ միայն բառային, այլև խոսքիմաստային կամ դասակարգիչ իմաստ տեսնող լեզվաբանները։ Բառերի խոսքիմաստային դասակարգումը համադրելով բառերի բառաքերականական դասակարգում, ապա բոլոր բառերին բնորոշ համարելով բարդ իմաստաբանական կառուցվածք ունենալը՝ Ա. Ն. Տիխոնովը հետևյալ վերլուծությամբ է հիմնավորում սպասարկու բառերի բարդ իմաստաբանական կառուցվածքի իր պատկերացումը։ «Սպասարկու խոսքի մասերը չունեն անվանական ֆունկցիա։ Սակայն նրանք զուրկ չեն բառային իմաստից։ Այսպես, около, у, для, до և այլ նախդիրները, գոյականի հետ կապակցվելով, նշանակում են սեռական հոլով (դա նրանց քերականական իմաստն է)։ Բայց բացի դրանից, նրանք պարունակում են առարկաների տարածական-ժամանակային և այլ հարաբերությունների կոնկրետ ցուցումներ (указания), որով էլ տարբերվում են մեկը մյուսից։ Եթե այդ նախդիրները օժտված լինեին միայն քերականական նշանակությամբ (սեռական հոլովի իմաստով), նրանց իմաստաբանությունը, այդպիսով, լրիվ կհամընկներ, և նրանք կդառնային ոչ պիտանի համանիշներ։ Այնքանով որ նրանցից յուրաքանչյուրը,

[50] Տե՛ս **В. В. Виноградов**, Русский язык, 1947, էջ 30։

բացի նրանց բոլորի համար ընդհանուր քերականական իմաստից, ունի նաև միայն իրեն հատուկ իմաստ, նրանք գործածվում են որպես տարբեր բառեր և որպես այդպիսիք արտահայտում են առարկաների միջև գոյություն ունեցող տարբեր հարաբերություններ։ Դրա համար էլ նույնիսկ у և около համանիշ նախդիրները ոչ բոլոր դեպքերում կարող են փոխարինել իրար։ Համմ. у дома *և* около дома, у меня *և* около меня, *բայց՝* около двух лет, около трех часов, около половины августа *և այլն, կամ* взять тетрадь у девушки, просить у кого-либо помощи»։ *Ապա եզրակացնում է. «Սպասարկու բառերը հիշեցնում են անտարորոշ (*синкретический*) ձևույթներ, որոնք իրենց մեջ միավորում են բառային և քերականական իմաստներ»*[51]։

Մինչև Ա. Տիխոնովի՝ սպասարկու բառերի խոսքիմաստային իմաստի ըմբռնման հարցին անցնելը, այստեղ նկատենք, որ այդ կարգի բառերում բառային ու քերականական իմաստների նրա այս բացատրությունը նույնպես առարկելի է։ Ռուսերենի около, у, для, до *համանիշ նախդիրներում տարբեր կապակցությունների մեջ հեղինակի նկատած բառային տարբեր իմաստները, որոնք հանգեցվում են առարկաների տարածական-ժամանակային և այլ հարաբերությունների արտահայտմանն գաղափարին, մեր կարծիքով, բնավ էլ այդ նախդիրների, առանձին որպես բառ վերցված, բառային իմաստները չեն։ Այդ իմաստները արտահայտված են նախդիրների և գոյականների ամբողջ կապակցությամբ, հետևաբար շարահյուսական դրսևորում ունեն, և ապա՝ այդ տարածական-ժամանակային հարաբերությունների գաղափարները ավելի շուտ կապվում են կապակցության գոյական անդամների հետ (*около дома, около двух лет*), քան նախդիրների։*

Մեր առարկությունը միայն սրանով չի ավարտվում, քանի որ Ա. Տիխոնովը около, у, для, до *նախդիրների համար ընդունում է սրանց այդ բառային տարբեր իմաստներից զատ նաև մի ընդհանուր քերականական իմաստ՝ «սեռական հոլովի իմաստ», որով նրանք դառնում են համանիշներ։ Համանշությունը, ուրեմն, հաստատվում է սրանց ոչ թե բառային, այլ քերականական իմաստի ընդհանրությամբ. մոտեցում, որը նույնպես չի կարող առարկություն չհարուցել այն պարագայում, երբ հե-*

---

[51] А. Н. Тихонов, *նշվ. ժողով., էջ* 222—223։

ղինակը սրանցում տեսնում է քերականականի կողքին բառային ինքնուրույն իմաստ: Բայց քանի որ ռուսերենի նախդիրները որպես խոսքի մաս ունեն նաև դասակարգիչ, խոսքիմասային (կատեգորիալ) իմաստ, ապա սրանց իմաստային կառուցվածքը, ըստ Եղինակի, պարունակում է իմաստային մի վերացարկում ևս:

Բոլոր բառերի մեջ հավասարապես տեսնելով խոսքիմասային կամ, իր տերմինով ասած, դասակարգիչ կամ կարգային (классифицирующее или категориальное) իմաստներ՝ Ա. Ն. Տիխոնովը դրանք բնութագրում է որպես տվյալ խոսքի մասի բոլոր բառերի համար ընդհանուր իմաստներ, ինչպես առարկայականությունը գոյականի համար, ընթացքայնությունը՝ բայի, հատկանիշը՝ ածականի և այլն: Այս «և այլն»-ը, մեր կարծիքով, հարկադրաբար գործածված ոճ է, որին հաճախ դիմում են շատ լեզվաբաններ հենց այդ դասողության ձևակերպման մեջ, որովհետև մյուս խոսքի մասերի համար այդպիսի որոշակի տարբերակիչ հասկացություններ չեն կարողանում անվանել: Բայց քանի որ խոսքիմասային իմաստը Ա. Ն. Տիխոնովի մեկնաբանությամբ քերականական ընդհանրացված իմաստ է, ուստի այն թեքվող խոսքի մասերում արտահայտվում է խոսքի մասի հարացույցով և սրանց շարահյուսական կապերով: «Չթեքվող բառերում, որոնք չունեն հարացույց, այդ նշանակությունը դրսևորվում է նրանց շարահյուսական կապերով, բառի շարահյուսական դիրքով»[52]:

Այսպիսով, կապակցական բառերի համար որպես բառային իմաստ Ա. Ն. Տիխոնովը մատնանշում է նրանց արտահայտած տարածային-ժամանակային և այլ հարաբերությունների իմաստները. որպես քերականական իմաստ՝ հոլովական այն իմաստները, որոնք արտահայտված են դրանցով. իսկ որպես խոսքիմասային իմաստ՝ այդ բառերի շարահյուսական կապերով ու դիրքով արտահայտված տվյալ խոսքի մասի մեջ մտնող բոլոր բառերի համար ընդհանուր իմաստները: Ավելի արդյ չեն արտահայտվում մյուս լեզվաբանները, որոնք քերականական նշանակության բառերում փորձում են առանձնացնել նյութական խոսքի մասերի իմաստային կառուցվածքին առանձնահատուկ այս իմաստային բաղադրիչները: Եթե կապակցական բառերում բացահայտված այս երկու թե երեք իմաստները իրականում մեկ

---

[52] А. Н. Тихонов, նշվ. ժողով., էջ 224:

իմաստի տարբեր աստիճանի ընդհանրացումները չեն, այսինքն, մենք նրանցում գործ չունենք նույն քերականական-շարահյուսական իմաստի հետ, որը այդ բառերի համար միաժամանակ ներկայանում է որպես և՛ բառային, և՛ խոսքիմասային իմաստ, ասպա ավելի հավանական մեկնաբանություն դեռ պիտի որոնել։

Կապակցական բառերում ո՛չ բառային իմաստ և ո՛չ էլ քերականական իմաստ չտեսնող լեզվաբանները ստիպված են այդ բառերում տեսնել մի ուրիշ՝ երրորդ տիպի իմաստ։ Այսպես, օրինակ, Ա. Ս. Պոպովն այդ մասին գրում է. «Նկատի ունենալով, որ ապառարկու բառերը ձևաբանորեն անբաժանելի են, որ նրանց կառուցվածքում բառային և քերականականի հարաբերություն չկա, ինչպես նաև հաշվի առնելով նրանց գործառության յուրահատկությունները (առանձին բառերի պարտադիր ուղեկցելը ուրիշ բառերի)՝ մենք չենք կարող նրանց իմաստները գնահատել ո՛չ իբրև բառային, ո՛չ իբրև քերականական։ Մեր առջև յուրատեսակ լեզվական իմաստներ են (չտարբերակված իմաստներ)»[53]։

Քերականական նշանակության բառերում ոչ միայն խոսքիմասային իմաստի, այլև բառային ու քերականական իմաստների զանազանման այս անորոշությունը ստիպել է այլ լեզվաբանների այդ կարգի բառերի իմաստային կառուցվածքը քննելիս դիմելու սրանց արտահայտչական պլանի օգնությանը. քանի որ, իրոք, «բառայինի ու քերականականի միջև անհաղթահարելի պատնեշ չկա», և միևնույն իմաստը տարբեր լեզուներից մեկում կարող է արտահայտված լինել որպես բառային իմաստ, իսկ մյուսում՝ որպես քերականական, ասպա այստեղ իմաստի զանազանման չափանիշ կարող է դառնալ նրա արտահայտման եղանակը՝ ձևը։ Ըստ Ա. Ի. Սմիռնիցկու, առարկայական աշխարհի հարաբերությունները կարող են լեզվում արտահայտված լինել և՛ որպես բառային, և՛ որպես քերականական իմաստ։ Բառային իմաստը ճանաչելու համար պիտի վերանալ բառի քերականական իմաստներից, որպեսզի նրանում բառային իմաստը լավ երևա։ Քերականական հատկանիշները, ի տարբերություն բառայինի, իրենք իսկ բառերով չեն արտահայտվում, այլ արտահայտվում են լրացուցիչ միջոցներով։ «Այսպիսով, հարաբերության իմաստը ոչ միշտ և ոչ պարտադիր կերպով քերականական իմաստ է։

---

[53] **А. С. Попов**, О грамматической форме и категории в морфологии русского языка («Материалы по русско-славянскому языкознанию», Воронеж, 1963, էջ 299)։

Այն քերականական է լոկ այն դեպքում, երբ արտահայտված է ոչ թե իրենց իսկ բառերով, որպես այդպիսիների, այլ դրանց ավելացված միջոցներով, այն է՝ բառերի թեքումով և նախադասության մեջ բառերի կապակցություններով[54]: *Հետևաբար «Այնտեղ, որտեղ հարաբերության իմաստները բառի իմաստաբանության մեջ ներկայանում են որպես հիմնական, կենտրոնական, այնտեղ, որտեղ նրանք արտահայտվում են առանձին, կոնկրետ բառերով, այդ իմաստները բառային իմաստներ են»*[55]:

Ա. Վ. Յուրինը իր «Սպասարկու բառերի իմաստաբանության հարցի շուրջը» ուսումնասիրության մեջ, հետևելով Ա. Ի. Սմիրնիցկու բառային և քերականական իմաստների տարբերակմանը այս սկզբունքին, տալիս է սպասարկու բառերի բառային և քերականական իմաստների հետևյալ սահմանումները. «Սպասարկու բառերի բառային իմաստը նրա այն իմաստն է, որը արտացոլում է իրականության այս կամ այն առարկայի կամ երևույթի որևէ որոշակի հարաբերությունը մի ուրիշ առարկայի կամ երևույթի նկատմամբ և որը արտահայտվում է իրենով իսկ՝ սպասարկու բառով: Այդ նշանակությունն էլ անհատականացնում է սպասարկու բառը իմաստային կողմով, տարբերում է տվյալ կարգի (խոսքի մասի) մի սպասարկու բառը նույն կարգի մյուս սպասարկու բառից (այսինքն՝ մի նախդիրը՝ մյուս նախդրից, մի շաղկապը՝ մյուս շաղկապից և այլն)»[56]:

«Սպասարկու բառի քերականական իմաստը նրա այն իմաստն է, որը նույնպես իրականության այս կամ այն հարաբերության արտացոլումն է, բայց այդ իմաստն արդեն արտահայտվում է ոչ թե իրենով իսկ՝ սպասարկու բառով, այլ այդ սպասարկու բառի և այն նյութական (հիմնական) բառերի (կամ բառերի կապակցությունների) կապակցման փաստով, որոնց տվյալ սպասարկու բառը կապակցում է նախադասության մեջ»[57]: *Այս քերականական իմաստն արդեն, ի տարբերություն նրա բառային իմաստի, այդ սպասարկու բառը չի անհատականացնում իմաստա-*

---

[54] **А. И. Смирницкий**, Морфология английского языка, М., 1959, էջ 367:

[55] *Նույն տեղում, էջ 366:*

[56] **А. В. Юрин**, К вопросу о семантике служебных слов, Чарджоу, 1960, էջ 31:

[57] *Նույն տեղում, էջ 32:*

յին տեսակետից, չի հակադրում և չոկում մյուս նման բառերից[58]։

Ա. Վ. Յուրինը չի անդրադառնում սպասարկու բառերի խոսքիմաստային իմաստի հարցին։ Գալով Ա. Ի. Սմիռնիցկու, Ա. Վ. Յուրինի և սրանց տեսակետներն այս հարցում պաշտպանող լեզվաբանների այն կարծիքին, թե բառային իմաստը քերականականից պիտի զանազանել միայն արտահայտման եղանակով և ըստ այնմ առանձին բառաձևով արտահայտված ամեն իմաստ պիտի համարել բառային իմաստ, իսկ թեքույթներով և շարահյուսորեն արտահայտվածները՝ քերականական, դարձյալ առարկելի է։

Այս խնդրում հավանաբար իմաստաբանության մեջ առաջին հերթին ճշգրտման կարիք ունի բառային իմաստ տերմինը։ Ճիշտ է նկատում Ա. Ն. Տիխոնովը, թե բառային իմաստը հաճախ նույնացվում է բառի անվանական գործառույթների։ Նրանք, ովքեր բառային իմաստ են տեսնում միայն անուն խոսքի մասերի մեջ, նրանց մեկնաբանությամբ բառային իմաստը գիտակցվում է որպես առարկայահատկանշային հասկացությունների անվանական արտահայտություն և ըստ այդմ բառային իմաստից զուրկ են համարվում բոլոր սպասարկու բառերն ու դերանունները։

Բառային իմաստը բառերի անվանական արժեքի հետ կապող կարծիքի մի այլ մեկնաբանություն էլ այն է, որ բոլոր բառերը համարելով բառային իմաստով օժտված լեզվական միավորներ, դրանց բոլորին վերագրում է անվանական արժեք։ Այսպես, օրինակ, ռուսերենի Ակադեմիական քերականության մեջ բոլոր խոսքերի մասերը, բացի ձայնարկություններից, բնութագրված են որպես «ինչ-որ բան անվանող» բառակարգեր[59]։ Վերջապես, բոլոր բառերի բառային իմաստները, լինեն դրանք քերականական թե բառային, ոմանց կողմից համարվում են նաև հասկացություններ[60]։

Բառերի նշանակությունները, որպես իրականության տարբեր կողմերի լեզվական արտացոլումներ, տարբեր բովանդակություն և արժեք ունեն։ Ուստի և լեզվի ու նրա իմաստային կառուցվածքի գիտական քննության շահերը պահանջում են, որ այդ իմաստ-

---

[58] *Տե՛ս* Л. С. Бархударов, Служебные слова и их функции («Труды военного института иностранных языков», 1, М., 1952, էջ 6, 11, 13)։

[59] Грамматика русского языка, Изд. АН СССР, 1952, էջ 20։

[60] *Տե՛ս* **Л. О. Резников,** Понятие и слово, էջ 69—70; **Реформатский А. Н.,** Введение в языкознание, М., 1955, էջ 46։

ները ճիշտ մեկնաբանվեն ու դասակարգվեն, հետևաբար և ճիշտ տերմինավորվեն։ Այս նկատառումով մեզ համար անընդունելի են թվում «բառային իմաստ» անվամբ բառերի արտահայտած բոլոր կարգի իմաստները միավորելու առաջարկը, քերականական իմաստներն ու սրանք արտահայտող բառերը մյուս առարկայական իմաստների ու դրանք արտահայտող բառերին նույնացնելու փորձերը, քերականական և բառային իմաստները ոչ թե ըստ բովանդակության, այլ ըստ արտահայտման եղանակի զանազանելու մոտեցումը, բոլոր բառերը անուններ համարելու դատողությունը։

Կապակցական բառերի իմաստային կառուցվածքի հարցը ամփոփելուց առաջ կրկին հիշենք այդ բառերի մասին Ա. Ի. Սմիռնիցկու կարծիքը, որը ամենատարածվածներից է։ Ըստ այդ կարծիքի, ինչպես տեսանք, սպասարկու բառերում պիտի զանազանել՝ «... 1) քերականական իմաստ, որ կապված է նրա քերականական գործառության հետ և հատուկ է այդ տիպի բոլոր բառերին..., 2) բառային միայն իրեն հատուկ իմաստ, որով այս բառը տարբերվում է այդ տիպի մյուս բառերից»[61]։

Նախդիրների մեջ քերականական և բառային իմաստների, իր տերմինով՝ քերականական և բառային գործառույթների, որոշակի տարբերություն է տեսնում Վ. Զ. Զլատկինը, որի «Բառային նշանակությունների փոխներգործությունները «բայ—նախդիր—անուն» կապակցություններում» հոդվածը մեզ հետաքրքրող հարցի նորագույն մեկնաբանություններից է։ Արդ տեսնենք, թե ինչպես է պատկերացնում Վ. Զլատկինը բառային և քերականական իմաստների փոխհարաբերությունը նախդրի իմաստային կառուցվածքում։

Հոդվածի հենց սկզբից տողատակի ծանոթությամբ նա զգուշացնում է ընթերցողին, որ ներկայացված ուսումնասիրության «հեղինակը ճանաչում է նախդրի բառային իմաստ՝ գտնելով, որ, օրինակ, в-ն в пятом часу կապակցությունում և в-ն в доме կապակցությունում համանուններ են, իսկ в-ն в яме և в лесу կապակցություններում տարբերակվում է բազմիմաստության սահմաններում»[62]։ Այս և հետագա բոլոր օրինակներից պարզ երևում է, որ նախդիրների բառային իմաստներում բազմիմաս-

---

[61] **А. И. Смирницкий**, նշվ. աշխ., էջ 367։

[62] **В. З. Златкин**, Взаимодействие лексических значений в сочетании «глагол—предлог—имя» (ВЯ, № 4, 1976, էջ 105)։

տուիչյան, համանշուիչյան, համանունութիչյան և այլ իմաստաբանական երևույթների երևանգալը հիմնականում պայմանավորված է կապի անուն խնդրի և կապակցութիչյան առանցքային բառի՝ բայի, բառային իմաստներով, և որ ոչ բոլոր կապերում է, որ այդ կապակցութիչյունից դուրս կարելի է ընդհանրապես առարկաների ու գործողութիչյունների որևէ հարաբերութիչյան իմաստ տեսնել։ Դժվար թե ռուսերեն в նախդիրը, առանձին վերցրած, առարկաների որևէ հարաբերութիչյան գիտակցում առաջ բերի, թեև տարբեր կապակցութիչյուններում նրա հետ կապվում են բազմազան այդպիսի հարաբերութիչյուններ։ Այդ հանգամանքը շատ լավ է նկատում նաև Վ. Զլատկինը, որի համար էլ գրում է. «Կախված շարակարգի պահանջից՝ միևնույն նախդիրը կարող է արտահայտել տարածական և ժամանակային, կամ էլ որևէ այլ նշանակութիչյուն (հմմտ. в лесу-в пятом часу—в победу (верить) և այլն)»[63]։

Չի կարելի չհամաձայնել հեղինակի՝ նախդրի լեզվական դերի հետևյալ ընդհանուր գնահատականին. «Իր բառային իմաստների ընդհանրութիչյան և առանձնահատուկ վերացարկվածութիչյան ուժով, իմաստներ, որոնք չեն բաղարկվում առարկայի կամ գործողութիչյուն ինքնուրույն նշանակութիչյան (полнознаменательным) բառով նշվող խիստ անհատական հատկանիշների հետ, նախդիրը ձևավորում է շարահյուսական գործառութիչյուն՝ դառնալով մի տեսակ կապող օղակ առանցքային և կախյալ բառերի՝ բառակապակցութիչյան բաղադրիչների, իմաստաբանութիչյան հիմքում ընկած նույնատիպ վերացութիչյունների միջև»[64]։ Բայց նախդրի այս խիստ շարահյուսական բնութագիրը չի խանգարում Վ. Զլատկինին, այնուամենայնիվ, նրա իմաստաբանութիչյան մեջ զանազանելու բառայինը քերականականից։

«Նախդրի բառային և քերականական գործառութիչյունները տարբերվում են, և անհրաժեշտ է դրանք սահմանազատել»[65],— գրում է նա։ «Առարկայի, գործողութիչյան և վիճակի հասկացութիչյուն արտահայտելու գործառութիչյունը կոչվում է բառի բառային նշանակութիչյուն»[66], շարունակում է Վ. Զ. Զլատկինը։ «Նախդրի բառա-

---

[63] Նույն տեղում, էջ 108։

[64] Նույն տեղում։

[65] Նույն տեղում։

[66] Նույն տեղում։

յին նշանակությունը կլինի առարկաների կամ գործողությունների միջև առարկաների հետ հավասար հարթության վրա գտնվող հարաբերությունների հասկացություն արտահայտելու գործառույթը»[67]։ Անվանական բառերում բառային իմաստը բառի անվանողական հատկանիշի շնորհիվ գիտակցվում է որպես ինքնուրույն հասկացություն. նախդիրների մեջ և կապակցական այլ կարգի բառերում իմաստի այդպիսի անկախություն և կոնկրետություն չկա[68]։ Վ. Զլատկինն էլ շատերի պես այս հանգամանքը ճիշտ չի համարում և նախդրի բառային իմաստը բնութագրում է որպես առարկայական հարաբերությունների արտահայտման հասկացություն։ Ճիշտ է, իհարկե, Ա. Ն. Տիխոնովը, որ գտնում է, թե բառերի անվանական դերը և բառային իմաստ ունենալու յուրահատկությունը չի կարելի նույնացնել իրար և ըստ այդմ ոչ անվանական բառերը համարել բառային իմաստից զուրկ միավորներ։ Միաժամանակ հավասարապես ճիշտ է նաև ուրիշների այն պընդումը, թե բոլոր բառերի մեջ բառային իմաստ տեսնելու դեպքում էլ չի կարելի ոչ-անվանական քերականական նշանակության բառերի իմաստը ճանաչել որպես հարաբերությունների հասկացություն՝ այն հավասարեցնելով անվանական բառերում արտահայտված առարկայահատկանշային հասկացական իմաստներին։ Այս դատողության իսկության օգտին են խոսում իր իսկ Զլատկինի մի շարք դիտողությունները նախդրի բառային իմաստի տարբեր կողմերի վերաբերյալ։ Թեև նախդրի մասին իր դիտողություններում Վ. Զ. Զլատկինը պնդում է, որ «...նախդիրը ինքնուրույն բառույթ է, ինքնուրույն նշանակության բառերի հետ միասին իրագործվող բառային փոխհարաբերության ակտի լիիրավ մասնակիցը»[69]։ Այսուամենայնիվ, հեղինակը բոլոր հիմնական վերլուծությունները ընթերցողին, այլև իրեն իսկ հեղինակին թերում են այն համոզմանը, որ նախդրավոր կապակցություններում «բառային բաղարկության (контаминации) հետևանքով համադրվող բառային իմաստները, կորցնելով կոնկրետությունը, հանգում են շարահյուսական գործառության, կարծես թե փոխակերպվում են նրանում, և բառային կոնկրետ բաղադրիչներից (компонентов) «մաքրվածծ» այդ շարահյուսական իմաստի ձևավորման ընթացքում ակտիվ դեր է կատարում նախդիրը։ Նրա իմաստաբանությունը վերացական է

[67] Նույն տեղում։

[68] Նույն տեղում, էջ 108—109։

[69] Նույն տեղում, էջ 109։

բառակապակցության մյուս անդամների իմաստաբանությունից։ Նրան բնորոշ է այն օժանդակությունը, որը կանխորոշում է շարահյուսական գործառության իմաստը»[70]։ Ստանալով առարկաների ու սրանց գործողությունների բազմազան ու բազմաբնույթ հարաբերությունների արտահայտմանը, նախդիրը ձեռք է բերում բազմագործառական բնույթ, որով պայմանավորված է նրա «բառային իմաստի համընդհանրությունը (универсальность)։ Հասկանալի է, որ նախդրի բառային իմաստը թե՛ վերացարկությամբ, թե՛ իր գործառական դերով իրոք որ «շարահյուսական գործառական իմաստ է»,— ի վերջո եզրակացնում է Վ. Զլատկինը։ Բայի, նախդրի և անվան հոլովաձևի կապակցության մեջ արձանագրվում է այդ շարահյուսական ամբողջության բաղադրիչների իմաստային որոշակի փոխներգործություն և կախվածություն։ Նախդիրը իր բառային իմաստով, իհարկե, կարող է իմաստային նոր երանգներ բացահայտել իր անուն խնդրի իմաստի մեջ. նախդրի և անվան կապակցությունը, որպես առանցքային բային լրացնող միկրոշարակարգ (микроконтекст), կարող է իր հերթին ներգործել բայի իմաստի վրա, սակայն այդ կառուցվածքային կաղապարի անդամների իմաստային կապերի մեջ չկա իմաստաբանորեն նախորոշված կախվածություն[71]։

Նախդրի բառային և քերականական գործառությունները իրարից որոշակիորեն զանազանող այս հեղինակը նախդրի հիմնական գործառությունը համարում է նրա խնդրառական հատկանիշը, այսինքն կախյալ հոլովված բառաձևով, խնդիր առնելու նրա հատկությունը։ Նախդիրն ունենում է նաև գործառական այլ, ոչ հիմնական դեր. օրինակ, լինում է առանցքային բառի շարահյուսական դերի ուղեկիցը կամ հանդես է գալիս որպես «երկրորդ» թեքույթ և այլն։

Իբրև առարկաների, նրանց գործողությունների ու վիճակների տարբեր հարաբերությունների ցուցիչներ, կապերը շարակարգում, հաճախ էլ առանձին վերցրած, ունենում են իրենց յուրահատուկ, մեկը մյուսից տարբեր իմաստը՝ բառային իմաստը։ Շնորհիվ այդ իմաստի է, որ կապերի մեջ հնարավոր է տեսնել համանշություն, բազմիմաստություն և այլն։ Շնորհիվ դրա է, որ սկսած վաղ միջնադարից այլ լեզուների քերականությունների պես հայե-

---

[70] Նույն տեղում։

[71] Համմ. նույն տեղում, էջ 110—111։

ցենի քերականությունն էլ շատ հարուստ է կապակցական բառերի իմաստային բազմազան դասակարգումների փորձով: Կապական բառերի մեջ ամանց կողմից նկատված իմաստային մյուս տարրերը, ինչպես ասենք, հոլովական տարբեր իմաստների արտահայտումը տարբեր կապերում, այլ բան չեն, քան այդ բառերի բառային կամ, ավելի ճիշտ, բառային-քերականական իմաստի ավելի ընդհանրական արտահայտությունը: Կապերի մեջ, բացի նրանց իրարից զանազանող կամ յուրաքանչյուրին առանձնահատուկ այս բառային կամ բառային-քերականական իմաստից, արդյոք, ուրիշ քերականական իմաստ կա՞:

Այս հարցին դրական պատասխան տվողները, ինչպես տեսանք, կապերի մեջ նրանց՝ բոլորի համար ընդհանուր քերականական իմաստ են համարում ամվանն որևէ հոլովով խնդիր առնելու շարահյուսական հատկանիշը, որով նա իրագործում է իր կապակցական դերը, կամ այդ իմաստը պարզապես նույնացնում են կապերի գործառական ընդհանուր հատկանիշին: Վ. Զլատկինի մեկնաբանությամբ՝ կապերի մեջ նրանց բառային իմաստների վերացական բնույթը պայմանավորում է ավելի բարձր աստիճանի վերացության՝ շարահյուսական գործառական իմաստի ձևավորում: Ինչպես նկատված է, որքան կոնկրետ է բառի իմաստը, այնքան սահմանափակ են նրա կապակցական հնարավորությունները, այս տեսակետից կապակցական բառերը իրենց քերականական-վերացական բառային իմաստի շնորհիվ շատ ազատ ու լայն հնարավորություններ ունեն նյութական ամեն կարգի նշանակություն ունեցող բառերի հետ կապակցության մեջ մտնելու: Այդ շարահյուսական հատկանիշը, որ գիտակցվում է նաև որպես այդ կարգի բառերի շարահյուսական-գործառական ընդհանուր իմաստ, բնութագրում է դրանք նաև որպես առանձին բառախումբ կամ շատերի համար՝ խոսքի մաս:

Իմաստային իրենց այս նկարագրով ոչ միայն կապերը տարբերվում են շաղկապներից, այլև տարբեր կապեր՝ մեկը մյուսից: Անհիմն չեն ռուսերենի ակադեմիական քերականության մեջ արտաքուստ հակասական թվացող այն երկու տարբեր բնութագրումները, որոնք տրված են նախդիրներին: Նախապես նախդիրը սահմանելով որպես ինքնուրույն բառային նշանակություն չունեցող ապասարկու բառեր՝ այդ քերականության հեղինակներն ավելացնում են. «Սակայն նախդիրները ամբողջությամբ զրկված չեն բառային իմաստից, թեև տարբեր նախդիրներում նրա աստիճանը

տարբեր է»[72]: Ինչպես տեսնում ենք, խոսքը վերաբերում է նախդիրներում բառային ինքնուրույն իմաստների գոյությանը, և այդ ինքնուրույնությանն էլ որոշվում է նախդրի՝ շարակարգից դուրս, առանձին վերցրած այդ իմաստը արտահայտելու կարողությամբ: Եթե այդ իմաստը շարահյուսական-գործառական իմաստ է, ապա նրա ինքնուրույն արտահայտումը բառային մակարդակում խիստ կասկածելի, եթե ոչ անհնար երևույթ է: Կան տարբեր լեզուների ոչ քիչ կապակցական նշանակության բառեր, այդ թվում երբեմն մեկ հնչյունից կազմված ու նույնիսկ բառ չկազմող «բառեր», որոնք, առանձին վերցված, որևէ ինքնուրույն իմաստ իրոք որ չեն արտահայտում: Հասկանալի է, որ այսպիսի կապակցական բառերի բոլոր կարգի իմաստները արտահայտվում են շարակարգում: Սա բոլորովին էլ չի խանգարում այն բանին, որ տվյալ լեզվով խոսողը ունենա այդ բառերի գիտակցումը և անհրաժեշտ պահին դրանցով կապակցություններ ստեղծի՝ ըստ սրանց համապատասխան քերականական նշանակությունների: Բայց կան և շատ կապակցական բառեր, որոնք առանձին վերցրած էլ լսողին գիտակցել են տալիս այն հարաբերական նշանակությունը, որ կապվում է շարակարգում այդ բառի հետ: Առաջին տիպի կլինեն՝ ռուսերենի к, в, с, о, у և այլ նախդիրները. հայերենի ի, ց, առ, ընդ նախդիրները, և, ու, որ, թե, իսկ և այլ շաղկապները: Երկրորդ տիպի կլինեն՝ ռուսերենի над, под, около, за և այլ նախդիրները, потому что, когда, чтобы և այլ շաղկապները, հայերենի առանց, համաձայն, դեպի, մինչև, դեմ, համար, մասին, մեջ, վրա և այլ կապերը, եթե, որովհետև, որպեսզի, հետևաբար, չնայած որ, այլև, բայց և այլ շաղկապները:

Այս կարգի բառերի իմաստների խիստ վերացական բնույթը, ինչպես նաև տարբեր բառերում իմաստի արտահայտման այս ակներև տարբերությունները դժվարացնում են սրանց իմաստային միասնական բնութագրումը: Սակայն մի բան պարզ է. այդ կարգի նույնիսկ անհամեմատ ինքնուրույն ու անկախ երևացող բառերում սրանց թե՛ բառային, թե՛ ընդհանուր քերականական նշանակության կոնկրետացումը տեղի է ունենում միայն շարակարգում. որպիսի հանգամանքը իրավունք է տալիս հետազոտողին այս կարգի բոլոր բառերին բնորոշ համարել իմաստի արտահայտման ոչ անվանական շարահյուսական եղանակը, որը նշանակում է, թե սրանց

[72] Грамматика русского языка, Изд. АН СССР, т. I, 1952, էջ 653:

իմաստային բնութագիրը բառային մակարդակից դուրս է։ Այս նկատառումով չի կարող ուշադրության չառնվել նաև այն հանգամանքը, որ կապակցական բառերը, որպես կանոն, առաջացած են լինում նյութական նշանակության բառերից, և որքան այդ անցումը դեռ նոր է ու գիտակցվող, այնքան կապակցական բառի մեջ առկա են ու գիտակցելի նախորդ բառային կարգի իմաստային տարրերը։ Այսպես, օրինակ, «ժամանակակից հայերենի ետադրությունները գրեթե առանց բացառության գոյականական քարացած կամ դեռևս գիտակցվող հոլովաձևեր են, բայական հիմքեր և բայաձևեր, խընդրառու ածականներ»[73], ուստի և նայած այն բանին, թե հիշատակված նյութական խոսքի մասերի անցումը քերականականի կամ նրանց քերականացումը ինչ չափով է կատարված, ըստ այդմ էլ այդ ետադրություններում դեռևս պահպանվում են այդ խոսքի մասերի իմաստային առանձնահատկությունները կամ սրանց անորոշ գիտակցումը։ Երբեմն էլ նույնիսկ դժվար է որոշել, թե այդպիսի քերականացում և իմաստազրկն անցում տվյալ բառույթի հետ արդեն կատարվա՞ծ է, թե ոչ, այսինքն՝ դեռևս գործ ունենք ամենաընդհանուր տարածական, ժամանակային և այլ նշանակության գոյականի կամ մակբայի հետ, որ իր իմաստային այդ վերացականության շնորհիվ կատարում է կապակցական քերականական գործառական դեր, թե՞ արդեն ունենք մի նոր բառույթ, որ զրկված է նյութական նույնիսկ այդ վերացական առարկայական նշանակությունից և կատարում է սոսկ քերականական-գործառական սպասարկու դեր։ Քանի որ իմաստային այդ անցումը պայմանավորված է լեզվի զարգացման բոն ընթացքով, ապա այդ ընթացքի տարբեր հատվածներում նյութական նշանակությունից քերականական-կապակցական նշանակության անցնող բառի իմաստային կառուցվածքի նկարագիրը տարբեր կլինի։ Անցումը առաջինից երկրորդին կարող է և լրիվ չավարտվել, այդ դեպքում նյութական նշանակության բառը ձեռք է բերում ավելի վերացական նշանակություն և ունենում է ավելի ազատ ու ընդհանուր գործածություն։ Լեզվի ընթացքի մեջ բառի իմաստային բոլոր կարգի փոփոխությունների ճշգրիտ նկարագրին հետևելը և այն հատակորեն ներկայացնելը այնքան էլ հեշտ չէ։ Ասենք, նա տիրացավ իրեն թողնված ժառանգության մասին նախադասության մեջ մաս գոյականի մասին հոլովաձևում նրա բառային և քերականական բոլոր իմաստ-

---

[73] Գ. Ռ. Քաֆուկյան, նշվ. աշխ., էջ 318։

ների գիտակցումը շատ հստակորեն տարբերվում է նա խոսում էր իրեն թողնված ժառանգության մասին նախադասության մեջ մասին կապի բառային ու քերականական հատկանիշներից: Պարզորեն երևում է, որ վերջինիս մեջ այլևս չկան մաս առարկայական նշանակությունը, նրա հոլովի, առման, թվի քերականական իմաստները, նախադասության անկախ անդամի գործառական արժեքը, այլ այս ամենին փոխարինում է առարկայական և քերականական այդ նշանակությունները կորցրած ու գործառական նոր արժեք ձեռք բերած բառ: Սակայն Նա մտավ դաշտի մեջ, Նա դուս եկավ դաշտի միջից նախադասություններում մեջ, միջից բառաձևերի գոյականական և կապային իմաստների ու հատկանիշների փոխհարաբերությունների հարցը այդպիսի որոշակիությամբ զանազանել չի լինում, ուստի և այդ ձևերին տրվում են տարբեր կարգի իմաստային ու գործառական մեկնաբանություններ (մեկը՝ կապ, մյուսը՝ գոյական, երկուսն էլ գոյական՝ վերցված կապակարն առումով, երկուսն էլ կապ՝ բայց հոլովված և այլն): Նույնօրինակ երեվույթներ ազնանագրելով ռուսերենի նախդիրների իմաստային վերլուծություններում՝ Հ. Ս. Մարգարյանը եզրակացնում է. «Այդպիսի երկրորդական անվանական նախդիրների մեկնաբանության հարցում այդպիսի երկվության պատճառը բառային և քերականականը, բառային իմաստի քերականացման զանազան աստիճանները չտարբերելու մեջ է»[74]: Մեզ մնում է ավելացնել, որ դրա ոչ պակաս կարևոր մյուս պատճառը ինքը լեզուն է. լեզուն, որի մեջ կարող են խիստ վերացական լինել ոչ միայն քերականական, այլև բառային իմաստները, և ապա՝ ոչ ինքնուրույն, կախյալ ձևույթներով կարող են արտահայտվել ոչ միայն քերականական, այլև նյութական նշանակությունները: Իրականության նույն առարկան նշանակող խնձորի ծառ և խնձորենի քերականական համանիշներից մեկում ծառ բույսի տեսակը, որպես հասկացություն, արտահայտված է ծառ բառով՝ անվանապես, իսկ մյուսում՝ -ենի բառակազմական ածանցով: Այդ երկու լեզվական միավորները, լինելով տրամաբանական նույն հասկացության արտացոլումը, լեզվական նշանակությունների իրենց հավաքածուով միանգամայն տարբեր բաներ են:

Կապերն, ինչպես ասվեց, ավելի մոտ են նյութական նշանակու-

---

[74] **Р. А. Маркарян,** Типы семантического противодействия в сфере формообразования и словообразования, Ереван, 1970, էջ 294:

թյան խոսքի մասերին, այդ պատճառով էլ նրանց արտահայտած քերականական-վերաբերական իմաստները անհամեմատ ինքնուրույն և ընկալելի են, քան շաղկապների և հոդերի իմաստները: Ինչպես ցույց են տալիս ուսումնասիրությունները, սրանք բոլորն էլ իրենց հերթին մի կողմից ըստ կազմության, իսկ մյուս կողմից ըստ գործառական միջավայրի՝ ձևակառուցման, քերականացման ու վերացականացման տարբեր աստիճանների վրա են գտնվում: Այդպիսի տարբերակում որոշակիորեն նկատված է նաև սպասարկու խոսքի մասերից յուրաքանչյուրի ներսում:

Քերականացմամբ և իմաստային վերացականությամբ ամենավերին աստիճանի վրա են գտնվում այն կապերն ու շաղկապները, որոնք բառային մակարդակում, շարակարգից դուրս որևէ իմաստի գիտակցում չեն առաջացնում (օրինակ, ռուսերենի в, к, о, с, у, а, и, *հայերենի* ու, և, *(գրաբարի)* ց, զ, ի, ստ *և այլ նախդիրներն ու շաղկապները): Սրանց նկատմամբ է, որ ստեղծվում է սպասարկու բառերի՝ ոչ լիարժեք բառեր, թերիմաստ կամ անիմաստ բառեր լինելու տեսակետը: Շարահյուսականից դուրս չունենալով իմաստային ծանրաբեռնվածություն և լինելով բացարձակ վերացական՝ այս խմբի բառերն ունեն գործառական ավելի լայն հնարավորություններ և կարող են կապակցել առարկայական և հատկանշային բազմազան նշանակության բառեր: Բացի այս, սրանց արտահայտած վերաբերական իմաստները բացարձակ քերականական են, իմաստներ, որոնք այդ «բառերը» առանում են հենց կապակցության մեջ: Հետևաբար, եթե նկատի ունենանք այս տիպի կապակցական բառերը, ապա ճիշտ չէր լինի դրանք թերիմաստ, ոչ լիարժեք բառեր ճանաչելու մոտեցումը համարել «երկու տարբեր հասկացություններ՝ բառի նշանակության և բառի ինքնուրույն գործածության հատկություններ, շփոթելու» հետևանք*[75]*:*

Քերականացման ու վերացականության հաջորդ աստիճանի վրա են գտնվում այն կապակցական բառերը, որոնք արդի ըմբռնմամբ անբաժանելի, միաձևույթ բառեր են և, իմաստային կապերը վաղուց կտրած լինելով նյութականն նշանակության բառերից կամ իրենց նախատիպերից, արտահայտում են վերացական զանազան իմաստներ, որպես առարկաների հարաբերությունների քերականական իմաստներ: Ի տարբերություն առաջինների, սրանք (օրինակ,

---

[75] *Տես նույն տեղում, էջ 297:*

տասերեն՝ над, под, за, до, без, перед, но, или, если. *Հայերեն՝* *համար, դեպի, բացի, առանց, եթե, ուստի, ուրեմն, թեկուզ, բայց, սակայն և այլն) առանձին վերցրած գիտակցվում են որպես բառեր և առաջացնում են շարակարգում առարկաների իրենցով արտահայտված հարաբերության ընդհանուր գաղափարի գիտակցում։ Չի սխալվում Վ. Վ. Վինոգրադովը, որ գրում է, թե. «նախդրի սեփական իմաստը չի կարող արտահայտվել նրա և որևէ անձի անվան կամ առարկայի հոլովաձևի կապակցությունից դուրս»[76]։ Եթե կապակցական բառերի մեջ նկատի ունենք այս երկու հիմնական տիպերը, որոնք ներկայացնում են նրա գլխավոր մասը կազմող պարզ արմատական բառերի խումբը, ապա նրանցում ընդգրկված կապակցական բառերի վերոհիշյալ իմաստային առանձնահատկությունների հաշվառմամբ վստահորեն կարող ենք համաձայնել Վ. Վինոգրադովի այն եզրակացությանը, թե «կապակցական բառերը «նյութական» չեն, այլ ձևական են։ Նրանցում «նյութական» բովանդակությունը և քերականական գործառությունը համընկնում են։ Նրանց բառային իմաստները նույնական են քերականականին։ Այդ բառերը ընկած են բառապաշարի և քերականության սահմանագլխին, դրա հետ մեկտեղ՝ բառի և ձևույթի սահմանագլխին։ Ահա թե ինչու Պոտեբնյան դրանք կոչում էր «ձևական բառեր», իսկ Ֆորտունատովը՝ «մասնիկայինն»[77]։*

Քերականական ձևականացմամբ ու վերացականությամբ երրորդ աստիճանի վրա են գտնվում երկու և ավելի ձևույթներից կազմված այն բարդ և ածանցավոր բառերը, որոնք թեև նյութական նշանակության բառերից լրիվ անցել են քերականական նշանակության բառերի շարքը, բայց իմաստային կառուցվածքում զգալ են տալիս բաղադրության միավորների կամ ձևույթների ածանցյալ իմաստները և գործառական տեսակետից անհամեմատ սահմանափակ ոլորտ և տարբերակված ու նեղ իմաստային ընդգրկում ունեն։ Հայերենի այս տիպի կապակցական բառերից են՝ ընդդեմ, ճանճին(ս), մինչև, նախքան, առընթեր, մասին, միջոցին, նկատմամբ, վերաբերմամբ, այլև, այնինչ, մինչդեռ, այսինքն, հետևաբար, որովհետև, որպեսզի, մինչև որ, թե որ, բանի որ *և այլն։*

Կապակցական բառերի ավելի լայն ցանկ նկատի ունենալու դեպքում վերոհիշյալ բուն կապակցական բառերին կավելանան այլ

---

[76] В. В. Виноградов, *նշվ. աշխ.*, էջ 531։

[77] *Նույն տեղում, էջ 31—32։*

խոսքի մասերից առաջացած և դեռևս իրենց նախատիպերից իմաստային կապերը չկտրած բազմաթիվ պարզ, բարդ և ածանցավոր բառեր (ռուսերեն՝ около, вокруг, возле, мимо, благодаря, по причине, по поводу, в силу того что, для того что, вследствие того что. *Հայերեն՝* առաջ, գծով, դեպքում, ընթացքում, ժամանակ, կողմ, համապատասխան, հետու, հետո, հետևանքով, միջոցով, մեջ, մոտ, ճերմև, նման, պատճառով, վերև, վրա, տեղ, ուղղությամբ, շնորհիվ, համաձայն, կարծես թե, ճայած թե, այնպես որ, չնայած որ, միևչդեռ, միայն թե և այլն)։ *Այս տիպի կապերն ու շաղկապները իրենց քերականացմամբ և բառային իմաստի վերացականությամբ, հասկանալի պատճառով, գտնվում են ավելի ցածր աստիճանի վրա։ Սրանց գործառության ոլորտը և կապակցելիության սահմանները, պայմանավորված իրենց նախկին դեռևս լրիվ չլջնջված բառային իմաստներով, ավելի նեղ են, իսկ շարահյուսական-գործառական իմաստները՝ առավել տարբերակված ու կոնկրետ։ Այդ երևույթի պատճառները շատ հանգամանորեն պարզաբանված են և՛ ռուսագիտության, և՛ հայագիտության մեջ։*

«Բառակապակցություններ կազմելու գործում մեծ դեր է կատարում բառային գործոնը. շատ հաճախ ոչ թե քերականական, այլ բառի հենց բառային իմաստն է խոչընդոտում այս կամ այն տեսակի բառակապակցություն կազմելուն։ Որքան լայն է բառակապակցության մեջ միավորվող բառերի շրջանակը, այնքան վերացարկված է այդպիսի կապակցության նշանակությունը։

Այսպիսով, կապակցության բնույթը որոշվում է երկու գործոններով՝ քերականական և բառային»[78]։ *Այս պատճառով էլ, ինչպես վերևում ասվեց, կապակցական գործառություն են ստանձնում նյութական նշանակության այն բառերը, որոնց իմաստային վերացականությունը նրանց հնարավորություն է ընձեռում քերականական-հարաբերական իմաստներով կամ շարահյուսական նորդերով հանդես գալու։ Ե. Տ. Զերկասովան, որ ռուսերենի նյութական նշանակության բառերի կապերի վերածվելու միջոցների և օրինաչափությունների վերաբերյալ գրել է մի ամբողջ դոկտորական դիսերտացիա, գրում է. «Ինչպես ցույց է տալիս ռուսերենի մակբայական դերբայների կազմությունը, այդ (անցման) պրոցեսն*

[78] **В. М. Филиппова,** Глагольно-именные словосочетания с временным значением в современном русском языке («Исследования по грамматике рус. лит. языка», М., 1955, էջ 160):

են մտնում միայն այն մակբայները, որոնց իմաստաբանության մեջ վերաբերականության տարր արդեն կա»[79]։ «Երկրորդական կապերի քերականական իմաստը բոլոր դեպքերում զարգանում է այնպիսի բառային իմաստից, որի մեջ վերաբերականության երանգը արդեն վաղուց տրված է»[80],— գրում է Ա. Մ. Ֆինկելը։

Քերականացված կապակցական բառերում սրանց նախատիպ բառաձևերի բառային իմաստները ամբողջությամբ չեն անհետանում, սրա համար էլ շատերի նման այս հարցով զբաղվող վերոհիշյալ ռուսագետները ևս արձանագրում են, որ «երկրորդական սպասարկու բառերի առաջացման ժամանակ առաջնային բառային իմաստները ամբողջությամբ չեն ջնջվում, տեղի չի ունենում լրիվ «իմաստազրկում» («десемантизация» և «նախարմատի» («эгимон») հետ իմաստային հարաբերությունը ամբողջությամբ չի վերանում»[81]։

Այդ իմաստային առնչությունների պահպանման շնորհիվ է, որ, ասենք, հայերենի պատճառով կապը չի կարող գործածվել շնորհիվ կապի գործառական միջավայրում, իսկ շնորհիվ–ն էլ՝ պատճառով–ի, թեև սրանք երկուսն էլ հիմունքի կամ պատճառի հարաբերություն են արտահայտում, և, որոշ իմաստով, համանիշներ են։

Որքան ուժեղ է կապակցական բառի առնչությունը նյութական նշանակության բառերի հետ, այնքան հարուստ է նրա բառային բովանդակությունը, որը սահմանափակում է նրա կապակցական գործառական սահմանները։ Որքան ազատ է կապակցական բառը այլ կարգի նշանակություններից և վերացական է, այնքան ծանրաբեռնված է գործառական-քերականական նշանակությամբ և ունի գործառական լայն ոլորտ, որով գնալով դառնում է ձևական և «ունայն» («пустыми»)[82]։ Ըստ այդմ էլ, ինչպես իրավացիորեն արձանագրում է վ. Վինոգրադովը, «... ռուսերենի նախդիրները իրենցից ներկայացնում են քերականական խիստ բազմազան տարատեսակներ։ Նրանց ծայրաբևեռներ են հանդիսանում, մի կողմից, մակբայական նախդիրները, և նախդրավոր բառակապակցությունները, իսկ մյուս կողմից՝ ձևական, ունայն նախդիրները՝ առանձ-

---

[79] Р. А. Маркарян, նշվ. աշխ., էջ 293:

[80] Նույն տեղում, էջ 292։

[81] Նույն տեղում, էջ 297։

[82] В. В. Виноградов, նշվ. աշխ., էջ 534:

ների նախամասնիկները և բայերի ետադրությունները»[83]։ «Սակայն ձևականության, վերացականության և բառային արժեքի աստիճանը տարբեր նախդիրների մոտ տարբեր է, թեև ընդհանրապես նախդիրների իմաստը ռուսերենում անհամեմատ կոնկրետ է, քան, օրինակ, ֆրանսերենում»[84]։

Ոչ միայն տարբեր լեզուներում, այլև միևնույն լեզվի տարբեր փուլերում կարող է կապակցական բառերի այս կառուցվածքա-իմաստային համակարգը փոխվել։ Օրինակ, հին հայերենի նախդիրները (առ, ընդ, ըստ, ի, զ, ց) ռուսերենի շատ նախդիրների պես առավել քերականական-ձևական և վերացական են, քան ժամանակակից հայերենի կապերը, որոնք մեծ մասով նյութական խոսքի մասերի հետ սերտ հարաբերություններ պահպանող ետադրություններ են։

Կապակցական բառերի քերականացման և իմաստային վերացականության աստիճանը անմիջականորեն պայմանավորվում է նաև այդ կապի խնդրի և այս երկուսի խնդրառու բայի իմաստային առանձնահատկություններով։ Սեղանի վրա, աշակերտի վրա, այդ խոսքի վրա նախդրավոր կապակցությունները կարող են լրացում դառնալ միայն վրա կապի իմաստը պայմանավորող բայի։ Կարելի է ասել՝ Գիրքը դրված է սեղանի վրա, բայց չի կարելի ասել՝ Գիրքը դրված է աշակերտի վրա։ Մինչդեռ կարելի է ասել՝ Պարտականությունները դրվեցին աշակերտի վրա, բայց չի կարելի ասել՝ Պարտականություններ դրվեցին սեղանի վրա։ Կարելի է ասել՝ Ներս մտավ այս խոսքի վրա, բայց չի կարելի ասել՝ Գիրքը դրված է կամ Պարտականություններ դրվեցին այդ խոսքի վրա։ Միանգամայն ակներև է, որ սեղանի վրա, աշակերտի վրա և խոսքի վրա կապակցություններում վրա կապը մի կողմից՝ սեղան, աշակերտ և խոսք կապի խնդիրների բառային իմաստների թելադրանքով, իսկ մյուս կողմից՝ սրանց կապակցվող դնել, պարտականություն դնել, ներս մտնել և նման բայերի իմաստների թելադրանքով աստիճանաբար անջատվում է իր նախատիպ տարածական ընդհանուր նշանակության վրա գոյականից և հաջորդ աստիճաններում դառնում է սոսկ ձևական-կապակցական բառ։ Բերված օրինակներում կարելի է խոսել վրա կապի ոչ միայն բազմիմաստության, այլև համանունության մասին, այնպես որ Ներս

---

[83] Նույն տեղում, էջ 533։

[84] Նույն տեղում, էջ 531։

մտավ այդ խոսքի վրա օրինակում վրա կապը կարող է համարվել սեղանի վրա կապակցության վրա կապից տարբեր և ինքնուրույն բան:

Սակայն, ինչպես նկատված է շատերի կողմից և երևում է մեր այդ օրինակներից, կապերի բառային իմաստի վերոհիշյալ կարգի փոփոխությունները պայմանավորվում են ոչ միայն անուն+կապ և անուն+կապ+բայ (տարբեր շարադասություններով վերցված) կաղապարների միավորների իմաստային հարաբերություններով, այլև այդ կաղապարների շարակարգը լրացնող այլ անդամներով: Դրա համար էլ Վ. Զ. Զլատկինը իրավացիորեն նկատում է, որ կապի բառային իմաստը ձևավորվում է շարակարգի ամբողջության մեջ: Մեր բերած օրինակներից աշակերտի վրա կատարության մեջ վրա կապի ավելի քերականացված ու վերացական գործածվածությունը սեղանի վրա կապակցության մեջ գործածվածության համեմատությամբ պայմանավորված է ոչ թե դրվեցին բայով, առանձին վերցված, այլ նրանով և այդ շարակարգի պարտականությունները անդամով: Պարտականություններ վերացական գոյականի ներկայությունն է, որ դնել բային դարձնում է վերացական, ոչ առարկայական (պարտականությունը առարկա չէ, որ դրվի), որով էլ ավելի քերականացված ու վերացական է դառնում վրա կապը աշակերտի վրա կապակցության մեջ: Այլ կլինի այդ նույն կապակցության մեջ վրա կապի բառային իմաստը, եթե դնել բային կապակցվի առարկայական կոնկրետ նշանակության գոյական. այսինքն, ասենք, գրվի կամ ասվի՝ քար դրեցին աշակերտի վրա: Այսպիսով, վերմակ գցեցին աշակերտի վրա և Պարտականություններ գցեցին աշակերտի վրա նախադասություններում վրա կապի իմաստային փոփոխությունները պայմանավորված են բայի՝ վերմակ և պարտականություններ խնդիր-լրացումների իմաստային տարբերություններով: Առանց բայական այսպիսի խնդրի միջամտության էլ վրա կապը խիստ քերականացված ու վերացական է դառնում, երբ կապը և նրա անուն խնդիրը գործածված են լինում այնպիսի բայի հետ, որի բառային իմաստը տարածականության, տեղի լրացականն գաղափար չի առաջացնում: Այսպես, օրինակ, ասենք՝ նրանք ծիծաղում են աշակերտի վրա: Ի դեպ, նախորդ օրինակներից մեկում վրա կապի կապական բառակապակցության ոչ բայական անդամների իմաստային ազդեցությամբ գցել բայի բովանդակության մեջ բացահայտվում է իմաստային նոր երանգ. վերմակ գցել աշակերտի վրա կապակցություններում գցել նշանակում

ֆ փոխելով ծածկել: Այս դիտողությունները մեզ կրկին բերում են այն եզրակացության, որ իրոք կապակցական բառերը այն տիպի բառեր են, որոնք նշանակության են ձեռք բերում ըստ գործառության. մինչդեռ նրանցական նշանակության բառերը գործառական արժեք են ստանում ըստ իրենց բառային նշանակության: Իհարկե, բառակապակցություններում նյութական նշանակության բառերի իմաստային կառուցվածքում ևս փոփոխություններ են կատարվում, շարակարգում բառը հաճախ ձեռք է բերում մի այլ շարահյուսական իմաստ. բայց այս իմաստը այդ բառի հիմնական իմաստին ստորադասված, երկրորդական իմաստ է: Կապակցական բառերից շատերը նույնպես, ինչպես տեսանք, շարակարգից դուրս զգալ են տալիս իրենց բառային իմաստները, սակայն այդ իմաստները շատ անորոշ են և, ունենալով շարահյուսական-քերականական բնույթ, կոնկրետանում, ճշգրտվում են բուն կապակցության մեջ միայն, որից դուրս այդպիսի իմաստների գոյությունը լեզվական արժեք էլ չունի: Ուրեմն չի կարելի չհամաձայնել Ա. Ե. Չերկասովայի այն հետևության, թե «...Նախդիրների տարբերությունը լիիմաստ բառերից ոչ թե նրանցում բառային իմաստների բացակայության է, այլ նրանց ներքին յուրահատկության՝ մի կողմից, քերականական իմաստների հետ որակապես այլ հարաբերությունների մեջ գտնվելը՝ մյուս կողմից: Լիիմաստ բառերի իմաստային կառուցվածքի կենտրոնը բառային իմաստն է. մինչդեռ նախդիրները բնութագրվում են քերականական իմաստների բացարձակ գերակշռությամբ (Վ. Վ. Վինոգրադով)»[85]: Հեղինակի՝ կապերի իմաստային կառուցվածքի մասին այս եզրակացությունը պարզաբանող մյուս դատողությունները նույնպես որոշակի են ու հստակ: «Նախդիրների բառային իմաստի ներքին յուրահատկությունը որոշվում է իր իսկ այդ քերականական կարգի էությամբ: Հանդիսանալով ոչ թե իրականության իրենց իսկ առարկաների ու երևույթների հասկացությունների, այլ միայն այն հարաբերությունների արտացոլումը, որոնք գոյություն ունեն նրանց միջև՝ նախդիրները կոչված են բառերի միջև հարաբերություններ արտահայտելու: Դրա համար էլ բնական է, որ նրանց ոչ միայն քերականական, այլև բառային իմաստներն իրենց մեջ պարունակում են շարահյուսական (քերականական իմաստում) իմաստային և սրանց նրբերանգա-

---

[85] Е. Т. Черкасова, Закономерности и способы перехода полнозначных слов в предлоги (автореферат докт. дисс.), М., 1966, էջ 6:

յին (բառային իմաստներում) հարաբերությունների մատնանշում»[86]։

Կապերի բառային իմաստը հիմնականում բնութագրելով որպես քերականական իմաստ և ընդգծելով այդ իմաստի և բառերի թեքմամբ ու կապակցմամբ արտահայտված քերականական իմաստների տարբերությունն ու բարդ փոխհարաբերությունը՝ այս գիտնականը ռուսերենի նախդիրների իմաստային կառուցվածքում որոնում է բառային և խոսքիմաստային (կատեգորիալ) իմաստներ։ Ի տարբերություն Ա. Ի. Սմիռնիցկու և այլոց, Չերկասովան Վ. Վ. Վինոգրադովի հետևողությամբ նախդիրների բառային իմաստը հիմնականում բնութագրում է որպես բառային-քերականական իմաստ։ Բայց նկատի ունենալով նրանց իմաստային վերը մատնանշված տարբեր աստիճանի վերացությունները՝ Չերկասովան նախդիրների բառային իմաստները համարում է «որակապես ոչ միատեսակ. նրանցից մի քանիսը կրում են ավելի ընդհանուր բնույթ, մյուսները՝ ավելի մասնակի։ Ընդհանուր են այն բառային իմաստները (տարածական, ժամանակային, պատճառական և այլն), որոնք առանձնահատուկ են գործառիմաստաբանական համասեռ խումբ կազմող բոլոր նախդիրներին։ Իսկ նախդիրների մասնակի («անհատական») բառային իմաստները այն իմաստներն են, որոնցով տվյալ նախդիրը տարբերվում է նույն գործառիմաստաբանական խմբի մյուս նախդիրներից, այսինքն՝ դրանք այդ նույն բառային իմաստների զանազան երանգները տարբերող իմաստներն են (համմտ. օրինակ, «книга лежит в столе» и «книга лежит на столе» տիպի կառույցները, որտեղ տարածական հարաբերությունների բնույթի տարբերությունը կարող է որոշվել միայն իրենց փակ նախդիրներով, ավելի ճիշտ՝ նրանց մասնակի բառային իմաստներով)»[87]։ Ճիշտ է վարվում, անշուշտ, Չերկասովան, որ ուրիշների կողմից նախդիրների բառային իմաստից դուրս, ավելի բարձր վերացության տարածական, ժամանակային, պատճառական և այլ հարաբերությունների քերականական համարված իմաստները մտցնում է նրանց բառային իմաստների մեջ։ Սակայն վերը վկայակոչված նրա բացատրությունից, ի վերջո, ստացվում է այն տպավորությունը, թե նախդրի բուն բառային իմաստը, որով նա տարբերվում է համասեռ խմբի մյուս նախդիրներից, նրա մասնակի («անհա-

---

[86] Նույն տեղում, էջ 5—6։

[87] Նույն տեղում, էջ 5։

տական») իմաստն է: Մեր կարծիքով, նախդրի բառային իմաստը բնութագրվում է այդ երկու՝ ընդհանուր և մասնակի իմաստներով հավասարապես: Վրա կապի բառային իմաստին նույնքան բնորոշ է այն, որ նա տարբերվում է մասին, վերաբերյալ, պատճառով, նման, պես և այլն գործառական այլասեռ կապերի իմաստներից, որքան որ բնորոշ է այն, որ նա տարբերվում է մեջ, տակ, մոտ, դիմաց, ներքո և այլ համասեռ տարածական կապերի իմաստներից: Այս տարբեր աստիճանի իմաստային վերացությունները, որոնք նկատվում են կապերի իմաստային կառուցվածքում, կարող են առանձնացվել և մասամբ էլ հակադրվել գիտական վերլուծության մեջ, իբրև երևույթի ճանաչման միջոց: Բայց լեզվի իրական կառուցվածքում նրանք հանդես են գալիս միասնաբար և կազմում են ամբողջություն: Կապերի իմաստային հակադրությունները անմիջական, միաստիճան և ոչ թե միջնորդավորված բազմաստիճան հակադրություններ են:

Հետևաբար կապի բառային իմաստ ասելով պիտի հասկանալ շարակարգում կապի և կապական բառակապակցության մյուս անդամների միջոցով արտահայտված՝ առարկաների, գործողությունների, վիճակների հարաբերությունների բերականական այն իմաստը, որն առանձնահատուկ է տվյալ կապին և իմաստաբանորեն տարբերակում է նրան մյուս բոլոր կապերից:

Ե. Տ. Չերկասովայի վերլուծությունները, վերջապես, օգնում են մեզ կողմնորոշվելու նաև կապակցական բառերի խոսքիմաստային (կատեգորիալ) իմաստների ճանաչման հարցում: Բառի քերականական նշանակությունը համարելով նրա այն նշանակությունը, որը յուրահատուկ է ձևաբանական տվյալ դասի բոլոր բառերին և արտահայտվում է ոչ թե հենց իրենով՝ բառով, այլ լրացուցիչ միջոցներով (բառերի թեքումով, բառերի կապակցությամբ և այլն)՝ հեղինակը քերականական ավելի բարձր ընդհանրացման ու վերացության իմաստներ է համարում բառերի խոսքիմաստային իմաստները: «Քերականական իմաստներին են վերաբերում նաև, այսպես կոչված, խոսքիմաստային իմաստները (категориальные значения), *այսինքն առավել ընդհանրացված բառային իմաստները (առարկայականության, որակի, գործողության և այլն), որոնք յուրահատուկ են բառերի ամբողջական ձևաբանական դասերի, և որոնք նույնպես ունեն իրենց արտաքին, ձևական նշանները. խոսքի մասերը, ինչպես հայտնի է, իրարից տարբերվում են իրենց բնորոշ, կարգային (կատեգորիալ) իմաստների քերականա-*

կան ձևավորմամբ»[88]։ Գալով կապերի խոսքիմաստային իմաստի քննությանը՝ Չերկասովան շարունակում է. «Նախդիրների կարգին դասվող բառերի խոսքիմաստային իմաստը հարաբերության իմաստ է (վերաբերության իմաստ)։ Նախդիրները իրենցից ներկայացնում են գոյական անվան շարահյուսական կախվածությունը նախադասության մյուս անդամներից կամ ամբողջ նախադասությունից արտահայտելու քերականական միջոցներից մեկը։ Այդ իմաստի արտահայտման միջոցը նրանց շարահյուսական կապերի բնույթն է. նախդիրները, ի տարբերություն լիիմաստ բառերի, կարող են գործառություն ունենալ միայն երկկողմյան շարահյուսական կապերում (քաղաքի ← մեջ → բնակվել — жить ← в → городе»)։ Նախդիրների խոսքիմաստային իմաստը հավասարապես մնում է ցանկացած շարակարգում (այդ իմաստը նախդրով կապակցվող բառերի իմաստներից կախված չէ)»[89]։

Կապերն իբրև առանձին խոսքի մաս ներկայացնող այս և վերը հիշատակված բոլոր կարծիքներում կապի խնդիր առնելու հատկանիշը խոսքիմաստային իմաստ է համարվում։ Մեր կարծիքով, այստեղ անպատասխան է մնում այն հարցը, թե կապերի գործառական այս դերը ինչու չի գնահատվում որպես շարահյուսական—քերականական մի մասնակի իմաստի դրսևորում, այլ ճանաչվում է որպես խոսքիմաստային իմաստի արտահայտություն։ Հավանաբար դարձյալ այն պատճառով, որ այստեղ այդ շարահյուսական հարաբերությունն ունի բառային արտահայտություն։ Սակայն այս պնդումն էլ հիմնավոր չէ, քանի որ, ինչպես քանիցս ցույց տրվեց, կապերը զանազան հարաբերությունների իմաստները արտահայտում են կապային բառակապակցության մյուս անդամների օգնությամբ միայն և ոչ առանձին։ Հետևաբար, եթե այստեղ կա էլ հարաբերությունների արտահայտման խոսքիմաստային իմաստ, ապա այն ունի ոչ թե բառային, այլ շարահյուսական արտահայտություն և կապ բառին վերագրվել չի կարող։ Կապերի այդպիսի խոսքիմաստային իմաստը իր ընդհանրական բնույթով չի տարբերվում բառափոխական և բառակազմական ձևույթների՝ վերջավորությունների ու ածանցների, իմաստային այն ընդհանրություններից, որոնց հիման վրա նրանք կազմում են բառակազմական ու

---

[88] Նույն տեղում։

[89] Նույն տեղում։

բառաթեքական իմաստային խմբեր։ Կապերն ինքնին չունենալով խոսքիմաստային (կատեգորիալ) իմաստ, որպես սպասարկու բառեր, շարահյուսական միջոց են խոսքիմաստային այլևայլ իմաստների արտահայտման։ Տարբեր կապեր, իրենց գոյական խնդիրը դնելով տարբեր բնույթի կախման հարաբերությունների մեջ, հնարավոր են դարձնում նրա գործածությունը տարբեր նշանակություններով, որով կապը դառնում է շարահյուսական միջոց գոյականի՝ ածականի և մակբայի կատեգորիալ իմաստներով գործածվելու համար (ճոր պես, ճոր նման, ճոր պատճառով, ճոր կարգադրությամբ, ճոր հետ, ճոր դիմաց, ճոր մոտ և այլն, և այլն)։ Նյութական նշանակության բառերի՝ քերականական կապակցական բառերի փոխանցվելու ընթացքից երևում է, որ այդ անցումը կատարվում է լիիմաստ բառի բառային ու խոսքիմաստային իմաստների աստիճանական վերացման և տվյալ բառի քերականացման եղանակով։ Այս ընթացքում բառը մի նոր խոսքիմաստային իմաստ այլևս ձեռք չի բերում, և այդ է պատճառը, որ նախադրությունները ու հետադրությունները, որպես քերականական միջոցներ, կորցնելով իրենց բառային անկախությունը, ի վերջո, դառնում են սովորական բառակազմական ձևույթներ (առ այսօր, առ մեկը հունվարի, ի ծնե, ի գիտություն, ըստ օրենքի, ըստ արժանվույն, ինչ պես, բայց նաև՝ առայժմ, ըստինքյան, ըստմասնյա, իհարկե, հօգուտ, ինչպեսներին, մեզպեսներին և այլն)։

Կապերի և բառակազմական ձևույթների ոչ միայն իմաստային-գործառական ընդհանրություններն են, որ հնարավոր են դարձնում այս տիպի բառակազմությունները, այլև նրանց արտահայտչական-ձևական ընդհանրությունները։ Ինչպես տեսանք, շատ կապեր երկրորդական ձևույթների պես մաշված են, նույնիսկ հավասարված մեկ կամ երկու հնչույթի և առանձին վերցրած իրենց բառային-քերականական իմաստը գիտակցել չեն տալիս. չունեն լիիմաստ բառերի անկախ ու ազատ գործածությունը, և շարակարգում նրանց դիրքը անհամեմատ կայուն է. մեծ մասամբ շեշտակիր չեն։

* * *

Շաղկապներն, անհամեմատ հեռացած լինելով նյութական նշանակության բառերից, ինչպես ասվեց, ավելի վերացական ու քերականացված բառեր են։ Նրանցում նյութական նշանակությունները ավելի աղոտ ու անորոշ են, քան կապերում։ Հայերենի նույ-

նիսկ բարդ շաղկապները բաղադրված են լինում շաղկապներից, կապերից և դերանուններից, որոնք արդեն զրկված են նյութական կոնկրետ նշանակություններից, մինչդեռ բազմաձևույթ կամ ձգձգյալ ու նախդրավոր կապերում, նաև արմատական շատ կապերում նյութական իմաստների գիտակցումը որոշակի է։ Շարահյուսական-գործառական տեսակետից էլ կապերն ավելի որոշակի հարաբերությունների արտահայտիչներ են, քան շաղկապները։ Շաղկապները, որպես կապակցական բառեր, քիչ հնարավորություն են տալիս տրամաբանական քերականության ներկայացուցիչներին՝ այդ խոսքի մասը իմացաբանական սկզբունքով սահմանելու։ Շաղկապները չունեն խոսքից դուրս գտնվող որևէ հասկացական օբյեկտ, վինի այն թեկուզ հարաբերության հասկացությունն։ Դրա համար էլ շաղկապները սահմանվում են որպես բառեր, «...որոնք արտահայտում են տրամաբանական-քերականական հարաբերություններ և կապեր ոչ միայն շարույթի կամ նախադասության կառուցվածքի մեջ մտնող համազոր բառերի ու բառակապակցությունների միջև, այլև բարդ շարահյուսական միավորումների կառուցվածքում եղող բառերի խմբերի միջև, շարույթների միջև, նախադասությունների միջև, դարձվածքների միջև»[90]։

Գալով շաղկապների արտահայտած տրամաբանական-քերականական հարաբերությունների բովանդակությանը՝ լեզվաբանները գրում են. «Շաղկապները մատնանշում են կապակցվող տարրերի միջև որոշակի իմաստային հարաբերություններ և ծառայում են նրանց միջև շարահյուսական կապերի արտահայտման համար»[91]։

Կապերի նման շաղկապներն էլ իմաստաբանորեն միատարր չեն։ Որքանով էլ թույլ, բայց նրանցում էլ շարունակվում են պահպանվել նախատիպ նյութական խոսքի մասերի իմաստային առանձնահատկությունները։ Այդ առավելապես ակնառու է բարդ ու վերլուծական կառուցվածքի շաղկապներում։ «Ռուսաց գրական լեզվի կառուցվածքի վերլուծական միտումների զարգացումը,— գրում է Վ. Վինոգրադովը,— անդրադարձել է նաև շաղկապների արտաքին տեսքի վրա։ Շաղկապի դերով շատ հաճախ են հանդես գալիս դարձվածաբանական ամբողջական միավորներ կամ իդիոմներ։ Շաղկապների քերականական գործառությունները ավելի ու

---

[90] **В. В. Виноградов**, նշվ. աշխ., էջ 552։

[91] Грамматика современного русского литературного языка, АН СССР М., 1970, էջ 312։

ավելի են կապվում նրանց բառային («ատուգաբանական») բնույթի հետ»[92]։ «Բարդ շաղկապների մեծ մասը դեռևս չի հասել այն աստիճանի վերացական նշանակության, որը շատ որոշակի նրանց առանձնացներ նյութական նշանակության խոսքի մասերի համակարգից[93]։ Այս եզրակացությունն արվում է նկատի ունենալով այնպիսի բարդ շաղկապներ, ինչպիսիք են подобно тому как, с тех пор как, тем не менее, несмотря на то что, вследствие того что, в силу того что և այլն։ Ռուսերենի համար նաև նկատված է, որ «համադասական շաղկապները առաջացել են վաղուց, և նրանց այլ խոսքի մասերից առաջացած լինելու հետքերը չեն պահպանվել»[94]։

Այս կարգի ծագումնաբանական ու իմաստային բազմազանություններ են արձանագրված նաև հայերենի շաղկապներին նվիրված ուսումնասիրություններում։ Իմաստային կառուցվածքով ու քերականացման աստիճանով, անշուշտ տարբեր են և, ու, որ, թե, կամ, իսկ և այլ շաղկապները այնուամենայնիվ, այնուհանդերձ, որպեսզի, կարծես թե, մանավանդ որ, չնայած որ, ոչ միայն... այլ նաև և այլ բարդ շաղկապներից։ Հետևաբար, կապերի նման շաղկապներն էլ իմաստային տեսակետից թեև պակաս չափով, բայց պահպանում են այլ խոսքի մասերից անցած իմաստային տարրեր, սակայն շաղկապի բառային իմաստի համար էլ բնորոշ են մնում ոչ թե այդ իմաստի օտար տարրերը, այլ այն, ինչ բնորոշ է նրան, իբրև կապակցական բառի։ Շաղկապները բառերի ու նախադասությունների կապակցության այնքան ընդհանուր հարաբերություններ են արտահայտում, որ այդպիսիք հաճախ կարող են արտահայտվել նաև միայն հնչերանգով։ Ինչպես կապի, այնպես էլ շաղկապի իմաստն արտահայտվում կամ կոնկրետանում է շարակարգում, որի համար էլ Վ. Վինոգրադովը գտնում է, թե «...շաղկապներն, ըստ էության, դուրս են ձևաբանության սահմաններից», և ապա հաստատում է Ա. Ա. Շախմատովի միտքը այն մասին, թե «Շաղկապը իմաստ ունի ոչ թե ինքնին, այլ որպես այս կամ այն կապակցության ցուցիչ, որպես այդպիսի կապակցության բառային արտահայտիչ»[95]։ Հետևաբար, շաղկապի բառային

---

[92] **В. В. Виноградов**, նշվ. աշխ., էջ 553։

[93] Նույն տեղում, էջ 565։

[94] **А. Н. Гвоздев**, Современный русский литературный язык, М., 1961, էջ 421։

[95] **В. В. Виноградов**, նշվ. աշխ., էջ 553։

իմաստը քերականական-շարահյուսական է։ Այդ այն իմաստն է, որ նկատի ունենալով գրում են. «Սովորաբար սպասարկու բառերն ունեն միանշանական, անբաժան իմաստ»[96], այսինքն նրանց քառային իմաստն այլ բան չէ, քան նախադասության անդամների կամ նախադասությունների միջև նրանց արտահայտած զանազան հարաբերությունների (միավորման, ներհակական, տրոհական, մեկնական, պայմանի, պատճառի, նպատակի և այլն) քերականական իմաստ։

Շաղկապների այս կապակցական-գործառական արժեքը ընդունելով որպես բոլոր շաղկապներին առանձնահատուկ ընդհանուր իմաստ, շաղկապն առանձին խոսքի մաս համարող լեզվաբանները, ինչպես հայտնի է, այդ իմաստը համարում են որպես շաղկապի խոսքիմասային (կատեգորիալ) իմաստ։ Եթե համաձայնենք այս տեսակետին և, իմաստ ու խոսքիմասային իմաստ տերմինները այս դեպքում գործածելով ամենաընդհանրող ու անգործնական բովանդակությամբ, շաղկապի մեջ նույնպես տեսնենք խոսքիմասային իմաստ, ապա այդ իմաստի տարբերակիչ առանձնահատկությունը կապերի խոսքիմասային իմաստից դժվար թե կարողանանք զատել ու հիմնավորել։ Ըստ էության անպատասխան են թողնում այդ տեսակետը պաշտպանող լեզվաբաններն այն հարցը, թե ինչո՞ւ կապերի ու շաղկապների կապակցական-շարահյուսական իմաստները ոչ թե մեկ, այլ երկու խոսքիմասային իմաստներ են, կամ էլ ինչո՞ւ չի կարելի ստորադասական և համադասական շաղկապներն ընդունել իբրև տարբեր խոսքի մասեր։ Խոսքիմասային իմաստ հասկացության անորոշության պայմաններում այդ հարցերին քիչ թե շատ համոզիչ պատասխան տալ չի կարելի։

Կապակցական բառերի ընդունված ներքին դասակարգումները, անշուշտ, գիտական դասակարգումներ են և պայմանավորված են լեզվի իրական կառուցվածքով։ Հայերենի կապակցական բառերը եռանդամ հակադրությամբ 1. կապեր, 2. համադասական շաղկապներ, 3. ստորադասական շաղկապներ տարատեսակների բաժանելու՝ Մ. Աբեղյանի մոտեցումը միանգամայն հիմնավոր է ու ընդունելի։ Կապակցական բառերը առանձին խոսքի մաս համարելու դեպքում, դրանք երկու խոսքի մասերի վրա բաժանելու մոտեցումը ոչնչով էլ ավելի հիմնավորված ու գիտական չէ,

---

[96] А. Н. Гвоздев, նշվ. աշխ., էջ 414։

քան դրանք 3 կամ 4 խոսքի մասերի վրա բաժանելու առաջարկը։ Սակայն իրականում կապակցական բառերում չի կարելի ցույց տալ ո՛չ երկու, և ո՛չ էլ երեք կամ չորս խոսքիմասային իմաստներ։ Կապակցական բառերի ընդհանուր գործառական արժեքները, իրենց շարահյուսական հատկություններով, բառային, թե բառային-քերականական կամ սոսկ քերականական ընդհանուր իմաստները, ապա նաև խոսքիմանային իմաստներ հայտարարելը լեզվի խոսքիմասային համակարգի ո՛չ տեսությանը և ո՛չ գործնական նկարագրությանը չի օգնում։ Կապակցական բառերում խոսքիմասային ընդհանուր իմաստ որոնող գիտնականները, առաջնորդվելով իրենց այդ նպատակադրմամբ և շեշտը դնելով կապ կամ շաղկապ համարվող բառերի, այսպես կոչված, «խոսքիմասային-ընդհանրական» հատկանիշների վրա, հաճախ անտեսում են կապակցական բառերի իմաստային-գործառական ներքին տարբերությունները։ Այդ նպատակադրումից հետու և անկաշկանդ ուսումնասիրությունները ինչպես տեսական, այնպես էլ գործնական տեսակետից ավելի ցանկալի և օգտակար արդյունքների են հանում։ Այսպես, օրինակ, Գ. Ջահուկյանի վերջին տարիների հայերենի կառուցվածքին նվիրված տեսական ուսումնասիրությունները ցույց են տալիս, որ բառերի խոսքիմասային դասակարգումը թնավ էլ ինն կամ տասը բառային դասերով չի ավարտվում։ Ընդ որում՝ կապակցական բառերի ներսում ոչ միայն կարելի է երկուսի (կապ—շաղկապ) փոխարեն տեսնել եռանդամ (կապ—ստորադասական շաղկապ—համադասական շաղկապ) բառակարգային հակադրություն, այլև շաղկապական առանձին բառակարգ կարելի է համարել ոմանց կողմից համադասական շաղկապ, իսկ ոմանց կողմից եղանակավորող բառ համարվող այսպիսով, այսուամենայնիվ, այսուհանդերձ, ետևաբար, արդ և նրման բառերը։ Գ. Ջահուկյանն իր «Խոսքիմասերի կաղապարային դասակարգման» մեջ կապակցական բառերի, կամ իր տերմինով ասած՝ կապահարաբերական խոսքի մասերի ներսում տեսնում է ոչ թե երկու (կապ, շաղկապ), այլ հինգ խոսքի մաս՝ կապ, ստորակապ, համակապ, առկապ, բառ–մասնիկ[97]։

Առկապ անվամբ ստորադասական և համադասական շաղկապներից Ջահուկյանի անջատած բառերն ու «բառային միա-

---

97 Գ. Բ. Ջահուկյան, *Խոսքի մասերի կաղապարային դասակարգումը (ՀՍՍՀ ԳԱ «Լրաբեր հասարակական գիտությունների», № 1, 1976, էջ 26)։*

վորները» (այսպիսով, այսուհանդերձ, այնուհանդերձ, այնուամենայնիվ, արդ, ետևաբար, մի խոսքով, ընդհակում է, կարճ ասած և այլն), *անկախ այն բանից, թե նախկինում ինչ խոսքի մասի մեջ են մտցվել՝ մակբայի, շաղկապի, թե՞ եղանակավորող բառերի, գործառական արժեքով ինչ-որ չափով տարբերվել են սրանցից։ Նկատի ունենալով նաև այս կարգի բառերը՝ Գ. Գարեգինյանը գրում է. «Շաղկապների ձևաբանական կազմի և նրանց ու այլ խոսքի մասերի մեր համառոտ քննությունը ավարտելու համար ավելորդ չենք համարում թվարկել այն բառերը, որոնք, չունենալով շաղկապի խոսքիմասային արժեք, կարող են համադասական և ստորադասական հարաբերություններ արտահայտող բառերի դերում լինել։ Կարող են նաև ավարտված նախադասությունների, պարբերությունների և խոսքի հատվածների միջև տրամաբանական կապեր ստեղծել»*[98]։

Գ. Ջահուկյանը, որ ազատ է շաղկապներն անպայման համադասական և ստորադասական տեսակների վրա բաշխելու ավանդական մոտեցման կաշկանդող սովորույթից, այս տիպի շաղկապական բառերի խոսքիմասային պատկանելության մասին տալիս է հետևյալ բացատրությունը. «Այսպիսով-ի տիպի բառային միավորները, որպես միջանկյալ բառեր, իրոք հիմք կա միավորելու եղանակային բառերի հետ, բայց բուն արժեքով սրանք կապակցական բնույթ ունեն (կոնտեքստի հետ կապված արտահայտում են տրամաբանական հետևություն, ամփոփում և այլն)։ Պատահական չէ, որ դրանք հաճախ դրվում են շաղկապական բառերի մեջ, մանավանդ որ կարող են հանդիպել գերադաս (գլխավոր) նախադասությունների մեջ, որպես ստորադասական շաղկապների հարաբերակից բառեր՝ թեև ...այնուամենայնիվ, թեպետ... այսուհանդերձ և այլն։ Այսպիսով, սրանց համար բնորոշ է անկախ կամ գլխավոր նախադասության սկզբում հանդիպելը և նախորդ նախադասության (նախադասությունների) այն կապակցելը, մինչդեռ բուն եղանակականները խոսողի վերաբերմունքի արտահայտիչներ են և դիրքով ավելի անկայուն։ Կարևոր է և այն, որ* այսպիսով-ի *տիպի բառերը և բուն եղանակականները կարող են հանդիպել նաև կողք-կողքի, ընդ որում, նման դեպքերում առաջիններն սովորաբար նախորդում են, հազ-*

---

[98] Գ. Լ. Գարեգինյան, *Շաղկապները ժամանակակից հայերենում, 1963, էջ 54—55։*

վադեպ նաև հաջորդում (այսպիսով, դժբախտաբար... ցավոք սրտի, այսպիսով...)»[99]։

Նման դասակարգման դեպքում առկապ կհամարվեն տարբեր հայագետների կողմից խոսքիմասային միավոր համարվող հետևյալ բառերը նույնպես՝ ուրեմն, ինչպեսև, ինչևէ, ինչևիցե, օրինակ, դիցուք, միով բանիվ, ընդսմին, այն է, ասենք, ընդհակառակը, նախ, առաջ, նախ և առաջ, առաջին, երկրորդ, երրորդ, վերջապես, ի վերջո, վերջիվերջո և այլն։

Ի դեպ, այս եզրակացությունը հաստատվում է իր իսկ Ջահուկյանի հետևյալ դատողությամբ. «Կարգ և թվարկում (խոսքի հաջորդական մասեր) ցույց տվող նախ, երկրորդ, երրորդ և այլ բառերը գործածվում են եղանակային բոլոր ձևերի հետ՝ առանց սահմանափակման։ Սա նշանակում է, որ այդ բառերն ավելի շուտ շաղկապական արժեքի են և պետք է հանել բուն եղանականիշ, վերաբերողական բառերի թվից»[100]։

Սակայն, մեր կարծիքով, բառակապակցությունից դուրս վերցված թվականների «կարգ ու թվարկումը» ցույց տալու գործածությունը նրանց չի զրկում իրենց նյութական (թվային) իմաստից, ուստի և թվականների (առաջին, երկրորդ, երրորդ) այդ դերում գործածվելը նշան չէ նրանց անցման, ինչպես եղանակավորող բառերի, այնպես էլ շաղկապների։

Ինչ վերաբերում է բառ-մասնիկներին, *ապա սրանք «հանդիպում են տարբեր «լիիմաստ» խոսքի մասերի հետ և կատարում են քերականական մասնիկների (վերջավորությունների) դեր... հարում են հատկապես գոյականներին, բայերին և ածականներին»*[101] *և հանդես են գալիս որպես այդ խոսքի մասերի «համադրական ձևերի շարքերի (հարացույցի) վերլուծական անդամներ». դրանք են՝ ածականի հետ գործածվող* ավելի-ն, *գոյականի* մի *անորոշ հոդը, բայի վրա դրվող* մի՛, պիտի, մի թող, ճապա, երանի *բառ-մասնիկները,* եմ, լինել, տալ *օժանդակ բայերը։*

Այսպիսով, ուրեմն, ավանդաբար կապ և շաղկապ համարված խոսքի մասերի մեջ խմբավորված բառերը նույնպիսի հաջողությամբ և դասակարգման առավել հետևողականությամբ կարելի

---

[99] Գ. Բ. Ջահուկյան, *նշվ. աշխ., էջ 24։*

[100] Գ. Բ. Ջահուկյան, *Ժամանակակից հայերենի տեսության հիմունքները, էջ 385։*

[101] *Նույն տեղում, էջ 23։*

է բաշխել չորս խոսքի մասերի վրա՝ կապ, ստորակապ (ստորադասական շաղկապ), համակապ (համադասական շաղկապ), առկապ (մինչև այժմ շաղկապների կամ եղանակավորող բառերի վրա բաշխվող և կապակցական, բայց միաժամանակ նաև եղանակական գործառական նշանակություն ունեցող անցողիկ բառախումբ)։

Ի վերջո, կապակցական կամ քերականական նշանակության խոսքի մասերին կարելի է միավորել քերականական վերլուծական ձևերի բառ-մասնիկ բաղադրիչները՝ չփորձելով բնավ սրանց խոսքիմասային առանձին իմաստի գոյությունը հիմնավորել։ Մեր ըմբռնմամբ, սակայն, ոչ միայն բառ-մասնիկները, այլև կապերն ու շաղկապները զուրկ են խոսքիմասային (կատեգորիալ) իմաստներից։ Նրանք, որպես այլ որակի սպասարկու բառախմբեր, ծառայում են նյութական նշանակության բառերում արտահայտված խոսքիմասային իմաստների կոնկրետացման, սրանց գանազան հարաբերությունների ձևավորման համար։ Դրանով կապակցական բառերը՝ կապերն ու շաղկապները, չեն դադարում առանձին բառեր ու բառախմբեր լինելուց, չեն զրկվում բառային (բառային-քերականական) մասնակի՝ միայն տվյալ բառին յուրահատուկ, և ընդհանուր (գործառական-շարահյուսական)՝ տվյալ բառախմբի բոլոր միավորներին առանձնահատուկ, իմաստներից։

Բոլոր բառերը խոսքի մասերի բաժանող և բոլոր բառերում խոսքիմասային իմաստ տեսնող լեզվաբանները, բացի կապակցական բառերին խոսքիմասային աղոտ ու անորոշ ինչ-որ իմաստ վերագրելուց, նրանց վերագրված մյուս հատկանիշներից ոչ մեկին չեն առարկում։ Ահա այդպիսի մի ամբողջական կարծիք։ ՍՍՀՄ ԳԱ ռուսաց լեզվի ինստիտուտի հրատարակած «Ժամանակակից ռուս գրական լեզվի քերականության» հեղինակները, կապակցական բառերը անջատելով նյութական նշանակության բառերից և դրանք սահմանելով որպես սպասարկու խոսքի մասեր, «Սպասարկու բառեր» վերնագրի տակ գրում են. «Սպասարկու բառերը ինքնուրույն բառերին և՛ որպես բառույթներ, և՛ որպես քերականական միավորներ հակադիր բառեր են»։

Սպասարկու բառերը որպես բառույթներ զրկված են այն անվանական իմաստներից, որոնք բնութագրում են ինքնուրույն բառերը. նրանք չեն անվանում առարկաներ, հատկանիշներ, առանձնահատկություններ, գործողություններ. նրանց բառային իմաստները այն հարաբերություններից վերացարկված իմաստ-

ներն են, որոնց մեջ մտնում են ինքնուրույն բառերով անվանված առարկաները, հատկանիշները և այլն, և որոնց արտահայտումը մասնակցում են սպասարկու բառերը: Այսպիսով, սպասարկու բառերը, որպես խոսքի մասեր, չունեն իմաստային այն ընդհանրությունը, որը տարբերակում է ինքնուրույն նշանակության խոսքի մասերը, և որի հիմքում ընկած է տվյալ դասի բոլոր բառերի բառային իմաստներից վերացարկված իմաստ: Սպասարկու բառերի ընդհանրությունը գործառական, քերականական ընդհանրություն է, նման այն ընդհանրության, որը միավորում է ձևույթները (ածանցները, թեքույթները): Սպասարկու բառերը, որպես քերականական միավորներ, հակադրված են ինքնուրույն բառերին, որպես ա) քերականական կարգեր չունեցողներ և բ) միայն շարահյուսական սպասարկու գործառույթ կատարողներ. սպասարկու բառերը օգտագործվում են բառերի, նախադասությունների կամ նախադասության տարրերի կապակցման համար, մասնակցում են շարահյուսական հոլովման ձևավորմանը, ինչպես նաև ծառայում են եղանակավորման զանազան սուբյեկտիվ երանգներ արտահայտելու համար:

Սպասարկու բառերն իրենցից չեն ներկայացնում ինքնուրույն ձևաբանական և շարահյուսական միավորներ և չեն կազմում ինքնուրույն բառերի նման ձևաբանական և շարահյուսական կարգեր»[102]:

Ավելի հիմնավոր բնութագիր, ըստ որի կարելի լիներ հիմնավորել, որ կապակցական սպասարկու բառերի ընդհանուր գործառական-քերականական իմաստը չի կարող նյութական նշանակության բառերի իմաստային-գործառական հատկանիշներին հավասար խոսքիմաստային իմաստ համարվել և դիտվել որպես նրան հավասարազոր հակադրություն ու նույն համակարգի միավոր,— դժվար է գտնել. թեև այդ բնութագիրը չի խանգարել նրա հեղինակներին՝ ավանդությանը հետևելով, կապակցական բառերը համարելու խոսքի մասեր, թող լինեն սպասարկու:

Կապակցական բառերն ըստ իրենց իմաստային և գործառական լեզվական վերոհիշյալ նկարագրի կարելի է բնութագրել հետևյալ հատկանիշներով:

1. Կապակցական բառերը չունեն անվանական արժեք, ներ-

---

[102] Грамматика современного русского литературного языка, АН СССР, Инст. русского языка, 1970, էջ 311:

րանք չեն անվանում ո՛չ օբյեկտիվ իրականության առարկաներ, հատկանիշներ, գործողություններ, երևույթներ և ո՛չ էլ սրանց հարաբերությունների հասկացություններ: Չլինելով անվանված հասկացություններ՝ նրանք չեն պատասխանում տրամաբանական հարցման և նյութական նշանակության բառերից անջատ, ինքնուրույն գործածություն չեն ունենում: Նրանք ոչ թե անկախ, այլ կախյալ նշանակության բառեր են:

2. Կապակցական բառերի իմաստները անվանական բառերով արտահայտված վերոհիշյալ իմաստների հարաբերություններից վերացարկված իմաստներ են: Այդ հարաբերությունների իմաստները կապակցական բառերն արտահայտում են ոչ ինքնուրույնաբար, այլ շարակարգի կապակցվող անդամների օգնությամբ միայն. սրա համար է, որ ասվում է, թե անվանական բառերը նախադասության մեջ պաշտոն են ստանում ըստ իրենց բառային իմաստի, իսկ կապակցական բառերն իմաստ են ստանում ըստ իրենց գործածության:

3. Կապակցական բառերի իմաստն, ուրեմն, շարահյուսական, քերականական բառային իմաստ է, որը պարունակում է տարբեր աստիճանի իմաստային ընդհանրացումներ, որոնք նրա իմաստային կառուցվածքի համալիրը կազմող բաղադրիչ տարրեր են:

4. Կապակցական բառերը ինչպես կազմությամբ, այնպես էլ իմաստային կառուցվածքով միօրինակ չեն: Նրանց մի մասը հնչյունական-ձևական կազմով շատ մաշված լինելու պատճառով շարակարգից դուրս բառային արժեք չունի, հարաբերական որևէ իմաստի գիտակցում չի առաջացնում. մյուսները, պահպանելով նյութական նշանակության իրենց նախատիպ բառերի հետ առընչակցությունները, իրենց իմաստային կառուցվածքում դեռևս պահպանում են սրանց իմաստային երանգներն ու բառային արժեքը:

5. Քերականացման ու վերացարկվածության տեսակետից առանձին աստիճանի վրա են գտնվում բառ-մասնիկները, հոդերը, ապա շաղկապները, առանձին՝ կապերը, որոնց առնչությունները նյութական նշանակության բառերի հետ ավելի մերձավոր են: Կապակցական բառերի վերացարկվածության ու ձևականացման աստիճանները տարբեր են նաև տարբեր լեզուներում:

6. Կապակցական բառերը, որպես առանձին բառախումբ, չունեն անվանական նյութական նշանակության բառերի նման

բառային իմաստներից վերացարկված և նրանց կապակցելիության նշանակությունը պայմանավորող այն իմաստային ընդհանրությունը, որը նրանց բնութագրում է որպես առանձին խոսքի մաս։ Կապակցական բառերի «ընդհանրությունը գործառական քերականական ընդհանրություն է, նման այն ընդհանրությանը, որը միավորում է ձևույթները (ածանցները, թեքույթները)»։ Հետևաբար, զուրկ լինելով խոսքիմաստային իմաստից՝ կապակցական բառերը ոչ թե կապակցվում են, այլ կապակցում։

7. Զուգենալով բառային նյութական և խոսքիմաստային ընդհանրական իմաստներ՝ կապակցական բառերը չունեն նաև այդ իմաստների զանազան հարաբերություններից գոյացող լեզվական քերականական մասնակի իմաստներ կամ կարգեր, նրանք կատարում են շարահյուսական սպասարկու գործառություն՝ մասնակցելով նյութական նշանակության բառերի զանազան հարաբերությունների, նրանց հոլովական, ինչպես նաև խոսքիմաստային իմաստների ձևավորմանը։

8. Կապակցական բառերը չունեն սովորական բառակազմություն. նրանք առաջանում են նյութական նշանակության բառերից՝ քերականացման և նրանց բառային իմաստների աստիճանական վերացման եղանակով։ Ուստի և այդ բառերը, ի տարբերություն իրենց նախատիպ անկախ նշանակության բառերի, ոչ թե արտադրվող, այլ վերարտադրվող բառեր են, այսինքն նրանք պակ ցանկ ոնեցող բառախմբեր են։

9. Նյութական նշանակության բառերի անցումը կապակցական-քերականական նշանակության բառերի կատարվում է պատմականորեն աստիճանաբար. այդ անցումը կարող է չավարտվել և հանգեցնել նյութական նշանակության բառի ընդհանուր գործածության։ Բառերի քերականացման այս ընթացքը հանգեցնում է կա՛մ քերականական կապակցական բառերի առաջացման, կա՛մ դերանուններին։ Առաջին դեպքում նյութական նշանակության բառերը կորցնում են իրենց անվանական արժեքն ու բառային և խոսքիմաստային իմաստները, ձեռք են բերում բառային-քերականական նոր իմաստ և գործառական նոր արժեք. երկրորդ դեպքում՝ կորցնում են անվանական արժեքը, բառային-նյութական իմաստը, պահպանում են խոսքիմաստային ընդհանուր և մասնակի քերականական իմաստները, մտնում են գործառական ավելի ազատ հարաբերությունների մեջ։

Խոսքիմաստային իմաստ *հասկացությունը հավասարապես բո-*

ղոր բառերին վերագրելու և կապերի, շաղկապների, ձայնարկությունների, այլև նմանաձայնությունների մեջ խոսքիմասային իմաստ տեսնելու դեպքում իմաստային այս «կարգը» ինչպես ասվեց, դառնում է գիտական բնութագրման որոշակի ու միասնական հիմունք չունեցող, գործնական արժեքից զուրկ «կարգ»։ Այդ դեպքում մենք խոսքիմասային իմաստը ստիպված պիտի ինենք բաժանել առնվազն երեք տարատեսակի՝ ա) նյութական-հասկացական իմաստ (հիմնական խոսքի մասեր), բ) հարաբերական-քերականական ոչ հասկացական իմաստ (սպասարկու խոսքի մասեր), գ) զգացական-վերաբերմունքային ոչ հասկացական իմաստ (ձայնարկություններ)։

Եթե նույնիսկ սրանք դիտենք որպես մանրահամակարգեր, ապա սրանց, իմաստային ու արտահայտչական տարբեր բնույթի ու լեզվական տարբեր մակարդակների իրողություններ լինելու պատճառով, չենք կարող միավորել հակադրություններն մի համակարգում և ստանալ իմաստային մի կարգ, լինի խոսքիմասային իմաստ, թե որևէ այլ անվամբ կոչված։

Այս ճշմարտությունն է թելադրել լեզվաբաններին ձայնարկությունները դուրս թողնել խոսքի մասերի համակարգից, իսկ կապակցական բառերի համար էլ դրանք բուն խոսքի մասերից տարբերելու ուղիներ որոնել։ Վ. Վ. Վինոգրադովի կարծիքով այդ հարցի լուծման լավագույն ուղին կապակցական բառերը խոսքի մասնիկներ անվամբ բուն խոսքի մասերից առանձնացնելու եղանակն է, որը և ռուսագիտության նվաճումներից է։ «Նոր ժամանակներում խոսքի մասնիկների վերաբերյալ հարցի քերականական մշակումը,— գրում է նա,— Ֆորտունատովի դպրոցի (եթե նրան միացնենք Ա. Մ. Պեշկովսկուն) անուրանալի ծառայությունն է կազմում։ Բայց շատ նորություններ մտցրեց մասնիկի հատկացության մեջ Ա. Ա. Շախմատովը։

Լայն առումով մասնիկներ կամ («մասնիկային բառեր») («частичные слова») տերմինին համապատասխանում է «կապակցական բառեր» հասկացությունը («բառ-շարույթներ») («слова синтаксемы»), եթե օգտագործենք Ի. Ի. Մեշչանինովի տերմինը»[103]։

Այս նորույթը, որ, անշուշտ, նույնպես հայագիտության նվաճումներից է, հայագիտության մեջ մտցնում է Մանուկ

---

[103] **В. В. Виноградов**, նշվ. աշխ., էջ 520:

Աբեղյանը։ Հարցի էությունը չի փոխում խոսքի մասնիկ տերմինի դեմ ներկայացվող առարկությունը։ Այդ տեսակետից, ինչպես հայտնի է, առավել առարկելի է մնում «խոսքի մաս» տերմինը։ Տերմինների պայմանականության մտքին երբեմն ստիպված պետք է լինենք համաձայնել։ Կարևորը լեզվական երևույթի էության ճիշտ մեկնաբանումն է։ Ճիշտ տերմինավորումը ուսումնասիրության մեջ միայն սրան հաջորդող փուլ կարող է լինել։ Տերմինավորման տեսակետից «խոսքի մասնիկներ» անվանումը «սպասարկու խոսքի մասեր» անվանումով փոխարինելը վերջին ժամանակներում այս հարցի լուծման մի նոր միջոց է դարձել։ Սակայն այս մոտեցմամբ հարցը հետևողական լուծում չի ստանում, քանի որ սպասարկու խոսքի մասերը, իրենց բոլոր տարբերություններով հանդերձ, դիտվում են որպես խոսքմասային իմաստներով միավորված բառեր. մի բան, որ, ինչպես տեսանք, այնքան էլ համոզիչ ու հիմնավոր չէ։ Այդ մոտեցմամբ, ի վերջո, անհերքելի է մնում այն կարծիքը, ըստ որի «Սպասարկու բառերը թվացող խոսքի մասեր են. նրանք օժտված են ինքնուրույն խոսքի մասի հատկանիշներով ոչ ավելի, քան վերջավորություններն ու ներքին թեքումը։ Ըստ գործառության դրանք տվյալական առկայացուցիչներ (актуализаторы) և փոխանցիչներ (транспозиторы) են, իսկ այն հանգամանքը, որ նրանցից մի քանիսը նշանակությամբ բավական կոնկրետ են (вокруг, из-за, потому что և այլն), գործի էությունը չի փոխում, քանի որ այդ իմաստը բառային է միայն առերևույթ, իսկ իրականում այն քերականական է, զուտ գործառական, որը ծառայում է իմաստությունների (семантемы) նշանակություններ կամ նրանց կապակցությունների ձևափոխություն»[104]։

Գ) ԵՂԱՆԱԿԱՎՈՐՈՂ ԲԱՌԵՐՆ ՈՒ ԵՐԱՆԳԱԿԱՆ ԲԱՌ-ՄԱՍՆԻԿՆԵՐԸ ՈՐՊԵՍ ԱՌԱՆՁԻՆ ԻՄԱՍՏԱԳՈՐԾԱՌԱԿԱՆ ԲԱՌԱՏԵՍԱԿՆԵՐ

Եղանակավորման կարգի ճնշությունը ռուսագիտության մեջ բավական հարուստ պատմություն ունի։

Եղանակավորումը լեզվական քերականական իմաստաբանական կարգ է, որն ունի իմաստային բազմերանգություն և արտահայտ-

---

[104] Э. Р. Атаян, նշվ. աշխ., էջ 28։

ման բազմաձևության։ Թե՛ բովանդակության, թե՛ արտահայտության պլաններով եղանակավորման կարգը սերտ կերպով կապված է տարբեր կարգերի և բառախմբերի ու լեզվական միավորների հետ և, հաճախ մոտենալով ու խաչաձևվելով վերջիններիս, քերականագիտության մեջ երկար ժամանակ մնացել է չուսումնասիրված։

Ռուսագիտության մեջ եղանակավորման կարգի ճանաչման ու տարբերակման ընթացքն սկսվում է 19-րդ դ. սկզբներից։ Սակայն եղանակավորող բառերի, որպես առանձին բառակարգի, գիտակցումը և աստիճանական առանձնացումը այլ կարգի բառերից, մասնավորապես մակբայներից սկսվում է Ա. Ա. Պոտեբնյայի «Из записок по русской грамматике» աշխատության երկրորդ հատորում կատարված վերլուծություններից և աստիճանաբար զարգանում է Ա. Ա. Շախմատովի, լ. Վ. Շչերբայի, Դ. Ն. Օվսյանիկո-Կուլիկովսկու, Ա. Մ. Պեշկովսկու աշխատություններում։ Եղանակավորումը որպես առանձին քերականական կարգ վերջնականապես առանձնացնում և համակողմանիորեն պարզաբանում է Վ. Վ. Վինոգրադովը։ Իր «Ռուսաց լեզու» (1938—1947 թթ.) աշխատության մեջ, ռուսերենի խոսքի մասերի համակարգում եղանակավորող բառերի ու մասնիկների հանգամանալից քննությունից բացի, 1950 թ. Վ. Վինոգրադովը այդ հարցի վերաբերյալ տպագրում է «Ռուսերենի եղանակավորման կարգի և եղանակավորող բառերի մասին» վերնագրով առանձին ուսումնասիրություն։

Ռուսական գիտական գրականության մեջ եղանակավորման կարգը եղել է ու մնում է նաև տրամաբանության ուսումնասիրության առարկա[105]։ Ոմանց կարծիքով «...եղանակավորման լեզվական կարգի վերլուծությունը կարող է կատարվել եղանակավորման տրամաբանական կարգի և մտածողության այն ձևի, այսինքն՝ այն դատողության հետ, որին նա յուրահատուկ է»[106]։

Անցած երկու-երեք տասնամյակների ընթացքում ռուսագիտությունը համարյա ճշգրտել է եղանակավորող մասնիկների ցանկը՝ վերջիններս անջատելով եղանակավորող բառերից։ Մասնիկները, այդ թվում նաև եղանականիշները տեղ են գտել ոչ

---

[105] *Տե՛ս* Логическая семантика и модальная логика, М., 1967

[106] **В. З. Панфилов,** Категория модальности и ее роль в конституировании структуры предложения и суждения (ВЯ, № 4, 1977, էջ 37)։

միայն բուհական, այլև դպրոցական դասագրքերում և դարձել են ուսուցման առարկա:

Բայց քանի որ «եղանակական-լրացական մասնիկները միջանկյալ բառերից տարբերելը ծայր աստիճան դժվար է», «Ձևաբանական սահմանները մասնիկ-ձևույթների և բառերի միջև ընդհանրապես պայմանական և անկայուն են», «Եղանակական մասնիկների և եղանակավորող բառերի սահմանները խիստ անորոշ և փոփոխական են», «Իր բառակազմով, ստուգաբանորեն իրեն վերաբերող կամ դեպի ինքը ձգվող բառային տարրերով եղանակավորող բառերի կարգը խիստ խայտաբղետ է», իսկ «Սրանց վերաբերող կամ գործածությամբ մոտեցող բառադասերի մեծ մասի իմաստաբանական-շարահյուսական գործառույթները չեն ուսումնասիրված», ինչպես նաև չեն ուսումնասիրված ռուսերենի բարդ նախադասության տարբեր տիպերի հետ կապված եղանակավորման հարցերը, սրանց առնչվող շաղկապների եղանակական նշանակությունների ու երանգների լայն շրջանակները,— այս ամենի հետևանքով էլ «Այսպես կոչված խոսքի մասերի համակարգում այդ քերականական դասի տեղը դեռևս որոշակիորեն չի սահմանված: Պարզ չեն նրա բառաքերականական սահմանները»[107]:

Վ. Վ. Վինոգրադովի արած այս հետևությունից թեև անցել է մոտ երեք տասնամյակ, բայց եղանակավորման կարգի քննության մեջ ռուսագիտությունը դեռևս միասնական կարծիքի չի եկել: Այսօր էլ այդ հարցի շուրջ բանավիճող գիտնականները դժգոհությամբ արձանագրում են, թե «Հավանաբար չկա մի այլ կարգ, որի լեզվական բնույթի և առանձին նշանակությունների կազմի մասին արտահայտված լինեն այնքան տարբեր և հակասական տեսակետներ, որքան եղանակավորման կարգի մասին»[108]:

Ջնայած եղանակավորող բառերի, որպես առանձին բառակարգի կամ «խոսքի մասի», գոյության մասին արտահայտված կարծիքների հակասականության, ապացուցված պետք է համարել այլ խոսքի մասերի հետ չնույնացվող և գործառությամբ ու շարահյուսական իմաստով մի առանձին բառադաս կազմող եղանակավորող բառերի գոյությունը, թեև չպետք է անտեսել նաև

---

[107] **В. В. Виноградов**, О категории модальности и модальных словах в русском языке («Труды Инст. рус. языка», II, М.—Л., 1950, էջ 62—77):

[108] **В. З. Панфилов**, նշվ. աշխ., էջ 37:

ոչ քիչ թիվ կազմող ռուսագետների այն մոտեցումը, ըստ որի բառային մակարդակում առանձնացվում են «մասնիկներ» խոսքի մասին պատկանող եղանակական մասնիկներ, իսկ եղանակավորող մյուս բոլոր միավորները՝ բառ, բառակապակցություն, դարձվածք, նախադասություն, քննվում են շարահյուսության մեջ, որպես նախադասության «միջանկյալ անդամի» դերում հանդես եկող զանազան խոսքի մասերի կամ այլ լեզվական միավորների շարահյուսական-գործառական արտահայտություններ։ Այս մոտեցմամբ ՀՍՍՀ ԳԱ ռուսաց լեզվի ինստիտուտի 1970 թ. հրատարակած քերականության մեջ ռուսերենի եղանակավորող բառերը բնութագրված են որպես ածականի, գոյականի, բայի շարահյուսական ածանցյալներ. այսպես՝ «Շարահյուսական ածանցյալներ են՝ ...2) ածականի, գոյականի և բայի սահմաններում, այսպես կոչված, եղանակավորող բառերը буквально, вероятно, главное і այլն, правда, словом, в частности և այլն, признаюсь, видиш (ли), знаешь (ли), извините, кажется, разумеется, говорят признаться և այլն)[109]։

Հայերենի եղանակավորող բառերի ու երանգական բառ-մասնիկների ֆննությունը ճիմնականում կատարվել է ռուսագիտության ճետևողությամբ։

Ինչպես ռուսական, այնպես էլ հայ քերականագիտության մեջ եղանակավորող բառերն ու բառ-մասնիկները մինչև 19-րդ դ. վերջերը հիմնականում համարվում էին մակբայ։ Այժմ այս հարցի քննությամբ զբաղվող հայագետների ուսումնասիրություններում եղանակավորող բառ համարվածների մի զգալի մասը նախկինում դիտվում էին որպես տարբեր խոսքի մասերի՝ նախադասության միջանկյալ անդամի դերում շարահյուսական յուրահատուկ գործառությամբ հանդես եկող միավորներ, իսկ մնացած հիմնական մասը նույնացվում էր մակբայներին։ 19-րդ դ. վերջերին և 20-րդ դ. սկզբներին մակբայական ծագման եղանակականներն առանձնացվում են մակբայ խոսքի մասի ներսում, որպես «եղանակական» կամ «եղանակավորիչ» մակբայներ[110]։

Հայ քերականագիտության մեջ, ինչպես բազմիցս արձանա-

---

[109] Грамматика современного русского литературного языка, М., 1970, էջ 304։

[110] Ա. Մ. Գարագաշյան, Դպրություն կամ նոր քերականություն հայերեն, Կ. Պոլիս, 1880, էջ 115—122։ Հովճ. Գազանճյան, Նոր քերականություն արդի հայերեն լեզվի, Ա և Բ մաս, Պոլիս, 1910, էջ 85 (տե՛ս Վ. Ավագյան եղանակավորող բառերը և նրանց ուսուցումը, Երևան, 1975, էջ 3)։

գրվել է, առաջինը Մ. Աբեղյանն է, որ եղանակավորող բառերն ու քառ-մասնիկները, այո՛, ո՛չ պատասխանական բառերը, ոչ, չը բացասական մասնիկները առանձնացնում է մակբայներից ու լեզվական այլ կարգի միավորներից և, սրանք հակադրելով նյութական նշանակության խոսքի մասերին ու ձայնարկություններին, կապակցական բառերի հետ համարում է հայերենի ձևական (իմա՛ քերականական) նշանակության բառերի կամ խոսքի մասնիկների համակարգը ներկայացնող բառատեսակներ: «Այս վերջին երեք տեսակի բառերը շատ քերականներ դնում են մակբայների մեջ,—գրում է Մ. Աբեղյանը,— բայց դրանք իսկապես ձևական նշանակություն ունեցող բառեր են, ինչպես և կապակցական բառերը, որոնց բոլորի նշանակությունն ու ֆունկցիան բացատրվում է բառերի ու խոսքերի կապակցության-շարադրության մեջ»[111]: Մ. Աբեղյանի առանձնացրած եղանակականներն են՝ «... Եղանակական բառեր կամ մասնիկներ՝ թերևս, գուցե, հո, ապաքեն, արդյոք, գոնե, գեթ, իբր թե, միթե, դրեթե, կարծես, կարծյոք, անշուշտ, հազիվ թե, հավանորեն և այլն, որոնք որևէ կերպ եղանակավորում են խոսքը՝ դրվելով հաճախ բայերի կամ ուրիշ բառերի վրա»[112]:

Այս խնդրով Մ. Աբեղյանից հետո հայագետներն սկսեցին զբաղվել նրա վերոհիշյալ դիտողություններից երկու-երեք տասնամյակ անց միայն, երբ ռուսագիտության մեջ հարցը հիմնականում լուծվում էր: Աբեղյանից հետո ընկած ժամանակաշրջանում հայերենի եղանականիշ բառերի և բառ-մասնիկների քննությունը կատարվել է մի շարք տեսական բնույթի աշխատություններում, ինչպես նաև հայերենի առանձին գործնական քերականություններում[113]:

---

111 Մ. Աբեղյան, Հայոց լեզվի տեսություն, Երևան, 1931, էջ 132:

112 Նույն տեղում:

113 Ստորև դնում ենք գրականության ամբողջական ցանկը՝ ըստ ժամանակագրական հաջորդականության.

1 Մ. Աբեղյան, Հայոց լեզվի տեսություն, Երևան, 1931, էջ 132:

2 Ռ. Իշխանյան, Մակբայները հայերենում (Երևանի պետական համալսարանի «Ուսանողական գիտական աշխատությունների ժողովածու» 1948, № 4, էջ 16—30):

3 Ե. Ա. Աբրահամյան, Հայոց լեզվի ուսուցման հիմունքները միջնակարգ դպրոցում, 1951, է 13:

4 Ա. Ա. Աբրահամյան, Գրաբարի ձեռնարկ, Երևան, 1952, էջ 316:

Հիմնականում առանձնացված և վերլուծված լինելով ռուսական քերականագիտության մշակած տեսական սկզբունքների և եղանակների կիրառմամբ՝ հայերենի եղանակավորման լեզվական կարգը իր գիտական պարզաբանման մեջ չէր կարող զերծ լինել այն հակասականություններից ու կարծիքների երկվություններից, որպիսին կա ռուսական քերականագիտության մեջ։ Եթե ավելին, եթե այս հարցին անդրադարձող ռուսագետները հաճախ ընդգծում են եղանակավորող բառերի և բառ-մասնիկների սահմանների անորոշությունն ու սրանց տարբերակման դժվարությունները, ընդունելով և զանազանելով այդպիսի տարբեր բառակարգեր կամ խոսքի մասեր, ապա հայագիտության մեջ մինչև վերջերս միայն առանձին հարցադրումներ են արվել բառ-մասնիկների, որպես առանձին բառակարգի, գոյության մասին։ Եթե ռուսագետները ընդգծում են նախադասության միջանկյալ կամ, նոր տերմինավորմամբ, «մեկուսացած անդամի» և եղանակավորող բառերի սահմանների անորոշությունն ու սրանք բոլոր դեպքերում նույնացնելու վտանգը, ապա հայագիտության մեջ այդ նույնա-

---

[5] **А. Н. Кюркчян**, Наречие в армянском языке, Автореф. канд. дисс, Ереван, 1956, էջ 9—10:

[6] **Ա. Ն. Քյուրքյան**, *Եղանակավորող բառերը հայերենում (Երևանի Ֆ. Աբովյանի անվան հայկական պետական մանկավարժական ինստիտուտի «Գիտական աշխատությունների ժողովածու», № 8, Երևան, 1961, էջ 339—361)։*

[7] **Ս. Գ. Աբրահամյան**, *Ժամանակակից հայերենի եղանակավորող բառերը (Հայկ. ՍՍՀ ԳԱ «Տեղեկագիր», 1958, № 4)։*

[8] **Ս. Գ. Աբրահամյան**, *Չթեքվող խոսքի մասերը և նրանց բառական ու քերականական հատկանիշների փոխհարաբերությունը ժամանակակից հայերենում, Երևան, 1965, էջ 498—534։*

[9] **Ս. Գ. Աբրահամյան, Բ. Յ. Վերդյան, Վ. Ա. Քոսյան**, *Հայերեն լեզվի դասագիրք, Երևան, 1965, էջ 248—252։*

[10] **Է. Բ. Աղայան**, *Ժամանակակից հայերենի հոլովումը և խոնարհումը, Երևան, 1967, էջ 127—139։*

[11] **Ա. Ղարիբյան**, *Հայոց լեզվի դասագիրք, ռուսական դպրոցների 5—7 դասարանների համար, Երևան, 1971։*

[12] **Գ. Բ. Ջահուկյան**, *Ժամանակակից հայերենի տեսության հիմունքները, Երևան, 1974, էջ 125—149, 355—387։*

[13] **Գ. Բ. Ջահուկյան**, *Խոսքի մասերի կաղապարային դասակարգումը (ՀՍՍՀ ԳԱ «Լրաբեր հասարակական գիտությունների», № 1, 1976, էջ 16—30)։*

[14] **Վ. Գ. Ավագյան**, *Եղանակավորող բառերը և նրանց ուսուցումը, Երևան, 1975։*

[15] **Մ. Ե. Ասատրյան**, *Ժամանակակից հայոց լեզվի ձևաբանության հարցեր, Գ, Երևան, 1977, էջ 311—348։*

ցումը գիտական տեսք և հիմնավորում է ստացել։ Իհարկե, եթե այս ամենը հայերենի լեզվական առանձնահատկությունների և ռուսերենից ունեցած տարբերությունների արդյունքը լինեին, ապա այդ խնդրով զբաղվող հայագետների հասցեին քննադատական խոսք ուղղելը ավելորդ և անարդար կլիներ, բայց իրականում այդ այդպես չէ։

Ա. Աբրահամյանի, Ա. Քյուրքչյանի, ապա, առավել հիմնավոր, Ս. Աբրահամյանի աշխատություններում ցույց է տրված եղանակավորող բառերի, որպես առանձին, մյուս բոլոր խոսքի մասերից տարբեր բառադասի, գոյությունը հայերենում։

Ինչպես ռուսերենում, այնպես էլ հայերենում եղանակավորող բառերի ու բառ-մասնիկների առաջացումը այլ բան չէ, քան նյութական նշանակության բառերի, բառակապակցությունների, դարձվածքների ու նախադասությունների կառուցվածքային մեկուսացման, որպես խոսքի բովանդակության նկատմամբ խոսողի սուբյեկտիվ-եղանակական վերաբերմունքի արտահայտման միջոց գործածվելու արդյունք։ Ինչպես շատերի կողմից ցույց է տրված, լեզվական տարբեր ծավալի ու բովանդակության միավորներ, անջատվելով նախադասության կառուցվածքից, որպես խոսողի սուբյեկտիվ վերաբերմունքի արտահայտման շարահյուսական միջոց, աստիճանաբար զրկվում են իրենց նյութական բովանդակությունից ու քերականական հատկանիշներից, մեր ըմբռնմամբ, դադարում են խոսքի մաս լինելուց և վեր են ածվում եղանակավորման քերականական-շարահյուսական իմաստ ձեռք բերած միավորի։ Այդ անցումը տեսնելու համար համեմատեցեք գուցե բառի գործածությունը գրաբարում և ժամանակակից հայերենում՝ եզնիկ Կողբացու և վ. Տերյանի հետևյալ գործածություններով. «...Պարտ է հաւատալ՝ թե արուիթիւն կամ իգուիթիւն գուցէ նորա»— «Գուցե ես ինքս եմ հնարել նրան»։ Առաջինում ունենք գրաբարի գոլ (լինել, գոյություն ունենալ) բայի դիմավոր ձևը՝ իր բայական բառային և քերականական բոլոր հատկանիշներով, իսկ երկրորդում ժամանակակից հայերենի գուցե եղանակավորող բառը, որը ձևաբանորեն այլևս տրոհելի չէ, այսինքն միաձևույթ կազմություն ունի, չունի անվանողական արժեք և առարկայահատկանշային կամ հասկացական բառային իմաստ, չունի ձևաբանական որևէ հատկանիշ, չեթեքվող է և արտահայտում է բանաստեղծի երկբայական վերաբերմունքը իր խոսքի բովանդակության նկատմամբ։ Այլ կերպ՝ գուցե-ն դրվելով

«ինքս եմ հնարել նրան» նախադասության վրա, վերջինիս հատուկան բովանդակությունը դարձնում է ենթադրական։

Հայագիտության մեջ բավականին հիմնավոր պարզաբանված է եղանակավոր բառերի այլ խոսքի մասերից ու լեզվական միավորներից առաջանալու հարցը, քննված են սրանց և մյուս խոսքի մասերի կապերն ու փոխհարաբերությունները։ Իբրև վերաբերմունքային բառեր, եղանակավորող բառերն ու բառ-մասնիկները, կարծես առավելապես մոտ են ձայնարկություններին։

Ծագումնաբանորեն եղանակավոր բառերը առաջին հերթին կապվում են մակբայների հետ, ապա միջանկյալ նախադասությունների, մասնավորապես սրանց բայ-ստորոգյալի հետ (երևի, գուցե, կարծեմ, կարծես, դժբախտաբար, բարեբախտաբար, ճամարյա, ասեմ, ասես, գրեթե)։ Գոյական, ածական, դերանուն բառաձևերի (ճարկավ, իրավ, իրոք, իճարկե, ցավոք, անպատճառ, անկասկած, անշուշտ, իսկապես nr և այլն) անցումը եղանակավորող բառերի տեղի է ունենում սրանց պարագայական, այսինքն մակբայական գործառության շնորհիվ միայն։ Այս հանգամանքը թելադրել է ուսումնասիրողներին եղանակավորող բառերի քննության ժամանակ շեշտը դնել մակբայների և եղանակավորող բառերի իմաստային, բառակազմական և գործառական տարբերությունների վրա։ Եղանակավորող բառերի և մյուս խոսքի մասերի հարաբերությունների քննության ժամանակ ևս առաջինն պետք է մղվել այդ հարաբերակից միավորների տարբերությունները միայն, որպեսզի հիմնավորվի եղանակավորող բառերի խոսքիմասային առանձին կարգ լինելու իրողությունը։ Հետևանքը եղել է այն, որ շատ հետազոտողների մոտ եղանակավորող բառեր անվան տակ ներկայացվել են հայերենի եղանակային վերաբերմունքի արտահայտման տարբեր ծավալի ու բնույթի լեզվական միջոցներ՝ մասնիկ, բառ, բառաձև, բառակապակցություն, դարձված, նախադասություն։ Երբեմն անտեսվել է այն իրողությունը, թե եղանակավորման գործառական իմաստը տվյալ միավորի միակ կամ հիմնական արժե՞քն է, թե զուգահեռ կամ երկրորդական։ Մասամբ ստացվում է այն տպավորությունը, թե ուսումնասիրողները տվյալ բառերն ու բառաձևային միավորները եղանակավորող բառերի կարգի մեջ են խմբավորում ոչ թե նրանց ձևական ու իմաստային հատկանիշների ընդհանրությունները բացահայտելու եղանակով, այլ դրանց և մյուս խոսքի մասերի տարբերությունը բացահայտելով միայն։ Եթե բառը նյութական

խոսքի մաս և նախադասության անդամ չէ, ձայնարկություն կամ կապակցական բառ էլ չէ, ապա մնում է ասել, թե եղանակավորող բառ է։ Իսկ եթե այդ կարգի բառերն իրենցից ոչ թե մեկ, այլ մի քանի տարբեր բառադասեր կամ «խոսքի մասեր» են ներկայացնո՞ւմ։ Այս հարցին բացասական պատասխան չի կարելի տալ, քանի դեռ չեն ճշտվել եղանակավորման կարգի բովանդակության և ապա արտահայտության պլանների մեր պատկերացումները։

Ինչպես քանիցս ասվեց, լեզվաբանության մեջ «առայժմ բառի ու շարույթի իմաստաբանական կարգերի տեսությունները մշակված չեն», հետևաբար այն ամենատարածված սահմանումը՝ ըստ որի «եղանակավորող բառերն արտահայտում են խոսողի մտածական վերաբերմունքը, որով եղանակավորում կամ երանգավորում են նախադասությունը, նրա որևէ անդամը»[114], ինչպես նաև այս սահմանմանը զուգահեռ եղանակավորող բառերի ու մյուս խոսքի մասերի իմաստային տարբերությունների մասին տրվող բոլոր մեկնաբանությունները մոտավոր ճշգրտությամբ անգամ չեն որոշում այդ լեզվական կարգի բովանդակությունը։ Մեր այս դատողության լավագույն ապացույցն այն է, որ եթե վերջին 2—3 տասնամյակների ընթացքում այս խնդրին անդրադարձող քերականները «վերաբերմունքային», «արտահայտչական», «եղանակային» բառերի անվանումներով առանձնացնում են բառերի երկու խոսքիմասային կարգ՝ ձայնարկություն և եղանակավորող բառեր կամ բառ-մասնիկներ, ապա Գ. Ջահուկյանը իր վերջին տարիների աշխատություններում անհրաժեշտ է գտնում այդ երկուսի փոխարեն առանձնացնել «...լայն առումով եղանակային բառերի ու բառախմբերի չորս հիմնական կարգ՝ ա) հարցուպատասխանական, բ) սուբյեկտիվ-վերաբերողական, գ) ձայնարկական և դ) կոչական-դիմողական»։ Ոչ պակաս կարևոր է այս տիպի բառերի դասակարգման իմաստային հիմունքի գնահատման տեսակետից լեզվաբանի այն միանգամայն տեղին հավելումը թե՝ «Ավելորդ չէ նշել, որ այս չորս խմբերի տարբերակումը հիմնվում է ոչ թե տրամաբանական հատուկ չափանիշների, այլ մասամբ արտաքին-արտահայտչական միջոցների բնույ-

---

114 Ս. Գ. Աբրահամյան, *Չբնքվող խոսքի մասերը և նրանց բառական ու քերականական հատկանիշների փոխհարաբերությունը ժամանակակից հայերենում*, Երևան, 1965, էջ 507։

թի և մասամբ ավանդական պատկերացումների վրա»[115]: *Իրոք որ «տրամաբանական հատուկ չափանիշներ» չեն գտնված, գուցե և չկան վերոհիշյալ կարգերի թվում նաև եղանակավորման կարգի բուն բովանդակությունը որոշելու համար, այդ պատճառով էլ եղանակավորման կարգի բովանդակության պլանը որոշելու համար լեզվաբանները հաճախ դիմում են «արտաքին-արտահայտչական միջոցների» (հնչերանգ, շեշտ, տրոհվածություն, անկախություն և այլն), երբեմն էլ խոսքի մասերի իմաստների, սրանց փոխհարաբերությունների ու ներքին ստորակարգությունների մասին ստեղծված «ավանդական պատկերացումների» օգնությամբ:*

Լեզվաբանության մեջ Գ. Ջահուկյանի «եղանականիշ բառերի ու բառախմբերի» վերոհիշյալ դասակարգումը Մ. Աբեղյանի «խոսքի մասնիկների» դասակարգման մեջ որոշ իմաստով ունի իր նախատիպ օրինակը: Եթե նկատի ունենանք այն հանգամանքը, որ Գ. Ջահուկյանը եղանակավորման կարգը քննում է շարահյուսական մակարդակում և դուրս հանենք «կոչական-դիմողական» բառակարգը, ապա ձայնարկությունների հետ լայն առումով եղանականիշ բառերի ու բառախմբերի երկու կարգ է մնում՝ հարցուպատասխան և սուբյեկտիվ-վերաբերողական: Սակայն եղանականիշ բառերի ու բառախմբերի տեսակները որոշելիս, Ջահուկյանը, զուգահեռներ անցկացնելով բայի եղանակային ձևերի և եղանականիշ բառերի ու բառախմբերի ներսում իր իսկ տարբերակած ժխտման և վերաբերողական կարգերի միջև, վերջիններիս փոխհարաբերության մասին հանգում է հետևյալ եզրակացության. «Այսպիսով, երկու ենթակարգերի կամ, ավելի ճիշտ, կարգերի համար ընդհանուրը վիճակայնության հատկանիշն է: Հապա ո՞րն է նրանց տարբերիչ հատկանիշը. դժվար չէ պարզել, որ հատատատաժխտականությունը ակնհայտ իմացական բնույթի է և հաղորդակցական արժեք ունի. այստեղ ուշադրության կենտրոնում է իր իսկ հաղորդման (խոսքի) և այդ հաղորդման (խոսքի) առարկայի հարաբերությունը (դենոտատի մասին մի բան հաստատվում է կամ ժխտվում). վերաբերողականության դեպքում ուշադրության կենտրոնում է հաղորդման (խոսքի) և հաղորդումը (խոսքը) իրականացնող անձի (սուբյեկտի) և այլ անձերի փոխհարաբերությունը, սուբյեկտի կամքի և ակտիվության դրսևո-

---

115 *Գ. Բ. Ջահուկյան, Ժամանակակից հայերենի տեսության հիմունքները, Երևան, 1974, էջ 361:*

րոմը։ Այս առումով հաստատա-ժխտականությունը հարաբերակից է բայասեռին, վերաբերողականությունը՝ դեմքին»[116]։

Այսպես, ուրեմն, սուբյեկտիվ-վերաբերողական կարգից պետք է տարբերակել հաստատատժխտական կամ, հակադրության նշույթավոր անդամի անվամբ կոչելիս, ժխտական կարգը, որպիսի մոտեցում գտնում ենք Մ. Աբեղյանի դասակարգման մեջ, որտեղ կապակցական բառերին հակադրված են եղանակականներից տարբերակված պատասխանական (այո՛, ո՛չ) բառերը և ժխտական մասնիկները (ոչ, չը)։ Ժխտական մասնիկները եղանակականներից, ինչպես տեսանք, տարբերակում են նաև շատ ռուսագետներ, այդ թվում նաև այժմ գործող դպրոցական դասագրքի հեղինակները։ Հայերենում ժխտական եղանակավորող բառերի ամենասեղմ ցանկը ներկայացված է ո՛չ բառով[117]։ *Լայն ցանկում ոչ-ին ավելացվում են ժխտական-եղանակական երանգով գործածվող բնավ, ամենևին մակբայները, մի՛ արգելական մասնիկը և օժանդակ բայի չէ ժխտական ձևը։ Եթե նույնիսկ եղանակական կարգը վերցնենք լայն առումով և ժխտականը համարենք նրա ենթակարգը, դարձյալ այդ կարգի արտահայտման համար լեզվի բառային մակարդակում բառերի առանձին խումբ չենք ունենա, քանի որ որպես բուն ժխտական, որն այլ խոսքի մասերի ու մասնիկների հետ չի նույնանում, կմնա միայն ոչ-ը, սա էլ մասնագետների կարծիքով չի նույնանում բուն եղանակավորող բառերին։ Ահա մի այդպիսի կարծիք. «Ժխտական եղանակավորող հատկապես ոչ-ը և չէ-ն (որոնք նախադասության արժեք ունեն) չեն կապվում նախադասության բայ-ստորոգյալի հետ, այլ հնչերանգով բաժանվում են նախադասության անդամներից՝ ժխտելով որևէ միտք»*[118]։ *Ավելի հիմնավոր կերպով ժխտական եղանակավորող բառեր չեն համարվում բնավ և ամենևին բառերը։ Եթե ըստ ոմանց սրանք համանուն մակբայների եղանակավորող բառ զուգահեռներ են, ապա ըստ այլոց՝ դրանք «հատկապես որպես պատասխան բառ գործածվելիս հարում են ժխտական եղանակավորող բառերին»*[119] *և ոչ ավելին։*

Եղանականիշ բառերի ու բառախմբերի շարքից առանձնացնելով ժխտականները՝ նույն հիմունքով և դատողությամբ պետք է

---

116 Գ. Բ. Ջահուկյան, *նշվ. աշխ., է 359—360։*

117 *Տե՛ս* Ս. Աբրահամյան, *նշվ. աշխ., էջ 529—530։*

118 Վ. Գ. Ավագյան, *նշվ. աշխ., է 34։*

119 Ս. Գ. Աբրահամյան, *նշվ. աշխ., էջ 531։*

առանձնացվի նաև այո՛ պատասխանական բառը, որը շատերի կողմից թեև դրվում է արդարև, իսկապես, իճարկե, ճարկավ, անպատճառ, անշուշտ, իրոք, իրավ և այլ հաստատական եղանակավորող բառերի շարքում, բայց իրականում, իբրև պատասխանական բառ, ոչ-ի հետ կազմում է հաստատող կամ ժխտող պատասխանական բառերի միանգամայն ինքնուրույն բառատեսակ։ Այս խնդրում հայերենը կառուցվածքային տեսակետից չի տարբերվում ռուսերենից, որի համար պատասխանական այդ բառերի տեղը «խոսքի մասերի» շարքում, մեր կարծիքով, ճիշտ է որոշված ՍՍՀՄ ԳԱ ռուսաց լեզվի ինստիտուտի հրատարակած քերականության մեջ։ Այդտեղ, բառերի ձևաբանական դասակարգում կատարելիս, չթեքվող բառերի մի առանձին տեսակ են համարված այո՛ և ո՛չ բառերը, այսպես՝ «Չփոփոխվող են նաև... 3) այո՛ (հաստատական) և ո՛չ (ժխտական) բառերը, որոնք գտնվում են խոսքի մասերի համակարգից դուրս և ծառայում են հաստատում կամ ժխտում արտահայտելու համար»[120]։ Այսպես է վարվում այո՛, ո՛չ պատասխանական բառերի տեղը հայերենում որոշելիս Մ. Աբեղյանը. այդ է հաստատում Գ. Ջահուկյանը, որը թեև հարցուպատասխանական բառերը դնում է ընդհանուր եղանակավորող բառերի շարքը, բայց դրանք չի նույնացնում բուն եղանակականներին և իր «իմացարկութիւնն» նոր անվանումով դրանք համարում է առանձին բառախումբ, միաժամանակ գրելով, թե «ընդհանուր առմամբ, բացի այո՛ և ո՛չ բառերից մնացած հարցուպատասխանական բառերը նաև վերաբերողական արժեք ունեն»[121]։

Իր ժամանակին Վ. Վ. Վինոգրադովը նկատել է, որ ռուսերենի ցուցական և ճշգրտման մասնիկները իմաստով հեռու են եղանակական մասնիկներից, իսկ սաստկական, սահմանափակման, մեկնական, որոշիչ և այլն նշանակություններ բառերն ու բառմասնիկները դեռևս «շաղկապների և եղանակավորող բառերի միջև ընկած անցողիկ» բառակարգեր են և ոչ թե եղանակավորող բառեր ու մասնիկներ[122]։ Հայերենի եղանակականչ բառերի ու բառախմբերի ներսում բուն եղանակականներից գործառական այլ

---

[120] Грамматика современного русского литературного языка, АН СССР, М., 1970, էջ 315:

[121] Գ. Բ. Ջանուկյան, նշվ. աշխ., էջ 382։

[122] Տե՛ս В. В. Виноградов, О категории модальности и модальных слов в русском языке (նշվ. ժողովածու, էջ 78—79)։

նշանակության բառակարգերի առանձնացման մասին արված թեական դատողությունները հայագիտության մեջ նույնպես գնալով դառնում են բավականին հիմնավորված տեսակետներ։ Գ. Ջահուկյանը հայերենի խոսքի մասերի իր համադրական-կաղապարային դասակարգման մեջ գոյականի և բայի, որպես հոլովվող և խոնարհվող խոսքի մասերի, առանձնացումից և սրանց համապատասխան հարացույցների տարբերակումից հետո, ինչպես տեսանք, «ըստ հոլովման և խոնարհման վերլուծական դրսևորումների», առանձնացնում է «ձևաբանական բառ-մասնիկներ», որոնք, ըստ հեղինակի, հանդես են գալիս «որպես համադրական ձևերի շարքերի (հարացույցի) վերլուծական անդամներ. դրանցից են՝ մի անորոշ հոդը, մի՛ արգելականը, պիտի եղանակիչը, եմ, լինել, տալ օժանդակ բայերը։ Վերաբերմունքային կամ եղանականիշ բառերի երկու բառախմբերից՝ ձայնարկություններից ու եղանակական բառերից բացի, Ջահուկյանը նաև տարբերակում է «եղանակական բառ-մասնիկների» բառակարգ։ «Եղանակական բառ-մասնիկները,— գրում է նա,—ի տարբերություն բուն եղանակական բառերի, եղանակավորում են ոչ թե նախադասությունները, այլ առանձին բառեր՝ անկախ դրանց խոսքիմասային բնույթից՝ սահմանափակական և սաստկական (ընդգծողական) նշանակությամբ՝ գեթ, գոնե, լոկ, միայն, միմիայն և այլն, անգամ, իսկ, մինչև անգամ, մինչև իսկ, մանավանդ, նամանավանդ և այլն. միայն Գրիգորը (ես, կարմիր, հինգ և այլն)»[123]։ Նախադասության այն անդամները, որոնց վերաբերում են այս բառ-մասնիկները, «շեշտվում են, ընդգծվում և փաստորեն վերածվում հոգեբանական ստորոգյալի»[124]։ Այս դերում նրանք կարող են վերաբերել նախադասության բոլոր անդամներին, այլ կերպ՝ բոլոր «լիիմաստ» բառերին, այսպես՝ միայն ինում է, միայն նա, միայն ջուր, միայն բարձր, միայն արագ, միայն երկու։ Իր «խոսքի մասերի կաղապարային դասակարգման» մեջ Գ. Ջահուկյանը վերանվանում է այս «եղանակական բառ-մասնիկները»։ Եղանակավորող խոսքի մասերի մեջ նա խմբավորում է չորս բառակարգ. սրանք էլ բաժանում է երկու խմբի՝ առաջինում միավորելով ձայնարկությունները, պատասխանական բառերը, վերաբերողական եղանակական բառերը կամ եղանակականները՝ այս բոլորը որպես «ընդ-

---

123 Գ. Բ. Ջահուկյան, նշվ. աշխ., էջ 148—150։

124 Նույն տեղում, էջ 360։

ճանուր եղանակավորող բառեր, իսկ երկրորդ խմբում թողնում է «լիիմաստ» բառերի վրա դրվող և սրանց երանգավորող՝ սաստկացնող, թուլացնող, հարցման տակ դնող կամ ժխտող բառերը, որպես մասնակի եղանակավորող բառեր։ Վերջիններս, որ նախորդ աշխատության մեջ անվանված էին եղանակական բառ-մասնիկներ, այստեղ կոչված են երանգականեր։

Եթե մի կողմ թողնենք եղանակավորող բառեր տերմինի այսքան լայն ու վիճելի գործածությունը, ապա ուշադրության է արժանի այն ճշգրտումը, որ կատարում է այստեղ Ջահուկյանը, բառ և բառ-մասնիկ հասկացությունների տարբերակման մեջ։ «Ժամանակակից հայերենի տեսության հիմունքների» մեջ բովանդակության հաշվառմամբ տարագործառական բառ-մասնիկներ համարված անգամ, ևեթ մանավանդ, գեթ, գոնե, միայն տիպի միավորները «խոսքի մասերի կաղապարային դասակարգման» մեջ իրենց շարահյուսական գործառական հատկանիշի հաշվառմամբ հակադրված են միագործառական բառ-մասնիկներին («որոնցից յուրաքանչյուրը սովորաբար կապված է մեկ խոսքի մասի հետ») և, որպես բոլոր «լիիմաստ» բառերի վրա դրվող երանգական բառային միավորներ, այլևս բառ-մասնիկներ չեն համարված[125]։

Նախորդ մասում շաղկապների խոսքիմասային պատկանելության հարցը քննելիս տեսանք, թե ինչպես Գ. Ջահուկյանը ուրիշների կողմից եղանակավորող բառերի շարքը դասվող այսպիսով, այսուամենայնիվ, այսուհանդերձ, արդ, հետևաբար, մի խոսքով, այլև՝ նախ, երկրորդ, երրորդ տիպի բառային միավորները մտցնում է կապակցական խոսքի մասերի խմբի մեջ՝ սրանք առկապ անվանմամբ հավասար հակադրության մեջ դնելով կապերին, ստորակապերին և համակապերին։

Գ. Ջահուկյանի մեր կողմից մեջ բերված աշխատություններում եղանականիշ բառերի դասակարգման և եղանակավորման կարգի բովանդակության պլանի պարզաբանման ասպարեզում տեսնում ենք մի ուշագրավ նորություն ևս։ Ընդլայնելով Մ. Աբեղյանի կողմից առանձնացված պատասխանական այո՛, ո՛չ բառացանկը՝ Գ. Ջահուկյանը առաջարկում է «անկախ հարցուպատասխանական բառերի և բառախմբերի» հետևյալ ցանկը. «ա) հարցա-

---

[125] Տե՛ս Գ. Բ. Ջահուկյան, *Խոսքի մասերի կաղապարային դասակարգումը* («Լրաբեր», 1976, № 1, էջ 26)։

կան՝ արդյո՞ք, մի՞թե, *բ) պատասխանական՝* այո՛, ասեմ թե, արդարև, գուցե (մի գուցե), երևի, թերևս, իբր (իբր թե), իբրև թե, ինարկե, ինչ խոսք (ինչ խոսք որ), ինչպես չէ, իսկապես (իսկապես որ), կարծեմ, կարծես (կարծես թե), ո՛չ, ոչ մի կերպ, չէ և այլն)[126]։

Բոլոր եղանակականներից հարցուպատասխանական բառերի տարբերությունը հեղինակը տեսնում է հետևյալում. «Հարցուպատասխանական բառերը, պատկանելով եղանակական բառերի ու բառախմբերի ընդհանուր կարգին, բոլոր եղանակային-վերաբերողական բառերից տարբերվում են և՛ արտահայտության, և՛ բովանդակության պլաններում։ Արտահայտության պլանում նրանք, ի տարբերություն եղանակա-վերաբերողական բառերի, 1) նշանակալից մասով ունենում են հարցական և շեշտական առոգանություն և գրության մեջ սովորաբար ուղեկցվում համապատասխան նշաններով, 2) այդ բառերի հետ միասին հանդիպելու դեպքում գրավում են նախորդող դիրք, եթե առկա է դադար («Այո՛, դժբախտաբար պիտի գնամ»), հազվադեպ, հաջորդող դիրք, եթե դադար չկա («Դժբախտաբար այո՛»)։ Բովանդակության պլանում նրանք, ի տարբերություն վերաբերողական բառերի, որոնք արտահայտում են առաջին հերթին վերաբերմունք ու գնահատում, հանդես են գալիս որպես իմացության ձգտման ու բավարարման արտահայտիչներ»[127]։

Չնայած տարբերակիչ հատկանիշների այս ձևակերպմանը, ինչպես ռուսերենի համար է նկատված, հայերենում ևս բոլոր եղանակավորող բառերի և եղանականիշ այլ կարգի բառերի՝ հարցուպատասխանական բառերի և երանգականների կամ եղանակական բառ-մասնիկների միջև տարբերակիչ սահմանները այնքան էլ որոշակի չեն։ Չէ՞ որ «Ընդհանուր առմամբ, բացի այո՛ *և* ո՛չ *բառերից մնացած հարցուպատասխանական բառերը նաև վերաբերողական արժեք ունեն»*[128], *իսկ «Տարագործառական բառ-մասնիկները, ինչպես նշվել է, հիմնականում եղանակային արժեք ունեն»*[129]։

Վերաբերողական բառերի բաշխական քննությամբ երբ առանձնացվում են ձայնարկությունները, պատասխանական բառե-

---

126 Գ. Բ. Ջահուկյան, *Ժամանակակից հայերենի տեսության հիմունքները, էջ 372։*

127 *Նույն տեղում, էջ 371։*

128 *Նույն տեղում, էջ 382։*

129 *Նույն տեղում, էջ 381։*

րը, երանգականները, բուն եղանակականների մեջ մնում են «նախադասությունը խոսողի դիրքից գնահատող, նրա վերաբերմունքը արտահայտող բառերը», այն է՝ **դժբախտաբար** *(բարեբախտաբար, տարաբախտաբար, ցավոք) տիպի բառերը, որոնք, որպես «զգացական բնույթի» վերաբերողական բառեր, արտահայտում են ձայնարկությունների իմաստներին համապատասխան զղջման, կարեկցանքի, խրախուսանքի ու հավանության վերաբերմունք։ Ռուսական քերականագիտության մեջ, տարածված կարծիք է, որ «...***բարեբախտաբար*** *(к счастью),* ***դժբախտաբար*** *(к сожалению) տիպի միջանկյալ բառերը, որոնք արտահայտում են հուզական վերաբերմունք իրականության երևույթների նկատմամբ, «սովորաբար եղանակավորող բառերի շարքին չեն պատկանում»*[130]։ *Հայերենի եղանակավորող բառերի բավականին լայն ցանկ ներկայացնող Ս. Աբրահամյանը նույնպես այս կարգի բառերը չի մտցնում եղանակավորող բառերի իր նկարագրած իմաստային որևէ տեսակի մեջ։ Ս. Աբրահամյանի և այլոց կողմից եղանակավորման կարգի տեսական և գործնական քննությունից հետևում է, որ այս կարգի բառերը չէին կարող եղանակավորման բառերի շարքը չմտնել, քանի որ դրանցով արտահայտվում է ոչ թե զգացական կամ հուզաարտահայտչական անմիջական վերաբերմունք, այլ «միջնորդավոր, մտավոր վերլուծման ենթարկված» վերաբերմունք։*

Վերջապես, ամփոփելուց առաջ նկատենք, որ Գ. Ջահուկյանը բուն եղանակային-վերաբերողական բառերի ու բառախմբերի թվարկումն ավարտում է այսպես՝ «Սրանց մեջ պետք է դրվեն **ահա, ահավասիկ** *ցուցական-ակնհայտական բառերը»*[131]։ *Սակայն քաշխական քննությամբ վերաբերողական եղանականիշ բառերի իմաստները բնութագրելիս, նա ավելացնում է. «Այս իմաստներից առաջին հերթին պետք է նշել, ցուցա-անմիջականությունը, որ դրսևորվում է* **ահա, ահավասիկ** *բառերի միջոցով և բառիս բուն առումով վերաբերողական իմաստ չէ»*[132]։ *Կասկածից վեր է, ուրեմն, որ բուն իմաստով եղանակավորող բառեր չեն նաև այս ցուցական բառերը։*

Տարբեր հետազոտողների կողմից եղանակավոր բառերի մեջ

---

[130] Современный русский язык, М., 1971, էջ 292—293:

[131] Գ. Բ. Ջահուկյան, նշվ. աշխ., էջ 380։

[132] Նույն տեղում, էջ 385։

Անցվող տարբեր նշանակություններ ու բնույթի բառերի բովանդակության վերոհիշյալ համառոտ քննությունից անհամ երևում է, որ եղանակավորման կարգի իմաստային սահմաններից իրենց հիմնական գործառական նշանակությամբ դուրս են մնում կամ եղանակավորող բառեր չեն՝

1. ժխտական առանձին կարգը ձևավորող ոչ, չէ, մի՛ *բառմասնիկները. այդ նշանակությամբ գործածվող* բնավ, երբեմ *մակբայները.*

2. պատասխանական այո՛, ո՛չ *բառերը.*

3. ձևակազմական մի՛, բո՛ղ, պիտի, մի, ավելի, երանի, ոչ, ևեթ *բառ-մասնիկները.*

4. կամային և զգացական-հուզական նշանակության դե՛ (դե՛ն), ապա (հապա), բա, բաս, երանի, երնեկ *ձայնարկությունները.* արի, եկ, տես, բեր *բայաձևերը.*

5. ցուցական-առկայացական ահա, ահավասիկ, այ *բառերը.*

6. եղանակական երանգ ունեցող ըիչական, անչատական, մեկնական նշանակության հետևյալ շաղկապներն ու շաղկապական բառերը՝ այսուհանդերձ, այսուամենայնիվ, այնուհանդերձ, այդուհանդերձ, ինչևէ, ինչևիցե, համենայն դեպս, ի դեպ, ի միջի այլոց, ընդհակառակն, սակայն, ընդսմին, այսպիսով, ըստ որում, ընդ որում, արդ, օրինակ, դիցուք, ուրեմն, մի խոսքով, այլ կերպ ասած *և այլն.*

7. մտքերի կապակցության ու հերթականության ցույց տվող նախ, վերջապես, առաջին, երկրորդ, երրորդ *շաղկապական բառերն ու թվականները.*

8. խրախուսական, հորդորական ապրես, ապրի, ապրեք, կեցցե, կեցցես, կեցցեք *բայաձևերն ու ձայնարկությունները.*

9. քաղաքավարական խնդրեմ, ներեցեք, համմե, համեցեք, ներողություն, շնորհակալություն *բայաձևերն ու գոյականները.*

10. դարձվածքային ոճական նշանակության սատանան տանի, աստված փրկի, աստված գիտի, փառ աստծո, գլուխը fար, ձերն անիծած *և այլն միավորները.*

11. նախկինում շաղկապների ու մակբայների վրա բաշխվող, իսկ այժմ սխալմամբ սաստկական ու սահմանափակման եղանակավորող բառեր համարվող ա) անգամ, նույնիսկ, իսկ, մինչև իսկ, մինչև անգամ, մանավանդ, համանավանդ, ևեթ, ևեթ, *բ)* գեթ, գոնե (գոնյա), լոկ, սոսկ, միայն, միմիայն, թեկուզ, *ինչպես նաև՝*

առանձնապես, առավելապես, բացառապես, գլխավորապես, հատկապես, մասնավորապես և այլն բառերը:

Բուն եղանակականներին (սխալմամբ) միավորված վերոհիշյալ բառերն ու բառախմբերը առանձնացնելուց հետո հայերենում կունենանք եղանակական սուբյեկտիվ վերաբերմունքի երկու կարգի բառեր՝ ա) բառեր, որոնցով արտահայտվում է խոսքի բովանդակության, այսինքն նրանում հաստատվող կամ ժխտվող եղելության և իրականության փոխհարաբերությունը՝ ըստ խոսողի հավատիության կամ իմացության, այն է՝ երեխան ճնած է, երևի (գուցե, կարծեմ, արդյոք, միթե...) երեխան ճնած է. իճարկե (իրոք, ճարկավ, անկասկած, անշուշտ, իսկապես, իրավ...) երեխան ճնած է. բ) բառեր, որոնցով արտահայտվում է խոսողի զգացական-հուզական գնահատող վերաբերմունքը խոսքի բովանդակության, այսինքն նրանում հաստատվող կամ ժխտվող եղելության նկատմամբ. այն է՝ դժբախտաբար (տարաբախտաբար, ցավոք) երեխան ճնած է. բարեբախտաբար երեխան ըճնած է:

Ինչպես ցույց տվեցին եղանակավորման կարգի մասին վերը կատարված մեր վերլուծությունները, թե՛ ռուսագիտության, թե՛ հայագիտության մեջ բովանդակության պլանի առավել նեղացման դեպքում եղանականիշ վերոհիշյալ երկու խումբ բառերը հակադրվում են իրար և եղանակավորման իմաստի տարբեր գնահատմամբ մե՛րթ մեկ, մե՛րթ մյուս բառախումբը դուրս է դրվում բուն եղանակավորող բառերի շարքից: Ս. Աբրահամյանի վերլուծություններում, ինչպես ասվեց, դժբախտաբար, բարեբախտաբար, ցավոք տիպի սուբյեկտիվ վերաբերմունքի և գնահատման եղանակավորող բառեր չկան. մինչդեռ Գ. Ջահուկյանի վերլուծություններում այս կարգի բառերը, որպես խոսողի կամ սուբյեկտի կամքի ու ակտիվության արտահայտիչներ, համարված են վերաբերողական բառեր կամ բուն եղանակականներ:

Ս. Աբրահամյանի կողմից եղանակավորող բառերի իմաստային հիմնական տեսակները ներկայացնող հաստատական (իրավ, իրոք, իճարկե, անշուշտ...) և երկբայական (երևի, գուցե, թերևս, կարծեմ, մի՞թե...) եղանականիշ բառերը Գ. Ջահուկյանի աշխատություններում բնութագրվում են որպես «իմացության ձգտման ու բավարարման արտահայտիչներ» և, ի տարբերություն դժբախտաբար, բարեբախտաբար տիպի բուն եղանակականների, անվանվում են հարցուպատասխանական բառեր, կամ «իմացար-

կություն»: *Եթե արտաքուստ նայելու լինենք, այս հարցով զբաղվող հայագետները եղանակավորող բառերի հիմնական տեսակների այսպիսի փոխադարձ մերժմամբ, ի վերջո, հանգում են նաև հայերենի եղանակավորման կարգի մերժման: Սակայն ըստ էության այդպես չէ: Հայերենի քերականության տեսության համար այստեղ կարևորն այն է, որ տարբեր հայագետների կողմից տարբեր դիրքերից ու մոտեցումներով այլ խոսքի մասերից ու բառակարգերից առանձնացված և բնութագրված են սուբյեկտիվ վերաբերմունքի եղանականիշ բոլոր բառերն ու այլ կարգի լեզվական միավորները:*

Եղանակավորող բառերը նախադասության անդամների կապակցություններից անջատված և նյութական ու քերականական մանեակի իմաստներից զրկված, չձևափոխվող միավորներ են: Առաջանալով այլ խոսքի մասերից բառայնացմամբ և ապա քերականացմամբ, վերջիններիս բառային և կարգային (կատեգորիալ) իմաստների վերացմամբ, եղանակավորող բառերը ձեռք են բերում վերաբերողական քերականական նշանակություն, որի էությունը նախադասության բովանդակության և իրականության փոխհարաբերության կամ այդ բովանդակության նկատմամբ խոսողի մտածական, այլև հուզական-գնահատողական վերաբերմունքի արտահայտումն է: Այս գործառական-շարահյուսական իմաստը կարգային (կատեգորիալ) խոսքիմասային իմաստ չէ: Եղանակավորող բառերը, չունենալով ինքնուրույն գործառություն, որպես սպասարկու կամ օժանդակ բառեր, խոսքի մասերի համակարգից դուրս են: Հետևաբար նրանց այլ սպասարկու կամ օժանդակ բառախմբերից («խոսքի մասնիկներից») առանձնացնելն ու ներքին դասակարգումը այդ կարգի բառերի խոսքիմասային դասակարգում չէ: Բայց այդ չի նշանակում, թե այդպիսի դասակարգումը ընդհանրապես դուրս է մնում բառերի ամեն կարգի, այդ թվում նաև խոսքիմասային դասակարգումից, կամ էլ քիչ է ուշադրության արժանի: Ազատվելով բոլոր կարգի բառերի մեջ կարգային (կատեգորիալ) իմաստներ որոնելու և ըստ այդմ բոլոր սպասարկու բառախմբերը խոսքի մասեր ճանաչելու չհիմնավորված սկզբունքից՝ համարձակ կերպով կարելի է եղանակավորող բառերի մեջ հավաքված բառերն ու այլ մակարդակի լեզվական միավորները վերլուծել ըստ նրանց կատարած շարահյուսական, ոճական, եղանակական-երանգական և այլ դերի, առանց քաշվելու սրանք մասամբ իրենց պատկանած մյուս խոս-

քի մասերին վերադարձնելու, իսկ մնացածները մի քանի տարբեր բառակարգերի վրա բաշխելու փաստից։ Այսպիսի մոտեցման դեպքում, անշուշտ, կարելի է գտնել տարբերակիչ հատկանիշներ այլ խոսքի մասերից վերջնականապես անջատված եղանականիշ բառերը և՛ մեկ, և՛ մի քանի բառակարգի վրա բաշխելու համար՝ նայած այն բանին, թե ինչպես է սահմանված եղանակավորող բառերի բովանդակության պլանը և իմաստային ո՛ր հատկանիշն է ճանաչվում որպես դասակարգիչ հատկանիշ։ Թեև, ինչպես վերն ասվեց, այս դեպքում, մեր կարծիքով, դասակարգիչ համարված ո՛չ մեկ, ո՛չ մի քանի հատկանիշները խոսքիմասային արժեք չունեն։

Հավաստման (հաստատական և երկբայական), զգացական-գնահատման (խրախուսական և կարեկցական), երանգական (սաստկական, սահմանափակման և ցուցական) եղանականիշ բառերը մեկ «խոսքի մասի» կամ բառակարգի մեջ միավորելու դեպքում հաշվի են առնվում սրանց հետևյալ ընդհանուր հատկանիշները.

ա) Այդ բառերը չունեն նյութական իմաստ, այսինքն՝ «լիիմաստ» բառեր չեն և անվանական արժեք չունեն[133];

բ) Որպես «ոչ լիիմաստ» բառեր, ինքնուրույն գործածություն չունեն, այսինքն կապակցման մեջ չեն մտնում և նախադասության անդամ չեն լինում։

գ) Լինելով նախադասության ոչ կապակցվող, ոչ կապակցող միավորներ՝ նրա կառուցվածքից անջատված են, ուստի կարող են տրոհվել և ունենալ հատուկ հնչերանգ։

դ) Առաջացած լինելով «լիիմաստ» բառերից՝ սրանց քերականացմամբ, կամ բառակապակցություններից, դարձվածքներից ու նախադասություններից՝ սրանց բառայնացմամբ, նրանք զուրկ են «լիիմաստ» բառերին բնորոշ բառային և քերականական հատկանիշներից, ուստի չեն թեքվում և ձևույթային վերլուծության չեն ենթարկվում։

ե) Եղանակավորման կամ սուբյեկտիվ վերաբերողական կար-

---

[133] *Տե՛ս* **Т. П. Ломтев,** Предмет и смысл языковых выражений («Исследования по современному русскому языку». М., 1970, *էջ 138*)։ *Թե բառի անվանական արժեքը որոշենք այն, մեր կարծիքով, ճիշտ մոտեցմամբ, քան որի անունն այն նշանն է, որն ունի նշանակություն և անվանված օբյեկտ, որը կոչվում է անվան օբյեկտ կամ առարկա, ապա եղանակային բառերը չեն կարող անուններ համարվել։*

գի լայն իմբռնման դեպքում այդ բնույթի բոլոր բառերն էլ մտածական-դատողական վերաբերմունքի բառեր են։

ղ) Եղանականիշ բառերը սովորական իմաստային լրացումներ չեն. նրանք բառերի հասկացութ յան մեջ եղող իմաստային որևէ նոր կողմ չեն բացահայտում, իմաստային ստորակարգութ յան առանձին աստիճան (առարկա—հատկանիշ—հատկանիշի հատկանիշ...) չեն ներկայացնում։ Դրա համար էլ շարակարգում կապակցման սահմանափակում չունեն, նրանք դրվում են և՛ նյութական, և՛ քերականական նշանակութ յան բառերի, այլև բառակապակցութ յունների ու նախադասութ յունների վրա։

Թվարկված հատկանիշների մի մասը բացասական հատկանիշներ են, որոնցով եղանակավորող բառերը հակադրվում և անջատվում են մյուս խոսքի մասերից։ Հատկանիշների մնացած մասը եղանակավորման կարգը բնութագրում են դրականորեն, այսինքն դրական հատկանիշներ են, որոնցով եղանականիշ բառերը միավորվում են մեկ բառակարգի մեջ։ Թեև բացասական հատկանիշներն ունեն բավականին հատակ բովանդակութ յուն և վերաբերում են եղանականիշ բառերին հավասարապես, ապա դրականները կա՛մ այնքան էլ հստակ բովանդակութ յուն չունեն, կա՛մ ոչ բոլոր եղանականիշ բառերին են հավասարապես վերաբերում։ Այսպես՝ եղանակավորող բառերի «խոսքիմասային» կամ հիմնական բառաքերականական իմաստը համարում են խոսողի մտածական-դատողական սուբյեկտիվ վերաբերմունքի արտահայտումը «այս կամ այն իրողութ յան, առարկայի նկատմամբ», որով էլ եղանականիշ բառերը, որպես մտածական վերաբերմունքի բառեր, միավորվում են մեկ «խոսքի մասի» մեջ։ Բայց, ինչպես նկատված է նաև ռուսագիտութ յան մեջ, այդ տարբերակիչ հատկանիշը իր բովանդակութ յամբ խիստ լայն է և անորոշ։ Այդ հատկանիշով կարող են միավորվել ոչ թե մեկ, այլ մի քանի բառակարգեր կամ «խոսքի մասեր»։ Այլ կերպ՝ եղանականշութ յունը ոչ թե «խոսքի մասի» կամ բառակարգի, այլ «խոսքի մասերի» կամ բառակարգերի հատկանիշ է։

Եղանականիշ բառերը միավորող մյուս դրական հատկանիշը դրանց ամբողջ նախադասութ յանը կամ նրա կառուցվածքում եղող առանձին միավորների (բառ, բառակապակցութ յուն) վերաբերելու գործառական հատկանիշն է։ Այս հատկանիշով էլ եղանականիշ բառերը միատեսակ չեն։ Հիմնականում այդ հանգամանքը նկատի ունի Գ. Ջահուկյանը, որ խոսքի մասերի կազա-

պարային դասակարգման մեջ այս կարգի բառերը բաշխում է առնվազն երեք «խոսքի մասերի» վրա։

Այնուհետև, եղանականիշ բառերը միատեսակ չեն նաև նախադասության մյուս անդամներից իրենց անջատվածության աստիճանով ու սրան համապատասխանող հնչերանգով։ Վերջապես, դրանք տարաբնույթ են ձևույթային, բառակազմական հատկանիշով։ Կապերի պես այս եղանականիշ բառերն էլ միանգամից չեն կտրում կապերն իրենց նախատիպ «լիիմաստ» բառերից, հետևաբար, որքան դեռ մոտ են դրանց, այնքան նրանցում զգալի է նյութական իմաստների, բառի անվանողական արժեքի, ձևույթային վերլուծելիության և այլ հատկանիշների առկայությունը (համմտ. լոկ, սոսկ, միայն, երևի, գուցե, իբր, արդյոք, դժբախտաբար, բարեբախտաբար, ցավոք, կարծեմ և այլն)։

Այս ամենը նկատի ունենալով՝ եղանակավորող բառերից վերը թվարկված այլ կարգի բառերը առանձնացնելուց հետո, պետք է առանձնացնել սաստակական ու սահմանափակման երանգականները։ Բովանդակության պլանում Գ. Ջահուկյանը սրանց վերագրում է «մասնակի եղանակավորող» իմաստ, քանի որ սաստկական անգամ, իսկ, ևեթ, մանավանդ, մինչև անգամ, մինչև իսկ, նամանավանդ, նույնիսկ և սահմանափակման գեթ, գոնե, գոնյա, թեկուզ, լոկ, միայն, միմիայն, սոսկ ու նման բառերը վերաբերում են ոչ թե ամբողջ նախադասությանը, այլև նրա առանձին անդամներին։ Սրանք դրվում են «լիիմաստ» բառերի վրա և սաստկացնում կամ ընդգծում, սահմանափակում կամ թուլացնում են այդ բառերի նշանակությունը։ Հետևաբար, ըստ Գ. Ջահուկյանի մեկնաբանության, այս «եղանակական բառմասնիկները, ի տարբերություն բուն եղանակական բառերի, եղանակավորում են ոչ թե նախադասությունները, այլ առանձին բառեր՝ անկախ դրանց խոսքիմասային բնույթից...»[134]։

Երանգականները, ուրեմն, վերաբերում են ոչ թե ամբողջ նախադասությանը, այլ նրա առանձին անդամներին։ Վերաբերելով նախադասության առանձին անդամների՝ նրանք վերջիններից չեն անջատվում, հետևաբար չեն դառնում միջանկյալ բառեր ու չեն ունենում սրանց համապատասխան հնչերանգ։ Վերջապես, չլինելով հարցուպատասխանական բառեր՝ երանգականներն, ի

---

[134] Գ. Բ. Ջահուկյան, *Ժամանակակից հայերենի տեսության հիմունքները*, էջ 149։

տարբերություն եղանակավորող բառերի, չեն դառնում պատասխանական բառ-նախադասություն. այսինքն՝ կան **երևի, գուցե, հավանաբար, մի՞թե, անկասկած** *պատասխանական նախադասություններ, բայց չկան* **նույնիսկ, անգամ, գեթ, միայն** *նախադասություններ։*

Որոշ վերապահումով սաստկական երանգականներին պիտի միավորել **աճա, աճավասիկ, այ** *ցուցականները, որոնք եղանակավորող բառեր չեն և, «լիիմաստ» բառերի հետ գործածվելով, ընդգծում, առարկայացնում են սրանց նշանակությունը։ Սրանք իրենց շարահյուսական-գործառական հատկանիշներով էլ են ընդհանրանում երանգականներին։*

Սահմանափակման, ընդգծման, առանձնացման երանգականների նշանակությամբ գործածվում են **առանձնապես, առավելապես, բացառապես, գերազանցապես, գլխավորապես, հատկապես, մասնավորապես, պարզապես** *և այլ մակբայները, երբ գործածվում են ոչ թե բայի, այլ «լիիմաստ» այլ բառերի հետ։ Հմմտ.* **առանձնապես Արամը (կարմիր, նա, առագ, երեք)**: *Ինչպես բոլոր երանգականները, սրանք էլ եղանակավորող բառեր չեն։ Բացի այս, վերոհիշյալ մակբայները նույնիսկ այդ ոչ մակբայական գործառույթյան մեջ ամբողջությամբ զրկված չեն իրենց նյութական նշանակությունից և բառակազմական առանձնահատկությամբ էլ հեշտությամբ չեն կարող միավորվել երանգական բառմասնիկներին։ Այդպիսի հանգամանքները նկատի ունի Գ. Ջահուկյանը, որ ածականի, թվականի, մակբայի հետ գործածվող* **մոտավորապես, առտաճապես** *տիպի բառերը, որոնք իրենց գործառույթյամբ շատ են մոտ մեր բերած մակբայներին (հմմտ.* **մոտավորապես** *fսաև (հասկանալի),* **առտաճապես** *գեղեցիկ), առանձնացնում է մյուս նյութական խոսքի մասերից և մակլրացականներ անվամբ ճանաչում է որպես առանձին խոսքի մաս*[135]։

Գալով երանգականների բառ, թե մասնիկ լինելու հանգամանքին, կարելի է ասել հետևյալը։ «Մասնիկ» տերմինը հիմնական նշանակությամբ գործածվում է երկրորդական ձևույթների՝ ածանցների և վերջավորությունների համար, հետևաբար հարմար չէ բառ համարվող միավորներ անվանելու։ Թերևս ավելի հարմար է «բառ-մասնիկ» տերմինը։ Դրանով անվանված միավոր-

---

135 Գ. Բ. Ջահուկյան, *Խոսքի մասերի կաղապարային դասակարգումը («Վրաբեր», 1976, № 1, էջ 23)։*

ները կգիտակցվեն ոչ իբրև մասնիկներ, այլ բառեր։ Այդ տերմինը հնարավոր կլինի գործածել նախ հարացույցների վերլուծական ձևեր բաղադրող և իսկապես մասնիկների դեր կատարող մի՛, պիտի, ավելի տիպի միավորների համար։ Սրանք կանվանվեն ձևաբանական բառ-մասնիկներ։ Այնուհետև այդ տերմինով կարելի է կոչել նաև անգամ, նույնիսկ, գեթ, միայն տիպի միավորները կամ երանգականները, որոնք իրենց գործառական արժեքին համապատասխան կանվանվեն շարահյուսական բառ-մասնիկներ։ Այս անվանումները, որ գալիս են ռուսագիտությունից, ուսուցողական տեսակետից ավելի նպատակահարմար են, քան այդ բառատեսակների համար Գ. Ջահուկյանի գործածած միագործառական բառ-մասնիկներ, տարագործառական բառ-մասնիկներ տերմինները։

Ողանակավորող բառերի մեջ դրվող մնացած երկու տիպի բառերը, որոնցով, ինչպես ասվեց, արտահայտվում է՝ ա) խոսքի բովանդակության և իրականության (դենոտատի) փոխհարաբերությունը՝ ըստ խոսողի հավաստիության կամ իմացության, բ) խոսողի զգացական-գնահատող վերաբերմունքը խոսքի բովանդակության նկատմամբ, ազատ կերպով կարող են բաշխվել եղանականիշ երկու բառակարգի կամ «խոսքի մասի» վրա։ Այդպես է վարվում Գ. Ջահուկյանը և, ինչպես տեսանք, չի սխալվում։ Բայց քանի որ եղանակավորման լեզվական կարգի բովանդակությանն ավելի բնորոշ են համարում խոսքի բովանդակության, այսինքն նրանում հաստատվող կամ մերժվող եղելության իսկության վերաբերյալ խոսողի իմացության կամ հավաստիության տարբեր աստիճանների հաղորդումը (հմմտ. իրոք, անշուշտ, ճարկավ, երևի, գուցե, միթե), իսկ վերոհիշյալ բաժանմամբ իբրև բուն եղանականներ մնում են միայն խոսողի զգացական-գնահատող վերաբերմունքի սակավաթիվ բառեր (հմմտ. բարեբախտաբար, դժբախտաբար, ցավոք), ապա եղանակավորման կարգի բովանդակության մեր սահմանման մեջ՝ բավականին լայն ճանաչում գտած վերոհիշյալ տեսակետին չհակադրվելու համար, ավելի նպատակահարմար ենք գտնում եղանականիշ այս երկու խմբի բառերը միավորել եղանակավորող բառերի մեկ կարգի մեջ։ Այս դասակարգմամբ եղանակավորող բառերի, որպես մեկ բառակարգի կամ «խոսքի մասի», կազմում, իբրև նրա տեսակներ, կմտնեն՝ ա) խոսքի բովանդակության հավաստման և բ) այդ բովանդակության զգացական գնահատման վերաբերմունքի եղանականիշներ։ Այլ

կերպ սրանք կարելի է անվանել խոսքի բովանդակության իսկության հավաստման և գնահատման *եղանակավորող բառեր:*

1. Հավաստման եղանակավորող բառերը լինում են երկու տեսակի՝ հաստատական *և* երկբայական:

Ա) Հաստատական եղանակավորող բառեր են՝ արդարև, անշուշտ, անկասկած, անպատճառ, անտարակույս, անպայման, իսկապես (որ), իմարկե, իրոք (որ), իրավ (որ), հավաստյավ, հարկավ:

Բ) Երկբայական եղանակավորող բառերը լինում են ա) հավանականության կամ թվացողության՝ ասես, *(Հմմտ.* «Ասես Հըրդեհ էր ընկել», «Ասես *բոյովացել, հասակ էինք նետել»),* գուցե, երևի, թերևս, կարծեմ (թե), կարծես (թե), համարյա (թե), միգուցե. *բ) անհավանականության՝* իբր (թե), իբրև (թե). *գ) հարցական՝* արդյո՞ք, մի՞թե, չլինի՞ (թե): *Առավելապես ժխտական բայաձևերի հետ հարցական նախադասություններում գործածվում են նաև* ոն, խոմ, բա *երանգական բառ-մասնիկները (Հմմտ.* ոն չի՞ եկել. խոմ *ճաշ* չէ՞. բա չասացի՞):

2. Գնահատման եղանակավորող բառերը լինում են երկու տեսակի՝ ա) զղջման կամ կարեկցական՝ դժբախտաբար, տարաբախտաբար, ցավոք, *բ) խրախուսական կամ հավանության՝* բարեբախտաբար[136]: *Զղջական իմաստով գործածվում են նաև* ախր, չէ՞որ *բառերը (Հմմտ.* ախր (չէ՞ որ) ոչինչ չգիտի. ախր (չէ՞ որ) *ճաշ* է):

Մեր նպատակից դուրս է եղանակավորման կարգի արտահայտչամիջոցների լայն քննությունը[137]: *Ջմոռանալով եղանակավորող բառերին բնորոշ հնչերանգը, որը արտահայտվում է նրանում, որ դրանք, լինեն պատասխանական բառ-նախադասություն, նախադասության միջանկյալ կամ մեկուսացած անդամ, թե չտրոհված եղանակական, միևնույնն է, ունենում են սեփական շեշտադրություն և առոգանություն. չանտեսելով նաև դրանց շարադասական առանձնահատկությունները, այսինքն՝ եղանակավորող բառերի և նախադասության կառուցվածքից դուրս մնացող ձայնարկությունների ու կոչականների, ապա նաև առաջինների և նախադասության*

---

136 *Զգացական գնահատման եղանակավորող բառերը պատասխանական նախադասություն են դառնում պատասխանական այո՛ և ո՛չ բառերի հետ միասին. այսպես՝* ցավոք, *ո՛չ (այո՛), դժբախտաբար, այո՛ (ո՛չ). բարեբախտաբար, ո՛չ (այո՛):*

137 *Այս մասին տե՛ս* Գ. Բ. Ջանուկյան, *Ժամանակակից հայերենի - տեսության հիմունքները, էջ 355—388:*

կառուցվածքի մեջ մտնող անդամների շարադասական առանձնահատկությունները,— մենք կամենում ենք անդրադառնալ եղանակավորող բառ միավորները նույն նշանակության լեզվական բարձր մակարդակի միավորներից զանազանելու հարցին:

Ինչպես զգացական, հուզաարտահայտչական վերաբերմունքի արտահայտման համար կարող են գործածվել համապատասխան «լիիմաստ» բառեր ու այլ կարգի միավորներ, այնպես էլ մտածական-դատողական վերաբերմունքի արտահայտման համար են գործածվում այդպիսի բառեր ու միավորներ: Բառերի խոսքիմաստային դասակարգում կատարելիս, մեր նպատակը պիտի լինի ոչ թե խոսքիմաստային իմաստների արտահայտման բոլոր կարգի միջոցների քննությունն, այլ բառերի ըստ խոսքիմաստային հատկանիշների վերլուծությունն: Արդ, անկախ այն բանից, թե եղանակավորող բառերը խոսքի մաս, թե այլ կարգի բառատեսակ ենք դիտում, մեկ թե մի քանի խոսքի մաս ենք համարում, բառը պիտի տարբերել լեզվական մյուս միավորներից: Կոնկրետ դեպքում եղանակավորող բառերը պիտի տարբերել այլ խոսքի մասերի պատկանող իրենց համանուն բառերից ու բառաձևերից (հմմտ. **Եթե այդպես կարծես, որոշումդ սխալ կլինի և Կարծես վերադարձել է. Անպատճառ բաժանություն և Անպատճառ կգամ**): Մյուս կողմից՝ եղանակավորող բառերից պիտի առանձնացնել այդ գործառույթամբ հանդես եկող բառակապակցություններն ու նախադասությունները: Սպասարկու այլ կարգի բառերի պես առաջանալով նաև բառակապակցությունների ու նախադասությունների բառայնացմամբ՝ եղանակավորող բառերն այդ պրոցեսի տարբեր աստիճաններում ձևավորման որակական տարբեր բնութագիր են ունենում: Քերականներն իրավացիորեն մեկ հարադրական բառ են համարում եղանակավորող բառի և որևէ շաղկապի հարադրությունը, ինչպես, օրինակ, **իսկապես nr, իրոք nr, իսկ և իսկ, կարծես թե, իբր թե, չլինի՞ թե** և այլն: Սրանց մոտենում և բառային միավոր են դառնում երանդականների շարքին պատկանող **միևնույն, իսկ, միևնույն անգամ** տիպի հարադրությունները: Եղանակավորող մեկ բառի արժեք ունեն **ինչպես չէ, ինչ խոսք, առանց այլևայլության, ամենայն ճշմարտությամբ**, ըստ **էության** տիպի կապակցությունները, որոնք, որպես դերանվան կամ նախդրի և որևէ այլ բառի կապակցություն, ավելի ճիշտ կլիներ մտցնել եղանականիշ կապակցությունների մեջ, այլապես եղանակավորող բառերի բառակազմական-ձևույթային առանձնահատկությունների մասին արված դատողությունները ան-

ԽՈՍՔԻՄԱՍԱՅԻՆ (ԿԱՐԳԱՅԻՆ) ԻՄԱՍՏ ՉՈՒՆԵՑՈՂ ՔԵՐԱԿԱՆԱԿԱՆ-ՎԵՐԱԲԵՐԱԿԱՆ ԵՎ ՀՈՒՉԱՐՏԱՀԱՅՏՉԱԿԱՆ ԲԱՌԵՐԻ ՏԵՍԱԿՆԵՐԸ

հիմն են դառնում։ Առավել ևս մեկ բառ չեն **ինչ էլ լինի, ինչ ուզում է լինի, ինչ գնով էլ լինի, կարող է, կարող է պատահել որ, չի կարող պատահել որ, ինչպես երևում է, ինձ թվում է և այլն** *կազմությունները։ Սրանք թեև ունենում են մեկ եղանակավորող բառի նշանակություն, բայց ձևականորեն շարունակում են պահպանել նախադասության (ստորոգման) կառուցվածքային հատկանիշները, կարող են ենթարկվել բառային ու ձևույթային վերլուծության։ Սրանք նույնանում են է բայական հանգույցով ձևավորվող և եղանակավորման տարբեր իմաստներով գործածվող* **գովելի է (որ), խրախուսելի է (որ), ճիշտ է (որ), զարմանալի է (որ), ցավալի է (որ), անհանդուրժելի է (որ), հավաստի է (որ)** *և այլն կազմություններին, որոնք թեև անդեմ են և ունեն հավաստիություն ու գնահատման եղանակավորող որոշակի նշանակություն, բայց մնում են իբրև «լիիմաստ» բառի և էական բայի ու շաղկապի կապակցություն, ուստի և չեն կարող մեկ եղանականիշ բառային միավոր կամ բառ համարվել։ Իբրև ամփոփում հայերենի խոսքիմասային կամ կարգային բացասական հատկանիշով բնութագրվող բառերի տեսակների մեր դասակարգման, բերում ենք հետևյալ գծապատկերը (տե՛ս էջ 461)։*

Երրորդ գլուխ

ԽՈՍՔԻՄԱՍԱՅԻՆ ԻՄԱՍՏ ՈՒՆԵՑՈՂ ԲԱՌԵՐ ԿԱՄ ՀԻՄՆԱԿԱՆ ԽՈՍՔԻ ՄԱՍԵՐ

Ա) ԱՆԱՆՑ ԿԱՊԱԿՑԻ ՄԱՍԵՐ

1. Ընդհանուր առանձնահատկություններ.— «Իսկ ի՞նչ բան է անունը։ Տարբերիչ նշան, ակնբախ որևէ հատկանիշ, որը ես դարձնում եմ առարկան բնորոշող՝ առարկայի ներկայացուցիչ, որպեսզի այն պատկերացնեմ իմ ընդհանրականության մեջ»[1]։ Ցոյլերբախի՝ անվան այս սահմանումը արժանացել է Վ. Ի. Լենինի հավանությանը։

Ի տարբերություն վերը քննված կապակցական-վերաբերողական (քերականական) և հուզաարտահայտչական նշանակության ոչ «լիիմաստ» բառերի, նախադասության անդամ եղող, լեզվի ճանաչողական-մտածական գործառության «լիիմաստ» բառերը բնութագրվում են բառաքերականական մի շարք առանձնահատկություններով։ Այդ բառերը բաժանվում են երկու խմբի՝ **անուններ** *և* **դերանուններ:**

Տեսական գրականության մեջ տարբեր լեզվաբանների կողմից մատնանշվում են անվանական բառերի հետևյալ առանձնահատկությունները։

ա) Անվանական բառերն ունեն նյութական և միաժամանակ քերականական նշանակություն։

բ) Նրանց բառային իմաստներն ունեն արտալեզվական որևէ օբյեկտ, այսինքն՝ այդ բառերն արտացոլում են արտաքին աշխարհի առարկաներն ու երևույթները՝ իրենց հատկանիշներով, և սրանց հատկացությունների անուններն են։

գ) Այդ բառերը բառ-անուններ (բառ-սիմվոլներ) են, որոնք իրենց բառային իմաստն արտահայտում են կցորդաբար՝ անուն—առարկա—հասկացություն կամ նշան—նշանակվի—նշանակության մտավոր գործողությամբ։

դ) Այս կարգի «յուրաքանչյուր լիիմաստ բառային նշան (հասարակ անուններ) ատոմի նման իր ներսում կրում է երկու լիցք՝ դրական (նույնացնող, ընդհանուր) և բացասական (դասակարգող,

---

[1] Վ. Ի. Լենին, *Երկեր, հ. 38, էջ 489։*

տարբերակիչ)»[2]։ Իրենց բառային իմաստի այս յուրահատկության շնորհիվ, որպես առարկաների ու հատկանիշների տեսակի հասկացության անուններ, այդ բառերը դառնում են լեզվի բառապաշարի անվանական բառաիմաստաբանական տարր։

ե) Նրանց իմաստային կառուցվածքը բնութագրվում է որպես բառային, մասնակի քերականական, խոսքիմաստային և ածանցյալ (բառակազմական) իմաստների ամբողջություն։ Ընդ որում, ա) բառային իմաստը տարբերակում է բառույթները՝ ընդհանրացնելով տեսակի բառ-հատկացությունը. բ) մասնակի քերականական իմաստները տարբերակում են բառաձևերը և ընդհանրացնում տարբեր բառույթների նույն ձևերը. գ) խոսքիմաստային իմաստը տարբերակում է բառակարգերը. դ) ածանցյալ իմաստը ցույց է տալիս բաղադրված բառերի բառային և քերականական իմաստների հարաբերությունները[3]։

զ) Անվանական բառերը ունեն անկախ գործածություն և դառնում են նախադասության անդամ։

է) Դրանք լեզվի կապակցվող միավորներ են և իրենց լրացական փոխհարաբերություններում արտացոլում են բառային իմաստների ստորակարգությունը (առարկա—հատկանիշ—հատկանիշի հատկանիշ)։

ը) Նախադասության մեջ սրանք պաշտոններ են ստանում ըստ իրենց բառային իմաստների. ընդ որում՝ անվանական բառերի վարած հիմնական (առաջնային) պաշտոնները պայմանավորված են նրանց բառային հիմնական (կայուն) իմաստներով։

թ) Ըստ շարակարգում ունեցած իրենց գործածության՝ անվանական բառերը ձևափոխվում են և, ձեռք բերելով համապատասխան քերականական հատկանիշներ, դառնում են լեզվի կառուցվածքի բառաքերականական տարր։ Ձևափոխությունը կամ թեքումը տարբեր անուն խոսքի մասերում տարբեր ծավալ ու ընդգրկում ունի։

ժ) Բառակապակցության մեջ անուններն ունեն շեշտ կրելու իրենց յուրահատկությունը։

ժա) Անվանական բառերն ունեն հիմնույթային արժեք և բառակազմություն։ Բացառությամբ քանակական թվականների, ա-

---

[2] *Տե՛ս* Уфимцева А. А., Слово в лексико-семантической системе языка, էջ 71։

[3] *Տե՛ս* В. В. Виноградов, Русский язык, էջ 15։

նուններն, ի տարբերություն լեզվի ոչ անվանական, միայն վերարտադրվող բառերի, նաև արտադրվող բառեր են։

Բառերի խոսքիմաստային դասակարգման մեջ, երբ դասակարգիչ հատկանիշ ենք համարում խոսքիմաստային իմաստը, թե՛ տեսական, թե՛ գործնական նկատառումներով կարևոր է դառնում «խոսքիմաստային իմաստ» հասկացության լեզվաբանական ըմբռնումը։

Մենք քանիցս վերահաստատել ենք խոսքի մասերը նախադասության մեջ տարբեր պաշտոններում քերականորեն մասնագիտացած բառակարգեր ճանաչելու տեսակետը։ Այդ ըմբռնմամբ բառային և խոսքիմաստային իմաստների կապը մասի և ամբողջի սովորական հարաբերություն չէ. բառային իմաստը խոսքիմաստային իմաստի մասնավոր դրսևորումը չէ, խոսքիմաստային իմաստն էլ ոչ թե բառային իմաստների ընդհանրացում է, այլ այդ իմաստների հիման վրա նրանց մշտապես ստանձնած հիմնական (առաջնային) գործառույթունների իմաստային ընդհանրացումն է։ Հետևաբար խոսքիմաստային իմաստները բառային իմաստների կապակցելիության և լրացականության քերականական (շարահյուսական) հատկանիշներն են։ Խոսքիմաստային իմաստները, լինելով բառերի գործառական բաշխման հետևանք, միաժամանակ իրենց հերթին պայմանավորում են այդ բաշխումը և նրան զուգորդող քերականական մասնակի հատկանիշների ողջ համակարգը։ Բառային և քերականական (ձևաբանական և շարահյուսական) հատկանիշների իրենց այս փոխպայմանավորվածությամբ է, որ խոսքիմաստային իմաստները, ըստ որի և խոսքի մասերը դառնում են բառաքերականական կարգեր։

Տարբեր լեզուների, մասնավորապես հնդեվրոպական լեզուների համար հանրույթային արժեք ունեն առարկայականության, գործընթացային (փոփոխվող) հատկանիշի, կայուն (անփոփոխ) հատկանիշի և հատկանիշի հատկանիշի խոսքիմաստային իմաստները։ Հայ քերականագիտությունը ևս այս կարգային չորս հատկանիշների հիման վրա հայերենի անվանական բառերը բաշխում է չորս խոսքի մասերի՝ գոյական, բայ, ածական, մակբայ։ Կայուն (անփոփոխ) հատկանիշի ներսում դասակարգիչ արժեք տալով որակական հատկանիշ—քանակական հատկանիշ տարբերակմանը՝ ավանդական քերականությունը հայերենում ածականից տարբեր խոսքի մաս է ճանաչում նաև թվական անունը։

2. Գոյական անուն.— Առարկա կամ առարկայական հատկացություն անվանող բառերը կոչվում են գոյական անուն։

Առարկայականությունը, որպես խոսքիմասային իմաստ, գոյականի բառաքերականական, շարահյուսական առանձնահատկություն է։ Հայերենում այն գիտակցվում է որպես ինքնին գոյություն ունեցող կամ այդպիսին մտածված, հատկանիշ կրող, թվի, հոլովի, դասի, առկայացման քերականական առանձնահատկություններ ունեցող հասկացություն։ Նախադասության մեջ գոյականի կատարած հիմնական (առաջնային) պաշտոնները ենթակայի և խնդրի պաշտոններն են, թեև այն ամենաբազմազան պաշտոններ վարող խոսքի մաս է։


Տարբեր պաշտոններում գոյականի առարկայականության տրրամաբանական առանձնացումը թելադրում է ո՞վ կամ ի՞նչ հարց։ Ըստ որում՝ ո՞վ-ը անձի անուն առարկայի դասանիշ հարց է, իսկ ի՞նչ-ը՝ իրի։

Հատուկ և հասարակ անուններ.— Գոյական անվան տարբեր իմաստային խմբերում բառային և խոսքիմասային (կարգային) իմաստների փոխհարաբերությունները տարբեր են։ Դեռևս միջնադարում, նկատելով հատուկ և հասարակ անունների իմաստային տարբերությունները, հայ քերականները կասկած էին հայտնում դրանք մեկ խոսքի մասի մեջ մտցնելու ճշտության մասին։ Գոյականի այս տեսակները, առարկայականության կարգային հատկանիշի իրենց ընդհանրությամբ միավորվելով մեկ խոսքի մասի մեջ, այսուամենայնիվ, մնում են իմաստային տարբեր բառատեսակներ։

Հասարակ գոյական անունները առարկաների տեսակի անուններ են։ Լինելով նույն տեսակի բոլոր առարկաների անուն՝ նրանք այդ անվանական ընդհանրացումը կատարում են առարկաները նույնացնող, ընդհանրացնող հատկանիշի հիման վրա։ Այս ընդհանրացմամբ հասարակ անունները միաժամանակ անվանապես տարբերակում, դասակարգում են գոյականի տեսակներն իրարից։ Ծառ անվամբ միավորվում են բույսի որոշակի հատկանիշներ ունեցող բոլոր առարկաները. սրանով իսկ վերջիններս անջատվում, տարբերակվում են այլ հատկանիշներով միավորված և միաժամանակ իրարից տարբերակված խոտ, տուն, մարդ և այլն անվանված առարկաներից։ Հետևաբար ծառը ոչ միայն այն բույսն է, որն ունի իրեն հատուկ այս-այս հատկանիշները, այլև այն բույսն է, որը չունի մյուս բույսերին ու առարկաներին հատուկ այս ու այն հատ-

կանիշները։ Հասարակ անունները իրենց իմաստային կառուցվածքում ունեն անուն–առարկա–հասկացություն մտավոր գործողության կատարյալ դրսևորումը։ Նրանք կատարում են անվանական-մտածական դեր։

Հատուկ գոյական անուններ եզակի առարկաների, անձերի անուններ են։ Սրանք տրվում են նույն տեսակի առարկաներին ու անձերին՝ վերջիններս իրարից տարբերելու համար։ Հատուկ անունները չունեն իմաստային այն կառուցվածքը, ինչ հասարակ անունները։ Նրանք, ինչպես քանիցս նկատել ենք, շատ լեզվաբանների կողմից ճանաչվում են որպես թերիմաստ կամ, նույնիսկ, բառային հասկացական իմաստից զուրկ բառեր։ Եթե ուսուցիչ հասարակ անունը իր բառային իմաստում ընդհանրացնում է ուսուցանելու՝ դասատվության հատկանիշը, ըստ որի ուսուցիչ են անվանվում այդ զբաղմունքի տեր բոլոր անհատները, ապա Դրիգոր հատուկ անունը չունի բառային իմաստի այդ հասկացական ընդհանրացնող «լիցքը», դրա համար էլ ամեն մասնագիտության տեր մարդ կարող է անվանվել Դրիգոր, ինչպես և ամեն մի Դրիգոր կարող է վերանվանվել մի այլ անվամբ։ Իրենց իմաստային այդ յուրահատկության շնորհիվ հատուկ անունները լեզվում կատարում են միայն անվանական-ճանաչողական դեր։ Այսուամենայնիվ, ինչպես իրավացիորեն նկատել են հատուկ անվան իմաստի քննությամբ զբաղվող ռուսագետները (Մ. Ի. Պրիվալովա, Լ. Մ. Շեհտինին, Օ. Կ. Ժդանով), այս տիպի անունների բառային իմաստին միանգամայն օտար չէ առանձին ընդհանուր հատկանիշների բովանդակումը։ Այսպես, օրինակ, անձի հատուկ անունը (ազգանունը) բացի առանձին կոնկրետ մարդ մատնանշելուց, արտահայտում է նաև անձի, որոշակի ազգային պատկանելության, սեռի ընդհանուր հատկանիշներ։ Հետևաբար հատուկ անվան իմաստային բովանդակությանը բնորոշ են եզակի և ընդհանուր անվանական նշանակության տարրերը։ Եզակի-անվանական նշանակությանը բնորոշ է միայն անուն կրող առանձին եզակի օբյեկտին վերաբերելը, ընդհանուր նշանակությանը բնորոշ է իրականության առարկաների և երևույթների նույն տեսակի բոլոր օբյեկտներին հավասարապես վերաբերելը։ Հասարակ և հատուկ անուններում այս եզակի-անվանական և ընդհանուր-անվանական իմաստային տարրերը հակադարձ հարաբերության մեջ են։



Հասարակ անվան փոխանցումը հատուկ անվան և հակառակը տեղի են ունենում որպես հետևանք այդ անունների իմաստային վերոհիշյալ բնութագրերի փոխանցման։

Հատուկ անունների քերականական տարբերությունը հասարակ անուններից այն է, որ նրանք իբրև կանոն հոգնակի թվով չեն գործածվում։

Քերականական այս մասնակի հատկանիշի և բառային իմաստի հասարակ անուններից ունեցած իրենց վերոհիշյալ էական տարբերություններով հանդերձ հատուկ անունները հասարակ անունների հետ կազմում են մեկ գոյական անուն խոսքի մաս։ Բառերի այս տեսակները մեկ խոսքի մասի մեջ միավորողը նրանց առարկայականության խոսքիմաստային ընդհանուր իմաստն է, որին զուգորդում են այդ անունների ձևաբանական և շարահյուսական մյուս ընդհանրությունները։

Թանձրացական (կոնկրետ) և վերացական գոյական անուններ.— *Գոյական անվան խոսքիմաստային իմաստի արտահայտման բնույթի, գոյականի իմաստային դաշտի տարբեր մասերում ընկած բառատեսակների փոխհարաբերության, գոյականի այլ խոսքիմասերի փոխանցվելու ելևէջները հիմնականում պայմանավորված են նրա իմաստային ներքին տարբերակումներով։ Գոյականի այս կարգի ամենաընդհանուր դասակարգումներից մեկը նրա ներսում թանձրացական (կոնկրետ) և վերացական գոյականների զանազանումն է։*

Թանձրացական գոյականներն *անվանում են կամ իրական առարկաներ՝* **սեղան, մատիտ, բան, մկրատ, fur, ծառ, գնացք, մե-**

---

[4] *Համմ* **О. К. Жданов,** Метономическое словообразование на основе имен собственных, Казань, 1963, էջ 18:

fեեա, կամ զգայական ընկալման առարկաներ՝ ջուր, ճող, դաշտ, աՆառա, կրակ, fամի, ձայն, լույս: Վերջիններս, ինչպես նաև անձերի ու կենդանիների անունները (fույr, տղա, բժիշկ, կով, արջ), սովորաբար առարկայի անուն չեն ասվում, բայց, իրական առարկաների անունների պես լինելով նյութական և զգայական ընկալմամբ ճանաչվող հասկացությունների անուններ, կազմում են թանձրացական գոյականների հիմնական մասը:

Վերացական գոյականներն անվանում են հատկանիշի, գործողության, հարաբերության և այլնի վերացական հասկացություն. ինչպես, օրինակ, սեr, գութ, եռանդ, fաճակ, nրակ, ժամ, տարի, շաբաթ, սպիտակություն, գեղեցկություն, կոիվ, ծեծ, շարժում, մետr, կիլոգրամ, զարգացում, ձեղափոխություն, վաճառf, վերաբերմունք, գործարf և այլն: Սրանք նյութական (իրական, զգայական) առարկաների հասկացություններ չեն և, իրականում վերջիններից անկախ գոյություն չունենալով հանդերձ, գիտակցվում են որպես ինքնին գոյություն ունեցող առարկայական հասկացություններ: Միջնադարի հայ քերականները, թեև ոչ այնքան գիտական հիմունքով, թանձրացական գոյականները համարում էին զգայական ընկալմամբ իմացվող, այսինքն՝ զգայելի առարկաներ, իսկ վերացականները՝ մտքով իմացվող, այսինքն՝ իմանալի առարկաներ:

Այս տարբերակումը ուսուցողական տեսակետից թեև հարմար է, բայց հիմնավոր չէ, քանի որ ամեն զգայելի առարկա նաև իմանալի է, իսկ ամեն մտավոր կամ իմանալի «առարկա» անցնում է զգայական ընկալմամբ:

Թանձրացական գոյականները, լինելով իրական-զգայական առարկաների անուններ, կազմում են գոյական անունների բառապաշարի միջուկը: Սրանցում գոյականի առարկայականության կարգային իմաստը վերացարկված է նյութական նշանակություն ունեցող գոյականների բառային իմաստներից:

Վերացական գոյականները, լինելով ոչ առարկաների, այլ վերացական հասկացությունների անուններ, կազմում են գոյական անունների բառապաշարի արտաքին շերտը: Սրանց բառային իմաստները իրական առարկաների հասկացություններ չեն: Սրանցում գոյականի առարկայականության կարգային իմաստը քերականական արտահայտում ունի, այսինքն՝ պայմանավորված է այդ անուններում գոյականի քերականական հատկանիշների առկայությամբ: Սեr, կարոտ, ճույզ, ճույս, խիղճ, գութ, խանդ, փափագ,

վախ, սաւսափ, ցավ, կսկիծ, վիշտ, թախիծ մարդու հոգեկան ըմբռնման կամ վերաբերմունքի հատկանիշներ են։ Թեև այս և մյուս արմատական վերացական գոյականների իմաստային առանձնահատկութիւնները արտահայտվում են դրանց արմատներով, բայց և այնպես դրանք գոյականներ են ոչ թե իրենց բառային իմաստի առարկայականութիւնով, այլ իրենց քերականական հատկանիշներով. սրանցում գոյականի առարկայականության կարգային իմաստը fեռականական դրսևորում ունի։

Վերացական գոյականների մեծ մասը բաղադրյալ բառեր են՝ կազմված բայերից և ածականներից։ Կան և թվականներից կազմված գոյականներ։

Այդպիսի գոյականներում վերցվում են՝

ա) գործողութիւնն իբրև առարկա, օրինակ՝ խրախուսանք, տանջանք, գալուստ, հանգիստ, գովեստ, կարծիք, ավետիք, վարմունք, զբաղմունք, հարված, դարձված, էշէշոց, խշխշոց, հաղորդություն, փրկություն, ժխտում, հաստատում, ելույթ, հավաքույթ, գեկույց, ծնունդ, արբունք, գովք, լվացք, ընթացք, սուտգարք, գործարք.

բ) որակական հատկանիշն իբրև առարկա, օրինակ՝ մեծություն, լավություն, fաղաfականություն, արագություն, չարիք, բարիք, լայնք, երկայնք.

գ) քանակական հատկանիշն իբրև առարկա, օրինակ՝ տասնորդ, fառորդ, յոթնյակ, fառյակ, երկվություն, երեքնուկ, fառասունք, ութերորդցի։

Նման գոյական անուններում առարկայականության կարգային իմաստն արտահայտվում է բառակազմական ձևույթներով (ածանցներով)։ Այդ վերջածանցները բայարմատներից, բայահիմքերից, ածականներից ու, մասամբ, թվականներից կազմում են գոյականներ և, սրանց գործընթացային և հատկանշային կարգային իմաստները վերածելով առարկայականի, կատարում են բառակազմական խոսքիմաստակերտ կամ խոսքիմաստակազմիչ դեր։ Իհարկե, բայից և ածականից բաղադրված վերացական գոյականների՝ շարակարգում դրսևորած ձևաբանական և շարահյուսական առնձնահատկութիւնները չեն դադարում սրանց կարգային իմաստի արտահայտման քերականական հիմնական միջոց լինելուց, բայց և այնպես այդ բառերը շարակարգից դուրս էլ, բառային մակարդակում արդեն առարկայական ըմբռնում ունեն և գոյական են։

Այս տիպի բառերի բառային (հատկանշային) իմաստի և քե-

րականորեն արտահայտված կարգային (առարկայական) իմաստի միջև եղած անհամապատասխանությունը վերանում է, երբ այդ բառերն սկսում են գործողության, հատկանիշի փոխարեն իրական առարկա անվանել, կամ այլ կերպ՝ գործողությունը կամ հատկանիշը այս բառերում դառնում է առարկայի անուն։ Այս դեպքում վերացական գոյականը փոխվում է թանձրացական գոյականի, որի մեջ բառային իմաստի և կարգային իմաստի այդ անհամապատասխանությունն այլևս չկա։ Աշխատանք, լվացք, ժողով, ելույթ, զեկույց, քչքշոց, բարիք, հարստություն եթե նշանակում են աշխատելը, լվացք անելը, ժողով անելը, ելույթ ունենալը, զեկույց տալը (զեկուցելը), *չխչխալը,* բարի գործ անելը, հարուստ լինելը, *ապա վերացական գոյականներ են, որոնցում գոյականի առարկայականության կարգային իմաստը բառակազմական, քերականական դրսևորում ունի և չի համապատասխանում այդ բառերի բառային իմաստին։ Բայց երբ* աշխատանք *նշանակում է աշխատելու արդյունքը, ստեղծագործությունը,* լվացք՝ *լվանալու կամ լվացած շորերը,* ժողով՝ *ժողովականները,* ելույթ, զեկույց՝ *արտահայտած մտքերի շարադրանքը,* չխչխոց՝ *քչքշալու ձայնը,* բարիք, հարստություն՝ *ունեցվածքը, ձեռք բերած նյութական միջոցները, ապա այս դեպքում գործողությունը կամ հատկանիշը վերցվում է որպես իրական առարկայի, անձի անուն (ինչպես* արբիչ, ուսուցիչ, ծնող, գրող, գնացք, դեղնուց, կարմրուկ, եղյակ *բառերում)։ Սրանք արդեն թանձրացական գոյականներ են, որոնցում բառային և խոսքիմաստային իմաստների անհամապատասխանություն այլևս չկա։ Նայած այն բանին, թե խոսքիմաստակերտ ածանցը բառակազմական ինչ արժեք ունի, ըստ այդմ՝ բայերից, ածականներից ու թվականներից կազմված գոյականները լինում են կա՛մ թանձրացական, կա՛մ վերացական գոյականներ։ Հաճախ այս տիպի բաղադրյալ գոյականները գործածվում են և՛ վերացական, և՛ թանձրացական նշանակություններով։ Ինչպես իմաստաբանական այլ բնագավառներում, այս դեպքում էլ ազատորեն գործում է իմաստափոխության օրենքը։ Այսպես, օրինակ, գնացք ոչ վաղ ժամանակներում նաև վերացական գոյական էր (շարժում, ընթացք նշանակությամբ) և ասվում էր՝* «Անդրտիբեյան հավատացյալները հարեցին գնացքին», «Գրնացքը վերջապես կանգ առավ կրկեսի և Վատիկանյան բլրի մեջտեղ»։ *Այժմ բառի այդ իմաստը եթե ոչ մեռած, ապա հնացած է։*

Վերացական և թանձրացական գոյականների իմաստային այս տարբերությունները հաշվի չառնելու դեպքում,

առանց այն էլ որոշ պայմանականությամբ տարբերակվող գոյականի այս տեսակներն ու սրանց իմաստները կարող են շփոթվել։ Այսպես՝ -ություն վերջածանցը այլ խոսքի մասերից վերացական գոյականներ կազմող ամենագործածական ածանցն է։ Կազմելով հավաքական գոյականներ՝ -ություն ածանցը այդ բառերի գոյական բաղադրիչին տալիս է նաև հատկանշային արժեք, հետևաբար վերացական գոյականներ է կազմում նաև գոյականներից։ Աշակերտություն, ուսուցչություն, բանվորություն, նախագահություն երբ նշանակում են աշակերտների, ուսուցիչների, բանվորների, նախագահության անդամների ամբողջություն, հավաքական գոյականներ են՝ իրենց իմաստային կառուցվածքով և առարկայական նշանակությամբ թանձրացական գոյականներ։ Իսկ երբ այդ բառերը համապատասխանաբար նշանակում են աշակերտ լինելը, աշակերտելը, ուսուցիչ, բանվոր լինելը, ուսուցչություն, բանվորություն անելը, նախագահելը, նախագահություն անելը, ապա վերացական գոյականներ են և սրանց առարկայականության կարգային իմաստը ունի միայն բառակազմական, քերականական դրսևորում։

Վերացական գոյականներն ունեն քերականական մասնակի առանձնահատկություններ. ա) սովորաբար չեն գործածվում հոգնակի թվով, բ) չեն ունենում թվական լրացում, գ)-ություն վերջածանցով կազմվածները հոլովվում են ներքին ա, ում-ով կազմվածները՝ արտաքին ան, իսկ ժամանակի անունները՝ վա հոլովմամբ։ Սակայն այս հատկանիշները ո՛չ առանձին-առանձին, ո՛չ էլ միասին վերցրած չեն կարող վերացական գոյականները թանձրացականներից տարբերելու դասակարգիչ արժեք ունենալ։ Հոգնակի թիվ և թվական լրացում սովորաբար չեն ունենում նաև հատուկ անունները, նյութ ցույց տվող գոյականները (ծծումբ, թթվածին, ալյուր, կաթ, մեղր, ջուր). ա ներքին հոլովմամբ հոլովվում են նաև ություն-ով կազմված թանձրացական գոյականները (հիմնարկություն, կոլտնտեսություն, պետություն)[5]։

Բացի այս, վերոհիշյալ քերականական հատկանիշները յուրահատուկ են ոչ բոլոր վերացական գոյականներին, կամ սրանց ոչ բոլոր կիրառություններին։ Այսպես, օրինակ, ժամանակի, չափ ու կշռի անուն գոյականները (ժամ, օր, կիրակի, շաբաթ, ամիս, տա-

---

[5] Հմմտ. Մ. Աստուրյան, *Ժամանակակից հայոց լեզվի ձևաբանության հարցեր*, Ա, էջ 115—121։

րի, դար, մետր, սանտիմետր, կիլոմետր, լիտր, գրամ, կիլոգրամ, տոննա) գործածվում են միայն թվական լրացումով (երկու ժամ, հինգ գրամ, տասը լիտր), իսկ առանց այդպիսի լրացման գործածվելիս, սովորաբար վերցվում են հոգնակի ձևով (օրեր, տարիներ, կիլոմետրեր): Այս քերականական հատկանիշները նկատի առնելով՝ լեզվաբանները վերացական գոյականները բնութագրելիս հաճախ ժամանակի, չափի ու քանակի անուն գոյականները շրջանցում են: Բայց մի՞թե դրանք վերացական գոյականներ չեն:

Իրենց բառային իմաստով լինելով ոչ թե առարկաների, այլ գործողության, հատկանիշի, վիճակի, հարաբերությունների անուններ՝ վերացական գոյականներն, ինչպես ասվեց, կազմում են գոյական անվան իմաստաբանական դաշտի արտաքին, սահմանային շերտը: Չունենալով առարկայականության իմաստային ծանրաբեռնվածություն՝ վերացական գոյականներն ավելի ազատ ու հաճախ են ունենում պարագայական գործածություն: Նույն շարակարգում գոյական անվան գործիական հոլովաձևի խնդրի, թե՞ պարագայի պաշտոնում գործածվելը բացառապես պայմանավորված է նրա բառային իմաստով: Համեմատեցեք **Առամը մեկնեց նավով** *(նիով, ինքնաթիռով, մեքենայով, գնացքով) և* **Առամը մեկնեց գիշերով** *(ցերեկով, երկու տարով, հանձնարարականով, դժվարությամբ, ուրախությամբ, դժկամությամբ) օրինակները:*

Երբ գոյականի այս կարգի հարացուցային ձևերի հիմնական գործածությունը դառնում է պարագայական գործածությունը (իսկ այդ հաճախ է տեղի ունենում), ապա փոխվում է այդ բառաձևերի իմաստային կառուցվածքը: Պարագայական մշտական պաշտոնում վերածվելով գործողության հատկանիշի՝ դրանք դառնում են մակբայ:

Վերացական գոյականների ժամանակի, տարածության, քանակի, հարաբերության բառային իմաստներն իրենց ընդհանրական բնույթով, ինչպես նկատված է շատերի կողմից, մոտենում են քերականական իմաստների: Այդ կարգի գոյականները (տեղ, չափ, ժամանակ, պատճառով, մասին և այլն), հաճախակի գործածվելով կապակցական բառերի դերով, հեշտությամբ փոխանցվում են կապերի:

Խոսքիմաստային փոխանցումները բառերի այլ խոսքի մասերի գործառության անդրադառնալու երկարատև գործընթացի հետևանքն են: Նախորդ խոսքի մասի հատկանիշների կորուստը և նորի հատկանիշների ձեռք բերումը միանգամից տեղի չի ունենում: Այդ ըն-

թացքում փոխանցվող բառաձևը որոշակի ժամանակաշրջանում շարունակում է իր մեջ համատեղել տարբեր խոսքի մասերի գործառական և սրանցով պայմանավորվող քերականական հատկանիշները։ Խոսքիմասային այս անտարորոշությունը կամ բազմիմաստությունը վերանում է միայն այն ժամանակ, երբ բառաձևը կըտրում է իր իմաստային և գործառական կապերը նախորդ խոսքի մասի հետ։ Խոսքիմասերի փոխանցման շարժումը ունի լեզվական ինչպես նպաստող, այնպես էլ արգելակիչ գործոններ։ Վերացական գոյականներում եթե առարկայական հասկացության վերացականությունը նպաստող գործոն է սրանց՝ մակբայի կամ կապի փոխանցվելու համար, ապա փոխանցվող գոյականի հարացուցային ձևը և նրանով արտահայտված քերականական իմաստները արգելակիչ գործոններ են այդ անցման համար։ Եթե ժամանակակից հայոց լեզվում մասամբ, դիտմամբ միայն մակբայներ են, գուցե, երևի՝ միայն եղանակավորող բառեր, ճանճին, ճկատմամբ, շնորհիվ՝ միայն կապեր, ապա այդ այն պատճառով, որ հայերենի արդի փուլում սրանք այլևս հոլովման ու խոնարհման հարացույցների ձևեր չեն և այդ կարգի քերականական իմաստներ չեն պարունակում։

Վերոհիշյալ գոյականների խոսքիմասային փոխանցումներին նպաստել է հայերենի հոլովման և խոնարհման հարացույցների պատմական ձևափոխությունը։

Այլ է փոխանցման պատկերը այն բառաձևերում, որոնք պահպանում են իրենց հարացուցային ձևը և սրա համապատասխան իմաստները։ Այս դեպքում կա՛մ փոխանցում տեղի չի ունենում, այլ տվյալ խոսքի մասի այս կամ այն բառաձևը իր հիմնական գործածությանը զուգահեռ երկրորդաբար կատարում է նաև այլ խոսքի մասի դեր, կա՛մ էլ բառաձևից այլ կիրառությամբ առաջանում է համանուն նոր բառ՝ խոսքիմասային նոր նշանակությամբ։

Ինչպես բառային բազմիմաստության ու համանունության փոխհարաբերության մեկնաբանությունը, այնպես էլ խոսքի մասերի փոխանցմամբ նոր համանուն բառերի առաջացման երևույթի մեկնաբանությունը որոշ չափով պայմանական հիմունք ունեն։ Խոսքիմասային իմաստները բառերի սոսկ քերականական-շարահյուսական ընդհանուր իմաստներ համարելու մոտեցումով առաջնորդվելիս, մենք այստեղ գործ կունենանք նույն բառի կամ բառաձևի խոսքիմասային տարբեր կիրառությունների հետ։ Այլ կերպ՝ բառի ինչ խոսքի մասի պատկանելը միշտ կորոշենք նախադասու-

թյան մեջ։ Այսպես՝ գիշեր բառը «Գիշերով գնաց» նախադասության մեջ մակբայ է, իսկ «Դա չի կարելի բացատրել գիշերով» նախադասության մեջ՝ գոյական։

Խոսքիմասային իմաստները բառային իմաստներով պայմանավորված, բստի և բառային կամ բառաքերականական կարգեր համարելու մոտեցմամբ առաջնորդվելիս, նույն հստակությամբ չենք կարող ասել, թե գիշերով բառաձևը վերոհիշյալ նախադասություններում ի՞նչ խոսքի մաս է։ Մի մեկնաբանությամբ գիշերով-ը գիշեր գոյականի գործիական հոլովն է՝ «Դա չի կարելի բացատրել գիշերով» նախադասության մեջ վերցված իր բուն՝ գոյականական կիրառությամբ, իսկ «Գնաց գիշերով» նախադասության մեջ վերցված գոյականի ոչ հիմնական (ոչ առաջնային), այլ մակբայական կիրառությամբ։

Երկրորդ մեկնաբանությամբ «Գիշերով գնաց» նախադասության մեջ «գիշերով»-ը այլևս գոյականի հոլովաձև չէ։ Այն ձևաբանորեն անտրոհելի, բառային և խոսքիմասային ինքնուրույն արժեք ունեցող միավոր է՝ գիշեր գոյականի գիշերով հոլովաձևից առաջացած համանուն մակբայ։ Այս մոտեցմամբ վերացական գոյականների համապատասխան հոլովաձևերից առաջացած ինքնուրույն բառ միավորներ են ճանաչվում կեսօրին, կեսգիշերին, ցերեկով, վերջում, սկզբում տիպի մակբայները, պատճառով, նպատակով, հետևաճոխ, ձեռով, ուղղությամբ, երեսից, մասին, ժամանակ, հաշվին, պատվին, միջոցին և այլ կապերը[6]։

Հարցի առավել հիմնավոր քննությունն իր ժամանակին կատարել է Մ. Աբեղյանը։ Նա պարագայի պաշտոն վարող գոյականներին կոչում է պարագայական խնդիրներ՝ դրանք տարբերելով և՛ բուն պարագաներից, և՛ առարկայական խնդիրներից։ Նրա կարծիքով, դառնալով բայի լրացում պարագա՝ գոյականները զրկվում են իրենց առարկայական իմաստից, բայց դրանով դեռևս չեն դառնում «իսկական պարագա կամ մակբայ», «...որովհետև պահում են իրենց հոլովական ձևերը և հոլովների հատուկ նշանակությունները»[7]։ *Ոստի և «Գիշերով գնաց» տիպի նախադասության մեջ, Աբեղյանի մոտեցմամբ, գիշերով-ը թեև առարկայական իմաստ չի*

---

[6] *Տե՛ս Ն. Ա. Պառնասյան, Քերականական համանուններ ժամանակակից հայերենում, Երևան, 1970, էջ 96—98։*

[7] *Մ. Աբեղյան, Հայոց լեզվի տեսություն, 1965, էջ 382։*

արտահայտում, բայց և այնպես մակբայ չէ, որովհետև պահում է գործիական հոլովի ձևը և իմաստը։

Նույն հիմունքով կապեր չեն համարվում մոտ, մեջ, վրա, առաջ և այն բառերը, երբ հոդ ունեն կամ վերցված են թեք հոլովաձևերով (մոտը, մոտից, մոտիցս, առաջիս»)[8]։

Ս. Աբրահամյանի, Ն. Պառնասյանի աշխատություններում վերոհիշյալ կարգի գոյականների անցումը մակբայների և կապերի համարվում է ավարտված և արձանագրվում է նոր խոսքիմասային իմաստով համանուն բառերի առաջացումը։

Գոյականի խոսքիմասային փոխանցման հարցի և այս մասին հայտնված կարծիքների հանգամանալից քննություն ենք գտնում Մ. Ասատրյանի «Ժամանակակից հայոց լեզվի ձևաբանության հարցեր» աշխատության մեջ։ Համամիտ լինելով հարցի՝ Մ. Աբեղյանի վերլուծությանը, միաժամանակ կատարելով լրացումներ և հավելումներ, հեղինակը ավարտված է համարում գոյականի անցումը մակբայի այն բառերում, որոնք՝ «1. ... հոգնակի չեն կարող կազմել..., 2. ...որպես կանոն, ենթակայի և խնդրի պաշտոնով հանդես գալ չեն կարող..., 3. ... որպես կանոն, որոշիչներ ընդունել չեն կարող...»[9]։

Ըստ այմ, այսօր, երեկ, վաղը, էգուց, առաջ և նման ժամանակի անունները մակբայներ են, իսկ շաբաթ, ամիս, տարի, կեսօր, գիշեր, ցերեկ (կեսգիշերին, գիշերով, ցերեկով) թեկուզ պարագայական պաշտոնում էլ գոյականներ են։

Մ. Ասատրյանի վկայակոչած տարբերակիչ հատկանիշներին պիտի ավելացնել նաև առկայացման հատկանիշը, որ բնորոշ է գոյականին և մակբայն ունենալ չի կարող։ Գալով այսօր, երեկ, վաղը, ցերեկ ժամանակային, մեջ, վրա, տակ, մոտ, հետու և նման տարածական նշանակություն ունեցող բառերի հոլովական առանձնահատկությանը՝ ի տարբերություն Մ. Աբեղյանի, Մ. Ասատրյանն այդ իրողությունը չի համարում խանգարիչ հանգամանք թվարկված բառերը ոչ թե գոյական, այլ մակբայ և կապ ճանաչելու համար։ Նա իր կարծիքը հիմնավորում է հետևյալ դատողությամբ՝ «Այս բառերի մեջ առարկայականության որոշ հետքեր պետք է տեսնել այնքանով, որքանով որ վերջիվերջո դրանք

---

[8] Նույն տեղում, էջ 385։

[9] Մ. Ասատրյան, Ժամանակակից հայոց լեզվի ձևաբանության հարցեր, Գ., 1977, էջ 224։

հոլովվող բառեր են, բայց պետք է նկատի ունենալ, որ դրանց հոլովական ձևերը՝ այսօր–այսօրվա–այսօրվանից, երեկ–երեկվա–երեկվանից, վաղը–վաղվա–վաղվանից և այլն հանդես են գալիս պարագայական (ուղղական և բացառական) կամ որոշչային (սեռական-տրական) ֆունկցիաներով, այսինքն՝ ոչ առարկայական, ոչ գոյականական ֆունկցիայով»[10]։

Նույն դատողությամբ կապեր են համարվում մեջ–միջի–միջով–միջից, վրա–վրայի–վրայով–վրայից, տակ–տակի–տակով–տակից և այլն տարածական նշանակության բառերի հոլովաձևերը։

Այս կարգի ժամանակային և տարածական նշանակության գոյականների անցումը մակբայների և կապերի ավարտված համարելու դեպքում, սրանց հոլովական առանձնահատկությունը պետք է գնահատել, որպես խոսքիմաստային նոր իմաստ ձեռք բերած այդ բառերի՝ գոյականի հետ ունեցած ստորին կարգի կապ, որ բնորոշ չէ բուն մակբայներին և կապերին։

Այդ կարգի բառերի խոսքիմաստային անցումն ավարտված չհամարելու կամ դրանք դեռևս գոյական անուն ճանաչելու դեպքում, պետք է արձանագրել մակբայի կամ կապի պաշտոնում մշտապես գործածվելու հետևանքով այդ բառերի հոգնակիության, հատկանիշ կրելու, առկայացման քերականական առանձնահատկությունների աստիճանական կորուստ։

Բառերի ու բառաձևերի խոսքիմաստային փոխանցումներն, ըստ Ա. վ. Իսաչենկոյի, արդյունք են այն բանի, որ մի կողմից՝ «...քերականությունն իր ընդհանրացնող, վերացարկող բնույթի շնորհիվ քերականական հարաբերությունների շրջանակն է ներքաշում բառային իրողությունները», իսկ մյուս կողմից՝ «...առանձին քերականական ձևերը անջատվում են իրենց հարացույցից և դառնում են ինքնուրույն բառեր...»[11]։

Իրենց իմաստային կառուցվածքում բառային և տարբեր քերականական իմաստներ խաչավորող անվանական բառերի, այդ թվում և գոյական անունների խոսքիմաստային փոխանցումը, ինչպես տեսանք, ոսնենում է իր նպաստող և արգելակիչ գործոնները և՛ բառային, և՛ քերականական իմաստներում։ Եթե թանձրացական գոյականների իրական առարկայական բառային իմաստը ար-

---

[10] Նույն տեղում։

[11] **Исаченко А. В.**, Грамматический строй русского языка в сопоставлении со словацким, ч. I, էջ 46։

գելակիչ գործոն է նրանց անցմանը այլ խոսքի մասերի, ապա վերացական գոյականների հատկանշային իմաստը նպաստող գործոն է այդ անցման համար։ Եթե գոյականի կենդանի հարացուցային ձևերն ու քերականական իմաստները արգելակիչ գործոններ են այդ անցմանը, ապա հայերենի հարացուցային առանձին հնացած կամ բարբառային ձևեր, կարծես, ձեռք են բերում բառակազմական (խոսքիմաստակերտ) արժեք և նպաստում են գոյականի խոսքիմաստային անցմանը։ Այսպես, օրինակ, ժամանակակից հայերենի գործիականի –ով վերջավորությամբ ձևերին զուգահեռ՝ գրաբարից անցած –ամբ վերջացող ձևերը կա՛մ մակբայ են, կա՛մ հիմնականում մակբայական գործածություն ունեն (հմմտ. մասով–մասամբ, դիտումով–դիտմամբ, հպարտությունով–հպարտությամբ, արագությունով–արագությամբ, ախորժությունով–ախորժությամբ)։ Այդպիսի տարբերակում ունեն բացառական հոլովի –ից և –ուց վերջավորություններով կազմված զուգահեռ ձևերը, ընդ որում՝ –ուց մասնիկը այդ ձևերում կատարում է վերջածանցի դեր (հմմտ. մորից–մորուց, մանուկից–մանկուց, վաղվանից–վաղուց, առավոտվանից–առավոտուց, առաջվանից–առաջուց, փոքրից–փոքրուց)։ Խոսքիմաստակերտ արժեք ունի –ներ հոգնակերտ մասնիկը կարմիր ածականից կազմված կարմիրներ (բոլշևիկներ) գոյականում։ Բառակազմական ձևույթի է վերածվել –եր հոգնակերտը Շողեր, Վարդեր, Վարսեր հատուկ անուններում։

Խոսքիմաստային փոխանցման հիմքում թեև ընկած է բառային իմաստի նպաստող գործոնը, բայց և այնպես չի կարելի չհամաձայնել Ֆ. Տրավնիչեկի հետևյալ դատողությանը. «Բառային իմաստի փոփոխությունները ինքնին երբեք չեն կարող պատճառ դառնալ բառի, որպես խոսքի մասի, իմաստային փոփոխության։ Այդպիսի փոփոխություն կարող է առաջանալ միայն քերականական պատճառներով, ավելի ճիշտ՝ նախադասության կառուցվածքում շարահյուսական փոփոխություններով»[12]։

Այլ կերպ անհասկանալի կմնար բառակազմությունը նույն խոսքի մասի ներսում, որի դեպքում փոխվում է բառային, բայց ոչ խոսքիմաստային իմաստը (հմմտ. լիճ–լճակ, զինվոր–զինվորական, դարբին–դարբնոց, թեյ–թեյարան, ամանամանեղեն, թուր–թրեճի, հայ–հայերեն, նավ–նավորդ, Ֆաղամ–Ֆաղամացի, բանվոր–բանվորություն, մաս–մասում և այլն)։

[12] Травничек Ф., Заметки о «категории состояния», (ВЯ, 1956, № 3, էջ 50)։

Չի կարելի չհամաձայնել նաև Մ. Ֆ. Պավլևսկայայի՝ Ֆ. Տրավնիչեկի վերոհիշյալ դատողությանը միանգամայն հակառակ թվացող հետևյալ մտքին. «Եթե բառի մեջ չկան բառային և քերականական ներքին փոփոխություններ, ապա, հենվելով միայն նրա շարահյուսական գործառության վրա, չի կարելի խոսել նրա մի խոսքի մասից մյուսին փոխանցվելու մասին[13]:

Այլ կերպ մոտենալու դեպքում կանտեսվեր բառերի տարբեր խոսքի մասերի գործառությամբ հանդես գալու լեզվական առանձնահատկությունը, կջնջվեին տարբերությունները խոսքի մասերի հիմնական (առաջնային) և երկրորդական գործածությունների միջև. խոսքիմասային իմաստները կդիտվեին որպես բառային իմաստներից անկախ, սոսկ շարահյուսական իմաստներ:

3. Ածական անուն.— Առարկայի կայուն հատկանիշ անվանող բառերը կոչվում են ածական անուն: Ածականները լինում են երկու տեսակի՝ որակական և հարաբերական:

«Ածական անվան իմաստային հիմունքը որակի հասկացությունն է»[14]: Դրա համար էլ բուն ածականները որակական ածականներն են, որոնք առարկաներին էապես հատուկ, նրանց մեջ եղող ներքին կամ արտաքին որակական հատկանիշների անուններ են (սպիտակ, սև, մեծ, լայն, կարճ, ամուր, ծանր, սառն, չինջ, թեթ, ուղիղ, խաղցր, դառն, բարի, սեգ, խաչ, ազնիվ, ծույլ և այլն):

Առարկային վերագրվող որակային հատկանիշը, որպես խոսքիմասային իմաստ, ածական անվան բառաքերականական, շարահյուսական առանձնահատկությունն է: Շարակարգից դուրս էլ լավ, գեղեցիկ, կարճ, սառն գիտակցվում են որպես առարկայի հատկանիշներ, թեև նախադասության մեջ նրանք կարող են նաև գործողության հատկանիշներ լինել (լավ մարդ—լավ աշխատել, կարճ խոսք—կարճ խոսել, սառն աղբյուր—սառն վերաբերվել, գեղեցիկ արտահայտություն—գեղեցիկ ճագնվել): Ուստի ածականի որակական հատկանիշի խոսքիմասային իմաստը ո՛չ բառային և ո՛չ էլ քերականական, այլ բառաքերականական (շարահյուսական) իմաստ է: «Ձևականորեն այն արտահայտվում է նախ և առաջ գոյականի

---

[13] Տե՛ս Р. А. Маркарян, Типы семантического противодействия в сфере формообразования и словообразования, էջ 315:

[14] Н. С. Волгина, Д. Э. Розенталь..., Современный русский язык, էջ 197:

նկատմամբ ունեցած իր հարաբերությամբ, առանց գոյականի, իրական կամ ենթադրվող, ածական չկա»[15]:

Նախադասության մեջ ածականի կատարած հիմնական (առաջնային) պաշտոնը որոշիչի պաշտոնն է: Ածականը լինում է նաև ստորադելիական վերադիր: Իր հիմնական պաշտոնում ածականի հատկանշայնության գիտակցումը տրամաբանորեն թելադրվում է ինչպի՞սի (ո՞ր, որպի՞սի) *հարց* (Մաfուր (ինչպիսի՞) երկինք):

Որակական ածականը, բայի լրացման պաշտոնում վերցված, դառնում է մակբայ: Այս դեպքում պատասխանում է որակական մակբայի համար առաջադրվող ինչպե՞ս *հարցի* (Մաfուր (ինչպե՞ս) խոսել):

Որակական ածականներն ունեն համեմատության աստիճաններ կազմելու քերականական (ձևաբանական) հատկանիշ (դրական՝ լավ, բաղդատական՝ ավելի լավ, գերադրական՝ ամենալավ, լավագույն): Հատկանիշի համեմատելիությունը ածական անվան մասնակի քերականական հատկանիշ է: Այն չի տարածվում հարաբերական ածականներին. բացի այս, որոշ թվով մակբայների ևս բնորոշ է հատկանիշի համեմատելիությունը (դանդաղ—ավելի դանդաղ—ամենադանդաղ, ուշ—ավելի ուշ—ամենաուշ):

Որակական ածականներին առանձնահատուկ են բառային ու բառակազմական մի քանի հատկանիշներ ևս. նրանք ունենում են՝ ա) փոքրացուցիչ-փաղաքշական և աստիճական նշանակության զուգահեռ ձևեր (սև—սևուկ, սևիկ, փոfր—փոfրիկ, կարճ—կարճլիկ, դժվար—դժվարին, խոր—խորին, մեծ—մեծ-մեծ, լայն—լայն-լայն, երկար—երկար-երկար). *բ) հականիշ ձևեր* (լավ—վատ, հաստ—բարակ, բարի—չար, մեծ—փոfր). *գ)-ություն ածանցով վերացական գոյականներ կազմելու հիմնույթային արժեք* (բարի-բարություն, լավ-լավություն, ուրախ-ուրախություն). *դ) միաձևվույթ արմատական կազմություն* (լավ, մեծ, նեղ, բարձր, պայծառ, կարմիր)[16]:

Այս հատկանիշները նույնպես ածականի, որպես բառաքերականական կարգի, մասնակի հատկանիշներ են, որովհետև բնորոշ չեն հարաբերական ածականներին:

---

[15] **Л. В. Щерба**, Языковая система и речевая деятельность, Ленинград, 1974, էջ 85:

[16] *Հմմտ.* **Н. С. Волгина, Д. Э. Розенталь**... *նշված աշխ., էջ 198:* **Մ. Աասարյան**, *Ժամանակակից հայոց լեզվի ձևաբանության հարցեր, Բ, 1973, էջ 13—17:*

Ժամանակակից հայերենում արմատների բաղադրմամբ հարաբերական ածականներ են կազմվում հետևյալ կաղապարներով՝

գոյական+գոյական (ձյունափայլ),
գոյական+բայահիմք (սրտաբուխ),
գոյական+ածական (անդնդախոր),
ածական+գոյական (բարեսիրտ),
ածական+բայահիմք (կարճատև),
ածական+ածական (ամրապինդ),
մակբայ+բայահիմք (մշտաբուխ),
մակբայ+ածական (մշտադալար)[17]։

Թվական+գոյական (fառագագաթ), *դերանուն+գոյական* (այլաձև) *կաղապարները հավասար են ածական+գոյական կաղապարի, իսկ դերանուն+բայահիմք* (ինքնագնաց, եսասեր, ամեն-օրյա) *կաղապարի բնույթը որոշվում է դերանվան խոսքիմաստային պատկանելությամբ։*

Իրենց կազմում ունենալով ընդհանրապես հատկանիշ նշանակող բաղադրիչներ՝ ածական, բայ, մակբայ, այսպիսի կազմության հարաբերական ածականներն իրենց խոսքիմաստային և մասնակի քերականական հատկանիշներով ավելի հարազատ են որակական ածականներին, քան գոյականներից բաղադրվածները (ալիքաձև, արծվաքիթ, վարդագույն, *ինչպես նաև գոյականի կրկնությամբ կազմված՝* տեսակ-տեսակ, խումբ-խումբ, բլուր-բլուր)։

Նույն երևույթը նկատվում է ածանցմամբ կազմված հարաբերական ածականներում։

Ժամանակակից հայերենում ածականակերտ (խոսքիմաստակերտ) ածանցներով կազմված ածականներում վերցվում են՝

ա) առարկան իբրև կայուն հատկանիշ, օրինակ՝ գյուղական, աշակերտական, ձմեռային, ջրային, լեզվաձի, գեղաձի, պոչատ, գունատ, գործարար, տնարար, երկաթե (երկաթյա), փայտե (փայտյա), համեղ, ճյութեղ, լուսեղեն, հողեղեն, աղի, փայտի, ծովափնյա, նոյյան, երևանյան, շաղոտ, փշոտ, մարդավարի, քուրավետ, սիզավետ, թևավոր, արհեստավոր, դժբախտ, դժգույն, անգութ,

---

[17] *Հմմտ.* Ս. Ա. Գալստյան, *Ածանցումը և ածանցները ժամանակակից հայերենում, Երևան, 1978, էջ 19—25։* Մ. Աստարյան, *նշվ. աշխ., էջ 52—53։ Ընդհանրապես հայերենի խոսքիմաստակազմության կաղապարային բոլոր տիպերը տե՛ս* Տ. Մ. Ավետիսյան, *Ժամանակակից հայերենի բառի կառուցվածքը («Հայոց լեզվի կառուցվածքը», Երևան, 1975, էջ 1—77)։*

անուն, ապերախտ, ապաշնորհ, արտահերթ, տձև, համասեռ, տարաբախտ, տարօրինակ.

բ) գործողությունն իբրև կայուն հատկանիշ, օրինակ՝ կոփածո, ձուլածո, շինծու, ժխտական, կրթական, կծան, ճոճուն, կործանարար, աղմկարար, զայրագին, սպառնագին, քուժելի, հասկանալի, ճնշեղ, շնշեղ, կատաղի, հարգի, ազդեցիկ, շրջիկ, գրավիչ, ճուզիչ, մոռացկոտ, մտածկոտ, կատարյալ, կախյալ, բացովի, կապովի, կեղծավոր, եկվոր, ազդու, կծու, հաշվեառու, դիպուկ, բանուկ, խոսուն, շարժուն, լեցուն, պահունի, գողունի, անաշխատ, անզգա, գերզգա, հակադիր, համաբնակ, վերահաս.

գ) քանակական հատկանիշն իբրև կայուն հատկանիշ (ածական), օրինակ՝ հարյուրավոր, հազարավոր, միլիոնավոր, տասնյակ (տասնյակ մարդիկ), մեկական, երկուական *ու մյուս բաշխական թվականները.* վաթսունական, ինսունական *ու մյուս տասնամյակներ նշանակող թվականները.* երկակի, եռակի, տասնակի, կրկնակի *ու մյուս բազմապատկական նշանակության թվականները.*

դ) հատկանիշի հատկանիշն իբրև կայուն հատկանիշ (ածական), օրինակ՝ մշտական, կամայական, հաճախական:

Թվականները ածական խոսքի մաս համարելու դեպքում նրանց ածանցումը կդիտվի ոչ թե խոսքիմասակազմության, այլ բառակազմության նույն խոսքի մասի (ածականի) ներսում: Թվականն առանձին խոսքի մաս համարելու դեպքում էլ վերոհիշյալ ածանցված թվականները (բացի –ակի *ածանցով կազմվածներից, որոնք հիմնականում մակբայներ են) կմտցվեն թվական խոսքի մասի մեջ: Այնպես որ կարելի է ասել, թե թվականները, իբրև խոսքի մաս, կա՛մ ածականներ են, կա՛մ էլ նրանցից ածականներ չեն կազմվում, նրանց ածանցված ձևերը թվական խոսքի մասի ենթատեսակներ են:*

Մակբայներից ածանցված ածականներն էլ հազվադեպ են: Դրանցում միշտ, հաճախ ու նման մակբայները ածական անվան բաղադրիչի դեր են կատարում՝ նախապես ածականական գործածությամբ վերցված լինելով միայն:

Այսպիսով, ածականի խոսքիմասակազմությանը հիմնականում մասնակցում են գոյականներն ու բայերը: Ինչպես նկատված է, բայերն իբրև (ընթացային) հատկանիշ նշանակող բառեր ավելի մոտ են ածականներին, քան գոյականները: Դրա համար էլ բայերից ածանցմամբ կազմված ածականներում առարկայի հատկանիշը, արտահայտված լինելով ոչ թե որևէ առարկայի հետ ունե-

ցած հարաբերությամբ, այլ բայարմատով արտահայտված գործողության հարաբերությամբ, իր արտահայտման բնույթով ավելի մոտ է որակական ածականներին. որոշ չափով այն համեմատելի հատկանիշ է։ Ուստի և այդ ածականներից շատերը ունենում են համեմատության աստիճաններ արտահայտող ձևեր (ճոճուն—ավելի ճոճուն—ամենաճոճուն, կործանարար—ավելի կործանարար—ամենակործանարար, կատաղի—ավելի կատաղի—ամենակատաղի, ազդեցիկ—ավելի ազդեցիկ—ամենաազդեցիկ, կեղծավոր—ավելի կեղծավոր—ամենակեղծավոր, հասկանալի—ավելի հասկանալի—ամենահասկանալի և այլն)։ Համեմատության հատկանիշի առկայության հիման վրա՝ բայերից կազմված այս ածականներից շատերը ազատ կերպով դրվում են որակական ածականների շարքում։

Գոյականներից կազմված հարաբերական ածականներից նույնպես փոխանցվում են որակական ածականների։ Այս դեպքում անցման նպաստող իմաստային գործոնները տարաբնույթ են։ Դրանք կարող են առանձին քննության նյութ դառնալ։ Հիմնականը ածական անվան մեջ գոյականի առարկայականության հասկացության գիտակցման աստիճանն է։ Որքան առարկայականությունը գոյականի արմատում վերացական, ընդհանուր բնույթ ունի, այնքան հեշտությամբ այդպիսի արմատով ածանցված հարաբերական ածականը կարող է դառնալ որակական ածական։ Այդպիսիք են, օրինակ, բանական, բարոյական, բարեկամական, գործնական, զավեշտական, ահավոր, արատավոր, վտանգավոր, անգութ, տարօրինակ և այլն։ Գոյականի առարկայական իմաստով է պայմանավորված այն հանգամանքը, որ ասում ենք՝ գունատ, ավելի գունատ, ամենագունատ, բուրավետ, ավելի բուրավետ, ամենաբուրավետ, բայց չենք ասում՝ պոչատ, ավելի պոչատ, պոչավետ, ավելի պոչավետ։ Իսկ եթե վերջին տիպի առարկայական կոնկրետ նշանակության գոյականներից կազմված հարաբերական ածականները որակական ածականների նման համեմատության աստիճաններ են կազմում կամ անցնում են որակական ածականների շարքը, ապա նրանցում գոյականի արմատը զրկված է լինում առարկայական նշանակությունից և գիտակցվում է որպես հատկանիշ։ Եթե ասում ենք՝ գլխավոր, ավելի գլխավոր, ամենագլխավոր, գազանային, ավելի գազանային, ամենագազանային, ներվային, ավելի ներվային, ամենաներվային, բայց չենք ասում՝ թևավոր, ավելի թևավոր, ամենաթևավոր, արջային, ավելի արջա-

յին, սրտային, ավելի սրտային և այլն, այդ այն պատճառով, որ գլխավոր առելով հասկանում ենք՝ կարևոր, հիմնական, գազանային առելով հասկանում ենք՝ կատաղի, ճերվային առելով՝ դյուրագրգիռ: Հետևաբար այդ ածականներում գոյական արմատի առարկայականության հասկացությունը համարյա ջնջված է, և սրանք ավելի մոտենում կամ նույնանում են որակական ածականներին:

Սակայն գոյական արմատով կազմված հարաբերական ածականը կարող է համեմատության աստիճաններ կազմել, առանց գոյական արմատի առարկայականության լրիվ մթագնման:

Այսպես՝ փշոտ, ավելի փշոտ, ամենափշոտ, լեռնոտ, ավելի լեռնոտ, ամենալեռնոտ, ճաճային, ավելի ճաճային, ամենաճաճային ձևերում առարկայականության իմաստը չկորցրած գոյական արմատները միաժամանակ որակական հատկանիշի իմաստ են արտահայտում[18]:

Երբ հարաբերական ածականները փոխանցվում են գոյական անվան, նրանցում տեղի է ունենում իմաստային հակառակ երևույթը: Գոյական արմատով կազմված հարաբերական ածականների գոյականացման դեպքում նրանց առարկայական հարաբերությամբ արտահայտված հատկանշային իմաստը փոխանցվում է առարկայական հարաբերությամբ արտահայտված առարկայական իմաստի, այսինքն՝ եթե դպրոցական դասագիրք կապակցության մեջ դպրոցական ածականը որոշում է դասագիրք գոյականի հատկանիշը դպրոց գոյականի հարաբերությամբ, ապա դպրոցական («երեխա», «պատանի», «աշակերտ») գոյականի մեջ անձի գաղափարը առարկայանում և անվանվում է դպրոց գոյականի հարաբերությամբ: Բայարմատով կազմված հարաբերական ածականների գոյականացման դեպքում գործողություն-հատկանիշը (թափառական մարդ, հանածո հանքանյութ) իր մեջ առնելով գործողի կամ գործողության առարկայի գաղափարը, դառնում է վերջինիս անունը (վերջին թափառականը, ոսկու հանածո):

Որքան հարաբերական ածականը գոյականների հետ սահմանափակ կամ կայուն գործածություն ունի, այնքան հեշտ է փոխանցվում գոյականի: Այս պատճառով էլ հայերենի հարաբերական ածականներից առաջացած գոյականների մեջ որոշակի թիվ են կազմում անձի անունների հետ հաճախակի գործածված և դրանց նշանակության ներառմամբ գոյականացած ածականները (դպրո-

[18] Տե՛ս Մ. Ասատրյան, նշվ. աշխ., էջ 18:

ցական, զորական, առևտրական, գաղթական, օգնական, ուսուցիչ, կեղեքիչ, ճնշիչ, գուժկան, որսկան, աշխատավոր, ճգնավոր, ջրվոր, հանգուցյալ, բանտարկյալ, ստնտու, ողբերգու, գիտուն և այլն։

Եթե հարաբերական ածականների (մանավանդ գոյականներից կազմվածների) մեջ հատկանիշի խոսքիմաստային իմաստը ունի քերականական արտահայտություն, այսինքն արտահայտված է ածականակերտ ածանցով, ապա հարաբերական ածականներից կազմված գոյականների մեջ էլ գոյականի առարկայականության խոսքիմաստային իմաստն է արտահայտված քերականորեն՝ ածանցմամբ։

4. Բայ.— *Բայ են կոչվում այն բառերը, որոնք ցույց են տալիս առարկայի գործողությունը կամ դրությունը (վիճակը) որպես ընթացք։*

«Բայերի կատեգորիայում հիմնական նշանակությունն, իհարկե, միայն գործողությունն է և ոչ բնավ դրությունը (состояние), *ինչպես սովում էր հին քերականություններում»,* գրում է Լ. Վ. Շչերբան։ *«...երբ մենք ասում ենք հիվանդը պառկած է մահճակալին կամ պատուղը թփերի մեջ կարմրին է տալիս* (краснеется)»— շարունակում է նա,— *մենք այդ «պառկելը»* («лежание») *և «կարմրրին տալը»* («краснение») *պատկերացնում ենք ոչ թե որպես վիճակ, այլ գործողություն»*[19]։

Չնայած հեղինակի՝ գործողություն տերմինի այս հստակ մեկնաբանությանը՝ ռուսերենի հետագա քերականություններում էլ շատ հաճախ բայը բնորոշվում է որպես գործողություն և դրություն (վիճակ) նշանակող բառ։ Քանի որ բայը պատասխանում է ոչ միայն ի՞նչ անել, այլև ի՞նչ լինել հարցերին, ապա տրամաբանորեն սխալ չի լինի ի՞նչ լինել (ի՞նչ է լինում, ի՞նչ է եղել, ի՞նչ եղավ...) հարցի պատասխանը (կարմրում է, մաշվել է, կոտրվեց...) *պատկերացնել որպես առարկայի դրություն, վիճակ նշանակող եղելություն, թեև լայն առումով վերջիններս էլ գործողություն են։*

Ի՞նչ անել, ի՞նչ լինել հարցերին պատասխանող բոլոր բայերը, որպես հատկանիշ նշանակող բառեր, միավորվում են այդ հատկանիշի ընթացայնությամբ։ Այս իմաստով էլ նրանք բոլորը գործողություն են նշանակում։ Գործողության ընթացայնությունը, որպես բայի խոսքիմաստային իմաստի բնորոշ հատկանիշ, մի կողմից՝ բայերը տարբերակում է գործողության հասկացություն ար-

---

[19] Լ. Վ. Շչերբա, *նշվ. աշխ., էջ 91։*

տահայտող գոյականներից (պատերազմել—պատերազմ, կովել—կռիվ, վազել—վազք, սպանել—սպանություն), *մյուս կողմից՝ կայուն հատկանիշ արտահայտող ածականներից* (դեղնել—դեղին, մեծանալ—մեծ, կարծրանալ—կարծր, երկարել—երկար):

Հայերենում բայն ունենում է դիմավոր և անդեմ (դերբայական) ձևեր: Բայերի մեջ առարկայի գործողություն-հատկանիշը իր ընթացայնության, փոփոխելիության քերականական ընդհանուր առանձնահատկության շնորհիվ ունենում է քերականական մի շարք հատկանիշներ կամ կարգեր: Գոյականի պես բայը ևս փոփոխվող (թեքվող) խոսքի մաս է: Բայի ձևաբանական հիմնական առանձնահատկությունն այն է, որ խոնարհվում է՝ դիմորոշ վերջավորությունների փոփոխմամբ արտահայտելով գործողության հարաբերումը այն առարկային կամ դեմքին, որին, իբրև կատարողի, վերաբերում է այդ գործողությունը: Բայի շարահյուսական հիմնական դերը կամ առաջնային գործառույթյունը նախադասության ստորոգյալի պաշտոն վարելն է: Բայի դիմավոր ձևերը ոչ միայն հարացուցային սովորական ձևեր են, այլև, հատկանիշի հետ միաժամանակ արտահայտելով դեմքի ու դեմքի թվի գաղափարներ, նախադասության ստորոգյալ անդամ են, իսկ շարակարգում անկախ գործածված՝ նաև նախադասություն:

Նախադասության կառուցվածքի մեջ բայ-ստորոգյալի կատարած այս էական դերը հաշվի առնելով, ինչպես իր տեղում տեսանք, վաղ միջնադարի հայ քերականներից ոմանք (Ստ. Սյունեցի) ճիշտ չէին համարում բայը մյուս խոսքի մասերին հավասար սովորական խոսքի մաս համարելը: Այսօր էլ կան ենթական ստորոգյալի լրացում համարելու կարծիքը պաշտպանողներ: Նախադասության մեջ իր կատարած էական դերով հանդերձ՝ մտածության ձևավորման մեջ բայը ստորադասվում է գոյականին, որպես վերջինիս հատկանիշի հասկացությունը: Այդ բանի քերականական արտահայտությունը բայի դեմքի և դեմքի թվի ձևական կախվածությունն է ենթակայից (ես գնացի, Մենք գնացինք, Առամը գնաց, Առամն ու Սուրենը գնացին): *Բացի այս, բայ-ստորոգյալը արտահայտում է դասի (անձ—իր) իմաստ՝ ըստ ենթակայի հետ ունեցած համաձայնության:*

Բայի դիմավոր ձևերին առանձնահատուկ են եղանակի, ժամանակի, գործողության կերպի (հաջորդականության) դեմքի և դեմքի թվի ստորոգելիական քերականական կարգերը:

Բայական այս կարգերը արտահայտվում են բայահիմքերի և

վերջավորություններ (մասամբ նաև սրանց և նախամասնիկնե-րի) համադրմամբ (գրեմ, գրենք, գրի՛ր, գրեցե՛ք, կգրեմ, գրեցի...)՝ համադրական կազմության ձևերում, բայի հիմքի դեր կատարող դերբայներով (առբայներով) և օժանդակ բայերի խոնարհված ձևերով, մասամբ նաև՝ դիմավոր բայերով և ձևաբանական բառ-մասնիկներով (գրում եմ, գրելու եմ, գրել եմ, մի՛ գրիր, չեմ գրի, պիտի գրեմ...)՝ վերլուծական կառուցվածքի ձևերում:

Վերլուծական կառուցվածքի դիմավոր ձևերի անդամներ են դառնում անկատար, վաղակատար, կատարելի (ապառնի), ժրխտական դերբայները: Ոմանք շարունակում են բաղադրյալ ժամանակային ձևեր համարել հարակատար դերբայ+օժանդակ բայ կազմություններ (ճոգնած է, կատարված է, նստած են...):

Էդ. Աղայանի հիմնավորմամբ՝ սրանք բայածականով և էական բայով կազմված բաղադրյալ ստորոգյալներ են:

Բայի՝ դիմավոր ձևեր չկազմող դերբայներն, ուրեմն, հինգն են՝ անորոշ, ենթակայական, հարակատար, «ապակատար», «համ-ընթացական»[20] (խոսել, խոսող, խոսած, խոսելիք, խոսելիս):

Ինչպես ասվեց աշխատության պատմական մասում տեսանք, հայերենի դերբայների խոսքիմասային պատկանելության խնդիրը հայ քերականագիտության վիճելի հարցերից մեկն է: Գրաբարի քե-րականները դերբայը համարում էին բայի և անվան խոսքիմաս-ային հատկանիշներով օժտված առանձին խոսքի մաս: Մ. Աբեղյա-նը անկախ գործածության՝ գոյականի, ածականի և մակբայի պաշ-տոններ կատարող դերբայները բաշխում է այդ խոսքի մասերի վրա: Գրական աշխարհաբարի նախաատեղյանական շրջանի որոշ քե-րականներ, ինչպես նաև Աբեղյանի հաջորդները դերբայները հա-մարում են բայ՝ բայի դիմավոր և անդեմ ձևերի մեջ տեսնելով բայիմաստի, սեռի և խնդրառության խոսքիմասային հատկանիշ-ներ:

Ունենալով գործողության ընթացայնության խոսքիմասային իմաստ՝ դերբայները բայի դիմավոր ձևերի նման ունենում են՝ ա) ներգործական—կրավորական զուգահեռ ձևեր (սիրել–սիրվել, մո-տեցնել–մոտեցվել), բ) դրական և ժխտական զուգահեռ ձևեր, կամ ժխտման քերականական կարգ (սիրել–չսիրել, սիրող–չսիրող, սի-

---

[20] «Ապակատար» և «համընթացական» տերմիններն առաջարկում է Գ. Ջա-հուկյանը «Ժամանակակից հայերենի անդեմ բայաձևերը («դերբայներ»)» հոդ-վածում («Բանբեր Երևանի համալսարանի», № 3, 1975, էջ 53):

ած–չսիրած, սիրելիֆ–չսիրելիֆ, սիրելիս–չսիրելիս), գ) կազմության կերպի մասնակի կարգ (վազել–վազվզել, կոտրել–կոտրատել, նստել–նստոտել, առժել–առժեճալ, վախել–վախեճալ):

Որպես բայական բառակապակցության գլխավոր անդամ, դերբայները մտնում են լրացական նույն հարաբերությունների մեջ, ինչ դիմավոր բայերը: Ի՛նչ խոսքի մասի պաշտոնով էլ գործածված լինեն, դերբայները ըստ բայիմաստի և սեռի պահանջի ստանում են խնդիր լրացումներ (գիրք կարդալ՝ կարդացած, կարդացող, կարդալիս...): Ինչպես բայի դիմավոր, այնպես էլ անդեմ ձևերը ստանում են մակբայ (պարագա) լրացում: Ընդ որում՝ պարագաների մեջ առանձնապես հատկանշական է բայի՝ գործողության ընթացայնությամբ պայմանավորված ժամանակի պարագա լրացման պահանջը. հատկանիշ, որով դերբայներն անմիջապես կապելի է տարբերել բայանուններից և ածականներից (ե՞րբ վազել՝ վազող, վազած, վազելիս. բայց ոչ՝ ե՞րբ վազք՝ վազան):

Վերջին տասնամյակներում բավական շատ է դրվել դերբայների իմաստային և քերականական առանձնահատկությունների, նրանց դասակարգման սկզբունքների մասին: Այս ասպարեզի ձեռքբերումներից մեկն այն է, որ հայագետները, դերբայները դիմավոր բայերի հետ միավորելով բայ խոսքի մասի մեջ, ուշադրություն են դարձնում դիմավոր ձևերից դուրս անկախ գործածություն չունեցող և այլ խոսքի մասերի պաշտոնով անկախ գործածվող դերբայների ընդհանրություններին և տարբերություններին: Աշխատում են ազատվել սրանք բառաքերականական հատկանիշներով իրար հավասարեցնելու և կամ հակադրելու ծայրահեղ մոտեցումներից: Այս խնդրի լուծման ճանապարհին հայերենի դերբայները կերպային դերբայներ–վիճակային դերբայներ (Էդ. Աղայան), կախյալ դերբայներ–անկախ դերբայներ (Ս. Աբրահամյան, Մ. Ասատրյան), առբայ–դերբայ (Գ. Ջահուկյան) տերմիններով բնութագրելն ու դասակարգելը ուշադրության արժանի մոտեցում են[21]:

«Դերբայները» բայի համակարգի մեջ մտցնելը չպետք է հիմք տար հրաժարվելու նրանց գործառական դասակարգումից»[22], ընդում է Գ. Ջահուկյանը: Հայագետների այսպիսի մոտեցումը բայի

---

[21] Մեր կարծիքով, նոր ծայրահեղություն է անկատար, վաղակատար, կատարելի (ապառնի), ժխտական դերբայները բացարձակապես բայահիմքերին նույնացնելու և բայաձև չհամարելու կարծիքը, որ պաշտպանվում է հայագետներից մի քանիսի աշխատություններում:

[22] Գ. Ջահուկյան, նշվ. աշխ., էջ 48:

համակարգի վերջին ժամանակների քննության մեջ երկրորդ ուշագրավ երևույթն է։

Ինչպես նկատված է հայագիտության մեջ, դիմավոր ձևեր բաղադրող անկատար, վաղակատար, կատարելի (ապառնի), ժխտական դերբայներով արտահայտվում է հաջորդականության կարգ՝ նամրնթաց (գնում), նախընթաց (գնացել), ետընթաց («ապրնթաց»), (գնալու, գնա)։ Վերցվելով օժանդակ բայի հետ՝ այս դերբայները ձևավորում են (ըստ ոմանց) ժամանակա-հաջորդային կամ (ըստ ուրիշների) ժամանակա-կերպային տարբեր նշանակության բայաձևեր[23]։

Այստեղ իսկ ավելացնենք, որ հայերենի թե՛ համադրական, թե՛ վերլուծական կազմության դիմավոր ձևերում խաչավորվում են գործողության ընթացքի՝ ա) հաջորդականության, բ) ավարտվածության (կերպի), գ) ժամանակի հատվածայնության (սահմանափակվածության) հասկացությունները՝ անորոշ ու վիճելի դարձնելով բայի ժամանակի ու սրան առնչվող մյուս քերականական կարգերի բովանդակության, երբեմն էլ սրանց արտահայտման ձևերի հատակ նկարագրությունը։

Գ. Ջահուկյանը հաջորդականության հատկանիշներ է տեսնում նաև հայերենի անկախ գործածության դերբայներում (համընթացական (ըստ Ջահուկյանի տերմինավորման)՝ **-ող/-ացող, -ելիս/-ալիս**, նախընթացական՝ **-ած/-ացած**, ապրնթացական՝ **-ելիք/-ալիք-ով** վերջացող բայեր)։

Անկախ դերբայների գործառական դասակարգումը, բացահայտելով այլ խոսքի մասերի և սրանց գործառության հանդես եկող դերբայների ընդհանրությունները, վերահաստատում է գոյական դերբայ (անորոշ), ածական դերբայ (հարակատար, ենթակայական, «ապակատար», ըստ ոմանց նաև՝ ապառնի), մակբայական դերբայ («համընթացական») տերմինների և սրանց հասկացությունների դիտականությունը։

Անորոշ դերբայն անվանում է գործողությունը և իր բառային իմաստով խիստ մոտենում է բայանուն գոյականներին, որոնցում քերականորեն (խոսքիմասակազմությամբ) գործողությունը վերցված է որպես անուն-գոյական։

Հոլովումը անորոշ դերբայի ձևաբանական հատկանիշներից է։

---

[23] *Տե՛ս* Իվ. Ի. Շիլակածե, *Արդի հայերենի խոնարհման կատեգորիաները («Լեզվի և ոճի հարցեր», 2, Երևան, 1964)։*

Անորոշի հոլովումը, ինչպես ժամանակին ցույց է տվել Մ. Աբեղյանը, փոխանվանական հոլովում չէ։ Բայց, ի տարբերություն անվանական հոլովման, անորոշի հոլովաձևերին, իբրև բայաձևերի, հատուկ չէ թվի կարգը։ Անորոշը հոգնակի չունի։ Անորոշի որոշյալ առման ձևերը (վազելը, վազելուն) տարբերվում են ածականների և ածական-դերբայների փոխանվանական որոշյալներից (կարմիրը, fնածը, fնողը)։

Անորոշը նախադասության մեջ հանդես է գալիս գոյականին առանձնահատուկ բոլոր պաշտոններով. թերևս միակ բացառությունն այն է, որ սնորոշը ուղիղ ձևով որոշիչ չի լինում։ Գոյականական կիրառության մեջ բայը որպես լրացյալ մնում է բայ։ Այսինքն՝ ի տարբերություն գոյականի, ունենում է ոչ թե որոշիչ և հատկացուցիչ, այլ խնդիր և պարագա լրացումներ։

Լրացական հարաբերությունների նույն շարահյուսական բնութագիրն ունեն հարակատար և ենթակայական ածական դերբայները («դերածականները»)։ «Ապակատար» (2-րդ ապառնի) դերբայի ձևերը (խոսելիf, գրվելիf) սակավ գործածական են։ Այս դերբայները, որպես ածական դերբայ, գոյականի որոշիչ լրացում են լինում, բայց, ի տարբերություն ածականների, անորոշ դերբայի նման ունենում են խնդիր և պարագա բայական լրացումներ։ Այդպիսին է նաև –իս-ով վերջացող մակբայական («համընթացական») դերբայը, որը դառնալով բայի պարագա լրացում, շարունակում է իր հերթին ունենալ բայական լրացումներ։

Այսպիսով, լրացական հարաբերությունների մեջ գոյական, ածական, մակբայական դերբայները, իբրև լրացում բաշխվելով տարբեր խոսքի մասերի վրա, իբրև լրացյալ շարունակում են մնալ բայ։ Սա այդ բայաձևերի խոսքիմասնային-շարահյուսական բնութագրի բնորոշ կողմն է։

Օգտվելով ժամանակակից լեզվաբանության մեջ ընդունելություն գտած փոխակերպման գաղափարից՝ Գ. Ջահուկյանը անկախ գործածության դերբայների այս շարահյուսական առանձնահատկությունները կամ նրանց ոչ բայական գործածությունները մեկնաբանում է «որպես գործառական փոխակերպումներ»։ Ըստ այդմ էլ՝ հայերենի դերբայներ կազմող մասնիկները, որ մե՛կ անվանվում են վերջավորություն, մե՛կ ածանց, հեղինակի կողմից կոչվում են «գործառական ածանցներ», «...այսինքն՝ ածանցներ, ո-

րոնք կատարում են միայն գործառական փոխակերպում, բայց ոչ նոր իմաստի հավելում»[24]:

Բայն, իբրև խոսքի մաս, բնորոշվում է նաև իր բառակազմական առանձնահատկություններով: Ի տարբերություն մյուս բոլոր խոսքի մասերի, բայի թե՛ դիմավոր, թե՛ անդեմ ձևերը ունեն բազադրյալ կազմություն, այսինքն՝ առնվազն երկձևույթ են (բայարմատ+դիմորոշ վերջավորություն, բայարմատ+դերբայական ածանց, բայարմատ+բայածանց+դիմորոշ վերջավորություն կամ դերբայական ածանց): Այս բառակազմական առանձնահատկություններից բխում է բայի մի այլ ձևական հատկություն ևս: Այդ այն է, որ բայերը, որպես բառարանային միավորներ, խոսքիմաստային իմաստի ընդհանրությունից բացի, ունեն նաև ձևական ընդհանրություն. նրանք բոլորն էլ ունեն –ել կամ –ալ վերջածանց՝ ելակետային կամ նկզբնաձևում: Սրանք (–ել, –ալ) խոսքիմաստակազմության ժամանակ իրենց վրա այլ ձևույթներ չեն ընդունում: Բայերից այլ խոսքի մասեր կազմելիս բաղադրվում է բայարմատը կամ բայահիմքը, մյուս խոսքի մասերից նոր բառեր ու խոսքի մասեր կազմելու ժամանակ այդպիսի պարտադիր կանոն չի գործում: Սրանից հետևում է նաև այն, որ բայերում գործողության (ընթացայնության) խոսքիմաստային իմաստն ունի միայն քերականական արտահայտություն: Եթե կարդալ, վազել տիպի բայերում գործողության գաղափարը կապված է նաև բայարմատի հետ, ապա ավազել, fարաճալ, դեղնել, փոfրաճալ տիպի բայերում առարկայի կամ նրա կայուն հատկանիշի հասկացությունը ընթացային հատկանիշի հասկացության (գործողության) վերածողը բայական «գործառական ածանցներն» ու դեմքի վերջավորություններն են:

Սակայն բայը եթե անորոշից, իբրև նախատիպի, նոր բառ չի կազմում, ապա նախամասնիկներով իր ներքին բառակազմությամբ նոր բայեր է կազմում (արտադրել–վերարտադրել, բաժանել–վերաբաժանել, կատարել–գերակատարել, դասել–ստորադասել, հանել–արտահանել, գրել–մակագրել և այլն):

Բայ խոսքի մասի ներսում բազմապատկական (ատ, ոտ, կոտ, ս), պատճառական (ցն) և կրավորական (վ) ածանցներով կազմվում են նոր բայեր ու բայաձևեր:

Այլ խոսքի մասերից ժամանակակից հայերենում բայեր են

---

[24] Գ. Ջահուկյան, նշվ. աշխ., էջ 51:

կազմվում –ել, –ալ, –անալ *վերջածանցներով։ Այդ բայերում վերցվում են՝*

ա) առարկան կամ առարկայական հասկացությունն իբրև գործողություն, օրինակ՝ անձրևել, աշակերտել, ճաշել, ջրել, սղոցել, խղճալ, շողալ, մաճանալ, fառանալ.

բ) որակական հատկանիշն իբրև գործողություն, օրինակ՝ բառակել, դեղնել, մաfրել, նեղել, թարմանալ, լավանալ, ահանալ, փափկել, փափկանալ.

գ) քանակական հատկանիշն իբրև գործողություն, օրինակ՝ երկրորդել, երրորդել, հազարապատկել, տասնապատկել, երկուանալ.

դ) հատկանիշի հատկանիշն իբրև գործողություն, օրինակ՝ դանդաղել, կանխել, հանախել, հավերժել, առաջանալ, արագանալ, հանախանալ, ուշանալ, մոտենալ.

ե) ձայնարկություններն ու նմանաձայնություններն իբրև գործողություն, օրինակ՝ ավաղել, ափսոսել, վայել, թշշալ, խշխշալ, ճոճոալ, fչfչալ։

Կան և դերանուններից կազմված մի քանի բայեր (այլայլել, այլանալ, նույնանալ, ոչնչանալ)[25]։

Ժամանակակից լեզվամտածողությամբ հատկանիշի հատկանիշը (մակբայը) հայերենում գործողության չի փոխվում, այդպես է եղել հավանաբար նաև հայերենի հին շրջանում։ Բերված օրինակներից երևում է, որ բայ դարձող մակբայները (արագ, դանդաղ, հանախ, առաջ, ուշ, մոտ) *հնում եղել են նաև ածական կամ գոյական, ուստի այս դեպքում, ինչպես ճիշտ նկատում է Ա. Աբրահամյանը, մենք պատմականորեն գործ ունենք գոյականի կամ ածականի բայ դառնալու իրողության հետ։*

Ժամանակակից հայերենի բայակազմության բնորոշ եղանակներից է հարադրական կազմությունը։ Հարադրական բարդություններում մեջ, որպես բայական բաղադրիչ, գործածվում են ոչ բոլոր բայերը։ Այդ տիպի ածել, անել, բերել, գալ, դարձնել, դնել, ելնել, կանգնել, կոտրել, հանել, մտնել, տալ, տանել, տեսնել, փոխել, fաշել *և այլ բայերը հարադրական բարդություն են կազմում գոյականներից, մասամբ նաև գոյականաբար առնված ածականներից*

---

[25] *Բայակազմության մասին մանրամասն տե՛ս* Ա. Ա. Աբրահամյան, *Բայը ժամանակակից հայերենում, էջ 29—70։*

(աչք ածել, միտք անել, գլուխ բերել, դուրս գալ, մտքին դնել, կարմրին տալ, սևին տալ):

Հարադրական բարդությունների գոյական բաղադրիչները, վերցված լինելով տարբեր հոլովաձևերով (կայծակին տալ, սպիտակին տալ, աչք տնկել, դարդ թանել, գլխից ճանճ, ձեռքից ելնել, աչքով անել, գլխով անել, մտքում դնել), *մասամբ պահպանում են այդ հոլովական իմաստների գիտակցումը, որպես ոչ արժույթային, բայի կառուցվածքում պահպանված ստորին կարգի քերականական իրողություն: Բարդության բայ բաղադրիչի միջոցով գործողության վերածված այդ գոյականները թեև գրությամբ միացած չեն բային, բայց և այնպես այլևս չունեն գոյականի շարահյուսական առանձնահատկությունը՝ որոշիչ լրացում չեն ստանում: Հարադրական բայերն ունենում են միայն բայական լրացումներ* («Վերջերս ևս Աբամին խելքից ճանել է»):

5. ՄԱԿԲԱՅ.— Տրամաբանական մոտեցմամբ, բայը որպես փոփոխվող հատկանիշ գոյականին ստորադասելու դեպքում, նյութական նշանակության բառերի իմաստային աստիճանականության մեջ մակբայը կդրվի ստորին աստիճանի վրա: Կստացվի անունների կապակցելիության հետևյալ ստորակարգությունը՝ առարկայականություն—հատկանշայնություն (կայուն հատկանիշ—փոփոխվող հատկանիշ)—հատկանիշի հատկանշայնություն:

Խոսքի մասերի լրացական հարաբերությունների մեջ, ուրեմն, մակբայը դառնում է բայի և ածական անվան իմաստային, ապա և շարահյուսական լրացում: Ըստ այսմ՝ մակբայը սահմանվում է որպես գործողության, դրության, որակական կամ այլ հատկանիշի հատկանիշ ցույց տվող խոսքի մաս (արագ վազել, անշարժ նրստել, շատ գովելի, չափազանց գեղեցիկ, մոտավորապես ասաե): *Իրենց խոսքիմաստային իմաստով մակբայներն ավելի մերձավոր են ածականներին: Վերջիններս իրենց առաջնային կիրառությամբ առարկայի հատկանիշ են ցույց տալիս, իսկ մակբայները՝ գործողության: Մակբայերն իրենց բովանդակությամբ մյուս անուն խոսքի մասերի համեմատությամբ ավելի տարաբնույթ ու անհատնական են: Նրանցով արտահայտվում են գործողության կատարման տարբեր հանգամանքներ՝ ձև (որակ), չափ ու քանակ, տեղ, ժամանակ, հաղվադեպ նաև՝ պատճառ և նպատակ: Ըստ այսմ՝ մակբայները բաժանվում են ձևի կամ որակական, չափ ու քանակի, տեղի, ժամանակի, պատճառա-նպատակային տեսակների:*

Նախադասության մեջ մակբայները կատարում են պարագայի

պաշտոն։ Ըստ պարագայական գործառության՝ մակբայների խոսքիմասային իմաստը թելադրում է հետևյալ հարցերը՝ «1) տեղի՝ որտե՞ղ, ո՞ւր, 2) ժամանակի՝ ե՞րբ, 3) չափ ու քանակի՝ որքա՞ն, ինչքա՞ն, որչա՞փ, ինչպի՞սի, 4) ձևի կամ որակական՝ ինչպե՞ս և 5) պատճառանպատակային...՝ ինչո՞ւ»[26]։

Որպես «պատճառանպատակային» մակբայներ, Գ. Ջահուկյանը հայերենում առանձնացնում է երեք բառ՝ ամոթու, ի ճեռուկս, չգրու։ Մ. Ասատրյանն այդպիսի դերբայներ է համարում նաև աիու, դիտմամբ բառերը[27]։

Գ. Ջահուկյանը հայերենի արմատական մակբայները բաժանում է երեք խմբի՝ «1) տեղանիշ՝ առաջ, դուրս, ետ, ճեռու, մոտ, ճերս, վայր (>վար), վեր, ցած, այլև աստ, անդ. 2) ժամանականիշ՝ ապա, առաջ, արդ, արդեն, իսկույն, կաճուխ, հար, ճետո, ճերու, ճիմա, միշտ, ճավետ, ճավերժ, նախ, շուտ, վաղ (վաղ-ը), վոազ, ույշ. 3) չափ ու քանակ նշող մակբայներ՝ կրկին, ճազիվ, ճաճախ, ճույժ, շուրջ, «մոտավորապես», սակավ»։ Վերջում արմատական մակբայները նկատի ունենալով՝ նա ավելացնում է՝ «Այսպես կոչված «որակական» մակբայները բնույթով ածականներ են»[28]։

Այս դատողությունից, ինչպես և հետագա վերլուծություններից երևում է, որ Ջահուկյանը ձևի կամ որակական մակբայի գործածությամբ վերցված բոլոր արմատական բառերը (ճճոուշ, ըզգույշ, խիստ, արագ, դանդաղ և այլն) համարում է մակբայի փոխանցված ածականներ։ Ընդ որում՝ փոխանցումը նա համարում է «մի խոսքի մասի այնպիսի անցումը մյուսին, որի դեպքում արտաքին որևէ փոփոխություն չի լինում. համմտ. սխալ (ածական—գոյական—մակբայ՝ «Սխալն ուղղվեց», «Սխալ գաղափար», «Սխալ է գնում»)»[29]։

Անդրադառնալով ճճոուշ—ճճշորեն–ճճոուշ *կերպով (ձևով),* զգույշ–զգուշորեն–զգույշ *կերպով,* խիստ–խստաբար–խիստ *կերպով (ձևով) գուգահեռ ձևերին՝ Ջահուկյանը սրանց բաղադրյալ ձևերը (*ճճշորեն, ճճոուշ *կերպով) համարում է համապատասխան ածականի (*ճճոուշ*) փոխակերպումը մակբայի։ Խոսքիմասային փո-*

---

[26] Գ. Բ. Ջահուկյան, նշվ. աշխ., էջ 447։

[27] Մ. Ասատրյան, նշվ. աշխ., էջ 228։

[28] Գ. Բ. Ջահուկյան, նշվ. աշխ., էջ 315։

[29] Նույն տեղում, էջ 505։

խակերպման մասին հեղինակը գրում է՝ «Փոխակերպում ենք կոչում՝ ա) խոսքի մասերի այնպիսի անցումները, որոնք կատարվում են արտաքին բառակազմական հատուկ միջոցներով»[30]։

Այս դատողություններով է հիմնավորվում նաև հեղինակի հետևյալ եզրակացությունը՝ «Ի տարբերություն գոյականների ու ածականների՝ մակբայները հայերենում գրեթե չունեն այնպիսի ածանցներ, որոնք մակբայներ կազմեն հենց մակբայներից՝ նրանց հաղորդելով իմաստային որևէ նոր երանգ»[31]։

Մեր կարծիքով, Գ. Ջահուկյանի՝ այս ձևակերպման մեջ գործածած «գրեթե»-ն իրավունք է տալիս մեզ ասելու, որ գոնե ժամանակակից հայերենի համար ձևի (որակական) որոշ թվով մակբայներ, ինչպես, օրինակ՝ արագ, դանդաղ, կամաց, շտապ և այլն, ոչ թե մակբայի փոխանցված ածականներ են, այլ պարագայական գործածության սրանց առաջնային գործառությունն է, և որոշիչի պաշտոնում՝ նրանք ածականի փոխանցված մակբայներ են (անկախ դրանց պատմական ընթացքից)։ Այդ պատճառով էլ այսպիսի մակբայները որոշիչ են դառնում միայն բայանունների (արագ վազք, շտապ կարգադրություն, կամաց տեղաշարժ, դանդաղ յուրացում։ Այս դատողությանը չպիտի խանգարի այն հանգամանքը, որ այս մակբայները պարագայական գործածությամբ էլ ածականի պես ունենում են համեմատության աստիճաններ (արագ վազել, ավելի արագ վազել, ամենաարագ վազողը)։ Չէ՞ որ համեմատության այդպիսի ձևեր ունենում են նաև ժամանակի և չափ ու քանակի որոշ մակբայներ (շուտ, ավելի շուտ, ամենաշուտ. ուշ, ավելի ուշ, ամենաուշ. վաղ, ավելի վաղ. հաճախ, ավելի հաճախ, ամենահաճախ. սակավ, ավելի սակավ, ամենասակավ)։

Մակբայը ձևաբանորեն բնութագրվում է որպես չփոփոխվող (չթեքվող) խոսքի մաս։ Բայց ինչպես տեսանք, որոշ մակբայներ որակական ածականների պես ունենում են հատկանիշի համեմատության աստիճան արտահայտող ձևեր։ Այս ձևաբանական հատկանիշը մակբայների և ածականների խոսքիմասային ստորին կարգի կապի արտահայտությունն է, ոչ բնորոշ մակբայներին ընդհանրապես։

Նույն երևույթը մենք տեսանք գոյականների և մակբայների կապը քննելիս։ Որոշ թվով ժամանակի մակբայներ, ծագած լի-

30 Նույն տեղում։

31 Նույն տեղում, էջ 314։

նելով ժամանակի անուն գոյականներից, ունենում են հոլովական ձևեր (առաջ–առաջվա–առաջվանից, ետու–ետուվա–ետուվանից, շուտ–շուտվա–շուտվանից, վաղ–վաղվա–վաղվանից): *Ինչպես միշտ նկատված է, այս հոլովաձևերում առարկայականություն չկա, նըրանցում արտահայտվում է պարագայականություն կամ որոշչայնություն*[32]: *Այս կարգի բառերի թեքված ձևերը մակբայ համարելու դեպքում նրանցում հոլովման քերականական կարգը պիտի համարել գոյականի և մակբայի խոսքիմասային ստորին կարգի կապի արտահայտություն՝ ոչ բնորոշ մակբայներին ընդհանրապես:*

Ի տարբերություն գոյականների և ածականների, որոնց խոսքիմասակազմության մեջ բարդության հիմնական կաղապարային տիպը իսկական բարդությունն է, մակբայները կազմվում են կըրկնավոր բարդությամբ:

Ժամանակակից հայերենում մակբայներ կազմվում են՝

1. Գոյականներից՝ ա) կրկնությամբ՝ գունդ–գունդ, վաշտ–վաշտ, թումբ–թումբ, շարաճ–շարաճ.

բ) նախդրավոր կրկնությամբ՝ բառ առ բառ, կետ առ կետ, ծառ առ ծառ, ժամաճակ առ ժամաճակ, *ֆայլ առ ֆայլ,* ճերթ ի ճերթ, շար ի շար, ծայրեիծայր, օրեցօր, տարեցտարի.

գ) գրաբարի բացառական հոլովաձևի և բառի ուղիղ ձևի կըրկնությամբ՝ դռնեդուռ, գյուղեգյուղ, պատեպատ, *ֆարեֆար,* բերնեբերան.

դ) հնացած հոլովաձևերի նախդրավոր կապակցությամբ՝ ի բնե, ի սրտե, ցմահ, ցայսօր:

2) Ածականներից՝ *կրկնությամբ՝* մեծ–մեծ, մաճր–մաճր, փոֆր–փոֆր, նեղ–նեղ, լայն–լայն, երկար–երկար, ծաճր–ծաճր, թեթև–թեթև:

Նոր մակբայներ են կազմվում նաև մակբայների կրկնությամբ: Այդ կրկնավորները ունենում են սաստկական, ինչպես նաև իմաստային այլ երանգներ (Համմ. շուտ գնալ—շուտ-շուտ գնալ, արագ վազել—արագ-արագ վազել. ուշ գալ—ուշ-ուշ գալ, կամաց ուտել—կամակ-կամաց ուտել):

Կան մակբայական գործածության նաև իսկական բարդ բառեր (որոտաձայն, բարձրաձայն, սրտակոտոր...), *սակայն սրանք մակբայաբար գործածված ածականներ են: Կան և դերանուններից կազմված առանձին մակբայներ* (ինճինիրեն, ոչ-ոճի):

---

[32] *Համմ.* Մ. Աճատրյան, *նշվ. աշխ., էջ 224:*

Ժամանակակից հայերենի մակբայների կազմության ամենաարտադրողական եղանակը ածանցումն է։

Արդյունավետ մակբայակերտ ածանցներն են՝ /ա/բար, /ա/պես, -որեն։

Հայերենի մակբայակերտ (հոգաբխմասակերտ) ածանցներով կազմված մակբայներում վերցվում են՝

ա) առարկան իբրև հատկանիշի հատկանիշ, օրինակ՝ ճայրաբար, թշնամաբար, հոգեպես, նյութապես, գազանորեն, սարկորեն, ազգովին, գլխովին, տունն-տնովի), երեսաճց, սրտաճց, մանկուց, տնավարի, մարդավարի, ուժգին, վշտագին.

բ) կայուն հատկանիշն իբրև հատկանիշի հատկանիշ, օրինակ՝ ճեզաբար, ազնվաբար, մեծապես, խորապես, ագահորեն, ազնվորեն, գիտականորեն, կազմակերպ(ական)որեն, լայնակի, շեղակի, տխրագին, տրտմագին, ճնուց, փոխրուց.

գ) քանակական հատկանիշն իբրև հատկանիշի հատկանիշ, օրինակ՝ ճնգապատիկ, յոթնապատիկ, տասնապատիկ, հարյուրապատիկ։

Ինչպես ասվեց, մակբայն իր ներսում բառակազմություն համարյա չունի։ «Մակբայ+մակբայակերտ ածանց» կաղապարը համարյա գործուն չէ։ Ուսումնասիրողներն արձանագրում են այդպիսի մեկ-երկու կազմություն (ճանապակի, ճանկարծակի, նախապես, մշտապես)։

ԹՎԱԿԱՆ ԱՆՈՒՆ.—*Անուն խոսքի մասերից խոսքիմասային պատկանելությամբ ոչ միայն հայերենի, այլև շատ այլ լեզուների քերականությունների մեջ թվականը դեռևս իր կայուն տեղն ու ճշգրտորոշված բառացանկը չունեցող կարգ է։ Ինչպես տեսանք, գրական նոր հայերենի առաջին իսկ քերականություններում թվականն առանձնացվում է ածականից որպես ինքնուրույն խոսքի մաս. մի երևույթ, որ ամանց կողմից գնահատված է որպես քերականագիտական նվաճում։ Սակայն այդ իրողությունը չի խանգարում Մ. Աբեղյանին՝ թվականները այլ խոսքի մասերի վրա բաշխելու կամ նրա բուն տեսակները «թվական-ածական» համարելու, չի խանգարում նաև Հ. Աճառյանին՝ այս հարցում համարյա նույն կերպ վարվելու։ Այս անվանի հայագետների այդպիսի մոտեցումը ավանդապահության կամ հնացած կարծիքի պաշտպանության արտահայտություն կհամարվեր, եթե հարցը լեզվաբանորեն իրոք լուծված լիներ։*

Բառերի խոսքիմասային պատկանելությունը նրանց քերակա-

նական առանձնահատկությունների հաշվառմամբ որոշելիս, թվականները համարյա կնույնանան ածականներին։ Եվ, ահա, թե ինչու։ «Թվական անունը բառակապակցություններում իր կիրառությամբ ածականներից չի տարբերվում, այն հանդես է գալիս որպես որոշիչ, կազմելով գոյականական բառակապակցություններ։ Բացարձակ թվերը, իրենց բուն կիրառությամբ, արդեն իսկ գոյականներ են (1 + 1 = 2)։

Բառակազմությանը կարող են մասնակցել բոլոր թվականները...։ Բայարմատների հետ բաղադրված թվականները բոլորն էլ մակբայական կիրառություն ունեն, ճիշտ այնպես, ինչպես ածականները (միագոչ, միածին «անկ անգամ գոչած, ծնվածծ», նույնը և՝ երկքաշի, քառաձիգ և այլն)...։ Որպես իսկական բարդության երկրորդ բաղադրիչ թվականները քիչ են հանդես գալիս, չնայած այդպիսի կառուցվածքները հնարավոր են (օրինակ՝ բյուրահազար, համմտ. բազմահազար)։ Որպես երկրորդ բաղադրիչ թվականները սովորական են մի շարք կցական և հարադրական բարդություններում (տասնմեկ, հինգ հարյուր), որոնք, հասկանալի է, մենք չենք քննարկում։

Այսպիսով, երկարմատ առաջին բաղադրիչ թվական արմատով իսկական բարդությունների քննարկումը ևս կառուցվածքային ինչոր յուրահատկություն հանդես չբերեց. ունենք ածական+գոյական կաղապարը»[33]։

Ժամանակակից հայերենի թվականի բառակապակցական-քերականական և բառակազմական-քերականական հատկանիշների մասնագիտական քննությունը հայագետներին բերում է այն համոզմանը, որ թվականները չեն տարբերվում ածականներից։ Հետևաբար թվականները իրենց քերականական հատկանիշներով համարյա ածական են։ «Համարյա» ենք ասում, որովհետև այդպիսի նույնացման հիմունքը առավելապես քերականական-շարահյուսական է։ Չէ՞ որ թվականները՝ ա) չունեն որակական ածականներին առանձնահատուկ համեմատության աստիճաններ կազմելու ձևաբանական հատկանիշ, բ) չունեն որակական ածականների նման մակբայական ազատ գործածություն (կարելի է ասել՝ լավ մարդ, լավ խոսել, երեք մարդ, բայց ոչ՝ երեք խոսել), գ) բացի այս, թվականը, որպես առարկայից անկախ գիտակցվող քանակային բացարձակ մեծություն, ինչպես ասվեց, գոյական է։

---

[33] Ս. Ա. Գալստյան, նշվ. աշխ., էջ 28—29։

Քերականական հատկանիշների բացարձակ նույնություն, ինչպես տեսանք, չեն պահպանվում նաև մյուս խոսքի մասերի տեսակների ներսում: Այնպես որ, թվականի առաջնային գործառությունը գոյականի որոշիչ լրացումը համարելու դեպքում, թվականները ածական խոսքի մասի «թվական-ածական» տարատեսակը ճանաչելը միանգամայն գիտական մոտեցում է:

Բայց նախընտրելով բառերի խոսքիմասային դասակարգման իմաստագործառական սկզբունքը՝ մենք թվականների մասին ունենք նաև այլ մեկնաբանություն: Տարածված է այն կարծիքը, թե «բառային կողմին մեծ նշանակություն տվող և քերականական երևույթների վերաբերյալ որոշակի դիտումներ թույլատրող հեղինակները հնարավոր են համարում, օրինակ, միավորել մեկ ընդհանուր խոսքի մասի մեջ բոլոր այն բառերը, որոնք արտահայտում են թվի գաղափար...»[34]: Սակայն բառային իմաստի նախապատվությամբ էլ այնքան հեշտ չէ թիվ ու քանակ նշանակող բոլոր բառերը մեկ կարգի մեջ խմբավորելը: Այս դեպքում էլ ոչ միայն անտեսում ենք «քերականական հատկանիշ» ու «քերականական կարգ» հասկացությունները, այլև իր իսկ թվականի բառային իմաստի ճիշտ գիտակցումը:

«Թեև իրենց պատմական առաջացմամբ թվերը, ինչպես կտեսնենք, կապված են կոնկրետ առարկաների, մեծ մասամբ մարդու ձեռքի ու ոտքի մատների կոնկրետ քանակի հետ,— գրում է Հ. Աճառյանը,— բայց լեզվի ու մտածողության հետագա զարգացման ընթացքում նրանք հանդես են գալիս որպես քանակային բացարձակ մեծություններ, առանց նկատի առնելու կոնկրետ առարկաները»[35]:

Այս դատողությունն առաջին հերթին վերաբերում է քանակական կամ բացարձակ թվականներին: Դասական և բաշխական թվականների մեջ -երորդ, -ական ածանցների միջոցով քանակական թվականների այդ արտահայտած վերացական ու անկախ քանակական հասկացությունը առարկայական կախվածություն է ձեռք բերում (վեցերորդ՝ վեցական ի՞նչ): Վեց քանակականը, որպես մեր կողմից գիտակցված թվային (հաշվային) համակարգի

---

[34] **К. Е. Майтенская**, К вопросу о роли словообразования в развитии частей речи («Вопросы теории частей речи», էջ 260):

[35] Հ. Աճառյան, *Լիակատար քերականություն հայոց լեզվի, հ. 1, 1952, էջ 131:*

քանակային որոշակի միավոր, կարող է պատկերացվել նաև առանց այդ ի՞նչ հարցի. հարց, որ նա ստանում է խոսքում, առարկայական վերաբերության մեջ (վեց ի՞նչ): Հետևաբար, քանակական թվականներն իրենց բառային իմաստով երկփեղկված են. մե՛կ «հանդես են գալիս որպես քանակային բացարձակ մեծություններ, առանց նկատի առնելու կոնկրետ առարկաները» (4+2=6), մե՛կ էլ խոսքի մեջ, առարկայական վերաբերությամբ, հանդես են գալիս որպես առարկայի քանակային կախյալ հատկանիշի հասկացություն: Առաջին դեպքում, քերականական ըմբռնմամբ, գոյականներ են, երկրորդ դեպքում՝ ածականներ: Սակայն, որպես բառային իմաստներ, բացարձակ թվականների այդ քանակային վերացական հասկացությունները բոլորովին զուրկ են առարկայականությունից և միանգամայն տարբեր են բոլոր այլ կարգի վերացական գոյականներից: Նրանք, ինչպես նկատված է, մաթեմատիկական հաշվումների «մաքուր» օբյեկտներ են, որպիսի գործառությամբ էլ ավարտվում է նրանց առարկայականության հասկացությունը:

Երկրորդ կիրառության մեջ էլ, որպես առարկայի քանակային հատկանիշ, թվականները մնում են ինքնատիպ: Ինչպես իմաստային, այնպես էլ լրացական հարաբերության բովանդակության տեսակետից նրանք տարբերվում են բուն ածականներից: Թվականի բոլոր տեսակները (քանակական, դասական, բաշխական) միավորվում են մեկ իմացաբանական կարգի մեջ և որպես այդպիսին նրանց առանձնահատուկ է տրամաբանական յուրահատուկ հարցադրում (ինչ֊ո՞ւ, որ֊ո՞ւ, քանի՞, քանի՞երորդ, քանի՞ական): Թվականի բառային իմաստին յուրահատուկ է հաջորդականության գիտակցումը: Թվային համակարգի յուրաքանչյուր միավոր մեծություն ունի իր նախորդը, որից, իբրև նրա հաջորդի, այդ մեծությունը մեկ միավորով ավելի է, և ունի իր հաջորդը, որից, իբրև նրա նախորդի, մեկ միավորով պակաս է: Թվականների համակարգի (միանիշ, երկանիշ, եռանիշ, քառանիշ և այլն) թվային արժեքների թելադրանքով թվականն ունենում է բառակազմական իր յուրահատկությունը: Այլ բառերի պես թվականն իր համակարգում ունի պարզ արմատական (մեկ, երկու, տասը, հարյուր, հազար, միլիոն...), ածանցավոր (երեսուն, հարյուրուն, հազարավոր...) և բարդ (տասնմեկ..., հարյուրհինգ) բառեր: Հարյուր մեկ և բարձր թվականները կազմվում են որպես հարադրական բարդություններ՝ թվերի աստիճանական հավելմամբ. այն է՝ հարյուր տասնվեց, երկու հարյուր տասնվեց, հազար հար-

յուր տասնվեց, երկու հազար հարյուր տասնվեց, մեկ միլիոն երկու հազար հարյուր տասնվեց և այլն։ Այս հարադրություններն են, որոնց թե՛ իմաստային, թե՛ բառակազմական առանձնահատկությունը բնորոշ է միայն թվականին։

Թվերի անսահմանությունը լեզուն արտահայտում է թվականների սահմանափակ բառացանկի օգնությամբ՝ վերը բերված կոմբինացիոն եղանակով։ Քանակային հատկանիշը արտահայտվում է միայն հիմնական ձևույթով, այն էլ՝ թվական արմատներով։ Այլ արմատներով և ածանցներով թվական անուն չի կազմվում։ Ուրեմն թվականը խոսքիմաստակազմություն չունի։ Քանակական թվականներից ածանցմամբ կազմվում են դասական և բաշխական թվականներ, որոնց բառակազմը սահմանափակված է քանակական թվականների բառակազմով։ Այս նկատի ունենալով՝ լեզվաբանները ասում են, թե թվականները ոչ թե արտադրվող, այլ վերարտադրվող բառեր են։ Այստեղից էլ հետևում է, որ թվականի խոսքիմաստային իմաստը բառակազմական-ձևաբանական արտահայտություն չունի։ Թվականն առանձին խոսքի մաս համարող լեզվաբանների համար նրա խոսքիմաստային իմաստը կունենա բացառապես բառային արտահայտություն։ Ահա այդպիսի մի կարծիք՝ «Խոսքից դուրս թվականներն արտահայտում են բացարձակ ու վերացական մեծության հասկացություն, որ և նրանց ուրույն խոսքի մասային իմաստն է կազմում»[36]։

Տեսական գրականության մեջ թվականները, անկախ սրանց խոսքիմաստային պատկանելության հարցից, բնութագրվում են բառային մի շարք այլ առանձնահատկություններով ևս։ Այսպես՝ թվականներն, ի տարբերություն նյութական նշանակության մյուս անուն խոսքի մասերի, չունեն բազմիմաստություն։ Քանակային իմաստը թվականների կայուն իմաստն է, այն արտահայտվում է անխառն, դրա համար էլ սուբյեկտիվ ընկալման երանգ չունի և անփոփոխ է։ Թվականները չունեն փոխաբերական գործածություն։

Որպես իմաստային կոնկրետ հասկացություններ արտահայտող և իմաստաբանորեն առանձնացված բառեր, թվականները լեզվական հանրույթներ են, ուստի և ունեն բոլոր լեզուների համար ընդհանուր իրենց գրության ձևերը կամ թվանշանները (*1, 2, 3..., I, II, III...*, $\frac{1}{2}$, $2\frac{3}{4}$, *0,5, 2,75...*)։

---

[36] Է. Բ. Աղայան, *Լեզվաբանության ներածություն, 1967, էջ 329։*

Թվականներն առանձին բառատեսակ են նաև իրենց ձևույթային կազմով։ Նրանք կազմում են համրանքային (нумеративный) ձևույթների առանձին տեսակ և առանձնանում են մնացած անվանական (номинативный), ցուցական (указательный) և քերականական (грамматический) ձևույթների խմբերից։

Ժամանակակից հայերենում թվականները, ինչպես հատկանիշ նշանակող մյուս խոսքի մասերը, չփոփոխվող և քերականական-ձևաբանական կարգեր չունեցող բառեր են։ Քանակական և դասական թվականները հոլովվում են և որոշիչ հոդ են ստանում գոյականաբար վերցվելիս միայն (Վեցը տուր ինձ, երկուսը պահիր)։ Քանակականները հոդ են ստանում նաև բացարձակ քանակային նշանակությամբ գործածվելիս (Երեքին գումարենք հինգ, կստանանք ութ)։ Այդպիսին չեն բաշխական թվականները։ Երեքական, ութական, հինգ-հինգ և այլն բաշխականները գոյականաբար չեն գործածվում, հոլովաձև և հոդ չեն ունենում։ Այս և մասամբ էլ շարահյուսական առանձնահատկությամբ բաշխականները հարաբերակից են մակբայներին[37]։

Թվականներին առանձնահատուկ են նաև՝ նրանց բառային իմաստով պայմանավորված մի քանի շարահյուսական առանձնահատկություններ։

Որպես քանակային հատկանիշ վերագրվելով առարկային՝ թվականներն այդպիսով արտահայտում են առարկայի թվային կամ կարգային հարաբերությունը հաշվվող մյուս առարկաների նկատմամբ։ «Չէ՞ որ թիվը բնավ չի վերաբերում առարկաների բնութագրին»[38]։ Թվային հատկանիշը առարկայի ներքին հատկությունը չէ, որ բացահայտվում է մեր կողմից։ Այն վերագրվում է առարկային մեր կողմից՝ ըստ հանգամանքի, ըստ առարկաների հարաբերության։ Դրա համար էլ թվականները, որպես ավելի բարձր աստիճանի վերացություններ, չունենալով իմաստային սահմանափակում, վերագրվում են հաշվի, չափի ու կշռի ենթակա բոլոր առարկաներին հավասարապես (Կատենք՝ fuան ոչխար՝ մատիտ, ճաճճ, գետ, աշխարճ, ճառագայթ, ճատիկ. Կատենք՝ փափուկ մատիտ՝ ճատիկ, բայց չենք ասի՝ փափուկ ոչխար՝ ճաճճ, գետ, աշխարճ և այլն)։

Թվականները, մանավանդ դասականները, դերանունների նը-

---

[37] Համմ. Ա. Ղարիբյան, Հայ մանկավարժական լեզվաբանություն, Երևան, 1969, էջ 172։

[38] «Вопросы теории частей речи», էջ 112։

ման իրենց մեջ ունեն որոշ աստիճանի ցուցականություն և իրադրայնություն։ Այս-ը մատնանշում է այն առարկան, որը մոտ է խոսողին (այս գիրքը)։ Երկրորդը վերագրվում է առարկայի ցույց տալու համար, որ այն (առարկան) չունվող առարկաների շարքում իրենից առաջ ունի միայն մեկ առարկա (երկրորդ գիրքը)։ Սա էլ է, իհարկե, հարաբերական ու իրադրային, որովհետև «...այն, ինչ առաջինն է այս մարդու համար, կարող է երկրորդը կամ որևորդն ուզում եք լինել մի ուրիշ մարդու համար»[39]։ Ինչպես այս-ը, դրվելով առարկայի վրա, նրա մեջ ոչինչ չի բացահայտում, նրա հատկանշային ոչ մի կողմը չի բնութագրում, այնպես էլ երկրորդ-ը։

Թվերի գործառական այս իրադրայնությամբ և պայմանականությամբ պիտի բացատրել այն իրողությունը, որ ֆրանսիացու համար առաջին դասարանում լինելը նշանակում է ավարտական դասարանում լինել, իսկ տասներորդում լինելը՝ սկսնական, մինչդեռ մեզ համար հակառակն է։ Ուսանողի համար հինգ գնահատականն ամենալավը նշանակում է ուսման մեջ առաջինը լինել, իսկ մարզիկի համար վազքում հինգերորդը լինելը նշանակում է մրցանակային տեղ չգրավել։ Նկատի ունենալով թվականների իմաստային վերացականությունն ու գործառական իրադրայնությունը՝ առանձին լեզվաբաններ հնարավոր են համարում թվականները համարել դերանունների տարատեսակ և նրանց հետ միավորել մի բառախմբի մեջ՝ վերջինս բնութագրելով որպես «կիսաձևական» բառերի խումբ[40]։

Թվականների իրադրային-պայմանական գործածությունը նրանց դարձնում է խոսքի տեխնիկային վերաբերող ձևական բառեր։ Որպես լրացուցիչ նշաններ, թվականներն ամենում են սոսկ ճանաչողական արժեք։ Պողպատի որակապես տարբեր մոտ հիսուն տեսակները կարող էին ունենալ առանձին անուններ, բայց դրանք պրակտիկայում իրարից տարբերվում են թվային համարներով։ Այս ձևական-սպասարկու դերը նկատի ունենալով՝ որոշ գիտնականներ առաջարկում են թվականները մտցնել «սպասարկու» խոսքի մասերի շարքը։

Թվականներն, իբրև կանոն, լրացում չեն ունենում։ Նրանց հետ երբեմն գործածվում են թվային նշանակության մոտավորական, առավելական և այլ իմաստային երանգներ արտահայտող մակ-

---

[39] Նույն տեղում, էջ 113։

[40] Նույն տեղում, էջ 10—11։

բայներ ու երանգական բառ-մասնիկներ (մոտ, մոտավորապես, գրեթե, ամենամիշը, մի, առնվազն...):

Իբրև որոշիչ գործածվելիս, թվականները գոյականական բառակապակցության մեջ ցուցաբերում են մի յուրահատկություն ևս: Նրանք գոյական լրացյալի հետ կազմում են շարահյուսական մի ամբողջություն: Մանավանդ ժամանակի և տարածության անուն գոյականների հետ թվականները կազմում են շարույթ և իրենց լրացյալի հետ դառնում են նախադասության մեկ անդամ: Երկու ժամ, Բսան օր, Հիսուն տարի, տասը միլիմետր, Բառասուն կիլոմետր *և նման կապակցությունները ժողովը երկու ժամ տևեց,* Քսան կիլոմետր անցան *տիպի նախադասություններում գործողության ժամանակի տևողության և տարածության չափի պարագաներ են՝ որպես շարույթ անանջատ վերցված:*

Բայի հետ, ինչպես ասվեց, բացարձակ թվականներն առանձին չեն գործածվում: Նրանք բայի լրացում են դառնում անգամ *բառին կապակցված (հինգ անգամ, Բսան անգամ...) և արտահայտում են գործողության կրկնվածության թիվը: Վերոհիշյալ կապակցություններում անգամ բառը մակբայական փոխարինիչ բառ-մասնիկ է:*

Այսպիսով, բացարձակ (քանակական) թվականները գործառությամբ կա՛մ գոյական են, կա՛մ ածական: Որպես բացարձակ թվային մեծություն՝ գոյական են. բայց գոյականական կապակցություն չեն կազմում, որոշիչ լրացում չեն ունենում: Որպես առարկայի քանակային հատկանիշ, դառնում են որոշիչ և կատարում են ածականի դեր (թվական ածական). բայց թվական-որոշիչը տարբերվում է ածական-որոշիչից իր լրացական հարաբերության բովանդակությամբ:

Դասական թվականները շարահյուսորեն ածական են կամ թվական-ածական:

Բաշխական թվականները ածական են, որոնք հավասարապես ունեն նաև մակբայական գործածություն:

Բոլոր թվականները, միասին վերցված, բնութագրվում են իմաստային մի շարք առանձնահատկություններով: Բոլոր թվականներն իրար միավորող և մյուս անուն խոսքի մասերին հակադրողը թվականների խոսքիմասակազմական առանձնահատկությունն է: Այսինքն այն, որ այլ խոսքի մասերից թվականներ չեն կազմվում, այլ կերպ՝ թվականը չունի խոսքիմասակազմություն:

Ուրեմն ճիշտ են այն լեզվաբանները, որոնք թվականը համա-

րում են բառային իմաստով մեկուսացած, խոսքի մասերի շարքում քերականորեն եռապլան (գոյական-թվական, ածական-թվական, մակբայ-թվական) բառատեսակ կամ խոսքի մաս:

Այս բնութագրով թվականները նման են լեզվական մանրահամասկարգերի հակադրություններում (գոյականի եզակի—հոգնակի թիվ, բայի ներգործական—կրավորական սեռ և այլն) երևան եկող բառերի փակ շարքերի (անեզական կամ անհոգնական գոյականներ, «անսեռ» բայեր և այլն): Համասկարգը քննելիս այս փակ շարքերը հաշվի են առնվում կամ հակադրության կողքին, կամ ներսում:

Բ) ԴԵՐԱՆՈՒՆ ԽՈՍՔԻ ՄԱՍԵՐ

1. Ընդհանուր առանձնահատկություններ.— *Նյութական նշանակություններ կամ հասկացություններ, ինչպես ասվել է, լեզվում ունենում են երկակի արտահայտում՝ անվանական և դերանվանական: Բառերի անուններ-դերանուններ խմբավորումը լեզուների խոսքի մասերի համասկարգի հնագույն հասկացություններից է: Սակայն, ինչպես ցույց են տալիս քերականությունների պատմությունն ու ժամանակակից տեսությունը, անուն-դերանուն հակադրությունը խոսքիմասային սովորական երկանդամ հակադրություն չէ: Դերանվանական բառերի առանձնացումը անվանական բառերից նյութական նշանակության բառերի այնպիսի խմբավորում է, որով միաժամանակ իրարից բաժանվում են կամ՝ դերանուն խոսքի մասը անուն խոսքի մասերից, կամ՝ դերանուն խոսքի մասերը անուն խոսքի մասերից, կամ՝ տարբեր խոսքի մասերից յուրաքանչյուրի դերանուն տեսակը՝ անուն տեսակից:*

Հարցի պատմության շարադրանքի ընթացքում վկայակոչված, ինչպես և մեջ չբերված մեզ հայտնի լեզվաբանական գրականության մեջ դերանվանական բառերը բնութագրվում են հետևյալ առանձնահատկություններով:

ա) Անվանական բառերն ունեն նյութական և միաժամանակ քերականական նշանակություն, մինչդեռ դերանուններն ունեն միայն քերականական նշանակություն: Դերանունները բարձր վերացության, քերականացած բառերն են:

բ) Ի տարբերություն անվանական բառերի, շարակարգից դուրս դերանունների բառիմաստները չունեն արտալեզվական օբյեկտներ: Չլինելով արտալեզվական օբյեկտների անուններ՝ դե-

բանունների բառիմաստները այդպիսի օբյեկտների հասկացություններ չեն։

Առանձին լեզվաբաններ, իմաստային այս յուրահատկությունը նկատի ունենալով, դերանունները ճանաչում են որպես ամենաընդհանուր կամ «չտարբերակված» բառային իմաստ ունեցող բառեր։

գ) Ի տարբերություն բառանունների (բառ-սիմվոլների), որոնք հասկացությունների իմացական նշանակումներ են, դերանունները բառ-նշաններ են։ Նրանք իրենց բառային կոնկրետ նշանակությունը ձեռք են բերում նախադասության մեջ՝ պայմանավորված կոնտեքստային կամ առարկայական իրադրությամբ։

Նկատի ունենալով դերանունների բառային այս առանձնահատկությունը շատ լեզվաբաններ դերանունները համարում են որպես «...երևույթներն ու ընկալումները ըստ նրանց՝ խոսողի նկատմամբ ունեցած հարաբերության նշանակող «ցուցական» բառեր»[41]։ Նույն առանձնահատկությունը նկատի ունի Հ. Աճառյանը, որ գրում է՝ «ըստ այսմ՝ դերանունն ամբողջովին անորոշություն է և որևէ կապակցությամբ միայն կարող է նշանակել այսինչ առարկան։ Այս ձևով դատելով՝ գոյականը առարկայի ընդհանուր անունն է, առանց ցույց տալու, թե որն է, իսկ դերանունը ցույց է տալիս թե որն է, առանց այդ առարկայի անունը տալու»[42]։

դ) Իրենց իմաստային կառուցվածքում չունենալով դրական (նույնացնող, ընդհանուր) և բացասական (դասակարգող տարբերակիչ) «լիցքեր»՝ դերանունները ոչ թե տեսակի անուն հասկացություններ են, այլ քերականական ընդհանուր և մասնակի նշանակությունների (կարգերի) բառային արտահայտիչներ են։

ե) Նրանց իմաստային կառուցվածքի համալիրի բառային իմաստի վանդակը լեզվական մակարդակում (խոսքից դուրս) դատարկ է։ Այն լրացվում է խոսքային իրադրության մեջ՝ զգայական ընկալմամբ։ Դերանունների իմաստային այս կողմը նկատի ունեն առանձին լեզվաբաններ, որ գտնում են, թե «...դերանունները հաստատուն նշանակություն չունեն, այլ ամեն անգամ նայելով թե ինչ անվան տեղ են դրված կամ ինչ անուն են ակնարկում՝ նրա նշանակությունն էլ ստանում են»։

---

[41] *Տե՛ս* **В. В. Виноградов**, Русский язык, էջ 322։

[42] *Հ. Աճառյան, Լիակատար քերականություն հայոց լեզվի, հ. 2, 1954, էջ 5։*

[43] *Մ. Աբեղյան, Հայոց լեզվի տեսություն, էջ 364։*

Յուրաքանչյուր առանձին հարաբերության մեջ դերանվան արտահայտած իմաստը կոնկրետ է։

գ) Անվանական բառերի նման դերանուններն էլ ունենում են անկախ գործածություն և դառնում են նախադասության անդամ։

է) Ունենալով կարգային ընդհանուր իմաստներ և ազատ լինելով բառային իմաստի կաշկանդումից՝ դերանունները կարող են գործածվել տվյալ խոսքի մասին պատկանող բոլոր բառերի փոխարեն։ Այլ խոսքի մասերին փոխարինելը դերանունների լեզվական ամենակարևոր առանձնահատկությունն ու արժեքն է։ Դերանունների այս առանձնահատկությունը նկատի ունենալով՝ առանձին լեզվաբաններ բառերի խոսքիմասային դասակարգման մեջ դերանունները համարում են որպես իրենց համապատասխան խոսքի մասերի փոխարկական տարբերակներ և դրանք քննում են ըստ խոսքիմասային փոխանցման և փոխարկման։

ը) Ինչպես նկատված է, «փոխարկական գործառությունը (հմմտ. միմիյանց և այլն) բոլոր դերանունների էությունը չէ»[44], ինչպես նաև դերանունների մի մասին յուրահատուկ են գործառական այնպիսի հատկանիշներ, որոնք յուրահատուկ չեն մյուս խոսքի մասերից ոչ մեկին։

Իրենց իմաստային առանձնահատկության շնորհիվ դերանունների մի մասը դառնում են դիմային հարաբերության, հարցման, ժխտման, նյութական անորոշ և հարաբերական իմաստների արտահայտիչներ։

«Դեմքի արտահայտությունը դերանունների էությունն է կազմում»[45]։

թ) Նախադասության մեջ դերանունները պաշտոններ են ստանում ըստ իրենց խոսքիմասային ընդհանուր իմաստի և, չունենալով բառային իմաստի կաշկանդում, փոխարինում են անուններին հավասարապես։ Բայց և դերանվան իմաստային նույն առանձնահատկության պատճառով դերանուններն իրենք լրացում չեն ունենում։

ժ) Ըստ շարակարգում ունեցած իրենց գործածության՝ դերանունները ձևափոխվում են, ստանալով համապատասխան քերա-

---

[44] Գ. Բ. Ջանուկյան, *Խոսքի մասերի կաղապարային դասակարգումը («Լրաբեր», 1976, № 1, էջ 29)։*

[45] Գ. Բ. Ջանուկյան, *Ժամանակակից հայերենի տեսության հիմունքները, էջ 218։*

կանական հատկանիշներ։ Զևափոխությունը կամ թեքումը յուրահատուկ է գոյական դերանուններին։

ժա) Բառակապակցության մեջ դերանուններն անունների նման շեշտակիր են։

ժբ) Հայերենի բառակազմությանը քիչ են մասնակցում. «...բառակազմական «դերանվանական» առանձնահատկություններ չունեն և հանդես են գալիս որպես գոյականներ կամ ածականներ...»[46]*։ Հայերենը չունի դերանվանական ածանցներ և դերանվանական խոսքիմասակազմություն։ Դերանուններն առաջանում են նյութական նշանակության բառերից՝ պատմականորեն դերանվանացմամբ (քերականացմամբ)։ Նրանք կայուն բառացանկ ունեցող և միայն վերարտադրվող բառեր են։*

Դերանունների այս բառաքերականական առանձնահատկությունները, տարբեր լեզվաբանական ուղղությունների ու անհատների կողմից տարբեր մեկնաբանությունների ենթարկվելով, հիմք են դառել դերանվանական բառերի զանազան դասակարգումների։ Նախ որ տարբեր մոտեցումներով են ընտրում դերանունների բառացանկը։ Երբ շեշտվում են դերանվան բառային կառուցվածքն ու քերականական առանձնահատկությունները, երկրորդական ձևույթներով փոխարինվելու նրա հատկությունը, այդ բառացանկը նեղացվում է. երբ ընդգծվում են իմաստային կողմերը, դերանվան մեջ են միավորվում բոլոր իրադրական-ցուցողական բառերը, և այդ բառացանկը ընդլայնվում է։ Այսպիսի տարբեր մոտեցումների արտահայտություններ են հայերենի համար արված այնպիսի դատողությունները, ինչպիսին է. «Իսկ ինչ վերաբերում է անորոշ, որոշյալ, ժխտական դերանուններին, ապա դրանք առանձնահատուկ քերականական հատկանիշներ երևան չեն հանում, և եթե մենք ևս վերջիններս ներկայացնում ու քննում ենք դերանունների բաժնում, ապա այդ անում ենք խիստ պայմանականությամբ՝ հետևելով ժամանակակից հայերենի քերականական համակարգով ընդունված դրույթին»[47]*։*

Միասնական չէ հայագետների մոտեցումը նաև դերանունների խոսքիմասային պատկանելության հարցում։ Ա. Ղարիբյանը, որ բոլոր դերանունները մեկ խոսքի մասի մեջ խմբավորելու կարծիքի տեսական հիմնավորողներից էր, այդ կարծիքի լայն տարածումից

---

[46] Ս. Ա. Գալստյան, նշվ. աշխ., էջ 27—28։

[47] Մ. Ասատրյան, նշվ. աշխ., էջ 125։

հետո հանկարծ գրում է. «Այս, այդ, այն դերանունները, որ ածական են, փոխանունաբար գործածվելիս ընդունում են սա, դա, ձա դերանունների հոլովումը...»[48]: *Գ. Ջահուկյանը, դերանունների խոսքիմասային արժեքը որոշելիս, դերանունները որպես մեկ խոսքի մաս ճանաչելու մոտեցումը նույնիսկ հարցի լուծման գիտական եզանակ չի համարում: Հեղինակը գրում է. «Դերանունների խոսքիմասային դիրքը որոշելիս հնարավոր է երկու մոտեցում՝ կամ դրանք բաշխել թվականների, ածականների գոյականների և մակբայների վրա և տարբերակել ըստ իրադրականության ու փոխարկայնության, կամ, նկատի առնելով, որ դերանունների գործառական մի տեսակը («դերանվանական ածականը») ինքնուրույնաբար հանդես է գալիս գոյականական շարույթի մեջ որպես բաղադրիչ, դրա հիման վրա այն տարբերել որպես խոսքի մաս և մյուս դեպքերը քննել ըստ փոխանցման և փոխակերպման»*[49]: *Դերանունները դասակարգելիս Մ. Աբեղյանը վարվել է առաջին եղանակով, իսկ ինքը՝ Գ. Ջահուկյանը՝ երկրորդ եղանակով:*

Նկատի ունենալով դերանունների իմաստային, բառակազմական, մասամբ էլ քերականական (բառակապակցական) վերոհիշյալ առանձնահատկությունները, որոնցով նրանք որոշակիորեն բաժանվում են անվանական բառերից և հիմք դառնում այն ճշմարտացի դատողությանը, թե դերանունները երբեք գոյականների և ածականների շարքը չի կարելի դասել[50]*, ինչպես նաև ավանդական մոտեցումն ու ուսուցողական նկատառումը,—կարծում ենք, դերանունների խոսքիմասային դասակարգումը անուն խոսքի մասերին զուգահեռ, առանձին դերանուն խոսքի մասերի համակարգով ներկայացնելը ավելի ճշմարտացի ու նպատակահարմար է:*

2. Գոյական դերանուն.—Առարկա կամ առարկայի դեմք մատնանշող դերանունները կոչվում են գոյական դերանուն: Գոյական դերանուններ են՝ ես (մենք), դու (դուք), նա (նրանք), ինքը (իրենք, ինքները), սա (սրանք), դա (դրանք), նա (նրանք), մեհոնք, ձեհոնք, իրար, միմյանց, մեկմեկու (մեկմեկի), ո՞վ (ովքե՞ր), ի՞նչ (ինչե՞ր), ո՞րը (որո՞նք), յուրաքանչյուր ոք, ոմանք, մեկը, մեկն ու մեկը, մի քանիսը, ոչ մեկը, ոչինչ, ոչ ոք:

Այս դերանուններից իրենք, մեհոնք, ձեհոնք, ո՞րը (որո՞նք),

---

[48] Ա. Ղարիբյան, *նշվ. աշխ., էջ 181:*

[49] Գ. Բ. Ջահուկյան, *նշվ. աշխ., էջ 29:*

[50] *Տե՛ս* «Вопросы теории частей речи», *էջ* 173:

(մի) ֆանիսը, ամեմը, մեկը (մեկն ու մեկը, ամեն մեկը) *առարկայանիշ են դարձել փոխանունաբար։ Այդպես, ստանալով որոշիչ հոդ, փոխանունաբար գոյական դերանվան նշանակություն են ձեռք բերում նաև* ամեն, ողջ, ամբողջ, յուրաքանչյուր, բոլոր, նույն, մյուս *ածական դերանունները։*

Առարկայական իմաստով երբեմն գործածվում են նաև այս, այդ, այն *ածական դերանունները*[51]։

Գոյական դերանուններին առանձնահատուկ են ինոլովի, թվի, առկայացման, դասի, *մի մասին՝ նաև դեմքի քերականական կարգերը։*

Մատնանշվող առարկաների թվային նշանակությամբ պայմանավորված՝ գոյական դերանուններից մի քանիսը (միմյանց, իրար, մեկմեկու) *անեզական են. մի մասը* (ամեն ոք, ամեն ինչ, մեկը, ամեն մեկը, մեկն ու մեկը, յուրաքանչյուր ոք, ոչ ոք, ոչինչ, ոչ մեկը) *անհոգնական են։ Ի՞նչ և ինքն դերանունները գոյականի պես հոգնակին կազմում են* -եր *մասնիկով՝* ինչե՞ր, ինքներ։ *Դու-ն ստանում է* -ք-*ը՝* դուք։ *Մնացածների հոգնակին ունենում է տարարմատ և տարահիմք կազմություն* (ես–մենք, նա–նրանք, սա–սրանք, ո՞վ–ովքե՞ր, ինքը– իրենք...)։

Գոյական դերանունների մեծ մասը հոլովվում է գոյական անունների նման՝ անվանական հոլովմամբ (ինչ—ինչի—ինչից..., ոչ ոք—ոչ ոքի—ոչ ոքից... ամանք—ամանց—ամանցից..., մերոնք—մերոնց—մերոնցից..., նրանք—նրանց—նրանցից...)։

Գոյական դերանուններից ինը՝ ես, մենք, դու, դուք, սա, դա, նա, ինքը, ո՞վ, *հոլովվում են դերանվանական հոլովմամբ, որին առանձնահատուկ է թեք հոլովաձևերի տարարմատ և տարահիմք կազմություն* (ես–իմ–ինձ..., մենք–մեր–մեզ..., դու–ք–ձեզ..., դա–դրա–դրան..., ինքը–իր–իրեն..., ո՞վ–ո՞ւմ...)։

Ի տարբերություն գոյական անունների, գոյական դերանուններն ունեն սեռական հոլովի ձև (իմ, ք, մեր, ձեր, իր, սրա, դրա, նրա)։ *Ըստ էության այս ձևերից երեքը՝* սրա, դրա, նրա, *տրականից տարբերվում են միայն ն մասնիկով, ուրեմն առանձին հոլովաձև չեն, իսկ մյուսները* (իմ, ք, մեր, ձեր, իր) *Մ. Աբեղյանի,*

---

[51] *Այս և հետագա շարադրանքը հմմտ. Հ. Ա. Հարությունյան, Ածական անուն. Դերանուն, 1976, էջ 71—83։*

Հ. Աճառյանի, այլև Գ. Ջահուկյանի համար ստացական դերանուններ են[52]։

Գոյական դերանուններին յուրահատուկ է անձի և իրի դասի քերականական հատկանիշը։ Դերանվան դասային արժեքը որոշվում է ո՞վ և ի՞նչ հարցերով։ Ո՞վ հարցն ինքը և այդ հարցին պատասխանող դերանունները (ո՞վ—ես, դու, նա, ամենքը, ամեն nf, ոչ nf, յուրաքանչյուր nf, ոմանք) անձնանիշ են։ Ի՞նչ հարցը և այդ հարցին պատասխանող դերանունները (ի՞նչ–սա, դա, նա, ամեն ինչ, ոչինչ) իրի դասի (կամ դասային տեսակետից չեզոք) դերանուններ են։ Փոխադարձ դերանունները (իրար–իրարից..., մեկմեկու–մեկմեկուց..., միմյանց–միմյանցից...), մերոնք, ձերոնք ստացականներ, որոնք պատասխանում են ո՞ւմ–ումի՞ց, ովքե՞ր հարցերի, անձնանիշ դերանուններ են[53]։

Ինչպես տեսանք, դեռևս միջնադարի հայ քերականները դերանունների մեջ առանձնակի տեղ էին հատկացնում դեմքի հատկանիշին, որից էլնելով էլ դերանուն էին համարում միայն դիմանիշ (անձնական կամ էական) գոյական դերանունները։ Դեմքը ունի եռանդամ հակադրություն (ես (մենք)–դու (դուք) –նա (նրանք))։ Բուն դիմային հարաբերությունը խոսողի և խոսակցի մեջ է, հետևաբար երրորդ դեմքը, ըստ էության, հավասար է դեմքի չեզոքության։ Ինքը դերանունը գոյականների նման դիմային հատկանիշ է ստանում դիմորոշ հոդերով (ինքս (ինքներս)– ինքդ (ինքներդ)–ինքը (ինքները))։

Դիմային հարաբերություն ունեն մերոնք, ձերոնք ստացականները, ինչպես նաև՝ սա(սրանք)– դա (դրանք)– նա (նրանք), այս, այդ, այն ցուցականներն ու վերջիններից բաղադրված ոչ առարկայանիշ ձևերը (այսպես–այդպես–այնպես, այստեղ–այդտեղ–այնտեղ և այլն)։

Ըստ դիմայնության և ցուցականության հարաբերության անձնական և ցուցական դերանունները հարաբերակից են։ Անձնական դերանունների մեջ հիմնական բնութագիր ունի դիմայնությունը, երկրորդական՝ ցուցականությունը, իսկ ցուցական դերանունների մեջ հիմնական բնութագիր ունի ցուցականությունը, երկրորդական՝ դիմայնությունը։

---

52 Տե՛ս Գ. Բ. Ջահուկյան, Ժամանակակից հայոց լեզվի տեսության հիմունքները, էջ 219։

53 Նույն տեղում, էջ 217։

Դերանուններն, իբրև իրադրական բառեր, առարկայանշության մեջ միշտ կոնկրետ են, ուրեմն իրենք իսկ (կամ սրանցից առաջացած հոդերը) առկայացուցիչ բառեր են։ Որոշյալ հոդ են ստանում ինչ (ինչը), ամեն ինչ (ամեն ինչը) գոյական դերանունները։ Մեկը, ամեները դերանունները չունեն անորոշի ձևեր, ուստի ը-ն որոշյալի սովորական ցուցիչ չէ։

Գոյական դերանունները նախադասության մեջ գործածվում են գոյական անվան հիմնական և երկրորդական բոլոր պաշտոններով։ Միայն թե այս դերանունները, ի տարբերություն գոյական անվան, իրենք լրացում չեն ունենում։ Ի՞նչ և ո՞վ դերանունները կատարում են նաև շաղկապի դեր։

3. Ածական դերանուն.—*Առարկայի հատկանիշ մատնանշող դերանունները ածական դերանուններ են։ Դրանք են՝* այս, այդ, այն, սույն, նույն, միևնույն, մյուս, այսպիսի, այդպիսի, այնպիսի, նույնպիսի, այսինչ, այնինչ, ամեն, ամեն մի, ամենայն, այլ, բոլոր, յուրաքանչյուր, ողջ, ամբողջ, ճամայն, ամն, որչ, ոչինչ, որևէ, որևիցե, ինչ-որ, ինչ-ինչ, մի, ո՛ր, որպիսի՞, ինչպիսի՞։

Ածական դերանունները քերականական ձևաբանական կարգեր չունեն։ Փոխանվանական գործածությամբ փոխանցվում են գոյական դերանվան (ողջ–ողջը, ամբողջ–ամբողջը, ամեն–ամենը, բոլոր–բոլորը, յուրաքանչյուր–յուրաքանչյուրը, մյուս–մյուսը, սույն–սույնը, նույն–նույնը, միևնույն–միևնույնը, ո՛ր–ո՛րը, ուրիշ–ուրիշը, որպիսի՞–որպիսի՞ն, ինչպիսի՞–ինչպիսի՞ն, քանի՞–քանի՞սը) *և առանում են գոյական դերանվանն առանձնահատուկ քերականական կարգեր։*

Նախադասության մեջ այս դերանունները գործածվում են ածական անվան պաշտոններով՝ հիմնականում լինելով գոյական անվան լրացում՝ որոշիչ (Բոլոր մարդիկ մահկանացու են)։

4. Թվական (թվական–ածական) դերանուն.—*Առարկայի քանակային հատկանիշ մատնանշող դերանունները թվական (թվական-ածական) դերանուններ են։ Դրանք են՝* այսքան, այդքան, այնքան, նույնքան, այսչափ, այդչափ, այնչափ, նույնչափ, քա՞նի, որքա՞ն, ինչքա՞ն, ինչչա՞փ, որչա՞փ, ո՞րերորդ, քանի՞երորդ։

Շարահյուսական կիրառությամբ սրանք ածական դերանուններ են և վերջիններիս նման քերականական ձևաբանական կարգեր չունեն։ Փոխանվանական գործածությամբ թվական դերանունները նույնպես փոխանցվում են գոյական դերանվան (այսքան–այսքանը, նույնքան–նույնքանը, քանի՞–քանի՞սը, ինչքա՞ն–

ինչքա՞ն, ո՞րերորդ–ո՞րերորդը...) *և ստանում են գոյական դերանվանն առանձնահատուկ քերականական կարգեր:*

Ինչպես թվական անունները, այնպես էլ թվական դերանունները նախադասության մեջ գործածվում են ածականի պաշտոններով՝ հիմնականում լինելով գոյական անվան լրացում՝ որոշիչ (Լսարանում նույնքան մարդ կա):

Թվական դերանունների մեծ մասը գործածվում է նաև մակբայի պաշտոնով (Այսքան (այնչափ, ո՞րքան...) խոսելուց հետո ուժ կմնա՞):

5. Մակբայ դերանուն.—*Գործողության հատկանիշ կամ հատկանիշի հատկանիշ մատնանշող դերանունները մակբայ դերանուններ են: Դրանք են՝* այսպես, այդպես, այնպես, նույնպես, այստեղ, այդտեղ, այնտեղ, նույնտեղ, ինչպե՞ս, ինչո՞ւ, ո՞ւր, որտե՞ղ, ե՞րբ, երբևէ, երբևիցե:

Մակբայ դերանունները քերականական ձևաբանական կարգեր չունեն: Տեղ գոյականով բաղադրված այստեղ, այդտեղ, այնտեղ, նույնտեղ, որտե՞ղ, ինչպե՞ս, *նաև* ե՞րբ *մակբայ դերանունները հոլովվում են (այստեղ—այստեղի—այստեղից—այստեղով..., ե՞րբ—երբվա՞—երբվանի՞ց): Այս դերանուններում հոլովման քերականական կարգը մակբայ դերանվան և գոյական անվան խոսքիմաստային ստորին կարգի կապի արտահայտություն է: Նախադասության մեջ այս դերանունները գործածվում են մակբայի պաշտոնով և լինում են բայի լրացում՝ պարագա* (Այսպես (այստեղ, ե՞րբ, ինչո՞ւ...) ասաց մեր ուսուցիչը):

Հարցական-հարաբերական նշանակության բոլոր ածական, թվական, մակբայ դերանունները ունեն նաև շաղկապական գործածություն:

6. Բայ դերանուն.—*Գործողության կամ եղելության մասին ընդհանուր հարցում արտահայտող ի՞նչ անել, ի՞նչ լինել բայերը վերլուծական կազմության (հարադրական) բայ դերանուններ են: Ինչպես գոյական, ածական, թվական, մակբայ հարցական դերանուններով արտահայտվում է հարցում առարկայի, որակական հատկանիշի, քանակական հատկանիշի, հատկանիշի հատկանիշի մասին* (ո՞վ, ի՞նչ, ինչպիսի՞, ինչքա՞ն, ինչպե՞ս, ե՞րբ...), *այդպես էլ ի՞նչ անել (ի՞նչ լինել) հարցով արտահայտվում է հարցում առարկայի գործողության մասին: Այսպես՝* Ո՞վ եկավ:— Առամը: Առամը ի՞նչ արեց:— եկավ:


Դերանուններն ըստ նշանակության լինում են՝ անձնական,

ցուցական, փոխադարձ, հարցական-հարաբերական, ժխտական, որոշյալ, անորոշ: Այս բաժանումը լեզվական կարևոր նշանակություն ունեցող բաժանում է, բայց դերանունների խոսքիմասային դասակարգման հետ անմիջական կապ չունի:


Յուրաքանչյուր խոսքի մաս, անուն թե դերանուն, իր ներքին ստորակարգությամբ և միջխոսքիմասային կապերով, զբաղեցնում է լեզվի կառուցվածքի որոշակի իմաստային դաշտ: Որքան այդ «դաշտերն» ու սրանց հատվածները մերձավոր են, այնքան խոսքիմասային ընդհանրություններն ու անցումները նկատելի են (տե՛ս գծապատկերը):

Խոսքիմասային իմաստ ունեցող կամ հիմնական խոսքի մասեր

Ա) Անուն խոսքի մասեր



Բ) Դերանուն խոսքի մասեր



ՕԳՏԱԳՈՐԾՎԱԾ ԳՐԱԿԱՆՈՒԹՅՈՒՆ

Լեհեհ Վ. Ի., *երկեր, հ. 3, 20, 38, Երևան, 1962։*

Աբեղյան Մ., *Աշխարհաբարի քերականություն, Վաղարշապատ, 1906։*

Աբեղյան Մ., *Աշխարհաբարի շարահյուսություն, Վաղարշապատ, 1912։*

Աբեղյան Մ., *Հայոց լեզվի տեսություն, Երևան, 1931, 1965։*

Աբրահամյան Ա. Ա., *Հայոց լեզվի ուսուցման հիմունքները միջնակարգ դպրոցում, Երևան, 1951։*

Աբրահամյան Ա. Ա., *Գրաբարի ձեռնարկ, Երևան, 1952։*

Աբրահամյան Ա. Ա., *Հայերենի դերբայները և նրանց ձևաբանական նշանակությունը, Երևան, 1953։*

Աբրահամյան Ա. Ա., *Բայը ժամանակակից հայերենում, Երևան, 1962։*

Աբրահամյան Ա. Ա., *Խոսքի մասերի և նախադասության անդամների փոխհարաբերության հարցի շուրջը («Հայոց լեզուն և գրականությունը դպրոցում», № 6, 1971)։*

Աբրահամյան Ա. Ա., Ս. *Պալասանյանը և աշխարհաբարի քերականության իր դասագիրքը («Հայոց լեզուն և գրականությունը դպրոցում», № 2, 1974)։*

Աբրահամյան Ս. Գ., *Արդի հայերենի դերանունները, Երևան, 1956։*

Աբրահամյան Ս. Գ., *Ժամանակակից հայերենի չթեքվող խոսքի մասերը, Երևան, 1959։*

Աբրահամյան Ս. Գ., *Ժամանակակից հայերենի եղանակավորող բառերը (ՀՍՍՀ ԳԱ «Տեղեկատու», 1958, № 4)։*

Աբրահամյան Ս. Գ., *Չթեքվող խոսքի մասերը և նրանց բառական ու քերականական հատկանիշների փոխհարաբերությունը ժամանակակից հայերենում, Երևան, 1965։*

Աբրահամյան Ս. Գ., *Ժամանակակից հայերենի քերականություն, Երևան, 1969։*

Աբրահամյան Ս. Գ., Վերդյան Բ. Հ., Քոսյան Վ. Ս., *Հայերեն լեզվի դասագիրք, Երևան, 1966։*

Աղայան Է., *Լեզվաբանության ներածություն ըստ լեզվի նոր ուսմունքի, Երևան, 1949։*

Աղայան Է. Բ., *Հայ լեզվաբանության պատմություն, հ. 1, Երևան, 1958։*

Աղայան Է. Բ., *Հայ լեզվաբանության պատմություն, հ. 2, Երևան, 1962։*

Աղայան Է. Բ., *Լեզվաբանության ներածություն, Երևան, 1967։*

Աղայան Է. Բ., *Ժամանակակից հայերենի հոլովումը և խոնարհումը, Երևան, 1967։*

Աճառյան Հ., *Լիակատար քերականություն հայոց լեզվի՝ համեմատությամբ 562 լեզուների, 1—5, Երևան, 1952—1967։*

Այտընյան Ա., *Քննական քերականություն աշխարհաբար կամ արդի հայերեն լեզվի, հանդերձ ներածությամբ և հավելվածով, Վիեննա, 1866։*

Աբաբելյան Վ. Դ., Խաչատրյան Է. Հ., Էլոյան Ս. Ա., *Ժամանակակից հայոց լեզու, հ. I, Երևան, 1979։*

Աբաբելյան Վ., *Ժամանակակից հայերենի հոլովների և հոլովական կապակցությունների խմաստային առումները, Երևան, 1957։*

Աբաբելյան Վ., *Հայերենի շարահյուսություն, Ա—Բ, Երևան, 1958—1964։*

Աբաբյան Մ., *Ժամանակակից հայոց լեզվի ձևաբանության հարցեր, Ա, Բ, Գ, Երևան, 1970, 1973, 1977։*

Ավագյան Վ., *Նշանակավորող բառերը և նրանց ուսուցումը, Երևան, 1975։*

Ալշերեան Վ., Յարութիւն, *Քերականութիւն անգղիական և հայերէն, յօրինեալ Ի. Հ. Յարութիւն Վարդապետէ Ալշերեան ի Վենետիկ, 1857։*

Անեսիեան Գ., *Քերականութիւն հայկական, Վենետիկ, 1815։*

Աբաբաչյան Ա., *Տարրական քերականություն հայոց աշխարհաբար լեզվի, Ալեքսանդրապոլ, 1903։*

Արևելցի Վարդան, *Մեկնութիւն քերականին, Աշխատասիրությամբ Լ. Գ. Խաչերյանի, Երևան, 1972։*

Արևելցի Վարդան, *Վասն բանին մասանց (ՍՍՀՄ ԳԱ հայկական ֆիլիալի «Տեղեկագիր», 1943 թ., № 2, հրատարակիչ Լ. Խաչիկյան)։*

Բագրատունի Ա., *Հայերէն քերականութիւն ի պէտս զարգացելոց, Վենետիկ, 1852։*

Բանաբյանց Ս., *Քերականություն աշխարհիկ լեզվի, Տիխիս, 1879։*

Բարսեղյան Հ. Խ., *Արդի հայերենի բայի և խոնարհման տեսություն, Երևան, 1953։*

Բարսեղյան Հ. Խ., *Հայերենի խոսքի մասերի տարբերակման տեսությունները, Երևան, 1975։*

Բարսեղյան Հ. Խ., *Հատուկ անուն (տեսական-նկարագրական ակնարկ), Երևան, 1964։*

Գազանճյան Հովհ., *Նոր քերականություն արդի հայերեն լեզվի, Ա և Բ մաս, Պոլիս, 1910։*

Գալանոս Կղեմէս, *Քերականական և տրամաբանական նկրածութիւն առ յիմաստասիրութիւնն շահելոյ, Հռոմ, 1645։*

Գարագաշյան Ա. Մ., *Դպրություն կամ նոր քերականություն հայերեն, Կ. Պոլիս, 1880։*

Գալստյան Ս. Ա., *Ածանցումը և ածանցները ժամանակակից հայերենում, Երևան, 1978։*

Գարեգինյան Գ. Լ., *Շաղկապները ժամանակակից հայերենում, Երևան, 1963։*

Գյուլբուդաղյան Ս. Վ., *Թվական անունը ժամանակակից հայերենում, Երևան, 1964։*

Դրիգորյան Ա., *Հայոց լեզվի դասագիրք, միջնակարգ դպրոցի 8—10-րդ դասարանների համար, Երևան, 1953։*

Դրիգորյան Անահոն, *Հայոց լեզվի դասագիրք, ութամյա դպրոցի 5—7-րդ դասարանների համար, Երևան, 1963։*

Թումանյանց Հար., *Համառոտ ստուգաբանություն հայոց աշխարհաբար լեզվի, Թիֆլիս, 1904։*

Իշխանյան Ռ., *Մակբայները հայերենում (Երևանի պետական համալսարանի «Ուսանողական գիտական աշխատություններ» ժողովածու», 1948, № 4)։*

Ալդաբյան Ֆ., *Գոյական անուն, Երևան, 1968։*

Կոստանդնուպոլսեցի Յօհ., *Քերականութիւն հայկաբանութեան կամ քերականութիւն հայկական շարադրեցեալ ի Յօհաննիսէ վարդապետէ Կոստանդնուպոլսեցւոյ, Հռոմ, 1674։*

Հայ ժողովրդի պատմություն, խմբագրությամբ Մ. Գ. Ներսիսյանի, Երևան, 1972։

Հարությունյան Հ. Ա., *Ածական անուն. Դերանուն, Երևան, 1976։*

Ղարիբյան Ա., *Հայոց լեզու, դասագիրք միջնակարգ դպրոցի 5—7-րդ դասարանների համար, Երևան, 1934 և հետագա տարիներ։*

Ղարիբյան Ա., *Հայոց լեզվի դասագիրք, ռուսական դպր. 5—7 դաս. համար, Երևան, 1971։*

Ղարիբյան Ա., *Հայոց լեզվի դասավանդման մեթոդիկա, Երևան, 1954։*

Ղարիբյան Ա., *Լեզվաբանական միտքը Ս. Աբովյանի անվան մանկավարժական ինստիտուտում («Հայոց լեզուն և գրականությունը դպրոցում», № 6, 1972)։*

Ղարիբյան Ա., *Հայ մանկավարժական լեզվաբանություն, Երևան, 1969։*

Ղափանցյան Գ., *Ընդհանուր լեզվաբանություն, Երևան, 1939։*

Մարգարյան Ալ., *Արդի հայերենի կապերը, Երևան, 1955։*

Մելիք-Թանգյան Ն., *Աշխարհաբարի քերականություն, Շուշի, 1893։*

Մուրադյան Ա., *Հունաբան դպրոցը և նրա դերը հայերենի քերականական տերմինաբանության ստեղծման գործում, Երևան, 1971։*

Նշեցի Եսայի, *Վերլուծութիւն քերականութեան, Աշխատասիրությամբ Լ. Գ. Խաչերյանի, Երևան, 1966։*

Շարաբխանյան Պ., *Գրաբարի շաղկապները, Երևան, 1960։*

Շիլկանձե Իվ. Ր., *Արդի հայերենի խոնարհման կատեգորիաները («Լեզվի և ոճի հարցեր», 2, Երևան, 1964)։*

Չալըխեան Հ., Վրթանիսի, *Քերականութիւն հայկազեան լեզուի, հանդերձ փոփոխութեամբք և յաւելուածովք, աշխատասիրեալ ի Հ. Ա. Վ. Այտընեան ի Մխիթ. ուխտէն, ի պէտս յառաջադէմ աշակերտաց, Վիէննա, 1885։*

Չալըխեան Վրթանէս, *Քերականութիւն հայկազեան լեզուի, աշխատասիրեաց Հ. Վրթանէս Վ. Չալըխեան ի Մխիթ.ուխտէն, ի Վիէննա, 1852։*

Չամչեան Մ., *Քերականութիւն Հայկազեան լեզուի, Շուշի, 1859։*

Պալասանյան Ստ. Հովճ., *Գործնական քերականություն հայերեն լեզվի, հ. առաջին, Ստուգաբանություն, Թիֆլիս, 1868։*

Պալասանյան Ս., *Քերականություն մայրենի լեզվի, Տփխիս, 1894։*

Պաղտասար Դպիր, *Պարզաբանութիւն քերականութեան կարճառօտ և դիւրիմաց Կ. Պոլիս, 1736։*

Պաղտասար Դպիր, *Հատոր 2-րդ Քերականութեան..., 1736, Կոստանդնուպոլիս։*

Պառնասյան Ն. Ա., *Ստորադասական կապակցությունը արդի հայերենի բարդ նախադասություններում, Երևան, 1961։*

Պառնասյան Ն. Ա. *Շարահյուսական հոմանիշները ժամանակակից հայերենում, Երևան, 1970։*

Պառնասյան Ն. Ա., *Քերականական համանունները ժամանակակից հայերենում, Երևան, 1979։*

Պետրոսյան Հ. Ջ., *Գոյականի թվի կարգը հայերենում, Երևան, 1972։*

Ոդոյան Գ. Մ., *Բայի եղանակային ձևերի ոճական կիրառությունները արդի հայերենում, Երևան, 1959։*

Ջահուկյան Գ. Բ., Քերականական և ուղղագրական աշխատությունները հին և միջնադարյան Հայաստանում (5—15-րդ դար), Երևան, 1954։
Ջահուկյան Գ. Բ., Հին հայերենի հոլովման սիստեմը և նրա ծագումը, Երևան, 1959։
Ջահուկյան Գ. Բ., Լեզվաբանության պատմություն, 1—2, Երևան, 1960—1962։
Ջահուկյան Գ. Բ., Հայոց լեզվի զարգացումը և կառուցվածքը, Երևան, 1969։
Ջահուկյան Գ. Բ., Դրաբարի քերականության պատմություն, Երևան, 1974։
Ջահուկյան Գ. Բ., Ժամանակակից հայերենի տեսության հիմունքները, Երևան, 1974։
Ջահուկյան Գ. Բ., Ժամանակակից հայերենի անդեմ բայերը («դերբայները»), «Բանբեր Երևանի համալսարանի», № 3, 1975։
Ջահուկյան Գ. Բ., Խոսքի մասերի կաղապարային դասակարգումը (ՀՍՍՀ ԳԱ «Լրաբեր հասարակական գիտությունների», № 1, 1976)։
Ջուհարյան Թ. Գ., Բայի ուսուցման հիմնական հարցերը, Երևան, 1956։
Ջուղայեցի Սիմէօն, Գիրք որ կոչի Քերականութիւն, Կոստանդնուպոլիս, 1725։
Սալլանբեան Միխայել, Քերականութիւն գրաբառ լեզուիս Հայոց, նորակարգ ոճով ի պէտս աշակերտաց գերհռչակ ճեմարանի..., 1827, ի Մոսկով։
Սերաստացի Մխիթար, Քերականութիւն գրաբարի լեզուի հայկազեան սեռի, Վենետիկ, 1730։
Սևակ Գ., Հայոց լեզվի շարահյուսության դասագիրք, 1938 և հետագա հրատարակություններ։
Սևակ Գ., Խոսքի մասերի ուսմունքը (Երևանի պետական համալսարանի «Գիտական աշխատություններ», հ. 11, 1939)։
Սևակ Գ., Ժամանակակից հայոց լեզվի տեսություն, Երևան, 1939։
Սևակ Գ., Ժամանակակից հայոց լեզվի դասընթաց, Երևան, 1955։
Վանցյան Գ., Դպրոցական քերականություն, Թիֆլիս, 1906։
Վերդյան Բ. Հ., Բարդ առորդասական նախադասության շարահյուսություն, Երևան, 1970։
Վերդյան Բ., Դերանվան որոշման հարցի շուրջը (ՀՍՍՀ ԳԱ «Տեղեկագիր» (Հաս. գիտ.), 1959, № 8)։
Տեր-Յարութիւնեան Մեսրոբ, Քերականութիւն հայոց լեզուի, նորոգ քննութեամբ յօրինեալ ամբողջ գրաբար, յաւելեալ ի վերջն և զհամառօտութիւն իմն աշխարհաբառ ի դիւրութիւն աշակերտելոց, 1826, Պոլիս։
Քյուրքչյան Ա. Ն., Եղանակավորող բառերը հայերենում (Երևանի հայկ. մանկ. ինստիտուտի «ԳԱԺ», № 8, 1969)։
Քոսյան Վ. Ա., Ժամանակակից հայերենի բառակապակցությունները։ Առանձնատիպ «Գիտ. աշխատություններ» (հայոց լեզվի բաժին) ժողովածուի № 2-ից, Երևան, 1967։
Օճանյան Հ. Ս., Ածական անունը ժամանակակից հայերենում, Երևան, 1962։
Маркс и Энгельс, Сочинения, т. VIII.
Ленинский сборник, XII, М.—Л., 1930.
Адонц Н., Дионисий Фракийский и армянские толкователи, Петроград, 1915.
Античные теории языка и стиля, М.—Л., 1936.
Атаян Э. Р., Предмет и основные понятия структурного синтаксиса, Ереван, 1968.

Атаян Э. Р., Части речи, их дифференциальные признаки и критерии классификации («Теоретические и практические вопросы преподавания иностранных языков», АН СССР, М., 1970).

Бабайцев В. В., О выражении в языке взаимодействия между чувственной и абстрактной ступеням познания действительности («Язык и мышление», М., 1967).

Бархударов Л. С., Служебные слова и их функции («Труды военного института иностранных языков», 1, М., 1952).

Богородицкий В. А., Общий курс русской грамматики, изд. 5. М.—Л., 1935.

Вандриес Ж., Язык, М., 1937.

Виноградов В. В., Русский язык, Москва, 1947, 1972.

Виноградов В. В., О категории модальности и модальных словах в русском языке («Труды института русского языка», II, М.—Л., 1950).

Волгина Н. С., Розенталь Д. Э., Фомина М. И., Цапукович В. В., Современный русский язык, М., 1971.

Вопросы теории частей речи на материале языков различных типов, Ленинград, 1968.

Галкина-Федорук, Слово и понятия, Учпедгиз, 1956.

Гвоздев А. Н., Современный русский литературный язык, ч. I, Москва, 1961.

Германович А. И., Междометия русского языка, Киев, 1966.

Грамматика русского языка, т. I, изд. АН СССР, М., 1952.

Грамматика современного русского литературного языка, АН, М., 1970.

Жданов О. К., Метонимические словообразования на основе имен собственных, Казан, 1963.

Жирмунский В. М., О природе частей речи и их классификации («Вопросы теории частей речи», Л., 1968).

Звегинцев В. А., История языкознания XIX—XX веков в очерках и извлечениях, изд. 3, ч. I, Москва, 1964.

Златкин В. З., Взаимодействие лексических значений в сочетании «глагол—предлог—имя» (ВЯ, № 4, 1976).

Исаченко А. В., Грамматический строй русского языка в сопоставлении со словацким, Братислава, 1954.

Кацнельсон С. Д., Типология языка и речевое мышление. Ленинград, 1972.

Кротевич Е. В., Слово, часть речи, член предложения, («Вопросы русского языкознания», книга 4, Львов, 1960).

Кунгуров Р. К., Тихонов А. Н., Изобразительные слова как самостоятельная часть речи («Вопросы теории частей речи», 1968).

Курилович Е., Очерки по лингвистике, Сборник статей, М., 1962.

Логическая семантика и модальная логика, М., 1967.

Кюркчян А., Наречие в армянском языке, Ереван, 1956 (Автореферат канд. дис.).

Майтинская К. Е., Местоимения в языках разных систем, Москва, 1969.

Маркарян Р. А., Типы семантического противодействия в сфере формообразования и словообразования, Ереван, 1970.
Мещанинов И. И., Члены предложения и части речи, М.—Л., 1945.
Мещанинов И. И., Глагол, М.—Л., 1948.
Общее языкознание, Внутренняя структура языак, Москва, 1972.
Овсянико-Куликовский Д. Н., Синтаксис русского языка, II изд., СПб., 1912.
Панов М. В., О частях речи в русском языке («Научные доклады высшей школы», Фил. науки, № 4, 1960).
Панов М. В., Русский язык (ЯН СССР, 1, М., 1966).
Панфилов В. З., Категория модальности и ее роль в конституировании структуры предложения и суждения (ВЯ, № 4, 1977).
Паул Г., Принципы истории языка, Москва, 1960.
Пешковский А. М., Русский синтаксис в научном освещении, Москва, 1938.
Попов А. С., О грамматической форме и категории в морфологии русского языка («Материалы по русско-словянскому языкознанию», Воронеж, 1963).
Потебня А. А., Из записок по русской грамматике, М., 1958.
Резников Л. О., Понятие и слово, Л., 1958.
Реформатский А. А., Введение в языкознание, М., 1955.
Русский язык, Учебник для VI класса, М., 1973.
Савченко А. Н., Части речи как грамматичесткие и лексико-грамматические классы слов в индоевропейских языках («Вопросы теории частей речи», Ленинград, 1968).
Савченко А. Н., Язык и системы знаков (ВЯ, № 6, 1972).
Скорик П. Я., О принципах классификации слов по частям речи (на материале чукотско-камчатских языков) («Вопросы теории частей речи, Л., 1968).
Смирницкий Л. И., Лексическое и грамматическое в слове («Вопросы грамматического строя», М., 1955).
Смирницкий А. И., Морфология английского языка, М., 1959.
Стеблин-Каменский М. И., Об основных признаках грамматического значения («Вестник ленинградского университета», Л., № 6, 1954).
Суник О. П., Общая теория частей речи, 1966.
Супрун А. Е., Части речи в русском языке, Москва, 1971.
Тихонов А. Н., Части речи—лексико-граматические разряды слов («Вопросы теории частей речи», Ленинград, 1968).
Томсен В., История языковедения до конца XIX в., М., 1938.
Травничек Фр., Некоторые значения слова и понятия (ВЯ, № 1, 1956).
Травничек Фр., Заметки о «Категории состояния» (ВЯ, 1956, № 3).
Туманян Э. Г., Древнеармянский язык, М., 1971.
Уфимцева А. А., Слово в лексико-семантической системе языка, М., 1968.
Филиппова В. М., Глагольно-именные словосочетания с временным значе-

нием в современном русском языке («Исследования по грамматике русского литературного языка», М., 1955).

Царукян В. Ш., Исследование структуры грабара в трудах грамматистов XVIII века, Ереван, 1970 (Автореферат канд. дис.).

Черкасова Е. Т., Закономерности и способы перехода полнозначных слов в предлоги (Автореферат докт. дисс.), М., 1966.

Чикобава А. С., Части речи как понятие филологической грамматики и как понятие описательного научного анализа («Вопросы теории частей речи», Ленинград, 1968).

Шахматов А. А., Синтаксис русского языка, Л., 1941.

Щерба Л. В., Избранные работы по русскому языку, М., 1957.

Щерба Л. В., Языковая система и речевая деятельность, Л., 1974.

Юрин А. В., К вопросу о семантике служебных слов, Чарджоу, 1960.

Schröder Yoh. Yoachim, Thesaurus linguae armenicae, antiquae et hodernae, Amstelodami, 1711.

ԱՆՁՆԱՆՈՒՆՆԵՐԻ ՑԱՆԿ

Աբեղյան Մանուկ. — 91, 163, 164, 165, 166, 167, 168, 169, 170, 171, 172, 173, 174, 175, 176, 177, 178, 179, 180, 181, 183, 184, 185, 186, 187, 188, 189, 190, 191, 192, 193, 194, 195, 196, 197, 198, 199, 200, 201, 202, 203, 204, 205, 206, 207, 208, 209, 211, 215, 224, 230, 231, 233, 234, 235, 238, 239, 240, 242, 243, 246, 253, 265, 270, 280, 284, 297, 304, 317, 318, 320, 322, 334, 348, 349, 354, 357, 368, 378, 392, 398, 399, 426, 435, 439, 444, 445

Աբովյան Խաչատուր.— 157, 208

Աբրահամյան Սերգեյ.— 152, 158, 199, 205, 206, 207, 228, 235, 243, 244, 247, 250, 251, 252, 253, 254, 255, 256, 257, 258, 259, 260, 261, 262, 263, 264, 265, 267, 268, 269, 270, 271, 274, 275, 276, 277, 278, 280, 283, 284, 285, 286, 288, 309, 311, 314, 317, 318, 319, 320, 321, 322, 323, 324, 325, 326, 327, 328, 330, 348, 353, 360, 368, 439, 440, 441, 443, 445, 448, 450, 452

Ադամյան Ա. Ա. — 18

Ադոնց Ն.— 4, 10, 11, 12, 17, 18, 20, 29, 30, 31, 147, 151

Աթայան Է. Ռ. — 249, 330, 362, 372

Ախմանովա.— 323

Ակսակով Կ. Ս. — 163

Աղայան Է. Բ. — 128, 139, 226, 228, 237, 265, 275, 278, 285, 286, 287, 288, 289, 290, 291, 292, 293, 294, 295, 296, 297, 299, 300, 301, 302, 303, 304, 305, 306, 307, 308, 309, 310, 311, 312, 313, 314, 315, 316, 317, 319, 326, 328, 359, 362, 365, 368, 376, 378, 388, 393, 396, 325, 440

Ամատյան Հր.— 226, 228, 232, 233, 234, 235, 236, 238, 239, 240, 241, 242, 243, 244, 245, 246, 247, 248, 249, 257, 294, 317, 318, 359, 378

Այտընյան Ա.— 128, 129, 139, 140, 141, 142, 143, 144, 145, 146, 150, 151, 152, 157, 175, 224, 233, 349

Անանուն.— 11, 15, 18, 25, 26, 27, 28 (26, 27)

Առաքելյան Վ.— 358, 360

Առաքել Սյունեցի.— 34, 48, 49, 50, 51, 52, 53, 54, 56, 58, 59

Ասատրյան Մանվել.— 161, 269, 351, 359, 360, 440

Ավգերյան Հարություն.— 128, 129

Ավագյան Ս.— 42, 45, 47

Ավագյան Վ.— 358, 438, 440, 445

Ավանեսով.— 230

Ավետիքյան Գաբրիել.— 120, 121, 122, 123, 124, 125, 128, 130, 134, 148, 150, 153, 214

Աբաբաջյան Ա.— 200

Աբաև Վ. Ի. — 388

Արիստոտել.— 4, 5, 6, 7, 37, 39, 105, 120, 449, 450

Վարդան Արևելցի.— 5, 9, 34, 35, 36, 37, 38, 39, 57, 59, 60, 61, 65, 89, 147, 149, 150

Բաբայցև Վ. Վ.— 222

Բագրատունի Արսեն.— 125, 130, 131, 132, 133, 134, 135, 136, 137, 138, 139, 151, 153, 159

Բաժանով Ն. Մ.— 399

Բահաթրյանց Ա.— 200

Բաղդասար Դպիր.— 103, 104, 105, 106, 107, 108, 109, 110, 111, 112, 113, 115
Բայրոն Ջ.— 128
Բարխուդարով Լ. Ս.—209, 398, 404
Բարսեղյան Հ. Խ.— 248
Բենվենիստ Է.— 404
Բյուլեր Կ.— 378
Բոգորոդիցկի Վ. Ա.— 165, 377
Բուդագով Ռ. Ա.— 399
Բուսլաև Ֆ.— 157, 164
Գալանոս Կղեմես.— 67, 69, 70, 71, 72, 73, 75, 76, 77, 78, 79, 88, 90, 115

Գալինա Ֆյոդորուկ—378
Դարագաշյան Ա. Մ.— 129, 438
Գարեգինյան Գ.— 351, 353, 356, 357, 361, 428
Գերմանովիչ Ա. Ի.— 377, 386, 394
Գյուլբուդաղյան Ս.—207, 344, 345
Գվոզդև Ա. Ն. — 212, 425
Գրիգոր Մագիստրոս.— 29, 34, 39, 56
Գրիգորյան Ա.— 361
Գրիմմ Յակով.— 139, 163

Դավիթ Անհաղթ.— 120, 121
Դավիթ Մեկնիչ.— 5, 18, 19, 20, 21, 22, 23, 24, 25, 26, 28, 32, 37, 39, 40, 41, 57, 61
Դոդել.— 230
Դոսըչևա.— 29

Ելմսլև.— 230
Եսայի Նչեցի.— 48

Զեյթունցի Գ. — 63, 64, 65, 69, 78, 84, 85, 86, 87, 88, 110, 161
Զինգեր Լ. Ռ.— 399
Զլատկին Վ. Զ.— 405, 406, 407, 408, 409, 419
Զվեգինցև Վ. Ա.— 163

Էնգելս Ֆ.— 29, 217, 384

Թրակացի Դիոնիսոս.— 3, 5, 7, 8, 9, 10, 11, 12, 14, 15, 17, 18, 19, 20, 21, 22, 23, 25, 26, 27, 29, 32, 34, 35, 38, 40, 42, 48, 58, 60, 63, 71, 146, 151, 153, 158, 367
Թումանյան Է. Գ.— 152, 361
Թումանյան Հար.— 161, 200, 207

Ժիրմունսկի Վ. Մ.— 200, 201, 231, 236, 273, 274, 280, 281

Իշխանյան Ռ.— 284, 439
Իսաչենկո Ա. Վ.— 196
Իվանով Ի. Պ.— 399

Լենին Վ. Ի.— 156, 220, 221, 222, 223. 225, 254
Լոմաև Տ. Պ.— 454

Խաչատուր Կարնեցի.—88
Խաչերյան Լ.— 5
Խաչիկյան Լ.— 35, 42
Խլղաթյան Ֆ.— 346

Ծառուկյան Վ. Շ.— 153

Կոնգուրով Ռ. Կ.— 388, 394
Կոդուխով Վ. Ի.— 262
Կրոտևիչ Ե. Վ.— 262, 371, 379, 381
Կուրիլովիչ.— 373

Համամ Արևելցի.— 29, 33
Հեգել.— 220
Հովհաննես Երզնկացի.— 34, 39, 40, 41, 56, 57, 58, 61, 69
Հովհաննես Հոլով (Հ. Կոստանդնուպոլսեցի).— 73, 76, 77, 79, 80, 81, 82, 87, 88, 90, 91, 92, 96, 97, 99, 100, 101, 102, 104, 111, 113, 115, 117, 119, 124
Հովհաննես Ջուղայեցի (Մրքուզ).— 82, 84, 88
Հովհաննես Քոնեցի.— 42, 43, 44, 45, 46, 47, 48, 51, 57, 74
Հումբոլդտ Վիլհելմ.— 440

Ղազարյան Ս.— 360
Ղարիբյան Ա.— 206, 208, 209, 210, 211, 212, 213, 224, 232, 317, 319, 380, 440
Ղափանցյան Գ.— 362, 363, 364

Մայնոհնակայա Կ. Ե.— 378
Մաո.— 217, 292
Մարգարյան Ալ.— 348, 349, 350, 351, 352, 353
Մարգարյան Հ. Ա.—412, 416
Մարքս.— 29, 217, 384
Մելիք-Թանգյան.— 200
Մելքոնյան Ե.— 63
Մեյե Ան.— 214
Մեշչանինով Ի. Ի.— 273, 274, 278, 356, 367, 424
Մխիթար Սեբաստացի.— 89, 92, 93, 94, 95, 96, 97, 98, 99, 100, 101, 102, 104, 111, 113, 115, 117, 119, 124
Մովսես Մեկնիչ.— 18, 24, 25, 61
Մովսես Քերթող.— 24, 25
Մուրադյան Ա. Ն.— 4, 5, 17, 18

Յուրին Ա. Վ.— 379, 396, 403, 404

Շախմատով Ա. Ա.— 397, 398, 424, 425, 436
Շանիձե.— 215
Շապիրո.— 209, 230
Շարաբխանյան Պ.— 353, 354, 355, 356, 360
Շլերթա Վ.— 325, 380, 388, 426
Շրյոդեր Յ. Յ.— 89, 90, 91, 92, 104, 129, 161

Ոսկան Երևանցի.— 72, 73, 74, 75, 76, 77, 79, 80, 82, 83, 90, 101, 103, 105

Չալբխյան Վրթանես.— 128
Չամչյան Միքայել.— 92, 116, 117, 118, 119, 123, 124, 125, 128, 146, 204
Չերկասովա Ե. Տ.— 415, 417, 418, 420, 421, 422
Չիկոբավա Ա. Ս.— 4, 365, 366

Պալասանյան Ստ.— 156, 157, 158, 159, 160, 161, 162, 163, 171, 175, 207, 209, 316, 317, 318, 320, 344, 349, 359, 368, 380
Պանով Մ. Վ.— 296, 297, 308
Պանֆիլով Վ. Զ.— 436, 437
Պոսպելով Ն. Ս.— 261
Պառնասյան Ն.— 358, 359
Պաուլ Հ.— 154, 155, 160, 216
Պեշկովսկի Ա. Մ.— 193, 230, 398, 434, 436
Պետերման Հ.— 129, 162
Պլատոն.— 37, 57
Պոպով Ա. Ս.— 401
Պոտեբնյա Ա. Ա.— 164, 195, 224, 414, 436
Պրիսցիանոս.— 42
Ջահուկյան Գ.— 4, 5, 7, 9, 10, 11, 13, 14, 15, 16, 17, 18, 19, 20, 28, 29, 31, 33, 35, 37, 39, 40, 41, 42, 48, 49, 51, 52, 53, 62, 63, 64, 65, 66, 67, 80, 81, 82, 84, 86, 88, 90, 95, 103, 104, 116, 119, 120, 126, 128, 130, 146, 205, 228, 229, 328, 329, 331, 332, 333, 334, 335, 336, 337, 338, 339, 340, 341, 342, 367, 392, 394, 395, 411, 427, 428, 429, 440, 443, 444, 445, 446, 447, 448, 440, 455, 456, 457, 458, 459

Ջուհարյան Թ.— 157

Ռեզինկով Լ. Ռ.— 310, 379, 396, 404
Ռեֆորմատսկի Ա. Ա.— 261, 324, 404
Ռիվոլա Ֆրանցիսկոս.— 67, 68, 72
Ռոզենտալ Դ. Է.— 297

Սալլանթյան Միքայել.— 127
Սավչենկո Ա. Ն.— 193, 196, 199, 202, 224, 229, 230, 263, 382, 383, 384, 385, 418

Սեպիր.— 155
Սիխարուլիձե.— 209
Սիմեոն Ջուլայեցի.— 82, 83, 84, 85, 99, 104, 106, 111, 115, 119
Սլոան.— 373
Սկորիկ Պ. Յա.— 195
Սմիռնիցկի Ա. Ի.— 262, 379, 397, 402, 403, 404, 405, 418
Սմիռնով Ա.— 157
Սոսյուր.— 155
Ստալին Ի. Վ.— 350
Ստեբլին-Կամենսկի Մ. Ի.— 261, 308
Ստեփանոս Սյունեցի.—18, 29, 31, 32, 33, 40, 57, 58, 59, 60, 61
Ստրոևա-Սոկոլսկայա Տ. Վ.— 399
Սունիկ Օ. Պ.— 193, 261, 262
Սուպրուն Ա. Ե.— 157, 164, 373, 377, 397
Սևակ Գուրգեն.— 206, 208, 209, 210, 211, 212, 213, 214, 215, 216, 217, 218, 219, 220, 221, 222, 223, 224, 226, 227, 229, 230, 232, 254, 317, 318, 349, 350, 357, 359, 368, 380

Վալգինա Ի. Ս.— 231, 297
Վանդրիես Ժ.— 155, 356, 377
Վանցյան Գր.— 161, 207
Վարդան Արևելցի.— 5, 34, 35, 36, 37, 38, 39, 59, 60, 61, 65, 149, 150
Վերդյան Բ.— 254, 358, 361, 440
Վիգոդսկի Լ. Ս.— 384
Վինոգրադով Վ. Վ.— 165, 211, 212, 216, 224, 231, 265, 270, 272, 273, 274, 279, 280, 283, 284, 323, 357, 365, 367, 375, 389, 398, 399, 414, 416, 417, 424, 425, 434, 436, 437, 446

Տաշյան Հ.— 42
Տեր-Հարությունյան Մհսրոպ.— 125, 127
Տերյան Վ.— 441
Տիխոնով Ա. Ն.— 380, 388, 396, 398, 399, 400, 401, 404, 407
Տոմսկի Վ.— 4, 7, 35
Տրավնիչեկ Ֆր.— 372, 379, 385

Ուշակով.— 230
Ուֆիմցևա Ա. Ա.— 392

Քյուրքչյան Ա.— 348, 361, 440, 441
Քոսյան Վ. Ս.— 352, 353, 440
Քրիսիպիոս Սոլոյացի.— 16

Օհանյան Հ.— 129, 346
Օվսիանիկո-Կուլիկովսկի Դ. Ն.— 426

Ֆիլիպպովա Վ. Մ.— 415
Ֆինկել Ա. Մ.— 399, 416
Ֆիկ.— 224
Ֆորտունատով.— 414, 434

ԲՈՎԱՆԴԱԿՈՒԹՅՈՒՆ

ԱՌԱՋԻՆ ՄԱՍ

ԽՈՍՔԻ ՄԱՍԵՐԻ ՏԱՐԲԵՐԱԿՈՒՄԸ ՀԱՅ ԵՎ ՀԻՆ ՄԻՋՆԱԴԱՐՅԱՆ ՔԵՐԱԿԱՆՈՒԹՅՈՒՆՆԵՐՈՒՄ

ԱՌԱՋԻՆ ԳԼՈՒԽ

Խոսքի մասերի տարբերակումը Դիոնիսիոս Թրակացու «Քերականական արվեստի» հայերեն թարգմանության և նրա 5—15-րդ դարերի մեկնությունների մեջ

Խոսքի մասերի տարբերակումը Թրակացու «Քերականական արվեստի» և նրա հայերեն թարգմանության մեջ 3

Հայերենի խոսքի մասերն ըստ Թրակացու «Քերականական արվեստի» թարգմանության 5—15-րդ դարերի մեկնությունների և քերականական աշխատությունների 17

V—X դարերի հեղինակներ

1. *Դավիթ* 18
2. *Անանուն* 25
3. *Ստեփանոս Սյունեցի* 28

XI—XV դարերի հեղինակներ 33

4. *Վարդան Արևելցի* 34
5. *Հովհաննես Երզնկացի* 39
6. *Հովհաննես Քոնեցի* 42
7. *Առաքել Սյունեցի* 48

Ամփոփում 54

ԵՐԿՐՈՐԴ ԳԼՈՒԽ

Խոսքի մասերի տարբերակումը 17—19-րդ դարերի հայերեն լատինատիպ և ինքնուրույն քերականություններում

Հայերենի խոսքի մասերի տարբերակումը 17—18-րդ դարերի լատինատիպ քերականություններում 62

1. *Զեյթունցի* 63
2. *Իվոլա* 67
3. *Գալանոս* 69
4. *Ոսկան Երևանցի* 73
5. *Հովհաննես Հակոբ Կոստանդնուպոլսեցի* 76
6. *Սիմեոն Ջուղայեցի* 82
7. *Հովհաննես Ջուղայեցի* 84
8. *Յոհան Յոախիմ Շրյոդեր* 89
9. *Մխիթար Սեբաստացի* 92
10. *Բաղդասար Դպիր* 103

Ամփոփում 112

Հայերենի խոսքի մասերի տեսության զարգացումն ու նրանց դասակարգման կայունացումը 18—19-րդ դարերի ինքնուրույն քերականություններում 116

1. *Միքայել Չամչյան* 116
2. *Գաբրիել Ավետիքյան* 120
3. *Այլ քերականներ* 125

4. Արսեն Բագրատունի 130
Խոսքի մասերի ավանդական տեսության նվաճումների ամփոփումը Ա. Այտընյանի կողմից 139
Ամփոփում 145

ԵՐԿՐՈՐԴ ՄԱՍ

ԽՈՍՔԻ ՄԱՍԵՐԻ ՏԱՐԲԵՐԱԿՈՒՄԸ ՆՈՐ ԵՎ ՆՈՐԱԳՈՒՅՆ ՇՐՋԱՆԻ ՀԱՅ ՔԵՐԱԿԱՆԱԿԱՆ ԵՎ ԼԵԶՎԱԲԱՆԱԿԱՆ ԱՇԽԱՏՈՒԹՅՈՒՆՆԵՐՈՒՄ

ԱՌԱՋԻՆ ԳԼՈՒԽ

Խոսքի մասերի իմաստային, գործառական և իմաստային-գործառական դասակարգումները

Հայերենի խոսքի մասերի իմաստային-տրամաբանական դասակարգումը Ստ. Պալասանյանի աշխատություններում 156
Հայերենի խոսքի մասերի իմաստաբանական-շարահյուսական դասակարգումը Մ. Աբեղյանի աշխատություններում 163
Հայերենի խոսքի մասերի իմաստային կամ իմացաբանական դասակարգումը Ա. Ղարիբյանի և Գ. Սևակի աշխատություններում . . 205
Հայերենի խոսքի մասերի շարահյուսական դասակարգումը Հր. Աճառյանի աշխատություններում 232

ԵՐԿՐՈՐԴ ԳԼՈՒԽ

Հայերենի խոսքի մասերի իմաստաբանական բազմաստիճան դասակարգումներ

Հայերենի խոսքի մասերի տարահատկանիշ աստիճանական դասակարգումը Ս. Աբրահամյանի աշխատություններում 250
Հայերենի խոսքի մասերի բազմահատկանիշ աստիճանական դասակարգումը Էդ. Աղայանի աշխատություններում 285
Ամփոփում 316

ԵՐՐՈՐԴ ԳԼՈՒԽ

Հայերենի խոսքի մասերի տեսական նոր վերլուծություններ և տարաբնույթ դասակարգումներ

Հայերենի խոսքի մասերի տեսական հարցերի քննությունը Ա. Աբրահամյանի աշխատություններում 320
Հայերենի խոսքի մասերի պատմության և նրանց տարաբնույթ դասակարգման հարցերի քննությունը Գ. Ջահուկյանի աշխատություններում 328

ՉՈՐՐՈՐԴ ԳԼՈՒԽ

Հայերենի առանձին խոսքի մասերին վերաբերող վերջին տասնամյակների գրականության համառոտ տեսություն 343

ԵՐԻՐԴ ՄԱՍ

ՀԱՅԵՐԵՆԻ ԽՈՍՔԻ ՄԱՍԵՐԻ ՀԱՄԱԿԱՐԳԸ

ԱՌԱՋԻՆ ԳԼՈՒԽ

Բառերի իմաստագործառական նատկանիշը որպես նրանց խոսքիմասային դասակարգման ընդհանուր հիմունք

. 365

ԵՐԿՐՈՐԴ ԳԼՈՒԽ

Խոսիմաստային կամ կարգային (կատեգորիալ) բացասական հատկանիշով բնութագրվող բառակարգեր 382
Ա) Զայնարկություններ և նմանաձայնություններ որպես տարբեր բառային արժեքներ կամ բառ-նշաններ 386
Բ) Կապակցական բառերի իմաստային կառուցվածքը և նրանց դասակարգումը 396
Գ) Եզանակավորող բառերն ու երանգական բառ-մանիկները որպես առանձին իմաստագործական բառատեսակներ 435

ԵՐՐՈՐԴ ԳԼՈՒԽ

Խոսիմաստային իմաստ ունեցող բառեր կամ հիմնական խոսքի մասեր

Ա) Անուն խոսքի մասեր 463
Բ) Դերանուն խոսքի մասեր 505
Օգտագործած գրականություն 515
Անձնանունների ցանկ 522
Բովանդակություն 526

ՀՈՎՀԱՆՆԵՍ ԱԱԶԱՏՈՒՐԻ ԲԱՐՍԵՂՅԱՆ

ՀԱՅԵՐԵՆԻ ԽՈՍՔԻ ՄԱՍԵՐԻ ՈՒՍՄՈՒՆՔԸ

Հրատարակության է երկայացրել համալսարանի հայոց լեզվի ամբիոնը

Հրատ. խմբագիր՝ Բ. Ծ. Մարգարյան, գեղ. խմբագիր՝ Ն. Ա. Թովմասյան, նկարիչ՝ Ա. Գասպարյան, տեխն. խմբագիր՝ Ս. Ա. Ղալթախչյան, վերատ. սրբագրիչ՝ Լ. Ս. Աբգուամանյան:

ՀՊ 241

ՎՖ 02201, պատվեր 1225, տպաքանակ 3000։ Հանձնված է շարվածքի 28.06. 1979 թ., տպագրության է տպագրության 14.1.1980 թ.։ Տառատեսակը «Սովորական», տպագրության եղանակը՝ «Բարձր»։ Հրատ. 26,0 մամ., տպագր. 33 մամ.։ Թուղթ տպագր. № 2, չափսը 60×90¹/₁₆։ Գինը՝ 3 ռ. 50 կ.։

Երևանի Համալսարանի Հրատարակչություն, Երևան, Մռավյան փ. № 1։

Издательство Ереванского университета, Ереван, ул. Мравяна, № 1.

Երևանի Համալսարանի տպարան, Երևան, Աբովյան փ. № 52։

Типография Ереванского университета, Ереван, ул. Абовяна, № 52.

Ֆ.Ն.Ց.Ա.Ա.
63585
ԳԱԱ Գիտական գրադ. Գրադ.
220063325